



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ  
Մ. ԱԲԵԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ





ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ԹՈՒՄԱՆՅԱՆ



ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ



ՏԱՍ ՀԱՏՈՐՈՎ



ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ԹՈՒՄԱՆՅԱՆ



ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ



ՊՈՆԵՄՆԵՐ

Տպագրվում է Հայաստանի ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

*Խմբագրական կոլեգիա*

էդ. Մ. Զրբաշյան (գլխավոր խմբագիր), Խ. Մ. Գյուլնազարյան,  
Ք. Հ. Քումանյան, Լ. Մ. Կարապետյան, Լ. Հ. Հախվերդյան, Պ. Հ.  
Հակոբյան, Հ. Կ. Հովհաննիսյան, Ս. Ն. Ստրինյան

*Բնագրերը պատրաստեցին*

Ֆ. Ս. Հակոբյանը և Լ. Ա. Թերլեմեզյանը

Սանոթագրությունները՝ էդ. Մ. Զրբաշյանի

ОВАНЕС ТУМАНЯН  
ПОЛНОЕ СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

в десяти томах

Том четвертый

Поэмы

(на армянском языке)

Издательство АН Армении

Ереван, 1990





# ՊՈԵՄՆԵՐ



ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ  
1902

## I

Առյուծ-Մըհերը, զարմով դյուցազուն,  
Քառասուն տարի իշխում էր Սասուն.  
Իշխում էր ահեղ, ու նրրա օրով  
Հավքն էլ շէր անցնում Սասմա սարերով:  
Սասմա սարերից շա՛տ ու շատ հեռու  
Քընդում էր նրրա հըռչակն ահարկու,  
Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր.  
Հազար բերան էր— մի Առյուծ-Մըհեր:

## II

- էսպես, ահավոր առյուծի նրման,  
10 Սասմա սարերում նըստած էր իշխան  
Քառասուն տարի: Քառասուն տարում  
«Ա՛խ» շէր քաշել նա դեռ իրեն օրում.  
Բայց հիմի, երբ որ եկավ ծերացավ,  
էն անահ սիրտը ներս սողաց մի ցավ:  
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.  
— Հասել են կյանքիս աշնան օրերը,  
Շուտով սև հողին կերթամ ես գերի,  
Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,  
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,  
20 Իմ անտեր ու որբ աշխարքի վըրա  
Ոտի կըկանգնեն հազար քաջ ու դե...  
Մի ժառանգ շունեմ՝ իմ անցման ետև  
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...  
Ու միտք էր անում հըսկան ծերունի:

Մի օր էլ՝ էն գորշ հոնքերը կիտած,  
 Երբ միտք էր անում, երկընթից հանկարծ  
 Մի հուր-հրրեղեն հայտնըվեց քաջին,  
 Ոտները ամպոտ կանգնեց առաջին:  
 — Ողջո՞ւյն մեծագոր Սասմա հըսկային.  
 30 Քու ձենը հասավ աստըծու գահին,  
 Ու շուտով նա քեզ մի զավակ կըտա:  
 Բայց լավ իմանաս, լեռների՛ արքա,  
 Որ օրը որ քեզ ժառանգ է տըվել,  
 էն օր կըմեռնեք քու կինն էլ, դու էլ:  
 — Իր կամքը լինի, ասավ Մըհերը.  
 Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,  
 Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,  
 Մենք էլ նրբանով անմեռ կըմընանք:  
 Հրրեղտակն էստեղ ցոլացավ նորից,  
 40 Ու էս երջանիկ ավետման օրից  
 Երբ ինր ամիս, ինր ժամն անցավ,  
 Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ:  
 Դավիթ անվանեց իրեն կորյունին,  
 Կանչեց իր ախպեր Ձենով Օհանին,  
 Երկիրն ու որդին ավանդեց նրբան,  
 Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան:

էս դարում Մրսըր անհաղթ ու հրզոր  
 Մրսրա-Մեղիք: էր նրստած թագավոր:  
 Հենց որ իմացավ՝ էլ Մըհեր շըկա.  
 50 Վեր կացավ կրոփով Սասունի վըրա:  
 Ձենով Օհանը ահից սարսափած՝  
 Թրշնամու տոաջն ելավ գրլխաբաց,  
 Աղաւանք արավ, ընկավ ոտները.  
 — Դու եղիր, ասավ, մեր գրլխի տերը,  
 Ու քու շըվաքում քանի որ մենք կանք,

Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,  
 Միայն մեր երկիր քարուքանդ շանես  
 Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:  
 — Չէ՛, ասավ Մեղիք, քու ամբողջ ազգով  
 60 Անց պիտի կենաս իմ թըրի տակով,  
 Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անես,  
 Ոչ մի սասունցի թուր շառնի իմ դեմ:  
 Ու զընաց Օհան՝ բոլոր-բովանդակ  
 Սասունը բերավ, քաշեց թըրի տակ.  
 Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,  
 Մոտ շեկավ դուշման Մեղիքի թըրին:  
 Եկան քաշեցին՝ թե զոռով տանեն,  
 Թափ տըվավ, մարդկանց զըցեց դես ու դեն,  
 Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,  
 70 Ապառաժ քարից կըրակ դուրս թըռավ:  
 — Պետք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,  
 Ասավ թագավորն իրեն մեծերին:  
 — Թագավո՛ր, ասին, դու էսքան հըզոր,  
 Թըրիդ տակին է ողջ Սասունն էսօր.  
 Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,  
 Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա:  
 — Դո՛ւք գիտեք, ասավ Մըսրա թագավոր,  
 Բայց թե իմ զըլխին փորձանք զա մի օր,  
 էս օրը վըկա,  
 80 Սըրանից կըզա:

էս որ պատահեց, մեր Դավիթ հըսկան  
 Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան.  
 Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,  
 Որ նըրա համար թե մարդ,— թե մըժեղ:  
 Բայց վա՛յ խեղճ որբին աշխարքի վըրա,  
 Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:  
 Ձենով Օհանին ուներ մի շար կին:  
 Մին-երկու լըռեց, մի օր էլ կարգին



Իրեն մարդու հետ սկզբավ կրուփել.  
 90 — Ես մենակ հոգի, հազար ցավի տեր,  
 Ի՛նչ ես ուրիշի եթիմը բերել,  
 Նրստեցրել զըլխիս պարապ հացակեր...  
 Հո՛ղեմ զըլուխը... ես գերի հո շե՛մ՝  
 Ամենքի քեֆի ետեից թրոշեմ...  
 Մի կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանի,  
 Գրնա, իր համար աշխատանք անի...  
 Ու հետն սկզբավ ողբալ ու կոծել,  
 Իր օրը սրգալ, իր բախտն անիծել,  
 Թե անբախտ եղավ աշխարքի միջում,  
 100 Ոչ մի տեր ունի, ոչ մարդն է խըղճում...  
 Գրնաց Օհանը երեխի ոտի  
 Մի զույգ ոտնաման բերավ երկաթի,  
 Երկաթի մի կոռ շալակին դըրած,  
 Ու արավ Սասմա քաղքի գառնարած:

## VI

Քըշեց գառները մեր հովիվ՝ հըսկան,  
 Ելավ Սասունի սարերն աննըման.  
 «Է՛յ ջան, սարե՛ր,  
 Սասման սարե՛ր...»  
 Որ կանչեց, նըրա ձենից ահավոր  
 110 Դըղորդ-դըմբըմբոցն ընկավ սար ու ձոր.  
 Վայրի գազաններ բըներից փախան,  
 Քարեքար ընկան, դատարկուն եղան:  
 Դավիթը ընկավ նըրանց ետեից,  
 Որին մի սարից, որին մի ձորից—  
 Աղվես, նապաստակ, գել, եղնիկ բըռնեց,  
 Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,  
 Իրիկվան քըշեց ողջ Սասմա քաղաք:  
 Կաղկա՛նձ ու ոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...  
 Քաղքըցիք հանկարծ մին էլ էն տեսան՝  
 120 Գալխս են հըրես անհամար գազան.  
 «Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, երեխեք  
 Սըրտաճաք եղած,  
 Գործները թողած,  
 Որը տուն ընկավ, որը ժամ, խանութ,  
 Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:  
 Դավիթը եկավ, կանգնեց մեյդանում.  
 — Վա՛հ, էս մարդիկը ի՛նչ վաղ են քընում.  
 130 Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր,  
 Ելե՛ք, շուտով բացեք դըռներ.  
 Ով մինն ուներ— տասն եմ բերել,  
 Ով տասն ուներ— քըսանն արել...  
 Շուտով ելե՛ք, եկե՛ք, տարե՛ք,  
 Ձեր գառն ու ուլ գոմերն արեք:

Տեսավ՝ շեն գալի, դուռ շեն բաց անում,  
 Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,  
 Գըլուխը դըրավ մի քարի՝ մընաց,  
 Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:  
 Լուսին իշխաններ ելան միասին,  
 140 Գընացին Ձենով Օհանին ասին.  
 — Տո՛ Ձենով Օհան, տո՛ մահի տարած,  
 էս խենթը բերիր, արիր գառնարած,  
 Ոչ գառն է ջոկում, ոչ գելն ու աղվես,  
 Գազանով լըցրեց մեր քաղաքն էսպես,  
 Աստված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,  
 Թե չէ էս խա՛լխին լեղաճաք կանի:

## VII

Ելավ Օհանը, Դավիթի մոտ գրնաց.  
 — Հորեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամա՛ց,  
 Ուլեր կըփախչեն:— Մին էլ էնտեղից  
 150 Մի բոզ նապաստակ, ականջները ցից,  
 Խրտնեց ու ահից դուրս պրծավ հանկարծ:  
 Դավիթն էր. ելավ, ետեից ընկած  
 էն սարը քըշեց, ետ բերավ էս ձոր,

Բերա՛վ, ուլերին խառնեց նորից նոր:  
— Օ՛ֆ, ի՛նչ դըժար է, հորեղբայր Օհան.  
Աստված օխնե՛լ է էն սև-սև ուլեր,  
Ամա բողալուկ էս ուլեր, որ կան,  
Փախչում են, ցրրվում ողջ սարերն ի վեր.

160 Մի՛նչև հավաքել ու տուն եմ բերե՛լ...

Նայեց Օհանը, որ Դավթի հագին  
Ոտնաման շի էլ մընացել կարգին,  
Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել,  
Մի օրվա միջում էնքան է վազել:  
— Դավիթ ջան, ասավ, չեմ թողնի էսպես,  
Բողալուկ ուլեր շարշարում են քեզ.  
էգուց նախիրը կըտանես արոտ:

Ասավ Օհանը ու մյուս առավոտ  
Գընաց, նորից նոր մեր Դավթի ոտի

170 Մի ջուխտ նոր տըրեխ բերավ երկաթի,  
Երկաթի մի կոռ հարյուր լըղրական  
Ու շինեց Սասմա քաղքի նախրապան:

### VIII

Քըչեց նախիրը մեր նախորդ հըսկան,  
Ելավ Սասունի սարերն աննըման:

«է՛յ ջան, սարե՛ր,

Սասման սարե՛ր,

Ի՛նչ անուշ է

Ձեր լանջն ի վեր...»

Որ կանչեց, նըրա ձենից ահավոր

180 Դըղորդ-դըմբղըմբոցն ընկավ սար ու ձոր:

Վայրի գազաններ բըներից փախան,

Քարեքար ընկան, դատարկուն եղան:

Դավիթն էր. ընկավ նրանց ետևից,

Որին մի սարից, որին մի ձորից,

Գե՛լ, ինձ, առյուծ, արջ ու վազըր բըռնեց,

Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց

Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք:

Ոռնո՛ց, մըռընչյո՛ւն, աղմո՛ւկ, աղաղա՛կ...

Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՛նչ տեսան,

190 Հենց քաղքի վըրա անհամար գազան...

«Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, երեխեք

Սըրտաճաք եղած,

Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,

Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:

Դավիթը եկավ կանգնեց մեյդանում.

— Վա՛հ, էս քաղքըցիք ի՛նչ վաղ են քընում:

Հե՛յ կովատեր, հե՛յ գոմշատեր,

200 Ելե՛ք, շուտով՛ րացեք դրոներ,

Ով մինն ուներ—տասն եմ բերել,

Ով տասն ուներ—քրսանն արել:

Շուտով ելե՛ք, եկե՛ք, տարե՛ք,

Ձեր եզն ու կով գոմերն արեք:

Տեսավ՛ շեն գալի, դուռ շեն բաց անում,

Ինքն էլ մեկնրվեց քաղքի մեյդանում,

Գըլուխը դըրավ մի քարի, մրնաց,

Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսարաց:

Լուսին իշխաններ ելան միասին,

210 Գընացին Ձենով Օհանին ասին.

— Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան խապեր,

Մեր եզն ու մեր կով թող մընան անտեր,

Միայն սրանից ազատ արա մեզ:

Ոչ արջն է ջոկում, ոչ գոմեշն ու եզ,

Մի օր էս քաղքին փորձանք կըբերի,

Արջերոց կանի, կրտա կավերի:

### IX

Դավիթ շըղառավ, մի կըրա՛կ դառավ:

Ճարը կըտըրված՝ Օհանը բերավ

Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝

- 220 Գրնա, որս անի սարերի վրրեն:  
Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,  
Հեռացավ Սասմա քաղքի սահմանից  
Ու դառավ որսկան: Գնաց, մի կորկում  
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,  
Մըթանը գրնում իրեն հոր ծանոթ  
Աղքատ, անորդի մի ծեր կրնկա մոտ,  
Վիշապի նրման, երկա՛ր, ահագի՛ն  
Մեկնըվում, քրնում կըրակի կողքին:  
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձավ,  
230 Պառավը վրրեն սաստիկ բարկացավ.  
— Վա՛յ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,  
Դո՛ւ պետք է էն հոր զափակը լինե՛ս:  
Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին—  
Ես եմ ու էն արտն աստըծու տակին,  
Ինչո՞ւ ես գրնում, տափում, տըրորում,  
Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտրում:  
Թե որսկան ես դու—նետ-աղեղըդ ա՛ռ,  
Մըծակա գըլխից մինչև Սեղանսար  
Քու հերը ձեռին մի աշխարհ ունեք,  
240 Որսով մեջը լի որսի սար ունեք.  
Եղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա.  
Կարո՞ղ ես— գրնա, էնտեղ որս արա:  
— Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.  
Ես շահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում:  
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...  
— Գրնա՛, հորեղբայրդ—Օհանը կասի:

X

- Հորեղբոր շեմքում մյուս օրը ծեղին  
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին:  
— Հորեղբա՛յր Օհան, ինչո՞ւ շես ասել՝  
250 Իմ հերը որսի սար է ունեցել,  
Այծյամ կա էնտեղ, եղջերու, կըխտար.  
Վեր կաց, հորեղբա՛յր, տար ինձ որսասար:

- Վա՛յ, կանչեց Օհան, էդ քու խոսքը չէր,  
էդ ով քեզ ասավ, լեզուն պապանձվիր:  
էն սարը, որդի՛, գրնաց մեր ձեռից,  
էն սարի որսն էլ գրնաց էն սարից,  
էլ շկան այծյամ, եղջերու, կըխտար:  
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,  
(է՛յ գիդի օրեր—ո՛րտեղ եք կորել),  
260 Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...  
Քու հերը մեռավ, աստված խըռովեց,  
Մըսրա թագավոր գորքեր ծողովեց,  
Եկավ, մեր երկիր քարուքանդ արավ,  
էս սարի որսն էլ թալանեց, տարավ.  
Եղնիկը գրնաց, եղջերուն գրնաց...  
Մեր գիրն էլ հալբաթ էսպես էր գըրած:  
Անցել է, որդի, քու բանին գրնա,  
Մըսրա թագավոր ձեռքդ կիմանա...  
— Մըսրա թագավոր ինձ ի՞նչ կանի որ...  
270 Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրա թագավոր.  
Մըսրա թագավոր թող Մըսրը կենա,  
Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...  
Վեր կաց, հորեղբա՛յր, նետ-աղեղդ առ,  
Կապարձըդ կապի՛ր, գրնանք որսասար:  
Ելավ Օհանը ճարը կըտըրված,  
Գրնացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.  
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,  
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

- Գիշերը հասավ, մրնացին էնտեղ:  
280 Ձենով Օհանն էր, իր նետն ու աղեղ  
Դըրավ գլխի տակ, հանգիստ խըռմփաց.  
Դավիթը մրնաց մըտքի ծովն ընկած:  
Մին էլ նկատեց, որ մութը հեռվում  
Մի թեժ, փայլիլուն կըրակ է վառվում:  
էն լուսը բըռնած՝  
Վեր կացավ, գրնաց,

Գրնաց ու գրնաց, բարձրացավ մի սար,  
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար  
Կիսից պատրուված,

290 Ու միջից վառված  
Բըխում է լուսը պարզ, քուլա-քուլա՛,  
Բարձրանում, իջնում ետ քարի վըրա:  
Վար իջավ Դավիթ էնտեղից կըրկին,  
Վար իջավ, կանչեց Ձենով Օհանին.  
— Ե՛լ, հորեղբայր, քանի՞ քընես,  
Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես:  
Լուս է իջել բարձրը սարին,  
Բարձրը սարին, մարմար քարին:  
Ե՛լ, հորեղբայր, անուշ քընից.

300 էն ի՞նչ լուս է բըխում քարից:  
Նլավ, խաչ քաշեց Օհանն երեսին.  
— է՛յ, որդի՛, ասավ, մեռնեմ իր լուսին,  
էն մեր Մարութա սարն է գորավոր:  
էն լուսի տեղը կանգնած էր մի օր  
Սասմա ապավեն, Սասմա պահապան  
Մեր սուրբ Տիրամոր վանքը Չարխափան:  
Մըշտական, երբ որ կըռփվ էր գընում,  
էնտեղ էր քու հերն իր աղոթքն անում:  
Քու հերը մեռավ, աստված խըռովեց,  
310 Մըսրա թագավոր գորքեր ժողովեց,  
Մեր վանքն էլ եկավ քանդեց էն սարում,  
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

## XII

Դավիթը էս էլ երբ որ իմացավ,  
— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբայր, ասավ,  
Որբ եմ ու անտեր աշխարքի վըրա,  
Հեր շունեմ՝ դու ինձ հերություն արա՛:  
էլ չեմ իջնի ես Մարութա սարից,  
Մինչև շըշինեմ մեր վանքը նորից:  
Քեզանից կուզեմ հինգ հարյուր վարպետ,

320 Հինգ հազար բանվոր մըշակ նըրանց հետ,  
Որ գան՝ էս շաբաթ կանգնեն ու բանեն,  
Առաջվան կարգով մեր վանքը շինեն:  
Գրնաց Օհանը ու բերավ իր հետ  
Հինգ հազար բանվոր, հինգ հարյուր վարպետ:  
Վարպետ ու բանվոր եկան կանգնեցին,  
Չըրը՛խկ հա թըրը՛խկ նորից շինեցին,  
Առաջվան կարգով, փառքով փառավոր  
Բարձրը Մարութա վանքը Տիրամոր:  
Ցըրված միաբանք ետ նորից եկան,  
330 Նորից թընդացին աղոթք, շարական.  
Ու երբ շեն արավ հոր վանքը նորից,  
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից:

## XIII

Համբավը տարան Մըսրա Մեխիթին.  
— Հապա՛ շես ասիլ՝ Դավիթը կըրկին  
Հոր վանքը շինել, իշխան է դառել,  
Դու օխտը տարվան խարջը շես առել:  
Մեխիթ զայրացավ.  
— Գրնացե՛ք, ասավ,  
Բադին, Կոզբադին,  
340 Սյուդին, Չարխադին,  
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,  
Իմ օխտը տարվան խարաջը բերեք:  
Քառսուն կույս աղջիկ բերեք արմաղան,  
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,  
Քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
Իմ տանն ու դըռան զարավաջ դառնան:  
Ու Կոզբադին առավ գորքեր.  
— Գըլխի՛ս փըրա, ասավ, իմ տեր.  
Գընամ հիմի քանդեմ Սասուն,  
350 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
Քառսուն բեռնով դեղին ոսկի,  
Տեղը ջընջեմ հայոց ազգի:

Ասավ, Մըսրա աղջիկ ու կին  
Պար բըռնեցին ու երգեցին.

— Մեր Կոզբադին գընաց Սասուն,  
Կանայք բերի քառսուն-քառսուն,  
Քառսուն բեռնով ոսկի բերի,  
Մեր ճակատին շարան շարի,  
Կարմիր կովեր բերի կըթան՝

360 Գարնան շինենք եղ ու շորթան:

Ջա՛ն Կոզբադին, քաջ Կոզբադին,  
Սասմա Դավթին զարկեց գետին:

Ու Կոզբադին փըքված, ուռած,

— Շնորհակալ եմ, քույրե՛ր, գոռաց,  
Մինչև գալըս դեռ համբերեք,  
էն ժամանակ պիտի պարեք...

#### XIV

էսպես երգով,

Ջոռով-զորքով՝

Գոռ Կոզբադին մըտավ Սասուն.

370 Օհան լըսեց՝ կապվեց լեզուն:

Աղ ու հացով,

լաց ու թացով

Առաջն ելավ,

Խընդիրք արավ.

— Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.

Վարդ աղջիկներ, կանայք Սասման,

Դառը դադած դեղին ոսկին,

Միայն թե գըթա մեր խեղճ ազգին,

Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,

380 Վերե՛ աստված, ներքեր՝ դու...

Ասավ, բերավ շարան-շարան

Վարդ աղջիկներ, կանայք Սասման:

Ու Կոզբադին կանգնեց, ջոկեց,

Մարազն արավ, դուռը փակեց,

Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,

Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,  
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
Մըսրա Մելիքին ղարավաշ դառնան:  
Դեզ-դեզ կիտեց դեղին ոսկին.

390 Աև սուգ կալավ հայոց ազգին:

#### XV

Հե՛յ, ո՛ւր ես, Դավիթ, հայոց պահապան,  
Քարը պատըռվի— դո՛ւրս արի մեյդան:

Քանդած հոր վանքը որ շինեց նորից,

Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,

Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտավ,

Գընաց՝ պառավի շաղգամը մըտավ:

Պառավն էր. եկավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.

— Վա՛յ, խելա՛ն Դավիթ, շաղգամի տեղակ

Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ,

400 Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսավ.

Կորեկըս արիր գետնին հավասար,

էս էր մընացել ձմեռվան պաշար,

էս էլ կըտրում ես,

էլ ո՞նց ապրեմ ես:

Թե կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ն գընա՛,

Քու հոր աշխարքին տիրություն արա՛,

Քու հոր գանձը կե՛ր,

Թողել ես անտեր,

Մըսրա թագավոր ղըրկել է՝ տանի:

410 — էլ ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,

էդ ի՞նչ ես ասում, ես շեմ հասկանում,

Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում:

— Մըսրա թագավոր մեր ի՛նչն է տանում...

Մըսրա թագավոր քու աչքն է հանում,

Դանդալոշ Դավիթ. ղըրկել է հըրեն,

Եկել են Սասմա քաղաքի վըրեն

Բաղին, Կողբաղին,  
 Սյուղին, Չարխաղին,  
 Թալան են տալի բովանդակ Սասունմ.  
 420 Քառսուն բեռ ոսկի խարաջ են ուզում,  
 Քառսուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,  
 Քառսուն կարճ կրնիկ, որ երկանք աղան,  
 Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
 Մըսրա Մելիքին զարավաշ դառնան:  
 — Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.  
 Ցույց տուր մի տեսնեմ— ո՞րտեղ են ուզում:  
 — Ո՞րտեղ են ուզո՞ւմ... Մահըս տանի քե՞զ.  
 Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՞ս...  
 Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...  
 430 Ոսկին Կողբաղին ձեր տանն է չափում,  
 Աղջիկներ փրկեկ մարագն են լըցրած:  
 Շաղգամը թողեց Դավիթ ու զընաց:  
 Տեսավ՝ Կողբաղին իրենց տան միջին,  
 Չափում է ոսկին թեղած առաջին,  
 Սյուղին, Չարխաղին պարկերն են բրունել,  
 Չենով Օհանն էլ շըլինքը ծրոնել,  
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:  
 Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:  
 — Վե՛ր կաց, Կողբաղին, հեռո՛ւ կանգնիր դու,  
 440 Իմ հոր ոսկին է— ես եմ չափելու:  
 — Կողբաղին ասավ.— է՛յ, Չենով Օհան,  
 Կըտաս— տո՛ւր խարջը էս օխտը տարվան,  
 Թե չէ՝ կըզնամ, միրուքըս փրկա,  
 Մըսրա-Մելիքին կըպատմեմ, կըգա,  
 Չեր Սասմա երկիր քար ու քանդ կանի,  
 Տեղը կըվարի, բոստան կըցանի:  
 — Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շըններ,  
 Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծրոներ...  
 Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ շըվաք,  
 450 Կուզեք մեր երկիր դընեք խարջի տա՛կ...  
 Բարկացավ Դավիթ, չափը շըպըրտեց,

Տըվավ Կողբաղնի գըլուխը շարդեց,  
 Չափի փըշրանքը պատն անցավ, զընաց,  
 Մինչև օրս էլ դեռ գընում է թըռած:  
 Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,  
 Հայոց աշխարքից փախան զընացին  
 Բաղին, Կողբաղին,  
 Սյուղին, Չարխաղին:

## XVI

— Վա՛յ, վա՛յ, հորեղբա՛յր, ի՛նչ ասեմ ես քեզ.  
 460 Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դեզ,  
 Դու արել ես ինձ քաղաքի ծառան,  
 Դու թողել ես ինձ օտարի դըռան...  
 Հորեղբայրն ասավ.— Ա՛յ խենթ, խելագար,  
 Ոսկին պահել եմ Մելիքի համար,  
 Որ քաղցըր լինի աչքը մեզ վըրա:  
 Չըտըվիր, հիմի որ զորք առնի՞ գա,  
 Սասմա քար ու հող հեղեղի, տանի,  
 Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըրի՞վ կանի:  
 — Դու կա՛ց, հորեղբա՛յր, թող գա, ե՛ս կերթամ,  
 470 Կերթամ, ե՛ս նըրան պատասխան կըտամ:  
 Ու մութ մարագի դըռանը զարկեց,  
 Փակած աղջիկներ հանեց, արձակեց:  
 — Գընացե՛ք, ասավ, ազատ ապրեցե՛ք,  
 Սասունցի Դավիթն արև խընդրեցեք:

## XVII

Էսպես ջարդված, տըյունըվա  
 Փախան, ընկան հողը Մըսրա  
 Բաղին, Կողբաղին  
 Սյուղին, Չարխաղին:  
 Մըսրա կանայք հեռվից տեսան,  
 480 Հեռվից տեսան, ուրախացան  
 Ու ծափ տըվին կըտերներին:

— Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...  
 Մեր Կողբադին գնաց Սասուն,  
 Կանայք բերավ քառսուն-քառսուն,  
 Կարմիր կովեր բերավ կրթան՝  
 Գարնան շինենք եղ ու շորթան...  
 Հենց մոտեցան, նրկատեցին,  
 Սափ ու խրնդում ընդհատեցին,  
 Քրքրչացին

490 Ու կանչեցին.  
 — Է՛յ, Կողբադին մեծաբերան,  
 Էդ ո՞րտեղից լերան-լերան,  
 Լերան-լերան կրգաս փախած,  
 Հաստ գրուխրդ կիսից ճրղած:  
 Էն գո՛ւ շասիր՝ գրնամ Սասուն,  
 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
 Քառսուն բեռնով ոսկի հանեմ,  
 Հայոց երկիր ավեր անեմ:  
 Գացիր Սասուն քանց գել գազան,

500 Ծտ ես գալի քանց շուն վազան...  
 Ու Կողբադին խիստ բարկացավ.  
 — Սո՛ւ կացեք դուք, լըրբե՛ր, ասավ.  
 Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,  
 Դուք չեք տեսել Սասմա ծրոեր:  
 Սասմա ծրոեր լերան-լերան,  
 Նետեր ունեն մի-մի գերան.  
 Սասմա երկիր քար ու կապան,  
 Գրժար սարեր, ձոր ու ծապան.  
 Երբանց խոտեր— ինչպես կեռ թուր,

510 Զորք շարգեցին երեք հարյուր...  
 Ասավ ու էլ շառավ դադար,  
 Վրոազ-վրոազ, գրլխապատառ  
 Վազեց իրեն թագափորին:  
 Խրնդաց թագավորն իր աթոռին:  
 — Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողբադին,  
 Արժե՛ կախեմ ես քու ճրտին  
 Մեր դուզդունի մեծ նըշանք—

Պարգև քու մեծ հաղթությանը:  
 Ո՞ւր են, հապա առաջըս բեր  
 520 Սասմա ոսկին ու աղջիկներ:  
 Ասավ Մելիք, ու Կողբադին  
 Գրլուխ տըվավ մինչև գետին.  
 — Ապրա՛ծ կենաս, մեծ թագավոր,  
 Զոռով փախա ես ձիավոր,  
 Ո՞նց բերեի Սասմա ոսկին:  
 Մի խենթ ծընվեց հայոց ազգին,  
 Ոչ ահ գիտի, ոչ տեր ու մեծ,  
 Գրլուխս էսպես տըվավ շարդեց.  
 «Զե՛մ տալ, ասավ, իմ հոր ոսկին,  
 530 Զեմ տալ կանայքն իմ հայ ազգին,  
 Սասմա երկիր ձեզ տեղ չըկա...  
 Քու թագավոր, ասավ, թո՛ղ գա,  
 Թող գա՛ ինձ հետ կրոփվ անի,  
 Թե ղոշաղ է՛ զոռով տանի»:  
 Կատաղեց, փրրփրեց Մըսոսա թագավոր.  
 — Կանչեցե՛ք, ասավ, իմ զորքը բոլոր.  
 Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,  
 Հազար հազար մարդ անբեղ, անմորուք,  
 Հազար հազար մարդ բեղը նոր ծըլած,  
 540 Հազար հազար մարդ նոր թախտից ելած,  
 Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,  
 Հազար հազար մարդ սիպտակ ալևոր,  
 Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,  
 Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն...  
 Կանչեցե՛ք, թող գան, հագնեն գե՛նք, զըրա՛հ,  
 Կրոփվ տի գընամ ես Դավթի վըրա,  
 Սասունն ավերեմ,  
 Հեղեղեմ, բերեմ:

XVIII

էսպես անհամար զորքեր հավաքեց,  
 550 Եկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց

Ու ծանրը նըստեց Մըսրա թագավորը:  
 էնքան ահագին բազմությունն էն օր  
 Բաթմանա ջրրին եկավ ու շոքեց,  
 Ով եկավ, խըմեց—գետը ցամաքեց,  
 Սասմա քաղաքում մընացին ծարավ:  
 Ձենով Օհանին զարմանքը տարավ:  
 Քուրքը ուն առավ, սարը բարձրացավ.  
 Սարը բարձրացավ, տեսավ, ի՞նչ տեսավ:  
 Ըերմակ վըրանից դաշտը ճերմակել,  
 580 Ասես՝ էն գիշեր ճըմեռը եկել,  
 Սպիտակ ձյունով պատել էր Սասուն:  
 Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,  
 Հարա՛յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.  
 — Վա՛յ, փախե՛ք, եկա՛մ... հա՛յ, հարա՛յ, եկավ...  
 — Ի՞նչը, հորեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն եկավ...  
 — Ցավն ու կըրա՛կը Դավթի պինչն եկավ:  
 Մըսրա թագավոր ելել է, եկել,  
 Եկել, մեր դաշտին բանակ է դարկել.  
 Թիվ կա աստղերին, թիվ չկա գորքին...  
 570 Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարքին...  
 Ե՛կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,  
 Չոքենք առաջին, պաղատանք անենք,  
 Դուցե թե գրթա,  
 Մեզ սըրի շըտա...  
 — Դու կա՛ց, հորեղբայր, դու դարդ մի՛ անիր.  
 Գընա՛, քու օգու՛մ դու հանգիստ քընիր.  
 Հիմի ես կելնեմ, Սասմա դաշտ կերթամ,  
 Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ:  
 Ու գընաց Դավթի ծանոթ պառավին.  
 580 — Նանի ջա՛ն, ասավ, ժանգոտած ու հին  
 Երկաթի կըտոր, անթարոց, շամփուր,  
 Ինչ ունես շունես, հավաքի՛ր, ինձ տուր,  
 Մի էշ էլ գըտիր, որ վըրեն նըստեմ,  
 Կըռիվ տի գընամ Մըսրա գորքի դեմ:  
 — Վա՛յ, Դավթի, ասավ, մահս տանի քեզ.

Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս...  
 Քու հերն ուներ կըովի համար  
 Հըրեղեն ձի, ոսկի քամար,  
 Մալ-ծալ կապեն, գուռը պողպատ,  
 590 Թամբ սաղափեն, կուռ սաղավարտ,  
 Խաչ պատրաստին իր աջ բազկին,  
 Ջըրահ շապիկ, Թուր-Կեծակին,  
 Դու եկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,  
 Ինձնից կուզես էշ ու շամփու՛ր...  
 — Ամա՛ն, նանի՛, չեմ լըսել դեռ:  
 Ո՛ւր են հիմի իմ հոր գենքեր:  
 — Հորեղբորդ գընա հարցուր.  
 Ո՛ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:  
 Բան է, թե որ շըտա սիրով,  
 600 Աչքը հանիր՝ խըլիւր գոռով:

XIX

Դավիթ գընաց հորեղբոր մոտ.  
 — Է՛յ հորեղբայր, կանչեց հերսոտ,  
 Իմ հերն ուներ կըովի համար  
 Հըրեղեն ձի, ոսկի քամար,  
 Մալ-ծալ կապեն, գուռը պողպատ,  
 Թամբ սաղափեն, կուռ սաղավարտ,  
 Խաչ պատրաստին իր աջ բազկին,  
 Ջըրահ շապիկ, Թուր-Կեծակին,  
 Կըտաս—բեր տուր...  
 610 — Վա՛յ, Դավիթ ջա՛ն,  
 Ահից գոռաց Ձենով Օհան.  
 Քու հոր մահվան տարուց—օրից  
 Դուրս չեմ հանել ձին ախոռից,  
 Ոչ սընդուկից Թուր-Կայծակին,  
 Ջըրահ շապիկ, ոսկի գոտին...  
 Ինձ թող, ամա՛ն, մի՛ սպանիր,  
 Կուզես—հըրեն, գընա հանի՛ր:



- Հագազ Դավիթ զենքն ու զըրահ,  
 Կապեց գոտին, Թուր-Կեծակին,  
 620 Խաշն էլ իր հաղթ բազկի վըրա,  
 Ելավ, հեծավ Առյուծ հոր ձին,  
 Հոր ձին հեծա՛վ ու մըտրակեց.  
 Չենով Օհան լալով երգեց.  
 — Ափսո՛ս, հագա՛ր ափսոս հըրեղեն մեր ձին,  
 Ա՛խ, հըրեղեն մեր ձին.  
 Ափսո՛ս, հագա՛ր ափսոս մեր ոսկի գոտին,  
 Ա՛խ, մեր ոսկի գոտին.  
 Ափսո՛ս, թանկ կապեն, որ հագին տարավ,  
 Ա՛խ, որ հագին տարավ...
- 630 Դավիթ բարկացավ,  
 Ձին քշեց, դարձա՛վ,  
 Օհանը վախեց,  
 Իր երգը փոխեց.  
 «Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ,  
 Ա՛խ, Դավիթըս կորավ»:
- էս որ իմացավ,  
 Դավիթ մեղմացավ,  
 Իջավ, Օհանի ձեռքը համբուրեց:  
 Չենով Օհանն էլ, ինչպես հայր ու մեծ,  
 640 Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար,  
 Դեպի Սասմա դաշտ դըրավ ճանապարհ:

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,  
 Անունը Թորոս, ահեղ աժդահա:  
 Սա էլ իմացավ համբա՛լը կըռվի,  
 Մի բարդի ուսին գալիս է ահա:  
 Գալիս է՝ հեռվից բարձըր գոռալով.  
 — Ի՛նչ եք վեր եկել էս դաշտի միջում,  
 Քանի գըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,

Սասունցի Դավթին որ շեք ճանաչում...

- 650 Բա շե՛ք իմանում, որ էստեղ է նա  
 Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.  
 Չըքվեցե՛ք, հիմի ուր որ է՝ կըգա,  
 Եկել եմ սըրբեմ մեյդանը էսօր:

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,  
 Սըրբեց բանակից մի քըսան վըրան...  
 Դավիթն էլ ահա սարի զագաթին  
 Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

- Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,  
 Ով արթուն եք՝ ելե՛ք, կեցե՛ք,  
 660 Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք.  
 Ձե՛նք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,  
 Ձի եք թամբել՝ ելե՛ք, հեծե՛ք.  
 Հետո շասեք՝ թե մենք քընած—  
 Դավիթ գող-գող եկավ, գընաց...

էսպես կանչեց, ասպանդակեց,  
 Ու, ինչ ամպից կայծակ զարկի,  
 Մըսրա զորքի մեջտեղ զարկեց,  
 Շողացնելով Թուր-Կայծակին:

- Ջարդեց, փըշրեց մինչև կեսօր.  
 670 Կեսօր արինն ելավ հեղեղ,  
 Քըշեց, տարավ հագարավոր  
 Մարդ ու դիակ ողջ միատեղ:

Կար զորքի մեջ մի ալևոր,  
 Աշխարք տեսած ու բանագետ.  
 — Տըղե՛րք, ասա՛վ, ճամփա տըվեք,  
 Գընամ խոսեմ ես Դավթի հետ:

- Գընաց՝ կանգնեց Դավթի առաջ,  
 էսպես խոսեց էն ծերունին.  
 — Դալար կենա՛, կուռդդ, ո՞վ քաջ,  
 680 Սուրըդ կըտրուկ միշտ բու ձեռին:

Մի ծերունուս խոսքին մըտիկ,  
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:  
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,  
Հե՞ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր որդի,  
Ամեն մինը մի տան ճըրագ,  
Որը կինն է թողել էնտեղ  
Աչքը ճամփին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,  
790 Որը ծընող աղքատ ու ծեր,  
Որը լացով, քողն երեսին  
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թըրով  
Հավաքել է, էստեղ բերել:  
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,  
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագափորն է քու թըշնամին,  
Կրոիվ ունես— իր հետ արա,  
Հե՞ր ես քաշում Թուր-Կայծակին  
700 էս անճարակ խալխի վըրա:

— Լավ ես ասում դու, ծերունի՛,  
Ասավ Դավիթն աշևորին,  
Բայց թագավորն ո՞ւր է հիմի,  
Որ սև կապեմ նըրա օրին:

— Մեծ վըրանում քընած է նա,  
է՛ն, որ միջից ծուխը կելնի,  
էն ծուխն էլ հո ծուխ չի որ կա,  
Գոլորշին է իր բերանի:

Ասին. դեպի մեծ վըրանը  
710 Ասպանդակեց Դավիթն իր ձին,

Քըշեց, գընաց ու դըռանը  
Գոռաց կանգնած արաբներին.

— Ո՞ւր է, ասավ, ի՞նչ է կորել,  
Դուրս կանչեցե՛ք, գա ասպարեզ,  
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,  
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

— Մելիքն, ասին, քուն է մըտել,  
Օխտը օրով պետք է քընի.  
Երեք օրն է դեռ անցկացել,  
720 Զորս օր էլ կա, քունը առնի:

— Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ  
Խալխին լըցրել ծովն արյունի,  
Ինքը մըտել վըրանի մեջ՝  
Օխտը օրով հանգիստ քընի՛...

Քընել-մընել չեմ հասկանում,  
Վե՛ր կացրեք շո՛ւտ, դուրս գա մեկդան,  
էնպես դըրան ես քընացնեմ,  
Որ շըզարթնի էլ հավիտյան:

Ելան՝ մարդիկ ճարահատված  
730 Շամփուր դըրին թեժ կըրակին.  
Ու գարկեցին խոր մըրափած  
Մըսրա-Մելքի բաց կըրնկին:

— Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ  
էս անիծված լըփի ձեռից,  
Խոր մըրունչաց հըսկան հանդարտ  
Ու շուռ եկավ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ գութանի  
Խոփը՝ դըրին թեժ կըրակին,  
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,  
740 Շիկնած տըփին մերկ թիկունքին:

— Օ՛ֆ, էլ հանգիստ քուն շունի մարդ  
էս անիրավ մոծակներից,  
Աչքը բացավ հրսկան հանդարտ,  
Ուզում էր ետ քրնել նորից:

Տեսա՛վ Դավթին: Գլուխն ահեղ  
Վեր բարձրացրեց մըռընչալով,  
Փըչեց վըրենն, որ թըռցընի  
էն աժդըհին մի փըչելով:

Տեսա՛վ, տեղից ժած չի գալի,  
750 Զարմանքն ու ահ պատեց հոգին:  
Արնոտ աչքերն ըսպառնալի  
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ  
Տասը գոմշի ուժ պակասեց:  
Պառկած տեղից փրա նստեց  
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարով, Դավիթ, հոգնած ես դեռ,  
Ծ՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,  
Հետո դարձյալ կըռիվ կանենք,  
760 Եթե կըռիվ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը  
Քառսուն գազ խոր հոր էր փորել,  
Ցանցով փակել մութ բերանը,  
Վըրենն փափուկ խալի փըռել:

Ում որ հաղթել չէր կարենում,  
Շողոմելով կանչում էր նա,  
Նըստեցնում էր իր վըրանում  
էն կորստյան հորի վըրա:

Իջավ Դավիթ ձիուցը ցած,  
770 Գընաց նըստեց... ընկա՛վ հորը.

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց  
Մըսրա դաժան թագավորը:

— Դե, թող հիմի դընա՛ խավար  
Հորում փըթի, էնքան մընա:  
Ու ահագին մի շողացքար  
Բերավ, դըրավ հորի վըրա:

## XXII

Քընեց էն գիշեր Ձենով Օհանը:  
Գիշերն երազում երևաց ծերին՝  
Մըսրա երկընքում արև ճառագած,  
780 Սև ամպ էր պատել Սասմա սարերին:

Սաստիկ վախեցած փեր թըռավ տեղից:  
— Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,  
Գընա՛ց մեր անփորձ Դավիթը ձեռից,  
Սև ամպ էր իջել Սասունի վըրա:

— Հողե՛մ գըլուխդ, ասավ կընիկը,  
Ո՛վ գիտի՛ Դավիթն ո՛ւր է քեֆ անում...  
Դու էլ քեզ համար քու տանը ընկած՝  
Ուրիշի համար երազ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վերկացավ դարձյալ.  
790 — Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն է ընկած.  
Մըսրա վառ աստղը շողում էր պայծառ,  
Մեր աստղը հիվանդ ցուլում գալկացած:

— Ի՞նչ եղավ քեզ, մա՛րդ, գիշերվան կիսին.  
Բարկացավ վըրենն կընիկն աղմուկով:  
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,  
Շուռ եկավ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.  
Տեսա՛վ՝ երկընքի բարձըր կամարում

Վառվում էր Մըսրա աստղը փառահեղ,  
800 Սասմա աստղիկը սուզվեց խավարում:

Զարթնեց վախեցած:— Տունդ քանդվի, կի՛ն:  
Ես ո՛նց լրսեցի բու էդ կարճ խելքին.  
Կորավ մեն-մենակ մեր ջահելն անտեր.  
Վե՛ր կայ, շո՛ւտ արա, գենքերըս մի բե՛ր...

### XXIII

Ելավ Օհան, գոմը մըտավ,  
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.  
— Է՛յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասավ,  
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մինչև լուսը կըհասցընեմ».  
810 Ու ձիւ տըվավ փորը գետին.  
— Մեջքըդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.  
Լաշին հասնեմ ես թե՞ նաշին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.  
Սա էլ երես փորը գետին.  
— Զա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ  
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,  
Կըհասցընեմ Դավթի կըռվին»:  
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,  
820 Ինչ տըվել եմ քեզ՝ էն գարին:

Հերթը եկավ սեին հասավ.  
Գետին շերտ փորը սև ձին:  
— Է՛յ, զան Սևուկ, մինչ ե՞րբ, ասավ,  
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Եթե ամուր մեջքիս մընաս,  
Ոտըդ դընես ասպանդակին,

Մինչև մեկել ոտըդ շուռ տաս,  
Կըհասցընեմ», ասավ սև ձին:

### XXIV

Սև ձին քաշեց Զենով Օհան,  
830 Զախը դըրավ ասպանդակին,  
Աջն էլ մինչև շուռ տար վըրան,  
Կանգնեց Սասմա սարի գըլխին:

Տեսավ՝ Դավթի նըթույզն անտեր  
Սարերն ընկած խըրխընջալով,  
Ներքև Մըսրա գորթը շոքած,  
Ինչպես անձեր ծրփուն մի ծոփ:

Օխտը գոմշի կաշի հագավ,  
Որ շըպատոսի իրեն գոռից,  
Կանգնեց Օհան, ամպի նըմա՛ն  
840 Գոռաց Սասմա սարի ծերից:

— Հե՛յ-հե՛յ Դավթ՛ թ, ո՛րտեղ ես դու.  
Հիշի՛ր Խաշը քո աջ թևի,  
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,  
Ու դուրս արի լույսն արևի...

Զենը գընաց դըմբղըմբալով՝  
Դավթի ականջն ընկավ հորում.  
— Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեղբայրս է,  
Սասմա սարից ինձ է գոռում:

Ո՛վ Մարութա Աստվածածին,  
850 Ո՛վ անմահ խաշ պատարագի,  
Զե՛զ եմ կանչել,— հասե՛ք Դավթին...  
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

էնպես զարկեց ջաղացքարին՝  
Քարը եղավ հազար կըտոր,

Գրտոր՝ երբ երկինք թրոան,  
Ու գրնում են մինչև էսօր:

Ելա՛վ հարից, կանգնեց ահեղ,  
Աարսափ կալալ ղև Մելիքին:  
Դավիթ ախպեր, ե՛կ ղեռ էստեղ,  
860 Լեւան նր. տե՛նք, խոսանք կարգի՛ն. . .

— էլ չեմ նըստիլ ես քու հացին,  
Դու տրմարդի. վախկոտ ու նենգ.  
Շա՛տ. գենքըդ առ, հեծիր քու ձին,  
Դու րս եկ մեյդան, կըռիվ անենք:

— Կըռիվ անենք, ասավ Մելիք,  
Իմն է միայն զարկն առաջին:  
— Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դավիթ,  
Գրնաց, կեցավ դաշտի միջին:

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,  
870 Իր գո. րգն առավ, հեծավ իր ձին,  
Քըշեք. զընաց մինչ Դիարբեքիր  
Ու էնտեղից եկավ կըրկին:

Երեք հազար լիզր էր քաշում  
Հրակայական իր մըկունդը.  
Եկավ. զարկեց. կորավ փոշում  
Ու երեքաց երկրի գունդը:

— Երկիր քանդվեց կամ ժածք եղավ,  
Ասին մարդիկ շատ աշխարքում:  
— Չէ՛, ասացին. արնի ծարավ  
880 Հրականերն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ էս մի զարկից,  
Ասավ Մելիք իրեն զորքին:  
— Կենդանի՛ եմ, ամպի տակից  
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելիքին:

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,  
Տե՛ս, ո՛ր տեղից հիմի կըգամ:  
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,  
Իր ձին հեծավ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քըշեց Հալաք  
890 Ու բաց թողեց ձին Հալաքից.  
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,  
Արար աշխարհ զողաց թափից:

Եկավ, զարկեց. զարկի ձենից  
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան:  
— Գրնա՛ց Դավիթ Սասմա տանից,  
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:

— Կենդանի՛ եմ, կանչեց Դավիթ,  
Մին էլ արի՛ — հերթն ինձ հասավ:  
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,  
900 Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Երրորդ անգամ հեծավ իր ձին,  
Գրնաց մինչև հողը Մըսրա,  
Ու էնտեղից, գուրզը ձեռին  
Քըշեց, եկավ Դավթի վրա:

Եկավ, զարկեց բուր ուժով,  
Մանըր զարկով հըսկայական,  
Փոշին ելավ Սասմա դաշտից,  
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր  
910 Փոշին կանգնեց ամպի նըման,  
Երեք գիշեր ու երեք օր  
Բոթը տըվին Դավթի մահվան:

Երբ որ անցավ երեք օրը,  
էն ամպի պես կանգնած փոշում

Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,  
Գրրգուտ սարը մեզ-մըշուշում:

Մելի՛ք, ասավ, ո՛ւմն է հերթը,  
Սարսափ կալավ զոտ Մելիթին,  
Մահվան դողը ընկավ սիրտը  
920 Ու տապ արավ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,  
Իջավ, մըտավ վիհն էն խափար,  
Վըրեն քաշեց քառսուն կաշի  
Ու քառսուն ջաղացի քար:

Մըռնչալով ելավ տեղից  
էն առյուծի առյուծ որդին,  
Իր ձին հեծավ ու փոթորկեց,  
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

Առաջ փազեց մազերն արծակ  
930 Մելթի պառավ մայրը ջադու.  
— Դավի՛թ, մազըս ա՛ռ ոտիդ տակ,  
էդ մի զարկը ի՛նձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ Թուրը քաշեց.  
էս անգամ էլ եկավ բուրը.  
— Դավի՛թ, եթե կուզես, կանչեց,  
Իմ սըրտին զա՛րկ երկրորդ Թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,  
Ելավ Դավիթ երրորդ անգամ.  
— էս մի զարկն ու աստված, ասավ,  
940 էլ մարդ չըզա, պետք է որ տամ:

Ասավ, ելավ ու փոթորկեց,  
Թըռավ, ցուաց Դավթի հուր ձին,  
Ձին փոթորկեց, փայլատակեց  
Ու ցած իջավ Թուր-Կայծակին:

Անցավ քառսուն գոմշի կաշին,  
Անցավ քառսուն քարերը ցած,  
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,  
Օխտը զազ էլ դենը գընաց:

— Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,  
950 Գոռաց Մելիթ հորի տակից:  
Դավիթ լըսեց, շատ զարմացավ  
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

— Մելի՛ք, ասավ, թա՛փ տուր մի քեզ:  
Ու թափ տըվավ Մելիթն իրեն,  
Միջից եղավ ճիշտ երկու կես,  
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն:

էս որ տեսավ Մըռա բանակ,  
Ջուր կըտըրվեց ա՛հ ու վախից:  
Դավիթ կանչեց.— Մի՛ վախենաք,  
960 Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչար մարդիկ, ասավ,  
Ջուրկ ու խափար, քաղցած ու մերկ,  
Հազար ու մի կըրակ ու ցավ,  
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՛նչ եք առել նետ ու աղեղ,  
Եկել թափել օտար դաշտեր.  
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,  
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Ձանձրացե՛լ եք խաղաղ ու հաշտ  
970 Հողագործի օր ու կյանքից,  
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,  
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք եկած ճանապարհով,  
Ձեր հայրենի հողը Մըսրա.

Հորում լինեն քառսուն զազ խոր  
Քե ջաղացի քարի տակին,—  
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,  
ՅՅՅ Սասմա Դավիթ, Քուր-Կայծակին:

էն ժամանակ աստված գիտի,  
Ով մեզանից կըլնի փոշման.  
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,  
Քե՞ դուք, որ մեզ արիք դուշման...

Ս Ա Ս Ո Ւ Ն Ց Ի Դ Ա Վ Ի Թ Ը

Բ ՄԱՍԸ

1

Ընկավ Մելիքն ամբարտավան ու պատերազմն արյունոտ:  
Խաղաղ կյանքի, ուրախ օրվան բացվեց հայոց առավոտ:  
Գըտավ կորցրած հանգիստն էլ ետ ամենն իրեն հարկի  
տակ,

Վեր բարձրացավ կըտուրներից ծուխը բարդ-բարդ,  
կապուտակ:

Կըտրիճ տըղերք զենքի տեղակ առան մանգաղ,  
գերանդին,

Զըր՛նգ, զըր՛նգ, զըվարթ ձենով գործը թընդաց մեր  
հանդին,

Դը՛մբ, հա դըր՛մբ, թըմբուկ զարկին, զուռնեն\* հընչեց  
զիլ, ուժ՛ղ,

ՔեՖ, կեր ու խում, պար ու խընդում, ու հարսանիք  
ամեն տեղ:

— Ապրի Դավիթ, [մեր ապավեն], որ մեզ տըվավ  
ուրախ օր,

10 Իրեն կանանչ կարմիրն էլ թող էսպես կապենք  
բախտավոր...

Ու նըշանեց Ձենով Օհան, Դավթին արավ տուն ու տեղ,  
Աղջիկ ուզեց արժանավոր, թագավորի զարմ ու ցեղ:

\* Ձուռնեն թաթարները բերին Հայաստան:

Խըլաթ քաղքի թագավորի դուստրը խոսեց նըրան կին,  
Չըքնաղագեղ ու փահլեան էն Չըմըշկիկ Սուլթանին:

2

Բայց թե աղջիկ կուզես շըքնաղ, անպարտելի փահլեան,  
Արի՛, գընանք Կապուտ Բերդի թագավորի աղջկան:  
Խանդութ խանո՛ւմ... հուրի ասա, մի աննըմա՛ն, մի  
անտե՛ս...

Խանդութ խանո՛ւմ... հավում էին սըրտերն ամեն մոմի  
պես:

Օխտը տարի քառսուն հըսկա թագավորներ ատղահակ  
20 Գուրգերն առած նըստած էին նըրա բերդի պատի տակ.  
Բայց [անտարբեր] գեղեցկուհին իր ամրոցում ահագին,  
Ու շէր զարկում կարմիր խնձորն և ոշ մեկի թիկունքին:

3

Ձենը ելավ, աշխարք ընկավ, գընաց, հասավ Կապուտ  
Բերդ,  
Թե մեծ կըրվում հաղթեց Դավիթ Մըսրա տիրոջն  
անհեթեթ:

էս հաղթական լուրի վըրա քանդվեց սիրտը սիրունի.

Ա՛խ, Սասունցի քաջ Դավիթը իմը լինեք երանի...

Երեսեկ տըրվավ՝ խելքը թըռավ, ուշքը թըռավ դեպ

Սասում.

Դավիթն է միշտ մըտքի միջին, Դավիթն է միշտ

երազում:

4

Երկու աշուղ կանչեց Խանդութ, ոսկի տըրվավ լիառատ,

30 — Դնացե՛ք, ասավ, Սասմա քաղաք, Ջոջանց տունը  
բազմահաղթ.

Իմ գովքն արեք Դավթի առաջ, սերըս սիրտը ձըգեցեք,

Ու կըտրեցեք աչքի քունը, սըրտի հանգիստն կըտրեցեք:  
Ապա ինձնից բարով արեք, ասեք՝ մինչ ե՞րբ մընամ

քեզ,

Չիավորված < . . . > թըռած՝ ե՞րբ պիտի գաս ինձ

տանես...

Սազներն առան աշուղները ու հողից հող < . . . > ,

Սազ անելով եկան հասան Սասմա քաղաք, Ջոջանց

տուն:

Բարով տըրվին շեմքում նստած էն ջոջ Ձենով Օհանին,

է՛ս է, ասին, աստվածապահ Ջոջանց տունը [մեծ ու  
հին]:

— է՛ս է, ասավ Ձենով Օհան, ի՞նչ եք ուզում դուք

Սասուն:

40 — Մենք < . . . > , աշուղներ ենք, Դավթին կուզենք

դյուցազուն:

Խանդութ խան:ւմ դըրկել է մեզ՝ իր գովքն անենք

Դավթի մոտ,

Պատմենք անտես էն սիրունի անքուն սերը ու կարոտ:

Աստված ինքը թող շեն պահի Ջոջանց տունը փառավոր.

Շեն պահողին ապրած պահի [էն քաջ Դավթին]

< . . . > .

Ջոջանց պարծանք քաջ Դավիթը ո՞րն է արդյոք,

բարեկամ:

— Քաջ Դավիթը, որ լըսել եք, ես եմ, ասավ, հենց որ

կամ.

Ինչ որ Դավթին պիտի ասեք, իմ առջին ասեք դուք:

էսպես ասավ Ձենով Օհան, աշուղները < . . . >

նըստոտեցին ծալապատիկ, < . . . > [ուսներից վեր  
բերին],

50 Ու էրվելով, օրորվելով սազներն առան ծընկներին:

— Օրհնյալ աստված, տեր բարերար,

Քու գորքն է շատ, քու գործն արդար.

Դու պահապան կըտրիճ Դավթին,

Կըտրիճ Դավթին, իր մուրատին.

Իրեն մուրատն իրեն սըրտում,

Իրեն սըրտում — Կապուտ Բերդում...



Օրհնյալ աստված, բանդ ու բարիդ.

Ամենը սուտ, դու ճշմարիտ:

Դու, որ < . . . > ըսկըզբանե

60. Ըստեղծել ես < . . . >

Խանդութ խանում Դավթի համար,

Դու արժանի անես իրար:

Վա՛յ քու տունը քանդվի, Խանդո՛ւթ,

Վա՛յ [քու դուռը փակվի], անգո՛ւթ,

Դու քու անհաս աշտարակում,

Աշխարհ ամեն քու կըրակում.

< . . . . . >

Հասակն ասես՝ շիտակ, Դավի՛թ, դրախտի միջում

կանգնած նոճին,

Ա՛խ, կանդնած նոճին.

70 Մըծերն ասես՝ շուխտակ, Դավի՛թ, զանգակներ են

ծոցի միջին,

Ա՛խ, ծոցի միջին.

Աչքերն ասես՝ ծով են, Դավի՛թ, ու [կը] ցոլան աստղ ու

արև,

Ա՛խ, աստղ ու արև.

Ունքերն ասես՝ սև են, Դավի՛թ, սև ամպերը ծովի վերև,

Ա՛խ, ծովի վերև.

Ճակատն ասես՝ ճերմակ, Դավի՛թ, էն նոր ձրնած դաշտը

սերսուփ,

Ակոբքն ասես՝ գերմակ, Դավի՛թ, լա < լ > մարգարտի

շարոց են սուրբ.

Մամերն ասես՝ ճոխծամ, Դավի՛թ, կրունկն են ծեծում

հողին հափսար,

Վիզը ասես՝ ճոճան, Դավի՛թ, շողման կրափն ու շուրթը

լառ ..

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

1902 — 1903

ՆԱՍԵՐԳԱՆՔ

Հե՛յ, պարոննե՛ր, ահանջ արեք  
Թափառական աշուղին,  
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,  
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին:

Մենք ամենքըս հյուր ենք կյանքում  
Մեր ծնընդյան փուշ օրից,  
Հերթով՛ գալիս, անց ենք կենում  
էս անցավոր աշխարհից:

Անց են կենում սեր ու խընդում,  
10 Գեղեցկություն, գանձ ու գահ,  
Մահը մերն է, մենք մահինը,  
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,  
Որ խոսվում է դարեդար,  
Երնե՛կ նըրան, որ իր գործով  
Կապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,  
Անե՛ծք նըրա շար գործքին,  
Որդիդ լինի, թե հերն ու մեր,  
20 Թե մուրազով սիրած կին:

Ես լավության խոսքն եմ ասում,  
Որ ժըպտում է մեր սըրտին.

Ո՛վ չի սիրում, թեկուզ դուշման,  
լավ արարքը, լավ մարդին:

է՛յ, լա՛վ կենաք, ահա՛նչ արեք,  
Մի բան պատմեմ հիմի ձեզ,  
Խոսքես, տեսեք, ո՛ւր է գրնում,  
Քաջ որսկանի գյուլի պես:

### I

Նադիր Շահը զորք հավաքեց,  
80 Զորք հավաքեց անհամար,  
Եկավ Թըմկա բերդը պատեց,  
Ինչպես գիշերն էն խավար:

— Հե՛յ, քաջ Թաթուլ, կանչեց Շահը,  
Անմա՛հ էիր քեզ կարծում.  
Ե՛կ, բերել եմ ես քու մահը,  
Ի՛նչ ես թառել ամրոցում:

— Մի՛ պարծենա, գոռոզ Նադիր,  
Պատասխանեց էն հրսկան.  
Գըլխովը շա՛տ ամպեր կանցնեն,  
40 Սարը միշտ կա անասան:

Ասավ, կանչեց իր քաջերին,  
Թուրը կապեց հավուռի,  
Թըռավ, հեծավ նրժույգ իր ձին,  
Դաշտը իջավ արյունի:

Ու քառսուն օր, քառսուն գիշեր,  
Կըռիվ տըվին անդադար,  
Ընկան քաջեր, անթիվ քաջեր,  
Բերդի գըլխին հավասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,  
50 Թաթուլն անհաղթ, անըկուն,

Զորք ու բաբան խորտակվել են,  
Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, հաղթանակով  
Իր ամրոցն է դառնում նա.  
Սպասում է էնտեղ կինը,  
Զահել կինը սևաշյա:

### II

էն տեսակ կին,  
Ես իմ հոգին,  
Թե աշուղն էլ ունենար,  
60 Առանց զենքի,  
Առանց զորքի  
Շահերի դեմ կըգընար:

Սիրո հընոց,  
Կրակ ու բոց՝  
էնպես աչքեր թե ժըպտան,  
Մարդու համար  
Օրվա պես վառ  
Գիշերները լույս կըտան:

Վարդի թերթեր՝  
70 էնպես շուրթեր  
Թե հաղթություն քեզ մաղթեն,  
էլ քեզ ո՛չ Շահ,  
Ո՛չ ահ ու մահ,  
Ո՛չ զենք ու զորք կըհաղթեն:

### III

Ու կըռվի դաշտում Շահի առաջին  
Արին մի անգամ գովքը սիրունի,  
Նըրան՝ իր տեսքով, հասա՛յով, ասին,

Չի հասնի շրջնաղ հուրին Իրանի:  
Սո՛վ են աչքերը Զավախքի դրստեր,  
80 Ու կորչում է մարդ նրա հայացքում,  
Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,  
Որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում:  
Նա է շունչ, հոգին իշխան Քաթուլի,  
Նրրա սիրովն է հարբած էն հրսկան,  
Նրրա ժպիտն է քաջին ուժ տալի,  
Որ դաշտն է իջնում առյուծի նրման:  
Քե տիրես, մեծ Շահ, դու նրրա սրբտին,  
Քաթուլն էլ անզոր կրնկնի ոտիդ տակ,  
Հանգիստ կըտիրես և Քըմուկ բերդին,  
90 Որ շես կարենում էսքան ժամանակ:

#### IV

էսպես է ասել հրնուց էդ մասին  
Ֆարսի բյուրյուլը, անմահ Ֆիրդուսին.  
Ի՛նչը կհաղթի կյանքում հերոսին,  
Քե շըլինին  
Կինն ու գինին:  
Արևի նման ճակատը պայծառ,  
Նայում է խրրոխտ, կանգնած ինչպես սար.  
Ո՛վ կանի նրրան գետնին հավասար,  
Քե շըլինին  
100 Կինն ու գինին:

Պարում է ասես կրոնիվ գրնալիս,  
Գետնըքից վերև թրուչում ման գալիս,  
Ո՛վ ցած կըբերի նրրան թրուչիս,  
Քե շըլինին  
Կինն ու գինին:

Քեկուզ և արար աշխարհ գա վըրան,  
Կերթա դեմ ու դեմ, տուր շի տալ իրան,

Ուուտեմ Զալն էլ շի հաղթիլ նըրան,  
Քե շըլինին  
110 Կինն ու գինին:

#### V

Ու ղըրկեց Շահը իր թովիչ երգչին,  
Գընա տե՛ս, ասավ, Քըմկա տիրուհուն,  
Երգի՛ իմ սերը նըրա առաջին,  
Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:  
Խոստացի նըրան իմ ոսկի գահը,  
Խոստացի նըրան ամե՛ն, ամեն բան,  
Ինչ որ կարող է խոստանալ Շահը,  
Երկրակալ Շահը իր սիրած կրնկան:

Ուր ահեղ կրովով շի մտնիլ արքան,  
120 Ղոնաղ է աշուղն իրեն սագի հետ.  
Եվ ահա մի օր ծեր, թափառական  
Մի աղքատ աշուղ մըտավ Քըմկաբերդ:

#### VI

Գոռում են, դողում Քըմկա ձորերը,  
Կանգնած է Քաթուլ Շահի հանդիման.  
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,  
Արյունը հոսում էն Քրոի նրման:  
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,  
Արյունը հոսում էն Քրոի նրման.  
Երգում է աշուղն իր Շահի սերը,  
130 Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ Քըմկա տիրուհին.  
Եվ վըրդովում են իր միտքը թաքուն  
Դավաճան գործի ամոթը խորին  
Եվ արքայական փառքն ու մեծություն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,  
Ա՛յ նազանի աննրման.  
Նայի Շահի՛ն, իրեն զորքի՛ն,  
Աշխարհքի տերն անսահման...

140 Մեզ պես տրկար մարդ է նա էլ՝  
Սիրուններին միշտ գերի.  
Քու ճակատին թագ է վայել.  
Լինիս շքե՛ղ թագունհի...

Լըսում է շքնաղ թըմկա տիրուհին  
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից...  
Ու դարձավ նա լո՛ւտ, դալո՛ւկ, մըտախո՞հ,  
Ու քունը փախավ սիրուն աշքերից...

## VII

Դարձավ իր կրովից իշխան թաթուլը,  
Դարձավ հաղթական իրեն զորքի հետ,  
Սըրբեց, պատյանը դըրավ կեռ թուրը,  
150 Ցնծության ձայնից դողաց թըմկաբերդ:

Խընջույք է սարքել թըմկա տիրուհին,  
Ցերեկ է արել խավար գիշերը.  
Հեղեղի նըման հոսում է գինին,  
Ու քեֆ է անում Ջավախքի տերը:

Պըտույտ է գալի շքնաղ տիրուհին,  
Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,  
Հորդորում, խընդրում, որ ուրախ լինին,  
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

160 —Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,  
Բաժակները լիուլի,  
Խըմենք— աստված կըտրուկ անի  
Թուրը իմ քաջ թաթուլի:

— Է՛յ, ա:եր աստված կըտրուկ անի  
Թուրը մեր քաջ իշխանի,  
Նըրա շուքը միշտ հանապազ  
Մեր գըլխիցը անպակաս:

Ու թընդում է թըմուկ բերդը  
էն աղմուկից խընդության,  
Որոտում են տաղն ու երգը  
170 Գոռ ձայներով հաղթական:

— Էն մըթին ամպից արծի՞վն է իջնում,  
Սարի արծիվը շեշտակի թափով:  
— Էն թըմկա բերդից թաթուլն է իջնում,  
Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

— Էն թըմկա ձորում սև ա՞մպն է գւռում,  
էն շա՞նթն է ճայթում էնպես ահարկու:  
— Էն թըմկա ձորում թաթուլն է կըռվում,  
էն թուրն է շաշում էնպես ահարկու:

Ի՛նչ սարի արծիվ կըհասնի քաջին,  
180 Ի՛նչ: Շահ կրկանգնի նըրա սուաջին:

Ու չի դադարում երգի հետ վարար  
Կախեթի գինին խելագար հոսել.  
Խըմում են տիկնոջ թանկ կյանքի համար,  
Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել:

Խըմում են կըռվող քաջերի փառքին,  
Որ կըռվի դաշտում կյանք չեն խընայում,  
Ծա՛ղը կածնների սուրբ հիշատակին,  
Որ երկընքիցն են այժմ իրենց նայում...

Պըտույտ է գալի ծաղիկ տիրուհին,  
190 Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,  
Հորդորում, խընդրում, որ ուրախ լինին,  
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Օ՛ֆ, տիրուհի, աստված վկա,  
էլ շենք կարող մենք խրմել.  
էլ ուժ չըկա, էլ տեղ չըկա,  
Շատ ենք խրմել ու հոգնել...

Ու հանգչում է թրմուկ բերդը,  
Պապանձում է ու մարում,  
Հարբած, հոգնած տերն ու գորքը  
200 Մըրափում են խավարում:

### VIII

Լուռ ու խավարչտին կամարների տակ,  
Հոգնած ու քրնած բազմության վըրով  
Թրոչում են, թըռոչում, սև, շարագուշակ  
Նրազներն ահեղ, անվերջ խրմբերով:

Նրազ է տեսնում թաթուկ իշխանը,  
Որ վիշապ օձը եկել է ահա,  
Նկել փաթաթվել, իր բերդը պատել,  
Գըլուխը դըրել հտ պոչի վրա:

Ու բարձրացնում է հըրեղն ահուելի,  
210 Իրեն գըլուխը բարձրացնում է վեր,  
Բարձրացնում մինչև բարձունքը բերդի,  
Մինչև թաթուկի պալատն ու տըրներ:

Պառկած է իբրև թաթուկ իշխանը  
Նագելի կընոջ գըլուխն իր կըրծքին,  
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,  
Թո՛ղ, որ սպանեմ ես էդ հըրեղին:

էսպես է ասում թաթուկ իշխանը,  
Ու զարհուրանքով տեսնում է հանկարծ՝  
Իրեն սիրելի կընոջ գըլխի տեղ  
220 Օձի գըլուխն է կըրծքին ծանրացած...

### IX

է՛յ, հըսկեցե՛ք, ի՞նչ եք քընում,  
Քաջ գինվորներ թաթուկի.  
Ո՛վ է, տեսեք, տանջվում մըթնում,  
Քուն շի աչքին մոտ գալի:

Զըլինի՞ թե հաղթահարված,  
Ճարը հատած թըշնամին  
Դավ է դընում մութն ու մեռած  
Կես գիշերվա էս ժամին:

Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր  
230 Մարզ է գընում ու դալի.  
Հե՛յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեր,  
Պահապաններ թաթուկի:

Վե՛ր կացեք, վե՛ր, հարեցրել է  
Իր հաղթական հյուրերին,  
Բաց է անում դուռն ու դարպաս  
Ձեր դավաճան տիրուհին:

Դա՛վ... դա՛վ... ելե՛ք... կոչնա՛կ... պահնա՛կ...  
Ձենք առեք շո՛ւտ... ձի հեծե՛ք, ձի՛...  
Ճըռընչում են, դըղըրդում են  
240 Դարպասները երկաթի...

### X

Բաց սուսվ ցերեկն իր աչքը պայծառ  
Աշխարհքի վըրա, Զափախքի վըրա,  
Ավերակ բերդին, օե ամպի նըման,  
Մուխն ու թըշնամին չոքել են ահա:

Հաղթության փառքով ու գինով հարբած  
Քընած են բերդի կ՛ զորքերն, կ՛ տեր,  
Ու հավիտյան էլ մընացին քնած,  
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

Նըստած է Շահը. նըրա առաջին  
250 Ահա իրիկվան քեֆի սեղանը.  
Նայում է Շահը անտեր գահույթին,  
Մըտորովն անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ շրկա ոչ մի բան,  
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին,  
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,  
Ոչ սիրած կնկա տրված բաժակին...

Ու լի դառնություն հարցընում է նա  
Գալուկ, մարմարիոն թըմկա տիրուհուն.  
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաշյա,  
260 Մե՞թե թաթուր քաջ չէր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.  
Մի բարձր ու աղնիվ տղամարդ էր նա.  
Կնոջ մատնությունը ամբողջ չէր առել,  
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա...

Էւսես տիկինը տրվավ պատասխան.  
Անհուն ցասումից մըտընչաց Շահը.  
— Հե՛յ, գահի՛ճ, գոռաց գազանի նըման.  
Գահիճը իսկույն մըտավ սրահը:

## XI

Գահիճն եկավ ոտից գըլուխ  
270 Կարմիր հագած ու արյուն,  
Ու դուրս տարան իր պալատից  
Թըմկա շրքնաղ տիրուհուն:

Տարան անտակ էն ժեռ քարից,  
Որ կանգնած է մինչ էսօր,  
էն ահավոր քարի ծերից  
Գըլորեցին դեպի ձոր:

Գել ու աղվես եկան հանդից  
Ագահ սիրտը լափեցին,  
Ցին ու ագռավ իջան ամպից,  
280 Սև աչքերը հանեցին:

Անցավ անտես ու աննըման  
էն սիրունը աշխարհից,  
Ինչպես ծաղիկն անցած գարնան,  
Որ չի ծաղկիլ էլ նորից:

Անցավ զալում էն մեծ արքան  
Իրեն փառքով ու զորքով,  
Անցավ թաթուրն էն հաղթական  
Ու իր քաջերն էն կարգով:

Ու նըրանցից մենակ անմեռ  
290 էս գրույցը հասավ մեզ,  
Որ մեզանից հետո էլ դեռ  
Պետք է խոսվի միշտ էսպես:

## XII

Հե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք  
Թափառական աշուղին,  
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,  
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին:

Ամենքս էսպես հյուր ենք կյանքում  
Մեր ծնրնդյան փուշ օրից,  
Հերթով գալիս անց ենք կենում  
300 էս անցավոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ  
Գործն է խոսվում լավ ու վատ.  
Ա՛խ, երանի՛ ո՛վ մարդ կըզա  
Ու մարդ կերթա անարատ:

ՀԻՆ ԿՈՒՎԸ  
1902 — 1906



ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Տ Ա Ն Ը

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Մենք կարծում էինք, թե իր շանթերով  
Հրսկում է աստված Սասմա սարերին.  
Մենք ասում էինք՝ անթիվ նավերով  
Կրգան օգնության մեր ծանրը օրին...

Ավա՛ղ մեր պայծառ հույսերի համար.  
Ահա խորտակված, և ահա կրրկին  
Նայում ենք անհույս, մենա՛կ, դալկահար՝  
Մորթող թըշնամու արյունոտ ձեռքին:

Երկրի մեծերը շեն փոխում իրենց  
10 Մեռելի ոսկրին ողջ աղբը հայի,  
Մեր տունն են ուզում, մեր տեղն են ուզում,  
Մեր բուն երկիրը՝ մեզնից ամայի...

Նա էլ, որ աստծու անունով եկա՛մ,  
Փըրկչական խաշով, խոսքով գրթության,  
Նա էլ աստրծուն՝ կանգնեց՝ փառք տրվավ,  
Որ մենք հոշոտված, տանջված ենք էսքան...

Ու հոսո՛ւմ, հոսո՛ւմ, հոսում է անմեղ  
Արյունն-արցունքը տարաբախտ ազգի,  
Հոսում ամեն օր, հոսում ամեն տեղ,  
20 Եվ դեռ սոսկալին չի եկել իսկի...

Եվ ահա մենակ, խոցված ու ցավոտ,  
Քե մարմնով տանջված՝ հոգով առավել,  
Մենք միտք ենք անում մինչև առավոտ.  
— Տե՛ր ամենագետ, մենք ի՞նչ ենք արել...

### I

Հայի շար բախտը ինձ ներքև բերավ  
Բարձրը Գուգարքի ծաղկոտ սարերից,  
Իմ հոգին լրցրեց հառաչանք ու ցավ,  
Տըխուր երգերի քննար տրվավ ինձ:  
Դե՛, հեծծի՛ր, իմ երգ, ինչպես կըհեծծի  
30 Բուքն իմ ամայի աշխարհքի վերա,  
Անքուն կարոտի դուռը կըծեծի,  
Քե՛ քու անբախտը շրկա ու շրկա...  
Դե՛, հեծծի՛ր, իմ երգ, ինչպես սրգավոր  
Հայի հեծեծանքն ու բողոքն անվերջ,  
Ինչպես պանդուխտի թառանջ սրբտախոյ,  
Օտար դրոնհրում, անհայտ ճամփի մեջ...

### II

Իմ միտքն էլ, ազա՛ղ, շրջում է մուր  
Հայի հալածված պանդուխտի նրման,  
Մենակ ամեն տեղ, տըխուր ամեն օր,  
40 Ցավերով լրցված պանդուխտի նրման:  
Կորցրել է վազուց ամենն, ինչ ուներ,  
Փընտրածն էլ, էսպես, շի գրտնում բընավ,  
Անքուն շրթի պես գընում է երեք,  
Աշխարհքից աշխարհք, մի ցավից մի ցավ:  
Ու, ինչպես օտար աշխարհքից դարձող  
Կարօտած ճամփորդ, նրկատում է նա՛  
Հեռո՛ւ, մըթան մեջ, վառ կարմիր լուսով  
Մաղկում է ծանոթ լուսամուտն ահա...  
Մենակ ու խաղաղ ճըրագի առջև,  
50 Չոր ձեռքը տրված դալուկ ճակատին,  
Մըտքի ծովն ընկած մըտածում է նա,

Հին տառապանքի, հին ցավի որդին:  
Գըլխի վերևը տըխուր պատկերներ,  
Գըրբե՛ր ու գըրքեր իր շուրջը բուր...  
Ու ներս է մտնում մի բարի ըստվեր,  
Իր մայրը ցամքած, մայրը սևաշոր:  
— Ի՞նչ ես միտք անում, Վահա՛ն ջան, էդքան,  
Ասա՛, քեզ դուրբան, քո մըտքին դուրբան,  
Ի՞նչ ես միտք անում ու հալվո՛ւմ, հալվո՛ւմ...

60 — Բան չըկա, մայրի՛կ, գըլուխս է ցավում...  
— Չէ՛, սուտ ես ասում, ինձ չես խաբիլ էլ:  
էդ ո՞վ է, ասա՛, քո քունը կըտորի,  
էդ ո՞ր սիրունը, ո՞ր անուշ հոգին...  
— Հա՛, գըտա՛ր, մայրի՛կ... սիրում եմ մեկին...  
— Տեսա՛ր, որ ասի՛ չես խաբիլ ինձ էլ,  
Տեսա՛ր, ինչպես եմ ցավըդ իմացել...  
Ինչո՞ւ ես հապա ծածկում ինձանից,  
Մածկում ինձանից— քեզ սիրող նանից...  
Դե ո՞վ է, ասա՛, ես էլ կըսիրեմ...  
70 Դե ո՞ւր է, ասա՛... ո՞ւր է, որ բերեմ.  
Բերեմ, որ էդքան միտք շանես էլ դու...  
— Չես կարող, մայրի՛կ, նա շատ է հեռու...  
Նա շատ է հեռու, գերության միջում,  
Դու չես իմանում, դու չես ճանաչում...  
էնպես մի դըժար տեղ եմ սիրել ե՛ս...  
Չես կարող հասնես, չես կարող բերես...»  
Ու դուրս է գընում հուսահատ, մուր  
Իր մայրը ցամքած, մայրը սևաշոր,  
Աղոթում իրեն Վահանի համար,  
80 Աշխարհքի համար, ամենքի համար...

### III

Հայտնըվեց ապա մի օտար տըղա,  
Մի ուրիշ տըղա երևաց էլի,  
Խոսում են անքուն գիշերներն երկար,  
Խոսում են տաք-տաք, մո՛ւթ, կասկածելի...  
— Ո՞վ են, Վահա՛ն ջան, գալիս են քեզ մոտ,

- էդ ինչ տղերք են՝ գունա՛տ, անծանոթ...  
 Երնեկ իմա՛ամ՝ էդ ինչ եք ուզում,  
 էդ ի՞նչ եք էղբան խոսո՛ւմ ու խոսում...  
 — Պանդուխտ են, մայրի՛կ, ընկեր տըղերք են,  
 90 Քըշված, հալածված, ընկած դես ու դեն.  
 Տուն ու տեղ շունեն, ինձ մոտ են գալիս,  
 Զըրույց ենք անում, իրար սիրտ տալիս...  
 — Իմ անբախտ գա՛վակ, մանկուց վըշտակոխ.  
 Ընկերներդ էդպես հալածված, անհող,  
 Միրածըդ հեռու, գերութջան միջում...  
 Խոսում է մայրը, խոսում, հառաշում,  
 Ու դուրս է դընում կըրկին շրվարած...  
 Ամեն տեղ քընած, ամենքը լըռած...  
 Մենակ՝ մընում է իր անհոգ մարդուն,  
 100 Չի գալիս նա էլ, դեռ չի գալիս տուն.  
 Իր պեսների հետ էլի՛ էն անտեք  
 Գինետանն ընկած ու խոսում է դեռ...

IV

(Գինետանը)

- Կըտրել է վաղուց ամեն ձեն ու ձուն:  
 Գիշերվան կես է: Հոգնած ու անբուն,  
 Գըլուխը գինոտ դազգահին գըրած՝  
 Գինետան տերն էլ քուն մըտավ թըմրած:  
 Կեղտոտ լամպարի աղոտ լուսի տակ,  
 Մեղտեղը մի գավ, աղբատ ու անկարգ  
 Սեղանի շուրջը, իրենց անկյունում,  
 110 Երեք ծերունի գըրույց են անում:  
 — Ցավ-կըրակ դառավ էս լակոտն, ախպե՛ր,  
 էլ բան չի ասվում, հետը չի խոսվում,  
 Ուշքըն ու միտքը միշտ հեռու տեղեր՝  
 Չես էլ հասկանում, թե ինչ է ուզում...  
 Հավան չի կենում աշխարհքի կարգին.  
 Ասում է՝ մարդիկ բըռնութջան տակին...

- Միտս էլ չի գալիս՝ ինչպես է ասում.  
 Խըրթին, գըրաբառ բաներ է խոսում,—  
 էս մեկն՝ էսպես է, էն մեկելն՝ էնպես...  
 120 Երկուսից միներ— կամ նըրանք, կամ ես...  
 Սո՛ւս կաց, ասում եմ, էդ ի՞նչ ես անում...  
 Թե՛ դու հին մարդ ես, դու շես հասկանում...  
 — Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.  
 Ա՛յ քեզ նոր տըղա՛...  
 Դե բաժակը՛դ բե՛ր,  
 Մարտիրոս ախպեր,  
 Բեր մի-մի բերան  
 Կլանք խընդրենք գըրան:  
 էդ, ինչ որ դու ես խաբարը տալիս,  
 130 Մի ուրիշ տեսակ բան է դուրս գալիս...  
 Բարի հիշատակ լինի քեզ համար,  
 Տունըդ շեն պահի ու ծուխըդ վարար:  
 Ածում են կոնծում ընկեր ծերերը,  
 Բայց նոր է բացվել պատմութջան ծերը:

- Հա՛, ախպե՛ր, ուրիշ բան է դուրս գալիս.  
 Ես էլ հենց էդ եմ գըլխիս վայ տալիս,  
 Թե սըրա վերջը ուր պիտի գընա.  
 Տանից ու բանից եղած ավարա,  
 Աշխարհքի դարդը շալակն է առել՝  
 140 Ամենքի համար դարդաքաշ դառել...  
 Ընեկո թե օտար, ծանոթ, անծանոթ—  
 Ով վեր է կենում— վազում է իր մոտ.  
 — Վահա՛ն, ի՞նչ անենք... Վահա՛ն, ո՞նց կենանք...  
 Վահա՛ն, ի՞նչ կասես... Վահա՛ն, ե՞րբ գընանք...  
 Գըլխի՛ եք ընկնում՝ «էնտե՛ղ» են գընում...  
 «էնտեղ» հո գիտե՛ք, լավ եք իմանում...  
 — «էնտե՛ղ», օ՛Ֆ, «էնտե՛ղ»—  
 Կըրակ է անթեղ...  
 Դե բաժակըդ բե՛ր,  
 150 Մարտիրոս ախպեր,  
 Արի՛, մի սըրտանց

Կյանք խընդրենք դըրանց...

Ջահել ժամանակ ի՞նչքան եմ ես էլ

էդ ճամփի վըրա անքուն երազել,

Ի՞նչքան եմ ուզել թե փախչեմ ծածուկ...

Հիմի դըրանցն եք թարիֆ անում դուք...

Ուր գընան՝ աստված բանները աչի,

Չարը խափանի, բարին առաջի...

Ածում են կոնծում ընկեր ծերերը,

160 Բայց հեռու է դեռ պատմության ծերը:

— Շընորհակալ եմ, ողջ կենաք, ախպե՛ր,

էս տեսակ մի բան չեմ տեսել ես դեռ.

Տեղ ունես թե չէ՝ մըտիկ չեն տալիս,

Տասը գընում են՝ քրսանը գալիս,

Ինչ որ ճանկում են՝ ուտում են, թափում,

Ամբողջ գիշերը վիճում, աղմըկում,

Ամպի պես ծըխով սենյակը լըցնում...

էլ ոչ մահճակալ, ոչ տեղ են հարցնում.—

Մինը բարձրանում՝ սեղանին պառկում,

170 Մյուսը հատակին լեն-արձակ ձըգվում...

Ոչ աղբ են նայում, ոչ փողի, ոչ ցեխ,

Պառկում են էստեղ, պառկում են էնտեղ...

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.

Թամաշա է հա՛...

Դե բաժակըդ բե՛ր,

Մարտիրոս ախպեր,

Արի՛, մի սըրտանց

Կյանք խընդրենք դըրանց.

Շատ լավ տըղերք են, ես ու իմ հոգին.

180 Հավան եմ կենում դըրանց արարքին.—

Մարդը նա հո չի՝ հենց իրեն նայի,

Մարդը նա է, որ աշխարհքը շահի...

Տեր աստված պահի իրեն խընամում...

Ածում են՝ վերջին բաժակն էլ քամում,

Չեն հասնում սակայն պատմության ծերը,

Ու միշտ ընկնում է էզուց գիշերը:

Դատարկ փողոցով, բարձրը հազալով,

Ինքը իրեն հետ մենակ խոսելով,

190 Թըրը՛խկ հա շըրը՛խկ, գիշերվա մըթնում:

Եվ ուշ գիշերով հասնում է նա տուն:

Ճըրագը վառ է, «նըրանք» էլ զարթուն,

Աղմըկում են դեռ կողքի սենյակում,

էն նոր դուրս եկած երգերն են երգում:

Պառավն է, անքուն իրեն է մընում,

Ձեռները ծոցին դուրս ու տուն անում,

Ու մարդը շեմքից մըտած-չըմտած՝

Դիմացն է գալիս հունգած ու հատած:

— Բա՛, գիտե՞ս, ա՛յ մարդ, ի՞նչ իմացա ես,

200 Գիտե՞ս ինչիցն է մաշվում երեխես,—

Սիրո՞ւմ է մեկին...

— Վա՛յ քու կարճ խելքին...

Ի՞նչ սիրահարված, բա՛ն գիտես իսկի.—

Ազգի համար է միտք անում, ազգի՛.

Ուրիշի համար, խեղճերի համար...

Ի՞նչ սիրահարված, կարճամիտ հիմա՛ր,

Ի՞նչ ես հասկանում՝ ինչ կա աշխարհքում.

Ականջըդ մի բաց, տես ինչ են երգում...

(Տղերքը երգում են)

Սև սարերի ետև նըրանք

210 Տառապում են խավարում,

Լույս են ուզում ու ազատ կյանք

Աստծու ազատ աշխարհում:

Կանցնենք թափով

Սարերն ամպոտ,

Կերթանք խըմբով

Մենք նըրանց մոտ:

է՛յ, հերիք էր, շար բռնակալ,  
Քանի՞ տանջես խեղճերին,  
Խեղճը պիտի ապրի դարձյալ,  
220 Վայն եկել է քու օրին...

Ազատութեան որդիքն ենք մենք՝  
Թրուած դեպի ապագան:  
էսպես խըմբով սըլանում ենք,  
Ո՞վ կըփակի մեր ճամփան.  
Կայծակ կըլնենք  
Կիջնենք ամպից.  
Հեռո՛ւ ճամփից,  
Հեռո՛ւ ճամփից...

230 Հե՛յ, գալիս ենք, ո՞վ տանջվածներ,  
Գալիս ենք մենք գինափառ,  
Ծ՛վ ազատ օր, և՛ կյանք, և՛ սեր—  
Ողջ բերում ենք ձեզ համար:

## VI

Դողդոջ ու գունատ պառավները լուռ  
Ականջ են դրնում: Սարսափ ու սարսուռ  
Պատել է նրանց, և սարսափահար,  
Տեղները սառած, նայում են իրար.  
Ի՛նչ է կատարվում իրենց հին տանը,  
240 Ի՛նչ երգ է երգում իրենց Վահանը,  
Ի՛նչ երգ են երգում էս տղերքը նոր,  
Ի՛նչ երգ են երգում անգո՛ւսպ, աճափոր...  
Ամբողջ գիշերը կըրակի վըրի  
էն շամփրի նրման, անբուն ու ցավոտ,  
Պըտուտ են գալիս անկողնի միջին,  
Պըտուտ են գալիս մինչև առափոտ:  
— Վահա՛ն ջան, Վահա՛ն, ի՞նչ երգեր են էդ.  
Ի՛նչ վըտանգավոր երգեր եք երգում...

էդ ո՞ւր ես ուզում գընաս գըրանց հետ...  
250 Ի՞նչ է պատահել, ի՞նչ կա էն երկրում...  
— Է՛հ, մայրի՛կ, դու էլ՝ ի՛նչ երգեր են էդ...

Ջահել տղերանց երգեր են, էլի...  
Ջահել տղերք ենք, միտքներըս թըռչում՝  
Հազար մի հեռու տեղ են ման գալի...  
Ու ժողովները դարձան աղմըկոտ.  
Աշնան հավքերի էն տարմի նըման,  
Որ զըժվըժում է՝ շըվելուց առաջ  
Դեպի արևոտ կողմերը գարնան:  
Մի օր էլ հանկարծ աղմուկը լըռեց,  
260 Վահանը շեկավ էն գիշերը տուն:  
Չըկա մյուս օրն էլ, շըկա՛ ոչ մի տեղ,  
Ամեն հարցուփորձ անցավ ապարդյուն:  
Եվ ահա նամակ կորած Վահանից:  
Բանում են ըշտապ, դողդոջ ձեռքերով.  
Ասում է՝ իզուր էլ մի՛ փնտրեք ինձ.  
էլ մի՛ փնտրեք ինձ ու մընաք բարով...  
— Դուք ինձ կյանք տըվիք, դուք ինձ մեծացրիք,  
Բայց քանի էսքան ցավ կա աշխարհքում,  
Իմ կյանքն իմը չի, իմ սիրտն իմը չի,  
270 Չեմ կարող հանգիստ մընալ ձեր գըրկում:  
Ցավի աշխարհքում արնոտ ու անեղ  
Ուրիշ նոր կյանք է բացվել ինձ համար.  
Ուրիշ հայրեր են մընում ինձ էնտեղ,  
Ուրիշ մայրեր են կանչում անզաղար...  
Ներեցե՛ք, որ ձեզ թողնում եմ էդպես  
Անկա՛ր, անխընդում, ծերութեան օրով,  
Ներեցե՛ք ձեր խենթ, խելագար որդուն,  
Մոռացեք նըրան ու մընա՛ք բարով...

## VII

Որդու նամակը ծընկանը դըրած,  
280 Արցունքը ցամբած էն մաշված դեմքին,  
Խաղաղ իրիկվան դեմ ու դեմն ահա

Նրստած է մայրը իր դատարկ շեմքին:

Կատուն է կողքին մրուում միալար,  
Փոքրիկ Սերիկն էլ, կուշ եկած իր մոտ,  
էնպես միամիտ, տխուր, դալկահար  
Պռըշկել է մոր դեմքին արցունքու:

Նայում է մայրը, նայում է հեռուն,  
էն անհայտ հեռուն, ահավոր, անվերջ,  
Ուր գրնաց իրեն զավակը սիրուն,

290 Գրնաց «նրանց» մոտ, արյան ծովի մեջ...

— Ո՛վ քաղցրահայաց սուրբ Աստվածածին,  
Ո՛վ արագահաս զինվոր սուրբ Սարգիս,  
Դուք օգնեք խեղճին, հասնեք նեղվածին,  
Դուք տաք հովուի յուն արար աշխարհքիս.  
Հարեհաս լինեք «նրանց», ամենքին,  
Ամենքի հետ էլ իմ ճար ու մեկին...

Աղոթք է անում իր մեկի համար,  
Աշխարհքի համար, ամենքի համար,  
Մինչև թրուում է ճաճանչը ետին,

300 Մինչև որ մուծը առնում է գետին...

### VIII

Մըթնեց: Կըտրել է ամեն ձեն ու ձուն:

Գիշերվան կես է, խաղաղ լըռություն:

Հին գինետանը, իրենց անկյունում,

Երեք ձերունի զըրույց են անում:

— Ի՞նչ ես միտք անում, Մարտիրոս ախպեր.

Լա՛վ կըլնի վերջը... բաժակըդ մի բե՛ր...

Բե՛ր մի-մի բերան

Կյանք խընդրենք նըրան...

Տեր աստված բարի ճամփա տա իրեն,

310 Նըրա բաց աչքը լինի միշտ վըրեն...

Վատ բանի համար հո չի գրնացել...

Ի՞նչ ես մոլորված նրստած մընացել,

Բաժակդ էլ լիքը առաջիդ է դեռ...

Վերցըրո՛ւ, խըմի՛ր, Մարտիրո՛ս ախպեր...

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

Ճ Ա Մ Փ Ի Ն

ՆԱՍԵՐԳԱՆԹ

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,

Ու մենք անհատնում

էն անլույս մըթնում

Երկա՛ր դարերով գընում ենք դեպ վեր

Հայոց լեռներում,

Դըժար լեռներում:

Տանում ենք հնուց մեր գանձերն անգին

Մեր գանձիրը ծով,

Ինչ որ դարերով

10 Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին

Հայոց լեռներում,

Բարձրը լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի

Օրդուները սև

Լրարու ետև

Եկա՛ն, զարկեցին մեր քարվանսն ազնիվ

Հայոց լեռներում,

Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանը շրփոթ, սոսկահար,  
20 Թալանված, ջարդված  
Ու հատված-հատված  
Տանում է իրեն վերքերն անհամար  
Հայոց լեռներում,  
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ  
Հեռու աստղերին,  
Երկրնքի ծերին,  
Քե երբ կբացվի պայծառ առավոտ  
Հայոց լեռներում,  
30 Կանաչ լեռներում:

ԵՐՐՈՐԿ ԵՐԳ

Ե Ր Կ Ր Ո Ւ Մ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հեքիաթն ասում է, թե՛ մի աշխարհքում  
Բըխում էր առատ ջուրն անմահական,  
Բայց ազահ՛ վիշապն առաջը փակում,  
Մարավ էր թողնում աշխարհքն աննրման:

Նա գոհ էր ուզում սիրուն աղջիկներ,  
Որ ջուր բաց թողնի ծարավ աշխարհքին,  
Եվ, անմահության ջրի փոխարեն,  
Մարդիկ շատ դարեր արցունք խրմեցին:

Մինչև մի տրդա, Լույս երկրից եկած,  
10 Կըռվեց էն գերի աշխարհքի համար,  
Հաղթեց, ազատեց աղբյուրը փակված,  
Տանջվող հոգիներ փրկեց անհամար:

Ո՛չ, հեքիաթ չի սա լիքը հըրաշքով,  
Եղած թե չեղած Մըթին աշխարհքում,  
Ճըշգրիտ դեպք է սա տեսած իմ աչքով,  
Եվ հեքիաթ չըկա մեր անբախտ կյանքում...

Մեր երջանկության աղբյուրը փակած՝  
Մեր վարդ քույրերին հոշոտում է նա...

Ա՛խ, ի՛նչքան արյուն, արցունք է թափված  
20 Մեր սիրուն երկրի սարերի վրա...

## I

«Լո՛ւ-լո՛ւ, լո՛ւ-լո՛ւ, մերն են սարեր,  
Ծաղկոտ սարեր Տարոնի,  
Ծաղկոտ սարեր, ազատ օրեր,  
Սերն ու գրգվանք սիրունի...  
Լո՛ւ-լո՛ւ, լո՛ւ-լո՛ւ»...

Գըլո՛ւս տըվեք, գոռոզ սարե՛ր,  
Անց է կենում Մուսաբեկ,  
Գըլո՛ւս տըվեք, վախկոտ հայե՛ր,  
Զընչին գյուղեր ու օրեք:  
30 Ո՞ւր կա ոսկի, ո՞ւր սիրուն կին,  
Առաջ բերեք գըլխաբաց.  
Ո՞վ կա ընդդեմ նըրա կամքին,  
Ո՞վ է կյանքից կըշտացած...  
Մըշու երկրում թուր է գարկում՝  
Դողում են Վան իր թափից,  
Դողում են Վան, մինչ Արզըրում,  
Ահեզ թափից, սարսափից...

## II

Գըլուս տըվե՛ք, վախկոտ հայե՛ր.  
Զըրը՛նգ, եկավ Մուսաբեկ.  
40 — Հե՛յ, դո՛ւրս արի, քեզի՛շ բարա.  
Ո՞վ կա տան մեջ, դուրս եկե՛ք...  
Ու սըրահի կեամութի մեջ  
Դուճուպ եկավ քահանան,  
Դողողչելով, ծերուկ ու խեղճ,

Բըռնած սարսափն իր մահվան:  
— Հավա՞ն ես ինձ, քեզի՛շ բարա,  
Հապա նայիր մի վերև...  
— Աստված է քեզ հավնել, աղա՛,  
Աստված կյանք տա ու արև.

50 — Դե բե՛ր, հապա՛, որ հավան ես,  
Աղջիկըդ բե՛ր, տուր ինձ կին.  
Դե՛հ, շո՛ւտ արա, քեզի՛շ բարա,  
Դուրս բեր սիրուն Շողիկին:

Լուռ կանգնած է ծեր քահանան,  
Դեմքը դեղին, միրքի պես,  
Ծիծաղո՛ւմ է լացի նըման,  
Քե լալիս է ժըպտերե՛ս...  
— Հա՛, հա՛, հա՛, հա՛... Հավա՞ն չես ինձ...»  
Խընդաց խումբը՝ հա՛, հա՛, հա՛...

60 Ու սոսկալի էն ծիծաղից  
Սարսափն ընկավ տան վըրա:

— Ո՞վ չի հավան Մուսաբեկին...  
Մի Մուսաբեկ — մի աշխարհք...  
Բախտափոր ենք՝ ես... իմ որդին...  
Ո՞վ է տեսել էսպես փառք...  
Միայն թե, աղա՛, գութ արա մեզ,  
Ժամանակ տուր երկու օր,  
Որ պատրաստվենք բեկին վայել.  
Ոտիդ հողն ենք նորից նոր...

70 — Մի երկու օ՛ր... բայց իմացի՛ր,  
Ետ եմ գալու ես նորից.  
Երկի՛նք թըռիր, գետի՛նն անցիր  
Զես ազատվիլ իմ ձեռից...

«Լո՛ւ-լո՛ւ, լո՛ւ-լո՛ւ, մերն է Տարոն  
Վայելքներով իր բոլոր...  
Լո՛ւ-լո՛ւ, լո՛ւ-լո՛ւ...»  
Հանգավ «լո՛ւ-լո՛ւ»-ն  
Սարի ետև հեռավոր:



- Ի՞նչ է ղողանջում զանգակը գուժկան,  
 Գյուղի զանգակը էս անվախտ ժամին.
- 80 Կարկո՛ւտ է գալիս մըթնած երկընթից,  
 Հըրդե՞հ է ձրգել գյուղը թըշնամին...  
 — Ի՞նչ է պատահել, ծերունի տերտեր,  
 Ի՞նչ ես վրրդովում էս հոգնած խալխին:  
 — Եկե՛ք, իմ որդի՛ք, եկե՛ք, իմ որբե՛ր,  
 Երկինքը փրլավ իմ ճերմակ գրլխին...
- Ու լաց է լինում զանգակը ժամի,  
 Գալիս է կանգնում ամբողջ Տալփորիկ,  
 Ու ձայն է տալի, գոչում ծերունի  
 Իրենց քահանան ձայնով զարհուրիկ:
- 90 — Եկե՛ք, ընկե՛ր-հարեաննե՛ր,  
 Իմ Շողիկի հարսնիքին.  
 Ծաղի՛կ բերեք ալ ու կարմիր  
 Իր անթառամ պըսակին...  
 Դուստր եմ պահել ես նազելի,  
 Սըրտիս խընդում, աչքիս լուս.  
 Քուրդը եկավ դուստրըս խըլի,  
 Կլանքը խըլի ծերունուս:  
 Հայր եք դուք էլ, զավակի տեր,  
 Մի ճար գըտեք իմ ցավին...
- 100 Ու ծերերը՝ շո՛ր, ալեհե՛ր,  
 Հառաչում են խըմբովին.  
 — Ափսո՛ս Շողիկ, սիրո՞ւն Շողիկ,  
 Մեր աչքի լուս, մեր ալ ծաղիկ...  
 Վա՛յ խե՛ղճ ծընող, ծեր քահանա.  
 Քըրդի ճամփեն տատասկ դառնա...
- Հընչում է դարձյալ զանգակը ժամի,  
 Կանչում է, գոչում հայրը ծերունի.  
 — Հավա՛ր ձրգեք հեռու տեղեր,  
 Ազգ ու ազինք իմանան,  
 110 Դըրոջ բանան, զորքեր կապեն,

- Թող գա՛ն, հասնեն ղընուխյան ..  
 Եվ զուր ծերունու աչքերը անզոր  
 Հըրաշք են փընտրում մըշուշոտ հեովում,  
 Լուռ են ու դատարկ ճամփեքը բուրր,  
 Փոշի չի ելնում հայոց դաշտերում:  
 Լալիս է սակայն զանգակը կըրկին  
 Ու գոչում է ծերն առավել ուժգին.  
 — Լըսի՛ր, աստվա՛ծ, եթե մի օր  
 Բույր եմ խընկել քո անվան,  
 120 Թե դու էլ ես ծե՛ր, ալեո՛ր,  
 Ու գութ ունիս հայրական...  
 Բայց ծածկում է դեմքը աստված՝  
 Հայից դարձած ու խրոտփ,  
 Սև-սև գիշերն իջնում է ցած,  
 Լիքը անքուն ցավերով...

IV

- Հայի գիշե՛ր, հայի գիշե՛ր,  
 Ցավի անդունդ անհատակ...  
 — Աղջի՛կս, ինչո՞ւ շես քընում դեռ,  
 Ի՞նչ ես լալիս տեղի տակ:
- 130 — Չիտեմ, մայրի՛կ, ինչու էսպես  
 Քուն չի գալիս էլ աչքիս.  
 Աչքըս քանի փակում եմ ես՝  
 Քուրդն է կանգնած առաջիս...  
 — Քընի՛ր, բալա՛ս, մի՛ վախենար,  
 Աստված կա դեռ երկընքում.  
 Քուրդ ու տաճիկ, զարկ ու ավար  
 Շատ ենք տեսել մեր կյանքում...  
 — Մայրի՛կ, մայրի՛կ, շե՛ս իմանում,  
 Ո՞վ է լալիս դուրսն անտեր...  
 140 Մայրի՛կ, մի տես՝ չի լուսանո՞ւմ...  
 Ա՛խ, ինչ ծանր է էս գիշեր...

— Քընի՛ր, բալա՛ս, Որբն՝ է մենակ  
Իր Սըհակին որոնում,  
է՛, քեզ նըման, մի ժամանակ  
Նա էլ աղջիկ է լինում,  
Հավանում է շար տաճիկը,  
Գալիս եղբորն ըսպանում,  
Ճարը հատած հեզ աղջիկը  
Ասածուն աղոթք է անում.

150 — Ո՛վ տեր աստված, թևեր տուր ինձ,  
Թեթև թևեր թռչունի,  
Թըռչե՛մ, կորչե՛մ էս աշխարհքից,  
Անգութ ձեռից դուշմանի...  
էն օրվանից ման է գալի  
Թևեր առած, անդադար,  
Կանչո՛ւմ, կանչո՛ւմ, ձեն է տալի  
Իր Սըհակին ջըրատար...

Քնի՛ր, բալա՛ս, աստված դեռ կա,  
Աղոթք ասա մըտքիդ մեջ,  
160 Հիմի շուտով լիսն էլ կըգա,  
էս գիշերն էլ ունի վերջ...

— Թըր՛խկ... Թըր՛խկ...

— Ո՞վ է ծեծում

Կես գիշերին դուռն էղպես...

— Թըր՛խկ, Թըր՛խկ...

— Հե՛յ, շե՛ս լըսում,

Վեր կաց, տերտե՛ր, ներս թող մեզ...

Ու անլեզու քըրդի նըման

Սարսափն հանկարծ ընկավ տուն,

170 Տեղի տակին կըծիկ եկան

Մանուկները դեռ անքուն:

Մարեց մայրը լեղապատառ,

Աղջիկն հանգավ մոր գըրկում,

Իսկ դուռն ուժգին ու անդադար  
Հա՛ զարկում են ու զարկում:

Լույսը ձեռքին ծերը գունատ  
Դողդողում է, երերում...  
Ձեռքը փակին տարավ հանկարծ,  
Դուռը բացվեց խավարում,

180 Շառաչեցին, շողշողացին  
Ձենքերն լուսումն էն աղոտ,  
Ու գինավառ ներս խուժեցին  
Երեք ջահել անծանոթ:  
— Օրհնյա՛ ի տեր, հայի լեզվով  
Ողջունեցին ու մըտան.  
Մութ խըրճիթը լըցվեց լուսով  
Անակրնկալ խընդության:  
— էսպես անժամ, դարիք եղբա՛րք,  
Ո՞ւակից եք դուք գալիս ինձ...

190 — Հեռու տեղից, Կովկասից...

— Բայց մեր երկիր ամեն անկյուն

Մահվան երկյուղ ու վըտանգ...

— Դըրա համար մենք եկանք...

— Իսկ դուք շունե՞ք ձեր աշխարհքում

Տուն, տեղ, ծընող, քույր կամ կին...

— Ունենք, թողինք ամենքին...

Հայի գիշե՛ր, անքո՛ւն գիշեր,

Լի՛ տանջանքով ու մութով,

Հայի գիշե՛ր, անհո՛ւն գիշեր,

200 Լի՛ ահավոր խորհուրդով...

\* Թռչունի անուն է:

ՀԱԶԱՐԱՆ ԲԸԼԲՈՒԼ  
(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

1898 — 1914

<1>

Երբ դեռ շունչը արարչական ծավալվում էր օդի մեջ,  
[Երբ դեռ նոր էր կույս աշխարհքում մարդը խաղում  
պարզ ու պերճ],  
Եվ տիրում էր ամենուրեք սերն ու հանգիստն անվրդով.  
Եվ գառն ու գել դեռ միամիտ խաղում էին իրար քով,  
Սուրբ ու առատ էն ժամանակ, արևուտի կողմերում,  
Բարի Ալամ թագավորն էր < . . . > իշխում ու տիրում:  
Իշխում էր նա արևի պես, որ ամենքին կենսաձիր,  
Իրեն լույսն ու ջերմութունը շրոայլում է անխըտիր,  
Կամ թե գարնան անձրևի պես, որ թափվում է  
հորդառատ,

10 Զովացնում է ու լիացնում, չի հարցընում լավ ու վատ:

< 2 >

Բարի լուսի հետ կանգնեց սգավոր պառավը որդու  
դիակի վրա, ձեռները դեպի երկինք տարածեց ու  
կանչեց.

— Ո՛վ լուսեղեն, դրոններդ բաց,  
Հող ու ջրի առատ աստված,  
Ո՛վ, որ էսքան բարիք ու փառք՝  
Աշխարհն անծեր, ծովերն անտակ  
[Ըստեղծել ես], փրոհել, լըցրել,  
Ո՛վ [բարեգութ], քեզ եմ խընդրել.  
Ինչպես որդիս իր մոր զրկվին  
Մեռավ կարոտ աչքն աշխարքին.  
Նըրանք էլ թող մնան էնպես

20 [Կարոտ իրենց սուրբ փափագին] .

Եղեմ այգին կըտրի թող փուշ,  
Իրենք գազան շար ու ապուշ:

էսպես կանչեց, ու, ո՛վ սարսափ, փոխվեց դըրախտն էն  
անուշ,

Մառը կըտրեց կոպիտ մացառ, որթը— բաղեղ, վարդը—  
փուշ:

Պահնորդ մարդիկ դարձան գազան զուրկ նշանից  
մարդկային,

Կորցրին և տիպ, և քնքշութուն, որ ի ծընե ունեին:

Սոսկաց արքան, ծեր, բազմափորձ մարդիկ կանչեց իր  
ատյան,

— Ո՛վ է, ասավ, ձեզնից տեսել կամ իմացել էսպես բան.  
Ինչ պատիժ է, որ գալիս է ինձ ու երկրիս բովանդակ.

30 Եվ ինչ ճար կա < . . . >

Խոնարհեցին մեծ ծերերը գլուխները ալեզարդ,

— Թող շատ ապրի Ալամ արքան ոսկի գահին իր  
հաստատ,

Հազար տեսակ ցավի տուն է— էս աշխարքը անցավոր:

Ու թվում է մարդու համար ամեն մի ցավ անսովոր.

Բայց դու եղիր համբերատար, միտքդ պահիր [միշտ]  
երկար,

Ցավը անտք է մարդը քաշի, ոչ թե անշունչ սար ու քար:

էս աշխարքում ոչ առաջին, ոչ վերջինն էս դու մենակ:

Պատահել են էսպես դեպքեր կյանքում ամեն ժամանակ:

Մենք շենք տեսել, բայց լսել ենք, որ մեզանից շատ  
առաջ

40 Գորտ ու գազան մարդ են դառել, մարդը դառել գայլ  
կամ արջ:

Բայց թե հե՛ր է էս պատիժը այժմ գալի քեզ վրա,

Անգետ ու [մութ] մարդիկ ենք մենք— էդ ղրկողը  
կիմանա:

Մենք է՛ն գիտենք, որ նա, ով որ ցավ է տվել ու աղետ,  
Ստեղծել է ամեն ցավի ճարն ու [ճամփեն] իրեն հետ:

Չըկա մի ցավ արևի տակ, չըկա մի < . . . >

Որ շունենա գիտութունը նրան մի դեղ կամ դարման.

Գիտութունը լույս է, արքա, աշխարհ իջած երկնքից,

Ճարեր ունի քաղած-քամած ամեն հանրից ու տունկից.

Ետ է բերում նա մեռելին հոգեվարքից իր վերջին,

30 Մի հոգին է միայն պակասում— հավասարի արարչին:

Մի բան չըկա վեր երկրնքում, երկրի վրա ու տակին,

Ողջ զընընել, ողջ մաղել է— խաղալիք են իր ձեռքին:

Կանչիր թող գան քո տերության մեծերն ուսյալ ու  
գիտուն,

Եվ քո մարդկանց և քո այգուն նրանք կանեն օգնութուն:

էսպես ասին, պատվեր տվավ թագավորը (ծերունի),

Կանչեց երկրի ամեն կողմից գիտուններին անվանի:

— Ո՛վ գիտուններ, բացեք տեսնեմ, ի՞նչ տեսիլք է  
արդյոք սա,

Որ ծերության անկար օրով իմ աչքերով էս տեսա:

Եվ ի՞նչ հնար կա < . . . > երկրի վրա ու տակին,

30 [Բարով, բույրով] լցրեք նորից եղեմական իմ այգին.

[Ազատեցեք, որ չըկորչեն իմ մարդիկը] հավիտյան,

[Տվեք նախկին տիպը ազնիվ, քնքուշ] հոգին  
բունական:

էսպես ասավ, գլուխ տվին գիտունները արքային.

— Թող շատ ապրի Ալամ արքան ողջ ու հաստատ իր  
գահին.

էս աշխարհում ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,

էն պատճառն էլ ուրիշ պատճառ: էսպես անվերջ,  
անդադար,

Մինչև պատճառն սկզբնական՝ ծագման խորհուրդն էս  
կյանքի.

Մինչև սկիզբն սկիզբների՝ ակն ու աղբյուրն ամենքի:

Ընչի համար էսպես է էս, շահ լինի քեզ թե վրնաս,

70 Պետք է քննես, առաջ բերող նրա պատճառն իմանաս:  
Երբ իմացար, թե էս ընչից էս ինչ բանն է դուրս գալի,  
Կարող ես դու առաջ բերես և հետևանք ցանկալի:  
Եվ արդ, բանզի ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,  
Իսկ էն, ինչ որ պատճառ ունի, ունի նաև իրեն ճար,  
Մի՛ տրտմիր դու, մեծ թագավոր, մեզ տուր միայն  
ժամանակ,  
Որ քընընենք ու էս ցավի պատճառն ու ճարն իմանանք:

Ու գընացին քառսուն ցերեկ, քառսուն գիշեր տըքնեցին,  
Ցերեկն անդուլ, հանգիստ շառան, ոչ գիշերը՝ քնեցին,  
Քըրքըրեցին, քընընեցին ամեն գրվածք ու գրյանք,

80 Երբոր անցավ քառսուն օրը, եկան դարձյալ ապարանք:  
— Թող շատ ապրի Ալամ արքան ողջ ու հաստատ իր  
գահին,—

Գլուխ տվին, էսպես ասին [գիտունները] արքային:  
— Քըրքըրեցինք, քընընեցինք մենք գաղտնիքը էս  
կյանքի,

Սահմանեցինք [էությունը], տեղն ու ցեղը ամենքի.  
Առանք մարդուն, որ [կյանքերի] օղն ու կապողն է  
վերջին,

Իջանք ներքև [կարգով] շարքով մարդուց անցանք մենք  
արջին,

Արջից հավքին, հավքից սողունն ու սողունիցը ձրկան,  
էսպես հերթով հասանք մինչև էակները նախնական,  
[Մանրէները միաբըջից, որ < . . . >

90 Կազմված են հյուլեներից՝ անտեսնելի մեր աչքին],  
Որոնք ունեն իրար ներհակ գորություններ լավ ու  
փատ,

Ու միանում ու լուծվում են, մաքառելով անընդհատ—  
էսպեսով էլ հորինում են ելևէջներ կյանքի մեջ,  
Ույժ կամ ծյուրում, ախտ կամ եռանդ, ձիրք ու ծնունդ  
և կամ վերջ ..

Ու [բովանդակ] էս աշխարհքում ամեն միքը մի  
կյանքով

Մնա՛ում, մեռնում, փոփոխվում է մի ընդհանուր  
օրենքով:

էս ինչ հյուլեն ներհակավոր էն հյուլեին միացավ,  
Ու փուշն ահա թերթեր տվեց, անուշ բուրմունք ունեցավ,  
Կամ չէ < . . . > կատարվեց այլ միացում հակառակ,

100 Ու վարդն ահա փոխվեց, դառավ անհոտ մի փուշ  
հասարակ:

Արյան մեջ էլ էս ինչ հյուլեն պակսեց կամ չէ՝ շատացավ,  
Ու մարդն ահա այլ կերպարանք— արջի պատկեր  
ստացավ...

— էդ ամենը հրաշալի, կանչեց արքան անհամբեր.  
Բայց ասացեք, ո՛վ խորիմաստ, ո՛վ բազմագետ դուք  
գետեր,

Ինչպես անենք, որ իմ այգին դառնա դրախտն առաջվան,  
Իմ մարդիկը գազանացած՝ կրկին լավերն է՛ն  
[վաղվան]:

էսպես կանչեց, գլուխ տվին գիտունները արքային.  
— Թող շատ ապրի Ալամ արքան բարձր ու հաստատ իր  
գահին.

Ճարեր արինք, դեղեր բերինք, ազխատեցինք մենք  
անքուն,

110 Հնար չեղավ, դեղ-ճար չեղավ ոչ քո մարդկանց, ոչ  
այգուն.  
[Ինչ գիտեինք] բերինք-արինք—փուշը մնաց էլ ետ  
փուշ.

Ու գազանը դարձյալ գազան՝ դաժան, կոպիտ ու ապուշ...

<3>

Միտք էր անում տարակուսած դժբախտ արքան Հուրանի,  
Հանկարծ կանգնեց իր առաջին մի անծանոթ ծերունի:  
Մի ծերունի պայծառ ու վեհ, ինչպես տեսիլք սրբազան,  
Ալիքներին ծաղկեպսակ, ձեռին կաղնի գավազան.

Միրուքն երկար, մինչև գոտին, սիպտակ, ինչպես նորեկ  
ձյուն.

Քայլքը թեթև, դեմքը զվարթ, ու հայացքը իմաստուն.  
Ողջո՛ւյն, ասավ, բարի Ալամ, ողջույն վշտոտ թագավոր,

120 < . . . . . >  
 Թե Տնար կա քո մեծ վշտին, թե մի ճար կա քո ցավին,  
 էն Հազարան աղնիվ հավքն է, որ դու շունիս տակավին,  
 Որ երգում է հազար ձենով, հազար ձևով կանչելով,  
 Հետն էլ բուրյան մշտադալար վարդ է թափում փնջերով.  
 Եթե խոսի [նա մի անգամ] < . . . > նա մի օր,  
 Փուշ ու տատասկ վարդի կրփոխվեն, վարդ կըծաղկեն  
 նորից նոր.

Ու պահպան քո [ծառաներ], որ դառել են այժմ արջ,  
 Ետ կըդառնան քնքույշ մարդիկ, աղնիվ ու լավ, քան  
 առաջ...  
 — Ո՛վ երկնառաք բարի դու Տեր, գոչեց արքան < . . . > :

130 Պարզև կըտամ ինչ որ ուզի ավետաբեր քո լեզուն,  
 Բայց ո՞ր երկրում, ո՞ր անտառում, ո՞ր սարում է նա  
 երգում...  
 — Միշտ երջանիկ կախարդական անկոխ, անմեռ  
 աշխարհքում...  
 Ասավ ծելը, քամի դարձավ ու շրթացավ իր աչքից,  
 Ապշեց արբան, քշվեց արքան աչքով տեսած հրաշքից:

<4>

Երեք կըտրիճ որդի ուներ Ալամ արքան ալեքր,  
 Կանչեց իրեն երեք որդուն ու արքունիքն իր բոլոր:  
 — Տեսա՞ք, ասավ, սիրուն որդիք, ինչ պատուհաս մեզ  
 հասավ.

Մեր տերության միակ դարդը, միակ փառքը փրշացավ:  
 Ես՝ ծերունի, սրբի տեղակ ցուպ եմ արդեն ձեռս առել,  
 140 Այժմ էլ վըշտից ծունկս կըտրել, աչքիս լույսն է  
 խավարել.  
 Ժիր մարդիկ եք— զենքներդ առեք, ձիանք հեծեք ամեհի,  
 < . . . > դրտեք— [բերեք ճարն ու դեղը մեր ցավի]:

Ավագ որդին

եկավ ավագ որդին].— Ո՛վ մեծափառ մեր  
 ծընող,

ես ձի կելնեմ, զենքըս կառնեմ, կերթամ, կանցնեմ  
 հողից հող.  
 Չեմ վախենալ, ետ շեմ դառնալ, ով որ կուզի դեմքս գա,  
 Յոթ գրլխանի վիշապ լինի, դե ու հըրեշ, թե հըսկա.  
 Ահա այսպես [սուրբս] < . . . > կըտոր-կըտոր ես  
 կանեմ.

Երկնում լինի—վայր կըբերեմ, ծովի խորքում—կըհանեմ:  
 (Սուրբ պալատականների մեջ պրտտեցնում է):  
 Պալատական կա՛այլ սարսափահար նշալով խմբովին.—  
 Օ՛, սարսափելի է— ո՞վ կրկանգնի նրա դեմ:  
 Պալատականները—  
 [Նախաբար]—

Մադրածուն

150 [Թե ո՞վ է նա— շրգիտեմ,  
 Բայց կըկանգնի սրա դեմ,  
 Թե սա կանգնի նրա դեմ]:  
 Ապա խոսեց միջնակ տըղեն՝ նույնպես զոռող—մեծ  
 բերան,

Հայրիկ, ասավ, ես կըբերեմ խաս բյուրբյուր Հազարան—  
 Կուգես հեմի նըշան արա, [դու որոշիր] օր ու ժամ,  
 Ու թող լինիմ մորքս որդին, եթե հանկարծ ուշանամ.

< . . . . . >  
 . . . . . >

(Վերջում լրսվում է մեղմ նվագածությու՞ն և երգի  
 ձայնը. ծաղկեպսակը գրլխին, բնաբը ձեռքին, ոգինե-  
 րով— աղջիկներով շօջառապատված գալիս է Արեգը).

Մաղկապսակ բըլուրներից,  
 160 Արշալուսի ժամերին,  
 Նա ժըպտալով՝ կանչում է ինձ  
 Դեպի աշխարքն իր Վերին:  
 Խոր ու խաղաղ անտառներից,  
 Լըռության մեջ էն խորին,  
 Շըշընջալով կանչում է ինձ

Դեպի աշխարքն իր Վերին.

Կարկաշահոս մեր ջրերից,  
Երբ թախժում եմ ափերին,  
Կարկաշելով կանչում է ինձ  
Դեպի աշխարքն իր Վերին:

170

— Ո՞վ է կանչում, զավակս.  
— Անտեսը, հայր:

Եվ պալատականներն իրար աչքով արին ու ծիծաղեցին  
ֆթերի տակ...

< . . . . . >

[Ո՞վ է նա].

— Ի՞նչ [բան] է նա.

— Ճշմարիտ.

— Ճշմարիտ.

— Եվ արդար.

180

— Եվ արդար.

— Եվ գեղեցիկ.

— Ամեն բան.

— Ամեն բան...

< . . . . . >

Ո՞վ, որ գալիս ես նրստած ամպերին,

Ո՞վ, որ փայլում ես մաքրությամբ վերին...

< . . . . . >

<5>

ԵՐԳՁԻ ՎԻՇՏՁ

I

190 Երբ իրիկունն հացի նստան տանտերն ու հյուրն իր  
օտար,

Երգին էսպես խոսք բաց արավ, հարցմունք արավ

[սիրաբար.]

90

— Պատմիր, լսենք, ով բարեկամ, շատ աշխարհք ես  
ման եկել,  
Ի՞նչ ես տեսել, ի՞նչ ես լսել, պատմիր լսենք թող մենք  
էլ:

— Շատ աշխարք եմ ես ման եկել, խոսեց Արեգն ու  
ասաց,  
Ու շատ զարմանք բան եմ տեսել, ոչ տեսնված, ոչ լսված,  
Բայց ինչ էսօր աչքով տեսա ես քեզանից էս քաղքում,  
էդպես զարմանք բան չեմ տեսել դեռ բազմափորձ իմ  
կյանքում:

էսօր շվար կանգնած էի մինարեի պատի տակ,  
էն ծովացած ամբոխի մեջ, պանդուխտ, անոք ու մենակ,  
200 Երևացիր դու գեղեցիկ, դեմքդ զվարթ ու պայծառ.  
Ոգևորված, ուրախ-ուրախ վեր— մինարեն բարձրացար,  
Ջենրդ ջահել, գիլ ու հնչուն. լի ավյունով գերբնական,  
Շատ շատերի ուշքը տարավ, < . . . > եցին ու ընկան.  
Տարված, գերված զմայլանքին կախարդական քու երգի  
Ճախրում էին գլխիդ շուրջը թռչունները երկրնքի,  
Բայց իջնելիս լալ սկըսար, մազերդ փետտել, քեզ կոծել.  
էդ տարօրեն քու արարքից ես ապշած եմ մնացել:  
— Հաց կեր, պանդուխտ իմ բարեկամ, խնդրեց երգին  
Արեգին,  
[էդպես անզգույշ ձեռք մի տար դու անբուժելի իմ  
վերքին]:

II

210 «... Ջերմ ու պայծառ գարնան մի օր, հանդիսավոր մի  
տոն օր,

Մինարեի տակ ծովացած ժողովուրդը բյուրավոր

Սպասում էր իմ աղոթքին: Ոգևորված ես եկա,

էնպես ուրախ, ինչպես էսօր, վեր, մինարեն բարձրացա:

Լե՞ն աշխարհքը ոտիս տակին, խոր երկինքը իմ վրբեն,  
Հոգիս լիքը երազներով— երգը հոսեց ինքն իրեն:

Չըքնաղ հավքեր՝ թրոած անհայտ աշխարհներից դեպի  
ցած՝

91



Հատրում էին գլխիս վերև իմ երգերին զմայլած,  
Ինչպես եղավ՝ էն հավքերից մինը ջոկվեց ու թըռավ,  
Զարկեց ու ինձ հափըշտակեց, թեկին արավ ու տարավ...  
220 Աչքս մին էլ բաց եմ անում անմահական մի դրահատում:  
Բաց եմ անում — չեմ կըշտանում, փակում — ու չեմ  
հավատում:

Հիացած եմ տեսածներից ու մընում եմ անհամբեր,  
Մտածում եմ թե տակավին ինչեր պիտի տեսնեմ դեռ...  
Ու գընում եմ, գընում առաջ, ասես թըռչում օդի մեջ,  
Թըռչում թեթև, հեշտ ու անթև, անհոգ, ուրախ ու  
անվերջ:

Ահա ծաղկած բազմաբուրյան մշտադալար թըփերից  
Մի նազանի հուրի փերի ճեմ է առնում դեպի ինձ,  
Սիրտը տըված էն եղեմի երջանկությանն ըղձալի,  
Վարսը թողած ազատ հովին՝ երգ է ասում ու գալի:

(Առաջին փերին)

230 «Ես ու աստղի ցուրը պայծառ  
Խաղում էինք ջրբափին,  
Ես ու աստղի ցուրը պայծառ  
Քընած էինք մինչ արփին...»

Հանկարծ ընկան վըճիտ, ցուլուն իր աչքերը ինձ վըրա,  
Տեղըս կանգնած քար կըտրեցի, շունչըս հատավ ու  
սառա:

— Ո՞վ ես, կանչեց, դու հողածին, ո՞վ համարձակ դու  
հոգի,

էս կողմերով անց չի կացել դեռ թըռչունը երկրնքի,  
Ի՞նչպես մըտար էս դըրախտը դու մահացու մի թույլ  
մարդ,

Քո հայացքով շըփոթում ես մեր սըրտերը անարատ:  
240 Դե ե՛կ, եթե մի մարդ ես դու մեր եղեմին արժանի,  
Ե՛կ, քո լանջին, էս ծառի տակ պիտի նընջեմ ես հիմի:  
Բայց վա՛յ՛ եթե հաղթվես տըկար հրապուլըքից ու  
կըքից,

Պիտի զըրկվես անդառնալի էս երկնային վայելքից...  
Ասավ, թեթև թիկնեց լանջիս, փակեց աչքերն  
աստղափառ,

Ու ըստինքը աստվածային խաղում էին վեր ու վար:  
Արբած իր կույս թարմությունից ու իր գեղից գերբնական  
Գըլուխս իջավ, անգիտակից համբուրեցի ես նըրան...  
«Ափսո՞ս...» կանչեց. ըսթափվեցի. չըքացել էր նա  
անհետ.

«Ափսո՞ս, թշվա՞ռ...» ղողանջում էր ու մարում էր  
սըրտիս հետ:

250 էս ժամանակ գետի ափից մի ուրիշը երևաց.  
էնքան թեթև, էնքան քընքույշ, որ անմարմին ինձ թըվս:ց:  
Գալիս էր նա ծիծաղելով, զըվարթ, աշխույժ ու ազատ.  
Ու հընչում էր էն ծրմակում անուշ ծիծաղն իր արծաթ:

(Երկրորդ փերին)

«Հա՛, հա՛, հա՛, հա՛,  
Ի՞նչ խենթ է նա...  
Ա՛խ, ի՞նչ խենթ է էն փերին.  
Լող է տալիս վեր ու վար,  
Զըրի տակի ամպերին  
Կուզի հասնի անպատճառ:

260 Միծաղում են պարիկները  
Ողջ նըստոտած փրփուրին,  
Միծաղում են ծաղիկները  
Փունջ-փունջ կիտված ափերին...»

Վերև նայեց, ճառագեցին դեմըս աչքերն իր սև-սև,  
Սիրտըս դողաց, խոնարհեցի իմ աչքերը ես ներքև:  
— Ո՞վ ես, ասավ, դու բախտավոր, ի՞նչ հըրաշքով ներս  
մըտար,  
էստեղ բընավ ոտ չի դըրել դեռ մահացու մի օտար:  
Ով էլ լինիս, երբ եկել ես մեր աշխարհը երջանիկ,

Արի զըմբուխտ էս դալարում էսպես հանգչենք մենք  
հիմիկ,

270 Բայց տե՛ս, եթե ինձ համբուրես՝ կրկորցընես էնքան  
բան,

Որ ողբալու բավ չեն աչքերդ ու ոչ կյանքդ բավական:  
Ասավ ու հեշտ ընկողմանեց իմ հողեղենն ընկնեբրին  
Համակ լույս-կյանք, համակ հրրճվանք ու բուրավետ էն  
փերին:

Նայում էի, նայում՝ հարբում, մրթնում աչքերս ու  
մրթնում,

Թրփում էր թե նա սահելով շուրթերիս էր մոտենում...  
Մին էլ, կարծես երազի մեջ, տաք համբույրը ըզգացի,  
Ու զըրնգաց շուրջըս հանկարծ հընչուն ձենը կանացի.  
— Ափսո՛ս, թըշվա՛ն, մի համբույրով դու կորցըրիր  
էնքան բա՛ն...

«Ափսո՛ս, թըշվա՛ն...» զըրնգում էր էն անտառը  
դյուրական:

280 Կանգնած էի ապշած, մենակ, նախատեղով ինքըս ինձ,  
Մին էլ հանկարծ րսթափվում եմ ուրիշ քընքույշ մի  
ձևից:

(Երբորգ փերին)

«Իմ քույրերը,  
Շուշանները,  
Շըրթունքներով ձյունաթույր,  
Ձով, բուրավետ  
Ձեփյուտի հետ  
Ուղարկել են ինձ համբույր...»

Մի այլ աղջիկ, բուսած մենակ սաղարթագեղ ծառի տակ,  
Որպես մինը էն եղեմի շուշաններից ըսպիտակ:

290 Բոլոր ուժըս հավաքելով լեզվիս կապը խըզեցի,  
Աղաչելով, աղերսելով հետը էսպես խոսեցի.

— Գթա՛, չըքնա՛ղ, ասա տեսնեմ, ո՛ւր եմ ընկել արդյոք  
ես,

Եվ ո՛վ եք դուք, որ տանջում եք անօրինակ ինձ էսպես:

Ես հողեղեն—չեմ դիմանում ձեր հրմայքին դերբնական,  
Գութ արեք, գո՛ւթ, ո՛վ անմահներ, մի՛ տաք ինձ նոր  
փորձություն:

— Էնտեղ ես դու, ուր հողեղենն ոտ չի կոխել դեռ, ասա ի,  
Ուր անհայտ են երկրավորի շընչին կիրքը, վիշտն ու ցավ,  
Ուր հողածինն այցելում է լուկ կարճատև ցընորքում...  
Բայց դու նըստիր, ազնիվ հոգի, որ ես հանգչեմ քո  
գրրկում,

300 Սակայն եթե ինձ համբուրես, էնքա՛ն հետո  
կըզըղջաս,

էլ չես գըտնիլ ինչ կորցընես՝ ամբողջ կյանքդ թեկուզ  
տաս...

Ու էս երրորդն էնքան սիրուն, կախարդիչ էր առավել,  
Որ էն երկու փորձից հետո մոռցա խոստումս ես պահել...  
— Այժմ գընա, հեզ հողեղենն, ու տառապիր կարոտից...  
Կանչեց վըշտով, կըշտամբելով ու հեռացավ իմ մոտից:  
Ես շըվարած միտք եմ անում էն վայրերում  
դյուրական,

Թե կարճատև մի հաճույքի ի՛նչպես տըվի էնքան բան...  
Միտք եմ անում ու գընում եմ, որոնում եմ ամեն տեղ,  
Ո՛ւր գնացին, ո՛ւր չըբացան ոգիները էն շըքեղ...

310 էլ ոչ մի տեղ չեմ հանդիպում ես նըրանցից ոչ մեկին,  
Անհուն ցավից ու կարոտից տառապում է իմ հոգին:  
Շուրջըս արդեն մըշուշապատ, դատարկ ու լուռ ահավոր,  
Հուսահատված ձեն եմ տալիս հառաչելով սըրտախոր,  
Մին էլ հանկարծ ահեղ թընդաց— «շո՛ւտ, էստեղից  
սըրան տա՛ր...»

Ու մըթնեցին իմ աչքերը, կորավ՝ շուրջըս ինչ որ կար,  
Մին էլ տեսա կըրկին կանդնած մինարեի բարձունքին,  
Դարձյալ կեղտոտ էս քաղաքում, շուրջըս ամբոխն  
ահագին:

... Հուր կարոտով ամեն տարի միշտ նույն օրը էն  
օրեն

Ուրախ-ուրախ, ինչպես էսօր, դիմում եմ ես մինարեն,  
320 Երգում եմ լի պայծառ հուսով ու կարոտով գերազանց,  
Ու երգերըս, ու մտքերըս նըվիրում եմ ողջ նըրանց,

Բայց, ա՛խ, չըկա, էլ չի գալիս հըրաշք հավքը ևն ծանոթ,  
Որ ինձ կըրկին առնի տանի ևն դըրախտը, նըրանց մոտ...

<6>

(Ճամփաբաժանում (կիցում) կսնգնած է ծերը՝ գլուխն  
ամպերում).

— Ո՞վ ես, պապի, որ կանգնած ես անհունորեն այդպե-  
փեր,  
Ու ծերունին խուլ որոտաց տատանելով ողջ այեր.

(Ծերը՝ ամպերից)

— Ես նա եմ, որին ամենքն են նայում, ինքը ոչ ոքի,  
Ես նա եմ, որին ամենքն են հարցնում, ինքը ոչ ոքի.  
Սկիզբն ու վերջն եմ ես.

Եզերքն ու մեջն եմ ես,

330 Անհունն եմ ես,

Անքունն եմ ես—

Անհուն, անես— ամենն եմ ես...

Բարով եկար, ազնիվ կտրիճ:

— Ո՞վ անսկիզբ, անհաս դու մեծ: Խարխափելով ու  
տգես

Մենք հոսում ենք, անց ենք կենում այս աշխարհից,  
որպես գետ,

Որ անտեղյակ հեռուներին լոկ ավերն է իմանում,

Իսկ դու անհաս քո բարձունքից ողջ տեսնում ես ու  
քննում:

Հսի՛ր, պապի, ցած խոնարհիք բարձր գլուխդ ամպերից,

Բաց իմաստուն քո լեզուն, մի պատասխան ասա ինձ,

340 Ո՞րն է ճամփան, որ տանում է էն աշխարհը

[երջանիկ],

Ուր Հազարան ազնիվ հավքըն երգ է ասում կենդանի

Եվ փարդի բուրավետ [փնջեր] թափում իր երգի հետ:

[— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց ալևորը  
իմաստուն,

Ու երկընքի ոլորտները դըղըրդացին անսահման.]

(Ծերը՝ ամպերից)

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, խիզախ տըղա. այն ճամփեն ևս  
դու փրնտրում,

Նեղ, քարքարոտ էն շավիղը, որ թաքչում է ամպերում.  
«Անդարձ» է այն ճամփի անունն, ով որ ընկավ էն  
ճամփան,

Կորած է նա հավիտյան.

Ճամփեն մին է, ցափը հազար,— հազար տեսակ  
տառապանք

350 Բռնած են այն դժար ճամփեն ու մաշում են ամեն  
կյանք:

Սարեր կան էն ճամփեն կապած, թըռչունը չի անց  
կենում,

Խոր անդունդներ, որ նայելիս, մարդու աչք է սևանում.

Հուր անապատ, որ անցնելու ամբողջ կյանքդ չի հերիք,  
Ամեն քայլում դե ու հըրեշ, ամեն կողմից փոթորիկ...

— Ի՞նչ են դեեր ու հըրեշներ, երկյուղ շունհմ ևս, պապի,  
Եվ իմ ճամփեն ոչ փոթորիկ, ոչ տառապանք կըկապի.

Սով, նեղութուն չեմ հասկանում, չեմ էլ հոգում էդ  
մասին,

Ո՞ւմ է պակսել մի կըտոր հաց էս աշխարհքի երեսին:  
Եվ ինձ այնպե՛ս հեշտ է թըվում «անդարձ» ճամփեն էն  
քարոտ,

360 Եվ այն աշխարհքն այնպես հեշտին ու էն հավքը  
այնքան մո՛տ...

— Ո՞վ հավիտյան անձնապաստան ու մոլորված դուք  
ճարդիկ:

Հեշտ է թըվում միշտ ցանկալին ու սիրածը՝ միշտ  
մոտիկ...

Հեշտ է— միայն ցընորքի մեջ, ու սրտին է մոտ թըվում,  
Բայց չի կարող ոտքը հասնել, ուր որ սիրտն է  
թափառում:

Մեղք ես, կտրիճ, ինչո՞ւ ես քո մահի ետև ման գալի.

Դարձիր, գընա քո աշխարհքը, քու հոր տունը շեն ու լի.

ԱՐԵԳԸ ՍԵՎ ԱՇԽԱՐՀՔՈՒՄ

Գրնա՛ց, գրնա՛ց Արեգն արի, գրնաց, ընկավ մի աշխարհ,  
 390 Երկինքը սև, գետինքը սև, սև բովանդակ ու խավար:  
 Առաջ գրնաց. դեմն ահագին մի սև ամրոց կանգնեց լուս-  
 էն ամրոցից մի ձեն եկավ, մի ձեն տըխուր ու տըխուր:  
 Վերև նայեց, տեսավ շարմաղ մի աղջիկ է լուսեղեն,  
 Հետը լալիս հուսակրտուր, հետը կանչում է իրեն:

Աղջիկը

Ափսո՛ս, կտրի՛ճ, ա՛խ ո՞ւր եկար  
 էս աշխարհքը սև ու մութ.  
 Ո՞ր անօրեն մարդն էր արդյոք,  
 Տրվեց էդպես քեզ խորհուրդ:  
 Փախի՛ր, շուտով, անահ տըղա  
 400 Թե չէ՛ էստեղ որ մընաս,  
 Ե՛ւ, մարդակեր Դևը կըզա  
 Այժմ կանի քեզ մաս-մաս:

Արեգը

Բայց ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,  
 Ի՞նչ ես էսպեղ դու շինում,  
 Եվ ինչո՞ւ ես էդպես աղի  
 Արցունք թափում, լաց լինում:  
 Ի՞նչ է արել էդքան սիրուն,  
 էդքան քնքույլ մի էակ,  
 Որ փակել են մութն ու անդուռն  
 410 էդ ամրոցում մեն-մենակ:

Աղջիկը

Իմ հանցանքը էս է, ավա՛ղ,  
 Որ սիրուն եմ ես էսքան.

[Ի՞նչդ է պակաս, որ գըլուխդ փորձանքի ես դու տալի:]  
 Ապրի խելոք շատերի պես, որ ապրում են գոհ, առատ.  
 Ու չեն հոգում, թե կորցրել է մարդն իր պատկերն  
 անարատ...

370 Կամ թե կուգես, ահա դարձյալ երկու ճամփա  
 լայնարձակ.

Տանում է մինն այն դըղյակը, ուր որ լուսից մինչև լուս  
 Քեք է անում սիրուն Թամարն հյուրերի հետ իր ջահել,  
 Մյուսը տանում է . . . ուր որ ոսկին, անգին քարեր,

< . . . . . >  
 . . . . . >

Արեգ.—

Ո՛չ, պապի < . . . . . >

Մերք.—

Անձնուրաց հոգի, որ քաջ ու անվախ  
 Հնարում ես— ընկնում այս անդարձ ճամփան,  
 Որ հոժար սըրտով քո կյանքը մատաղ  
 380 Ուխտել ես գազան մարդի փըրկության,

Մերիս օրհնանքն էլ թող լինի քեզ հետ,  
 Հարեհաս լինի նեղության օրում,  
 Բարով դու հասնես վայրն երանավետ,  
 Ուր որ Հազարան բյուրջույն է տիրում:

Լեռներ, անդունդներ հարթփին առաջիդ,  
 Դևեր, հրբեշներ դառնան անվընաս,  
 < . . . > մեջք լինի քաջիդ,  
 Կասկած ու երկյուղ երբեք չիմանաս:

Օրհնում է ծերունին, խրատում ու եանապարհ  
 դեում դեպի կախարդական աշխարհը:

Սըրա համար Սև Գևն եկավ  
Մեր աշխարհքը անման,  
Եկավ բրոնի հափըշտակեց  
Հայրենական իմ վայրից,  
Բերավ էս սև բանտում փակեց,  
Ջրկեց պայծառ օրերից:  
Նըրա թըշվառ գերին եմ ես.

420 Էստեղ, անդուռն իմ բանտում  
Կուռ ու մենակ փակված էսպես  
Մաշվում եմ ես անխընդում:  
Բայց, ա՛խ, նըրա ժամն է ահա,  
Հիմի կըգա նա նորից...  
Փախի՛ր, փախի՛ր, անահ տըղա,  
էս սև ու մութ աշխարհից:

### Արեգը

Ըս շեմ վախում, քույրիկ անգին,  
Ըս շըգիտեմ ահ ու մահ,  
Ըս կըմնամ բանտիդ տակին,

430 Ինչ սև հըրեշ կուզի գա:  
Ու կըմեռնեմ էստեղ ես էլ,  
Որ էլ շապրեմ էս օրից,  
Կամ կըփրկեմ ինձ հետ քեզ էլ  
էս սև ու մութ աշխարհից:  
Միայն դու ասա, թե ո՞ր ճամփով,  
Ո՞ր կողմից է նա գալու,  
Ու ո՞րտեղ եմ իմ նևտերով  
Նըրա կյանքին վերջ տալու:

### Աղջիկը

Ահա էն սև սարի տակից

440 Նա կերևա ահավոր.  
Նըրա ձենից, բերնի հուրթից  
Սասանում են սար ու ձոր:

Յոթը ագահ գըլուխ ունի,  
Միջի գըլխին պիտ զարկես,  
Ու շես կրկնիլ զարկըդ նորից.  
Ինքն էլ խնդրի թեկուղ քեզ:  
Հսի՛ր, ահա գալիս է նա  
Անպարտելի ու խավար...  
Գընա՛, կըտրիճ, իսկ ես էստեղ  
450 Աղոթում եմ քեզ համար...

Սև աշխարհքը էլ ավելի մութը կոխեց ակնակիր.  
Գևի ձենից զարհուրելի դողաց երկինքն ու երկիր:  
Եկավ Սև Գևն, ինչպես սև ամպ, հուր ու կըրակ շաղ  
տալով,  
Եկավ անհուն կատաղությամբ, ինչպես պըրծած մի սև  
ծով:  
Դեռ շատ հեռվից նա նըշմարեց իր թըշնամուն  
լուսավոր,  
Ու հեռավոր մութի միջից խուլ որոտաց ամպագոռ:

### Սև դեր

Ո՞վ ես խիզախ դու հողածին,  
Ի՞նչպես մըտար իմ հողը դու,  
Ո՞նց չի հասել քո ականջին  
460 Գոնե անունն իմ ահարկու:  
Միթե աչքով դու չըտեսա՞ր  
Գյուղ ու քաղաք ողջ ամայի.  
Մարդ եմ կերել հազար հազար,  
Քեզնից էլ քաջ ու վիթխարի:  
Իսկ դու ո՞վ ես, չընչին մարդուկ,  
Որ կոխվ ես գալիս իմ դեմ.  
Ասա տեսնեմ, որ իմանամ՝  
Ինչ հիմարի պիտի ուտեմ:  
Յույց տուր տեսնեմ՝ ի՞նչ ունիս դու,  
470 Տե՛ս, ես ունեմ յոթը գըլուխ...

Գոռաց հըրեշն էն ահարկու,  
Արձակելով կըրակ ու ծուխ:

Արեգը

Գալիս եմ ես, ու՛ր անճոռնի,  
Որ մեն մենակ կրովեմ քեզ հետ,  
Կրթժքումս ունիմ մի սիրտ արի,  
Չեոքիս ունիմ յոթը սուր նետ...

Ասավ, ճայթեց զիլ աղեղը, ռոնաց վիշապն ահագին,  
Քավալվելով տեղն ու տեղը, անիծելով Արեգին:  
— Մին էլ զարկի՛ր... մին էլ... մին էլ...

480 Մըռնչում էր հոգեվարք:  
— Օս իմ մորից մին եմ ծընվել,  
Մի խոսք ունեմ ու մի զարկ:  
Պատասխանեց Արեգը քաջ, փրչեց վիշապն իր հոգին.  
Ու արևի լույսը ցուլաց Սև աշխարհի եզերքին:

<8>

— Չըքնաղ անունով քո սեզ աղջրկա  
Կանչում եմ, ահեղ ծովերի արքա,  
Լըսի՛ր անհատակ ջրերի խորքից,  
Մըշտածուփ, անսաստ քո մըթին հարկից.  
Տո՛ւր ինձ Քամի ձին, թըռչուն Քամի ձին,

490 Որ ես՝ մահացու տըկար հողածին՝  
Հասնեմ երջանիկ աշխարհքն աննրման,  
Ըւր վարդ է թափում Բըլբուլն Հազարան:  
Առ, նըշանն ահա քո սեզ աղջրկա,  
Լըսի՛ր ինձ, ահեղ ծովերի արքա,  
Տուր ինձ Քամի ձին՝ հասնեմ փափազիս,  
Բըլբուլը բերեմ, հասցընեմ այգիս,  
Փուլը վարդ փոխեմ թովչական երգով,  
Ու գազանը մարդ—բանական հոգով:

էսպես կանչեց՝ ու փոթորիկն ելավ ծովից կապուտակ,  
500 Մըթնեց երկինք, մըթնեց երկիր, իրար անցավ ողջ  
աշխարհք,

Ու ահագոր թո՛հ ու շոհից, անդունդներից էն մըթին  
Հուր հըրեղեն իր թևերով ցուլաց կրակ Քամի ձին.  
Ու մինչ վայրի սլանում էր դեպի հեռուն աշխարհի,  
[Հասավ] բըռնեց [հըգոր ձեռքով] Արեգն արագ ու  
արի,

Չըգեց իսկույն ոսկի սսնձը, ոսկի սսնձը գորափոր,  
Ջըսպեց անգուսպ էն [հըգորին բազկով հաստատ ու...]  
Դեպի վերն ձգեց <իր> ձին՝ տա արևին ու վառի,  
Դեպի ներքև ուզեց [զարկի] գետինք՝ ջախջախի—  
Բայց . . . հաղթահարված ու հրնազանդ հեծվորին,

510 Կեզու առավ, մարդու նման էսպես դարձավ հըզորին.  
— Ի՛նչ ես ուզում, քաջ հողածին, ո՛ւր ես ուզում՝ քեզ  
տանեմ.

< . . . . . >

<9>

Շատ գնաց նա, թե քիչ գնաց— վերեն աստված միայն  
գիտի.

Ի՛նչ մարդկային միտք ու հանճար նորա ճամփեն  
կըշափի.

Անցավ ծովեր, սև անդունդներ, անապատներ, առապար,  
Եկավ հասավ դալար մի դաշտ, այստեղ առավ նա  
դադար:

Դադար առավ [լեզու եղավ] ու բաց արավ իր լեզուն,  
Ու խրատեց Արեգին < . . . > այն խոսուն[ն]  
իմաստուն.

520 — Ահա սահմանն անմատչելի կախարդական աշխարքի.  
Ուր ապրում է [սեզ] տիրուհին զարմանալի այն հավքի.  
Աննրման է նրա անունն— ինքն անտես, աննրման,  
Կախարդել է այս աշխարքը նրա թովչանքն ու հըման,

< . . . . . >

Անկարող է մահկանացուն այստեղ մըտնել  
[Եթե միայն չի պարզեւած նրան շնորհք վերեւից  
Եվ անսասան կամք ու եռանդ < . . . >

Ամեն տեսակ ցավ տառապանք մեր ու նորա  
սահմանում

530 Կան և նորան . . . պահպանում . . . ]

Այժմ կերթաս— քո առաջը կըգա մի գետ ահագին  
[Նորա] ջուրը աղի-լեղի թույն է հոսում [մահացու],  
[Այդպես կախարդական այս աշխարհքի տիրուհին  
Անըմպելի թույն է խառնել նորա վճիտ ջրերին . . . ]  
Ամեն մի մարդ չի կարող խըմել < . . . > էն ջրերից,  
Բայց եթե դու խմեցիր՝ կանցնես < . . . >

Գետը կանցնես, կընկնես մի դաշտ անծայրածիր,  
ահավոր,

[Կախարդական երկրի տերը] կախարդական [իր  
խոսքով]

Լցրել է այն անհուն դաշտը անկոխելի տատասկով,

540 Անկարող է ոտը կոխել ասպարեզը այն փրշոտ,  
Եվ չի կարող մարդ հանդուրժել. [շատ են] ժանտահոտ.  
Բայց դու եթե այդ էլ անցնես— [կըմտենաս] և ահա  
[Այն աշխարհի] վեճ տիրուհու ապարանքը կերևա.

Այնժամ կըգան խեղկատակներ ու կըկտրեն քո ճամփան,  
Կուզեն հաղթեն, ուշքըդ խլեն, [կուզեն] լինեն քեզ  
խափան,

Այնպես խաղեր կըհորինեն, այնպես < ու . . . >  
ցույց կըտան,

Հարյուր տարվան մեռելները գերեզմանում կըխնդան:

Բայց պետք է դու արհամարհես, սիրտըդ [ամուր  
սկայնես],

Լուրջ ու մռայլ նրանց թողնես— այն ժամանակ դու  
կանցնես:

550 Ապա թե քեզ ծաղրը կանեն, կըհայհոյեն, կըթքեն,  
Ոչ պատասխան, ոչ հայհոյանք պիտի շանցնի քո  
մըտքեն,

Սիրտդ հանգիստ, հոգիդ խաղաղ նրանց միջից թե  
անցնես—

[— Ողջ կըլուին— և դու անփորձ ապարանքին  
կըհասնես].

Թե չէ, եթե ուշք դարձնես ու ընկնես նրանց հետ,  
Քեզ կըհաղթեն—ուշքդ կըտիրեն < . . . >  
Կընկատես ապարանքը < . . . >

Երբ այսպիսով կըմտենաս ապարանքի դրոներին,  
Խոյն ու առյուծ կանգնած են [միշտ] նրա երկու  
կողմերին,

Խոյի առաջ միս է դըրած, իսկ առյուծին՝ կանաչ խոտ,  
560 Եվ սովատանջ նրանք կանգնած հսկում են միշտ իրաջ  
մոտ.

Դու կըփոխես խոտը խոյին—միսը կըտաս առյուծին,  
Ճամփա կըտան— ու կըհասնես < . . . >

[ . . . . . ներս կըմտնես ապարանք...  
Ներս կըմտնես— . . . երգի դայլայլ, վարդի բույր,  
Իրար ետևից կանցնես յոթը . . . վարագույր,  
Այնտեղ [ոսկի]փայլ վանդակում երգում է հափքն այն  
չքնաղ

Ու երգի հետ մշտադալար վարդ է թափում ու թափում:  
[Այն] վարդերի [անուշ] բույրով, երգի ձայնով  
[արբեցած]

Իր լուսեղեն նուրբ մահիճում քնած է վեճ տիրուհին—  
570 Այստեղ՝ հիշիր, զգույշ կացիր— մոտ շըգնաս դու նըրան.  
< . . . > չի դիմանալ և ոչ մի սիրտ [փորձության]  
Ու կըհաղթվես նրա գեղեցկության թովչանքից  
Ու կըզըրկվես այն բյուրեղյակից [գուցե նաև] քո  
կյանքից:



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ  
ՊՈՆՄՆԵՐ  
ԵՎ ՎԻՊԵՐԳԵՐ





Վ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

ԱՔԻԼԵՍ

Միգում կորավ Իդա սարը,  
Մըռայլեցավ Տրովադան,  
Լուռ է ուղմի հարթավայրը,  
Քընած բանակն Ատրիդյան:  
հաղաղ են շուրջ: Առկայծում են  
հարույկները բանակի,  
Երկա՛ր ու ձիգ ձայնարկում են  
Պահնորդները մեկ մեկի:

Մագեց պայծառ լուսնեղջյուրը  
10 Մովի վրա էգեյան,  
Բարձրը ափերն ու աստղերը  
Մովի խորքում ցուլացան:  
Գատարկ դաշտում երևում է  
Մենակ կառքը Պրիամի,  
Տանում է իր Հեկտորի դին  
Գոռ բանակից հույներին:

Ահա կանգնեց ծովի ափին  
Աքիլլեսը ահարկու.  
— Ընկավ, ծերո՛ւկ, քո Հեկտորը,  
20 Հանգավ լույսը քո հոգու:  
Անդրումաքեն ու Հեկաբեն

Գարպասներում անդադար  
Քեզ են մընում... դարձիդ բուպեն  
Կյանք կամ մահ է նրանց համար:

Եվ տըխրաբեր արշալուսին  
Կըբուրի խունկ հաշտարար,  
Քաղման երգով կըհեծեծեն  
Ամեն մի տուն ու տաճար:  
30 Լայր, մայր, այրի մաղթանքներով  
Սափոր կածեն թանկ փողին,  
Ու, դըժոխքում, աղոթքներով  
Հանգիստ կըտան հերոսին:

Խեղճ ալևոր, խոնարհեցիր  
Գըլուխդ իմ առաջին,  
Եվ այս ձեռքը համբուրեցիր,  
Որ լաց տըվավ քո աչքին...  
Որդուդ մասին էր քո աղերս.  
Օ՛, մի՛ տրտմիր, ալեգարդ,  
Մի բախտ վըճոնեց երկինքը մեզ,—  
40 Ինձ էլ ընկնեց Արամազդ:

Մոտ է ժամըս. պատրաստում է  
Նետը անգութ օրհասի,  
Եվ պարկուհին ընդհատել է  
Արդեն օրերն իմ կյանքի:  
Ճըռընչում է դժոխքի դուռը,  
Գուժում է ձայնն ահռելի.  
— Վերջացա՛՞ծ է, հանգա՛վ շահը  
Պելիդեսի օրերի...

Ո՛վ, այս ափից ետ չի գալու  
50 Եվ քու որդին անվընաս.  
Շուտո՛վ, շուտով պիտի և դու,  
Ո՛վ Պելիոս, որբանաս:  
Կանցնի ուղմի արհապիրքը,

Աքիլեսիդ կըսպասես,  
Կըզարդարես արքունիքը՝  
Շուք ու փառքով ընդունես:

Մըտիկ կանես դատարկ ծովին  
Ափից տըխուր ու տըրտում,  
Քե շե՞ն գալիս արդյոք նավեր,  
60 Առագաստ չի՞ երևում...  
Նավեր կըզան Իլիոնից,  
Ես շեմ լինի ոչ մեկում,  
Ես շեմ զարթնի մահվան քընից,  
Ու կըմընամ այս հովտում...

Իզուր վերջին տաղնապի մեջ  
Դու քո որդուն կըխնդրես  
Ու կարկամող բազուկներով  
Նրան կողքիդ կըփրնտրես:  
Սիրած երկրից ժամն անջատման  
70 Ձի քաղցրացնի նա այն օր,  
Ու մինչ ափերն մոռացության  
Ձի տարածվի ձայնը հոր:

Իմ հայրենի՛ք, վըճիտ ջըրե՛ր,  
Չըքնա՛ղ վայրեր հարազատ,  
Եվ ձիթենիք ու դափնիներ,  
Հովիտների շուք ու զարդ,  
Ճոխ ծաղկեցե՛ք, փըթըթեցե՛ք,  
Ինչպես առաջ, աննրման,  
Ինչպես առաջ— միշտ թընդացե՛ք  
80 Միայն ձայներով խընդության:

Բայց Աքիլես ու Պատրոկլես  
էլ չեք տեսնի դուք բնավ...  
Սպերքի ջըրե՛ր, բազուկըս ձեզ  
Գըլխիցըս մազ խոստացավ,

Բայց գրուիսըս փոթորկալի  
Պատերազմում ահագին  
Պատրոկլեսին ես զոհեցի,  
էլ շրսպասեք իմ տուրքին:

Պատրաստել է նետը արդեն

90 Ապուլլոնը անողոք,  
Ըսպասում է նոր եկվորին  
Քարոնը սև Ստիքսի մոտ:  
Եվ փեթից մոռացութեան,  
Պատրոկլեսը գիշերով  
Եկավ ինձ մոտ թեթև, անձայն,  
Որպես երագ, թրուշելով:

Որպես շունչը մեղմ զեփյուռի

Նա շըշընջաց ինձ վրոա,  
Նրա ձայնը ես լսեցի,  
100 Վեր նայեցի ու տեսա  
Քընթույշ դեմքին հետք արտոսրի  
Եվ անջատման խորին ցափ...  
Ձեռքս իրեն տարածեցի...  
Դատարկ մըթնում շքացավ...

Ըսկյուրոսից նեոպտոլեմ

Դեպի հեռուն կըլողա.  
Մի անծանոթ ափ կրտեսնի  
Կանաչ բըլբալին իր վըրա:  
Նավավարը այնժամ կասի՝  
110 Դարձած կողմը բըլբալի.  
— Ահա շիրիմն Աքիլլեսի,  
Այն էլ տեղն է բանակի...

— Այնտե՛ղ, պարսպից նա գիշերով

Երևում էր մեղ ահեղ,  
Անտանելի հուրն աչքերում,  
Սաղավարտով ճաճանչեղ.

Եվ եռակի որոտալով,  
Ահ էր ազդում քաղաքին,  
Ու Տրոյացին գունատ դեմքով  
120 Ձենքը ձրգում էր գետին:

— Այնտե՛ղ ձեռքը Ատրիդեսին  
Տալով՝ դաշը հաստատեց...  
Այնտե՛ղ կառքով նա մոլեգին  
Քաղքի վրա հարձակվեց...  
Այնտե՛ղ հողում իր ետևից  
Քարշ տվավ դին Հեկտորի,  
Հառեց աչքերն ըսպառնալից  
Վըրան լըթած Տըրոյի...

Ու իր նավից նեոպտոլեմ

130 Կիջնի ափը սըրբազան,  
Որ միայնակ բըլրի վըրա  
Դընի կ՛ սուր, կ՛ վահան:  
Շուրջը արդեն դատարկվել է...  
Խաղա՛ղ Միմոնյս ու Քըսանտ,  
Բաղեղ ու փուշ պատատել են  
Տրովադային քարուքանդ:

Կանցնես դաշտը պատերազմի,  
Ուր Աքիլլեսն է կըոված,  
Կտեսնես հորանն երեսների

140 Շիրմաց շուրջը մոռացված:  
Ու քեզանից վերև հանկարծ  
Կըլըսես ձայն թևերի...  
Մենք կըլինենք թև թևի տված,  
Ընկերներս հին օրերի...

Այնժամ հիշիր Աքիլլեսին,  
Երկրից արագ նա անցավ,  
Բախտը նըրան անփառունակ  
Աչտեղ մի դար խոստացավ.

Բայց, մերժելով դատարկ կյանքը,  
150 Փառքի բուպեն ընարեց նա,  
Ու ընկերի համար մեռավ,  
Հավատարիմ մինչև մահ:

Լըոնց Աքիլ... Մութն է Իդան,  
Իլիոնը դեռ տրխուր,  
Քրնած բանակը Ատրիդյան,  
Պատերազմի դաշտը լուռ:  
Ու ծրխալով առկայծում են  
Խարույկները բանակի,  
Երկա՛ր ու ձիգ ձայնարկում են  
160 Պահնորդները մեկ մեկի:

ԲԱՅՐՈՆ

ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

ՍՈՆԵՏ ՇԻԼԻՈՆԻՆ

Ո՛վ ազատութիւն, շունչ հավերժական,  
Բանտերումն ես դու շրքեղ ճաճանշում,  
Այնտե՛ղ, ուր սիրտը՝ քեզ բընակարան  
Եվ քո սերըն է միայն ճանաշում:

Եվ երբ որդիքըզ զարկած շրղթայի,  
Անույս բանտերում նահատակվելով,  
Փառավորում են երկիրն հայրենի,  
Մավալվում ես դու հողմի թևերով:

Շիլիո՛ն, քո բանտը սրբբավայր է միշտ,  
10 Եվ քո տըխրալի հատակը՝ սեղան.  
Բոնիվարն այնտեղ տանջվեց բազմավիշտ,  
Թողեց հետքերը բարերի վըրան:

Եվ թող միշտ մղնան նըրա՛ք անչնչում,  
Որ բըռնութիւնից աստվա՛ծ են կանչում:

i

Գորշ են մազերըս, բայց ոչ տարիքից,  
Ոչ էլ մի գիշեր

Դարձա այսպես ծեր,

Որ պատահում է հանկարծ երկյուղից:

Չեոք ու ոտներս էլ այսպես շորացան

20 Ոչ թե բանելուց, այլ գարշ հանգրստից,  
Խավարչտին բանտին երբ ավար դարձան,  
Զրրկված արևից, աշխարքից, օդից:

Իմ հայրը այրվեց խարույկի վրրա,

Չուզեց իր պաշտած հավատն ուրանա,

Իրեն որդիքն էլ նույն բանի համար

Օթեան գրտան բանտումը խավար:

Յոթ հոգի էինք, մընացել եմ ես:

Մեկը տարիքով, վեցն երիտասարդ,

Ինչպես սկըսան, վերջացրին նույնպես,

30 Հալածանքների սաստկությամբ հրկարտ:

Մինը կրրակում, երկուսը կըռվում

Կընքեցին իրենց հավատն արշունով,

Իրենց հոր նըման մեռան անկոտրում

Թըշնամու մերժած աստծու անունով:

Վերջին երեքը բանտն էին ձրգված,

Որոնցից ես եմ մընացել հիմի,

Հիվանդ բեկորըս մեր անբախտ տոհմի:

## II

Այնտե՛ղ, հին ու խոր բանտում Շիլիոնի

Յոթը հատ սյուններ գոթական ձևի,

40 Յոթը հա՛ստ սյուններ, ծանր ու գորշագույն,

Երևում են թույլ մի շողով տըժգույն,

Որ, ասես իրեն ճամփան մոլորել,

Պատի արանքից պատահմամբ ընկել,

Խոնավ հատակին խաղում է տըխուր,

Ինչպես ճահճային աղոտ մոլեհուր:

Ամեն սյունի մեջ այնտեղ մի օղ կա,

Եվ ամեն օղակն ունի մի շըղթա:

Սոսկալի բան է երկաթի շըղթան.

Ուտում են նըրա ժանգ-ժանիքները.

50 Նըրանք մաշելով մարմնիս մեջ մըտան

Ու շեն ջնջվելու երբե՛ք հետքերը,

Մինչև շըթողնեմ օրվան լույսը վառ,

Ծանը՛ր, ատելի աչքերիս համար,

Որոնք շըգիտեմ, թե քանի տարի

Չեն տեսել պայծառ երեսն արևի:

Այդ տարիների շեմ հիշում թիվը.

Թողեցի նըրանց տըխուր հաշիվը

Այն օրից, ինչ որ եղբայրս վերջին

Թողնեց ու մեռավ աչքիս առաջին:

## III

60 Նըրանք սյուններին մեղ շըղթայեցին:

Մենք ջոկ-ջոկ էինք, թեև միասին,

Մենք շէինք կարող ոչ մի քայլ անել,

Ոչ իրար երես խավարում տեսնել:

Աղոտ, կապտավուն այն լույսն էլ որ կար,

Մեզ մեր աչքերում դարձրեց օտար,

Այսպես միասին, բայց ջոկ-ջոկ կապած,

Աշխարքի ամեն բարիքից զըրկված,

Մի մըխիթարանք միայն ունեհինք,

Որ իրար ձայներ իմանում էինք:

70 Ու սըրտով կըպած, իրարից հեռու

Մենք ըսկըսեցինք սիրտ տալ իրարու

Նոր-նոր հույսերով կամ թե հին վեպով,

Կամ հերոսական անվեհեր երգով:

Սըրանք էլ սակայն պաղեցան վերջում.

Տըխուր էին մեր ձայները հընչում,

Տըխո՛ւր ու խըռպոտ, խոպ ու ահռելի՝

Պաղ արձագանքը բանտի քարերի...

## IV

Մեր փոքրը, որին հայրըս սիրում էր,

Որ մեր հանգուցյալ մոր ճակատն ուներ,

80 Ու աչքերն ինչպես կապույտը երկնի,  
Նա էր իմ հոգին տանջում ավելի:  
Իրավ, տեսնելիս մարդ չէր դիմանում.  
Այնպիսի՜ թրոշնակ այսպիսի՜ բքնում...  
Գեղեցիկ էր նա, պայծառ ու մաքուր,  
Եվ ուրախ, զրվարթ սրբտով բրնատուր:

V

Մյուսն էլ նրրա պես հոգով անարատ,  
Մընված էր սակայն հուժկու տրղամարդ:  
Ուրախ ու պատրաստ ամեն ժամանակ  
Աշխարքի ընդդեմ խիզախել մենակ,  
90 Միայն թե չըհեծեր շրղթայի տակին.  
Շրղթայի ձայնից մարում էր հոգին:  
Նա լուռ, անմրտունջ ընկնում էր արդեն:  
Ես էլ թերևս ընկճըված նույնքան,  
Ճիգ էի տնում, որ սրբտապընդվեն  
Վերջին հույսերը թանկագին մեր տան:  
Իզո՛ւր. նա ընկավ, նա մեռավ... տեսա...  
Ես տանջվում էի թեև, աշխատում,  
Շրղթա՞ կըրծոտում, շրղթա՞ կըտրատում,  
Տագնապի ժամին իրեն շըհասա...  
100 Նա մեռավ... Եկան, կապանքը վերցրին,  
Հենց այնտեղ, բանտում, աչքիս առաջին  
Մի փոս փորեցին սառն ու երեսանց...  
Աղաչանք արի, խընդրեցի նըրանց,  
Որ շընորհ անեն՝ թաղեն այնտեղում,  
Ուր որ արևի ճաճանչն է խաղում...  
Այս խենթ, խելագար տրխմար մի միտք էր,  
Բայց այն ժամանակ զրլուխս էր մըտել,  
Թե ազատ ծընված, ազատ սովորած  
Իմ եղբոր հոգին, թեկուզև մեռած,  
110 Չէր հանգըստանա գերության բանտում...  
Ջուր էի սակայն այնպես պաղատում.  
Նըրանք ինձ վըրա քահ-քահ խընդացին,

Եվ մեր սիրելի եղբայրը կըրկին  
Այն պաղ, անգալար հոդումն է թաղված,  
Ու գըլխի վերև անբաժան կախված  
Բըռնակալներին վայել հուշարձան՝  
Ելըբորս կըրած ու թողած շըղթան:

VI

Իսկ մեր ծաղիկը, փոքրը մեզանից,  
Ամենքից սիրվածն իր ծընված ժամից,  
120 Իր սիրուն դեմքով մեր մոր պատկերը,  
Մեր գերդաստանի մանկական սերը,  
Նահատակ մեր հոր ցնորքը նվիրական  
Եվ իմ հոգսերի վերջին առարկան,  
Որի համար միայն ինձ պահում էի,  
Որ նըրան ազատ գեթ մի օր տայի.  
Նա, որ դեռ հոգին պահել էր այնպես  
Տակավին զրվարթ, գուցե առերես,  
Նա էլ խորտակվեց, օրեցօր և նա՛  
Սկըսավ թոշնել ցողունի վըրա:  
130 Բայց այնքա՛ն խաղաղ էր նա թառամում,  
Լո՛ւտ, մեղմիկ հալվում, ուժերը բամվում,  
Առանց արցունքի, քնքույշ ու բարի...  
Ինձ համար էր միայն հոգում ու ցավում...  
Եվ ոչ մի տըրտունջ, մի «ա՛խ» շարավ նա  
Իրեն վաղաժամ օրհասի վըրա:  
Մի փոքրը խոսեց մեր լավ օրերից,  
Մի քիչ ըստփեց, հույսեր տրվավ ինձ,  
Քանզի ես անհուն վըշտից քարացել,  
Կորուստիս առջև լուռ էի կացել.  
140 Ապա թառանչը, որ զըսպում էր նա,  
Արդեն երկարեց, նըվազեց ահա...  
Ականջ դըրի ես... չէր լսվում իսպառ,  
Ձայն տըվի նըրան ահից խելագար...  
Կանչեցի... կարծես մի ձայն լըսեցի...

Ուժգին ցընցումով շրդթաս կըտրեցի,  
Ընկա նըրա մոտ. նըրան շըզըտա...

Ես էի մենակ մըթնումը շարժվում.

Ես էի ապրում, ես էի շընշում

Անիծված օդը մեր խոնավ բանտի:

150 Սա գետնի վըրա, նա գետնի տակին,  
Երկու եղբայրս էլ վախճանված էին:  
Ընկած շոր ձեռքը բըռնեցի, ավա՜ղ,  
Նըրա պես նույնիսկ իմ ձեռքն էլ էր պաղ:  
Ուժ շըկար շարժվեմ կամ մի ձիգ անեմ,  
Բայց զգում էի, որ դեռ ապրում եմ...  
Կատարի մի վիշտ, երբ գիտենք, որ նա,  
Ում սիրում էինք, այլևս չըկա...

Չըգիտեմ ինչպես,

Չէի մեռնում ես.

160 Երկրում ինձ համար

էլ ոչինչ չըկար...

## VII

Իսկ հետո այնտեղ ինձ ինչ պատահեց,

Այդ ես շըգիտեմ ու շեմ իմացել.

Նախ օդը հատավ, լույսը պակասեց,

Ապա թե մութը շըբացավ հանկարծ:

Զգացում ու միտք՝ էլ ոչինչ չըկար:

Չէի հասկանում, ինչ էի զգում,

Քարերի միջին կանգնած մի լեռ քար,

Մի լերկ ապառաժ՝ գագաթը միգում...

170 Ամեն բան դատարկ, մըռայլ ու գորշ էր:

Ոչ ցերեկ էր այն և ոչ էլ գիշեր,

Եվ ոչ իմ բանտի նըսեմ լույսը կար,

Այնքան ատելի աչքերիս համար:

Մի տարածություն՝ դատարկություն մը լի,

Եվ հաստատություն՝ առանց մի տեղի...

Չըկային աստղեր, ժամանակ, աշխարհ,

Ոչ փոփոխություն, ոչ բարի, ոչ չար.

Խորի՜ն լուծյուն... և կանգնած օդում

Ոչ մահվան նշույլ, ոչ կյանք էր նկատվում.

180 Այն անգործություն մի ծով էր կանգուն,  
Անշարժ ու համըր, խավար ու անհուն...

## VIII

Բայց ահա մի շող ցուաց իմ գըլխում.

Այն մի գեղեցիկ թըռչունի ձայն էր,

Մերթ լըռում էր նա, մերթ նորից երգում.

Այնպես քընքույշ երգ լըսած չէի դեռ:

Մինչ լըսում էի կախարդված հոգով,

Լըցվեցին աչքերս ուրախ արցունքով

Եվ ես միառժամ չէի նըկատում

Թըշվառությունըս այն խավար բանտում:

190 Բայց շուտով միտքըս սովոր ընթացքով

Երբ վերադարձավ, իրական աչքով

Շուրջըս, վերևըս ես տեսա կըրկին

Պատերն, օճորքը, նըկուղը մըթին,

Առաջվա նըման ուր որ հազիվ հազ

Արևի շողքը ընկնում էր նըվազ:

Բայց և այն ձեղքում, որ ընկնում էր նա,

Ավելի հանգիստ քան ծառի վըրա,

Նըստած էր թըռչնակն ուրախ ու անփույթ,

Մի սիրուն թըռչնակ, թևերը կապույտ:

200 Հազար դանաղան բաների վըրա

Գեղգեղում էր նա.

Ու ինձ էր ասում կարծես բոլորը:

Դեռ ոչ մի անգամ մինչև այն օրը

Նըրա նըմանը տեսած չէի ես,

Ոչ էլ կըտեսնեմ: Նա էլ էր ասես

Ինձ նըման մենակ, ընկերից զըրկված,

Սակայն ինձ նըման հույսը չէր հատած:

Նըրա համար էր նա եկել մենակ,

Որ մըխիթարի ինձ որք ժամանակ.

210 Ու ծըվըլալով մութ բանտիս ծայրից՝

Լըցնում էր կյանքով իմ սիրտը նորից:

Բայց ո՞վ էր ինքը, իմ հյուրը երգիչ.

Արդյոք երկընքի ազատ բնակի՞չ,

Թե՞ իր վանդակից հենց նոր ազատվել,

Եկել էր իմիս վերևը նրստել...

Զրգիտեմ, բայց ես՝ քաշած գերություն

Ձէի ցանկալ քեզ, սիրունիկ թռչուն:

Սակայն թերևս թռչնի կերպ առած

Մի այցելու էր դրրախտից թրոած...

220 Այս միտքը այնժամ, թող ներե ինձ Տեր,

Պատճառեց անշափ խինդ ու արցունքներ:

Մրտածում էի, թե նա իմ կարոտ

Եղբոր հոգին էր, հկել էր ինձ մոտ...

Բայց հանկարծ թրոավ, և ես իմացա,

Որ մի հողեղեն արարած էր նա.

Մի՞թե կարող էր եղբայրըս թռչել,

Ինձ կրրկին մենակ թողնել այն բանտում,

Ինչպես պատանում փաթաթած մեռել,

Ինչպես մի սև աճյալ պայծառ կապույտում:

IX

230 Փոխվեց փիճակըս այն ժամանակից,

Պահապաններրս դարձան կարեկից:

Զրգիտեմ ինչու մեղմացան նըրանք,

Որ սովոր էին տեսնել շարչարանք,—

Բայց այսպես եղավ: Ոչ ոք իմ կըտրած

Շրղթան շրկապեց ու մընաց միշտ բաց:

Եվ շրջում էի իմ բանտում ազատ

Ողջ երկարությամբ, մի պատից մի պատ:

Բայց երբ թըփում էր՝ անըզգույշ քայլով

Կոխեցի նըրանց հանգիստը տըխուր,

240 Գողգոթում էի սաստիկ հեալով

Ու սիրտըս ցավից ճըմլում էր ամուր:

X

Ես ոտնատեղեր փորեցի պատում.

Սակայն փախչելու չէի աշխատում,

Ես թաղել էի արդեն բուրբին,

Որոնք աշխարքում ինձ սիրում էին,

Եվ այնուհետև աշխարքն ինձ համար

Մի բանտ էր նույնպես, բայց մեծ ու անծայր:

էլ ոչ ոք չըկար այնտեղ ինձ մոտիկ.

Հայր, մայր, կամ եղբայր, ընկեր կամ որդիք...

250 Ես ուզում էի միայն բարձրանալ

Վանդակով փակած լուսամուտներին,

Այնտեղից հանգիստ, մի անգամ դարձյալ

Նայել հըրճվանքով բարձրը սարերին:

XI

Ես տեսա նըրանց. դարձյալ նույնն էին

Ու չէին փոխվել նըրանք ինձ նըման.

Կըրկին դարևոր ձյունը գըլխներին,

Ներքև մեծ լիճը, կապտաջուր Ռոնան...

Ջըրերը զըվարթ աղմըկում էին

Մացառուտներում, ժայռերի միջին,

260 Արևում փայլում ճերմակ քաղաքը

Ու լրճում հանդարտ սահում նավակը,

Թեթև, ձյունափայլ առագաստը բաց:

Ապա այնտեղ ցած

Մի փոքրիկ կըղզի մենավոր, կանաչ

ժըպտում էր, ասես, իմ աչքի առաջ:

Բանտիս հատակից մի քիչ մեծ կըգար,

Ու բուսել էին վըրան երեք ծառ:

Հեռնային հովը շընչում էր այնտեղ,

Ափերին վըճիտ ջըրերը ծըփում,

270 Զըմրուխտ դալարի միջում գունագեղ,

Քընթույշ, վառվըռուն ծաղիկներ ծաղկում:

Բանտի պատի տակ ձըկան մի վըտառ



Լողում էր անշափ ուրախ ու կայտառ,  
 Քազավորում էր արծիւն վերևում,  
 Ու թափն ափելի ուժգին էր թրվում,  
 Երբ որ նա հանկարծ ուղղում էր դեպ ինձ:  
 Աչքերս արցունքով լրցվեցին նորից  
 Ու այնպե՛ս թախիժ տիրեց իմ սրբտին,  
 Ասես ցավեցի, որ լուսամուտին  
 280 Եկա մոտեցա իմ շրջթան թողած:  
 Շտապով իջա դարձյալ դեպի ցած  
 Ու մըռայլ բանտիս խավարը ահա  
 Մանրը ճընշելով շոքեց ինձ վրրա:

## XII

Ամիսներ, տարիք թե օրեր անցան,  
 Ես ոչ հաշվել եմ և ոչ իմացել:  
 Մութն էր ի՛մ բանտը, տրխուր մըշտական  
 Ու երբեք պայծառ հույս չեմ ունեցել:  
 Եկան վերջապես ինձ ազատելու.  
 Չէի հասկանում՝ ո՛ւր եմ գընալու,  
 290 Ոչ էլ հարցրի՝ է՛ր են ազատում.  
 Մին էր ինձ համար՝ ազատ թե բանտում.  
 Ու այն ժամանակ իմ բանտի միջին,  
 Երբ որ ձրգեցին կապանքս վերջին,  
 Այնպես էր թրվում, թե նըրանք եկել,  
 Ուզում էին ինձ բաժանել, զըրկել  
 Իմ երկրորդ տանից: Ես մինչև անդամ  
 Այնտեղ սարդերին դարձա բարեկամ.  
 Ու միշտ ուշադիր հետևում էի,  
 Երբ որ լըրջորեն նըրանք ձահձրալի  
 300 Իրենց արհեստով էին ըզբաղվում.  
 Կամ դիտում էի, երբ մուկն էր խաղում  
 Լուսնի լուսի տակ: Ինչո՞ւ նըրանց պես  
 Ինձ էլ մեր տանը շրջալի և ես...  
 Մենք՝ բընակիչներ ամենքս մի տան,  
 Ու ես նըրանց մեջ մի պետ անսահման,

Կյանքի ու մահվան վրճիռն իմ ձեռքում.  
 Բայց այնպե՛ս խաղաղ էինք բըճակվում...  
 Նույնիսկ շրջթայիս դարձա ես ընկեր...  
 Այսպես մընալով օրեր, տարիներ,  
 310 Սոփորում է մարդ իրեն վիճակին,  
 Ու... ես ցավեցի իմ բանտի շեմքին:

1. ԶԱՅԼԴ ՀԱՐՈՒԴԻ ԵՐԳԸ

Մնաս բարյա՛վ, կապույտ հեովում  
 Կորչող եզերք հաչոհների,  
 Բուքն հեծում է, ծովը գոռում,  
 Ղալբ ճըչում վայրենի:  
 Արևն ահա շտապում է  
 Մովի խորքում հանգչելու...  
 Էարի գիշեր, իմ հայրենի՛ք,  
 Մնաս բարյավ նաև դու:

Կանցնեն ժամեր, և նա կրկին  
 10 նոր առավոտ կըծնի,  
 Ես կողոնեմ ծով ու երկինք,  
 Բայց ոչ հողը մայրենի...  
 Ապարանքըս ամայացած,  
 Օջախս հանգած—անկըրակ,  
 Պատերիս մեջ խոտ է լցված,  
 Շունըս ոռնում դռան տակ:

— Մոտիկ արի՛, մանկլավիկս,  
 Ինչո՞ւ համար ես կոծում,  
 Վախե՞ն՞ում ես ալիքներից,  
 20 Թե՞ ցըրտիցն ես դողացնում:

Սրբի՛ր աչքիդ արտասուքը,  
 Պինդ է մեր նավն և թեթև,  
 Հազիվ նրան կարողանար  
 Հասնել բազեն սըրաթև:

— Չեմ վախենում, թող հողմահար  
 Ալիքները բարձրանան,  
 Բայց դու, պարո՞ն, մի՛ զարմանար,  
 Որ ես լալիս եմ այսքան.—  
 Հեռացել եմ ես իմ հորից  
 30 եվ մորիցըս սիրասուն,  
 Դու ես ընկեր մընացել ինձ,  
 Եվ նա, որ կա երկնքում:

Հայրս օրհնեց գալիս ինձի  
 Եվ շոտնքաց միանգամ,  
 Բայց մայրս խիստ պիտի հեծի,  
 Մհն՛ն ես ետ կըղառնամ:  
 — Հերի՛ք, մանուկ, այդ արցունքը  
 Վայե՞լ է քո աչքերին.  
 Թե՛ պարզ լիներ և իմ սիրտը,  
 40 Իմ աչքերս էլ կուլային:

Ե՛կ, զինակիրս հավատարիմ,  
 Ի՞նչ գունատ ես երևում,  
 Ֆրանսիացո՞ւց մեր ոխերիմ,  
 Թե՞ բուքիցն ես վախենում:  
 — Ինձ համար չեմ դողում, պարո՞ն,  
 Այդքան թույլ չէ քո ծառան,  
 Բայց հարազատ կնոջ հոգսը  
 Դժգունացնում է նորան:

Ամրոցիդ մոտ ես տխրադեմ  
 50 Չավակներիս թողեցի,  
 Արդ, հոր մասին եթե հարցնեն,  
 Մայրը նրանց ի՞նչ ասի...

— Բավական է, բարի ծառաս,  
Գու իրավ ես վշտանում,  
Իսկ ես անփուլթ եմ ավելի,  
Միծաղելով եմ գրնում:

Եվ արդյոք ո՞վ կըհավատար  
Հառաչանքին կանացի,  
Մեր տեսած լացը մի օտար  
60 Սիրուն աչքից կըսրբի...  
Չեմ ամոստում վայելքս հին,  
Ոչ վտանգից կըսարսեմ,  
Այն է, որ չեմ թողնում մեկին,  
Որի համար արտասվեմ:

Եվ այժմ ահա ես մենակ եմ  
Հայնատարած այս ծովում,  
Բայց թե ինչո՞ւ կըհառաչեմ,  
Երբ ինձ համար չեն ցամփում:—  
Շունըս երկար չի ոռնալու,  
70 Մի ուրիշը կըխնամի,  
Եվ, թե լինեմ ես դառնալու,  
Պատառ-պատառ ինձ կանի:

Գե՛հ, իմ նավակ, մենք սլանանք,  
Մովի վերա փրփրաղեզ,  
Ուր որ կուզես, հոգ չէ, գնանք,  
Միայն հայրենիք շրտանես:  
Ողջո՞ւյն, ողջո՞ւյն մութ ալիքներ,  
Եվ, երբ աչքիցս ընկնեիք,  
Ողջո՞ւյն, խուղե՞ր, անապատնե՞ր...  
80 Բարի գիշեր, հայրենի՞ք:

## 2. ԻՆԵՍԻՆ

Ո՛չ, մի՛ ժըպտա ինձ— իմ մութ ճակատին,  
Ավա՛ղ, քեզ ժըպտալ կարող չեմ էլ ես,  
Բայց երկինք շանե, որ լաց լինես դու,  
Եվ լաց լինես դու գուցե զուր— ինձ պես:

Թե էն ես հարցնում՝ ինչ ցավ է գաղտնի,  
Որ խրնդությունըս ու կյանքս է մաշել,  
Իզուր է, չըքնաղ, իզուր կիմանաս,  
Եվ դու էլ նույնիսկ չես կարող բուժել:

Ոչ սերն է պատճառ, ոչ ատելություն,  
10 Ոչ սին փառքերի կորուստը, ավա՛ղ,  
Որ փախչում եմ ես ձրգած տեղ ու տուն,  
Ձրգած ամեն բան, ինչ որ թանկ էր վաղ:

Ինչ որ տեսնում եմ, լրսում աշխարհում—  
Չանձրացնում է ինձ ամեն, ամեն բան,  
էլ գեղեցկությունն ինձ չի գըրավում,  
Ոչ էլ քու աչքերն այդքան աննրման:

էս էն անհանգիստ փիշտն է ամեհի,  
Որ թափառական ջրհուղն ուներ հեզ.  
Շիրմից էն կողմը չի ուզում նայի,  
20 էս կողմը հուսալ— չի կարող երբեք:

էլ ո՞ւր փախչեմ ես ինքըս ինձանից,  
Թեկուզ հեռավոր երկրի մի անկյուն,

Ուր էլ որ գընամ՝ հետևում է ինձ  
Կյանքի էս ժանդը — մըտքիս դեն անքուն:

Ուրիշներն այնինչ, հաճույքից հարբած,  
Վայելում են գոհ՝ ինչ լըքել եմ ես...  
Ո՛վ, թող վայելեն, ու երնե՛կ, երնեկ  
Իրենց երազից շըզարթնեն ինձ պես:

Ծս պետք է անցնեմ աշխարհից աշխարհ,  
30 Քանի ետ նայեմ այնքան անիծեմ,  
Ծվ էն է սփոփանք մնում ինձ համար —  
Վատթարն եմ տեսել — ինչ էլ գա իմ դեմ:

Բայց էն վատթարը... մի հարցնի էդ ինձ.  
Գո՛ւթ արա, սիրուն, ժպտա դու կրկին,  
Մի քաշի այդպես դիմակն իմ սրտից,  
Որ տեսնես տակի դժոխքն ահագին:

## Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

### ՄՄԻՐԻ

Ճաշակելով ճաշակեցի զտակա մի մեղր,  
Ե ահա մեռանիցիմ ես:

Ա ԳԻՐԲ ԲԱԳ.

### I

Սըրանից առաջ մի քանի տարի,  
Այնտեղ, ուր Արագվ ու Կուր գետերի  
Ջըրերն աղմուկով խառնըվում իրար,  
Գըրկվում են երկու քույրերի նըման,  
Կար մի մենաստան: Կարող է այժմ էլ  
Անցորդը սարի ուտերից տեսնել  
Քանդված դռների կանգուն սյուները,  
Վանքի կամարն ու աշտարակները:  
Բայց անուշահոտ ծուխը բուրվառի  
10 էլ չի վերանում կամարի տակին  
Ծվ ոչ լսվում է աղոթողների  
Ծրգը գիշերվա ուշ ժամանակին:  
Այժմ մեն-մենակ գառամյալ մի ծեր,  
Ավերակ վանքի պահնորդ կիսամեռ,  
Ընկած մտքիցը մարդկանց ու մահի,  
Սըբում է փոշին շիրմաքարերի,  
Որոնք պատմում են անցած դարերի,

Անցած փառքերի ու նրա մասին,  
Թե ինչպես ճնշված իր թագի տակին,  
20 Այս ինչ թագավորն, այս ժամանակին  
Իր ժողովուրդը հանձնեց ուսին:

## II

Մի ուս գեներալ Կովկաս լեռներից  
Մի անգամ դեպի Թիֆլիս էր գալիս:  
Իր հետ նա գերի մի մանուկ ուներ.  
Սա տրկարացավ, չըկարաց տանել  
Նեղությունները հեռավոր ճամփի:  
Հաղիվ թե լիներ հինգ-վեց տարեկան,  
Այժմ մնիկի պես երկչոտ, վայրենի  
Եվ թույլ ու ճրկուն եղեգնի նման:  
30 Սակայն նրա մեջ ցավը տանջալի  
Զորացրեց այնժամ իրեն հայրերի  
Աննկուն հոգին: Վիշտը լուռ տանում,  
Եվ իր մանկական տրկար շրթունքից  
Մի թույլ հառաչանք նույնիսկ չէր հանում:  
Հացը նըշանով մերժում էր նա դեն  
Ու խաղաղ, հպարտ մեռնում էր արդեն:  
Կարեկցությունից մի ծեր վանական  
Նրբան խնամեց, տըվավ ապաստան.  
Ու այսպես՝ վանքի հարկի տակ մնաց  
40 Բարեկամական ձեռքով ազատված:  
Բայց, գուրկ մանկական զըվարթ հաճույքից,  
Փախչում, խորշում էր նա ամեն մեկից.  
Թափառում էր լուռ, մենակ, սրտաբեկ,  
Թառանջով նայում դեպի արևելք,  
Մաշվելով մի լուռ, անմեկին վըշտից—  
Իրեն հայրենի երկրի կարոտից:  
Գերության սակայն շուտ ընտելացավ,  
Օտարի լեզուն քիչ-քիչ հասկացավ,  
Հայր սուրբը կրնքեց, տըվավ սուրբ հաղորդ,  
Ու դեռ աշխարհքի կյանքին անձանոթ,

Ուղում էր արդեն ծաղիկ հասակում  
Արեղայական ընդունել կոշում,  
Երբ որ մի անգամ աշնան գիշերով  
Անհետ չըբացավ: Շուրջը սարերով  
Զըգվում էր անծայր անտառը մըթին:  
Երեք օր այնտեղ իզուր փընտրեցին,  
Վերջապես դաշտում անըզգա գտան  
Ու առան կըրկին բերին մենաստան:  
Նա սաստիկ գունատ, թույլ էր ու նիհար.  
60 Կարծես աշխատել, տանջվել էր երկար,  
Կամ հիվանդություն ու սով էր քաշել:  
Ոչ մի հարցմունքի չէր պատասխանում,  
Օրն օրի վրա ընկնում էր, թոռում:  
Այսպես մոտեցավ ժամը իր մահվան:  
Այնժամ նրա մոտ եկավ արեղան  
Եվ նորոգելով, և՛ աղերսելով:  
Հիվանդը՝ հպարտ նրան լըսելով,  
Նըստեց, մընացած ուժը հավաքեց,  
Ու այսպես երկա՞ր խոսել սկսեց.

## III

70 «Գոհ եմ քեղանից, հայր սուրբ, որ եկար  
Իմ խոստովանքը լըսելու համար:  
Ինչ էլ որ լինի, լավ է, որ ցավոտ  
Միրտըս դատարկեմ խոսքով մեկի մոտ:  
Սակայն ես մարդկանց շարիք չեմ արել,  
Իմ արարքները նորա համար էլ—  
Ի՞նչ օգուտ եթե խոստովանեի.  
Իսկ հոգին մի՞թե պատմել կըլինի...  
Ես քիչ եմ ապրել և այն էլ գերի.  
Այսպես երկու կյանք մի աղմըկալի,  
80 Ես երկու կյանքի հետ, որ տեսել եմ, ծե՛ր,  
Ես կըփոխեի թե հընար լիներ:  
Ես լոկ մի մըտքի ուժ եմ իմացել.

Մի՛, բայց բոցավառ կիրք եմ ունեցել.  
Նա ինչպես մի որդ ապրել է իմ մեջ,  
Կրթժել է հագիս, մաշել մինչև վերջ:  
Իմ ցնորքները թոցրել, տարել է  
Այս նեղ խցերից անդորր աղոթքի  
Այն վե՛հ աշխարհը կրովի, աղմուկի,  
Ուր որ ժայռերը թաքչում ամպերում,  
90 Ու մարդիկ այնպե՛ս ազատ են ապրում...  
Ես իմ այդ կիրքը գիշերվա մըթնում  
Պահել եմ վըշտով, արցունքով սընել.  
Ի՞նչ այժմ ա՛հա բարձրածայն հայտնում,  
Խոստովանում եմ առջևն աշխարհքի,  
Ու թողություն էլ չեմ խնդրում իսկի:

#### IV

«Ծերո՛ւկ, շատ անգամ իմացել եմ ես,  
Որ դու իմ կյանքը մահից փրկել ես:  
Ինչո՞ւ փրկեցիր: Մենակ ու դաժան,  
Փոթորկի պոկած տերևի նըման,  
100 Մըռալլ պատերի միջում մեծացա,  
Հոգով դեռ մանուկ, կյանքով աբեղա:  
Չըկարողացա ոչ ոքի ասել  
«Հայրիկ» ու «մայրիկ» սրբազան խոսքեր:  
Հարկավ, քո միտքը այն էր, ծերունի՛,  
Որ մենաստանում ես խորթանայի  
Այնքան քաղցրալի այս անուններին.  
Ձո՛ւր. հետս են նրանց ձայները ծընվել:  
Ես տեսնում էի, որ ուրիշներին  
Հայրենիք, ընկեր, ծնող ունեին,  
110 Մինչդեռ շունեի ես նրանց նըման  
Ոչ թե սիրելիք—այլև գերեզման:  
Ես էլ այն օրից իզուր շողբացի,  
Այլ հոգուս միջում այսպես ուխտեցի,  
Որ երբևիցե, թեկուզ մի վայրկյան,  
Այս իմ բոցավառ կուրծքը մանկական

Սեղմեմ կարոտով մի ուրիշ կըրծքի,  
Թեկուզ անժանոթ—միայն հարազատի:  
Բայց, ավա՛ղ, հիմա երազներըս այն  
Կորել են իրենց պերճանքով համայն,  
120 Ու՛ ինչպես օտար երկրում ապրեցի՛  
Մեռնում եմ դարձյալ ես որբ ու գերի:

#### V

«Ինձ չի վախեցնում գերեզմանն ա՛նեղ,  
Տանջանքն, ասում են, հանգչում է այնտեղ  
Սառն, հավերժական լըռության միջում:  
Կյանքից զրկվելն է ինձ մենակ տանջում:  
Ջահե՛լ եմ, ջահե՛լ... ունեցե՛լ ես դու  
Ցնորմունքները անհոգ պատանու:  
Դու չես ունեցել կամ չես հիշում էլ,  
Թե ո՞նց ես մի օր ատել ու սիրել,  
130 Ինչպես է սիրտդ բաբախել ուժգին  
Կանաչ դաշտերին, վառ արեգակին  
Անկյունի բարձրը բուրգից նայելիս,  
Ուր թարմ է օդը, և ուր մերթ գալիս  
Ու բարձրը պատի խորունկ ճեղքվածքում,  
Բուքից վախեցած, կուչ եկած նստում,  
Պատրաստարվում է փոքրիկ աղապնին—  
Չըքնաղ գավակը անհայտ աշխարհի:  
Ուր մընաց՝ արդեն զառամ ես, թույլ ես,  
Սիրուն աշխարհը կըշտացրել է քեզ.  
140 Սրտումդ անկատար էլ շունիս ըղձեր...  
էլ ի՞նչ ես ուզում, ապրել ես դու, ծե՛ր,  
Աշխարհքում ունիս մոռնալու մի բան.  
9է՛ որ կապրեի ես էլ քեզ նըման...

#### VI

«Կուզե՞ս իմանալ՝ ազատության մեջ  
Ես ինչեր տեսա.— դաշտեր տեսա սերձ.

Բըլուրներ տեսա, ուր կանաչ ծառեր,  
 Ինչպես շուրջպարի բրունած եղբայրներ.  
 Չորս կողմից դալար պրսակ կապելով  
 Շըշընջում էին թարմ խմբակներով:

150 Տեսա դեզերը մրտալլ ժայռերի,  
 Երբ բաժանում էր վըտակը նրանց,  
 նրանց մտքերը հասկանում էի,—  
 Վերևիցն էր այն շնորհքն ինձ տըված:  
 Վաղու՛ց, շատ վաղուց օդում տարածված  
 Այն քարե գրկերն ամեն մի վալրիկյան  
 Փափագում են լուռ իրար հանդիպման,  
 Բայց օրեր անցնում, տարիք են անցնում,  
 Ու նրանք երբե՛ք իրար չեն հասնում...  
 Բարձրը լեռների շարքեր տեսա ես

160 Վե՛հ, հրրաշալի ցընորքների պես,  
 Երբ արշալույսի ժամին վաղորդյան  
 նրանց գըլխները սեղանի նըման  
 Մըխում են հանդարտ կապույտ երկնքում,  
 Ու ամպը ամպի ետևից ձըգւում,  
 Թողնելով գաղտնի իր օթևանը,  
 Ինչպես տարագնաց ըսպիտակ հավթի  
 Հեռու կողմերից շըվող երամը  
 Ուղղում է իր շուն կողմն արևելքի:  
 Անոսը մշուշի արանքից, հեռվում,

170 Գոհարի նըման փայլող ձյուներում,  
 Տեսա այևոր կովկասն անսասան.  
 Եվ ես շըգիտեմ թե ընչիցն էր այն,  
 Բայց թեթևացավ սիրտս նույն ժամայն.  
 Ըսկսեց գաղտնի մի ձայն ինձ ասել,  
 Թե երբեմն այնտեղ ապրել եմ ես էլ...  
 Ու հետըզհետե բացվեցավ խավար  
 Անցյալն իմ մտքում պայծա՛ռ ու պայծա՛ռ...

VII

«Եվ ես հիշեցի մեր տունն հայրական,  
 Հիշեցի մեր ձորն ու իր շըրջական

180 Շըփաքում ցըված գյուղի տըները.  
 Լսեցի ըրկվան ձեն ու ձուները  
 Դեպի տուն վազող երամակների,  
 Հեռու հաշոցը ծանոթ շըների:  
 Միտս եկան թուխ-թուխ ծերունիները.  
 Լուսնյակի լուսով իրիկունները  
 Իմ հոր սըրահի, շեմքի դեմնուդեմ  
 Նստոտած խոհոտն և խոժոռադեմ.  
 Ու խանչալների պղընձապատած  
 Պատյանների փայլն... ու բոլորն հանկարծ

190 Խառը շարքերով, երազի նըման  
 Աչքիս առաջից եկան անցկացան:  
 Հապա իմ հա՛յրը. պատերազմական  
 Իր զգեստներով, ինչպես կենդանի  
 Աչքիս երևաց, ու միտս եկան  
 Զրահի շոինդ, փայլն հըրացանի,  
 Նրա հայացքը հպա՛րտ, անկո՛ւն,  
 Եվ իմ քույրերը մատա՛ղ, սիրասո՛ւն...  
 Շողերը նրանց աղու աչքերի  
 Եվ հըչյունները երգի, խոսքերի,

200 Որ ասել էին օրբունիս վըրա...  
 Այն ձորի միջո՞վ վտա՞կ էր վազում,  
 Աղմկող էր նա, սակայն ոչ խորին,  
 Նըրա ոսկեղույն մանրիկ ավազում  
 Խաղալու էի գընում կեսօրին,  
 Եվ նայում էի աչքերըս հառած,  
 Երբ այիքներին, անձրևից առաջ,  
 Դիպչում էր թևով սև ծիծեռնակը:  
 Հիշեցի և մեր խաղաղ տնակը,  
 Օջախի առջև իրիկունները

210 Արած այն երկար պատմությունները,  
 Թե ոնց են ապրել մարդիկ վաղեմի,  
 Երբ դեռ աշխարհքը ճոխ էր ավելի:

- «Կուզե՞ս իմանալ, թե ես ինչ արի  
Այն հրեք օրում:— Ազատ ապրեցի,  
Եվ կյանքս առանց այն հրեք օրի  
Քո ուժից ընկած ծերույթից էլ դեռ  
Ավելի տրժգույն, տրխուր կըլինեմ:  
Մտքումըս վաղո՞ւց, վաղուց դրել եմ՝  
Մի անգամ արձակ դաշտերին նայեմ,  
220 Տեսնեմ՝ աշխարհը սիրո՞ւն է արդյոք,  
Ինչո՞ւ ենք, տեսնեմ, գալի մենք աշխարհ,  
Ազատ ապրելո՞ւ, թե բանտի համար:  
Եվ այն գիշերվա սուսկալի ժամին,  
Որոտմունքն երբոր վախեցրել էր ձեզ,  
Սեղանի առջև երբոր խըմբովին  
Ընկել էիք դուք խըռնըված այնպես,  
Ես վանքից փախա: Ծ՛, ինչպես եղբայր,  
Կուզեի զըրկել մըրրիկն հողմազայր.  
Աչքերս ամպերի ետևից տանում,  
230 Ձեռքով շանթ էի բռնել ցանկանում...  
Գե՛ ասա, հայրի՛կ,  
Ինձ այս պատերում ի՞նչ պիտի տայիք  
Իմ փոթորկալի սըրտի և ա՛հեղ  
Այն որոտմունքի մտերմության տեղ...

## IX

- «Երկար վազեցի, թե ուր կամ որտեղ,  
Այդ ես չըգիտեմ: Եվ ոչ մի աստղ  
Իմ դժվար ճամփան չէր լուսավորում:  
Միայն բերկրությամբ շունչ էի առնում  
Իմ վաստակաբեկ ու հոգնած կրծքով  
240 Այն անտառների թարմությունը զով:  
Երկար վազեցի. վերջապես հոգնած  
Բարձր խոտերում ընկա ու պառկած  
Ականջ զըրի ես. հետևող չըկար:

- Որոտմունքն ընկավ. լույսը մի երկար  
Տրժգույն ու դալուկ շերտով բացվելով  
Ձգվեց երկնքի— երկրի արանքով,  
Եվ նըրա վերա ես որոշեցի  
Սուր ժանիքները հեռու լեռների:  
Անձայն ու անշարժ ես պառկած էի:  
250 Երբեմն-երբեմն շախկալը կիրճում  
Երեխի նըման լալիս էր, ճըշում,  
Եվ, հարթ ու փայլուն թեփով փայլելով,  
Սողում էր օձը քարերի միջին.  
Չէր ճնշում սակայն երկյուղն իմ հոգին,  
Ես էլ գայլի պես խորթ էի մարդոց,  
Եվ սողում էի, թաքչում ինչպես օձ:

## X

- «Ներքև անդընդում, ինձանից շատ ցած,  
Ջուրը հեղեղից սաստիկ հորդացած,  
Աղմըկում էր խուլ, ինչպես բարկացած  
260 Մարդկային խոսուն ձայներ անհամար:  
Թեպետ և անխոսք— սակայն ինձ համար  
Պարզորոշ էր միտքն այն խոսակցության,  
Անլուռ աղմուկը, վեճն հավերժական,  
Հարվածը համառ ժայռերի կույտին,  
Մեղմանում էր նա ու դարձյալ ուժգին  
Խաղաղ ձորի մեջ հանկարծ որոտում:  
Եվ ահա վերև մառախլոտ օդում  
Հավքերն երգեցին: Արևածագի  
Երկինքը շիկնեց: Մի թեթև քամի  
270 Նամ տերևները շարժեց ու գնաց  
Ու ծաղիկները շընչեցի: Բնեած.  
Նրանց պես օրին դիմափորելու  
Ես էլ զըլուխս բարձրացրի վերև...  
Մըսիկ արի ցած ու չեմ թաքցընում,  
Սարսափն ինձ պատեց.— անհատակ ու սև  
Անգուճի եզրին էի ես պառկած,



Ունում էր ներքև ջուրը փրփրած:  
Այն ոեղ է տանում ժայռը ղշնելով,  
Բայց շարը մենակ իջավ նրանով,  
280 Երբոր երկնքի բարձրից գահավեժ,  
Կորավ ստորին էն մութ վիհի մեջ:

XI

«Մաղկում էր շուրջըս եղեմն Արարչի.  
Ջրվարթ ու դալար պարզը կանաչի  
Պահպանում էր դեռ արցունքն երկնային.  
Եվ խոպոպները խաղողի որթի  
Մառերի միջով գալարվում էին  
Պճնած կանաչով քնթույշ սաղարթի.  
Իսկ նրանց վրա ճոխ կախված էին,  
Ինչպես ականջի գինդեր թանկագին,  
290 Լիք ողկույզները, և մերթ նրանց մոտ  
Թռչում էր հավքի երամը երկչոտ:  
Ու նորից գետնին կըպա ես մին էլ  
Նորից սկըսա ես ականջ դրնել  
Այն օտարոտի թովիչ ձայներին.  
Նրանք թփից թուփ ծըլվելում էին  
Ու խոսում էին կարծես միասին  
Երկնքի-երկրի գաղտնիքի մասին:  
Այնտեղ բնության ձայները բոլոր  
Միացած էին: Այն հանդիսավոր  
300 Փռաբանության երգի ժամանակ  
Մարդու գոռ ձայնը չէր լսվում մենակ:  
Ինչ որ այն ժամին զգում էի ես  
Անհետացել են մտքերս այն բոլոր,  
Բայց կուզենայի պատմել նրանց քեզ,  
Որ գոնե մտքով ապրեմ նորից նոր:  
Այն առաջնորդ կամարն երկնքի  
Այնքան էր հստակ, որ հրեշտակի  
Ճախրը սուր աչքը տեսնել կարող էր.  
Այնքա՛ն թափանցիկ ու այնքան խոր էր,

310 Այնքա՛ն էր լեցուն շինջ կապուտակով,  
Որ ես նրա մեջ հայացքով, հոգով  
Սուզվեցի, կորա, մինչև իր շոգով  
Իմ ցնորքները կհօսըր ցրրվեց,  
Ու ինձ ծարավը տանջել սկսեց:

XII

«Այնժամ բռնելով ճկուն թփերից,  
Դեպի հեղեղատն անդունդի եզրից,  
Մի սալից մի սալ, որքան ուժըս կար,  
Սկըսա իջնել: Երբեմն մի քար  
Ոտներիս տակից պոկվելով հանկարծ,  
320 Գլորվում էր ցած.  
Թռչում էր ներքև դողորդ հանելով,  
Ետևից ակոս, փոշի անելով  
Ու կուլ էր գնում ջրի ալիքին:  
Ես կախված էի—անդունդն իմ տակին:  
Բայց ջահելությունն ուժով է լինում,  
Մահվան երկյուղը ինձ չէր վախեցնում:  
Հենց իջա տակը այն սեպ-սեպ ժայռի,  
Երեսիս փըշեց լեռնային ջրրի  
Ձով թարմությունը, և իսկույն ագահ  
330 Նրա սառնորակ ալիքին ընկա:  
Հանկարծ մի շըշուկ, ոտնաձայն լեթև...  
Իսկույն թաքչելով թրփերի ետև,  
Ամբողջ բռնրված ա՛տմա դողով,  
Երկչոտ հայացքս վեր քաշած վախով  
Ես ականջ դրնել սկսեցի ազատ.  
Եվ մոտենալով հընչում էր ա՛հա  
Մատաղ վրացուհու ձայնը պատանի,  
Այնպե՛ս բնական, այնպե՛ս կենդանի,  
Այնպե՛ս քաղցր, ազատ, որ կարծես թե նա  
340 Միրելի մարդկանց սնվան հընչյուններ  
Միայն կանչելու սովորած լիներ:

Այն մի հասարակ երգ էր լեռնային,  
Խոր տպվեց սակայն իմ մտքի միջին,  
Եվ իմ ականջին—հենց մութն ընկնում է—  
Մի անտես-անհայտ ոգի երգում է:

### XIII

- «Սափորն ուղիղ բռնած ուսին  
Նեղ շավիղով վերացուհին  
Ջուրն էր իջնում: Երբեմնակի  
Քարերի մեջ սայթքում էր նա
- 350 Միծաղելով իրեն վրա:  
Այնպես աղքատ ու պարզ հագած,  
Շղարշի ծալքերն ետև ձրգած,  
Թեթևաքայլ գնում էր նա:  
Թեժ արևը, շոգն ամառվա  
Նրա դեմքն ու կուրծքն այրելով  
Պատել էին ոսկի ստվերով:  
Տապ էր շնչում դեմքը բուրբ,  
Եվ աչքերի մութն այնքան խոտ,  
Այնքան սիրո գաղտնիքով լի,
- 360 Որ մտքերըս փոթորկալի  
Շրփոթվեցին: Հիշում եմ խոր,  
Կրժի ձայնը, ջուրը երբ որ  
Մեջն էր թափում մեղմաքրքիջ,  
Ու սոսափյունն... ուրիշ ոչինչ:  
Երբոր ուշքի եկա կրրկին,  
Ու ետ քաշվեց սրտիս արինն,  
Արդեն շատ էր նա հեռացած,  
Ու գնում էր թեթև, կամաց.  
Շիտակ իրեն բռնան տակին,
- 370 Որպես դաշտի շրջեղ բարդին...  
Մի քիչ հեռու, սառը միզում,  
Որպես ընկեր, ժայռի գրրկում  
Բուսել էին երկու տընակ.

Հարթ կըտուրի վրայից մեկի  
Մութսն ելնում էր կապուտակ:  
Ես տեսնում եմ այժմ էլ, ասես,  
Ինչպես նըրա դուռը բացվեց  
Ու կամացուկ փակվեց դարձյալ...  
— Դո՛ւ, ես գիտեմ, լես հասկանալ

- 380 Իմ տխրությունն, իմ վիշտն անհաս.  
Եվ կըցավեմ թե հասկանաս.  
Թող հիշատակն այն վայրկենի  
Ինձ հետ, իմ մեջ մընա—մեռնի:

### XIV

- «Հոգնած գիշերվա նեղություններից  
Ընկա ստվերում: Շուտով սփոփիչ  
Քունը աչքերըս փակեց ակամա  
Եվ ես մյուս անգամ երազում տեսա  
Չըքնաղ պատկերը այն վերացուհու,  
Եվ մի անսովոր, դյուրեկան թախիծ
- 390 Անուշիկ ճմլեց իմ սիրտը նորից:  
Ճիգ էի անում, որ մի շունչ քաշեմ,  
Հանկարծ արթնացա: Արդեն երկնքում  
Փայլում էր լուսինն, ու մենակ մի ամպ  
Սողում էր նրա ետևից թաքուն,  
Բաց արած իրեն գիրկն ազահույթյամբ.  
Կարծես թե իրեն որսը լիներ էն:  
Լուռ էր ու խավար աշխարհ համորեն.  
Գազաթները միայն ձյունոտ սարերի,  
Ինչպես արծաթյա ծուպեր ահռելի,
- 400 Պըսպղում էին առաջիս— հեռվում,  
Հեղեղատը խուլ ճողփում ամերում:  
Մանոթ իրծիթում մերթ պայծառ վառվում  
Ու մերթ հանգչում էր աղոտ մի կրրակ:  
Այնպես է հանգչում գիշեր ժամանակ  
Պայծառ աստղիկը երկնքում փայլող:

Ես ուզում էի... Բայց չէի կարող  
 Ես այնտեղ մտնել: Ես այն ժամանակ  
 Հոգումս ունեի լույ մի նպատակ:—  
 Հասնել հայրենիք. ու համբերեցի  
 410 Քաղցի, ծարավի, որքան կարացի:  
 Եվ ահա անձայն ու երկշոտ ընկա  
                                           Ես ուղիղ ճամփա:  
 Բայց շատ շքեղացեց, անտառի խորքում  
 Սարերը դարձյալ աչքիցըս ընկան,  
 Ու ըսկսեցի կորցրնել ճամփան:

XV

«Անզուսպ կատաղած երբեմքն իզուր  
 Պոկ էի տալի ես հուսակըտուր  
 Իրար խրճրմված բաղեղ ու մացառ.  
 Շուրջըս անտառ էր, անեզրը անտառ,  
 420 Հետզհետե խոր, խիտ ու ահռելի.  
 Եվ բազմաթյունով սև-սև աչքերի  
 Գիշերվա մութը հետևում էր ինձ  
 Ամեն մի թըփի, ճյուղի արանքից:  
 Գըլուխս սկսավ արդեն պըտըտել.  
 Ծառեր բարձրացա, ուզեցի դիտել,  
 Բայց մինչև անգամ երկնի եզերքում  
 Նույն ժանիքավոր անտառն էր ձգվում:  
 Այնժամ հուսահատ վայր ընկա կըրկին,  
 Հեկեկում էի, լալիս դառնագին  
 430 Ու հողի խոնավ կուրծքն էի կրծում.  
 Արտասուքներըս վայր էին հոսում  
 Նըրա երեսին տաք ցողի նըման...  
 Բայց հոժար չէի մարդոց օգնության.  
 Խորթ էին ընդմիշտ ինձ համար մարդիկ:  
 Եվ եթե հանկարծ կարճատև մի ճիշ  
 Ինձ դավաճաներ, գիտցի՛ր, ծերունի՛,  
 Լեզուս արմատից պետք է պոկեի:

XVI

Մանուկ ժամանակ, քո միտն է գալիս,  
 Ես շրգիտեի երբեք արտասովել,  
 440 Բայց այնտեղ չէի ամաչում լալիս:  
 Ո՞վ էր տեսնելու.— մըթին ծմակը,  
 Մին էլ երկնքում սահող լուսնյակը:  
 Լուսավորված նըրա լուսով,  
 Ծածկված մամուռվ ու ավազով,  
 Խիտ ծըմակով շրջափակված  
 Բացատն էր իմ առջև ընկած:  
 Հանկարծ այնտեղ անցավ մի սովեր,  
 Ու հըրեղեն երկու կայծեր  
 Պըսպղացին... ապա թե այն  
 450 Մութ թափուտից ինչ-որ գազան  
 Մի ոստյունով թռավ, պառկեց,  
 Ավազի հետ խաղալ սկսեց:  
 Այն անապատի մշտական տերը—  
 Հուժկու հովազն էր: Հում-հում ոսկորը  
 Կրծատում էր նա, ուրախ մըրմուռմ,  
 Երբեմն արյունոտ հայացքը հառում  
 Ու փաղարշաբար պոշը շարժելով՝  
 Նայում լրացած լուսնյակի վրան,  
 Ու փայլում էր մաղճ արծաթի նման:  
 460 Սպասում էի ես մի ճյուղ բռնած  
 Կովի վայրկենին. ու սիրտս հանկարծ  
 Բորբոքվեց արյան, կովի ծարավով...  
 Հա՛, բոլորովին այլ հանապարհով,  
 Այլ շավիղով էր ինձ սիրտը տանում,  
 Բայց համոզված եմ, որ մեր աշխարքում  
 Ես էլ կըլինեի քաշերի շարքում:

XVII

«Սպասում էի: Արդեն գիշերվա  
 Մըթնում թշնամու հոտն առել էր նա,  
 Ու մոնչյունը երկա՛ր, սըրտահեծ,

470 Որպես հառաչանք հանկարծ տարածվեց...  
 Ավազը թաթով կատաղած փորեց,  
 Մառս եղավ, հետո փորըսող արեց,  
 Ու մի ցատկելով սակավ էր մընում  
 Իսկույն ինձ մահի բաժին էր անում.  
 Բայց հանդիպեց իմ հարվածին:  
 Մանրը ճյուղը ինչպես կացին  
 Ճեղքեց նրրա ճակատը լայն...  
 Նա հառաչեց մարդու նման  
 Ու շուտ եկավ: Սակայն նորից,  
 480 Ի եկ նըրա խոր վերքերից  
 Հոսում էր հորդ արյունն այնքան...  
 Վառվեց կոխվն օրհասական:

### XVIII

«Ընկավ կրծքիս. բայց շտապով  
 նըրա կոկորդն ես կոխեցի,  
 Երեք անգամ պտտաեցի  
 Մհակ զենքըս... նա հառաչեց,  
 Էրեն բուր ուժն հավաքեց,  
 Ու մենք, ինչպես օձեր, կրպած,  
 Ընկերներից ամուր գրկված  
 490 Գըլորվեցինք, ու խավարում  
 հետնի վրա էինք կըռվում:  
 Այն վայրկենին ես էլ էի  
 Ինչպես հովազ շար, կատաղի.  
 Ես վառվում էի, ժնգժնգում իր պես.  
 Ես ինքս էլ ծնված լինեի կարծես  
 Հովազների ու գայլերի միջին,  
 Թարմ անտառների հ: վանու տակին:  
 Մարդկային բարբառն, այնպես էր թվում,  
 Մոռացել էի, և հենց իմ կրծքում  
 500 Այն սարսափելի կոհնչն էր ծնվել,  
 Կարծես թե լեզուս ծնընդից ի վեր  
 Ուրիշ ձայների անսովոր լիներ...

Բայց իմ թշնամին սկսավ թուլանալ,  
 Դես-դեն երեքալ ու ծանրը հեալ.  
 Վերջին անգամ հուպ տվավ ինձ,  
 Կանգնած աչքերն սպառնալից  
 Փայլկըտեցին, ապա հանգան  
 Փակված քրնով հավերժական:  
 Բայց հաղթանակող թշնամու առջև  
 510 Հըպարտ հանդիպեց նա իր օրհասին,  
 Ինչպես վայել է կռվում հերոսին...

### XIX

«Իմ կրծքի վրա տեսնո՞ւմ ես դեռ նոր  
 նըրա ճանկերի հետքերը խոր-խոր.  
 Չեն առողջացել նրանք տակավին,  
 Դեռ շեն ծածկըվել, բայց հողի տակին  
 նորից կըբացվեն ու կըթարմանան,  
 Ու կառողջացնի մահը հավիտյան...  
 Մոռացել էի ես այնժամ նրանց,  
 Ու իմ մնացած ուժը հավաքած  
 520 Գնում էի միշտ թավուտ անտառում...  
 Սակայն բախտիս հետ զուր էի կռվում—  
 նա ծաղրում էր ինձ ու արհամարհում:

### XX

«Գուրս եկա կրկին բերանն անտառի,  
 Օրը բացվեցավ, տըժգույն աստղերի  
 Բույլը շքացավ նըրա շողերում:  
 Ըսկսավ ծըխալ աուլը հեռվում  
 Ու մութ անտառը շըրշիլ արթնացած:  
 Ներքև հովիտում հողմի հետ հանկարծ  
 Մի ժըխոր անցավ... վրա նստեցի.  
 530 Բայց նա հողմի հետ լըռեց վերստին:  
 Իմ շորս կողմերը ես աչքըս ածի.  
 Կարծես այն տեղերն ինձ ծանոթ էին:

Սարսափելի էր այս միտքն ինձ համար,  
 Եվ շէի ուզում հավատալ երկար,  
 Թե կրկին բանտս եմ ես վերադարձել,  
 Թե այնքան օրեր զուր եմ մտածել,  
 Փայփայել գաղտնի միտքը նվիրական,  
 Տառապել, տանջվել, համբերել այնքան,  
 Ու բոլորն ինչո՞ւ.— որ այս հասակում,  
 540 Գեո նոր բաց արած աչքրս աշխարհում,  
 Թավ անտառներում շունչ ու կյանք առած  
 Ազատ աշխարհի, կյանքի սովորած,  
 Ինձ հետ միասին տանեմ գերեզման  
 Այրող կարոտը սուրբ հայրենիքիս,  
 Խիստ նախատինքը խաբված հույսերիս  
 Եվ ամոթանքը ձեր կարեկցություն...  
 Սակայն տակավին կասկածներով լի  
 Կարծում էի թե՛ երազում էի,  
 Երբ հանկարծակի խաղաղ օդի մեջ  
 550 Զանգի դողանքը հեռվից տարածվեց.  
 Այստեղ ինձ համար բոլորը պարսկեց...  
 Օ՛, ճանաչեցի իսկույն ես նրբան.  
 Շատ է փախցրել նա իմ մանկական  
 Կարոտ աչքերից վատ երազներն,  
 Թանկ տեսիլքները,— հարազատներիս,  
 Ազատությունը վայրի դաշտերի,  
 Եվ նժույզները թեթև, կատաղի,  
 Եվ կռիվները ժայռերի միջին,  
 Ուր հաղթում էի մենակ ամենքին...  
 560 Անլաց, ուժասպառ լըսում էի ես:  
 Սրտիս միջիցն էր դուրս գալի, ասես:  
 Կարծես թե մեկը անընդհատ զարկով  
 Զարկում էր կրծքիս ծանրը երկտիթով:  
 Եվ ես անորոշ այնժամ հասկացա,  
 Թե այսուհետև դեպի հայրենիք  
 Երբեք ինձ համար էլ չեմ մտա շրկա:

«Հա՛, արժանի եմ փիճակիս, հայրի՛կ.  
 Հըզոր նժույզը օտար դաշտերում  
 Իր վատ հեծվորին վայր է գլորում,  
 570 Հեռու աշխարհից դեպի հայրենիք  
 Գտնում է ուղիղ ու կրճատ ուղի...  
 Ի՞նչ եմ նրբա մոտ:— Զուր է սիրտըս լի  
 Այսքան թախիժ, տենչ ու փափագ.  
 Այս ջերմ է լոկ թույլ ու դատարկ,  
 Յընորքի մի խաղ, խելքի խանգարում:  
 Ինձ վրա բանտը իրեն կընիբը  
 Թողել է արդեն... Այսպես է լինում  
 Անլույս խավարում բուսած ծաղիկը.—  
 Քարերի միջին դալուկ ու մենակ,  
 580 Թերթիկները վազ, երկար ժամանակ  
 Մընաց արևի շողերին զրվարթ:  
 Օրեր անցկացան, ու բարի մի մարդ  
 Կարեկցությունից հանելով նրբան  
 Փոխեց մի պարտեզ, վարդին հարևան:  
 Ամենայն կողմից փարթամ ու շրթեղ  
 Կյանքի քաղցրություն չէր այնտեղ...  
 Բայց ի՞նչ դուրս եկավ. հենց օրը բացվեց,  
 Ու արշալույսի ցուլը տարածվեց—  
 Նրբա վառվռուն շողերն այրեցին  
 590 Խավարչտին բանտում սովորած ծաղկին...

«Ինձ ևս այնպես, ինչպես և նրբան  
 Այրում էր տապը անողորմ շրվան:  
 Իզուր էի ես ծածկել աշխատում  
 Հոգնած զըլուխս չորացած խոտում.  
 Փուշ պսակի պես նրա տերևը  
 Խճրճվում էր իմ ճակտիս վերևը,  
 Երկիրն երեսիս կրրակ էր շնչում,

Ու պրսպղալով կայծերը օդում  
 Պտըտվում էին, Ելնում էր շոգին  
 600 Սիպտակ ժայռերից: Աստծո աշխարքին  
 Կաշկանդեյ էր խուլ, գերեզմանական  
 Մանրը մըրափը հուսահատության:  
 Գեթ լորամարգին ճովողեր, խոսեր,  
 Կամ թե ճըպուռի ճըռոցը լավեր,  
 Կամ թե մանկական թոթովն առվակի...  
 Հենց օձն էր մենակ, որ աշնան մարգի  
 Զորացած խոտը դեռ-դեն շարժելով,  
 Դեղնավուն մեջքով փայլկըտին տալով՝  
 Փխրուն ավազը ակոսում, տողում,  
 610 Զգույշ սողում էր, քնքշալով խաղում,  
 Եռակի ոլրում, օղ շինում ագին  
 Ու մին էլ, հանկարծ, կարծես թե շանթած  
 Իրեն նետում էր, թռչում սրընթաց,  
 Թաքում հեռավոր թըփերի տակին...

XXIII

«Ու ողջ երկնքում մեղմ էր ու պայծառ:  
 Մըշուշի միջից հեռվում երկու սար  
 Սեին էին տալիս: Մեկի ետևից  
 Մեր մենաստանը ժանիքները գից  
 Իրեն պարըսպով երևում էր ինձ:  
 620 Կուրն ու Արագվան ներքև, հովիտում  
 Իրենց արծաթյա երիզով պատում  
 Թարմ կըղզիների սառոտների,  
 Ու լըվանալով շրշուն թըփերը,  
 Սուր հոսում էին ընկած իրարու...  
 Նրանք ինձանից շատ էին հեռու:  
 Ասի վեր կենամ—սակայն առսփռս  
 Ամեն բան արադ պտույտ էր գալիս.  
 Ասի թե կանչեմ— լեզուս ցամաքած...  
 Առանց հնչյուն էր, անշարժ, կարկամած...  
 630 Մեռնում էի ես: Տանջում էր մահվան

Զառանցանքը ինձ: Այնպես էր թփում,  
 Թե խոր գետի թաց հատակում  
 Պառկած էի— ու իմ բուրբ  
 Շուրջը մռայլ խորհրդավոր:  
 Եվ, հագեցնելով ծարավս անհագուրդ,  
 Զըրի հոսանքը, սառցի նրման ցուրտ,  
 Խոխոջ հանելով կուրծքս էր մտնում...  
 Ես միայն քնելուց էի վախենում—  
 Այնքան դյուրեկան, այնքան էր քաղցր...  
 640 Իսկ իմ վերևը, ինձանից բարձր,  
 Խըռնվում էին ալիքն ալիքին,  
 Արևը նրանց բյուրեղի միջից  
 Լուսնից էլ անուշ նշողում էր ինձ...  
 Ու խայտաճամուկ պարը ձկների  
 Մերթ-մերթ խաղում էր այն լուսի տակին:  
 Եվ հիշում եմ ես նրանցից մեկին.  
 Նա, ուրիշներից անուշ ավելի,  
 Փաղաքում էր ինձ մտերիմ սիրով.  
 Մեջքը ծածկըված ոսկյա թեփերով,  
 650 Խայտում էր գլխիս վերև, խլըրտում,  
 Ու խորն էր այնքան, քնքույշ ու տրտում  
 Հայացքը նրա կանաչ աչքերի...  
 Ու ես անկշտում հիացած էի:  
 Արծաթահնչյուն նրա ձայնիկը  
 Ինձ զարմանալի բաներ էր պատմում,  
 Նա մեկ լռում էր, մեկ նորից երգում:  
 Նա ասում էր.

«Իմ պատանի՛,

Այստեղ ինձ հետ կաց միասին.  
 660 Մառն ու հանգիստ միշտ կըլինի  
 Ազատ կյանքը ջրային:

«Իմ քույրերին ես կըկանչեմ,  
 Մենք, միասին պար բըռնած,  
 Կըխնդացնենք մռայլ դեմքըդ  
 Ու քո հոգին վաստակած:

«Քնի՛, մահիճդ ահա փափուկ  
Ու վերմակըդ թափանցիկ...  
Կանցնեն տարի՛ք, կանցնեն դարեր՛ը  
Երազներում գեղեցիկ:

670 «Օ՛, պատանի՛, սիրում եմ քեզ,  
Ահա իմ ողջ գաղտնիքը,  
Սիրո՞ւմ— ջրրի ալիքի պես,  
Սիրո՞ւմ— ինչպես իմ կյանքը...»

Ու երկա՛ր, երկար ես լսում էի.  
Կարծես թե հնչուն ալիքը ջրրի  
Խառնում էր իրեն մրմունջը խորին  
էն ոսկեթեփուկ ձրկան բառերին:  
Այստեղ ինձ կորցրի: Աչքերըս մթնեց  
Զառանցանքն հատավ ու տեղի տվեց  
680 Տկարությանը վաստակած մարմնիս...

#### XXIV

«Այսպես գտան ինձ ու վերցրին...  
Մնացածն արդեն հայտնի է քեզ:  
Ես վերջացրի: Այժմը կուզես  
Մի՛ հավատար, այդ շեմ հարցնում,  
Սի բան է միայն ինձ տխրեցնում,  
Իր իմ դիակն այստեղ—հեռու,  
Իմ մայր հողում չի փրտելու,  
Ու ցավերիս վեպը տըրտում  
Չեն պատմելու խուլ խրճիթում,  
690 Որ մեկն ուշքով լսի ու լա  
Իմ տխրալի անվան վըրա:

#### XXV

«Մնաս բարյավ, հա՛յր... քո ձեռքը տուր ինձ.  
Տեսնո՞ւմ ես, իմը ինչպես այրվում է...  
Այս բոցն, իմանա՛ս, մանուկ օրերից  
Իմ կրծքի տակին ծածկված մընում է.

Բայց հիմա արդեն էլ սնունդ չըկա,  
Ու իրեն բանտը ողջ լափել է նա:  
Վերադառնում է նրա մոտ կրկին,  
Որ օրինավոր կարգով ամենքին  
700 Տալիս է տանջանք ու հանգստություն...  
Բայց ի՞նչ եմ անում. թեկուզ դրախտում,  
Ամպերից վերև—էն սուրբ շղխարքում  
Իմ հոգին իրեն հանգիստ ունենար...  
Ա՛խ, միայն մի քանի վայրկենի համար,  
Մոռալ, վիթխարի էն ժայռերի մեջ,  
Ուր անց եմ կացրել օրերս մանկության,  
Կըտայի ես ողջ—դրախտ, հավիտյան...

#### XXVI

«Երբոր, ծերունի՛, մեռնելու լինեմ,  
Ու գիտեմ— երկար չըպիտի ապրեմ,—  
710 Պատվեր տուր այնժամ դու ինձ տանելու  
Մեր կանաչ այգին, այնտեղ, ուր երկու  
Ճերմակ հակակի թփեր են ծաղկում...  
Իրան էնքան խիտ է նրանց արանքում,  
Ու անուշաբույր թարմ օդը այնպե՛ս,  
Այնպե՛ս թափանցիկ, այնպես ոսկեշող  
Տերևն արևի տակին խաղացող...  
Դու հըրամայի ինձ այնտեղ տանեն:  
Պայծառ ցերեկի փայլով ոսկեղեն  
Վերջին անգամը կարբենամ գեթ ես:  
720 Կովկասն այնտեղից կերևա նույնպես:  
Կարելի է հով գեփյուռների հետ  
Ուղարկի նա ինձ վերջին հըրածեշտ  
Իր բարձունքներից հզոր, աննըվաճ...  
Ու իմ ականջին, օրհասից առաջ  
Կըհնչի դարձյալ հարազատ մի ձեն:  
Ու կըմտածեմ, թե ընկերըս է էն,  
Կամ թե եղբայրս վրաս կորացած՝

Զգույշ ձեռքերով դեմքիցս կամաց  
Մահվան սառնամած քրտինքն է սրբում  
730 Ու մեր տան մասին կիսաձայն երգում...  
Ու ես այս մըտքով խաղաղ կըհանգչեմ,  
էլ չեմ գանգատվի ոչ-ոքի ընդդեմ...»:

## Հ. ԼՈՆԳՖԵԼԼՈ

### ՀԱՅԱՎԱԹԻ ԵՐԳԸ

#### ՆԱԽԵՐԳԱՆՔ

Եթե հարցնեք՝ ո՞րտեղից են  
էս լեզենդներն ու զրույցներն  
Անտառների անուշ բույրով,  
Հովիտների շաղ ու մուժով,  
Վիզվամների ոլոր ծովառով,  
Մեծ գետերի սահանքներով,  
Նրանց անվերջ որոտումով  
Ու վայրենի արձագանքով,  
Ինչպես ամպրոպ սարերի մեջ.  
10 Ծս ձեզ կասեմ, ձեզ կըպատմեմ:

Անտառներից, հովիտներից,  
Նորդլանդիայի մեծ լրճերից,  
Օջիբվայի խոր աշխարհից,  
Դակոտների վայրի երկրից,  
Ճահիճներից, ճախիններից,  
Ուր շուհ-շուհ-գան՝ արագիլը  
Կեր է փնտրում ճըլկուտներում,  
Կրկնում եմ ես էս զրույցներն  
Անուշ երգիչ ու երաժիշտ  
20 Նավադահի պարզ երգերով:



Եթե հարցնեք՝ ո՞ր է զբտել  
էս երգերը Նավադահան,  
էսքան վայրի ու քրմահաճ.  
Ես ձեզ կասեմ, ձեզ կըպատմեմ.  
— Թռչունների բըների մեջ,  
Ջրըռչունների խոռոչներում,  
Բիզոնների արտաներում,  
Արծիվների բընափայրում.

30 Ծահիճներում, ճախիններում,  
Մելամաղձիկ թափառելով,  
Երգում էին նըրա համար  
Մանգը՝ բաղը, սագը՝ վավան,  
Եվ շուհ-շուհ-գան՝ արագիլը,  
Եվ կըտցարը՝ շիթովեյկը,  
Վայրի հավը՝ մուշկոդազան:

Եթե դարձյալ հարցմունք անեք՝  
Ո՞վ է հապա Նավադահան,  
Պատմի դու մեզ նըրա մասին.  
Ձեր հարցմունքին էս խոսքերով  
40 Կըտամ իսկույն էս պատասխան.  
— Թավազենթի պերճ հովիտում,  
Ճոխ մարգերի լըռության մեջ,  
Արծաթափայլ ջըրերի մոտ  
Ապրում էր վաղ Նավադահան:

Հընդիկ գյուղի շուրջը բուրբ  
Փըռվում էին հանդեր, արտեր,  
Ու կանգնած էր հին ծրմակը,  
Հին ծրմակը սոճիների,  
Ամռան՝ կանաչ, սոսափելով,  
50 Ձմռան՝ փայլուն, ճերմակ ձյունով,  
Կիբը երգով, հառաչանքով:

Հովիտն ի վար հոսում էին  
էն ջըրերը արծաթափայլ,

Գարնանը՝ խիտ եղեգնուտով,  
Ամռանն՝ երկար բարդու շարքով,  
Աշնանը՝ գորշ մեգի տակին,  
Ձըմռան՝ ճերմակ ափերի մեջ:  
Ու ապրում էր երգիչն էնտեղ,  
Թավազենթի պերճ հովիտում,  
60 Ճոխ մարգերի լըռության մեջ:

էնտեղ երգեց նա էս երգը,  
Անուշ երգը Հայավաթի,  
Թե ինչպես նա ծնվեց, ապրեց,  
Ու ինչպես էր ճգնում, տանջվում,  
Քարոզում էր ու համոզում,  
Որ երջանիկ դարձնի մարդին,  
Որ բարձրացնի ժողովրդին:

Ով սիրում է բընությունը  
Ու մարգերում լույսն արևի,  
70 Սիրում ստվերն անտառների,  
Սիրում հովը տերևներում,  
Եվ անձրևը, և փոթորիկ,  
Եվ սահանքը մեծ գետերի,  
Եվ կայծակը սարերի մեջ,  
Թավուտներում սոճիների,  
Նա կըլսի էս զըրույցը,  
Չըքնաղ երգը Հայավաթի:

Ով սիրում է ժողովրդի  
Լեզենդներն ու բալլադները,  
80 Որոնք, ինչպես հեռու ձայներ,  
Կանչում են, որ ականջ դընենք,  
Ու խոսում են պարզ, մանկաբար,  
Որ հազիվ է մարդ որոշում՝  
Ե՞րբ է արդյոք թե պատմություն,  
Ականջ կանի նա հաճույթով  
էս հնդկական հին զըրույցին,  
Խաղաղ երգին Հայավաթի:

Նա, ում սիրտը թարմ է ու պարզ,  
Հավատում է աստծուն, բնության,  
90 Հավատում է, որ հավիտյան  
Մարդկային է սիրտը մարդու.  
Որ վայրենի լանջի տակ էլ  
Մի անմեկին կյանքի համար  
Կան բաղձանքներ ու ձգտումներ.  
Որ խավարում խարխափելիս,  
Թույլ ձեռքերը անօղակական,  
Հանդիպելով աստծո աջին,  
Կյանք են առնում ու զորանում.  
Նա կրկարդա էս զըրույցը,  
100 էս պարզ երգը Հայավաթի.

Ով երբեմբն իր շըրջակա  
Լուռ հանդերում թափառելիս  
Մի մոռացված շիրձի առջև  
Կանգ է առնում, միտք է անում  
Նրա կիսեղծ զըրի վըրա,  
Որ գրված է պարզ, անարվեստ,  
Սակայն որի ամեն խոսքը  
Լիքն է կյանքի, հանդերձյալի  
Անվերջ հույսով ու թախիծով,  
110 Նա կրկանգնի ու կրկարդա  
Խոր հնության արձանագիր  
էս հին երգը Հայավաթի:

I

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՉԻՐՈՒՄԸ

Ու մեծ դաշտի լեռանց վըրա,  
Կարմիր ժայռի բարձունքներին,  
Նա, հըզորը, կյանքի տերը՝  
Գիտչի-Մանիտոն իջնելով,

Կանգնեց շիտակ և ազգերին  
Ու ցեղերին կանչեց ի մի:

Նրա ոտքի տեղից բըխեց,  
120 Հոսեց մի գետ անդունդն ի վար,  
Առավոտյան շողերի մեջ  
Շողշողալով ու ծոր տալով  
էն Իշկուդա-աստղի նըման:  
Ու խոնարհեց Ոգին երկրի,  
Աջով մարգում նրա համար  
Գծեց ոլոր մի ճանապարհ,  
— Գնա՛, ասավ, էս ընթացքով:

Ասլա պոկեց իրեն ձեռքով  
Քարահանքից մի կտոր քար,  
130 Շինեց կարմիր շիրխի գլուխ  
Ու զարդարեց նկարներով:  
Գետի ափից եղեգն առավ  
Իր մութ կանաչ տերևներով  
Ու կոթ շինեց շիրխի համար.  
Լըցրեց ուռու շոր կեղևով,  
Կարմիր ուռու շոր կեղևով:  
Շընչեց մոտիկ մեծ անտառին,  
Ու ճյուղերը տըվավ իրար,  
Կըրակ հանեց, վառեց շիրխին,  
140 Ու կանգնելով էն սարերին  
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,  
Ծըխեց իրեն գալյումետը,  
Իբրև նշան ողջ ազգերին:

Ու ծուխն ելավ կամաց-կամաց  
Առավոտյան խաղաղ օդում,  
Առաջ ինչպես մըթին մի գիծ,  
Հետո կապույտ, խիտ գուրջի,  
Ասլա ճերմակ ամպի նըման  
Բարձրանալով, բարձրանալով,

150 Մինչև հասավ վեր երկընթին,  
Մինչև զըրվեց վեր երկըՋքում  
Ու փաթաթեց շուրջն ամեն բան:

Թավազենթի դաշտավայրից,  
Վառմինգի հովիտներից,  
Տուսկալուզի ծըմակներից,  
Հեռո՛ւ, հեռո՛ւ ժեռ սարերից,  
Նորդլանդիայի լըճափերից  
Ազգերն ամեն նըկատեցին,  
Տեսան հեռվում բարձրանում է

160 հաղաղության շիրխի ծուխը:

Ու ազգերի մարգարեններն  
Ասին՝ տեսե՛ք, էն Պուկփանան  
հաղաղության շիրխի ծուխն է,  
Որ թեքվում է ուռենու պես,  
Շարժվում կանչող ձեռքի նըման:  
Մե՛ծ, հեռավոր էն նըշանով  
Գիտլի-Մանիտոն՝ հըզորը,  
Կոչ է անում մարտիկներին  
Ողջ ազգերի ու ցեղերի:

170 Գետերն ի վեր հովիտներով  
Եկա՛ն, եկա՛ն, հավաքվեցին  
Մարտիկները ողջ ազգերի.  
Դելավարներն ու մոհոկները,  
Չոտկոսներն ու կամանչները,  
Շոշոններն ու սեվոտները,  
Օմոհոններն ու պոները,  
Մանդաններն ու դակոտները,  
Հուրոներն ու օջիբվները:  
Ճամփա ելան: ողջ միասին  
180 հաղաղության շիրխի ծըխի՝  
Գալլումետի ծըխի վըրս



«Վերնատուն» խմբակի անդամները գրական համախորհրդի և թուրքական բնտանիքի անդամների հետ (1902)

Երկաթի մի կտու հարիւր լրգրական,  
 Աւ շինեց Սասանայ քաղքի նախնայանս

VII

Արևը բացուեց աշխարհի վրայ,  
 Յընձուգը գարկեց Սասանայ սարերին,  
 Սարերը ելաւ Դաւիթը ահա  
 Իրեն երկաթի մահալը ձեռինս

— Է՛կ չէ՛յ գողեր ու գազաններ,  
 Զարգեմ, քրչեմ սարերն ի վերս  
 Որ կանչեց, որրա ձէնից ահաւոր  
 Իրզորդ-գրմիր մրցն ընկաւ սարուձոր  
 Աւ էն ամպրոպի ձէնը չէնց առած՝  
 Վայրի գազաններ ելան գարձուրած,  
 Իրենց որջերից, բըներից փախան,  
 Գարձար ընկան, գաղարգիւն եղան  
 Դաւիթն էլ ընկաւ նրբանց ետեից,  
 Որին մի սարից, որին մի ձորից—  
 Դալլ, ինձ, առիւծ, արջ, վաղըր բրունեց,  
 Հաւաքեց, բերաւ իր նախրին խառնեց,  
 Իրիկան քրչեց սղջ Սասանայ քաղաք  
 Ոռնոց, մրտընչին, ազմուկ, աղաղակ...  
 Գաղբրցիկը յանկարծ մին էլ ի՛նչ տեսան.—  
 Փոչին ամոզի պէս բարձրանում է վեր,  
 Աւ քաղքի վրայ անհամար գազան  
 Դալլս են հըրէս բացա՛ք երախներս,  
 Սըրտանաք եղած,  
 Դորձները թողած,  
 Փախանս լըցեցին տուն, ժամ ու խանութ,  
 Ամուր փակեցին դուռն ու յուսամուտ  
 Եկաւ Դաւիթը, կանգնեց մէյդանում.  
 — Վահ, էս մարդիկը ի՛նչ վաղ են քրնում:  
 Է՛կ կովատեր, չէ՛յ գոմէատեր,  
 Ելէք, շուտով բացէք դուռներ,

«Սասունցի Դավիթը» պոեմի առաջին հրատարակութեան («Մուրճ», 1903) մի էջը՝ հեղինակի ուղղումներով



«Սասունցի Դավիթը» պոեմի 1904 թ. հրատարակութեան շապիկը

Ամսապատկեր

Բ. Լուսին

1

Վերջին տարիները անհամար և  
անբարեբաղի արվածքներ,  
խնայող ցուցիկ, և արտա օրվա  
բազմից ցուցիկ անհամար:

Չէր կարող անցնել 62 և  
մեկ թիվ չարի չարի:

Այս քաղաքային շրջանները Եստ  
հարս քար, և ցուցիկ:

Կարծիք արտա օրվա չէր  
անհամար ցուցիկ:

Երբեք, չարի, արտա օրվա  
չարս քարի և ցուցիկ:

Մեկ ևս չարի, և ցուցիկ:

Երբեք ևս չարի և ցուցիկ:

Այս ևս արտա օրվա և ցուցիկ,  
անհամար և ցուցիկ:

1) ցուցիկ և արտա օրվա և ցուցիկ:



Հովհ. Քոմսյանի Բժժիկ բերդի ավերակները գիտելիս (1902)

Մր Քիմիայի  
Բնագիտական Արխիվի

ՅՈՒՆԵՍԿՈ

Լի Ապֆելդբերգ

ԹՄԿԱԲԵՐԴԻ

ԱՌՈՒՄԸ

5. IV. 1916.

«Թմկարերգի առումը» պոեմի 1909 թ. հրատարակության անվանաթերթը՝ Հովհ. Քումանյանի և Ալ. Սպենդիարյանի ընծայագրով (երգչուհի Բենիա Տեր-Մինասյանին)

Քարտ կտես

Գրություն Չ. Սարգսյանի / Քանկաբանության համալսարան

Երևան, 1916

Գրություն

Նշված առումը, ինչ որ նշանակում էր, որ առումը չէր նշանակում, այնպես որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր =

Գրություն նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր =

Նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր, որ նշանակում էր =

«Հին կոիվը» («Առնի կոիվը») պոեմի նախերգանքներից մեկի ինքնագիրը



Հայաստանի Բնիկներ.

1. Հայաստանի Բնիկներ. Ընտրված անդամներ  
Ֆրանսիա.
2. Հայաստանի Բնիկներ. Ֆրանսիա.  
Կոն-Բուսույզյան, Խոսրոս Խոսրոսյան (Վանաձոր)
3. Հայ. Բնիկներ. Ֆրանսիա.  
Կար Կոչարյան, Աստվածուհի Մարտիրոսյան
4. Հայ. Բնիկներ. Ֆրանսիա.  
Կարապետ, Արամ Խոսրոսյան
5. Հայ. Բնիկներ. Ֆրանսիա.  
Իսահակյան Ֆրեդ, Հայաստանի անկախության համար  
հայաստանցի լուսն.
6. Հայաստ. Բնիկներ. Ֆրանսիա.  
Նուրիյան Կար. Գրեգորյան.
7. Հայաստանի Բնիկներ. Ֆրանսիա.  
Սեդրակյան, Խոսրոսյան.
8. Հայաստանի Ընտրված անդամներ. Ֆրանսիա.  
Ընտրված անդամներ. Վր. Չուբուկյան.
9. Հայաստանի Բնիկներ.  
Վան. Գ. Խոսրոսյան, Կոնստանդնուպոլիս 221.



Հովհաննես Թումանյան և Արշակ Չոպանյան




«Արիւն»

մանուկէն

Արիւն կորսաւ իրաւս,  
Տեսնուցաւ մարմնաւս,  
Եւ ի մարմն կարծաւորս  
Զբաւ թաւաւ ի սրտաւս =  
Իսկ զայն և զայն: Ասկանաւ  
Իսկ զայն թաւաւս,  
Եւ զայն զից զայն թաւաւս  
Եւ զայն թաւաւս զից զից:

Զայն կորսաւ թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս,  
Իսկ զայն թաւաւս և թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս =  
Իսկ զայն թաւաւս թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս,  
Իսկ զայն թաւաւս թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս:

Ասկանաւ թաւաւս  
Իսկ զայն թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս =  
Իսկ զայն թաւաւս թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս



Վ. Ա. Ժուլիպի «Արիւն» պոեմի թարգմանութեան ինքնագիրը

20.8.17 Հ.Բ.Ս.Գ.Բ. ԵՐԳԸ 7)

(ԲԱՅՐՈՆԻՑ)

Մտաւ բարեւ կարգաւ հեռում  
Արիւն կորսաւ թաւաւս,  
Զայն կորսաւ թաւաւս և, ճակ դոտաւ,  
Զայն կորսաւ թաւաւս

Երևն ահա շտապում է  
Մտի թաւաւս հանգիւս...  
Զայն կորսաւ թաւաւս,  
Մտաւ բարեւ նաև դոտ

Ասկանաւ թաւաւս և նա կրկին  
Զայն կորսաւ թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս թաւաւս  
Զայն կորսաւ թաւաւս

Եղբայն թաւաւս առաջացած,  
Օճազ հանգած—անկրակի  
Պատերիս մէջ խոտ է լցած,  
Զուրա ունում գրան տակ

\*) Բայրոնի 1809 թ.ին իւր հարկերի Ենդլայնից վշտացած հեռացաւ  
գէղի Երևելք, և այս հանա պարտադրութեան ժամանակ գրեց «Զայն կորսաւ  
թաւաւս: Մեր թարգմանած հատածը Զայն կորսաւ թաւաւս կրկին է:  
8\*

Ջ. Գ. Բայրոնի «Զայն կորսաւ թաւաւս կրկին» թարգմանութեանը տպագրուած «Հորիզոն», գրական հանդեսում (1894)

Հրատ. Փիլիպպոս Վարդապետեանի

Բ Ա Յ Բ Ը Ն

**ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱԴՐՐԸ**

Թ ա ղ գ մ.

Յովնաննէս Թումանեանց

**Թ Ի Ֆ Լ Ի Զ**

Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Կոնստ. Ս. Մարտիրոսեանցի.

1896

Ղ. Գ. Բալթոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմի առանձին հրատարակութեան շապիկը

Հրատ. Փիլիպպոս Վարդապետեանի

Լ Ե Ր Մ Ո Ն Տ Ո Վ

**Մ Ծ Ի Բ Ի Ը**

Թ ա ղ գ մ.

Յովնաննէս Թումանեանց

**Թ Ի Ֆ Լ Ի Զ**

Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Կոնստ. Ս. Մարտիրոսեանցի.  
Օրբելիանովսկայա շ. № 1 | 2.

1896

Մ. Յու. Լեւոնտովի «Մծիրի» պոեմի առանձին հրատարակութեան շապիկը



Երկիր տրվի՝ որսի համար,  
Գետեր տրվի՝ ձուկ բրնձեղու,  
Տրվի ձեզ արջ, տրվի բիզոն,  
Տրվի եղնիկ ու եղջերու,  
Տրվի ըսկյուռ, տրվի ջրըշուռ  
Ու ճահիճներ լի հավքերով:

220 Ինչո՞ւ գոհ չեք դուք տակավին,  
Ինչո՞ւ եք դուք որսում իրար:

Հոգնել եմ ես ձեր վեճերից,  
Ձեր արյունոտ կրոնիվներից,  
Հոգնել եմ ձեր՝ սպանության  
Ու վըրեժի աղոթքներից:  
Ձեր ուժն ամբողջ սիրո մեջ է,  
Ձեր կորուստը՝ կրոնիվների.  
Արդ ապրեցեք այսուհետև  
Խաղաղ, սիրով, եղբոր նըման:

230 Ես կուղարկեմ մի մարգարե,  
Փրկիչ համայն ձեր ազգերի:  
Նա կաշխատի, կապրի ձեզ հետ,  
Կառաջնորդի, կըբարոզի:  
Եթե լըսեք նըրա խոսքին,  
Կըբազմանաք, կերջանկանաք,  
Իսկ թե թողնեք անուշադիր,  
Կընըվազեք ու կըկորչեք:

Մըտեք այժմ էս գետի մեջ  
Ու լըվացեք ձեր դեմքերից  
240 Կըռվի վայրի նըկարները  
Ու արյունը ձեր մատների:  
Թաղեք հողում ձե՛ր զենքերը,  
Առեք կարմիր քարը հանքից  
Ու շինեցեք՝ արմիր բառ՝  
Խաղաղության շիրիսի գլուխ.  
Եղեզն առեք եղեգնուտից,

Ջարդարեցեք փետուրներով,  
Ու ծըխեցեք ի միասին  
Խաղաղության շիրիսները,  
250 Ու ապրեցեք այսուհետև  
Խաղաղ, սիրով, եղբոր նըման:

Ու ձըգեցին մարտիկները  
Շապիկները այժեմների,  
Ջըրահները ռազմական,  
Մըտան գետը արագահոս,  
Ու լըվացին երեսներից  
Կովի վայրի զարդերն ամեն:  
Տիրոջ ոտքի տեղից հոսում.  
Ջուրը վերից գալիս էր շինչ,  
260 Իսկ նրանցից ներքև պղտոր,  
Գնում էր մութն, սպականված,  
Արյունախառն ու կարմրագույն:

Ու դուրս եկան մարտիկները  
Գետից հըստակ ու մաքըրված,  
Ու թաղեցին գետի ափին  
Իրենց զենքերը ռազմական:  
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,  
Արարիչը ու Մեծ Ոգին  
Այն ժամանակ սիրով ժըպտաց  
270 Անօգնական զավակներին:

Ու մարտիկներն ամենքը լուռ  
Առան քարը մեծ քարհանքից,  
Եվ հըկեցին ու շինեցին  
Զիրուխները խաղաղության:  
Ծղեգ՝ առան գետի ափից,  
Ջարդարեցին փետուրներով,  
Ապա դարձավ ամեն մեկը  
Իրեն տունը, հայրենիքը,  
Մինչդեռ Ոգին, կյանքի տերը,

**280** Վերանալով ամպերի մեջ,  
Սուզվեց երկնի բաց դռներում,  
Խաղաղության շիրիխ ծրխի՝  
Պուկվանայի ամպով պատած,  
Անհետացավ նրբանց աչքից:

ՍՎՅԱՏԱԳՈՐԸ

(Ռուսական առասպել)

էն սեպ սարերում, էն սուրբ սարերում  
Նըստած էր հըսկան—Սվյատագորբ մեծ,  
Չէր գալի ոուսաց հողը սրբբալան,  
Չէր կարում տանի գետինը նըրան:  
Ուզեց մի անգամ սիրտը հըսկաչի  
Ժուռ գա մի ազատ լայնարձակ դաշտում.  
Թամբեց նըժույզը իր հըսկայական,  
Ժեռուտ կողմերով ելավ ճանապարհ:  
Ճըխաց լանջի տակ սիրտը այրական,  
10 Խաղս առավ ուժը երակների մեջ,  
Ու դուրս է հորդում ասես խաղալով:  
Նեղվում է սակայն հըսկան էն ուժից,  
Նեղվում է ինչպես մի ծանրը բեռից,  
Ուրիշն էլ չըկա, որ հետը շփվի:  
Ու ձգում է վեր մըկունդն իր պողպատ,  
Ամպերից վերև—աչքից կորցընում,  
Բըռնում է կըրկին ճերմակ ձեռներով.  
Ու խոսում է նա ինքնիրեն էսպես.  
— Եթե գրտնեի ես ուժը հողի—  
20 Օղ կամբացնեի երկնի կամարից,  
Օղից երկաթի շղթա կանեի.  
Ցած կըբաշեի երկինքը նե՛րև,  
Երկիրն էլ տեղից ես շուռ կըտայի,

Ողջ կթխառնեի— երկինք ու երկիր:

Էստեղ նկատեց, որ դուրան դաշտում  
Գրնում է հետի մի այլ աժդահա,  
Ու էն աժդահի ուսովը ձրգաժ  
Կա ճամփորդական մի փոքրիկ խուրջին:  
Եթե քրշում է նըժույզն ամեհի,

30 Բաց թողնում ձիու թափովը ամբողջ,  
Գրնում է հեռու ճամփորդ աժդահան  
Ու չի հասնում ձին իր հրակայական:  
Թե մեղմ է քրշում ու դանդաղ քայլքով,  
Իր տեղն է հրական, չի շարժվում ասես:  
Ու գոռաց էսպես Սվյատագորը մեծ.

— Հե՛յ դու անցավոր, անծանոթ կրտրիձ,  
Կա՛ց, կանգնի տեղըդ մի առժամանակ:  
Թե քրշում եմ ես նըժույզս ամեհի,  
Բաց թողնում ձիու թափովն իր ամբողջ,

40 Գրնում ես հեռու քո ճանապարհին  
Ու չի հասնում ձին իմ հրակայական:  
Թե մեղմ եմ քրշում ու դանդաղ քայլքով,  
Քո տեղն ես դու միշտ, չես շարժվում ասես:  
Կանգնեց իր ճամփին անցվորն անծանոթ,  
Վեր դրրավ գետնին ուժեղ ուսերից  
Իր ճամփորդական խուրջինը փոքրիկ:  
Ու մոտ քշեց ձին Սվյատագորը մեծ.  
— Ասա՛ մի տեսնեմ, դու քաջ տըղամարդ,  
Ի՞նչ է քո բեռը խուրջինիդ միջին:

50 Ու ճամփորդն էսպես տըվավ պատասխան.  
— Ո՛վ դու փառապանձ հրակա դյուցազուն,  
Փորձ փորձի մի առ իմ բեռը շընչին,  
Վեր առ, թե կարաս, հրզոր ուսերիդ  
Ու էնպես քրշի դաշտը լայնարձակ:  
Պատասխան տվավ անցորդն անծանոթ,  
Ու ձիուց իջավ Սվյատագորը մեծ:  
Առաջ մի մատով ուզեց վեր քաշի—  
Չըշարժվեց տեղից խուրջինն էն փոքրիկ:  
Ապա մի ձեռքով բռնեց աժդահի—

60 Կըրկին շըշարժվեց խուրջինն իր տեղից:  
Ապա թե հասավ ողջ ուժովն իր մեծ,  
Դեմ տըվավ ճերմակ կուրծքը հրակայի  
Ուսի էն շընչին, փոքրիկ խուրջինին,  
Բըռնեց ահա՜որ ուժովն իր ամբողջ—  
Մինչև ծընկնեբըր զընաց հողի մեջ,  
Արյունը կաթեց ճերմակ երեսից,  
Իր տեղն է սակայն խուրջինը կըրկին:  
Ու էսպես խոսեց հրական զարմացած.  
— Շատ եմ ման եկել աշխարքումը ես—

70 Էսպես հըրաշքի դեռ չեմ հանդիպել,  
Էսպես մի տեսիլք չեմ տեսել երբեք,  
Չեմ տեսել էս բեռն իմ ծնած օրից.  
Ուժ ունիմ էսքան—ուժըս չի պատում.  
Ի՞նչ կա քո փոքրիկ խուրջինի միջին,  
Եվ ո՞վ ես ինքըդ և կամ ո՞ր տեղից,  
Պատասխան տուր ինձ, անծանոթ հրակա:  
— Իմ փոքրիկ խուրջնում ուժն է մայր-հողի,  
Իսկ ես Միկուլան Սելյանինովիչ:  
Պատասխան տըվավ անծանոթ հրական:

ՄՈՒՐՈՄՅԻ ԻԼԻԱՆ ԿՈՎՈՒՄ Է  
ՎԼԱԴԻՄԻՐ ԻՇՏԱՆԻ ՀԵՏ

(Իռուսական БЫЛИНА)

Ըստ Ավեճարիուսի

- Գրնում է ծերուկն արձակ դաշտերում,  
Գրնում է ծերուկն երկար ժամանակ:  
Մաշվել են հագի շորերը նախշուն,  
Հատել է արդեն իր գանձը ոսկի,  
Ու Իլիան ինքնին խոսում է էսպես.  
— Եղել եմ հիմի ամբողջ կիտվայում,  
Եղել եմ հիմի ողջ օրդաներում,  
Մենակ Կիևում չեմ եղել վաղուց:  
Կիև գրնամ մի, գրնամ մի տեսնեմ՝  
10 Ինչ է կատարվում էնտեղ—Կիևում:  
Հասնում է Իլիան Կիև քաղաքը մայր.  
Քեֆ-խնջույք ունի իշխան Վլադիմիրը.  
Սեղան են բազմած հրզոր հրսկաներ  
Ու պայազատներ մինչև երեսուն:  
Մըտնում է ծերուկն ապարանքը ներս,  
Կանգնում է, կենում սրրահի շեմքին,  
Խաչ քաշում դեմքին, ինչպես օրենքն է,  
Ողջույն է տալի ընդունված կարգով  
Արև իշխանին ու տիկնոջն էլ ջոկ:  
20 — Ապրած կենաս, տեր, իշխան Վլադիմիր,  
Հաց ու ջուր կըտա՞ս եկվոր քաջերին:

Քեզ ուղիդ սրբառով եկել եմ ծառա.  
Չեմ վախում դաշտում հազար թաթարից,  
Չեմ վախում, թեկուզ մյուս հազարն էլ գա,  
Չեմ փախչիլ, թող գա երրորդ հազարն էլ.  
Ու օգնության էլ հարկավոր չեն ինձ  
Երեսուն ագռավն իրենց ճուտերով:

- Ով էր— շիմացավ իշխանը հյուրին:  
— Ուսկի՞ց ես, ո՞վ քաջ, ի՞նչ ազգ ու տակից.  
30 Քեզ ի՞նչ անունով կանչենք, մեծառենք,  
Կամ ի՞նչ հայրական կոչումով հարգենք:  
— Նիկիտան եմ ես Զառլեշանին:  
— Ո՞վ, դու Նիկիտա Զառլեշանին,  
Ե՛կ, նրատի, մեզ հետ հաց անուշ առա,  
Մի տեղ կա դատարկ էնտեղ, ներբևում,  
Սեղանի ծերին, բաղմոցի վերջին.  
Բրնած են ուրիշ տեղերը բոլոր:  
Ու, կըռնեն ընկած, մարդիկն իշխանի  
Տարան Իլիային ծերը ներքևի,  
40 Նրատեցրին էնտեղ՝ ներքևի ծերին:  
Ու էսպես խոսեց Իլիան ներքևից.  
— Ով դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,  
Վայել չի ուժին, ոչ աստիճանին  
Տեղն ու պատիվը, որ տալիս ես դու.  
Ինքըդ նրատում ես ագռավների հետ,  
Ինձ տեղ ես տալի ճուտերի կողքի՞ն:  
Ասա՛, կամեցավ տեղը դըրբստի—  
Զարդոտեց շուրջը կաղնի բազմոցներ,  
Ոլորեց բիրերն ամբողջ երկաթի,  
50 Սեղմեց հյուրերին անկյունը վերին:  
Դուր չեկավ էս բանն Արև իշխանին.  
Տեղիցը առույգ ելավ նա ոտի,  
Մըթնեց աշունքվա գիշերի նըման,  
Մըռնչաց, ինչպես կատաղի գազան:  
— Ի՛նչպես, Նիկիտա Զառլեշանին,  
Խառնես տեղերը դու իմ սահմանա՛ծ,  
Մըռես բիրերը համայն երկաթի՞...

Մեն մի հրակայի արանքումը ես  
Բիրեր եմ զարկել ամուր երկաթի,  
60 Որ խընչույքներին, որքան էլ խըմեն,  
Որքան էլ հարբեն, շրգիպշեն իրար:  
Հե՛յ դուք. մեծագոր ըսուս հրականեր,  
Լաված է որ ձեզ, էդ հրականերիդ  
Ազոավներ կանչի մինը ու ճուտեր:  
Դուքս եկեք ձեզնից ետեք լավերդ:  
Դուքս շարտեցեք — սրբահից Կ՛ողոց.  
Դուքս եկան ընտիս երկք հըս՛աներ,  
Սկսան նիկիտին քաշի, քաշքըշի,  
Սկսան նիկիտին հըրել, հո՛ւրջուկել.  
70 Կանգնած է նիկիտն ու ժած չի գալի,  
Ձի շարժվում նույնիսկ գըլխարկը գըլխին:  
— Թե կուզես, իշխան, դու զըվարճանաս,  
Թող գան սըրանց հետ երեք հըսկա էլ:  
Դուքս եկան ուրիշ երեք հըսկա էլ,  
Սկսան նիկիտին քաշել, քաշքըշել,  
Սկսան նիկիտին հըրել, հո՛ւրջուկել.  
Կանգնած է նիկիտն ու ժած չի գալի,  
Ձի շարժվում նույնիսկ գըլխարկը գըլխին:  
— Թե կուզես, իշխան, դու զըվարճանաս,  
80 Թող դուքս գան գոնե երեք հըսկա էլ:  
Դուքս եկան երրորդ երեք հըսկան էլ,  
Բան շըկարացին անեն նիկիտին:  
Ու էսպես խոսեց նիկիտը այնժամ.  
— Իշխան Վլադիմիր, մայր Կիևի տեր,  
Ախորժակ ունիս անշուշտ խընդալու.  
Համեցեք, հիմի մըտիկ արա ինձ  
Ու ախորժակըդ կանցնի խընդալու:  
Ու նիկիտը ինքն սկսավ խընդալ,  
Սկըսավ սեղմել, զարկել, աըրորել  
90 Ուժեղ ու հզոր էն հըսկաներին:  
Սողում են սրահում հըսկաներն ամեն,  
Ձի կարում կանգնի ոչ մինը ոտի:

Դուքս եկավ նիկիտն ապա սրահից,  
Դրոները զարկեց՝ շրջանակն ընկավ,  
Դարպասը զարկեց՝ սյունները թըռան,  
Ջարդ-փշուր եղան ճաղերը քաշած:  
Իշխանը մըտավ ետևը փեշի:  
Սամուր մուշտակը քաշեց իր գըլխին.  
— Վա՛յ, կամաց, տղե՛ք, ժած չըգաք տեղից,  
100 Չըլըսի նիկիտ Ջաուլշանին,  
Թե չէ ետ կըգա ջարդ-փշուր կանի.  
Ոչ մեծ կըթողնի, ոչ փոքըր մեզնից,  
Ժառանգ չի թողնիլ ինձ՝ Վլադիմիրիս...  
Դուքս եկավ Իլիան դարպասն ընդարձակ  
Ու լարեց ճայթուն իր աղեղը գիլ,  
Սուր, մըխած նետը դըրավ աղեղում,  
էսպես ինքն իրեն խոսեց նետի հետ.  
— Սըլացի՛ր, իմ նետ, տանիքը ոսկի,  
Վեր բեր ոսկեզօծ գըմբեթները ցա՛ծ:  
110 Ընկան ոսկեզօծ գըմբեթները ցա՛ծ,  
Ու կանչեց Իլիան կոկորդովը մին.  
— Հե՛յ, դուք կարակի մերկ ու տըկլորներ,  
Հե՛յ, կամավորներ Արև իշխանի,  
Վազեցե՛ք, եկե՛ք դարպասն իշխանի,  
Առե՛ք ոսկեզօծ գըմբեթները թանկ,  
Կըրեցե՛ք, տարե՛ք կարակն արքունի,  
Արաղ խըմեցեք էնտեղ կուշտ ու պինդ:  
Վազեցին, եկան տըկլորներն ամեն,  
Կամավորները Արև իշխանի,  
120 Տարան, կըրեցին գըմբեթներն ոսկի.  
— Ո՛վ դու մեր պաշտպան, մեր ծնող, մեր հայր...  
Ու Իլիայի հետ ելան, գընացին,  
Խըմեցին բուրբ գըմբեթներն ոսկի,  
Խըմեցին մինչև վեոջինը միասին:  
Ու երկուդ ընկավ սիրտները էստեղ.  
Ի՛նչ կանի մեզ հետ իշխանը հիմի,  
Ի՛նչ պատիժ կըտա, ով գիտի, հիմի.



Խըմեցինք նըրա գըմբեթները ողջ:  
Ու Իլիան էսպես խոսեց նըրանց հետ.

130 — Խըմե՛ք, տըկլորներս, դուք մի՛ վախենաք.

Ես եմ վաղվանից իշխան Կիևում,  
Իսկ դուք ամենից մեծ պիտի լինիք:  
Անցավ երկյուղը, սկըսան իըմել,  
Տերից սկըսան կյանք խընդրել քաջին:  
Իսկ իշխանական խընջույքի վըրա  
Գընաց համբավը Արև իշխանին.  
— Ո՛վ Արև իշխան, մայր Կիևի տեր,  
Չես ասիլ՝ Նիկիտ Զառլեշանին  
Քու էս հարկերից, ոսկի հարկերից,

140 Չըգեց ոսկեզօծ գըմբեթները ցած,  
Կանչեց կաբակի ողջ տըկլորներին,  
Խըմեց նըրանց հետ գըմբեթներն ոսկի:  
Նըստած էր էնտեղ խընջույքի միջին  
Զահիլ Դոբրինիա Նիկիտիչ հըսեան,  
էսպես ասավ նա Արև իշխանին.  
— Իշխան Վլադիմիր, մեր կարմիր Արև,  
Նիկիտան չի նա Զառլեշանին,  
Այլ իմ խաչախպերն— Իլիան Մուրոմից:  
Ասավ՝ իշխանը մտքի տունն ընկավ.

150 Իր հետ անվանի ազատներն ամեն  
Եվ հըսկաները ուժեղ ու հըզոր,  
Թե ինչպես անի— հաշտվի ծորի հետ:  
— Միտք արե՛ք, տըղեք, միտք արե՛ք մե՛ լավ,  
Միտք արե՛ք, տըղեք, խորը մե՛տք արե՛ք,  
Խելք խելքի տըվե՛ք, մի հընտ գրտե՛ք,  
Ո՞ւմ ղըրկենք արդյոք ծերի ետևից,  
Ար կանչի նըրան հարգիւքի սեղան:  
Ես ինքս գընամ— չեմ ուզում գընամ,  
Ապրակսին ղըրկեմ— վայել չի նըրան:  
160 Ամենքը էստեղ մըտրի մեջ ընկան.  
— Ո՞ւմ ղըրկենք արդյոք ծերի ետևից...

Ե՛կ ղըրկենք գընա ջահիլ Դոբրինիան,  
Զէ որ Իլիայի խաչախպերն է նա.

Նըրա՛ն կըլըսի Իլիան՝ թե լըսի:  
Սեղանը անցավ Վլադիմիր իշխանն,  
Եկավ ու կանգնեց Դոբրինիայի դեմ  
Ու էսպես խոսեց Դոբրինիայի հետ.  
— Արի՛, ե՛լ, կտրիճ, ջահիլ Դոբրինիա,  
Մերուկ Մուրոմցու մոտ գընա մեզնից,

170 Երկիրը պագիր, խոնարհ ողջունիր,  
Խոնարհիր միջև հատակն աղյուսի,  
Խոնարհիր միջև էն գետինը ցած  
Ու էսպես ասա նըրան մեր կողմից.

— Ուղարկել է ինձ Վլադիմիր իշխանն  
Ու մայր տիկինը՝ Ապրակսիան իր հետ,  
Խընդրում են, որ դաս ուրախ հարգինքի:  
Նա չի ճանաչել քեզ, կտրիճ քաջիդ,  
Նըստեցրել է ցած, ներքևի ծերին:

180 Խընդրում է հիմի, լիասիրտ խընդրում,  
Խընդրում է մոռնաս ինչ անց է կացել:  
Գընում է ահա ջահիլ Դոբրինիան,  
Գընում է ճամփով ու միտք է անում.  
— Արդյոք վաղաժամ մահի՞ս շեմ գընում...

Բայց թե շըլըսեմ Արև իշխանին  
Փորձանք է գալու անշուշտ նըրանից:  
Ու գընում է նա կաբակն արքունի,  
Մրտնում է ահա կաբակն արքունի.

Նըստած է էնտեղ ծերուկ Մուրոմցին,  
190 Խըմում, քեֆ անում տըկլորների հետ:  
Ու միտք է անում ջահիլ Դոբրինիան,  
Ո՞ր կողմից արդյոք նըրան մոտենա.  
— Առջևից գընամ՝ դուր շըզամ գուցե.  
Լավ է թիկունքի կողմից մոտենամ:  
Եկավ, մոտեցավ թիկունքի կողմից,  
Բըռնեց Իլիայի ուժեղ ուսերից

Ու էսպես մեղմով խոսեց նրա հետ.  
— Ո՛վ իմ խաշախպեր, իմ ախպերացու,  
Ո՛վ դու իմ ախպեր, ծերուկ Մուրոմցի,  
200 Քեզ պահի առժամ ձեռներդ ճերմակ,  
Բըռնի ու զըսպի սիրտըդ կրրակոտ:  
Չէ՞ որ բանբերին շեն կապում, կախում.  
Մենք էլ հո մեր մեջ ուխտ ունենք արած,  
Ուխտ ունենք արած մեծ ու ահավոր,  
Որ փոքր ախպերը լըսի իր մեծին,  
Մեծն էլ իր փոքրին ակառնջ անի միշտ,  
Ու էսպես կանգնենք մեկ մեկի համար:  
Դեսպան է ղըրվիլ քեզ մտ ինձ էսօր  
Վըլադիմիր իշխանն իրեն տիկնոջ հետ,  
210 Քեզ, հըզոր քաջիդ նա շի ճո՛նաշիլ,  
Նըստեցրել է ցած, ներքևի ծերին:  
Խընդրում է հիմի նա քեզ ցընծությամբ,  
Խընդրում լիասիրտ մեծ խըրախճանի,  
Թողնես, առում է, ինչ անց է կացել:  
Ետ է շուռ գալի Իլեյկոն էստեղ.  
— Հե՛յ դու, Դոբրինիա ջահել Նիկիտիլ,  
Քու բախտը բանեց՝ ետեից եկար,  
Թե չէ առջևից գայիր. Դոբրինիա,  
Հող ու մոխիրըդ քամուն պիտ տայի:  
220 Հիմի, ախպերու, ձեռ չեմ տալի քեզ,  
Կարգն ու օրենքը անցնել չի լինիլ:  
Ետ դարձի՛, ասա Արև իշխանին,  
Թող որ ինձ համար, ի՛նձ, քաջիս համար  
Արձակի սաստիկ, սաստիկ հըրաման  
Ամբողջ Կիևին, էս մայր քաղաքին  
Եվ Չերնիգովին նույնպես սըրա հետ,  
Որ արքունական կաբակները ողջ  
Բացվեն երեք օր ու երեք գիշեր,  
Ժողովուրդն ամեն գա արաղ խըմի,  
230 Ով չի կամենալ որ արաղ խըմի,  
Թող նա գարեջուր խըմի հարբեցնող,  
Ով որ չի ուզիլ գարեջուր խըմի,

Թող նա մեղրաջուր խըմի քաղցրահամ,  
Որ ողջ իմանան՝ Կիև է մըտել  
Մուրոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ:  
Ի՛նձ համար էլ թույլ էս քաջիս համար,  
Սեղան բաց անի ճոխ մեծարանքի.  
Իսկ թե չի անիլ ինչ ասում եմ ես,  
Կիևում կիշխի մինչև լուս միայն:  
240 Ու արագ-արագ վազեց Դոբրինիան,  
Վազեց Վլադիմիր անուշ իշխանին,  
Պատմեց Իլիայի պատվերը նրան:  
Հենց լըսեց պատվերն իշխան Վլադիմիրը,  
Իսկույն, անհապաղ սաստիկ ու սաստիկ  
Գըրեց բովանդակ Կիև քաղաքին.  
Այլև Չերնիգով հանեց հըրաման,  
Թե ողջ երեք օր ու երեք գիշեր  
Բաց պետք է լինի կաբակն արքունի,  
Գա, արաղ խըմի ժողովուրդն ամեն,  
250 Խըմի, քե՛ֆ անի անվարձ, անվըճար,  
Որ ողջ իմանան Կիև է մըտել  
Մուրոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ:  
Ու ինքը բացեց հարգինքի սեղան,  
Կանչեց, հավաքեց իշխան ու բոյար,  
Ըռուսաց բոլոր մեծ հըսկաներին,  
Այլև քաջարի կանանց դյուցազուն:  
Բայց մարդ չի գընում կաբակն արքունի,  
Ամենքն իշխանի պալատն են վազում,  
Ոչ կերուխումի, ոչ ոսկու համար,  
260 Վազում են տեսնեն անվեհեր քաջին,  
Տեսնեն Մուրոմցի էն ծեր Իլիային:  
Հավաքվում են ողջ դարպասն իշխանի  
Մըտնում են կամաց ապարանքը ներս:  
Ու ծեր Մուրոմցին գալիս է ահա,  
Գալիս՝ կաբակի տըկլորների հետ.  
Գալիս է, մըտնում ոըրահը պայծառ,  
Խաշ հանում դեմքին, ինչպես օրենքն է.

Ողջուն է տալի ընդունված կարգով,  
Ծրկըրպագում է շորս կողմը խոնարհ,

270 Արև իշխանին ու տիկնոջն էլ ջոկ:

Վեր կացավ իսկույն իշխանը առույգ,  
Առավ Իլիայի ճերմակ ձեռքերից,  
Համբուրեց նրա շրթունքը շաքար,  
Ապա թե էսպես խոսեց շողմքոր:

— Ո՛վ դու ծերունի, Իլիա Մուրմցի,  
Ցած եղավ թեպետ քու տեղն ամենից,  
Այժրմ ամենից վերև կըլինի:  
Հե՛յ, դուք ծառաներ իմ հավատարիմ,  
Տարե՛ք ծերունուն բա՛րձրը ամենից:

280 Բայց նա շընրստեց ամենից վերև,  
Գընաց ու նըստեց մեջտեղն ամենի,  
Հետը նստեցրեց մերկ տրկլորներին  
Ու էսպես դարձավ Արև իշխանին:

— Ո՛վ դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,  
Լավ ես իմացել՝ ում զըրկես ինձ մոտ:  
Չըլներ Գորբինյան՝ իմ ախպերացուն,  
Չէի լըսելու էստեղ ոչ ոքի,  
Ու մըտքումս արդեն զըրել էի ես  
Լարել էս ճայթուն իմ աղեղը գիլ:

290 Արձակել դեպի սրահը շքեղ,  
Սպանել և քեզ, իշխան Վլադիմիր,  
Եվ քու տիկնոջը՝ քու Ապրակսիային:  
Բայց էս անգամը աստ՛ված քեզ նճրի  
Քու էդ հանցանքը, էդ հանցանքը մեծ:

էստեղ անուշներ բերին հյուրերին,  
Քաղցըր մեղրաջուր խըմիչքներ բերին,  
Բերին ամենին զըրին մի-մի թաս  
Ու էսպես խոսեց Իլիան իշխանին:

— Ա՛յ դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,

300 Սըրանո՛վ ես դու պատվում հյուրերիս,  
Սըրանո՛վ ես դու հարգանք ցույց տալի:  
էս տըրկորներին միայն մի-մի թա՛ս...

Գուր շեկավ էս խոսքն Արև իշխանին,  
էսպես ծերունուն տրվավ պատասխան:  
— Ամենքի համար խոր նըրկուղներում  
Արաղ ունեմ ես ինչքան կամենան,

Մարդը մի տակառ քառսուն չափանոց:  
Թե հերիք չանի՝ ինչ որ կա էստեղ,  
Թող իջնեն իրենք նըրկուղներն իմ խոր:

310 — Ա՛յ դու Վլադիմիր, իշխան Կիևի,

էդպե՛ս ես պատվում քեզ մոտ հյուրերին,  
էդպե՛ս ես քեզ մոտ հարգում քաջերին,  
Որ իրենք գըտնեն ուտեստ ու խըմի՛չք...  
Տեսնում եմ տանտերն ես եմ լինելու:

Ասավ ծերունին ու ոտքի ելավ,  
էլ հարցմունք շարավ նըրկուղի ճամփեն,  
էլ նըրկուղների բանալիք շուգեց,  
Թափ իջավ դեպի նըրկուղները խոր,  
Գըտնեըր արավ ողջ կըրընկահան,

320 Պոկեց կողպեքներն առանց բանալի,

նըրս մըտավ ինքը նըրկուղներն էն խոր:  
Առած մի տակառն էս մի կըռնատակ  
Ու մյուս տակառը մեկել կըռնատակ,  
Երրորդը ոտով գըլորում է դուրս:

Ու դուրս գըլորեց դարպասն իշխանի,  
Գոռաց ու կանչեց կոկորդովը մին:  
— Հե՛յ դուք կաբակի մերկ ու տըրկորներ,  
Գուրս եկեք էստեղ—դարպասն իշխանի,  
Եկե՛ք, ամենքիդ արաղ խըմեցնեմ:

330 Ու իջավ կըրկին նըրկուղները ցած:

Չըտարավ իշխանն ու թունդ ելավ խիստ,  
Որոտաց ուժգին իր հընչուն ձենով:

— Հե՛յ հավատարիմ դուք իմ ծառաներ,  
Շո՛ւտ, եկե՛ք, հասե՛ք արագ ու արագ,  
Արագ ու արագ, ճեպով, հապճեպով,  
Վեր զըրեք քաջին խորունկ նըրկուղում:  
Շուրջը քաշեցեք երկաթի ցանցով:

Կաղնի կոճղերով կապեցեք շորս դին,  
Թաղեցեք դեղին ավազի տակին,

340 Սովամահ արեք խորունկ նրկուղում:

Վազեցին, հասան ծառաներն արագ,  
Արագ ու արագ, ճեղով, հապճեպով,  
Վեր դրին ծերին խորունկ նրկուղում,  
Շուրջը քաշեցին երկաթի ցանցով,  
Կաղնի կոճղերով կապեցին շորս դին,  
Թաղեցին դեղին ավազի տակին:

Ու ցավ դառավ էս մյուս հրսկաներին,  
Վեր կացան կիսատ քեֆի սեղանից,  
Նլան, դուրս եկան դարպասն ընդարձակ.

350 Իրենց ամեհի ձիանքը հեծան,  
Գես-դեն ցրովեցին էն արձակ դաշտում,  
էն լեն ու ազատ տարածության մեջ.

— էլ շենք մընալ մենք էստեղ՝ Կիևում,  
էլ շենք ծառայիլ Արև Իշխանին:

Ու էլ Վլադիմիր իշխանի մոտին  
Հըսկա շըմընաց Կիև էն օրից:

ԹԵ ԻՆՉ ՈՒՂԱՐԿԵՑ ԹՈՒՐՔԻ ՍՈՒԼԹԱՆԸ  
ՍՈՍԿՈՎԻ ՑԱՐԻ ԸՆԾԱՆԵՐԻ ՓՈՒՍԱՐԵՆ

Սերբական ժողովրդական վիպերգ

(Իուսերենից)

Քաղաքից քաղաք, աշխարհքից աշխարհք  
Թուղթ անցավ եկավ Մոսկովու երկրեն,  
Եկավ ու եկավ, հասաւ Ըստամբուլ:  
Ու դրին թուղթը ոսկի կառեթում  
Ու բերին իրեն՝ թուրքի սուլթանին,  
Ու թըղթի հետ էլ սուլթանի համար  
Շատ թանկ ընծաներ արքային վալելի:  
Մի ոսկի սինի, մեզն ոսկի մեշիտ,  
Մեշիտի շուրջը պատ եկած մի օձ,  
10 էն օձի գլխին դըրած անգին քար,  
Որ գիշերն էնպես պարզ լուս էր տալիս՝  
Ոնց որ ցերեկը լուսն արեգակի:  
Ու Իբրահիմին, սուլթանի որդուն,  
Երկու թանկագին թըրեր կային սուր,  
Գաստակներն ամբողջ զուտ մաքուր ոսկուց.  
Ամենքի վրա մի-մի անգին քար:  
Սուլթանի կընոջն ոսկի օրորոց,  
Գըլխավերեք քաջահավ բազեն:  
Որ էս ընծաներն առավ աննըման  
20 Ընկավ սուլթանը մըտքի ծովի մեջ.

Ի՞նչ զբրկի արդյոք Մոսկովի ցարին  
էսքան թանկագին ընծաների դեմ:  
Միտք արավ ու միտք, ոչինչ չըզտավ:  
Ու՞ մոտը եկավ, ամենքի առջև  
Պատմեց, պարծեցավ, թե ինչ ընծաւներ  
Ըստացավ ինքը Մոսկովի ցարից,  
Բայց ոչով ասել չի կարողանում,  
Թե ինչ ուղարկի զբրանց փոխարեն:  
Ներս եկավ ասա Ղուշբեգի փաշեն,  
30 Նրա առջևը պատմեց, պարծեցավ.  
Փաշից ետն եկան խոջան ու Ղադին:  
Երկիր պագեցին ու համբուրեցին  
Մունկն ու փեշերը իրեն սրբազան.  
Նրանց առջևն էլ պարծեցավ նույնպես,  
Ապա թե էսպես խորհուրդ հարցրեց.  
— Ո՞վ իմ ծառաներ, խոջա ու Ղադի,  
Ես ի՞նչ ուղարկեմ ցարին սրանց դեմ,  
Որ ցարը ինձնից մընա բավական:  
Պատասխան տվին խոջան ու Ղադին.  
40 — Տեր սուլթան, ասին, քո ստրուկն ենք մենք,  
Մենք մըտածելու իրավունք չունենք.  
Լավ կանես կանչես ծեր պատրիարքին,  
Նա հեշտ կիմանա, հեշտ էլ քեզ կասի,  
Թե ինչ ուղարկես Մոսկովի ցարին,  
Որ ցարը քեզնից մընա բավական:  
էսպես որ ասին՝ լսեց սուլթանը,  
Իրեն կավասին ուղարկեց իսկույն  
Ու մոտը կանչեց ծեր պատրիարքին:  
Ու, երբ պատրիարքն եկավ իրեն մոտ,  
50 Յույց տվավ նրբան ընծաներն ամեն,  
Ու շատ պարծեցավ, ու էսպես ասավ.  
— Ո՞վ դու իմ ծառա, ծերուկ պատրիարք,  
Չե՞ս կարող արդյոք սովորցնել դու ինձ,  
Թե ինչ պարգևներ զրկեմ փոխադարձ,  
Որ իմ ուղարկած թանկ պարգևներից  
Գո՛հ մընա հըզոր ցարը Մոսկովի:

Ասավ ու ծերը կամացուկ խոսեց.  
— Ո՞վ, իմ տեր սուլթան, իմ կյանքի արև,  
Քո իմաստության առջևն ի՞նչ եմ ես:  
60 Բայց իմ կարճ խելքով, ինչքան որ գիտեմ,  
Քո մեծ տերության լի գանձարանում  
Դու բաներ ունես ցարին զրկելիք,  
Բաներ, որ իսկի հարկավոր չեն քեզ,  
Իսկ նրբան անշափ շատ են ցանկալի:  
Նեմանիչ Սավվի գաւթազանն ունես,  
Կոստանդին կայսեր ոսկի թագն ունես,  
Ոսկեբերանի շուրջառը ունես,  
Սերբիայի հերոս կազար արքայի  
Ռազմի խաշանիչ զըրոշակն ունես...  
70 Քո ինչի՞ն են պետք էս բաները ողջ,  
Իսկ ցարին, գիւեմ, շատ են ցանկալի...  
Շատ հավան կացավ սուլթանն էս խոսքին  
Ու պատվեր տրվաւ՝ ծեր պատրիարքին,  
Որ կազմի ընծան ցարին զրկելիք  
Ու դեսպաններին հանձնի Մոսկովի:  
Մերն, ինչպես գիտեր, ամենն հավաքեց  
Ու դեսպաններին տալով՝ խրատեց.  
— Գնացե՛ք, որդի՛ք, տեր-աստված ձեզ հետ,  
Բայց, մտիկ արեք, մեծ ճամփով շերթաք,  
80 Անտառով անցեք, սարով զընացեք...  
Ուր որ է՝ շուտով մարդիկ կուղարկեն՝  
Խըլեն ձեզանից էդ պարգևները,  
Որոնցից բարձր ու նրվիրական  
Մեզ համար ոչինչ չըկա աշխարհում...  
Թող սըրա համար իմ գլուխը տան,  
Ու իմ մեղավոր մարմինը կորչի.  
Բայց հոգիս արդեն փրկված է ընդմիշտ:  
Ասավ՝ ճանապարհ դրեց ծերունին:  
Գո՛հ էր սուլթանը, որ գլուխ հանեց  
90 էսքան հեշտությամբ էս գործը դժար,  
Ու պարծենում էր ամենքի առջև,  
Որ էսքան էժան դուրս եկավ տակից:

- Ահա գալիս է Ղուշբեգի փաշեն:  
 Սրան էլ պատմեց, հետը պարծեցաւ.  
 — Հապա մի գրտի՛ր, Ղուշբեգի փաշա,  
 Ի՞նչ ղըրկած լինեմ Մոսկովի ցարին.—  
 Նեմանիչ Սավվի ցուպն եմ ուղարկել,  
 Կոստանդին կայսեր թագն եմ ուղարկել,  
 Ոսկերեանի շուրջառն եմ ղըրկել,  
 100 Սերբիայի հերոս Լազար արքայի  
 Ռազմի խաշանիչ ղըրոշն եմ ղըրկել:  
 Իմ ինչի՞ն էին էն ամենը պետք.  
 Իսկ ցարին շատ են պետք ու ցանկալի:  
 Ու հարցմունք արա՛վ Ղուշբեգի փաշեն.  
 — էդ ո՞ւմ խորհրդով դու էդպես արիք:  
 Սուլթանը ուղիղ պատասխան ւ րվեց.  
 — Մեր պատրիարքի խորհրդով արի:  
 Ու էսպես ասա՛վ Ղուշբեգի փաշեն.  
 — Տեր սուլթան, ասա՛վ, իմ պայծառ արե,  
 110 Եթե դու ցարին ղըրկել ես էդոնք,  
 Որոնցից որ թանկ էդ մարդկանց համար  
 Ոչ մի բան չըկա արար աշխարհքում,  
 Շատ լավ կանեիր եթե դրանց հետ  
 Ղըրկած լինեիր և քո քաղաքի—  
 Մեծ Ըստամբուլի ոսկի բանալին:  
 Մին է, ափելի խայտառակ ձեռով  
 Հետո ես տալու Մոսկովի ցարին...  
 Գրանց վրա էր մնում հաստատուն  
 Քո տերութունն ու քո զորութունը,  
 120 Որ տըվիր տարան Մոսկովի ցարին:  
 էս որ իմացա՛վ՝ նոր գլխի ընկա՛վ,  
 Սափ զարկեց ապշած սուլթանը էստեղ  
 Ու պատվեր տվա՛վ փաշին հապճեպով.  
 — է՛յ փաշա, ասա՛վ, իմ հավատարիմ,  
 Հավաքիր իսկույն իմ զորքն ենիչեր,  
 Շո՛ւտ դեսպաններին հասիր Մոսկովի,  
 Խի՛ր նրանցից պարզեներն ամեն,  
 Որոնց վրա որ կանգնած էր հաստատ

- Իմ տերութունն ու իմ զորութունը,  
 180 Որ տըվի տարան Մոսկովի ցարին:  
 Ու քաջ Ղուշբեգին զորքը հավաքեց,  
 Գրնաց ու գրնաց մեծ ճանապարհով,  
 Որ դեսպաններին հասնի Մոսկովի,  
 Ու ոչ մի ճամփում հետքները չըկա...  
 Ետ դարձա՛վ, եկա՛վ սուլթանին ասա՛վ,  
 Թե ոչ մի ճամփում հետքները չըկա:  
 Բրոնեց սուլթանի ցասումը անզուսպ,  
 Ահարկու ձենով գոռաց իր փաշին.  
 — Հե՛յ, փաշա՛, կանչեց, շո՛ւտ արա, փաշա՛,  
 140 Գրնա սպանիր ծեր պատրիարքին:  
 էսպես որ կանչեց՝ դուրս վազեց փաշեն,  
 Գրնաց ու բրոնեց ծեր պատրիարքին,  
 Պտըտեց թուրը, շողացրեց գրխին.  
 Մեր պատրիարքը մեղմորեն խոսեո.  
 — է՛յ փաշա, ասա՛վ, ետ քաշիր ձեռքդ,  
 Մի՛ ներկիր հողը անմեղ արյունով.  
 Թե չէ կըկապվի ակը երկընքի՛  
 Երաշտ կըլինի շուրջ երեք տարի,  
 Չի տալ երկիրը էլ բար ու պտուղ:  
 150 Ու լըսեց փաշեն՝ ծերունու խոսքին՝  
 Տարա՛վ կանգնեցրեց ծովի հղերքին:  
 Սուր թուրը նորից պտըտեց գրխին,  
 Ու նորից խոսեց արդար ծերունին.  
 — է՛յ փաշա, ասա՛վ, քե՛զ քաշիր ձեռքդ,  
 Ե՛կ իմ արյունը մի՛ թափիր ծովը,  
 Թե չէ փոթորիկ կանի սոսկալի,  
 Մովը կըհուզվի, կելնի ալեկոծ,  
 Նափեր, նավակներ իր տակը կանի,  
 Շեներ, քաղաքներ կըծածկի ջրով:  
 160 Բայց փաշեն նրան էլ ականջ չարափ,  
 Զարկեց ու կտրեց գլուխը ճերմակ:  
 Ու էսպես մեռա՛վ արդար ծերունին,  
 Ինքն արքայութուն գրնաց երկընքում,  
 Իսկ մեզ խնդութուն տվեց էս կյանքում:

ՄԱՐԿՈՆ ՌԱՄԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ Է ԽՄՈՒՄ

Սերբական ազգային ժողովրդական էպոսից

- Սուլթան Սուլեյման հրաման հանեց,  
Որ իրեն երկրում ոչ մի հրպատակ  
Ռամազան օրը գինի չխմի,  
Կանաչ դոլամա չհագնի վերից,  
Կողքիցը պողպատ թուր չըկախ անի,  
Շուրջպարի շերթա աղջիկների հետ:  
Թուրը կախ արավ Մարկոն իր կողքից.  
Կանաչ դոլամա հագավ վերևից,  
Ռամազան օրը գինի է խմում,  
10 Կանչում, հավաքում անցվոր ու խոջա,  
Խմում է, թասը նրանց է տալիս:  
Գալիս են թուրքերն իրենց սուլթանին.  
— Սուլթան, մեր տերն ես, մեր ծնողն ես դու,  
Չէ՞ որ դու ինքդ հրամանք արիր,  
Որ մեր էս տոնին, էս ծանրը պահեին  
Ոչով բերանը գինի չտանի,  
Ոչով դոլամա չհագնի կանաչ,  
Ոչով կողքիցը թուր չըկախ անի,  
Շուրջպարի շերթա աղջիկների հետ:  
20 Մարկոն աղջկանց հետ շուրջպարի կերթա,  
Մարկոն կողքիցը թուր է կախ արել,  
Մարկոն հագել է կանաչ դոլամա,  
Ռամազան օրը գինի է խմում:  
Գլուխը քարը՝ թե մենակ խմեր.

Անցվոր ու խոջա կիտում է գլխին,  
Համ ինքն է խմում, համ նրանց տալիս:  
Սուլթան Սուլեյման էս լսեց թե չէ՝  
Երկու սուրհանդակ զրկեց Մարկոյին.  
— Գնացե՛ք, ասավ, իմ արագ տղերք,

- 30 Գնացե՛ք շուտով Մարկոյին ասեք՝  
Թե՛ կանչում է քեզ սուլթանն անհապաղ:  
Գնացին արագ սուլթանի մարդիկ  
Շիտակ Մարկոյի վրանը մտան:  
Խմում է Մարկոն գավաթն առաջին,  
Մեջը կըլինի տասներկու օխա:  
— Լսի՛ր, ասացին, քաջազուն Մարկո,  
Սուլթանը զրկեց մեզ քո ետևից,  
Վե՛ր կաց տեղիցդ, գնանք սուլթանին:  
Սաստիկ բարկացավ Մարկոն էս խոսքից,  
40 Վեր կալավ ծանրը գավաթն առաջի  
Ու՛ ա՛ն հա կըտաս՝ սրանց գլխներին:  
Գլուխ ու գավաթ ջարդ ու փուրդ եղան,  
Արյուն ու գինի խառնըվեց իրար:  
Ապա թե գնաց Մարկոն սուլթանին.  
Գնաց աջ կողմը նստեց ծունկ ծնկի,  
Սամուր գլխարկը քաշեց աչքերին,  
Իր ծանրը գուրզը դրեց առաջին,  
Սուր թուրն էլ ուսին բռնած պատրաստի:  
Ու էսպես խոսեց սուլթանը թուրքի:  
50 — Իմ հոգևորդի, քաջազուն Մարկո,  
Դու հո լավ գիտես՝ կարգ եմ դրել ես,  
Որ մեր մեծ պահին, Ռամազան օրը՝  
Ոչով բերանը գավաթ չտանի,  
Ոչով դոլամա չհագնի կանաչ.  
Շուրջպարի շերթա աղջիկների հետ:  
Իմ ծառաները ինձ մոտ են գալիս՝  
Վատ խաբարներ են բերում քեզանից:  
Դու պար ես գալիս, իբրև, շուրջպարի,  
Պողպատի թուր ես կապել քո մեջքին,

60 Կանաչ դուամա հագել վերևից,  
Ռամազան օրը գինի ես խմում,  
Անցվոր ու խոջա կանչում՝ խմեցնում:  
Ի՞նչ ես գլխարկդ քաշել աշքերիդ,  
Ինչո՞ւ ես բերել քո գուրզը քեզ հետ,  
Ինչո՞ւ ես թուրդ բռնել պատրաստի:  
Պատասխան տվեց Մարկոն սուլթանին.  
— Ո՞վ իմ հոգեհայր, սուլթան Սուլեյման,  
Իմ հավատն էսպես ինձ թույլ է տալիս,  
Ես էլ խրմում եմ ձեր պահքի օրը:

70 Մենակ խմելը անվայել է ինձ,  
Երբ ուրիշները մտիկ են անում,  
Ես էլ կանչում եմ անցվոր ու խոջա,  
Որ մտիկ շանեն, նրանք էլ խմեն:  
Կանաչ դուամա էնդուր եմ հագնում,  
Որ ջահել մարդ եմ ու սազում է ինձ:  
Կողքիցս եթե թուր եմ կախ արել,  
Իմն է, իմ փողովի ես ինքս եմ առել:  
Աղջիկների հետ թե պար եմ գալիս,  
էնդուր, որ ազատ մարդ եմ ամուրի,

80 Ինչպես որ ինքդ եղել ես մի օր:  
Գլխարկս էնդուր եմ քաշել աշքերիս,  
Որ չեմ դիմանում, ճակատս էրվում է,  
Երբ որ խոսում եմ սուլթան հորըս դեմ:  
Իմ գուրզն էլ հետըս էնդուր եմ բերել,  
Ու թուրըս պատրաստ պահում եմ էսպես,  
Վախում եմ հանկարծ կռիվ պատահի:  
Եվ՛ եթե կռիվ պատահի հանկարծ՝  
Վա՛յ նրան, ով մոտ կրլնի Մարկոյին:  
Չորս կողմը նայեց սուլթանը էստեղ,

90 Տեսնի թե ո՞վ կա մոտիկ Մարկոյին.  
Տեսավ, որ ոչով չկա վրանում  
Ու ինքն է մենակ մոտիկ Մարկոյին:  
Ահից սկսեց քաշվել ետ ու ետ,  
Մարկոն էլ առաջ՝ դեպի սուլթանը,

Տարավ ու սեղմեց վրանի պատին:  
Սուլթանը ձեռքը գրպանը կոխեց,  
Մի հարյուր դուկատ հանեց գրպանից,  
Հանեց, դեմ արավ ջահել Մարկոյին.  
— Ա՛ռ, ասավ, Մարկո, տար՝ գինի խմիր:



ՄԱՐԿՈՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՊՍԱԿԻ ՀՍՐԿԸ

Սերբական ազգային էպոսից

Վաղ լուսաբացին վերկացավ Մարկոն,  
Զին հեծավ, շափեց դաշտը Կոստվի:  
Գրնաց, որ հասավ Սերվանա գետին՝  
Դիմացը ելավ մի սիրուն աղջիկ:

— Բարի օր, ասավ, կոստվցի քուրի՛կ:  
Սիրուն աղջիկը խոր գլուխ տրվեց.

— Բարին արևիդ, անծանոթ կտրիճ:  
Ու էսպես խոսեց Մարկոն քաջազուն.

— Քուրի՛կ, դու ջահել, էդքան գեղեցիկ,  
10 Հասակդ նոճի, այտերըդ կարմիր,

Ափսո՛ւ, որ մենակ ծամդ է խանգարում.  
Ինչո՞ւ է, քուրի՛կ, ծամըդ ճերմակել,

Բախտըդ, երևի, թոել է քեզնից:  
Դու ի՞նքդ ես արդյոք ցավի հանդիպել,

Քե քո խեղճ մերը, թե հերըդ ծերուկ:  
Կոստվի աղջիկն արտասուք թափեց,

Արտասուք թափեց ու էսպես ասավ.  
— Չէ՛, ախպերացու, անծանոթ կտրիճ,

Ես չեմ խորտակել իմ բախտն իմ ձեռքով,  
20 Փորձանքը ինքն է եկել իր ոտով:

էս ինք տարի կըլինի ուղիդ,  
Հեռվից արաբը մեզ մոտ է եկել,

Կապալով Կոստվն առել սուլթանից:  
Դըրել է երկիրն ամբողջ հարկի տակ,

Ուտում է, խըմում դաշտը բովանդակ:  
Մի ուրիշ հարկ է դըրել մեզ վրա.  
Ամեն հարանացու, որ մարդու գրնա,  
Պետք է վըճարի երեսուն ոսկի.  
Ամեն փեսացու, որ աղջիկ ուզի,

30 Երեսուն ոսկի, շորսն էլ ավելի:  
Ով էսքան ոսկի ուներ գըրպանում,  
Ով էսքան ոսկի տրվեց արաբին՝  
Ամենքը դարձան մարդու-որդու տեր:  
Ես որք աղջիկ եմ. եղբայրներ ունիմ,  
Նըրանք էլ աղքատ, ձեռքները պակաս,  
Զեն կարող էսքան հարկ տան արաբին:  
Սըրա համար չեմ գընում ես մարդու,  
Զեմ կարում դառնամ տան ու տեղի տեր.  
էս է իմ ցավը, անծանոթ ախպեր:

40 Բայց թե երանի էս լիներ մենակ,  
Աղջիկն իր տանը նըստեր անպըսակ,  
Կամ աղջիկ շառներ տըղան նորահաս:  
Ուրիշ մի ցավ կա, անարգ առավել,  
Արաբը ուրիշ մի հարկ է դըրել,  
Որ նոր պըսակված հարսին ու փեսին  
Գիշերը տանեն արաբի մեծին,  
Ինքը նոր հարսին փայի, փայփայի,  
Իրեն մարդիկը՝ ջահել փեսային:  
Ամեն տուն, ուր կան աղջիկ ու տղա,

50 Ղրկել են հերթով ամենքն արաբին:  
Եկել է հերթը ինձ հասել հիմի,  
Որ սև արաբին գընամ ես էսօր,  
Որ նըրա կինը դառնամ ես էսօր:  
Ու միտք եմ անում ինքըս իմ միջին.  
Տե՛ր աստված, արդյոք ի՞նչ անեմ հիմի.  
Մըմա՞կը գընամ, թոկ գրցեմ, կախվե՞մ,  
Քե՞ գետը գընամ, ջուրն ընկնեմ, խեղդվեմ.  
Ինչ էլ որ լինի՝ մեռնեմ վերջանամ,  
Քան շար թընամու տարփածուն դառնամ:

60 — Քուրի՛կ ջան, ասավ Մարկոն դյուցազուն,

Մի՛ կըտրիր հուլարդ, համբերող եղիր.  
Ո՛չ ջըրում խեղդփիր, ոչ ծառից կախվիր,  
Ու մի՛ կորցընիր ինքըդ քո հոգին:  
Ցույց տուր ինձ մենակ տեղը արաբի,  
Ո՛ւր է արաբը, ո՛րտեղ է կենում,  
Խոսելիք ունիմ էսօր նըրա հետ:  
Պատասխան տրվեց կույսը Կոսովի.  
— Ախպե՛ր ջան, ասավ, ա՛նծա՛նոթ կտրիճ,  
Ինչո՞ւ ես հարցնում տեղը արաբի,

70 Արաբի տեղը դատարկ տեսնեմ ես:  
Չըլնի՛ թե դու էլ աղջիկ ես ուզել,  
Գրնում ես, որ տաս հարկը պըսակիդ:  
Չըլնի՛ թե քո մոր մինուճարն ես դու.  
Եթե արաբը տա քեզ ըսպանի՛  
Խեղճ պառավ մերըդ ի՞նչ պիտի անի:  
Ու Մարկոն ձեռը գըրպանը տարավ,  
Երեսուն ոսկի հանեց գըրպանից,  
Տըվեց Կոսովի տրխուր աղջրկան:  
— Ա՛, քուրի՛կ, բըռնիր էս երսուն ոսկին,

80 Դարձի՛ր, ետ գընա քո տունը ճերմակ,  
էնտեղ ըսպասիր քո կարմիր բախտին.  
Ցույց տուր ինձ մենակ տունը արաբի,  
Կերթամ քո հարկն էլ կըտամ ես նըրան:  
— Արաբը, ախպե՛ր, տուն ու բակ շունի:  
Նայիր դաշտն ի վար, դատարկ ու դուրան.  
Մի տեղ է մենակ դըրող ծածանում,  
էն սև արաբի դըրողն է մետաքս,  
էնտեղ է նըրա վըրանը գարկած,  
Վըրանի շուրջը կանաչ ցանկապատ,

90 Ամբողջ ցըցահան շարած գըլուխներ,  
Մեր կըտրիճների գըլուխներն անբախտ:  
Քառսուն պահապան ունի արաբը,  
Հըսկում են անքուն գիշեր ու ցերեկ:  
Հենց որ վերջացավ խոսքը աղջրիւ,  
Շուտ տըվեց Մարկոն գըլուխն իր ձիւ,  
Քըշեց Կոսովի արձակ դաշտն ի վար:

Տաքացրեց, լըցրեց իր հուր Շարացին:  
Ոտների տակից կըրակ է թըռչում.  
Պընչերից բոց է ելնում կապուտակ:  
100 Գրնում է Մարկոն սիրտը լեփ-լեցուն,  
Իր այտերն ի վար արցունք է հոսում,  
Արցունքի տակից էսպես է խոսում.  
— Հե՛յ, դու լայնարձակ սուրբ դաշտ Կոսովի,  
էս ի՛նչ ես տեսնում, ի՛նչ տեղ հասար դու  
Մեր թագից հետո, մեր փառքից հետո.  
Արաբն եկել է՝ շոքել քեզ վըրա:  
Չեմ կարող տանել էս ցավն ես դաժան,  
Չեմ կարող տանել անարգանքն էս սև,  
էս տուրքն անօրեն, էս հարկն անպատիվ,

110 Որ աղջիկ-տըղա պըղծվեն սերբերի:  
Քույրե՛ր, ձեր ոխը էսօր ես կառնեմ,  
Ձեր ոխը կառնեմ, կամ թե՛ կըմեռնեմ:  
Ու քշեց շիտակ վըրանի վըրա:  
Պահնորդ արաբներ հեռվից աչքեցին  
Ու էսպես ասին արաբի մեծին.  
— Մե՛ր տե՛ր, աւացին, մեր իշխան արաբ.  
Կապույտ նըժույզը հեծած ամհհի,  
Կոսովի դաշտով կլրակի նըման,  
Մի արմանք զարմանք կտրիճ է գալի:  
120 Կըրակ է թըռչում նըժույզի ոտքից,  
Պընչերից ծուխ է ելնում կապուտակ:  
Մեզ վըրա է սա քըշում շիփ-շիտակ:  
Արաբի մեծը պատասխան տվեց.  
— Հե՛յ, ասավ, տըղե՛րք, իմ քառսուն քաջեր,  
Ո՛վ կարա իր ձին քըշի մեզ վըրա:  
Նոր նըշան դըրած մի ջահել է դա,  
Իրեն հարսանքի հարկն է գալիս տա:  
Ափսոսն է գալիս երեսուն ոսկին,  
էրվում է իր մեջ ու քըշում է ձին:

130 Դուրս եկեք դրա առաջը շուտով,  
Գըլուխ վեր բերեք հարգանքով, պատվով,  
Օգնեցեք, ձիուց իջեցրեք իրեն,

Ձին ու զենքերը առեք իր ձեռքից,  
 Ու իրեն բեհեք վրբանք — ինձ մոտ:  
 Ծաղրա ոսկին չպիտի առնեմ,  
 Դրբա գլուխը պետք է ես առնեմ,  
 Ու խաղուն կապույտ ըրծույզը տակի:  
 Ասավ ու խրմբով ծառաներն ելան,  
 Որ ձեռքիցն առնեն ձին ջահեի հյուրի,  
 140 Բայց հենց մոտեցան, տեսան Մարկոյին,  
 էլ սիրտ չի արին առաջը գրնան,  
 Փախան, վրբանք մըտան վերջստին,  
 Թաք կացան ետևն արւար իշխանի,  
 Իրենց թրերը ծածկեցին փեշով:  
 Ներս մտավ Մարկոն բակը արաբի,  
 Ցած իջավ ձիուց վրբանի շեմքում:  
 — Գընա՛, իմ Շարաց, քեֆ քաշի՛ր, ասավ,  
 Քեֆ քաշիր էստեղ, բակումն արաբի,  
 Բայց, տե՛ս, դրռնիցը հեռու շրգնաս,  
 150 Գուցե թե շուտով հարկավոր լինիս:  
 Ու մըտավ Մարկոն վրբանն արաբի:  
 Սիրուն սերբուհին առաջին կանգնած՝  
 Արաբը նստել՝ գինի է խրմում:  
 Ներս մըտավ Մարկոն ու բարև տրվեց.  
 — Բարի օր, տանտե՛ր, բարի աշողում:  
 Արաբը սիրով բարևը առավ.  
 — Աստծու բարին քեզ, անծանոթ կտրիճ.  
 Նըստի՛ր, մի բաժակ դատարկիր մեզ հետ,  
 Հետո կըպատմես՝ ինչու ես եկել:  
 160 Ե՞ք դառավ Մարկոն՝ պատասխան տրվեց,  
 — Գինի խմելու ժամանակ շունիմ,  
 Եկածս էլ արդեն բարի է ինքնին:  
 Սըրանից բարի էլ ի՞նչ կըլնի.  
 Աղջիկ եմ ուզել, պրսակ եմ գընում,  
 Հարսանքավորըս կանգնած է ճամփին,  
 Եկա՛ վրճարեմ տուրքը պրսակի,  
 Վրճարեմ և՛ ինձ, և՛ հարսիս համար,

Շուտ արա, որ ետ շրնկենք մեր ճամփից,  
 Ծա քանի՞ ոսկի պիտի վրճարեմ:  
 170 էս խոսքի վրբա արաբը ասավ.  
 — Թե քանի ոսկի — դու ինքըդ գիտես.  
 Հարսը տալիս է երեսուն ոսկի,  
 Փեսան երեսուն, շորսն էլ ավելի:  
 Բայց ես տեսնում եմ՝ կըտրիճ մարդ ես դու.  
 Հարյուր էլ որ տաս՝ ի՞նչ կա քեզ համար:  
 Ու Մարկոն ձեռը գրպանը տարավ,  
 Հանեց, շրպրտեց մի երեք ոսկի:  
 — Հավատա՛, ասավ, էլ ավել չունիմ:  
 Թե կուզես՝ մընա, ըսպասիր մի քիչ,  
 180 Մինչև պսակից ետ գամ հարսիս հետ,  
 Բաժինքը ողջ քեզ, հարսը ինձ լինի:  
 — Գարշելի՛, թըշաց արաբն օձի պես.  
 Սակարկո՞ւմ ես դու... դու ծաղրո՞ւմ ես ինձ...  
 Ծս շեմ հավատում ձեզնից ոչ մեկին:  
 Ասավ, վեր կալավ իր գուրզն ահագին,  
 Զարկեց Մարկոյին երեք-չորս անգամ:  
 Զարկեց, ծիծաղեց Մարկոն քաջազուն:  
 — Հե՛յ, դու սև արաբ, հե՛յ արաբ, ասավ,  
 Կատա՞կ ես անում, թե ճիշտ ես զարկում:  
 190 Ու օձի նման արաբը թըշաց.  
 — Կատակ շեմ անում, սըրտով եմ զարկում:  
 — Էնպես կարծեցի՛ կատակ ես անում:  
 Դե որ էդպես է, սըրտով ես զարկում,  
 Ինձ հետ էլ մի գուրզ կըլնի երևի,  
 Քանի անգամ որ դու ինձ զարկեցիր,  
 Էնքան անգամ էլ ես քեզ կըզարկեմ.  
 Նըրանից հետո դաշտը դուրս կըզանք,  
 Գաշտը կըջուկի կտրիճը մեր մեջ:  
 Ասավ ու առավ իր գուրզը մեխված  
 200 Ու էնպես զարկեց արաբի մեծին,  
 Որ զլուխն իսկույն թըռավ ուսերից:  
 Նախեց, ծիծաղեց Մարկոն քաջազուն:  
 — Տեր աստված, ասավ, փառքըդ շատ լինի,

- Ինչքան հեշտ թրուով գրլուխն արարի,  
Ասես գլուխ չէր ունեցել իսկի:  
Ապա թե հանեց թուրը հավլունի,  
Ողջ ծառաներին հրնձեց խոտի պես,  
Քառասուն հոգուց շորսին թող արամփ.  
Որ գրնան անցնեն աշխարհքից աշխարհք,  
210 Իր ու արարի պատմութիւնն անեն:  
Բակի շուրջ շարած գրլուխներն առավ,  
Առքով ու փառքով թաղեց հողի մեջ,  
Որ ցին ու ագոավ չգան, չկըտցեն,  
Նըրանց փոխարեն՝ արարի մարդկանց  
Գլխները զարկեց. շառեց բակի շուրջ,  
Ու տիրեց գանձին արարի դիզած:  
Չորս արարին էլ, որ թողեց կենդան,  
Չորս կողմի վըրա ղըրկեց աշխարհքի,  
Որ գրնան, անցնեն դաշտը Կոսովի,  
220 Պատմեն ու էսպես կանչեն ամեն տեղ.  
— Որտեղ որ հասած աղջիկ կա տան մէջ՝  
Արձակ-համարձակ հող մարդու գրնա,  
Ու թող պըսակփեն սերբերը ազատ.  
Վերացա՛վ, ջընջվե՛ց հարկը սըսակի,  
Մարկոն վըճարեց ամենքի համար:

## ՄԱՐԿՈՆ ՎԱՐ Է ԱՆՈՒՄ

- Իր պառավ մոր հետ միասին նըստած  
Գինի էր խըմում Մարիոն դյուցաշուն:  
Երբոր բավական դինի խըմեցին,  
Մեծ մերն ըսկըսե, որգու՛ն խըրատել:  
— Իմ որդի, ասավ, քաջագուն Մարկո,  
Չեո քաշի արի կըսվի՛ց, արլունից,  
Չար բանից, որդի, բարի չի՛ ծընիլ:  
Հոգնել եմ ես էլ պառավ տեղովըս՝  
Արնոտ շապիկներ շատ լըվանալուց:  
10 Ա՛ն մեր գութանը, մեր եզները առ,  
Գրնա, սար ու դաշտ վարի գութանով,  
Հսպիտակ ցորեն ցանի քեզ համար,  
Երկուսով ուտենք՝ ու հանգիստ ապրենք:  
Ու լըսեց Մարկոն իր մորը պառավի  
Գութանը լըծեց ու գրնաց վարեց,  
Բայց գրնաց վարեց ոչ թե սար ու դաշտ,  
Այլ էն մեծ ճամփեն թագավորական:  
Երեք ձի բեռնած արծաթ ու ոսկի  
Յանիշարները էն ճամփով եկան,  
20 Եկան, գոռացին Մարկոյի վըրա.  
— Է՛հե՛յ, ա՛յ Մարկո, մի՛ վարի ճամփեն.  
— Է՛հե՛յ, ա՛յ թուրքեր, մի՛ ոտքե՛ք վարըս.  
— Է՛հե՛յ, ա՛յ Մարկո, մի՛ վարի ճամփեն.  
— Է՛հե՛յ, ա՛յ թուրքեր, մի՛ ոտքե՛ք վարըս:  
Հերսը որ եկա՛ի երկար վիճելուց,  
Գութան ու եզներ առավ միասին,

Զարկեց, տեղն ու տեղ շարդեց թուրքերին:  
 Երեք բեռ ոսկի-արծաթը առավ  
 Բերեց ու տրվեց իր մորը պառավ.  
 30 — Մերի՛կ ջան, ասավ, ոնց որ դու ասիր՝  
 Վար արի էսօր, էսքան դատեցի:

ԲԱՅՐՈՆ

ՄԱՆՖՐԵԴ

I գործ <ողություն>

I տես <արան>

Գոթական գալերիայ: Կես գիշեր:

Մանֆրեդը (մենակ)

Լցնեմ ճրագըս. բայց չի կարող  
 նա դիմանալ՝ մինչև ես քրնեմ:  
 Իմ նինջը, եթե ննջում եմ, քուն չի-երագ, (rēza)  
 Այլ շարքը համառ, անվերջ մըտքերի,  
 Որ ոչ մի բանից ետ չի նահանջում:  
 Սրտումս անքուն պահնորդ ունեմ ես,  
 Որ նայեմ (տեսնեմ)՝ ինչ է կատարվում սրտիս մեջ...  
 Այնինչ ապրում եմ, շքնչում մարդու պես—

1 Լամպարս նորից ցնեմ: Բայց չի կարող  
 3—4 Իմ քունը— քուն չի լոկ, ոչ լոկ երագ, (rēza)  
 Այլ շարունակությունն անվերջ մըտքի:  
 5 ա Որ ոչ մի բանով ետ չի նահանջում:  
 բ Որ չեմ կարենում երբեք նահանջել:  
 6 Իմ հողին չի քնում. ես փակում եմ իմ աչքերը,  
 8—11 Եվ ես ապրում եմ, շքնչում մարդու պես—

Ես ունեմ նորա կերպն ու պատկերը...  
 10 Տանջանքը— ամենալավ (մեծ) ուսուցիչն է  
 (վարպետ)  
 Վիշտը նրանց համար— խորին գիտություն (наука):  
 Ով ամեն բանի մեջ թափանցել է իր խելով,  
 Ամենից ավելի է ողբում այն ճակատագրական  
 ճշմարտությունը,  
 Թե գիտությունը— կենաց ծառ չի [ներ համար]:  
 Հրաշքների աղբյուր և կյանքի հմտություն.  
 Քրթրեցի փիլիսոփայությունը, գիտությունները,  
 [եվ] Հասու եղա բնության բոլոր գաղտնիքներին,  
 Բանականությունս զբրկեց ամբողջ անզբրկելին—  
 Եվ բոլորն իզուր: Այս աշխարհում

20 Շրուայլեցի ես բարություն և մարդկանցից մինչև  
 անգամ  
 Բարիք տեսա— սակայն դարձյալ բոլորն իզուր...  
 [Պատահեցին] Ես ունեցա թըշնամիներ. շըհաղթեցին  
 նրանք ինձ, բայց ես շատին ջուխջախեցի—  
 Բոլորն իզուր... Շուրջս բարիք ու շարիք,  
 Վրդովմունք, կրթեր, — մարդուն ընդածին ամենայն  
 մի բան,  
 Ինձ անհայտ ժամից, ընկել է իմ կրծքին,  
 Ինչպես անձրևը շոր անապատում:  
 Երկյուղն [ինձ] անհայտ է ինձ: Զրկա մի անեծք  
 Ավելի զարհուրելի, քան շիմանալ դողն երկյուղի:

Եվ ունեմ նորա կերպարն ու պատկերը...  
 Տանջանքը մեր ամենալավ (մեծ) ուսուցիչն է գիտունների  
 Վիշտը մեզ համար— խորին գիտություն (наука):  
 13—18 Ճշմարտությանը հանդիպում է վշտի հեծծանքով,  
 եվ գիտությունը կենաց ծառ չի [ներ համար]:  
 Ի՞նչ կա գիտության մեջ: [Ես] դարձա իմաստուն, փիլիսոփա,  
 եվ հասու եղա բնության բոլոր գաղտնիքներին,  
 Բանականությունս զբրկեց բոլոր անզբրկելին—  
 23 նրանք ինձ, բայց շատերին ես ջախջախեցի—  
 27 Ինչպես անձրևը մեռած անապատում:  
 29 ա Ավելի զարհուրելի, քան շունենալն ահի դողը,  
 բ Ավելի զարհուրելի, քան շունենալն վախի գողը,

30 Փայփայանքը քնքշության, շունենալ տենչեր,  
 Կամ շըսիրել ումկից ե աշխարհում:  
 Բավական է [ր]:  
 Խորհրդավոր դուք ուժե՛ր,  
 Տիեզերքի երևույթնե՛ր դուք անտես,  
 Որոնց փընտրել եմ ես խավարում ու լուսի մեջ,  
 Գետընքի տակից (недр), սահմաններից եթերքի,  
 Օվկիանոսի անդունդներից (омут) անհաստակ,  
 Բարձր լեռներից թունդ բըժժանքով  
 Կանչում եմ ձեզ. երևացե՛ք:  
 (Լուսյուն)  
 40 Կանչում եմ [ահեղ] ես ձեր մեծի անունով,  
 Եկեք ինձ մոտ:  
 Թովում եմ ձեզ այն նըշանով,  
 Որ ահավոր է ձեզ:  
 Երգվեցնում եմ ձեզ այն ուժով,  
 Որ մահ չունի. դուրս եկեք:  
 (Լուսյուն) •  
 Ընդդիմանում ե՞ք, հա՛: Ես կըստիպեմ,  
 [Որ] Հնազանդվեք: Կարող զորությունս  
 (իշխանությունս)  
 Եվ երդումով աննահանջ(ելի) (неотразимой)  
 Որ չեմ փորձել ես ձեզ վրա:  
 50 Այն երդումով, որ երբեմն ծնունդ է առել  
 Այն նզովված, կործանված մոլորակի վրա,  
 Որ թափառում է դժոխքի անսահման թագավորության  
 մեջ,

30 Փայփայանքը քնքշության, շըզալ տենչեր,  
 35—38 Որոնց փընտրեմ ես խավարում ու լուսի մեջ,  
 Գետընքի տակից (недр), եթերային սահմաններից,  
 Օվկիանոսի անդունդներից հորձ <անք> անհաստակ,  
 Բարձր լեռներից սաստիկ բըժժանքով  
 46 Հա, ընդդիմանում ե՞ք: Ես կըստիպեմ,  
 47 ա եվ երդումով միշտ աննահանջ  
 բ եվ երդումով անմերժելի  
 51 Այն նզովված, խորտակված աստղի վրա,

Ինձ վրա ծանրացած—անեծքով  
Եվ այն մտքով, որ ապրում է իմ մեջ— ո՛վ ոգիներ,  
Կանչում եմ ես ձեզ, եկե՛ք հնազանդ:  
(Գալիերեյի մութ անկյունում երևում է մի այտղ և  
անշարժ կենում):

### Առաջին ոգին

Անդրամպային այն աշխարհից,  
Ուր անթառամ գարունքին  
Միայն եթերքի < . . . >  
Շունչն [էր] բարուր [իմ կյանքին],  
60 Ուր [(ներկում էր)] օթևանըս  
Արշալույսը վարդերանգ,  
Ուր ամպերը [իրո՛ւ] օթոց  
Հալվում էին ու լուշում,  
Թեև հանդուգն է քո կոչը  
Հողեղենի կոչին հըլու,  
Նրա համար, միառեւամ,  
Ես թողնեցի իմ օգային  
[Այն] Ապարանքը արծաթի,  
Փայլուն աստղի ցուրին

57 Ուր գարնանը անթառամ

59 Քնքույշ շունչն էր ինձ բարուր,

62 ա Ուր հոտավետ իրրև օթոց

բ Ուր իրրև հոտավետ օթոց

63 Հալվում են ամպերն ու լողում,

56—57 և 62—63 տողերի դիմաց, լուսանցքում՝

Աղշամուղջի շնչից հյուսած

ա Իմ օգեղեն պալատից

բ Իմ ամպեղեն պալատից

գ Իմ եթերային պալատից

դ Իմ ամպեղեն ապարանքից

Հյուսված շնչից շամաղաղի

ա Ուր օթևանս վերջալույսը

բ Ուր օթևանս արշալույսը

Վարդի գույն է ողողու՛

66 Նրա համար, կարճատև,

69 Փայլուն աստղի շողքի վրա

70 Այս աշխարհը ես հասա...

Անօգնական դու հողեղեն,

Ի՞նչ ես ուզում. ինձ ասա:

### Երկրորդ ոգին

[Թագապսակ ողջ սարերով  
Ուր վարդ է— ձյունն արևում,  
Ողջ պարուրված ձերսակ ամպով,  
Կա Մոնբլանը վերևում:  
Անտառապատ ողջ իրանը,  
Ու, ամպերում նա կորած,  
Մահասեռ < . . . >

80 Ունի ձեռքին միշտ բրնձած:

Բայց երբ, երբեմն, երկրի վրա

Ձյունն գունդը (?) բարձրացնի, այն հսկան,

Կըքարանա օդի միջում

Եվ հարվածը դյուծական:

Հըրամայեմ— ինչ հըլու է

Այդ խոլ կույտը սառցային,

Հըրամայեմ— կըթու են հյուսնը

[Իրենց] Սառուցային բարձունքից,

Ինձ ասում են կերան ոգի]։

90 Ուզեմ թե չէ— հիմքից կանեմ

Շղթաները այն ահարկու...

Ի՞նչ ես ուզում այժմ դու:

### Երրորդ ոգին

Անտակ ու ջինջ անդունդքի մեջ,

Ուր քրնած է կապույտ ալին,

[Ուր] Լուսնունն է տիրում անվերջ

Սողում գեռունքը ծովային,

74 Ուր վաղափայլ— ձյունն արևում

78 տողի դիմաց, լուսանցքում՝ «Մոնբլանն— արևան սարերի»:

80 Ունի ձեռքում ես բրնձած:

91 Նրանց շղթան այն ահարկու...

Ուր հարսները հավերժական  
Մարգրիտ են հյուսում խոպոպներին (կանաչ)

Իմ ամբողջն է կանգնած մարջան:  
108 [Տերն ու ոգին եմ ես ծովի]:  
Քո այդ կոշի արձայանքը  
Եկավ, հասավ այնտեղ ցած,  
Ին՞՞ ո՞ւ ես դու ինձ վրդովում  
Եվ ալիքը քրնեած:

### Չորրորդ ոգին

Ուր որոտներն ստորերկրյա  
Գետնի հիմքն են դրղըրդում,  
Ուր խոլ լավան իր հըրաշունչ  
Հորձանքներն է շրպըրտում:  
Ուր դարերով մխվել են խոր

110 Արմատները Անդերի,  
Իսկ բարձունքը ժանիքավոր  
Հըպարտ հասել ամպերին:  
Այնտեղ հասավ ինձ քո կանչը,  
Թո՞ռա եկա քո ձայնին,  
Ի՞նչ է, ասա, քո պահանջը,  
Գետնի ոգին ողջ կանի:

### Հինգերորդ ոգին

Հըրամայող շանթի, հողմի, [փոթորկի],  
Մովերն եմ ես մըռընչացրել,  
Փոթորիկը (ураган), որ թողեցի իմ ետև,

120 Դեռ վառվում է շանթերով:  
Հողմի թևին եկա այստեղ

102 Հասավ մինչև այն խորքին,  
105 Ուր որ շարժերն ստորերկրյա  
109 Ուր հաստատուն մըտել են  
117—121 Հըրամայող հողմի, շանթի, [փոթորկի],  
Օվկիանոսն եմ մըռընչացրել,  
[Սո թըռել եմ, [իմ ետևից] վիշապ քամին,  
[Հետքս] իմ ետևից է միշտ թըռել]:  
Հողմի թևին թո՞ռա այստեղ

Հլու կանչիդ խորհըրդավոր,  
Պատահեցին ծովում նավեր,  
Ղեկ, առագաստ—բոլորը նոր...  
Բայց, երդվում եմ, մինչ առավոտ  
Հուր կըլինեն ծովի տակ:  
Ինչո՞ւ ես ինձ կանչում քեզ մոտ,  
Ի՞նչ ես ուզում, հողա ին:

### Վեցերորդ ոգին

< . . . . . >

126—127 Ողջ կըլինեն ծովի տակ,  
Ինչո՞ւ ես ինձ կանչել քեզ մոտ,



**<ՄՈՒՐՈՄՑԻ ԻԼԻԱՆ ԵՎ ԿԱԼԻՆ ԹԱԳԱՎՈՐԸ>**  
(ճատված)

Ետ գընա— երկի՛ր, ետ բացվիր, երկի՛նք,  
Դուք էլ, սև ամպեր, մի կիտվեք մոռյլ,  
Նեղվում է սիրտը հսկայի  
Ու ցավ է հանդիպել ծերին,  
Բարկացավ վըրեն իշխան Վլադիմիրը,  
Հրաման տրվավ իր ծառաներին  
Վեր գցեն նրբան խոր նրկուղներում...

10

Ուներ իշխանին մի ջահել աղջիկ,  
Սի ջահել աղջիկ, մի մատաղ աղջիկ,  
Տեսնում է— փակեց իր հայր իշխանը  
Սովամահ անի ծերին նկուղում,

- 1 Ո՛վ դու, մայր երկիր, ետ գընա հապա,  
Ո՛վ կապույտ երկիրք, ետ բացվի դու էլ.
- 2 Դուք էլ, սև ամպեր, մի կիտվեք էդպես.
- 3 ա նեղանում է սիրտը հրսկայի  
բ նեղ է հսկայի ուժի համար
- 4 ա Ու դարդ է հանդիպել ծերունուն,  
բ Ու վիշտ է հանդիպել ծերունուն,
- 5 Բարկացավ վըրեն Վլադիմիրը իշխան,
- 7 Փակել նրբան խոր նրկուղներում...
- 12 Իշխանին ուներ մի ջահել աղջիկ,
- 13 ա Մի ջահել աղջիկ, [նորատի] աղջիկ.  
բ Մի ջահել աղջիկ, մի քորբա աղջիկ.

Մինչ նա կրպահեր քաղաքը մենակ,  
Կրպահեր մենակ տաճարները սուրբ,  
Կրպահեր < . . . > իր հայր իշխանին,  
Կրպահեր < . . . > [իր] մայր-իշխանուհուն:

20 Ու մորից թաքուն առնում է ահա  
Բանալիները խոր նրկուղների,  
Փորել է տալի գողունի անցքեր,  
Տանում է ծերին անուշ ուտելիք,  
[Դրնում է] ծերին [մեղրի խրմելիք]...  
Իսկ հայր իշխանը ոչինչ չըգիտի:  
Ղրկում է էստեղ Կալին թագավորն  
Իր թաթարներին սուրբ Ըռուսաստան.  
— Հե՛յ, դուք, ասում է, իմ թաթարներ,  
Գնացե՛ք հապա սուրբ Ռուսաստան,

30 Գնացե՛ք մի էն Կիև փառապանծ,  
Գնացե՛ք, տեսեք, հարց ու փորձ արեք.  
Ի՞նչ է կատարվում ռուսաց հողում:  
Ճամփա են ընկնում թաթարները պի՞ղծ  
Սուրբ Ըռուսաստան, Կիև փառապանծ,  
Հասնում են Կիև— էն քաղաքը մայր,  
Նայում են հեռվից գարշելիներն,  
Վլադիմիրին— արև իշխանին,  
Ու ետ են գնում թաթար արքային:  
Ու Կալին արքան հարցմունք է անում.

40 — Ո՛ւր եղաք, տըղերք, որտե՞ղ [տեսաք]

- 16 Իսկ նա կրպահեր քաղաքը մենակ,
- 20—21 Ու մորից թաքուն առավ աղջիկը  
Ոսկի բալնիքներն խոր նրկուղների,
- 30—31 Գնացե՛ք մի էն փառավոր Կիև,  
Գնացե՛ք, տեսեք, մի բան իմացեք,
- 33—36 Ու ճամփա ընկան թաթարները գարշ,  
Սուրբ Ըռուսաստան, փառավոր Կիև,  
Ու հասն Կիև— էն քաղաքը մայր,  
Նայեցին հեռվից գարշելիներն
- 38—40 Ու ետ գնացին թաթար արքային:  
Ու Կալին արքան սկըսեց հարցնել.  
— Ո՛ւր եղաք, տըղերք, ո՞ւր շեղաք:

Ի՞նչ տեսաք, տղերք [և ինչ շրտեսաք],  
Ու սև թաթարներն ասում են նրան.  
— Եղանք սրբազան հողում ուսաց,  
Եղանք փառավոր Կիև քաղաքում,  
Հրաշք ու տեսիլք տեսանք Կիևում,  
Արմանք ու գարմանք տեսանք Կիևում.  
Տեսանք, թե ինչպես աստծու տաճարից  
Գնում էր մի շատ մի սիրուն աղջիկ,  
Գնում էր ձեռքին [սև] ավետարան:

50 Էնքան շէր կարդում, երկու էնքան լաց էր լինում...

Ու Կալին արքան էսպես է ասում.  
— Ա՛խ, դուք իմ անխելք, անխելք թաթարներ.

էդ վարդ աղջիկ շի եղել գնալիս,  
Աստվածածինն է եղել զրնալիս,  
Ձեռին տանելու [ձեռն] ավետարան.  
Կիևի գլխին փորձանք է տեսել,  
Ու լաց է եղել [էնպես] էնդուր.  
Էն ալիքը շի վեր կացել ծովում,  
[էն] կապույտ ծովը շէ ծփում...

60 Ալեկոծվեց Կալին արքան

Վեր կացավ շունը Կիևի վրա,  
Ա՛խ դու շարագործ, շուն Կալին արքա:  
Մտածում է նա շար մտածմունքների,  
Խորհում է դաժան ու վատ խորհուրդների.  
Ուզում է քանդի Կիև քաղաքն ավերի,  
Ուզում է ջարդի ունչպար խալխին,  
Սուրբ տաճարները մատնի կրակի,  
Իր [մայր] տիկին Ապրակսիայի հետ  
Պայծառ իշխանի գլուխը կտրի:

70 Զորք է հավաքում քառսուն աշխարհից,

43 — Մենք եղանք—[սուրբ] ըոսաց հողում,

49 < . . . > ձեռն ավետարան

57 էնդուր արցունքով լալիս է եղել,

62 Ա՛խ դու շարագործ, շուն Կալին արքա:

69 Արև իշխանի գլուխը կտրի:

Քառսուն աշխարհից, քառսուն արքայից,  
Ամեն միևն ունի հարյուր հազար մարդ,  
Իսկ իր— շան զորքին, թիվ-համար չըկա:  
Պատրաստվում է շունը ճիշտ երեք տարի  
Վրա շորս տարին անում արշավանք.  
Տասնհինգ վերստի վրա— Կիև շրհասած—  
Կանգնեց իր զորքով Դնեպրի ափին,  
Հրաման տվավ էն մեծ բանակին  
Մի-մի խիճ գցեն [ամենը] մի տեղ—

80 Դուրս եկավ ահագին մի սար...

Ինչու շեն < . . . >

Զիու <1 անընթ.> գոլորշուց...

Խավար է կարմիր արևը պատել,  
Շող շի երևում, լույս (աշխարք) շի երևում,  
էդ գարշ հոտից— թաթարի հոտից  
Զի կարող շնչել մարդը մկրտված:  
Փովեց բանակը ընդարձակ դաշտում,  
Վեր եկավ ինքը՝ շունը, իր ձիուց,  
Իսկույն իր գործած աթոռին նստեց,

90 Հրաման գրեց արագությամբ,

Ոչ թե թանաքով, այլ կարմիր ոսկով,  
Ապա թե կնքեց իր հրամանը,  
Ընտրեց մի թաթար— ընտիրն ամենից,  
Հասակը ուղիղ մի սածեն,  
Գլուխը ինչպես գարիջրու կաթսա...

71—74 Քառսուն աշխարհից, քառսուն իշխանից,  
Ամեն մեկի հետ հարյուր հազար մարդ,  
Իսկ իրեն զորքին թիվ-համար չըկա:  
Պատրաստվում է շունը ողջ երեք տարի

75 ա Ու շորորդ տարին անում արշավանք.

բ Վրա շորս տարին ելնում արշավի.

79—80 Մի-մի փոքրիկ < . . . >

Դուրս եկավ ահագին մի լեռ...

83 Խավար է պատել կարմիր արևը,

89 (նստեց [իր] գործած աթոռին իսկույն),

91 Հրաման գրեց զուտ կարմիր ոսկով,

<ԱՍՔ ԻԳՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ>  
(հատված)

Հավք դառնամ, թուչեմ Դունայի վրով,  
Սամուր թևերս թրջեմ Կալայում,  
Սրբեմ իշխանիս վերքերն արյունոտ,  
Արնոտ վերքերը առնացի մարմնի...

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ

ՌՈՍՏԵՎԱՆԻ ԵՎ ԱՎԹԱՆԴԻԼԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա

Չափիցը դուրս մեծ էր ու առատ Արաբստանի Ռոստեան՝  
թագավորը: Բախտավոր էլ ծերացավ ու ծերության օրերում  
զգաց, որ ժամանակն է երկրի կառավարությունը ջահել ձեռ-  
քերի հանձնելու: Բայց արու զավակ չուներ. ունեցածը մի  
մինուճար աղջիկ էր, մի շատ իմաստուն ու գեղեցիկ աղջիկ՝  
Թինաթինա անունով: Մի օր էլ կանչում է թագավորն իր մե-  
ծամեծներին ու է՛սպես է խոսում նրանց հետ: Ասում է.

Անց են կացել իմ տարիքը,  
Մերությունով հիվանդ եմ ես.  
Մերությունը ծանրը ցավ է,  
էլ ի՞նչ ասեմ, հայտնի է ձեզ:  
էսօր շըլնի, էգուց ըլնի,  
Մահը կյանքս կըգողանա.  
Ո՞վ է մնացել էս աշխարհքում,  
Եվ կամ թե ո՞վ պիտի մնա:  
Հիմիկ Լեթ եկեք անենք  
Իմ աղջկանը մեզ թագավոր.  
Մի տեղ որ նա երևում է՝  
էլ արևը չի հարկավոր:

Մեծամեծները աշխատում են թագավորին համոզեն, որ էսպես չանի, բայց շի աջողվում ու Ռոստեանը հավաքում է ժողովրդին ու իր աղջկանը հռչակում է թագավոր:

Նկան բոլոր արաբները,  
Նկան զորքն ու զենքը սարքին.  
Աստղի կտոր Ավթանդիլը  
Գլուխ կանգնած ամբողջ զորքին:  
Հավատարի՛մ ծառան Սոկրատ  
էր արքայի ավան-չափան,  
էնպէս մի գահ նա պատրաստեց,  
Որ աշխարհքը կացավ հավան:  
Միծաղում է Ռոստեանը,  
Իր աղջրկան մեջտեղ բերավ,  
Նստեցրեց ու իրեն ձեռով  
Թագը նրա գլխին դրավ:  
Արքայական գավազանը  
Հերն աղջրկա ձեռն էր տալի,  
Ճոխ ծիրանին փափուկ ուսին  
Շատ արմաղան սազ էր գալի:  
Թագավորն ու իրան զորքը  
Նտ կանգնելով գլուխ վեր բերին,  
Օրհնանքներով բազմեցնելով  
Գահի վրա պատիվ արին:  
Թըմբուկ զարկին. ծնծղաները  
Անուշ-անուշ ձեն են տալի,  
Բայց աղջիկը լաց է լինում,  
Թուխ մազերը ժած են գալի:  
Իրեն արժան շի համարում,  
Որ հորական գահն ունենա,  
Արտասուքը, որ թափում էր,  
Մի վարդանոց կըջրեր նա:  
— Մի՛ լաց լինի, ինչ որ ասեմ,  
Լսի՛ր, աղջիկս, ալևորիս.  
էս օրվանից արաբների  
Դու թագուհին պիտի լինիս:

Արաբիայի տերութունը  
Նրա համար տրվի ես քեզ,  
Որ հեզ, խոնարհ ու իմաստուն  
Քո աշխարհքը փառավորես:  
Վարդն ու հողը միօրինակ  
Արևով են միշտ ողողած,  
Դու էլ էնպես՝ մեծին, փոքրին  
Պիտի լինիս միշտ ողորմած:  
Լա՛վ իմացիր, ինչ որ կըտաս՝  
էն է մենակ, որ դու ունես.  
Ինչ որ շես տալ՝ էն է կորած,  
Ինչքան էլ որ պիեդ պահպանես:

Հոր խրատին ուշադիր աղջիկը հենց իր թագավորության հանդեսին իր զարդերից սկսած մինչև գանձարանի գանձերն ու ախոռատան նժույգները դուրս է բերում, բաժանում ժողովրդին: Ժողովուրդն էլ հափշտակում է պահուսթյամբ:

Գրուփում էին արքայական  
Գանձը, ինչպես թուրքի ափար.  
Շտապողների ոտի փոռոց  
Ողջ քաղաքին պատեց խավար:  
Ո՞վ էր տեսել, ո՞վ էր լսել,  
Ինչ թագուհին էն օրն արավ.  
Կովի մարդն էլ աչքածակ է,  
Մեղ չըթողեց, որ չըտարավ:  
Մի օր ամբողջ ուտելիքներ  
Անուշ արին սուփրի բոլոր,  
Հազարփեշեն ձեռնն ձեռը  
Ման էր գալիս ոլոր-ոլոր:

Բ

Երբ միամիտ բազմականը  
Ուրախության ծովը մըտավ,  
Ռոստեանի ճակտի վրա  
Սև տխրության մի ամպ իջավ:

Սուփրի շուրջը նստողները  
Իրենց մեջը զրույց արին,  
Թե՛ ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց  
Մեր ալևոր թագավորին...

Ու իրենց մեջ էլ վճռում են, թե թագավորի մտքովը մի  
շար բան է անց կացել, որ առանց հայտնի պատճառի հան-  
կարծ տխրեց: Նրա որդեգիր Ավթանդիլ սպարապետն ու սի-  
բեղի նախարար Սոկրատը ուզում են միտքն իմանան:

Երկուսն և՛ թասեր առած,  
Գինով լիքը պեծպրծալի,  
Շատ հարգևոր արարմունքով  
Ռոստեանի մոտ են գալի:

Մոտ են գալի: Նախարարը կատակ է անում ու ափսո-  
սում, թե ինչո՞ւ Ռոստեանը իր թագավորությունը տվավ ազ-  
ջրկանը և անդառնալի զրկվեց և՛ թագից ու փառքից, և՛ էն-  
քան հարստությունից ու շեղած տեղից ցավ ու վիշտ ստեղ-  
ծեց իր համար: Թագավորը մի քիչ զարմանում է, մի քիչ էլ  
նեղանում, որ իրեն հետ էսպես կատակ են անում. ու ասում է.

— Չէ՛, աչքի լուս, գլխի շրնկար.  
էտ բեռը ես հեշտ կրտանեմ,  
Բայց թե մի ցավ սիրտս է մտել,  
Ու շրգիտեմ թե ինչ անեմ:  
Խորհրդտեցի ինչպես մի ձու  
Իմ արմաղան գարնան օրեր,  
Մերությունը սրտիս մեջը  
Բուն է դրել՝ ինչպես մի վեր:  
Մերե ի ծեր Արաբբատան,  
Ինչ որ հիմի կա իմ ճանկը,  
էլ մարդ չըկա, որ գիտենա  
Կո՞վ տալու կարգն ու հանգը:  
Ազիզ մագիզ մեծացրել եմ  
Մի հատ աղչիկ դոշիս կրպած,  
Չեմ ունեցել տըղա զավակ,  
Կու՛յ եմ եկել սիրտըս խրված:

Իրեն հոր պես նա կիմանար  
Թե ոնց գրցեր նետ ու գրնդակ.  
Ավթանդիլը գլխի մի քիչ,  
էն էլ սովրեց իմ ձեռի տակ:

Ավթանդիլը էս որ լսում է՝ ժպտում է: Թագավորը հարց-  
նում է ժպտալու պատճառը: Սպարապետը խոստանում է  
ասի, թե միայն թագավորը չի բարկանա: Խոսք աննելուց  
հետո ասում է թե՛ թագավորը զուր է պարծենում էնտեղ,  
որտեղ կա ինքը՝ Ավթանդիլը: Եթե ուզում է՝ զուրս գա մըր-  
ցության: Թագավորը հոժար է կենում, ու վճռում են, իրեն-  
ցից որը հաղթվի՝ երեք օր մնա անգդակ: Իսկույն տխու-  
թյունն անց է կենում, ուրախությունը տիրում է ամենքին ու  
մրցության՝ որսի հանդեսի պատրաստություններ են տես-  
նում առավոտվա համար:

Գ

Նոր էր ծագում առավոտը,  
Ետ քաշելով մըթան թաղիք,  
Թագավորի տան առջևը  
Բուսավ ինչպես շուշան ծաղիկ:  
Շուշան՝ հագած վառ ծիրանի,  
Դեմքն էր հակինթ կարմիր վառման,  
Ոտից գլուխ սպառազեն,  
Ու ոսկեկար գրլխի շալման:  
Իր կարմիր ձին խրխընջալով  
Փորփրբում էր ոտով գետին,  
Ռոստեանի միտն էր զրցում,  
Թե հասել է ժամը ետին:

Թագավորը ձիուն հեծավ,  
Ետ մնացին շեն ու գեղեր,  
Չորեք կողմը դաշտը տընտղեց,  
Փակեց, կապեց որսի տեղեր...  
Չիաների ոտի փոշին  
Վեր էր ընում ինչպես որ մուխ,

Արեգակի պեծն ու շողջը  
Մթնեցնում էր ամպի պես թուխ:  
Որսորդները ծերե ի ծեր  
Տափն անցկացան ողջ շափեշափ,  
Նըրանց արագ նժույզներին  
Պատեց քրտինքն, ինչպես որ քափ:  
Կոտորեցին ու խրժոնեցին  
Գազաններին թե շար, թե լավ,  
Մինչև նրանց կարմիր արնից  
Ողջ թաթախվեց իրենց հալավ,  
Մինչև նրանց կարմիր արնից  
Կարմիր ներկվեց դաշտը բոլոր,  
Ու բարկացավ նրանց վրա  
Վերևումը Հայրն Երկնավոր:  
Տափն անցկացան՝ ջուր էր հոսում,  
Ջրից դենը ժայռ ա՛հագին.  
Գազանները ընկան անտառ,  
Ուր էլ վազել չէր կարող ձին:  
Փողը փրչեց. արնոտ որսին  
Գադար տվին, թողին ձեռից,  
Ռոստեանն ու Ավթանդիլը  
Հոգնած իջան ձիաներից:  
Նըստոտեցին ծառերի տակ,  
Իրարու հետ հանաք արին,  
Հանաք արին ու պատմեցին՝  
Ոնց անց կացավ շարն ու բարին:  
— Ես հաղթեցի. — մին սա, մին նա  
Ասում էին մեկըմեկի,  
Միծաղելով, հանաքներով,  
Ինչպես ընկեր մի հասակի:  
Եկան որսի վրկաները,  
Հարցմունք արավ արքան էսպես.  
— Ծըշմարիտը դուք ասացեք,  
Ու չըպաշտեք էստեղ երես:  
Ասավ. մինը առաջ եկավ՝  
— Արքա, — ասավ, ձեռը դոշին,

Ճիշտը թողած՝ սուտը խոսել  
Մի՞թե կարա ոտիդ փոշին:  
Ամեն բանը չի պատմվիլ,  
Ձեզ պես մարդկանց հեշտ չի դատել...  
Բայց դրա հետ նետ գրցելում  
Դու չես կարող համեմատվել:  
Թե գիտենանք մեզ ամենքիս  
Մաս-մաս կանես՝ էլ ճար չըկա,  
Մեր խոսքերը քեզ չեն օգնի,  
Մի մազի շափ քեզ պետք չեն գա:  
Ավթանդիլըդ նշանումը  
Նետն էր ցրցում մինչև թևը,  
Նրա զարկին ոչ թե որսը,  
Չէր դիմանալ ինքը դևը:  
Երկուսովդ քսան հարյուր  
Գազան եք դուք մահին տվել,  
Բայց քսանով Ավթանդիլդ  
Սպանել է քեզնից ավել:  
Ինչքան որ դու նետ գրցեցիր՝  
Աստված քեզ տա էնքան տարի,  
Բայց թե գետնից շատ ենք առել  
Փողոտներից քո նետերի...  
Ռոստեանին դուր էր գալիս  
էս գործն, ինչպես մի խաղ նարդու,  
Սիրում էր նա քաջությունը  
Իր մեծացրած տղամարդու:  
էսպես նրանք խոսում էին  
էն հովասուն ծառերի տակ,  
Նըրանց շուրջը խուրձ-խուրձ կանգնած  
Ջինվորները հաղթահասակ:

## ԼՈՌՈՒ ԶՈՐՈՒՄ

[Գիշերն եկավ լեռանց ուսին  
Բազմեց սև-սև ամպերով,  
Ոչ աստղ ունի և ոչ լուսին,  
Ողջ պատեւ է յուր սևով]:

5 Լոռու ձորը կոխեց մութը,  
Անլույս մութը գիշերի,  
Այնտեղ մթնում ծեր Գեբեղը  
Երգում է անցքն յուր ջրի:

## ԿԱՂՆԻ

(Հայրիկին)

Եվեր իշխ. Մ. Ք <ամառյանին>

Անտառի միջին բարձրանում էր մի  
Հաստաբուն հսկա— ծերունի կաղնի:  
Երկինքը բոցոտ շանթ ու կայծակով  
Այրել էր նրա բունը շատ անգամ

5 Եվ փոթորիկը յուր սառը զարկով  
Զարկում էր անդուլ, սուլում շարակամ:  
Գարնան կարկուտը, տապիրն ամարան,  
Հանդիպում էին առաջ դեռ նրան,  
Եվ ձմրան գուժկան ագռավն էլ գալիս

10 Նրա գլխին էր իջնում՝ փայ տալիս...  
Բայց նա միշտ կանգուն, նա միշտ աննկուն  
Հուսով նայում էր ամպած երկնքին,  
<1 անընթ. > համբուրում շոգին ու բուքին,  
Նորա շուքի տակ, նրանից շատ ցած

15 Խրոնվել էին իրար փաթաթված  
Աննշան խոտեր, թփեր ու ծառեր:  
Նրանք նայելով մեծ կաղնին ի վեր

2 Հաստաբուն հսկա— ճյուղաշատ կաղնի:

4 Ճեղքել էր նրա կուրծքը շատ անգամ

6—7 Ապտակ էր տալիս բարձր կատարին:

Գարնան կարկուտը, տոթ <երն> ամարան,

13 ա <2 անընթ. > տոթին ու բուքին

բ Գլուխը դեմ տված [համբուրում էր]

Յրտից խըշշալով, հողմից դողալով,  
Կամ թե ամպրոպին արձագանք տալով՝  
20 Քեքթեքվում էին՝ իրար ականջում  
[Չնշին ձայներով] դրժգոհ շըշընջում.—  
«Սա, որ վերև է բարձրացել այսբան,  
Ոչ որոտ գիտի, ոչ քամի, ոչ բան...»:

20—21 Քեքվում էին ու իրար ականջում  
Փսփսում, վախում դրժգոհ շըշընջում.—

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Հայոց լեռներ սև-սև ամպեր  
Կուտակվել են, փաթաթվել,  
Հայոց լեռներ սեգ-սեգ խմբեր,  
Գոռ գընդեր են ողջ պատել:

— Ո՞վ է կանգնած լեռների հետ  
էն հըզորը անսասան.  
Մածանում է գըլխին վետ-վետ  
Իր դրոշը սրբազան:

— էն Սասունցի Դավիթն է հին,  
10 Մըսրա շըղթան խորտակել,  
Թուր-Կայծակին իրեն ձեռին՝  
Լույս աշխարհ է դուրս եկել:

Հայոց մըթին լեռների հետ  
Նա է կանգնած անսասան,  
Մածանում է գըլխին վետ-վետ  
Հայ դըրոշը սրբազան:

էլ ո՞ր հավքը կանցնի թևով  
էն լեռների մութ շարքից,  
Ո՞ր թշնամին կանցնի կենդան  
20 Դավթի գորքից ու զարկից:



Հայոց լեռներ սև-սև ամպեր  
Կուտակվել են, փաթաթվել,  
Հայոց լեռներ սեզ-սեզ խմբեր,  
Գոռ գընդեր են ողջ պատել:

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ  
ԵՎ  
ՆՅՈՒԹԵՐ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

(Էջ 7)

ՄԾ ԲՆԱԳՐԱՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱՑՈՒՄ  
ՆՐԱ ՎՐԱ ԿԱՏԱՐԱՄ ԿՐԾԱՏՈՒՄՆԵՐԸ

Ց տողից հետո, որպես երկրորդ գլուխ՝

*[Երբ մանուկ էր նա, դեռ տասը տարում,  
Մի դե լուս ընկավ Սասմա աշխարհում,  
Ճամփեքը փակեց, կըտրեց անցուղարձ,  
Սասմա քաղաքը սոփ ընկավ հանկարծ:  
Մըհեբը մի օր հարցրեց, ասավ.*

*— Ինչո՞ւ մեր հացը էսպես թանգացավ,  
Ինչո՞ւ գյուղերից ցորեն չեն բերում,  
Ինչո՞ւ են մարդիկ փակվել տներում:*

*— Մի դե է, ասին, լույս ընկել ճամփում,  
Ով անց է կենում, բրունում է լափում,  
Մարդիկ էլ փակված՝ քաղաքից, գյուղից  
էլ դուրս չեն գալի նրբա երկյուղից.*

*— Մի դեն ինչ է՝ որ խըղճացնի էսքան,  
Ասա՛ք զարմանքով էն մանուկ հրսկան  
Ու ելավ գնաց: Գրնաց անհիթեթ  
Մի կռիվ մըտավ դաժան դեի հետ,  
Բրունեց հըրեշին, պատռեց մեջտեղից,  
Երկիրն ազատեց սովից, երկյուղից,  
Իրեն անունն էլ էն օրից ի վեր  
Մընաց ու մընաց միշտ Առյուծ-Մըհեբ]:*

- 15 Սկըսեց մըտածել Առյուծ-Մըհերը.  
 17—18 Շուտով սև հողին ես կերթամ գերի,  
 Կանցնի ծովսի պես փառքը Մըհերի,  
 22 Մի ժառանգ շունիմ, իմ անցման ետև  
 26—27 Երբ միտք էր անում, վերևից հանկարծ  
 Մի լույս հըրեղեն հայտնրվեց քաջին,  
 29—30 Ողջո՛ւյն քէշ, ասով մըտայլ հըսկային.  
 Քո ձայնը հասավ Աստուծո գահին,  
 33—34 Որ օրը որ ձեզ ժառանգ է տրվել,  
 էն օր կըմեռնեք քո կինն էլ, դու էլ:  
 39 Հըրեշտակն այստեղ ցուցավ նորից,  
 44 Կանչեց իր եղբայր Ձենով Օհանին,  
 46 Ու կինն էլ, ինքն էլ նույն օրը մեռան:  
 49 Երբոր իմացավ էլ Մըհեր չըկա,  
 55—57 Ու քո շըվաքում քանի որ մենք կանք,  
 Քո ծառան լինենք, քո խարչը միշտ տանք,  
 Միայն թե մեր երկիր քարուքանդ շանես  
 59—60 Չէ՛, ասով Մելիք, քո ամբողջ ազգով  
 Արի, անց կացիր իմ թրրի տակով,  
 66 Մոտ շեկավ Մըսրա-Մելիքի թըրին:  
 69—70 Որ գըցեց, մատը մի քարի առավ,  
 Որ առավ, քարից կըրակ դուրս թըռավ:  
 82 Մի մանուկ էր դեռ երեք տարեկան.

85—100 տողերի փոխարեն՝

[Մի օր հավաքեց քաղքի երեխանց,  
 — Տըղերք շան, եկեք ծառ հեծնենք, ասաց:  
 Տարավ, մի բարդի կըռացրեց հողին,  
 Երեխանց շարքով նըստեցրեց ճյուղին:  
 Հենց որ նըստեցին, բաց թողեց ծառը.  
 Ահադին թափով փախավ կատարը,  
 Ու, ա՛ռ հա կըտաս, ամեն մի տըղա  
 Թըռավ մի փողոց, մի կտեր վըրա,  
 Դիպավ մի պատի, ընկավ մի քարի,  
 էսօր ես մեռել, թե անցյալ տարի...  
 Ինքը ծափ տըվավ, թավալվեց հողում:

Գըլոր էր գալի, խընդում, ծիծաղում,  
 Իբրև թե՛ տեսեք ի՛նչ հանաք արավ:  
 Ամբողջ քաղաքը սըգատուն դառավ.  
 Երեխանց տերերն եկան, կիտվեցին,  
 Լսցով ու կոծով,  
 Դառը կըսվիծով  
 Ձենով Օհանի դուրը կըտրեցին:  
 — Տո, Ձենով Օհան, մենք էսքան տարվան  
 Աղուհացակեր ընկեր-հարևան,  
 Դու մեր երկխեք հե՛ր ես կոտորում,  
 Մեր տունը քանդում, մեր ծովար կըտրում:  
 Թե կուզես, ա՛խպեր, թողնենք տեղ ու տուն,  
 Սասմա քաղաքից կորչենք դաղարդուն,  
 Թե չէ՛ վե՛ր կառնի Ասաված էս բանը...  
 — Ի՞նչ ա՛ եմ, ա՛խպեր, ասավ Օհանը:  
 — Ի՞նչ պետք է անես, կարգի՛ր մի բանի,  
 Գոնա, քեզ համար աշխատանք անի.  
 Թե չէ՛ բերել ես պարապ նըստեցրել,  
 Պահել, պահպանել, վիզը հաստացրել,  
 Գազան ես շինել ու գըցել աշխարհ...  
 — Ի՞նչ անեմ, ասավ Օհանը անձար.  
 Ի՞նչ գործ ունիմ ես, ի՞նչ գործի դրնեմ.  
 Բերե՛ք ձեր այտանք իր առաջն անեմ,  
 Հանդ դըրկեմ ծեղից մինչև իրիկուն,  
 էլ ոչ մարդ տեսնի, ոչ քաղաք ու տուն:  
 Ու մարդիկ հավան կացան էս բանին,  
 Ապրանքը բերին, տըվին Օհանին]:

101—104 Գրնաց Օհանը ու Դավթի ոտի  
 Մի զույգ ոտնաման բերով երկավթի,  
 Երկավթի մի կոռ հարյուր լըղրական,  
 Ու շինեց Սասմա քաղքի նախրապան:

104 տողից նետո, իբրև VI գլուխ, 105—108 տողերի փոխարեն՝

[Արևը բացվեց աշխարքի վըրա,  
 Ցնծուղը գարկեց Սասմա սարերին:

Սարերը ելավ Դավիթը ահա  
Անհուն ցավից ու կարոտից կշտամբելով ինքս  
ինձ...

281 ա [Մին էլ հանկարծ] սթափվում եմ սրտագրավ մի  
ձայնից.

բ Այն ժամանակ սթափվում եմ ուրիշ երգի մի  
ձայնից.

գ Այն ժամանակ սթափվում եմ ուրիշ հեռու մի  
ձայնից.

1 ա Ես հարբեցի երիտ < ասարդական > շահելությունից.  
բ Ես հարբեցի շահելությունից և գեղեցկության ուժից.

286—287 Զեփյուռի հետ

Բույր ու համբույր են ղրկել ինձ համար...

288 ա Մի այլ աղջիկ, մի այլ ոգի ցարասի ծառի տակ,  
բ Մի այլ աղջիկ <...> ու կանգ առավ ծառի տակ,

293—294 Եվ ո՞վ եք դուք, որ տանջում եք անգթաբար ինձ  
էսպես.

Ո՞վ, իմ հոգին շի դիմանում ձեր հմայքին  
գերբնական,

295 ա Ո՛հ, խղճացեք, [քնքույշ ոգիք], էլ մի՛ տաք ինձ  
փորձության:

բ Ո՛հ, խղճացեք, <...> ոգիներ, էլ մի՛ տաք  
ինձ փորձության:

296—297 Էնտեղ ես դու, ուր հողեղենն օտ շի կոխել դեռ  
բնավ,

Ուր անհայտ են երկրավորի <1 անընթ.> սերն  
ու ցավ,

299 ա Բայց դու նստիր, ով ազնիվ հյուր, որ ես հանգչեմ  
քո գրկում.

բ Բայց դու նստիր, սիրուն տղա, որ ես հանգչեմ քո  
գրկում.

գ Բայց դու նստիր, սիրուն երգիչ, որ ես հանգչեմ  
քո գրկում.

300 ա Ու տես, եթե ինձ համբուրես, այնքա՛ն հետո  
կըզղջաս,

բ Բայց տես, եթե ինձ համբուրես, այնքա՛ն հետո  
կըզղջաս,

301—302 Ու շես գտնիլ ինչ կորցրնես— ամբողջ կյանքդ  
թեկուզ տաս:

Եվ այս երրորդն էնքան սիրուն, գերազանց էր  
առավել,

305—309 Կանչեց [անհուն] քնքույշ վշտով ու շքացավ իմ  
մոտից:

Ես շվարած միտք եմ անում <...> թմրության,  
Թե կարճատև մի հաճույքին ի՛նչպես տըվի

հավիտյան—

Ու գնում եմ, որոնում եմ, [ականջ դնում] ամեն  
տեղ—

ա էլ ձայն չըկա, շեն երևում անմահները  
աշաղեղ...

բ էլ ձայն չըկա, շեն երևում սիրունները էն շքեղ...

գ էլ ձայն չըկա, շեն երևում տեսիլները էն շքեղ...

դ էլ ձայն չըկա, շեն երևում փերիները էն շքեղ...

309 տողից հետո (առաջին շոս տողեր ջջված և ապա վերականգ-  
նրված)՝

Օրը արդեն տարածամել, մոտ է [արևն իր  
մըտին]՝

Դրախտի ձայներն հնչում են երեկոյան մեղեդի<sup>2</sup>.  
Ու երջանիկ էն գիշերի ստվերները մեղմածան<sup>3</sup>

<?>  
Մածկում են անմահների օթևանը սրբազան<sup>4</sup>:

Գնում եմ ես... Կախարդական տեսարաններ  
նորանոր,

Մինը մյուսից սքանչելի, մինը մյուսից փառավոր<sup>5</sup>.

310—311 Բայց ոչ մի տեղ չեմ հանդիպում էլ նրանցից ոչ  
մեկին,

Անհուն ցավով ու կարոտով տառապում է իմ  
հոգին:

312—315 տողերի փոխարեն՝

Ահա կապույտ եթերային երկնանման ապարանք<sup>6</sup>.  
էստեղ, գույն, ասում եմ ես, կըհանդիպեն ինձ

նրանք.

Միրտ եմ անում, ներս եմ մտնում— դատարկ ու  
լուռ ահավոր,

1 Օրը արդեն տարածամել— փոխվել գիշերն <...>

2 Դրախտի ձայներն հնչում էին երեկոյան մեղեդին.

3 Ու երջանիկ երեկոյան ստվերները մեղմածան <?>

4 Մածկում էին անմահների օթևանը սրբազան:

5 Մեկը մյուսից սքանչելի, մեկը մյուսից փառավոր.

6 Ահա լազուր եթերային երկնանման ապարանք,

[Հառաչում եմ հուսահատված] < . . . >

Ձեռն եմ տալի հուսահատված ու հառաչում  
սրտախոր<sup>1</sup>,  
[Եկեք], ո՛վ, մին էլ եկեք, որ երջանկութուն տվիք.  
Ինձ պատասխան ահեղ մի ձեռն հանկարծ գոչեց՝  
քյավթառ, տա՛ր<sup>2</sup>...

316—317 Մին էլ տեսա կրկին կանգնած մինարեի  
[գազաթին].  
Դարձյալ կեղտոտ էս քաղաքում, շուրջս ամբոխն  
[գարշելի]...

317 տողից հետո՝  
Եվ ձայնս արգեն բեկված, կորցրած իր ուժն ու  
շեշտը սրտառուչ,

319 Ուրախ-ուրախ, ոգևորված դիմում եմ ես մինարեն.

319 տողից հետո. «(Դարձյալ ամբոխը < . . . >):»

321 ա Ու երգերըս, ու [ձայներըս], նվիրած են ողջ  
նրանց,  
բ Ու երգերըս, ու [ձայներըս], նվիրում եմ միշտ  
նրանց,

321 տողից հետո՝  
[Եվ ամբոխը, որ կարծում է աղոթում եմ իր  
աստծուն,  
Դարձյալ էնպես թովված հավքերն ցած են  
իշնում երկնքից]<sup>3</sup>

1 Ձեռն եմ տալի զղջացած և հառաչում սրտախոր.  
2 ա Այնժամ թնդաց ահեղ մի ձեռն— քյավթառ, [արի սրան]  
տա՛ր...  
բ Այնժամ թնդաց ահեղ մի ձեռն— [արի սրան], քյավթառ,  
տա՛ր...  
գ Ինձ պատասխան ահեղ մի ձեռն թնդաց հանկարծ— քյավթառ,  
տա՛ր...  
3 ա Դարձյալ էնպես մարդիկ < . . . >  
բ Դարձյալ էնպես ցած են իշնում թովված հավքերն երկնքից,

322 ա Բայց, ա՛խ, չըկա, էլ չի գալի էն թռչունը հին  
ծանոթ,  
բ Բայց, ա՛խ, չըկա, էլ չի գալի էն խաս հավքը ինձ  
ծանոթ,  
գ Բայց, ա՛խ, չըկա, էլ չեն գալի էն թևերը ինձ  
ծանոթ,

323 տողից հետո՝  
[Եվ մարդիկ էլ ծիծաղում են թե ինչպես ես երգում  
եմ էս ձեռնով]—  
Ու իջնում եմ ես հուսահատ ու կարոտից խեղագար,  
լալիս, հեծում, կուրծքս կոծում, տանջվում  
անհույս ու տրկար<sup>1</sup>,  
Տանջվում էսպես ու երազում ու երազում < . . . >  
Մինչև անցնի ամբողջ տարին, ու նույն օրը մինչև  
գա<sup>2</sup>...

Վերջին տողից հետո, վարի լուսանցում՝  
Ձե՛սը կտրել է.  
Բայց երգել է արդեն, Արեգը լսել է:  
324—325 — Բարով, պապի, որ կանգնած ես գլուխդ վեր  
ամպերում.

Ո՛վ ես արդյոք:  
(Ձայն ամպերի միջից)

329 Ափերն ու մեջն եմ ես,

329 տողի դիմաց՝

[Ալմամ Արեգն եմ ես]

334 — Ո՛վ անպատում, անհաս դու մեծ,  
խարխափելով ու անգետ  
335 ա Մենք սողում ենք, անց ենք կենում այս  
աշխարհից որպես գետ,  
բ Մենք հոսելով անց ենք կենում այս աշխարհից  
որպես գետ,

1 Կուրծքս կոծում, լալիս, հեծում, տանջվում անճար ու տրկար,  
2 Մինչև անցնի ամբողջ տարին, էլ էն օրը մինչև գա...



- 336 ա Որ անհասու մեծ աշխարքին իր ասիերն է լոկ տեսնում,  
բ Որ անհասու մեծ աշխարքին իր ասիերն է լոկ ճանաչում,
- 337—341 Իսկ դու ահեղ քո բարձունքից ողջ տեսնում ես ու քննում:  
Լսի՛ր, պապի, խոնարհիր քո բարձր գլուխն  
ամպերից,  
Բաց արա քո իմաստուն լեզուն, պատասխան տուր  
ինձ.  
Ո՞րն է ճամփան, որ տանում < է > այն  
աշխարհը երջանիկ,  
ա Ուր երգում է հազ<արան> խաս բյուրբյուրը.  
բ Ուր հազ<արան> խաս բյուրբյուրը երգ է  
ասում < . . . >
- 342 Եվ վարդի [փնջեր] էր թափում իր երգի հետ,  
345—346 Նայիր վերև, խիզախ տըղա. այն ճամփեն ես դու  
փընտրում,  
Նեղ, քարքարոտ այն շավիղը, որ թաքչում է  
ամպերում.
- 348 Ետ գալ շրկա էլ նըրան.
- 347—348 տողերի փոխառեն, ձախ լուսանցում՝  
Անդարձ է աշխարքում ամեն բան,  
Ինչ որ գնաց էլ ետ չի գալ հավիտյան.  
352 Անտակ ձորեր, որ նայելիս մարդու աչք է սևանում.  
354 Ամեն քայլում դև ու հըրեշ, ամեն քայլում  
փոթորիկ...
- 357—358 Սով, նեղութուն չեմ հասկանում, չեմ էլ հոգում  
այդ մասին,  
Ո՞ւմ է պակսել մի կըտոր հաց այս աշխարքի  
երեսին:
- 360—362 Եվ այն աշխարքն այնպես հեշտին և այն հավը  
այնպես մո՛տ...  
— Ո՞վ հավիտյան կույր մոլորված ու միշտ  
խաբված դուք մարդիկ:

- Հեշտ է թըվում փափագելին ու սիրածը միշտ  
մոտ/կ...
- 363 ա Հեշտ է— սակայն ցընորքի մեջ, մոտիկ՝ մի: յն  
ձեր սըրտին,  
բ Հեշտ է— սակայն ցընորքի մեջ, մոտիկ՝ սըրտին  
տենչալի,  
գ Հեշտ է— սակայն ցընորքի մեջ, մոտիկ՝ սըրտին  
անձկալի,
- 364 Բայց չի կարող ոտքը հասնել, ուր որ սիրտն է  
ման գալի:
- 365 ա Մեղք ես, որդի, դարձիր, գընա քու հոր տունը  
չեն ու լի:  
բ Ետ կաց, ով գիտուն, մահի ետևից ես գնում:  
գ Ետ կաց, որդի, ինչո՞ւ ես քո մահի ետև ման գալի:
- 368 ա Գընա խելոք շատերի պես, ապրիր հանգիստ ու  
առատ,  
բ Ապրիր խելոք շատերի պես.  
գ [Այնտեղ] Ապրիր այնտեղ ճոխ ու հանգիստ,  
նման խելոք շատերին,
- 369 Որ շեն հոգում, թե կորցրել է մարդը պատկերն  
իր վերին...
- 369—370 տողերի միջև.  
Ո՛չ. և ով գիտի այժմ կըտիրեն քո ունեցածին քո  
բացակայության ժամանակ:
- 371 ա Տանում է մինն այն դըղյակը, ուր մթնից մինչև  
լուսածագ.  
բ Տանում է մինն այն դըղյակը, ուր գիշերն մինչև  
լուսածագ.  
գ Տանում է մինն այն դըղյակը, ուր (հեշտանքի  
մտքով միանում են).
- 372—373 տողերի միջև՝ «2— ոչ»:  
373 տողի դիմաց, աչ լուսանցում՝ «3— ոչ»:  
376 տողից հետո՝  
Երկրորդ անգամ պնդում է— երկրորդ անգամ հեշտ  
ճամփեն է ասում— երրորդ անգամ պնդում է և տեսնում է  
< . . . >:

Ո՛չ, պապի (և այլն).

Մերը.

— Լսիր, պատանի... Ծս նա եմ, ով փորձում է ամենքին, ջոկում է հերոսն ու վատը.

[Ժամանակի] կյանքի սկզբից կանգնած այս ճամփաների մեջտեղ ես նայում եմ ամենքի ճամփին— բուրյն իմ առջևից են անց կենում. և նրանց եմ ցույց տալիս, որոնք այդպես հարցրելու են ինձ:

Ծս նրանց եմ սիրում, որոնք տենչում են անկարելին ու դժարն՝ են ջոկում, որոնք գիտեն կյանքի արժեքը և [ծախում են թանկ գնով] թանկի համար են ծախում, [որոնք]. ես նրանց անունն եմ պահում իմ մտքում այս անհամար բազմության մեջ:

Փորձող ծերունի ժամանակն եմ ես,

[Փորձեցի ես քեզ, անձնուրաց հոգի]

— Ո՛վ ամենագետ, որ միայն գիտես, ո՛վ անսուտ <1 անընթ.>:

Շարադրանքի ծախ լուսանցում.

որոնք ձգտում են իրենցից բարձրին, տեսնում են անտեսանելին:

Տոգերի միջև.

Ամենքն ու ամեն ինչ անցվորական է այս աշխարհում և մոռացության բաժին— միայն նրանք— որ ես հիշում եմ— ապրում են ինձ հետ:

388 տողից հետո՝

Մինչև լուսը կըհասնես—

Գիշեր ու ցերեկ է կծկում— գիշերը կծկում է— վրա է տալի— ցերեկը ետ բաց անում— թող գիշերը երկարի— ո՛չ, որդիս— ասում է— հիվանդ կա, [մեռել] կա, նրանց լիս է պետք:

1 դժվարն

(Առանց սանձի չի կարելի— խաղաղության ոգին է, սանձը տալիս և խրատում— անվրդով-տիրապես): Մովը երգել— որ սովորական ծով չի— մտքի անհուն անեզրություն—

487 Լըսի՛ր անհատակ քո մըթին հարկից,

489 Տուր ինձ հըրեղեն թռչուն Քամի ձին,

492 Ուր վարդ է երգում բյուլբյուլն Հազարան:

494—495 Լսի՛ր, երկրասասան ծովերի արքա,

Տուր ինձ հըրեղեն ձին, հասնեմ փափագիս,

496 ա թռչունը գտնեմ, հասցընեմ այգիս:

բ Բյուլբյուլը բերեմ անթառամ այգիս:

498 ա Արջերը մարդիկ—բանական հոգով:

բ Չար գազանը մարդ—բանական հոգով:

գ Բիրտ գազանը մարդ—բանական հոգով:

498 տողից հետո՝

Արևի հետ морск<оѣ> конь 22

499 [Այսպես կանչեց և փոթորիկն ելավ ծովից

անհատակ],

500 ա Օրը մըթնեց, ջուր խառնվեց, բացվեց անդունդքն

անհատակ,

բ Օրը մըթնեց, մթնեց երկինքն, բացվեց անդունդքն

անհատակ,

գ Օրը մըթնեց, մըթնեց երկինքն, իրար անցավ ույջ

աշխարհք,

դ Օրը մըթնեց, մթնեց երկինքն, տարերքն իրար

անցավ,

501 Եվ [ահռելի թոհ ու բոհից, պաղ ծով] <... >

502 ա Հուր հըրեղեն իր թևերով ցուաց թըռավ Քամի ձին.

բ Հուր հըրեղեն իր թևերով ցուաց սուրաց Քամի ձին.

503 Եվ մինչ էնպես հըզոր թռած սլանում էր դեպ

հոռուն.

505 ա Չգեց Արեգն իսկույն սանձը ու համբուրեց

ճակատը,

բ Չգեց Արեգն իսկույն սանձը, համբույր տվեց

ճակատին,

506 ա Ջրսպեց անզուսպ էն հզորին ձեռքով հաստատ ու

< . . . >

բ Քոսով-հեծավ, քամի դառավ ու շքացավ < . . . >

ձին

507—509 Դեպի երկինք թռավ Քամի ձին՝ տա արևին ու

վառի,

Դեպի գետինք ուզեց վարկի, գետինք՝ ջախջախի—

Բայց... հաղթահարված ու հընազանդ հաղթողին,

510 ա Լեզու առավ, մարդու նման էսպես խոսեց

հըզորին.

բ Լեզու առավ, մարդու նման էսպես դարձավ քաջ

տրդին.

511 — Ի՞նչ ես ուզում, քաջ հողածին, թե՞ երկինքը

քեզ հանեմ:

514 ա Շատ գնացին, քիչ գնացին— վերեն աստված

միայն գիտի.

բ Շատ սլացավ, քիչ սլացավ— վերեն աստված

միայն գիտի.

516 Անցավ ծովեր, խոլ անդունդներ, անապատներ,

առապար,

517 ա Եկավ հասավ [մի այլ] սահման, այստեղ առավ

նա դադար:

բ Եկավ հասավ [մի այլ] երկիր, այստեղ առավ նա

դադար:

518 Դադար առավ, լեզու եղավ ու խոսեց < . . . >

522 ա Աննրման է նրա անունն և հենց ինքը աննրման,

բ Նրա անունն Աննման է և հենց ինքը աննրման,

523 ա Նրա անունն կախարդել է, նրա թովչանքն ու

հըման.

530 տողից հետո՝

Խրատ շի տալիս ձին— ինճն է գնում:

531 Առաջ կերթաս—քո առաջը կըզա մի գետ ահագին,

533 Այդպես կախարդական այս աշխարհքի այն փերին

523—533 տողերի դիմաց, աչ լուսանցում՝

Իրական և բանաստեղծ <ական> աշխարհքների տարբերությունը— սահմանը— որտեղ դառը, փուշը, դժարը, գեղեցիկը վերջանում են, որտեղից սկսվում են անուշը, լավը:

535 ա Անկարող է < . . . > ամեն մարդ էլ շքանա

բ Ամեն մի մարդ շի կարող խըմել < . . . > այն

ջրից,

536—537 տողերի միջև, ձախ լուսանցում. «խրատը բողբե»:

542—543 Բայց դու եթե անցար— [մի քիչ կերթաս] և ահա

Սերվարդի երկնանրման ապարանքը կերևա.

545 Որ քեզ հաղթեն, ուշքըդ խլեն, [կուզեն] լինեն քեզ

խափան,

547—548 Հարյուր տարեկան հին մեռելը գերեզմանում

ծիծաղի:

Թե կարենաս արհամարհես, սիրտըդ [աքոր

սևացնես],

551 ա Թե շպետք է տաս պատասխան, գղջում շանցնի

քո մըտքեն,

բ Չպետք է դու տաս պատասխան, նույնիսկ անցնի

քո մըտքեն,

գ Չըպետք է դու տաս պատասխան— ոչ անցնի քո

մըտքեն,

դ Ոչ հայհոյանք, ոչ պատասխան պետք է շանցնի

քո մըտքեն.

553 ա Նրանք կըլռեն, և դու անփորձ ապարանքին

կըհասնես

բ Դու կհաղթես ու կընկատես ապարանքը < . . . >

558 Խոյն ու առյուծ հսկում են [միշտ] նրա երկու

կողմերին,

560 ա Եվ սովատանջ նրանք կանգնած, հսկում են միշտ

կատարի,

բ Եվ սովատանջ նրանք կանգնած, հսկում են անբուն

իրար մոտ,

561 Դու կըփոխես խոտը խոյին— միսը կըտաս

զազանին.

562 ա Ճամփա կըտան— ներս ու կըհասնես < . . . >  
բ Ճամփա կանեն < . . . > ու կըհասնես < . . . >

562 տողից հետո՝

Հոգու մաքրությունը— անարատությունը:

558—562 տողի դիմաց, ձախ լուսանցքում՝

Աշխարքի ու կյանքի կարգերը թարսած-խառնված  
են— պետք < է > ուղղես:

563 ներս կըմըտնես կախարդական ապարանքը < 1  
անընթ. > բույր,

569—571 Իր լուսեղեն անկողնի մեջ քնած է վեհ տիրուհին—  
Զգույշ կացիր ու լավ հիշիր— մոտ շրգնաս դու  
նըրան.

Քո հոգեղեն սիրտը շի դիմանալ փորձություն

Վերջին տողի դիմաց, ձախ լուսանցքում՝

«Գեղեցկություն է ? Աննըման ?»:

## ՉԱՓԱԾՈՒ ՀԱՏՎԱԾՆԵՐ\*

< 1 >

Գնաց առաջ, ճամփան կտրեց, այսպես խոսեց.  
— Ա՛յ աստուծո վեհ պաշտոնյա, հյուր առ գիշերս,  
Պանդուխտ մարդ եմ, նոր եմ եկել, ծանոթ չունեմ  
էս քաղքում:

— Արի ինձ հետ, պանդուխտ եղբայր, հյուր ենք  
բոլորս նախարհքում,

Հյուրն աստծո ղրրկած մարդն է, բարի լինի քո  
ճամփան,

Ասավ երգիչն անուշ ու մեղմ օտարական այս  
մարդուն,

< . . . . . > տարավ տուն:

Ծրբ իրիկունն հացի նստան տանտերն ու հյուրն իր  
օտար,

Երգիչն այսպես խոսք բաց արավ, հարցմունք  
արավ սիրաբար.

10 — Պատմիր լսենք, [ ո՛վ ] բարեկամ, շատ  
աշխարհք ես ման եկել,  
Ի՞նչ ես տեսել, ի՞նչ ես լրսել— պատմիր լսենք  
թող մենք էլ:

— Շատ աշխարհք եմ ես ման եկել, խոսեց Արեգն  
ու ասաց,

Ու շատ զարմանք բան եմ տեսել, ոչ տեսնրված,  
ոչ լսված.

\* Բնագրային տարբերությունները բերվում են լուրաբանչյուր հատվածից հետո:

Բայց ինչ այսօր աչքով տեսա ես քեզանից էս  
բաղքում,  
Այդպես դարմանք բան չեմ տեսել դեռ բազմափորձ  
իմ կյանքում:  
Այսօր շվար կանգնած էի մինարեի սյատի տակ,  
Հագարավոր ամբոխի մեջ պանդուխտ, անօգ ու  
մենակ.  
Երևացիր դու գեղեցիկ, դեմքդ զվարթ ու պայծառ  
Ոգևորված, ուրախ-ուրախ վե՛ր մինարեն

բարձրացար—  
20 Ձայնըդ այնպես [լիքն] ու զըվարթ, լի ավյունով  
գերբնական,  
Շատ-շատերի ուշքը տարավ, <1 անընթ.>  
եղան ու ընկան:

Հափշտակված <...> ձենից քո երգի,  
Ճախրում էին գլխիդ շուրջը թռչունները երկընթի—  
Բայց իջնելիս լալ սկըսար, մազերդ փետտել,  
[քեզ] կոծել,  
էդ տարօրեն քո արարքից ես ապշած եմ մնացել:  
— Հաց կեր, պանդուխտ իմ բարեկամ, խնդրեց  
երգիչն Արեգին,  
Այդպես անզգույշ ձեռք մի տար դու անբուժելի իմ  
վերքին.

— Աստված շանի, ես չեմ կտրիլ քո հացը,  
Մինչև չիմանամ ինչն է քո տանջող գաղտնիքը:  
30 Գուցե կարենամ քեզ օգնել.  
— Այդպես ինձ խիստ մի անարգիր, ով բարի հյուր,  
Առանց այն էլ շատ եմ <...> ու տանջված.  
Եվ թե ազնիվ մի մարդ ես դու ու սիրտ ունես  
կարեկից,  
Պատմիր լըսենք ինչեր կասես քո ման եկած  
աշխարհքից.  
Գուցե առժամ ես մոռանամ իմ այս վիշտը  
<...>

Որ աշխարհքում դարձրել է ինձ զարմանքի առարկա.  
— Ո՛չ, անկարելի է:

— Լսիր դու ինձ, համառ տղա, այս անմահների  
գաղտնիքն է:  
Օրը արդեն տարածամել, կախվել արևն իր մըտին,  
40 Դրախտի ձայներն հընչում էին երեկոյան մեղեդին,  
Եվ երջանիկ այն գիշերի ստվերները անասան  
Ծածկում էին անմահների օթևանը սրբազան:  
Ես գընում եմ. կախարդական տեսարաններ  
նորանոր,

Մեկը մյուսից ըսքանչելի, մեկը մյուսից  
փառավոր...  
Բայց ոչ մի տեղ չեմ հանդիպում էլ նրանցից ոչ  
մեկին,  
Անհուն ցավով ու կարոտով տառապում է իմ  
հոգին:

Ահա կապույտ եթերային երկնանքման ապարանք,  
Այստեղ, գուցե, ասում եմ ես, կըհանդիպեն ինձ  
\* նրբանք.  
Սիրտ եմ առնում, ներս եմ մըտնում— դատարկ  
ու լուռ հառավոր.  
50 [Բարձր ձայնով] ձայն եմ տալի ու հառաչում  
սրտախոտր—  
Այնժամ մի ձայն հանկարծ թնդաց— բլավթառ,  
արի՛ սրան տար...  
Ու մըթնեցին իմ աչքերը, կորավ շուրջս ինչ որ  
կար.

Մին էլ տեսա կրկին կանգնած մինարեի  
[գագաթին].  
Դարձյալ կեղտոտ այս քաղաքում, շուրջս ամբոխն  
<...>  
Հուր կարոտով <...> ամեն տարի էն օրեն  
Ոգևորված ցնորքներով՝ դիմում եմ ես մինարեն,  
Նրանց [նվիրած] <...> իմ երգերը...  
Թովված ցած են իջնում <...> հավքերն  
երկընթից,  
Բայց, ա՛խ, չըկա, էլ չի գալիս այն թռչունը հին  
ծանոթ.

60 Որ ինձ կըրկին առնի տանի այն դրախտը— նրանց մոտ.

Եվ իջնում եմ ես հուսահատ ու կարոտից խելագար,  
Կուրծքս կոծում, իզուր լալիս, տանջվում <...>  
ու տրկար:

— Ծանր է, ավա՜ղ, խոր հառաչեց և Արեգը  
կարեկից,  
Տեսել եմ ես թագավորներ՝ զրկված գահից ու  
թագից.

Տեսել եմ շատ հարուստ մարդիկ, կորցրել են  
բախտ ու զանձ,

Քո կորուստը մեծ է ողջից ու քո վիշտը գերազանց.  
Քամբ շինողն էլ թեև զրկվեց սիրուն, < 1  
անընթ. > իր կյանքի,

Մահը մերն է, մենք մահինը— այդպես է կարգն  
աշխարհքի.

Մեռած կնոջ կարող է միշտ փոխարինել ուրիշ կին,  
70 Եվ երբ ծընի— մարդու զավակ միշտ խնդում է իր  
կյանքին—

Բայց ո՞վ կարի վերադարձնել քո կորուստը  
երկնային,

[Ճշմարիտ են քո տանջանքը]— դարման չըկա քո  
ցավին.

1 ա Առաջ գնաց կրտրեց ճամփեն,  
բ Առաջ անցավ կրտրեց ճամփեն,

2—3 Տեսող բարով, վե՛հ պաշտոնյա, հյուր առ գիշերս,  
Պանդուխտ մարդ եմ, նոր եմ եկել, ծանոթ չունեմ այս  
քաղքում.

8—10 Երբ իրիկունն հաց նստեցին տանտերն ու հյուրն իր օտար,  
Երգիչն աչսպես խոսք բաց արավ ու հարց տվեց սիրաբար.  
— Պատմիր լսենք, ո՞վ բարեկամ, շատ աշխարհք ես դու տեսել,

12 — Շատ աշխարհք եմ ես ման եկել, խոսաց Շնորհքն ու ասաց,

14—15 Բայց ինչ այսօր աչքով տեսա ես քեզանից այս քաղքում,  
Այդպես զարմանք բան չեմ տեսել ես բազմափորձ իմ

17 ա Չէի գիտում թե ուր գնամ անծանոթ տեղ— ես մենակ,  
բ Չգիտեի, թե ուր գնամ՝ պանդուխտ, անօգ ու մենակ,

17 տողի դիմաց, աչ լուսանցքում՝

Ու ծրփում էր անհամար ամբոխը անտառի նման:

18 ա Եվ դու հանկարծ երևացիր՝ ուրախ, զվարթ ու պայծառ  
բ Եվ դու հանկարծ երևացիր՝ դեմքդ զվարթ ու պայծառ  
գ Դու եկար, ամբոխը քեզ ճամփա բացեց:

19—25 Եվ խնդալով, ուրախ-ուրախ վե՛ր մինարեն բարձրացար—  
Ծրոզ նույնպես ուրախ-զվարթ՝ լի գերբնական ավյունով,  
Շատ-շատերի ուշքը գնաց, < . . . > եղան ու ընկան:  
Տարված-թովված ձայներից < . . . >

Պարում էին գլխիդ շուրջը Թռչունները երկրնքի—

Բայց իջնելիս լավ սկսեցիր, մազերդ փետտել, քեզ ծծե՛լ,  
Այդ տարօրեն քո արարքից ես ապշած եմ մնացել:

26 ա — Հաց կեր, պանդուխտ իմ բարեկամ, խնդրեց երգիչն  
տխրագին,  
բ — Հաց կեր, պանդուխտ իմ բարեկամ, խնդրեց երգիչն  
Շնորհքին,

27 էլ անզգույշ մի մոտենար իմ [տարօրեն] գաղտնիքին.

27 տողից հետո՝

[Որի միայն հիշատակը < . . . > հանում է ինձ խելքից...  
Հաց կեր... և թե բարի ես դու և սիրտ ունես կարեկից.

— Աստված շանի, ես չեմ կարող կտրել հացը մի մարդի,  
< . . . > գաղտնիքն իմ սրտի.

Պատմիր մի բան, ինչ ես տեսել < . . . >

Գուցե այնժամ < 1 անընթ. >, ինչ տանջում է ինձ այնքան].

Այս ջերված հատվածի դիմաց, աչ լուսանցքում.

Որ հրապ<արակավ> աշխարհքի առաջ հառաչում է, լալիս  
ու լսում իրա հյուրի մասին— Ով իմանա, երևի քո ցանկո-  
թյունը մի այնպիսի հանցանք է, որ չի կարելի ասել, և դու  
ծածուկ ոճրագործ ես:

36 Որ աշխարհքում շինել է ինձ զարմանքի առարկա.

39 Օրը արդեն տարածամել, մոտ էր արևն իր մըտին.

41—42 Եվ երջանիկ այն գիշերի ստվերները մեղմաշարժ  
Մածկում էին անմահների օթևանը խաղաղ:

42 տողից հետո՝

[Ես շվարած ապուշ կանգնած միտք եմ անում ինձ < 1  
անընթ. >

Ինչ կորցրի իմ թուլութիւնը— մի վաղանցուկ համարչորով]  
43 Առաջ եմ գնում. կախարդական տեսարաններ նորանոր,  
47 ա Ահա կանգնած եթերային երկնանրման ապարանք,  
բ Ահա շքեղ եթերային երկնանրման ապարանք,  
49 ա Սիրտ եմ անում, ներս եմ մըտնում, կանչում դատարկ

պալատում,  
բ Սիրտ եմ անում, ներս եմ մըտնում, ողջ դատարկ եմ <...>,  
50 ա Կանչում եմ դատարկ պալատում ու հառաչում սրտախոր—  
բ Կանչում եմ դատարկ սրահներում ու հառաչեցի սրտախոր—  
գ [Ման եմ գալի], ձայն եմ տալի ու հառաչում սրտախոր—  
դ Ձայն տվի, կանչեցի, հառաչեցի սրտախոր—  
ե Ափսոսանքի [թառանչեցրով լցնում եմ սրահները]

սրտնեղած—  
51 ա Հանկարծ մի ձայն թունդ ծղրտաց— քյավթառ, արի՛ սրան  
տար...  
բ Հանկարծ մի ձայն խոսեց, կանչեց— քյավթառ, արի՛ սրան  
տար...

գ Մեկ էլ հանկարծ երեացիք <...>  
53 Մեկ էլ տեսա կրկին կանգնած միներեի <1 անընթ. >  
55 Հուր կարոտով ամեն անգամ էն օրեն  
56 ա Ոգի բլած ուրախ-ուրախ ես դիմում եմ միներեն,  
բ Միտ էն օրը ուրախ-ուրախ դիմում եմ ես միներեն,  
գ Այն օրվանից ուրախ-ուրախ դիմում եմ ես միներեն,  
դ Ուրախ-ուրախ ու հուսալի դիմում եմ ես միներեն,  
ե Ոգևորված հույսերով դիմում եմ ես միներեն,

57 տողի դիմաց. աջ լուսանցքում.  
Ու իմ երգերը շեն նվիրված աստծուն, այլ նրանց—  
58 էլ երկնքից ցած եմ իշնում <...> թովված հավքերն,  
59 ա Բայց ա՛խ, չըկա, էլ չի գալիս այն թռչունը ինձ ծանոթ,  
բ Բայց, ա՛խ, չըկա, էլ չի գալիս այն թռչունը իմ ծանոթ,  
62 ա Կուրծքս կոծում, իզուր լալիս ու հառաչում ապիկար,  
բ Կուրծքս կոծում, իզուր լալիս, տանջվում այսպես <...>

62 տողի դիմաց, աջ լուսանցքում.  
[Ընդմիշտ, հավետ] զրկված դրախտից ու զուրկ նրանցից,  
ես չեմ աղոթում աստծուն <...>

62 տողից հետո՝  
Ու տանջվում եմ այսպես <...> մինչև մյուս տարի նույն  
օրը.

Քե գուցե <...>  
63 Մանր է, ավա՛ղ, խոր հառաչեց ե Շնորհքը կարեկից.  
67 ա Թամբ շինողն էլ թեև զրկվեց [կնոջից ու զավակներից, բայց  
կին, զավակներ էլ կարելի է ունենալ <1 անընթ. > ու վերջը  
կառողջանա— բայց մի կնոջ կփոխարինի մի ուրիշը և զավակն  
էլ իրանն է կրկին]:  
բ Թամբ շինողն էլ թեև զրկվեց սիրելիներից իր կյանքի,  
68 ա Բայց մահը մերն է մենք մահինը— այդպես է կարգն  
աշխարհքի.

բ <...> Եվ կարգն է այդ աշխարհի.  
70 ա Եվ նոր ծընի մարդու զավակ— խնդում է միշտ իմ կյանքին—  
բ Եվ նրանից ծնած որդին— մարդու զավակն է կրկին,  
գ Եվ նոր որդին— մարդու զավակն է կրկին,  
71 Բայց ո՛վ կարի վերադարձնել երկնային էն կորած <...>  
72 [Այդպես լուռ պետք է տանջվես]— դարման չկա քո ցավին

<2>

Ես քեզ եմ հայտնում— այդին առաջիս  
Մի ճիթ դեղապետ շըտվին խեղճիս.  
Իմ հիվանդ որդին ծաղիկ հասակում  
խաղող կանչելով մեռավ իմ գրկում,  
5 Այս լիթն աշխարհից իմ որդին գնաց,  
Աչքը դեպի դուրս, լեզուն ցամաքած,  
<...> գալիս է քեզ մոտ.

1—2 Ես քեզ եմ հայտնում— լի այգու միջին  
Մի ողկույզ շըտվին խեղճիս.  
5 Այս լիթն աշխարհ <ում> նա մեռավ,  
6 ա Շրթունքը ցամաք, լեզուն շորացած,  
բ Աչքը դեպի ետ, ու սիրտը կարոտ,

— Է՛լ եմ ասում, ա՛յ պատանի, ետ կաց տենչից  
քո համառ,  
Հիշիր, գուցե մեկը ունես ավելի թանկ քեզ համար,  
Գուցե ունես մի սրտակից կամ մուրազով սիրած  
կին,  
Անօգնական, կարոտ ծնող աչքը կթած քո  
ճամփին:

5 Գուցե ունես դու հայրենիք, մի թանկագին  
նպատակ,  
Ողջ կկորցնես քո անհամբեր հետաքրքրությունը  
այդ դատարկ,  
Ինչպես թշվառ այն երգիչը, հաղթված անզուսպ  
իր ախտից,  
Մի համբույրով հավետ զրկվեց երանություն  
դրախտից:

— Ո՛չ, մեծ արքա, ես չեմ եկել որպես դատարկ  
հարցասեր,

10 Եվ ծնողի օգնություն, մեծ նպատակ, կնոջ սեր  
Գումարվում են ողջ այս տենչի մեջ, որ քո  
գաղտնիքն իմանամ,  
Թե կարող եմ մի ճար անեմ, թե չէ՝ թեկուզ  
մահանամ:

1-2 Է՛լ եմ ասում, լավ միտք արա, ետ կաց տենչից քո համառ,  
Հիշիր, գուցե մեկը ունես, կյանքդ թանկ է նրա համար,  
3 ա Գուցե ունես մի սրտակից, սիրող ընկեր, կամ կին  
բ Գուցե ունես մի սրտակից ու կամ սրտով սիրած կին  
4 Քեզինչ հեռու կարոտ ծնող աչքը կթած քո ճամփին:  
7 Ինչպես ագահ, անհամբեր այն երգիչը, որ արգելված  
համբույրով  
8 ա Զրկվեց այն եղեմից հավիտյան  
բ Մի համբույրով հավետ զրկվեց այն երջանիկ հուրինների  
դրախտից:

10 ա Իսկ ծնողներ, մեծ նպատակ  
բ Իսկ ծնողի օգնություն, մեծ հայրենիք, կնոջ սեր  
11 ա Ողջ ամփոփվում են ինձ համար  
բ Ողջ ինձ համար այն են միայն, որ քո գաղտնիքն իմանամ,  
գ Իսկ իմ միակ նպատակն է, որ քո գաղտնիքն իմանամ,

Ամբողջ տարին տքնում, ջանում, մի թամբ է  
միայն նա շինում,  
Հազար-հազար փող է ծախսում, գոհարներով  
զարդարում,  
Տարվա վերջին, երբ ծախում է իր վաստակը  
թանկագին,  
Ետ է կանչում գնող մարդուն, մուրճը առնում  
ահագին,

5 Թամբը ջարդում—ջուր է շինում, [փշրում] ջանքը  
ողջ տարվան,  
Ապուշ կտրած [իր] մուշտարու փողը տալիս ետ  
իրան:  
Գնա, առաջ դեռ իմացիր գաղտնիքն որն է  
վարպետի,

Ապա արի— իմը կասեմ,  
Երբ իմանաս նորա գաղտնիքն:

4 Ետ է կանչում գնող մարդուն, թամբը առնում է կրկին,  
5 Թամբը առնում, մուրճը առնում և խուլական բարկություն  
< . . . > փշրում ջանքը ողջ տարվան,  
6-7 Ու ապշած իր մուշտարու փողը տալիս ետ իրան:  
Գնա, առաջ դեռ իմացիր նրա գաղտնիքն որն է,



ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՒԲՈՒԼ

Հին ժամանակները, երբ դեռ գառն ու գելը միասին էին արածում, երբ գետերը կաթն ու մեղր էին հոսում, արևուսի կողմերում թագավորում էր... Այլամ թագավորը (որ նստում էր իրեն Հուրան քաղաքում):

\* Էն երկնքի [պայծառ] արեգակի նման Այլամ թագավորը, որ իր լույսն ու ջերմութունը հավասար<sup>1</sup> տարածում է աշխարհքի<sup>2</sup> վրա, էն գարունքվա անձրևի նման Այլամ թագավորը<sup>3</sup>. որ երկնքից լիառատ թափվում է ամենքի վրա, ամենքին էլ զովացնում ու լիացնում անխտիր<sup>4</sup>:

Էսպես թագավորեց երկար ժամանակ:

Երբ որ ծերացավ, տեսավ<sup>5</sup> մի ոտը արդեն գերեզմանումն է, միտք արավ մի էնպես բան շինի, որ քանի կենդանի է<sup>6</sup>, իրեն համար օրհնանքատեղ լինի ու մխիթարանք, մահից հետո՝ ողորմատեղ ու բարի հիշատակ<sup>7</sup>:

Ու օխտը ճամփի բերանում շինեց Անթառամ այգին:

Անթառամ այգի մի՛ ասիլ՝ անմահական դրախտ ասա. լիքը զրնգան փղբլուրներով ու կարկաշուն վտակներով, հաղարգունի հոտավետ ծաղիկներով, ամեն տեսակ երեններով ու նախշուն երգող հավքերով: [Էն դրախտից էլ ծառ բերել տվեց,

\* Էն երկնքի պայծառ արևի նման անխտիր ամենքի սիրտն էլ ուրախացնում ու ջերմացնում էր նա, էն գարունքվա անձրևի նման ամենքի վրա էլ հավասար [առատորեն] թափվում էր նրա բարությունը:

1 անխտիր 2 ամենքի 3 նման էր նա 4 հավասար 5 Երբ որ տեսավ ծերացել է 6 կենդանություն օրով 7 մահից հետո էլ ողորմատեղ ու բարի հիշատակ մնա աշխարհքի երեսին:

մեջը տնկեց, պահապաններ դրեց ու պատվիրեց<sup>1</sup>, որ նկողմնացողին, ուտող-տանողին չէ շինի: Ու օխտը ճամփով ամեն կողմից արձակ-համարձակ գալիս էին անցվորները<sup>2</sup>, [իբր դրախտում ուտում-խմում, լիանում, անց կենում գնում]:

Ժամանակ է անց կենում: Հուրան քաղաքում մի աղքատ<sup>3</sup> կին է լինում: Օրերից մի օր էս աղքատ<sup>4</sup> կնկա երեսն հիվանդանում է ու սրտով խաղող է ուզում: Մերը վեր է կենում գնում Անթառամ այգին, հիվանդ երեսի համար խաղող բերի<sup>5</sup>:

— Խաղող չկա<sup>6</sup>,— սառն ու կոպիտ պատասխանում են պահապանները:

— Հապա էդ ի՞նչ է, խաղողն այգին լիքն է:

— Լիքն է լիքը, քեզ ի՞նչ. քեզ համար հո չեն լցրել...

Մոր սիրտ է, ետ չի դառնում, բայց ինչքան կանգնում է, երեսը դեմ անում, բան չեն տալիս, դուրս են անում, այգու դռները ետևից փակում:

Դառն ու դատարկ ետ է գալիս<sup>7</sup>:

— Չտվին, որդի:

[Երեսն]<sup>8</sup> էն գիշեր դժարանում է, սկսում զառանցել՝ խաղող ուզել, հենց էնպես խաղող կանչելով էլ մոր գրկին հոգին ավանդում է:

Լուսաբացին սգավոր մերը վեր է կենում, ձեռները դեպի երկինք տարածում ու ճառագած արևի դեմն աղաղակում<sup>9</sup>.

— Ո՛վ լուսեղեն, դռներդ բաց,

Հող ու ջրի առատ աստված,

Ո՛վ, որ էսքան բարիք ու փառք,

Աշխարհքն անծեր, ծովերն անտակ՝

Ըստեղծել ես, փրոնել, լրցրել,

Ո՛վ զըթառատ, քեզ եմ խընդրել.

Ինչպես որդիս իր մոր զըրկին<sup>10</sup>

1 Պատվեր տվեց Չա մարդիկ գալիս են՝ էն լիքը դրախտումը, բ. գալիս էին ճամփորդները 3 պատավ 4 պատավ 5 որ հիվանդ երեսի համար խաղող ուզի. 6—խաղողն ո՛վ է տվել, 7 Դառը սրտով ու դատարկ ձեռով տուն է վերադառնում աղքատ կինը: 8 հիվանդն 9 դեմը կանչում. 10 իր ցասումն եմ կանչում նրանց իրենց բարու վրա:

Կրնա՛ց՝ կարոտ, աչքն աշխարհքին,  
Նրբանք էլ թող իրենց կյանքից՝  
Կարոտ գրնան լիքն աշխարհքից՝  
Դրախտ այգին կըտրի շոր փուշ,  
Իրենք՝ գազան շար ու ապուշ։\*

Կանչում են թե չէ՝ աստծու հրամանով [փուշ ու տատաղ է կտրում] Անթառամ այգին, ծառը մացառ է կտրում, վարդը՝ փուշ, իսկ պահապան մարդիկ՝ գազաններ, ու մոմալուով ընկրնում են մացառուտները:

Գուշը գնում է հասնում Ալամ թագավորին: Զարհուրում է ծերունի Ալամ թագավորը իր ոսկե գահի վրա:

Հրաման է հանում, կանչում, հավաքում իր տերության աշխարհք տեսած ծեր ու բազմափորձ մարդկանց:

Ասում է.

— Չեզանից ո՞վ է տեսել կամ ո՞վ է իմացել էսպես մի տեփլիք: Էս ի՞նչ պատիժ է, որ գալիս է ինձ ու իմ աշխարհքի վրա: Ի՞նչ ճար ու հնար գիտեք, որ իմ այգին էլ ետ դառնա էն՝ անուշ դրախտը, իմ մարդիկը էլ ետ դառնան էն՝ առաջվան քնքուշ ու բանական մարդիկը:

Մերունիները խոնարհում են իրենց ալեզարդ գլուխները.

Ասում են՝.

1 կյանքում 2 կարոտ մնան լիքն աշխարհքում.

\* Սեպհր տարբերակի 5-րդ և 8-րդ էջերի լուսանջրներում կարմիր թանաքով գրված է երկու քառատող, որոնք ներկայացնում են այս շափածո հատվածի նախնական խմբագրությունը.

Թող կարոտ մնան իրենց փափագին  
Տատասկ կտրի թող անթառամ այգին,  
Մառը թող մացառ, վարդը փուշ դառնա,  
Տճրը վա՛յ դրախտ կանչելով մընա:

Աղքատն եկել է՝ դատարկ գրնացել,  
Գառնացած սրտով [այգին] անիծել,  
Գազան է [կտրել] դարձել մարդը անզուժ,  
[Փուշ] Տատասկ է կտրել վարդը անօգուտ:

3 Այգին դառնա էլ էն 4 իմ մարդիկը դառնան էլ էն 5 ու էսպես են պատասխանում.

— Ապրած կենաս, Ալամ թագավոր: Էս աշխարհքը որ կա՛ցավի տուն է, ցավն էլ որ կա՛ հաղար տեսակ: Եվ ցավն էլ հոանշունը սարն ու քարը չպետք է քաշեն, մարդն է քաշելու: Դու ոչ առաջինն ես, ոչ էլ վերջինն ես լինելու: Մենք չենք տեսել, բայց լսել ենք, որ քեզանից ու [մեզանից] առաջ էլ պատահել է՝ գորտ ու գազան մարդ են դառել, մարդը դառել գել կամ արջ:

Բայց թե ինչու է էս պատիժը այժմ գալիս քեզ վրա՝ անգետ ու մութ մարդիկ ենք մենք, էդ զրկողը կիմանա: Մենք էն գիտենք, որ նա, ով որ ցավ է տվել ու աղետ, ստեղծել է ամեն ցավի դեղն ու ճարն՝ էլ իրեն հետ: Եվ աշխարհքում մի ցավ չկա, որ գիտությունը նրա դեղն ու ճարը չիմանա: Կանչի՛ր, թող գան քո տերության մարդիկն ուսյալ ու գիտուն, և քո մարդկանց և քո այգուն նրանք կանեն օգնություն:

Էսպես են ասում աշխարհատես՝ ծերերը, ու պատվեր է տալիս Ալամ թագավորը, հրավիրում, հավաքում իր տերության ամեն կողմերից անվանի՞ գիտուններին:

Ասում է.

— Ո՞վ գիտուններ, դուք, որ քննել եք ու իմացել կյանքի տակն ու գլուխը, հայտնին ու գաղտնին, սկիզբն ու վերջը. ասացեք տեսնեմ՝ ի՞նչ հրաշք է սա, որ ծերության անկարօրով տեսնում եմ ես: Բերե՛ք, արե՛ք ինչ դեղ ու ճար ունեք՝ ձեր ձեռին, ետ տվեք ինձ բարով ու բույրով լիքը՝ իմ եղեմական այգին, վերադարձրեք իմ մարդկանցը իրենց կորցրած ազնիվ տիպն ու հոգին:

Գիտունները գլուխ են վեր բերում ու ասում են.

— Ապրած կենաս, Ալամ թագավոր: Էս աշխարհքում ամեն մի բան ունի իրեն պատճառը: Էն պատճառն էլ ունի իրեն պատճառը: Էսպես անվերջ՝ մինչև գնաք, հասնեք պատճառների պատճառին ու սկիզբների սկիզբը: Եվ քանի որ ամեն մի բան ունի իրեն մի պատճառ՝, իսկ էն, ինչ որ պատճառ ունի, ունի նաև իրեն ճար, մի՛ տրտմիր դու, մեծ թագավոր,

1 Մարդը պետք է ցավը քաշի, ոչ թե ցավը մարդը պետք <...> 2 դարձան 3 էն աշխարհատես 4 բոլոր անվանի 5 ունեք դուք 6 կրկին բարով ու բույրով լցրեք 7 բանականությունը 8 Գլուխ են վեր բերում գիտունները 9 էսպես անվերջ՝ մինչև պատճառների պատճառն ու սկիզբների սկիզբը:

մեզ տուր միայն ժամանակ, որ քննենք ու էս ցավի պատ-  
ճառն ու ճարն իմանանք:

Ու թագավորը քառսուն օր, քառսուն գիշեր ժամանակ է  
տալիս<sup>1</sup>, որ զման էս ցավի պատճառն ու ճարն իմանան:

Գնում են, քառսուն օր, քառսուն գիշեր քննում, զննում ու  
ես գալիս, հայտնում<sup>2</sup>, թե՛ թագավորն ապրած կենա, չգտանք:

Մենակ փակվում է<sup>3</sup> իրեն պալատում ծերունի Ալամ թա-  
գավորը: Տարակուսած միտք է անում<sup>4</sup>:

\* էս միտք անելու ժամանակ [հանկարծ] նրա առջիւր  
հայտնվում է մի սիպտակահեր ծերունի:

Ասում է.

— Մի՛ հուսահատվիր, Ալամ թագավոր, գիտեմ<sup>5</sup>, մեծ է քո  
ցավը, բայց էդ մեծ ցավի ճարն էլ կա աշխարհքում: [Եվ]  
Եթե կուզես իմանաս, [էն] քո ցավի ճարը Հազարան Բլբուլն  
է, որ երգում է հազար ձենով ու հազար ձևով, ու երգի հետ  
[բուրյան] մշտադալար վարդ է թափում փնջերով, որ անու-  
շահտությունից մարդու գլխից խելքը հանում է, ուշքը տա-  
նում: Եթե մի օր արշալուսին նա խոսի քո այգում, փուշ ու  
տատասկ վարդ կծաղկեն նորից նոր, ու պահպան քո ծա-  
ռաները, որ դառել են գել ու արջ, ետ կդառնան քնքույշ մար-  
դիկ, ազնիվ ու լավ, բան առաջ:

էս որ լսում է, ուրախությունից Ալամ թագավորի սիրտը  
վարդ է պատում:

— Բայց ո՞րտեղ է ապրում էդ հրաշալի հավքը, ով ազնիվ  
անծանոթ<sup>6</sup>:

— Միշտ երջանիկ, կախարդական անկոխ, անմեռ աշ-  
խարհքում,— պատասխանում է ծերունին ու քամի դառնում,  
չքվում, չբանում թագավորի աչքից:

Ալամ թագավորը երեք որդի է ունենում: Երկուսը՝ առողջ  
ու քաջ, կտրիճ տղամարդիկ, երրորդը՝ մի ջահել, երազուն

պատանի, ուշքն ու միտքը՝ միշտ աղջիկների, ծաղիկների ու  
աստղերի հետ: Կանչում է իր որդիներին: Որդիքը գալիս են,  
գլուխ են վեր բերում, առաջին կանգնում:

Ասում է.

— Ա՛յ որդիք, տեսնում եք, մեր տերության զարդն ու  
փառքը փչացավ և միակ ճարն ու հնարը Հազարան Բլբուլն է,  
որ ապրում է կախարդական աշխարհքում: Ծս արդեն ծերացել  
եմ, ուժից ընկել, մի ոտս գերեզմանումն է, կտրիճ տղերք եք,  
ձեր նժույզները նստեցեք, ձեր զենքերն առեք, զնացեք [տե-  
սեք] կախարդական աշխարհքը, Հազարան Բլբուլն գտեք,  
բերեք [որ] մեր այգումը երգի, որ նորից փուշը վարդ դառնա,  
զազանը՝ մարդ...<sup>2</sup>

Ասում է. մեծ տղեն ու միջնեկ տղեն ձի են նստում, ճամ-  
փա ընկնում [ղեպի կախարդական աշխարհ]: Պուճուր տղեն  
էլ է ուզում գնա, շեն թողնում: Բայց չի լինում. ինչ անում են,  
չեն անում, շեն կարողանում ետ պահեն, սա էլ վեր է կենում,  
նրանց ետևից գնում:

Ո՞րտեղ ես, կախարդական աշխարհք, քեզ ենք գալիս:

Գնում են, գնում, շատ են զնում, թե քիչ, էդ էլ իրանջ  
կիմանային, զնում են հասնում մի տեղ, որ երեք ճամփա  
բաժանվում են, մինը՝ մեծ, մինը՝ միջնեկ, մինն էլ՝ նեղ. ճամ-  
փաբաժանումն էլ նստած մի ալևոր մարդ:

Առաջ մեծ ախպերն է հասնում: Ոչ բարով է տալիս ալևո-  
րին<sup>3</sup>, ոչ ուշք է դարձնում, ոչ բան է հարցնում. կողքովն անց  
է կենում, մեծ ճամփեն բռնում, զնում\*:

Գալիս է միջնեկ ախպերը: Սա էլ մեծ ախպոր նման ա-  
ռանց բարով, աստծու բարին ասելու ալևորի կողքովն անց է  
կենում, միջի՛ ճամփեն ընկնում զնում:

Սրանցից ետը գալիս է փոքր ախպերը<sup>5</sup>:

— Բարի օր, պապի՛:

— Աստծու բարին, որդի ջան:

1 միտքն էլ 2 [— լավ ես ասում, ա՛յ հեր,— ասում են տղ <անե-  
րը >]: 3 էն ալևոր մարդուն,

\* Այս պարբերության դիմաց, աչ լուսանցքում. «Ձ 26 Բարի օր, պապի.  
աստված բանդ ոչ հաջողի— Աստծու բարին, որդի, քու բանն էլ աստված  
ոչ հաջողի»: 4 միջնեկ 5 փոքր՝ Արեգը:

1 ժամանակ տվեց 2 զնացին, քառսուն օր, քառսուն գիշեր քննեցին,  
զննեցին ու ետ եկան, հայտնեցին, 3 Ու մենակ փակվեց 4 միտք էր անում:

\* Այստեղից սկսած՝ տեքստը տրվում է ըստ սևագիր շարադրանքի:

5 եթե 6 [Ասում է]— Ո՞րտեղ է հազարան բլբուլը, ո՞վ բարի ան-  
ծանոթ:

— Պապի, էստեղ ի՞նչ ես շինում:

— Ճամփա եմ ցույց տալիս<sup>1</sup>:

— Դե ցույց տուր<sup>2</sup>, պապի, ո՞րն է էն ճանապարհը, որ կախարդական աշխարհքն է տանում:

— Դժար է կախարդական աշխարհքի ճամփեն: Ի՞նչ ունենա կախարդական աշխարհքում, ա՛յ որդի: Զա՛հել ես, անփորձ ես, ինչո՞ւ ես գլուխդ փորձանքի տալիս<sup>3</sup>:

— Զէ՛, պապի, ինչ էլ որ լինի, պետք է գնամ: Մեր Անթառամ այդին փուշ ու տատասկ է կտրել, մեր մարդիկը գազան են դառել: Պետք է գնամ կախարդական աշխարհքից Հազարան Բուլբուլը բերեմ, որ փուշը<sup>4</sup> նորից վարդ դառնա, գազանը<sup>5</sup> մարդ: [Ոչ մի փորձանք ինձ չի վախեցնում, դու միայն ինձ [ճանապարհ] ճամփեն ցույց տուր, պապի:]\*

— Լսի՛ր, խիղախ տղա, էն ճամփեն ես դու փնտրում, նեղ [ու] քարքարոտ էն կածանը, որ կորչում է ամպերում: Անդարձ է էն ճամփի անունը, ով որ էն ճամփեն ընկավ՝ էլ ետ գալ չկա նրան: Ծամփեն մին է— ցավը հազար. հազար տեսակ տառապանք բռնած են էն դժար ճամփեն ու մաշում են սմեն կյանք: Սարեր կան էն ճամփեն կապած<sup>6</sup> թռչունը շի անց կենում, խոր անդունդներ, որ նայելիս մարդու աչք է սևանում: Հուր անապատ, որ անցնելու ամբողջ կյանքդ չի հերիք, ամեն քայլում դե ու հրեշ, ամեն կողմից փոթորիկ...

— Ի՞նչ են դեեր ու հրեշներ, երկյուղ շունեմ ես, պապի, Կ իմ ճամփեն ոչ փոթորիկ, ոչ տառապանք կկապի. սով, նեղություն չեմ հասկանում, չեմ էլ հոգում էդ մասին, ո՞ւմ է պակսել մի կտոր հաց էս աշխարհքի երեսին... Եվ ինձ էնպե՛ս հեշտ է թվում անդարձ ճամփեն էն քարոտ և էն աշխարհքն էնպես զրավիչ, և էն հավթը էնքա՛ն մոտ...

1 շանց տալիս 2 ցույց տուր ինձ 3 գլուխդ փորձանքի կրտաս 4 փուշն ու տատասկը 5 գազանները

\* Այս և նախորդ պարբերությունների դիմաց, աչ լուսանցքում. «Ձ 3. Ե՛տ զարձիր, նրան ինչպե՛ս պետք է բերես, ով որ գնում է՝ քար է դառնում:

— Քար դառնամ, չըդառնամ ես պետք է գնամ: (Վերջը 3 անգամ շոռ. ձեր զարշելիների ձենը լսեցի: Սրա վրա երկուսը քար են դառնում): Փոքրը գնում, ուշաթափ ընկնում— ոսկեմատ— հազարան բըլբուլը գիրջան է ա՛նում— կենդանացնում ու եղբորն առնում»:

6 բռնած

— Ո՛վ հավիտյան անձնապաստան ու մոլորված դուք մարդիկ, հեշտ է թվում փափագելին ու սիրածը միշտ մոտիկ... հեշտ է, սակայն ցնորքի մեջ, ու սրտին է մոտ թվում, բայց չի կարող ոտքը հասնել՝ ուր որ սիրտն է թափառում: Մեղք ես, կտրիճ, ինչո՞ւ ես քո մահի ետև ման գալիս, դարձի՛ր, գնա քու աշխարհքը, քու հոր տունը շեն ու լի. ապրիր խելոք շատերի պես, որ ապրում են գոհ, առատ, ու շեն հոգում, թե կորցրել է մարդն իր պատկերն անարատ: Եվ, ով գիտի այժմ. քո բացակայությունը, կտիրեն քո ունեցածին... Կամ թե կուզես, ա՛հա դարձյալ երկու ճամփա լայնարձակ, տանում է մինն էն դղյակը, ուր որ լուսից մինչև լուս քեֆ է անում սիրուն թամարն հյուրերի հետ իր < . . . > մյուսը դեպի...\*

Ե՛կ, լսիր իմ երրորդ խոսքին, ետ դառ [գնա քո] էդ ճամփից քանի ուշ չի, որ հետո չզղջաս:

— Երրորդ անգամ ելովում եմ, պապի, որ [ետ] շե՛մ դառնալու, որ չեմ զղջալու— ես պիտի գնամ՝ ինչ էլ պատահի:

— Դե որ էդպես է— լսի՛ր, պատանի: Ես<sup>1</sup> կյանքի սկզբից կանգնած եմ էստեղ— էս ճամփաների մեջտեղը: Բոլորն իմ առջևից են անցնում, և ով հարջում է՝ ճամփա եմ ցույց տալիս, նայում եմ ամենքի ճամփին ու ջոկում եմ լավն ու վատը, արատն ու առաքիներն: Ամենքն ու ամեն ինչ անցվորական են ու գնում են կորչում, թաղվում մոռացության խավարում: Ես եմ միայն, որ կարող եմ նրանց անունն ու հիշատակը պահել, ում որ սիրեցի: Ես էլ նրանց եմ սիրում, որոնք դժարն են ջոկում, որոնք իրենցից բարձրին են ձգտում, անլսելին են լսում, անտեսանելին են տեսնում, անկարելին են տենչում: Եվ միայն նրանց անունն եմ պահում ես, նրանց հիշատակն եմ պահում [անջիհեջ ու] անմոռաց ու կենդանի: Ես միայն նրանց եմ օրհնում, նրանց եմ օգնում:

Անձնուրաց հոգի, որ քաջ ու անվախ

Ընտրում ես, ընկնում էս անդարձ ճամփան,

\*Վերջին տողերի դիմաց, աչ լուսանցքում. «Ձ 13. փառք, իշխանություն. Եվ նպատակը մոռանում է: Զվարթ գուշին գլխին վեր է գալիս, դառնում է թ<ազավոր>: Տերն էլ մտքեն ընկավ, անթառամ այգին էլ, հազարան բըլբուլն էլ և այլն (իր տեղը—):

1 Ես նա եմ, որ փորձում է ամենքին, ով < . . . >

Որ հոժար սըրտով քո կյանքը մատաղ  
 Ուխտել ես՝ գազան մարդի փրկության,  
 [Մերիս] օրհնանքն էլ թող լինի քեզ հետ,  
 Հարեհաս լինի նեղության օրում,  
 Բարով դու հասնես վայրն երանավետ,  
 Ուր որ հազարան բլրուլն է տիրում<sup>2</sup>։  
 Կեռներ, անդունդներ հարթվեն առաջիդ,  
 Գեներ, հրեշներ դառնան անվրնաս,  
 < . . . . . > մեջք լինի քաջիդ,  
 Կասկած ու երկյուղ երբեք չիմանաս։

Օրհնում է ծերունին, խրատում ու ճանապարհ դնում դեպի  
 կախարդական աշխարհքը։

Գնում է Արեգը, գնում, ընկնում է մի աշխարհք, երկինքը  
 սև, գետինքը սև, հողը սև, ջուրը սև, խոտը սև, ծաղիկը սև։  
 Մութն ու մռայլ, անեծքի ու մահվան աշխարհքը, որ կա։ Ոչ  
 շան հաշոց է լսվում, ոչ աքաղաղի ձեն։

Առաջ է գնում<sup>3</sup>։

Դեմը բարձրանում է մի սև ու մռայլ ամրոց, ու ամրոցից  
 մի տխուր, քնքույշ ձեն է գալիս։

Վերև է նայում, տեսնում է մի շարմաղ, լուսեղեն աղջիկ՝  
 ձեն է տալիս<sup>4</sup>։

**Աղջիկը**

Ափսո՛ս, կըտրիճ, ա՛խ, ուր եկար  
 էս աշխարհքը սև ու մութ,  
 Ո՞ր անօրենն, ո՞ր թշնամին<sup>5</sup>  
 Տվեց արդյոք քեզ խորհուրդ։  
 Փախի՛ր շուտով, անահ տղա,  
 Թե չէ՝ էստեղ որ մընաս,  
 Սև [մարդակեր] դևը կըզա  
 Այժմ կանի քեզ մաս-մաս\*։

1 բերում ես 2 խաս հավքն է տիրում։  
 3 գնաց 4 կանչում է 5 Ո՞ր անօրեն մարդը արդյոք  
 \* Այս ութնյակի դիմաց, աչ լուսանցքում՝ «արձակ»։ Այստեղ և հաջորդ  
 էջերում մի քանի անգամ կրկնվող այդ նշումը խոսում է համապատասխան  
 շափածո տողերը արձակ շարադրանքի վերածելու մտադրության մասին։

**Արեգը**

Բայց ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,  
 Ի՞նչ ես էդտեղ դու շինում,  
 Կամ ինչո՞ւ ես էդպես տխուր,  
 էդպես մենակ լաց լինում։  
 Ի՞նչ է արել էդքան սիրուն,  
 էդքան քնքույշ մի էակ,  
 Որ փակել են մութն ու անդունդն  
 էս ամրոցում մեն-մենակ։

**Աղջիկը**

Իմ հանցանքը էս է, ավա՛ղ,  
 Որ սիրուն եմ ես էսքան.  
 Սրա համար Սև դեն եկավ  
 Մեր աշխարհքը անըման.  
 Եկավ, բռնի հափըշտակեց  
 Հայրենական իմ վայրից,  
 Բերավ էս սև բանտում փակեց,  
 Զըրկեց պայծառ օրերից։  
 Նըրա դժբախտ՝ գեղին եմ ես.  
 էստեղ, անդունդ իմ բանտում  
 Լուռ ու մենակ փակված էսպես  
 Մաշվում եմ ես անխորհում։  
 Բայց, ա՛խ, նրա ժամն է, ահա,  
 Այժմ կըզա նա նորից<sup>2</sup>  
 Փախի՛ր, փախի՛ր, կտրիճ տղա,  
 էս սև ու մութ աշխարհից։

**Արեգը**

Ես չեմ վախում, քույրիկ անգին,  
 Ես չըգիտեմ ահ ու մահ,  
 Ես կըմնամ բանտիդ տակին,

1 թշնամ 2 որսից (անտառից, սարից)

Ինչ սև հրեշ կուզի գա:  
Ու կրմեռնեմ էստեղ ես էլ,  
Ռր էլ շապրեմ էս օրից,  
Կամ կրփրկեմ ինձ հետ քեզ էլ  
էս սև ու մութ աշխարհից:  
Մենակ՝ ասա, թե ո՞ր ճամփով,  
Ո՞ր կողմից է նա գալու,  
Ո՞րտեղ եմ իմ սուր նետերով՞  
Նրա կյանքին վերջ տալու:

### Աղջիկը

Ահա էն սև սարի տակից  
Նա կերևա ահավոր,  
Նրա ձենից, բերնի հուրքից  
Սասանում են սար ու ձոր:  
Յոթը ագահ գլուխ ունի,  
Միջի գլխին պիտ գարկես,  
Ու հարվածող շես կրրկընիլ,  
Ինքն էլ խնդրի թեկուզ քեզ:  
Լսի՛ր, լսի՛ր, գալիս է նա,  
Մահ է բերում < . . . >  
Գնա՛, հերոս, իսկ ես ահա  
Աղոթում եմ քեզ համար:

(Էսպես խրատեց աղջիկն, ու Արեգը գնաց)

Սև աշխարհքը էլ ավելի  
Մութը կոխեց ականակիր,  
Դևի ձենից զարհուրելի  
Դողաց գետինը՝ ու երկիր:  
Եկավ Սև դևն, ինչպես սև ամպ,  
Հուր ու կրակ շաղ տալով,  
Եկավ անհուն կատաղությամբ,  
Ինչպես պրծած անզուսպ ծով՞:

1 միայն դու 2 Ու որտեղ եմ իմ նետերով 3 երկինք

\* Այս ութնյակի, ինչպես նաև հաջորդ չափածո տողերի դիմաց (մինչև «Սև աշխարհքի եզերքին» տողը) շրտ անգամ կա «արձակ» նշումը:

### Սև դևը

Ո՞վ ես, խիզախ, թույլ հողածին.  
Ի՞նչպես մըտար իմ հողը դու,  
Ո՞նց շի հասել քո ականջին  
Գոնե անունն իմ ահարկու:  
Մի՞թե աչքով դու շրտեսար  
Գյուղ ու քաղաք ողջ ամայի,  
Մարդ եմ կերել հազար-հազար,  
Քեզնից էլ քաջ ու վիթխարի:  
Իսկ դու ո՞վ ես, շնչին՝ մարդուկ,  
Որ կռիվ ես գալիս իմ դեմ,  
Ասա տեսնեմ, որ իմանամ  
Ինչ հիմարի՞ պիտի ուտեմ:  
Յույց տուր տեսնեմ՝ ի՞նչ ունես դու,  
Տե՛ս, ես ունեմ յոթը գլուխ...—  
Գոռաց հրեշն էն ահարկու,  
Արձակելով կրրակ ու ծուխ:

### Արեգը

Գալիս եմ ես, ով անճուռնի,  
Որ մեն-մենակ կովեմ քեզ հետ,  
Կոծքումս ունեմ մի սիրտ արի,  
Չեոքիս ունեմ յոթը սուր նետ:  
Ասավ, ճայթեց զիլ աղեղը,  
Ոռնաց վիշապն ահագին,  
Թավալվելով տեղնուտեղը,  
Անիծելով Արեգին:  
— Մին էլ զարկիր... մին էլ... մին էլ...—  
Մոնչում էր հոգեվարք.  
— Ես իմ մորից մին եմ ծընվել,  
Մի խոսք ունեմ ու մի զարկ...—  
Պատասխանեց Արեգը քաջ,

Փըշեց վիշապն իր հոգին,  
Ու արևի շողքը ցուլաց  
Սև աշխարհքի եզերքին\*:

< . . . > Ու Սև դևի գերի աշխարհքում>:  
[Թռչունները] ու հաղարավոր զվարթ ձեներ միասին սկսե-  
ցին օրհնություն երգել ազատ կյանքին, հերոսին...

— Ես բռնն եմ,— ասավ աղջիկը:

— Ո՛չ, ես միայն եղբոր սիրով կարող եմ քեզ սիրել— ես նպատակ ունեմ, պետք է գնամ իմ նպատակին: Ես պետք է գնամ Հազարան Բըլբուլին <գտնելու>, որ փուշը նորից վարդ դարձնեմ, գազանը՝ մարդ:

էստեղ հանկարծ աղջիկը մի հավք դարձավ ու թռավ գնաց ծովալուճ՝ ա՛խ, երանի թե մի անգամ դու ընկնեիր մշտադա-  
լար այգին, մեզ մոտ...

էստեղից Արեգը շարունակում է իր ճամփեն: Գնում է, գնում է, հասնում է մի աշխարհ. երկինքը կարմիր, գետինքը կարմիր, հողը կարմիր, ջուրը կարմիր, խոտը կարմիր, ծաղիկ-  
ը կարմիր— ամբողջ աշխարհքը ոնց որ թե կարմիր արյու-  
նով ողողած: Ավե՛ր, լո՛ւտ, ամա՛յի՛:

Ձեն է տալիս.

— Ո՞վ կա էստեղ շունչ կենդանի:

\* Վերջին հատվածի դիմաց, աջ լուսանցքում. «Ձ 4 Երկու գլուխը զար-  
կում է, վիշապը չի ընկնում: Գնում է աղջկանը խորհուրդ է հարցնում: Աղջի-  
կը խորհուրդ է տալիս՝ միջի գլխին և մի զարկ միայն:

— Հայ, բու սովորեցնողի վիզը կտորի:

Գլուխը մնում է կիսակտորի:

— Մին էլ զարկի:

— Ես իմ մորից մի անգամ եմ ծնվել:

— [Ինձ մի սպանիլ] ինչ որ ուզում ես, կըտամ:

— Թե՛ ես հազարան բըլբուլն եմ ուզում:

Թե՛ դե գլուխս մի կտորի ևս կրեմ:

Թե՛ մենք մի երգում ունենք— հաց ու գինի-տեր կենդանի:

Կրկին զարկում է, դեռ ողջանում է, ու առնում է տղին տանում:

(Երկու աշխարհքն էլ անց է կացնում, երրորդի սահմանում կանգնում)»:  
1 իմ նպատակին: [Ու մատանի տվեց— (իմ հույսով մնա)]:

Վախվախելով էս ու էն կողմից դուրս <են> գալիս դա-  
լուկ ու նիհար մարդիկ:

— Ինչո՞ւ եք էդպես, ո՞վ մարդիկ. ի՞նչ է ձեր ցավը, ո՞վ է ձեզ էդպես արել:

— Երկաթի բազուկը, անիրավ Երկաթի բազուկը,— սառ-  
սափած շշնջում են մարդիկը:

— Ո՞վ է Երկաթի բազուկը:

— Դա մի հրեշ է, մի երկաթի բազուկ, որ ամեն անգամ դուրս <է> գալիս ծովի միջից, հափշտակում, քանդում — ավերում մեր արտն ու անդաստանը, մեր ունեցած-չունեցածը, ջնջում մեզանից նրանց, որ առաջն են ընկնում: Մենք հոգնե-  
ցինք վարելով ու ցանելով, աշխատելով ու գործելով. նա շնոգնեց կլանելով ու ավերելով...

— էդպե՞ս: Դե ինձ առաջնորդեցեք ձեր թագավորի մոտ,— խնդրեց Արեգը:

Մարդիկ ընկան Արեգի առաջն ու տարան իրենց թագավորի մոտ: Թագավորն էլ իր ժողովրդի նման գունատ ու նիհար, մռայլ նստած էր իր գահի վրա, շուրջը՝ կանգնած իր մոլոր, հուսահատ նազիր-վեզիրները (պալատականները):

[Արեգը] ներս մտավ, երեք անգամ գլուխ տվեց ու վրս երեքը կանգնեց<sup>2</sup>, հայտնեց, որ ինքը գնում է Հազարան Բըլ-  
բուլի ետևից, լսեց էս երկրի դժբախտությունը, եկել է Երկաթի՞  
բազուկը խորտակելու, երկիրն ազատելու սովամահից ու ավերածությունից: Միայն թե նրանք էլ իրեն օգնեն՝ Հազա-  
րան Բըլբուլը գտնելու:

— Մեղք ես, ա՛յ որդի,— ասավ թագավորը,— դրան ոչ քաջի թուրն է հաղթում, ոչ հսկայի ուժը, գլուխդ դուր տեղը փորձանքի կտաս:

— Ո՛չ, թագավորն ապրած կենա, ես ինչ որ կանեմ—կը-  
տեսնեք. դուք միայն ինձ համար Հազարան Բըլբուլը գտնեք:

Թագավորը հոժար կացավ<sup>3</sup> էս պայմանին. նավ պատրաս-  
տեցին Արեգի համար, մտավ նավի մեջն ու ընկավ ծովի երեսը:

1 շուրջն էլ 2 ձեռքը կրծքին դրեց կանգնեց, 3 համաձայն <ենց>

Մովը մտամ թե չէ, փոթորիկ բարձրացավ, երկինքը մըթնեց<sup>1</sup>, ծովն ալեկոծվեց, երկինք ու ծով իրար խառնվեցին ու զարհուրելի շառաշյունով ծովի միջից հայտնվեց Երկաթի բազուկը ու բարձրացավ նավի վրա, որ զարկի, խորտակի, հափըշտակի:

Արեգն աներկյուղ առաջ անցավ, բռնեց Երկաթի բազուկն ու կնպես ուժով ոլորեց, որ ահագին ճայթյունով խորտակվեց ու ընկղմվեց ջրի տակը: Դրա հետ միասին ալիքների միջից<sup>2</sup> դուրս թռավ մի թռչուն, որ մի մատանի գցեց Արեգի ոտի տակն ու ծվլաց:

— (Մովերի) ոգիների թագավորի աղջիկն եմ ես, (Մշտագալար այգիների տիրոջ): Չար դևը հափշտակել էր ինձ<sup>3</sup> ու պահում էր գերության մեջ: Դու խորտակեցիր Երկաթի բազուկը, որի մեջ թաքնված էր նրա ոգին, ու ինձ ազատեցիր [տանջանքից]<sup>4</sup>: [Ա՛խ,] երանի թե երբևիցե ընկնեիր մեր Մշտագալար այգին, որ քո լավության փոխարեն ես էլ քեզ լավություն անեի:

Էսպես ծվլաց ու զվարթ երգելով անհետացավ կապուտակ մթնուրտում, գնաց:

Կարմիր աշխարհքի թագավորը իր ամբողջ ժողովրդով դուրս եկավ Արեգի առաջ հանդեսներով ու օրհնություններով, ոտների տակ ծաղիկ փռելով, թանկագին պարզեներով ընդունեցին իրենց քաղաքը: Ապա թե թագավորը հայտնեց, կանչեց իր երկրի բոլոր օրսկաններին ու աշխարհք տեսած մարդկանց, ոչ ոք չկարողացավ իմանա Հազարան Բլբուլի տեղը:

Բայց դրա փոխարեն— թագավորը ժառանգ շուններ, ինքն էլ ծերացել էր, առաջարկեց Արեգը մնա իրենց քաղաքում, իր մահից հետո իր գահին նստի ու իր տեղը թագավոր լինի<sup>5</sup>:

— Ո՛չ, թագավորն ապրած կենա, — պատասխանեց Արեգը: — Իս նպատակ ունեմ, պետք է գնամ իմ նպատակի ետեվից: Ես պետք է գտնեմ Հազարան Բլբուլը, որ փուշը նորից վարդ դարձնեմ, գազանը՝ մարդ:

Էստեղից էլ հեռացավ Արեգը (գնաց դաշտը, կրակեց Դևի մազը թե չէ՝ երկիրը թնդաց, ժած եկավ ու զարհուրելի Դևը հայտնվեց, ընկավ Արեգի ոտի տակը:

— Հը՛, թագավորի տղա, հափշտակեմ-ուտեմ <...>

— Ո՛չ կեր, ո՛չ լափի, ինձ վերցրու տար... ու շարունակեց իր ճանապարհը:

Շատ տարավ, քիչ տարավ, տարավ մի աշխարհք՝ — երկինքը սիպտակ, գետինքը սիպտակ, հողը սիպտակ, ջուրը սիպտակ, խոտը սիպտակ, ծաղիկը սիպտակ:

Տարավ մի սիպտակ քաղաքի մոտ իջեցրեց: Առաջ գնաց Արեգը, գնաց տեսավ քաղաքի առջև ժողովուրդ հավաքված, բոլորը սիպտակ սուգի շոր մտած<sup>2</sup>, իրենց սիպտակած, ալևոր թագավորը քաղաքի դիմացի սարի դեմուղեմը կանգնած կանչում է.

— Դուրս թող իմ աղջիկս, անիրավ, արձակիր իմ աղջիկս, անգութ: Բաց թող, ետ տուր իմ ծերության խնդրությունը, իմ աչքի լույսը, իմ կյանքի հույսը...

Իսկ դիմացի սարի քարայրից ծուխ ու կրակ է բարձրանում, ու բարձր հռհռոց է լսվում:

— Էս ի՞նչ է նշանակում, — հարցրեց Արեգը մի ծեր մարդու<sup>3</sup>: — Ինչո՞ւ եք ամենքդ սուգ մտած, ի՞նչ է կանչում թագավորը, և ո՞վ է, որ քարայրից հռհռում է նրա անզոր կանչի վրա... Ի՞նչ է նշանակում էս ամենը...

— Էն սարի մեջ, էն մութ քարայրում բուն է դրած սարսափելի վիշապը (Քավթառ քուսին), որ հափշտակել է մեր թագավորի միակ աղջկանը — գեղեցիկ Մաղիկին, ու տարել իր մոտ: Շատ քաջեր ու կտրիճներ գնացին, ոչ ոք չկարողացավ ազատի, բոլորն էլ գնացին ու ետ չեկան, բոլորն էլ իզուր զոհ գնացին թագավորի գեղեցիկ աղջկանը, ոչինչ չկարացին անեն: Այժմ ծերունի թագավորը հուսահատված կանչում է վիշապի քարանձավի դիմաց, իսկ նա հռհռում է ծերունի թագավորի ու հոր անզորության վրա:

1 մթնեց [ծով ու երկինք, ալիքներ] 2 Եվ դրա հետ միասին ջրի ալիքների միջից 3 Չար ոգին գիրել էր ինձ 4 заточение 5 թագավորի

1 մի քաղաքի մոտ իջեցրեց 2 ու էդ աշխարհքի բոլորը սիպտակ ուգի շորի մեջ, 3 ժողովրդին



էսպես պատմեց ծերունին, ու Արեգն առաջ անցավ, երեք անգամ գլուխ տվեց թագավորին, վրա երրորդն ասավ.

— Թագավորն ապրած կենա. իրավունք տուր ինձ՝ գնամ սպանեմ շար վիշապին ու ազատեմ քո գեղեցիկ աղջկանը:

— Մեղք ես, ա՛յ որդի,— ասավ դժբախտ թագավորը,— շատ քեզ նման կտրիճներ ու շատ զորքեր եմ ուղարկել, ամենքը շարդվել. ջնջվել են: Անիրավը քարանձավից հուր ու բոց է ժայթքում, ամենքին հող ու մոխիր է կտրեցնում:

— Ես կազատեմ քո աղջկանը,— կրկնեց Արեգը:

— Եթե իմ աղջկանն ազատես, իմ աղջիկն էլ քեզ, իմ թագավորութունն էլ,— կանչեց թագավորը:

— Ո՛չ, ես ո՛չ կին եմ ուզում, ո՛չ թագավորութուն,— պատասխանեց Արեգը:— Ես նպատակ ունեմ\*, իմ նպատակի հետևից եմ գնում: Ես պետք է գտնեմ Հազարան Բըլբուլը, տանեմ մեր աշխարհքը, որ փուշը նորից վարդ դարձնեմ, գազանը՝ մարդ: Ես շատ շնորհակալ կլինեի, եթե փոխարենը դուք էլ ցույց տալիք ինձ, թե որտեղ է գտնվում Հազարան Բըլբուլը, ու օգնեիք, որ գտնեմ:

— Իմ թագավորութան մեջ շատ որսորդներ կան ու շատ մարդիկ, որ թուռնների լեզուն հասկանում են, նրանք կգրտնեն— ինչ թուռն էլ կամենաս, ասավ թագավորն ու Արեգը գնաց դեպի վիշապի քարանձավը:

Անց կացավ իրեն <ի>ց առաջ գնացածների մոխրի միջից, մոտեցավ քարանձավի դռանը, և ահա հանկարծ մի խուլ որոտի հետ միաժամանակ դուրս ժայթքեց հուրը՝ հրեղեն շնչի հետ: Բայց Արեգը անահ մտավ կրակի մեջ ու առաջ անցավ (աղոթ գիտեր— թալիսման ևն), մտավ ներս: Ներս մտավ, տեսավ քարանձավի մթնում կուտակված մի այլանդակ պառավ, քիթը գետնին է հասնում, ժանիքները գլխից վեռն են բարձրացել, խոիվ մազերը ցից-ցից— անտառի նման, մի հատ աչքը կրակի նման վառվում է ճակատին, իսկ բերանից հուր ու կրակ դուրս հոսում:

Արեգին տեսավ թե չէ՝ գոչեց<sup>2</sup>.

— Ետ դառ, անահ տղա, ետ դառ, եթե գլխիցդ ձեռ չես քաշել, ետ դառ: Թե չէ իսկույն կկրակեմ քեզ, հող ու մոխիրդ քամուն կտամ:

Արեգը պատասխանի փոխարեն քաշեց իր զիլ աղեղը, նետը շառաչելով զարկեց քավթառի կրծքին ու մեջքից դուրս եկավ, բոցը հանգավ, ծուխը ցրվեց. Արեգը առաջ անցավ՝, տեսավ շղթայով ամուր կապած երկու գեղեցիկ աղջիկ: Զարկեց, շղթաները խորտակեց ու դուրս բերեց արևի լուսը: Դուրս բերեց թե չէ՝ միներ թե՛ Մշտադալար այգու թագավորի աղջիկն եմ ես: Դու ինձ ազատեցիր էս տանջանքից. երանի մի անգամ գաս մեր երկիրը, որ ես էլ քեզ մի լավութուն անեմ քո լավության փոխարեն: Ասավ, մի մատանի գցեց Արեգի վրա ու ծիտ դառավ, ծլվլալով թռավ գնաց:

Արեգն առավ Մաղիկին, բերեց տվեց իր հորը, ծերունի թագավորին:

Թագավորը հայտնեց, որ ինքը հավաքեց իր տերութան բոլոր աշխարհք տեսած մարդկանց ու հին որսկաններին: Ամենքն<sup>2</sup> էլ հայտնեցին, թե ոչ թե Հազարան Բըլբուլի տեղը չգիտեն, մինչև անգամ անունն էլ չեն լսել:

— Բայց ես չեմ թողնիլ քո լավութունն ու քաջութունը առանց վարձատրութան,— ասավ թագավորը,— արի՛ ամուսնացիր իմ գեղեցիկ Մաղիկի հետ, եղիր իմ ժառանգն ու իմ որդին ու թագավորի իմ տեղը:

— Ո՛չ, թագավորն ապրած կենա,— պատասխանեց Արեգը,— ես պետք է գնամ իմ նպատակի հետևից, երկնքի երեսին լինի, թե գետնի տակին, ես պետք է գտնեմ Հազարան Բըլբուլը:

էս քաղաքից էլ դուրս եկավ Արեգը, գնաց դաշտը, Դևի մազը կրակեց<sup>3</sup> թե չէ— դևն հայտնվեց, ընկավ առաջին:

— Ինձ տար հուրի-փերիների, լուսեղեն ոգիների Մշտադալար այգին,— հրամայեց Արեգը:

— Դժար բան ես ուզում,— ասավ Դևը,— բայց ինչ անեմ, կյանքս ազատել ես, պետք է կատարեմ:

\* Այս բառերից վերև, աչ լուսանցքում՝ «Քավթառ-քուրս» երկիրը:

1 հուրն ու փոթորիկ 2 կանչեց

1 [չորս] ներս մտավ 2 բուրն 3 վառեց

Ասամ, առավ տղին<sup>1</sup> ու թռավ դեպի լուսեղեն ոգիների Մշտադալար այգին: Էսպես թռած գնաց, գնաց, մինչև հասավ մի սար, որ շողակնի նման փայլատակում էր: Էստեղ վեր բերեց Արեգին, ոտներն ընկավ ու ասավ.

— Էստեղ վերջանում է իմ թագավորությունը, էս սահմանից<sup>2</sup> դենը լուսեղենների թագավորությունն է սկսվում: Էստեղից ինձ ազատ արա, գնամ իմ որսի ձենն ատեմ, էստեղից դենը ես անցկենալու իրավունք չունեմ:

Արեգն ազատ արավ դեհն, ու ինքը ճամփա ընկավ<sup>3</sup> սարնիվեր: Սարի մյուս կողմը տարածվում էր<sup>4</sup> լուսեղենների Մըշտադալար այգին: Անվերջալույս արևի լուսի մեջ<sup>5</sup> երևում էր լուսեղենների երազական բնակավայրը: Անվերջ կանաչի<sup>6</sup>, անթառամ այգիների երփներանգ, բուրավետ ծաղիկների մ'ը փայլատակում էին\* շողակնի ու փիրուզի ապարանքները, ճաճանչելով խոխոջում էին անմահական շրերը, ու զվարթ աղմուկով երգում էին դրախտի հավքերը: Ցած իջավ Արեգը, մտավ Մշտադալար այգին, ու քիչ մնաց խելքը գլխիցը թռչեք անմահական ծաղիկների անուշ բուրմունքից, դրախտային հավքերի քաղցր<sup>7</sup> դալալիկներից ու բյուրեղյա շատրվանների մեղմ խոխոջներից:

Ու ոչ մի մարդ արարած, ոչ մի մարդկային ձեն:

Երջանկությունից հարբած ու վերացած Արեգը մտավ զրմբուխտյա ու բյուրեղյա ապարանքը: Մի սեղան է բաց արած աստծու ամեն բարին մեջը<sup>8</sup>, ու էնտեղ էլ դարձյալ ոչ ոք չկա: Սպասում է մի ժամ, երկու ժամ, երեք ժամ: Հանկարծ հեռվից ականջին մեղմ ու անուշ երաժշտության և ուրախ հնչուն ծիծաղի ձայներ հասան: Հետզհետե մոտեցան: Արեգը մի անկյունում թաքնվեց ու սպասում էր<sup>9</sup>: Տեսավ<sup>10</sup> իրար ետևից եկան երեք խումբ [լուսեղեն] հուրի-փերիններ, ամեն մի խմբի մեջ մի-մի անտես-աննման թագուհի<sup>10</sup> (ամեն մեկի ճոխ մա-

1 Արեգին 2 էստեղից 3 բարձրացավ 4 գտնվում էր 5 շողերի տակ 6 Զմբուխտի

\* Այս բառի դիմաց, աչ լուսանցքում՝ «անուշ բուրմունք»:

7 Լիքը ամեն զարդարանքով ու ամեն բարիքով. [սեղանը ամեն բարով ու բարիքով լիքը]: 8 Թաքնվեց ու սպասեց: 9 Ու տեսավ 10 ա ամեն մի խմբում մի-մի անտես-աննման ոգի աղչիկ բ ամեն մի խմբի գլուխն տնցած

դերը ոսկի սինիններում բռնած ետևից): Երեք խումբն էլ ներս մտան, երեք թագուհին բազմեցին, [ու] մյուսներն էլ՝ նրանց շուրջը. ու քնքույշ, զվարթ աղմուկով լցվեց էն զմրուխտյա<sup>1</sup> ապարանքը: Սկսեցին ուտել, խմել, ուրախանալ:

Ուրախության ժամանակ տեղիցը վեր կացավ էն երեք թագուհիներից մեկը: Ամենքը լոեցին, նեկտարի բաժակն առավ, ասավ<sup>2</sup>.

— Անուշ քույրեր, էն տղի կենացը<sup>3</sup>, որ ինձ ազատեց Աև դևի գերությունից, արև ու լույս տվեց մութն աշխարհքին: Ա՛խ, երանի թե երբևիցե նա հայտնվեք մեր երջանիկ կողմերում<sup>4</sup>, որ ես կարողանայի ետ վճարել նրա լավությունը...

Ամենքը խմեցին երկնային նեկտարը ու գովեցին էն կտրիճի քաջությունը, որ իրենց քրոջն ազատել էր Աև դևի գերությունից: [Սրանից հետո] ոտի կանգնեց երկրորդ քույրը, [ու] բաժակը բարձրացրեց, ասավ.

— Երկաթի բազուկը ինձ գերել ու գերի էր արել ծավի հատակին<sup>5</sup>: Էս բաժակն էլ խմենք էն հերոսի<sup>6</sup> կենացը, որ խորտակեց Երկաթի բազուկը, ինձ ազատեց նրա գերությունից, իսկ խեղճ հողածիններին՝ սովից<sup>7</sup> ու մահից... Ա՛խ, եթե երբևիցե մեր դյուրեական աշխարհքը գար նա, ու ես կարողանայի ետ վճարել նրա լավությունը...

Ամենքն էլ<sup>8</sup> խմեցին երկնային նեկտարը, գովեցին հերոսի գործն ու առաքինությունը ու ցանկացան, որ երբևիցե նրան տեսնեին:

Ապա թե վեր կացավ երրորդ քույրը:

— Քույրեր, — ասավ, — էս<sup>9</sup> բաժակն էլ խմենք էն ազնիվ հերոսի կենացը, որ խորտակեց քալթառ հրեշխն ու ինձ ազատեց նրա մութ ու խոնավ քարանձավի գերությունից: Ա՛խ, երանի թե երբևիցե նա էլ մի օր ընկներ մեր կախարդական աշխարհքը, որ կարողանայի ետ վճարել իր արած լավությունը:

1 երազական 2 ու նա էսպես խոսեց: 3 — Անուշ քույրեր, էս բաժակը խմենք էն տղի կենացը, 4 աշխարհքում 5 — էս էլ խմենք էն հերոս տղի կենացը, որ ինձ ազատեց Երկաթի բազուկի գերությունից, ինձ գերել ու գերի էր դարձրել 6 հերոս տղի 7 փրկեց սովից 8 Ամենքը խմեցին 9 սրա

Ամենքը միասին էս կենացն էլ խմեցին, գովեցին հերոսի ուժն ու արիությունն ու շատ ցանկացան, որ սրան էլ մի օր տեսնեին:

— Ա՛խ,— շարունակեց փոքր քույրը,— եթե երբևիցե նա հայտնվեր մեր երջանիկ աշխարհքում, ես կխնդրեի մեր հորը, որ թողներ նրան՝ միշտ ապրեր մեր դրախտում ու վայելեր [մեր] Մշտադալար եղեմի վայելչությունը: Բայց, ա՛վա՛ղ, օձն իր պորտով, հավքն իր թևով չի կարող մեզ մոտ հասնի, ուր մնաց՝ տկար հողածինը...<sup>1</sup>

էս խոսքի վրա Արեգը դուրս եկավ իր թաքստից, դուռը բաց արավ ու կանգնեց լուսեղեն աղջիկների առաջին<sup>2</sup>: Ամենքը միասին վեր թռան, ճշացին ա՛հից ու զայրույթից<sup>3</sup>: [Ու] Արեգը ցույց տվեց նրանց տված մատանիները: Նայեցին. ճանաչեցին իրենց ազատարարին ու էնպես մի. խելագար խնջույք սարքեցին, որ ոչ լեզվով պատմել կլինի, ոչ գրչով նկարագրել:

Ապա թե հարցրին<sup>4</sup>, ինչպե՞ս է եղել, որ իրենց աշխարհքն է ընկել իրենց փրկիչը<sup>5</sup>, ո՛ր է գնում, ինչո՞ւ է իրեն ենթարկում փորձանքների ու զրկանքների: Եվ երբ իմացան, որ Հազարան Բըլբուլի ետևից է գնում, շատ խնդրեցին, որ ետ կենա էդ վտանգավոր մտքից, [որովհետև] անկարելի է, ասին, ձեռք բերել Հազարան Բըլբուլը:

— Մնա մեզ մոտ,— ասին<sup>6</sup>.— մնա մեզ մոտ միշտ ուրախ ու երջանիկ, հանգիստ ու անհոգ...

— Ո՛չ,— պատասխանեց Արեգը,— ես նպատակ ունեմ. պետք է գնամ իմ նպատակի ետևից: Պետք է գտնեմ Հազարան Բըլբուլը, որ փուշը նորից վարդ դարձնեմ, գազանը՝ մարդ:

Ու քանի դեռ իմ նպատակին չեմ հասել— ոչ վայելչություն կա, ոչ հանգստություն ինձ համար:

Ոգիները<sup>7</sup> երբոր տեսան Արեգը<sup>8</sup> իր ճամփից ետ չի դառնալու, էն ժամանակ ասին < . . . >

1ա. հողածինը գա մեզ մոտ... բ. հողածինը հասնի գ. հողածինը ընկնի 2 ա. մեղսեղը բ. առաջները 3 զարմանքից 4 Ապա թե հարցրին, թե ուր է գնում Արեգը. 5 Արեգը 6 ասացին նրանք 7 փերիները 8 անկոտրում է Արեգը

Ջքնաղ անունով քո լույս աղջրկա  
Կանչում եմ, ա՛հեղ ծովերի արքա.  
Լսի՛ր, անհատակ ջրերի խորքից<sup>1</sup>,  
Մշտածուփ, անսաստ քո մթին հարկից<sup>2</sup>.  
Տուր ինձ Քամի ձին, թռչուն Քամի ձին<sup>3</sup>,  
Որ ես՝ մահացու տրեկար հողածին,  
Հասնեմ երջանիկ աշխարհն Աննաման,  
Ուր վարդ է երգում Բյուլբյուլն հազարան<sup>4</sup>.  
Ա՛ռ նշանն, ա՛հա, քո < . . . > աղջրկա<sup>5</sup>—  
Լսի՛ր ինձ, ա՛հեղ ծովերի արքա<sup>6</sup>.  
Տուր ինձ Քամի ձին, հասնեմ փափագիս,  
Թռչունը գտնեմ, հասցրնեմ այգիս<sup>7</sup>,  
Փուշը վարդ փոխեմ թովչական երգով,  
Արջերը մարդիկ բանական հոգով:  
Այսպես որ կանչեց, փոթորիկն ելավ անգուսպ կապուտակ,  
էն կապուտակ ծովը գոռաց < . . . > անհատակ:

Շուրջը<sup>8</sup> մթնեց, փոթորիկն ելավ, կապուտակ ծովը մռնչաց  
և ահռելի թոհուրոհի միջից շնչի նման թեթև-արագ դուրս  
վազեց<sup>9</sup> Քամի-ձին<sup>10</sup>: Շնորհքը համբուրեց, սանձը ձգեց և

\* Ինքնագրի վերևը՝ «Ծով—միտք—մտքի խորքից—անհունությունից  
գուրս է գալիս Քամի ձին— ոգևորությունը»:

- 1 ա Տուր ինձ Քամի ձին ջրերի խորքից,  
բ Քո ալիքներից— քո հուր < . . . >,  
գ Քո անդունդներից, ջրերի տակից— անդունդքի տակից,
- 2 ա Մշտագոչ անսաստ տարերքից.  
բ Մշտածուփ, անսաստ քո մութ աշխարհից.  
գ Մշտածուփ, անսաստ քո պաղ աշխարհից.
- 3 ա Տուր ինձ Քամի ձին, տուր ինձ Քամի ձին,  
բ Լսի՛ր ինձ, Լսի՛ր < . . . >
- 4 Ուր վարդ է թափում բյուլբյուլն հազարան.
- 5 Ահա քեզ նշանն քո < . . . > աղջրկա,
- 6 Ընդունիր, ահեղ ծովերի արքա,
- 7 Բյուլբյուլը գտնեմ, հասցրնեմ այգիս,
- 8 Ծրը 9 մըրկաց 10 Տողերի միջև «Անտես սուրաց քամու նման, թռավ  
եծույզը հրաշունչ»:

ական թոթափել հեծավ ու թռավ: [Մի ականթարթում անցան]:  
Նուվեր, անդունդներ, անապատներ, [աշխարհքներ] անցան,  
որ դժոխքի ձայները լսում էին, լեռներ, որ հասնում էին  
աստծու գահին, հասան Հազարան բյուբյուլի տերության  
սահմանը: [Մի ականթարթում Շնորհքին այստեղ վեր բերեց  
Քամի-ձին ու այսպես խրատեց]: «Մրանից դենը կախարդա-  
կան աշխարհքի՝ սահմանն է սկսվում», — ասաց Հրաշալի  
ձին: — Կգնաս, առաջդ մի գետ կգա: Հազարան բյուբյուլի  
տերը նրա ջուրը դարձրել է աղի-լեղի, բայց դու որ խմես,  
պետք է բացականչես՝ ա՛խ, ինչ անմահական ջուր է: Գետը որ  
անցնես, կբացվի մի լայն տարածություն, Հազարան բյու-  
բյուլի տերը նրան լցրել է փուշ ու տատակով<sup>1</sup>, դարձրել  
անանցանելի, [բայց] դու պետք է փուշը պոկես, հոտ քաշես  
ու ասես՝ ա՛խ, ինչ անուշ հոտ է, դրախտի ծաղիկն է իսկը:  
Այդ էլ որ անցար, Հազարան բյուբյուլի տիրոջ [եթերային]  
ապարանքը աչքիդ կերևա: Այն ժամանակ առաջդ խեղկա-  
տակներ կգան, այն ծաղրածությունները, այն խաղերը կա-  
նեն, որ հարյուր տարվան մեռելը ծիծաղի, բայց դու չպետք  
է ծիծաղես...

Ապա թե քեզ կհեգնեն, կծաղրեն, կհայհոյեն, [դարձյալ]  
չպետք է ուշք դարձնես, [թե չէ կհաղթվես ու կոչնչանաս]:  
Կհասնես ապարանքի առաջը, դռների այս ու այն կողմը կը-  
տեսնես առյուծն ու խոյր<sup>3</sup> կապած, սոված: Առյուծի առաջը  
խոտ է ածած, խոյի առաջը միս է դրած: Նրանց ուտելիքներն  
էլ կփոխես ու կանցնես: Կհասնես դռներին, կտեսնես դռան  
մի փեղկը փակ է, մյուսը՝ բաց: Բաց դուր կփակես, փակը  
կբանաս ու ներս կմտնես: Վերև, ապարանքում, ոսկի վան-  
դակի մեջ երգում է Հազարան բյուբյուլը և [նրա] երգի հետ  
մշտադալար վարդեր են թափում բերանից<sup>4</sup>: Վարդերի անուշ  
բուրմունքով ու երգի դալալներով արբեցած իր լուսեղեն  
անկողնում քնած [է] նրա հրաշագեղ տիրուհին: Բյուբյուլն<sup>5</sup>  
իր վանդակով կվերցնես ու դուրս կգաս, առանց աղջկանը  
[նայելու կամ] ձեռք տալու: [Հա՛] Բայց այս մեկը լավ հի-

շիր, որ եթե նրան մոտեցար, կորած ես արդեն: Դուրս գա-  
թե չէ, դարձյալ խեղկատակները առաջդ կգան, ծառ, քա՛հ,  
հող, ջուր, լեզու կառնեն, կաղաղակեն. «Տարա՛վ, տարա՛վ,  
հողածինը տարա՛վ», [դու] ետ շնայես, թե չէ՝ դարձյալ՝ բո-  
վերջն է:

[Շնորհքը այդպես էլ արավ]: Շնորհքը անցավ լեղի գետը,  
փշոտ դաշտը, անցավ փշոտ դաշտերը, զվարթ, և փուշը թվաջ  
վարդ, անցավ խեղկատակների միջից, առյուծի ու խոյի ուտե-  
լիքներն իրանց տվեց, փակ դռները<sup>2</sup> բաց արավ, բաց փեղ-  
կերը<sup>3</sup> փակեց ու ներս մտավ: Ներս մտավ երջանկության  
բնակավայրը: [Մշտադալար կախարդական աշխարհքի] վար-  
դերի թարմ ու անուշ բուրմունքից [ու] Հազարան բյուբյուլի  
երկնային դալալիկներից նրա ուշքը վերացավ, [իրան մո-  
ռացավ]: Հրաշալի թռչունի՛ կտուցից [ձայների հետ] թափում  
էին ու թափում թարմ, անթառամ վարդերը, և երգը բուրմուն-  
քից ավելի քնքուշ էր ու հափրեցնող<sup>5</sup>: [Թավշյա] բատիստ-  
ների վրա<sup>6</sup> լուսեղեն անկողնում պառկած քնած էր կախար-  
դական աշխարհքի շնաշխարհիկ<sup>7</sup> թագուհին: Նա վերմակը ետ  
էր գցել, դուրս էր հանել աստվածային կուրծքն ու բազուկ-  
ները<sup>8</sup>: Հողեղեն սիրտը անկարող էր դիմանալ գերբնական  
գեղեցկությանը, այն գորեղ հրապուրանքներին<sup>9</sup>: Շնորհքի  
աչքերը մթնում էին [կրթից], գլուխն իրան-իրան խոնարհեց,  
համբուրեց այնպես ջերմ, որ այրեց ու հետքը մնաց քնքուշ  
թուշի վրա<sup>10</sup>: Բայց հանկարծ ցնցվեց, ուշարերվեց, հիշեց  
Քամի-ձիու խրատը, վեր առավ Հազարան բյուբյուլն ու շտապ  
դուրս եկավ կախարդական ապարանքից<sup>11</sup>:

1 կրկին 2 բաց դռները 3 դռները 4 ա. Հազարան բյուբյուլի բ զարմա-  
նակի թռչունի 5 արբուցիչ 6 նրա առջև 7 ա. մատաղ բ. մշտամատաղ  
8 նա վերմակի ծայրը մի փոքր ետ էր գցել, [կրթից] ու դուրս [էր]  
հանել աստվածային կուրծքն ու գիրգ բազուկները 9 ա. Այն բոլոր հրա-  
պուրանքներին հողեղեն սիրտը չէր կարող դիմանալ բ. հողեղեն սիրտը չէր  
կարող դիմանալ այն գերբնական հրապուրանքներին 10 Շնորհքի գլուխն  
իրան-իրան խոնարհվեց, և զողալով Շնորհքը համբուրեց քնած աղջկանը  
և տաք համբուրի հետքը մնաց դրոշմված քնքուշ թուշի վրա: [Շնորհքի]  
նրա աչքերը [մթնեցին] մթնում էին կրթից: 11 երկնային այն տիրությու-  
նից:

1 Հազարան բյուբյուլի տերության 2 իր թովիչ հնարքով 3 ոչխարը  
4 նրա կտուցից 5 սոխակն

Առաջն եկան խեղկատակները, նոր խաղեր հնարեցին՝  
Շնորհքն ուշ շղարձրեց, ապա սկսեցին թքել, հայհոյել, Շնորհ-  
քը շարունակեց իր ճամփան, հող ու ջուր սկսեցին աղաղակել.  
«Տարա՛վ, տարա՛վ, հողածինը տարա՛վ»: Շնորհքը ետ շնա-  
յեց, սիրտը սևացրեց, անցավ բոլոր փորձությունների<sup>2</sup> միջից:  
Սանձը թրջեց, հայտնվեց Քամի-ձին<sup>3</sup>, առավ, թոցրեց  
[Շնորհքին]: Մեկ էլ աչքը բաց արավ Շնորհքը, տեսավ իր  
հոր թագավորության սահմանում:

## ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

<1>

<ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼ>

Անթառամ այգին— ջրերի խոխոջ, բոչունների երգը, ծա-  
ղիկներ, պտղալի ծառեր:

ԱԼԱՄ ԱՐՔԱՆ (իր Անթառամ այգու դռանը— իր մեծերով  
ու ծառաներով):

ԱՄԵՆՔԸ ՄԻԱՄԻՆ— Լսում ենք, տեր:

— Բոլոր ճամփաներն՝ էստեղ են բերում: Ամեն անցավոր  
թող տեղ ունենա էս լայնարձակ [եղեմում]: Ամեն կարոտ  
թող լիանա այս առատության մեջ, ամեն վաստակած թող  
հանգչի էս ստվերներում<sup>2</sup>:

[Արեայի գնալուց հետո գալիս են ոմանք— հարուստ վա-  
ճառական կամ ասպետ— ներս են թողնում.— էսպես է պատ-  
վեր տվել մեր տերը: Ապա հայտնվում է աղբատը<sup>3</sup>: Մերժում  
են ու վշտացնում: Անիծում է]:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Անթառամ այգին պատած է արդեն բարձր ֆաբե պարբա-  
պով, երկաթ դռներով: Մարավ ճամփորդը, հոգնած— ուզում  
է ներս մտնի: Պահապանները շեն թողնում, ետ են հրում.—  
Չի՛ կարելի:

1 սկսեցին 2 փորձանքների 3 Քամի-ձին հայտնվեց

1 ճանապարհներն 2 հող ու ջրով 3 մի աղբատ

— Թողեք մի փոքր հանգչեմ ծառերի շվաքում— հեռվից եմ գալի:

— Չի՞ կարելի:

— Մի սառը ջուր խմեմ:

— Չի՞ կարելի:

— (Բարկանում է): Ինչո՞ւ եք պատել ու փակել ազատ տարածությունը, ազատ աղբյուրները— ո՞վ է քաշել էս քարե պարիսպը, ո՞վ է շինել էս երկաթի դուռը— բաց արե՛ք...

— Լսո՞ւմ եք ինչ համարձակ լեզվով է խոսում:

— Որ քեզ նման ամեն անբան շրջմոլիկ շմտնի [ու շփշաց-նի], որ դու չնստես էն ծառերի ստվերում, որ դու չխմես էն սառը ջրերից: (Փակում է քթին դուռն ու ներս մտնում):

<ՍԱՐԱՎ ՃԱՄՓՈՐԴԸ> — Ձեռները տարածում է ու անի-ծում երկաթե փակ դռների առջև:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Մերուկի գիտունների բազմությունը լսում է: Թագավորը գահին նստած պատմում է նրանց:

— Էլ չեն կարողանում գլուխները վեր բարձրացնել ու մարդու վսեմ հայացքով նայել երկնքին: Էլ չեն կարողանում մտորել<sup>2</sup>— հոտոտում են իրենց ոտի տակին երկիրը և այն են ճանաչում, ինչ որ դիպչում է իրենց դնչին<sup>3</sup>: Եվ կովում են նրա վրա— ամեն մինը աշխատում է իր ճանկը ձգի ու շի կշտանում, ինչքան էլ հավաքի: Ու դրա համար սպանում են իրար և շարունակ սպանությունն նոր միջոցներ են ստեղծում...

Մի ՄԵՐ ԳԻՏՆԱԿԱՆ— Գազաններ են դարձել:

ՈՂՋ ՄԻԱՍԻՆ— Այո՛, գազաններ:

ԹԱԳԱՎՈՐԸ— Ո՛չ, մարդիկ եմ ասում:

ԳԻՏՆԱԿԱՆԸ— [Արտաքին կերպարանքը, տեր արքա, շի փոխում մարդու էությունը]: Դուք ինչ որ ասում եք, էդ մարդիկ չեն, տեր արքա. մարդն էդպես չի եղել, էդպես չի և

էդպես չի լինելու: [էդ գազանն է— ինչ կերպարանքով ուզում է լինի: կերպարանքը ու] <... >\*

<2>

Քնությունը խոսում է — և ներևից երկրային ձայները (զեփյառ, ջրի կարկաչ, ծառ ու ծաղիկների սլսոց և այլն) պատմում են հեռաշալի գիշերը— և հետզհետե մարում...

ՆԱ-ԱՐԵԳԸ— կանգնած է կենտրոնում<sup>1</sup>— լսում է բուրբ ու հասկանում— (մերթ մերթ միջամտում):

Երկրային ձայները լսելու պես սկսում են վերևից հնչել երկնային ձայները— հետզհետե գորանալով— Մո՛ւրբ, սո՛ւրբ, սուրբ, և երկնի մթնոլորտը խառնվում է լուսեղեն խճներով ու ճառագայթներով—

ԱՐԵԳԸ— Ո՛վ, որ գալիս ես և այլն—

Մարդկային ձայներից միայն նրան է— երկնային ու երկրային ձայների— բնության հետ...

Տիեզերի բունը— Համբարձման գիշերը:

Նա երևում է<sup>2</sup> սարայանջի ժայռին: Հեռու հորիզոնում ձգվում է լեռների շղթան: Ներև մթնում որոտում է գետը:

(Նստում է): Հովտում մարեց վերջին ճրագը<sup>3</sup>: Իրար ետևից հանգչում են<sup>4</sup> ձայները: Կռեց հովվի սրինգը, էլ շի հաչում

\* Երբեք տեսիլի նախնական տարբերակը՝

Պատմում է: Այսպես եղավ, ու դժոխք դառավ Անթառամ այգին:

ԹԱԳԱՎՈՐԸ— Այժմ ի՞նչ են անում նրանք:

ՊԱՍՄ <ՈՂՋ>— [Ինչ որ կա, ամեն միևն աշխատում է ինքը ճանկի — և չի լիանում, ինչքան էլ ճանկի. դրա համար սպանում են իրար ու չեն կշտանում, ինչքան էլ ճանկեն], ու չեն <... > կարողանում [մարդո] գլուխները վեր բարձրացնել ու մարդու վսեմ հայացքով նայել երկնքին: Նրանք միայն երկիրն են հոտոտում և այն են ճանաչում, ինչ որ դիպչում է իրենց դնչերին: Եվ ամեն մեկն այն ժամանակ աշխատում է մյուսի ձեռքից խել գտածը: Դրա համար սպանում են իրար ու չեն կշտանում, ինչքան էլ հավաքեն, [ինչքան էլ սպանեն] և զարգացնում են իրենց սպանության միջոցները:

1 մեշտողը 2 Արեգը կանգնած է: 3 Հովտում վաղուց հանգել են լույսերը: 4 մարում են

1 արձակ 2 խոկալ 3 քթին

շունը: Լոեց գիշերահամարի [վերջին] վայր ավերակում, լոեց  
ծտի երկչոտ ճիւղ անտառի խորքում...

Քնած է աշխարհը խավարը մեջ...<sup>1</sup>

Ահա հովն էլ ծալեց թևերը [ու թիթեռի հետ] իջավ գետա-  
փին...

Մենակ ես եմ զարթուն...<sup>2</sup>

Հեքիաթի հերոսը կտրում է մատը, աղ է անում իր վեր-  
քին — քունը փախցնի... Ավա՛ղ, իմ սիրտը խոցված է խո-  
րունկ հազար վերքերով, կսկծում են նրանք մարդկային ար-  
տասութենքից<sup>3</sup>, ու իմ աչքերից փախած է քունը ընդմիշտ,  
ընդմիշտ...

Ահա որոտն էլ դադարեց հովտում, ջուրն էլ կանգնեց...  
[քնեց տիեզերքը համատարած քնով...] գալիս է՞ հրաշալի  
ժամը\*...

Արդեն օդում լսվում է մեզմ ներդաշնակ [երգի ու երաժըշ-  
տության] ձայներ... Հեռու հորիզոնում լեռների ետևից մըթ-  
նոլորտը տակնուվրա է լինում: Երգն ու երաժշտությունը ավե-  
լի ու ավելի մոտենում է ու սաստկանում զվարթ.

(ԵՐԳԸ)

— Սո՛ւրբ... [սո՛ւրբ... սո՛ւրբ...]

Միաժամանակ նա ծնկի է գալի, աղաղակում է<sup>5</sup>.

— Ո՛վ, որ գալիս ես բազմած<sup>6</sup> ամպերին. սո՛ւրբ...

Ո՛վ, որ փայլում ես մաքրության մեջ վերին. սո՛ւրբ...

(ԵՐԳԸ)

Սո՛ւրբ...

Ո՛վ, որ [հայացքով] պայծառ ու բարի

վանում ես < . . . > մռայլն աշխարհի... սո՛ւրբ...

Ո՛վ, որ կյանք ես բերում ու հոգի...

(ԵՐԳԸ)

Սո՛ւրբ...

Մթնոլորտում ավելի պարզվում է պատկերը! — լուսեղեն  
ամպերի ճառագայթների խուրձերի մեջ հայտնվում է աստծա  
պատկերը անորոշ ու անավոր [հրեշտակները լիքն են օդի  
մեջ]:

Երգը երբ հնչում է՝ Տեր զորությանց,

Նա էլ կրկնում է ներքևից.

— Տե՛ր զորությանց:

ՏԵՐԸ.— Ի՞նչ ես ուզում, անքուն հոգի:

ՆԱ.— Քո շնորհքը, տե՛ր...

ՏԵՐ.— Ունե՛ս...

(Նա ընկնում է տիրոջ առջև):

Երգն ու երաժշտությունը, որ շէր դադարած՝ շարունակ-  
վում է.

— Լի են երկինք ու երկիր փառօր Քո... օրհնութիւն ե  
բարձունս...»:

(Պատկերը սկսում է ավելի անորոշանալ. նրա տեղը ցո-  
լում է արշալույսը, ու հետզհետե իջնում է վարագույրը):

1 պատկերը — ցոլում են ճառագայթները

1 անգիտություն խավարի տակ... 2 Մենակ եմ ես: 3 անվերջ արցունքից 4 մոտ է

\* Լուսանցքում մատիտով գրված է. «Նստում է բնությունը հազարա-  
ձայն — զվարթ ու կենսալի — հրաշալի մի ժխոր»:

5 դիմում է, կանչում է: 6 նստած

ՀԵՔԻԱԹԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ  
ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. ՀԱԶԱՐԱՆ ԲՅՈՒԼԲՅՈՒԼ

Լոռու վարիանտը— Վարդաբլուր  
(իմ խոսքերով՝ 97 քվիե)

<9>4

Ժամանակով ապրում էր մի թագավոր, ուներ երեք որդի: Փոքր որդին մի օր մի բան է մտածում ու հայտնում յուր եղբայրներին, թե՛ մեր հայրը թագավոր է ու մի հիշատակ շունի շինած, որ մեռնելուց հետո հիշվելիք լինի աշխարհքի մեջ: Եկեք գնանք խնդրենք, որ մի խելյաթխանա (հասարակաց) այգի շինի իրան համար հիշատակ: Մյուս եղբայրներն էլ հավանեցին ու գնացին թագավորի մոտ: Թագավորը թե՛ ընչի՞ եք եկել, որդիք: Թե՛ եկել ենք խնդրելու, որ մի խելյաթխանա այգի շինես քեզ հիշատակ, որ քանի կենդանի ես, ամեն մարդ մտնի, ուտի, քեզ փառք տա, մեռնելուց հետո էլ ողորմատեղ լինի: Թե՛ զորանաք, որդիք, շատ լավ եք միտք արել, փողն ինձանից, աշխատանքը ձեզանից. թե կարող եք, գնացեք, շինեցեք:

Որդիքը գնացին, այգին շինեցին, աշխարհքի բարիքներով լցրին, դրախտից էլ ծառ բերին, տնկեցին, ու այգեպանը մեջը դրին ու պատվիրեցին, որ եկող-գնացողին չէ շասի:

Այգին հասավ, պտուղ տվեց, ով ուզեց մտավ, կերավ, տարավ: Գնացողին չէ չկար:

Այս քաղաքում մի պառավ կին է լինում, ունենում է մի մինուճար որդի: Օրվան մի օրը որդին հիվանդանում է, ու սիրտը խաղող է ուզում:

— Նանի՛, ինչ կլինի ինձ համար խաղող ճարես,— թախանձում է մորը:

Պառավը վեր է կենում, գնում այգու դուռը, կանչում՝ այգեպան, այգեպան: Այգեպանը գալիս է, թե՛ ի՞նչ ես ուզում, ա՛յ նանի: Թե՛ հիվանդ ունեմ, սրտով խաղող է ուզում, աստը՝ ծու սիրուն, մի քանի ճիթ խաղող տուր: Այգեպանը այգին ջրելիս է լինում, շտապով գնում է մի երկու ճիթ խաղող պուկում, բերում թե՛ էս տար, հետո կգաս շատ կտանես:

Հիվանդն էդ խաղողն ուտում է, պրծնում ու ետ դառնում մորը թե՛ նանի՛, կշտացա ոչ, գնա մի քիչ էլ բեր: Պառավը գնում է տեսնում, որ այգեպանը այգու դուռը փակել է (ինքը գնացել ուրիշ տեղ): Ետ դատարկ տուն է գալիս, թե՛ ա՛յ որդի, այգու դուռը փակած էր, խաղող չեղավ: Հիվանդ որդին անդադար խաղող է ուզում և այդ գիշեր էլ խաղող կանչելով մեռնում: Առավոտը պառավը վեր է կենում, ձեռները դեպի երկինք տարածում, կանչում.

Արարիչ գթած,  
Որ շափ շես դրել արևի լույսին,  
Ոչ փակ՝ երկնքի պայծառ երեսին,  
Ու աշխարհքն անծայր, ծովերը անհուն,  
Ու էսքան բարիք, էսքան բարություն  
Լցրել, զրկել ես, փռել անխնա,  
Որ ամեն մի շունչ ուտի, լիանա,  
< . . . . . > պառավիս կոծին ու սուգին,  
< . . . . . > ձենին, իմ արտասուքին.  
Ինչպես իմ որդին ծաղիկ հասակում  
Խաղող կանչելով մեռավ իմ գոգում,  
Այնպես էլ, ո՛վ տեր, թող թագավորի  
Այգին շորանա, անապատ կտրի,  
Մառք փուշ դառնա, էլ ոչ կանաչի,  
Տերը, էրվելով, վա՛յ պտուղ կանչի:



Պառավն անեծքը վերջացրեց, թե չէ, թագավորի դրախտանման այգին իսկույն շորացավ, կանաչ տերևը թափվեց պտուղն էլ հետը, ծառերը մերկացան, և այգին մնաց սևացած կանգնած: Բոթը հասավ թագավորին: Թագավորը տղերանցը կանչեց, թե՛ այ որդիք, էս ի՞նչ բան էր, էս ինչ տեսիլք էր, մի գրբաց բերեք, գրին մտիկ անի, տեսնենք էս ինչ մեղք ենք արել մենք, էս ինչ էր, որ աստված մեզ նշանց տվեց: Գնացին, մասն եկան, մի հմուտ գրբաց գտան, բերին: Գրբացը գիրը բաց արավ ու պատմեց, թե՛ թագավորն ապրած կենա, քո այգին մի պառավի անեծքից է շորացել և կկանաչի միայն էն ժամանակ, երբ որ Հազարան բլբլուլը նրա մեջ բարիլուսին երեք անգամ կանչի, կդառնա էլ էն այգին, էլ էն պտուղը:

Թագավորը երեք որդի ունեւ: Թե՛ որդիք,— ասաց թագավորը,— ես արդեն ծեր եմ, հագիվ եմ ոտքի կանգնում: էս որ լսեցին, թագավորի երեք տղեն էլ վեր կացան, հորիցը հրաման առան ու ընկան աշխարհքե-աշխարհք, որ Հազարան բլբլուլը գտնեն, բերեն: Գնացին-գնացին, հասան մի տեղ, ոտ երեք ճամփա բաժանվում են, ճամփաբաժանում մի նշանով բարձր քար կա: էստեղ խորհուրդ արին, թե եկեք ամեն մեկս մի ճամփով գնանք ու թե որ մեկս Հազարան բլբլուլը գտնենք, գանք էստեղ, էս քարի վրա նշան դնենք, թե՛ ես գտա ու տարա, էլ դուք զուր տեղը ման շգաք: էսպես խորհուրդ արին ու ամեն մեկը մի ճամփա ընկավ, գնաց:

Մեծ ախպերը գնաց ընկավ մի քաղաք: Մի խորտկարարի խանութի պատահեց, ինքն էլ սոված էր, կերակուրները հոտը դուր եկավ, միտքը փոխեց, սկսեց մտածել, թե՛ ախպեր, ես որտեղից Հազարան բլբլուլը գտնեմ. արի էս պանդոկն աշկերտ մտնեմ, էս կերակուրներիցը գտնե կուտեմ ու կուշտ գլուխս կպահեմ:

Սա մնաց էստեղ:

Միջնակ ախպերն էլ մյուս ճամփով հասավ մի ուրիշ քաղաք: Սա էլ մի մրգավաճառի մոտ աշկերտ մտավ ու սա էլ մնաց էստեղ:

Փոքր եղբայրը գնաց, շատ գնաց, թե քիչ, պատահեց մի ծառի, որ շվաբումը հազար գլուխ ոչխար կնստեր: Հոգնած, շարդված էս ծառի տակին պառկեց, քնեց: Հանկարծ մի ֆըշ-

շոց ընկավ ականջովը: Աչքը բաց արավ, տեսավ, որ մի օձ փաթաթվել է ծառին, ուզում է բարձրանա վերև, վերևն էլ զշի (թուռնի) ճուտեր կան, ճվճվում, ծվծվում են: Թագավորի տղեն նետ ու աղեղը քաշեց, տվեց օձին կտոր-կտոր արավ, ծառի տակին կիտեց ու ինքը քնեց: Դու մի ասիլ էդ Ձմրուտ ղուշի բունն է, որ ամեն տարի ճուտ է հանում ու կարոտ է մնում, թե մի հասցնի, թոցնի, վիշապ օձը գալիս է, ուտում: Ինքը մնում է կարոտ: էս անգամ Ձմրուտ ղուշն եկավ, տեսավ ծառի տակին մի սև բան մեկնված, թևին արավ, վրա տվեց, որ կտոր-կտոր, ծվիկ-ծվիկ անի, թե՛ էս հենց իմ թշնամին է. որ գտա, բայց ճուտերը ծվծվոցն ընկան, թե՛ ա՛յ մեր, էդ տղին սպանիլ մի, մի էն կողմը, ծառի տակին մտիկ տուր, էն է մեր թշնամին. դա նետ ու աղեղով սպանեց, կտոր-կտոր արավ, ծառի տակին կիտեց, դա մեր փրկիչն է, դրանից ձեռք քաշիր: Ձմրուտ ղուշն էս որ լսեց, մոտեցավ, տեսավ թագավորի տղեն քնել է ու քրտնել է արևի թեժությունից: Թևս տարածեց, թևով շվաք արավ տղի վրա, մինչև նա քնեց, քնրց կշտացավ ու զարթնեց: Որ զարթնեց ու իրան վրա թևատարած Ձմրուտ ղուշին տեսավ, սարսափեց: Ձմրուտ ղուշը թե՛ մի՛ վախենար, քաջ տղա: Ես ամեն տարի ճուտ էի հանում ու կարոտ էի մնում, որ նրանց տեսնեմ թևատարած թռչելիս, սա գալիս էր, ուտում ու գնում: Հիմի դու, որ սրան սպանել ես, ասա, տեսնեմ ինչ կուզես ինձանից, որ քեզ տամ, քո լավությունը ետ վճարեմ: Տղեն թե՛ ես ինքս թագավորի տղա եմ, ոչ մի բանի կարոտություն չունեմ, միայն էսպես մի այգի շինեցիք, ու աշխատանքներս շորացավ: Հիմի ես Հազարան բլբլուլին եմ ման գալիս, տաննք բարիլուսին երեք անգամ այգումը ձեն ածի, որ շորացած այգին նորից կանաչի, բար ու պտուղ տա: Սա թե՛ ա՛յ տղա, շատ դժվար բան ասացիր, միայն ինչ անեմ, դու ինձ էնպես լավություն ես արել, որ ինչ էլ որ լինի պետք է քո ուզելիքը կատարեմ: Դե արի, թևերիս վրա նստիր: Ես քեզ այնքան կբարձրացնեմ, որ արևը քեզ կայրի, կհեռացնեմ, երբ որ տեսնես այրվում ես, այնքան ուժ ունեցիր, որ ինձ խփես, ես քեզ կիջեցնեմ: Ու թևն առավ Ձմրուտ ղուշը, ծվաց, թռավ, ելավ երկնքի երեսը: Գնաց-

գնաց, մի ժողի ափը վեր եկավ թե՛ ես մինչև էստեղ կարող եմ գալ, կարող չեմ սրանից դենը ուրիշ տերության է պատկանում: Ու ձայն տվեց՝ Չո՛ւկ ախպեր: Ծովը ճոթոնով Չուկն եկավ, թե՛ հը՛, Զմրուտ քույրիկ, էդ ի՞նչ է, հափշտակե՞մ դրան: Թե՛ չէ՛, սրա լավությունն ինձ հասել է, սրան պետք է տանես ծովի մյուս կողմը, Աժդըհին կանչես, ասես, որ սա Հազարան բլբլուլի ետևիցն է ման գալիս, Զմրուտ քույրիկն ուղարկել է, որ Հազարան բլբլուլի տեղն ու պատմությունը սրան հայտնես:

Չուկը թե՛ ա՛յ տղա, արի բերանս: Բերանն առավ, տարավ իրան սահմանն անց կացրեց, հասցրեց ծովի մյուս ափը: Չայն տվեց՝ Աժդահա՛: Անճոռնի Աժդահան եկավ, մի գազանի նման: Եկավ թե չէ, աղաղակեց.— Հը՛, Չուկն ախպեր, էդ ի՞նչ է, հափշտակո՞ւմ եմ դրան: Թե՛ չէ, Զմրուտ քույրիկն է ուղարկել սրան, սրա լավությունը նրան է հասել: Սրան պետք է տանես քո սահմանն անց կացնես, Հազարան բլբլուլի տեղն ու պատմությունն ասես, որ գնա գտնի: Այստեղ սրան ուն՛ առավ Աժդըհեն, տարավ, իրան սահմանն անց կացրեց, ներքե բերեց ու ասավ.— Դե, հիմի սրանից դենը գնալու իրավունք չունեմ ես: Այսուհետև Հազարան բլբլուլի տերության սահմանն է սկսում:

Կգնաս, առաջդ մի գետ կգա, Հազարան բլբլուլի տեղն աղի-լեղի է դարձրել, ապա մի դաշտ՝ փուշ ու տատասկ է բուսցրել: Ա՛յ, տեսնո՞ւմ ես էն բարձր ապարանքը, այնտեղ է բնակվում Հազարան բլբլուլի տերը: Կերթաս, ասպարանքին որ մոտենաս, առաջդ խեղկատակներ (օջիս հանողներ) դուրս կգան, այն բաները, այն ծաղրածությունները, այն խաղերը կանենք քո առաջին, որ հարիր տարվան մեռելն էլ կծիծաղի, բայց դու չպետք է ծիծաղես: Եթե ծիծաղեցիր, իմանաս, որ քո վերջին օրն է, քեզ կհաղթեն ու կոչնչացնեն: Կանցնես, կհասնես ապարանքի տակը, քառասուն ոտը սանդուղք կա: Վերևի բարձր սենյակում տեղը զցած քնած է Հազարան բլբլուլի տերը: էս ուրբաթից քնում է մինչև մեկ էլ մյուս ուրբաթ (7 տարին մի անգամ է քնում): Գլխավերևը ոսկե վանդակում կախ է արած Հազարան բլբլուլուր: Վանդակը կվերցնես. դուրս կգաս: Միայն չլինի թե իրան ձեռք տաս, որ իրան ձեռք

տվիր, կամ մի բան արիր, ետևիցդ ծառ, քար, հող, շուր ձեն կտան.— Տարա՛վ, տարա՛վ, հողածինը տարա՛վ: Դու ետ չնայես, թե չէ դարձյալ քո վերջին օրն է:

Թագավորագնը աստված կանչեց ու գնաց: Դուրս եկան ծաղրածուները, սրա առաջին էն տեսակ խաղեր հանեցին, որ հարյուր տարվան մեռելը կծիծաղեր, բայց տղեն չծիծաղեց, անց կացավ առյուծները, հասավ ապարանքի տակը: Դուռը բաց արավ, քառասուն ոտը սանդուղքը բարձրացավ, մտավ մի սենյակ, որ Հազարան բլբլուլի տերը քնած է, անկողնից շավղը տվել է պատերին: Հազարան բլբլուլի վանդակը վերցրեց գլխավերևից, ուզեց դուրս գա, մեկ էլ հանկարծ մտածեց, թե՛ ախպեր, էս Հազարան բլբլուլն է, որ արդեն տանում եմ. արի մի բաց անեմ (բաց էր, նրանից է գայթակղվում), տեսնեմ ինչ արարած է էս անկողնում քնածը: Վերմակը ետ քաշեց, տեսավ մի հրաշալի, մի հրեղեն ալջիկ մուշ-մուշ քնել է ու շիկնել: Այստեղ միտքը փոխվեց: Սկսեց տակի շորերը քանդել: Մեկը բաց արավ, տեսավ մյուսը տակին, այս էլ բաց արավ, մի ուրիշն էլ նրա տակին էր: Այսպես մինչև շորս ու հինգը բաց արավ, տեսավ չի վերջանում: Համբուրեց թշից, մի համբուրից երեսն այնքան քնքուշ էր, որ տեղը նշան մնաց: էստեղ միտն ընկավ ու ետ կանգնեց, թե՛ այս ինչ եմ անում, չէ՞ որ Աժդըհեն ինձ խրատեց, որ սրան չդիպչեմ: Եվ էսպես կիսամերկ թողեց աղջկանն յուր անկողնում ու դուրս եկավ: Ծաղրածուներն սկսեցին աղաղակել.— Տարա՛վ, տարա՛վ, հողածինը տարավ: Սա ետ չնայեց, սիրտը սկացրեց, անց կացավ:

Եկավ Աժդըհի մոտ: Աժդըհեն թե՛ հը՛, բերի՞ր, թե չէ: Թե՛ բերի: Թե՛ ապրես, դե արի շալակա: Շալակն առավ, տարավ յուր սահմանն անց կացրեց, հասցրեց Չկանը, Չուկն էլ բերավ Զմրուտ դուրի մոտ: Զմրուտ դուրը թևն առավ թոցրեց, տարավ հասցրեց Շնորհքի հոր սահմանը: Այստեղ վեր բերեց.— Դե գնա, ասաց, միայն իմացած լինես, Հազարան բլբլուլը որ բերիր, էն աղջիկը էլ քեզ հանգստություն չի տալու: Բայց, թե որ եկավ քեզ գտավ, դու դարձյալ ինձ մոտ արի:— Ասաց Զմրուտ դուրը ու թռավ: Տղեն եկավ, հասավ էն բարձր, նրշանով քարին, որտեղից երեք ուղղությամբ եղբայրները բա-

ժանվեցին: Տեսավ բան չկա գրած, եղբայրներից ոչ մեկը դեռ չի վերագրածել: Մտածեց, թե եթե ես մենակ գնամ, հիմի կասեն, որ Հազարան բլբլուր գտել է, գոռոզացել է, եղբայրներին թող արած, ինքը վեր է կացել մենակ եկել: Արի գնամ դեռ եղբայրներին էլ գտնեմ ու միասին գնանք: Գնաց, երկու եղբորն էլ գտավ, ամեն մեկին մի քաղաքում, մի նեղուխյան մեջ, մեկին խորտկարարի խանութում, մյուսին՝ մրգավաճառի, ու երեքը միասին ճանապարհ ընկան դեպի իրանց տունը:

Աչքալիս գնացին թագավորին, թե որդիքդ Հազարան բլբլուր գտել են, գալիս են: Թագավորն ուրախացած դուրս եկավ որդիների առաջը, տեսավ, ճշմարիտ որ Հազարան բլբլուր բերում են: Տարան Հազարան բլբլուր վանդակով այգում մի շոր ծառի ճյուղից քարշ արին: Առավոտը բարիլուսին երեք անգամ ձեն ածավ թե չէ, այգին նորից կանաչեց, ամեն ծառ ու թուփ իրան պտղով ու տերևով լցվեց, դարձավ էլ առաջվան դրախտը, էլ էն այգին, էլ էն գնացող-եկողը, ուտողն ու տանողը:

Զարթնեց Հազարան բլբլուրի տերը, աչքը բաց արավ, տեսավ վերջուկը վրից ետ քաշած, փոխանը, տակի շորերը քանդած (ու թուշը այրում է համբուլրի տեղը): Մտիկ արավ վերև, որ Հազարան բլբլուրն էլ չկա: Նայեց հայելուն, խալը տեսավ:

Վեր կացավ, թլիսմ արավ, լվացվեց, շայ խմեց ու մի թուղթ ծակեց, անցկացրեց մեջքը, բերեց ծծերից ներքև ամբացրեց: Զորս կողմին, ամեն մի կողմը մի դալամ գիր գրեց (թլիսմ): Էդ թլիսմը (գիրը) դրան բարձրացրեց, հանեց երկնքի երեսը: Հասավ ճամփեն պահող խեղկատակներին, — թե՛ ա՛յ խեղկատակներ, Հազարան բլբլուրը դեսն անց է կացել, կամ տվեք, կամ տեղն ասացեք, թե չէ՛ ձեռ մեծ կտորն ականջներդ կթողնեմ: Թե՛ մենք ի՞նչ անենք, մենք գետնի երեսի: Նա երկնքումը, առավ, դենը գնաց:

Գնաց Աժդըհի մոտ:— Աժդըհա՛, Հազարան բլբլուրը դեսն անց է կացել, կամ տուր, կամ տեղն ասա, թե չէ՛ մեծ կտորդ ականջդ եմ թողնում: Աժդըհեն թե՛ ես ի՞նչ անեմ, ես Աժդըհա եմ գետնի երեսին, նա քեզ պես երկնքումը, առավ, դենը գնաց:

Եկավ Ջկան մոտ:— Չո՛ւկը, Հազարան բլբլուրը դեսն անց է կացել, կամ տուր, կամ տեղն ասա, թե չէ՛ կտոր-կտոր եմ անում: Չուկը թե՛ ես ի՞նչ անեմ, ես Չուկն եմ ծովի միջին. նա քեզ պես երկնքումը, թուր, դենը տարավ:

Անց կացավ, եկավ թագավորի քաղաքի մոտ վեր եկավ: Թլիսմի գրերը քանդեց ու մի նոր էնպես գիր արավ, որ քաղաքին երևաց, թե երեք կարգ զորքով քաղաքը շրջապատված է: Եկան թագավորին հայտնեցին, թե քաղաքը պաշարված է, եթե դու թշնամի ունես, ինչո՞ւ չես արթուն մնում: Թագավորն եկավ էս աղջկա մոտ, թե՛ ի՞նչ ես ուզում ինձանից: Թե՛ ի՛մ Հազարան բլբլուրը էստեղ է, տո՛ւր, թե չէ՛ քաղաքիդ վրա կրակ եմ թափում: Թագավորը թե՛ լավ, դու էդ զորքը վեր կալ, որ քաղաքումը կնիկ, երեխա կա, վախից կտտորվում են. մինչև տեսնենք ինչ ենք անում: Թագավորը գնաց, տղերանցը կանչեց, թե՛ ա՛յ որդիք, Հազարան բլբլուրի տերն եկել է, գնացեք, տեսնեմ ինչ պատասխան եք տալիս: Փոքրն ասաց՝ ես կերթամ: Մեծը թե՛ քո բանը չի, ես կերթամ ու Քեսս ինչ եմ անում: Հազարան բլբլուրի տերը երկու արաբ դռնապան էր կանգնացրել շեմքում ու պատվիրել, թե մտնողը եթե ի՛մ ասած մարդը կլինի, լավ, թե չէ, որ աչքով անեմ, տվեք. ատամները փորն ածեցեք:

Թագավորի տղեն եկավ, բարով տվին, բարով առան: Աղջիկը հարցրեց, թե՛ ա՛յ տղա, Հազարան բլբլուրը դո՞ւ ես բերել:

Թե՛ ես եմ բերել:

— Ո՞րտեղից բերիր:

Թե՛ երեք ճամփաբաժանում մի բարձր խաչքառ կա, նրա վրա վանդակով քարշ արած էր, վերցրի, բերի:

Այստեղ, Հազարան բլբլուրի տերը որ աչքով արավ արաբներին, տվին թագավորի տղի ատամները փորն ածին ու էսպես խայտառակված ճանապարհ դրին: Միջնակն էլ եկավ, էլ էսպես փոր-փոշման գնաց: Վերջը Հազարան բլբլուրը բերող փոքր տղեն եկավ: Գալուն պես թե՛ բարով, սիրուն աղջիկ, ասավ ու ծիծաղեց: Աղջիկը թե՛ ա՛յ տղա, բարեն ասենք աստծունն է, ծիծաղդ էլ ի՞նչ էր: Թե՛ ոչինչ, ճանապարհի՞ն գալիս մի աղջիկ տեսա ներքին շորերը քանդած, ոտներն ըն-

կամ: Եվ հայտնում է, որ այն էլ յուր համբույրի տեղն է (ևրենն այնքան քնքուշ էր, որ համբույրի տեղը մնաց): Իսկույն իմացավ, որ սա ինքն է Հաղարան բյուրբյուրի բերողը:— Ա՛յ տղս,— ասավ,— դուշն իրան թևով, օձն իրան պորտովը շն՛ կարող էնտեղ գալ, ամենքն իրանց սահմանն ունեն, ի՞նչպես ես դու շորս սահման անց կացել, հասել ինձ մոտ: Թե՛ դե բերողը ես եմ, ինչպես բեռել եմ, բերել եմ: Հիմի ինչ կուզես արա, միայն էս գորքը հեռացրու քաղաքից: Աղջ՛կը թե՛ ես քու մեղքը կթողնեմ, քեզ կններեմ ու զորքն էլ քաղաքից ետ կքաշեմ, եթե դու լուր բերես, թե Սինամը Գյուլին ինչ արավ, ՚յուրը Սինամին ինչ արավ. դու Հազարան բյուրբյուր բերիր, կարող ես այս էլ բերել: Թե բերիր, բերիր, թե չէ քեզ կտորկտոր եմ անելու, ձեր քաղաքն էլ ջուր եմ շինելու:

## 2. ՄԻՆԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ

### Վարդը սրտում, դարդը սրտում

Վեր կացավ Շնորհքը, գնաց Զմրուտ ղուշի մոտ: Պատմեց ին՛ Հազարաձայն սոխակի տերն եկել է, տեղս նեղել, ինձ սայման է առաջարկել մի լուր բերել, թե Սինամը Գյուլին ինչ արավ, Գյուլը Սինամին ինչ արավ, եթե ոչ սպառնում է քաղաքը կործանել:

— Արի թևս,— ասաց Զմրուտ ղուշը: Եվ թոցրեց, բարձրացրեց մինչև արևը ու իջավ Սինամ թագավորի տերութայան մեջ:

Այստեղ արձակեց Շնորհքին, միայն իր փետուրներից մեկը տվեց և պատվիրեց, թե՛ երբ որ նեղութայան մեջ կլինես, կրակ տուր, ես իսկույն օգնութայան կհասնեմ:

Շնորհքը դերվիշի շորով մտավ Սինամ թագավորի մայրաքաղաքը: Իմացավ, որ ամեն մի աղքատ կամ օտարական թագավորի հյուրն է, ինքն էլ գնաց պալատը: Պալատականները եկան ողջունեցին ծպտյալ թագավորի որդուն, տարան մի շքեղ կահավորված ապարանք, լի ամեն տեսակ բարություններով ու հարմարություններով, և բազմաթիվ ծառաներ պատրաստ կանգնեցին նրան ծառայելու: Համադամ կերա-

կուրներ բեր՛ն ոսկեղեն ու արծաթեղեն ամաններով, տեսակ-տեսակ մրգեղեններ, քաղցրավենիք ու զովարար բմպելիքներ բերին նույնպես ոսկեղեն ու արծաթեղեն գավաթներով ու անոթներով:

Այդ ճոխ-շռայլ հյուրասիրությունը զարմացրեց Շնորհքին:

— Մի՞թե այսքան շռայլ է պատվում ձեր թագավորը իր բոլոր հյուրերին,— հարցրեց ծառայողներին:

— Թեկուզ հետին աղքատ, թե հարուստ,— պատասխանեցին ծառաները:

Բայց նա ավելի զարմացավ, երբ որ այդ բոլոր անոթները դատարկվելուց հետո մի առանձին պահարանում թողին իրան մոտ, և մյուս անգամ նոր թանկագին ամաններ բերին, այս էլ թողին և այսպես շարունակ:

— Ինչո՞ւ եք այստեղ թողնում,— հարցրեց Շնորհքը:

— Մեր թագավորի հյուրասիրութայան կարգն այդպես է,— պատասխանեցին սպասավորները,— այն բոլոր անոթները, ինչ որ գործ է ածում հյուրը, որքան ժամանակ որ մնաց, բոլորն իրան են պատկանում, պետք է գնալիս իրան հետ տանի:

Այս անօրինակ շռայլությունը անպատճառ կապ ունի թագավորի զաղտնիքի հետ, մտածեց սրտագետ Շնորհքը և խընդրեց, որ թագավորին հայտնեն:

— Ի՞նչ ես կամենում, օտարական,— հարցրեց Սինամ թագավորը,— կամ ո՞ր աշխարհքիցն ես դու:

— Ձեր տերութայան պայծառությունն եմ կամենում,— պատասխանեց Շնորհքը,— ես թափառական մարդ եմ, ամեն աշխարհ ման եմ եկել, ամեն տեսակ հրաշք տեսել եմ, միայն ինչ որ տեսա ձեր տերութայան մեջ, այդ ինձ շատ զարմացրեց:

— Ի՞նչը,— հարցրեց Սինամ թագավորը:

— Ձեր ողորմութայան այս անչափ առատությունը, տեր արքա,— պատասխանեց Շնորհքը:— Ես ահա մի քանի օր է հյուր եմ ձեր ողորմածութայանը և այժմ հեռանալիս այնքան արծաթեղեն ու ոսկեղեն անոթներ պետք է տանեմ, որ մի ահագին հարստություն եմ կազմում: Այդպես և ձեր մյուս անհամար հյուրերը, որ ամեն աշխարհքից գալիս-անցնում են ձեր մայրաքաղաքով: Ամեն մի եկող-գնացող անպատճառ տեսածը կպատմի յուր հայրենիքում, ինչպես ես եմ պատմե-

լու, և քիչ շին բախտախնդիր մարդիկ, որ ամեն կողմից կգան ձեր ծայրահեղ ողորմածությունը հարստահարելու: Մի՞թե այդ լավ է կամ արդյոք չի՞ սպառել նույնիսկ անհուն հարստությունը և տերությանը սնանկութիւն < . . . >

— Այս շռայլության մեջն եմ գտնում ես իմ հոգու հանգրստությունը, — ասաց Սինամ թագավորը, — այս անշահի ողորմածություններով եմ ուզում կսկիծս մեղմացնել ու վիշաքս մոռանալ:

— Թողություն արեք համարձակությանս համար, — խոսաց Շնորհքը, — ես աշխարհք տեսած մարդ եմ, գուցե կարողանամ մի ճար անել ձեր ցավին, եթե շնորհ անեք ինձ պատմելու:

— Ո՛ր, այդ իմ գաղտնիքն է, — պատասխանեց Սինամ թագավորը, — այդ գաղտնիքը ինձ հետ պետք է հողը մտնի:

— Ես այնքան համակված եմ ձեր անհայտ վշտով և այնքան բուռն է իմ մեջ ձեզ օգնելու ցանկությունը և այնքան վստահ եմ իմ ունեցած հմտությանը, որ շեմ դադարիլ թախանձելու ձեր վեհությանը, որ ինձ հայտնեք այդ վիշտը:

— Դու բարեսիրտ մարդ ես, ո՛վ անցվորական, և շատ հաճելի ես իմ սրտին, դրա համար էլ ավելի ևս շեմ կարող պատմիլ իմ գաղտնիքը: Դե որ այդքան սրտով ուզում ես իմ գաղտնիքն իմանալ, — ասաց թագավորը, — գնա առաջ իմացի՛ր Յնորք մինարեի երգչի ցավը: Նա ուրախ, զվարթ, ոգևորված գալիս է, բարձրանում մինարեի գլուխը, երգում է, երգում և այնտեղից իջնում է տխուր, մռայլ, խորտակված... սկսում է կուրծքը ծեծել, մազերը փետել: — Գնա նրա ցավն իմացիր, այնժամ իմ գաղտնիքը քեզ կասեմ:

Վեր կացավ Շնորհքը, ճանապարհ ընկավ: Գնաց՝ հարց ու փորձ անելով ման եկավ, գտավ Յնորք մինարեն: Մտոր կանգնեց սպասեց մինչև երեկո: Իրիկնադեմին հայտնվեց երգիչը — մի զանգրահեր բարձրահասակ տղա մաշված դեմքով, կրակաւ աչքերով: Աշխույժ, ուրախ, խնդալով նա եկավ բարձրացավ մինարեի գլուխը և սկսեց երգել: Շնորհքին թվաց, թե հրեշտակի ձայն էր գալիս երկնքից: Հոգեզմայլ դրության մեջ այնքան կախարդիչ, այնքան հուզիչ էր Յնորքի երգչի ձայնը: Նրա երգի ձայնից թովված երկնքի թռչունները հավաքվեցին

388

և վերջալուսի կարմիր շողերի մեջ թրթռալով սկսեցին պտտվել: գլխի շուրջը: Ունկնդիր ժողովուրդն էլ շփմացավ, հարբեց, ուշաթափվեց: Շնորհքն էլ ուշքից գնաց և երբ որ աչքը բաց արավ, էլ ոչ երգիչը կար, ոչ երգը: Մութն էր: Երգը վերջացնելուց հետո նա հանկարծ մռայլեց, մթնեց: Սկսեց ցած իջնել արտասովելով ու հառաչելով, մազերը փետելով ու կուրծքը կոծելով:

Երբ որ ներքև եկավ, հանդարտվեց, մտավ փողոցը և ուզում էր դնալ տուն, Շնորհքը առաջը կտրեց.

— Այ Աստծո պաշտոնյա, — ասաց նա, — ես օտարական մարդ եմ, ծանոթ չունեմ այս քաղաքում, կարելի՞ է ինձ հյուրընդունեք մի գիշեր:

— Հյուր ենք բոլորս աշխարհքում, իմ տունն էլ ձերն է. համեցեք գնանք:

Երեկոյան, երբ որ նստեցին հաց ուտելու, երգիչը խոսք բաց արավ, թե որ աշխարհքներն էր անցել իր հյուրը և ինչ բաներ էր տեսել:

— Ես շատ աշխարհներ եմ ման եկել, — ասաց Շնորհքը, — շատ զարմանալի բաներ եմ տեսել իմ օրում, բայց ինչ այսօր տեսա աչքովս էս քաղաքում, այդպես զարմանք բան չեմ տեսել ես բազմափորձ իմ կյանքում:

— Ի՞նչ տեսար այսօր, — հարցրեց երգիչը:

— Իրիկնապահին, երբոր ես նոր եկած, մոլորված կանդնած էի Յնորք մինարեի մոտ և միտք էի անում, թե որտեղ եմ գիշերելու, այդ ժամանակ դու եկար, աշխույժ ու զվարթ և ուրախուրախ բարձրացար մինարեի գլուխը: Երգդ նույնպես զվարթ էր և լիքը մի գերբնական ալվյունով ու հույսով, բայց իջնելիս հանկարծ տրտմեցիր, սկսեցիր լալ, քեզ կոծել, ես այդ քարարքից ապշած եմ մնացել:

— Հացդ կեր, պանդուխտ իմ բարեկամ, խնդրեց երգիչը կրկին:

Այդպես անզգույշ ձեռք մի տար անբուժելի իմ վերքին: Ես շեմ կարող, Աստված շահի կտրել հացը մի մարդի, Որ այդպես ծածկում է տանջող ցավը իր սրտի:

389

Մենք աշխարհքում ի՞նչ ենք ապրում, թե իրար դարդ էլ չիմանանք,

Դարդ չիմանանք, դարման չանենք,

Ի՞նչ ենք ապրում—իրարու ցավ եթե չասենք, չիմանանք:

— Ինձ այդպես խիստ մի անարգիր, ո՛վ բարի հյուր

անծանոթ,

եվ մի ստիպիր պատմելու այն, որի լուկ հիշողութունն ինձ

կարող է խնեթացնել:

Հաց կեր և եթե ազնիվ, բարի մի մարդ ես դու և սիրտ

ունես կարեկից,

Պատմիր լսենք, ի՞նչ ես տեսել քո ման եկած աշխարհքից:

— Ո՛չ, առաջիս աղուհացող ես խնդրում եմ, պահանջում,

Որ ինձ հայտնես՝ ես իմանամ ի՞նչն է այդպես քեզ

տանջում...

### Թամբ շինողի (թամբագործի) արարքը\*

— Դե, որ այդպես է, իմ վիշտը քեզ կհայտնեմ, միայն առաջ պետք է գնաս իմանաս այն թամբ շինողի < . . . >

Մի քանի հազար ուրբի է ծախսում, մարգարիտներով ու գոհարներով զարդարած տարեներ միայն մի թամբ է շինում, տարվա վերջը ծախելուց հետո ետ կանչում առնողին, ձեռքից՝ առնում, թամբը ջարդում ու փողը ետ տալիս, թե գնա, էլ չեմ ծախում: Գնա իմացիր, թե նա ինչու է այդպես անում, քանի որ ուրիշ աշխատանք էլ չունի, այդքան ծախս ու աշխատանք անում, տարեներ միայն մի թամբ է շինում, այն էլ այդպես է անում:

Վեր կացավ Շնորհքը գնաց, ման եկավ գտավ թամբ շինողին: Տեսավ, ճշմարիտ որ մի խոնավ ու մութ գետնափորում, մի կտոր փալասի վրա նստած, թամբի վրա հարմարեցնում է թանկագին քարերը: Գործը վերջացնում է, դուրս է գալիս մի շքեղ թամբ, ամբողջովին զարդարած անգին քարե-

\* Այս հատվածը գրված է առանձին թերթերի վրա: Միացնում ենք սատուների ընդհանուր շարադրանքին՝ դնելով հատուկ նշանով Թումանյանի ցոյց տված տեղում (խմբ.):

րով: Գալիս են մուշտարիներ: Մեկը մեծ գումար է տալիս, առնում: Ուզում է հեռանա, վարպետը ետ է կանչում, թե բեր պակաս բան ունի: Չեռքիցն առնում է, զարկում, ջարդում, վեր ածում, փողը ետ տալիս, թե՛ գնա, էլ չեմ ծախում:

Շնորհքն սպասում է մինչև մութն ընկնում է, վարպետը իր խանութի դուռը փակում է, տուն գնում: Ճանապարհին առաջը կտրում է, խնդրում, որ իրան հյուր ընդունի: Վարպետը ուրախանում է: Միասին գնում են տուն, տեսնում են ամեն բան մաքուր, կարգին, վեր քաղած, սրբած, ճրագները վառած, սեղանը պատրաստ, միայն ոչ ոք չկա: Իրիկունը զրույց անելիս Շնորհքը հարցնում է, թե այսօր այս տեսակ բան տեսա, ի՞նչ էր դրա պատճառը:

— Իզուր մի հարցնիր, բարի հյուր,— խնդրեց վարպետը,— ուրիշ բան խոսիր, ես քեզ չեմ պատմիլ այն, որ ինչ ստիպում է իմ ամբողջ տարվա աշխատանքը մի զարկով, մի ակնթարթում ոչնչացնել:

— Խնդրում եմ, ինձ հայտնեցեք, և ես վերջ կտամ այդ տանջանքին:

— Չեմ ուզում, որ վերջ լինի իմ տանջանքին և ոչ գաղտնիքս հայտնել աշխարհքին:

— Թող այդպես լինի, պատմիր ու, ես աշխարհքից հոգնած մարդ եմ, իմ արյունը քեզ լինի, գլուխս կտրիր, գաղտնիքը հայտնի չդառնա աշխարհքին:

— Հա՛, միայն այդ պայմանով կարելի է: Թող քո վիզը լինի քո մեղքը: Դե՛հ լսիր:

Ծս ունեի մի կին, երկու երեխա: Այնքան էի սիրում նրանց, որ լեզուն չի կարող պատմել: Մի գիշեր անկողին մտնելիս կինս ինձ խնդրեց, թե՛ զգույշ եղիր, ձեռք չտաս իմ աջ ծծին: Անհամբեր է մարդս, չկարողացա համբերել: Առավոտը վե՛ր կացանք, տեսանք մի երեխաս չբացել է: Մյուս գիշերն էլ խնդրեց, թե զգույշ եղիր, ձեռք չտաս ձախ ծծին: Էլ չգիտեմ ինչպես եղավ, քուն թե արթուն երագների մեջ ձեռքս դիւլի էր ձախ ծծին: Առավոտը վեր կացանք, տեսանք, մյուս երեխաս էլ է չբացել: Երրորդ գիշերն ասաց.— Զգույշ եղիր, ինձ շոտեհնաս, թե չէ նոր փորձանքի կզանք: Ծս խոստումս չպահեցի: Առավոտը վեր կացա տեսա կինս էլ չկա: Այս աշխարհ-

քում ինչ որ սիրելի էին, բոլորը կորան իմ հանցանքով, իմ մեղքով: Այն օրից ես մենակ եմ աշխարհքում, իմ տանը, ամեն տեղ:

Այժմ, տեսար, ամեն բան ինչպես կարգին ու պատրաստ էր այս ապարանքում: Ոչ ոք չկա: Այդ բոլորը կինս է անում, բայց էլ ինձ չի երևում երբեք: Դուրս նայիր, տեսնո՞ւմ ես լուսնյակի լուսով ողողված պարտեզը: Տեսնո՞ւմ ես ծառերի տակ մարմարյա ավազանը: Ամեն առավոտ վշտից խեղդված ու մենակ դուրս եմ գալիս, տեսնում եմ այն ավազանում լողանում են իմ երեխաները: Վազում եմ, ուզում եմ գրկել, աղավնի են դառնում, չքանում: Դե՛ր ու ասա, այս վշտի տերը կարո՞ղ է աշխատանքի ու ապրուստի մասին մտածել:

— Ո՛չ, վարպետ:

— Ես էլ ամբողջ տարին ինձ տանջելով աշխատում եմ, ինչպես սովորութուն, հենց վաստակս ստանալու բոլորին մտքումս հարցնում եմ, թե ո՞ւմ համար է, երբ որ նրանք չկան: Եվ ահա այդ դառն բոլորին մի հարվածով ամբողջ տարվա աշխատանքս ոչնչացնում եմ, որ սիրտս հովանա, ո՛ր ես էլ չվայելեմ:

\* — Դե, որ այդպես է, իմացած եղիր, որ իմ ցավի գաղտնիքը անմահների գաղտնիքն է, և այդ գաղտնիքը ով որ իմացավ, պետք է հավիտյան լռի, որ աշխարհ չընկնի, և անմահները շարատավորվեն հողեղենների բամբասանքով:

— Ես աշխարհ տեսած, կշտացած մարդ եմ,— ասաց Շնորհքը,— մենակ այս մի բանն է մնում, որ իմանամ ու ճաշակեմ, այս մի բավականությունն էլ դու տուր ինձ և նրանից հետո էլ ինչ եմ անում կյանքը:

— Թեև ծանր է, բայց երբ որ դու բռնադատում ես այդքան, միայն այդ պայմանով կպատմեմ: Դե, լսի՛ր:

Մի հանդիսավոր օր էր, մի հրաշալի խաղաղ օր: Տոնական ժողովուրդը պճնված ծփում էր Յնորք միևարեի շուրջը, անհամբեր սպասում էր իմ երգին: Ես ոգևորված օրվա հանդիսավորությունից և այն մտքով, որ գրավել էի այնքան մեծ

բազմություն, այնպես էի երգում, որ երկնքի թռչունները հափըշտակված գալիս էին թրթռալով գլխիս շուրջը պտտվում: Այդ թռչունների միջից մեկը՝ մի մեծը երգելու ժամանակ իջավ— ինձ հափշտակեց ու տարավ: Նա տարավ, ինձ վայր դրեց մի տեղ, դրախտի մեջ: Աչք եմ ածում, դրախտն է շուրջս:

Նայում եմ շորս կողմս, դրախտի հավքերը մշտադալար թփերի վրա օրհնութուններ են երգում ու ծվլում են ջինջ, բուրավետ օդում, անմահական ջրերը անուշ ձայներով կարկաչում են, ծիծաղում են երջանիկ ափերի մեջ, և հեզ օրորվելով բուրմունք են ծավալում անթառամ ծաղիկները... Ես հիացած եմ, ինչ որ տեսնում եմ և սպասում եմ, թե ինչ պետք է տեսնեմ: Մի փոքր առաջ գնացի, խնկենի թփերի ետևից հանկարծ դիմացս ելավ մի հուրի-հրեղեն աղջիկ: Թափանցիկ մարմինը սքողված է թեթև մշուշի մեջ և երկայն մագերթ թիկունքին մեղմ ծփում են տված մեղմիկ գեփյուռին: Աստվածային իր աչքերը գեցեց ինձ վրա, ուշքս թռավ իմ ցլխից, աչքերս խոնարհեցի:

— Է՛յ, հողեղեն,— կանչեց աղջիկը,— երկնքի թռչուններն էլ շեն կարողանում այս կողմերն անցնել, դու ի՞նչ սրտով ես այստեղ մտել և շփոթում ես մեր անմեղ սրտերը: Սակայն եթե դու արժանավոր մեկն ես, նստիր, գլուխս պետք է դնեմ ծնկանդ ու քնեմ: Բայց վա՛յ, եթե ինձ համբուրես, շատ կզղջաս:

Մեկներս ակամա ծալվեցին... Նա պառկեց, գլուխը դրեց ծնկանս ու աչքերը փակեց: Ես նայեցի, քանի նայեցի սիրտ, ցանկացավ, սիրտս վառվեց, էլ չկարողացա դիմանալ, գլուխս իրան-իրան իջավ և... համբուրեցի: Համբուրից վեր թռավ նա և կանչեց.

— Ա՛յ անհամբեր հողեղեն, ձեզ չի լինիլ հավատալ: Մի՛թե ես քեզ չզգուշացրի:— Դու ինձանից մի համբույր գողացար, բայց շատ բանից զրկվեցիր:

Ասաց ու չքացավ: Ես մնացի կանգնած՝ ապաշավանքով և ափսոսանքով հոգիս լիքը: Սկսեցի առաջ գնալ և մտածում եմ շեմ հասկանում, թե ինչ եմ ես, ուր եմ գնում: Կրկին մի

\* Այստեղից շարունակվում է պատումի նախկին շարադրանքը (խմբ.):

քանի քայլ և ահա ջրի ափից մի ուրիշը երևեցավ: Սա ավելի շքեղ, ավելի շքնաղ և գեղեցիկ արարած:

Նա ինձ նայեց.

Ասես երկնից կայծակ զարկեց իմ սրտին,

Եվ աչքերս խոնարհեցի ես գետին:

Ո՞վ ես, ասավ, ինչպե՞ս եկար, Կամ ո՞վ է քեզ ուղարկել,

Թե երկնային ոգի ես դու, նստիր ննջեմ քո գրկում:

Բայց, տես, եթե ինձ համբուրես, կկորցնես այնքան բան,

Որ ողբալու ոչ աչքերդ և ոչ կյանքդ է բավական:

Ես նստեցի, նա թեք ընկավ իմ գոգում և քնեց: Կուսական մարմնի հպումից ընդարմություն եկավ ինձ: Կուսական թարմությունից արբեցած նայում եմ ես, թե ինչպես նրա շնաշխարհիկ կուրծքը ելնում է— իջնում, սիրտս վառում է, և նրա անթարթ աչքերի թերթերունքները բորփում են, բորբոքում սրտիս կրակը: Գլուխս պտտվեց, ինձ թվաց, թե այն դեմքը մոտենում էր ինձ, և ես միայն համբուլրն զգացի: Զարթնեց նա և կանչեց.

— Ափսո՞ս, թշվառ հողեղեն, մի համբուլրով դու կորցրիր այնքան բան:

Նա էլ անհայտացավ, և ես ցավից ու սրտնեղությունից ինձ անիծելով մտածում էի:

Այս ժամանակ ինձ սթափեցրեց մի ուրիշ ձայն:

— Ո՞վ ես, հողեղեն, որ դեգերում ես անմահների օթևանում:

Մտիկ արի, տեսնեմ բարձր ծառի տակ կանգնած ուրիշ մի աղջիկ: Բուրբ ուժս հավաքելով, լեզվիս կապանքը խզեցի և աղերսելով այսպես ասացի.

Գթա, շքնաղ, ասա տեսնեմ, ո՞ւր եմ ընկել արդյոք ես,

Եվ ո՞վ եք դուք, որ տանջում եք անգթաբար ինձ այդպես:

Իմ հոգին չի դիմանալ ձեր հրապուրանքին գերբնական, ողորմացեք, քնքուշ ոգիք, ինձ իմ ուժից վեր փորձության մեջ:

— Այնտեղ ես դու, ուր հողեղենի ոտքը երբեք չի դիպել: քայց դու, որ պատահմունքով ընկել ես այստեղ, նստիր այստեղ, թող ես հանգչեմ քո գրկում, միայն լսի՞ր՝ հրապուլրքից չհաղթվես և համբուրես ինձ, թե չէ հետո շատ կզղջաս:

Եվ այս երրորդը այնքան գերազանց էր, ազնիվ ու առավել, որ այն երկու փորձից հետո մոռացա խոստումս ես պահել:

— Այժմ գնա, հեզ հողեղեն, ու տառապիր կարոտից:

Այսպես կանչեց նա էլ հանկարծ ու շքացավ իմ մոտից:

Երջանկության բուպեի տեղ մեծ վիշտ իջավ ինձ վրա:

Օրը արդեն տարածամել, մոտ էր արևն իր մուտին,

Դրախտի ձայներն ցնծում էին երեկոյան մեղեդիներ:

Ես մնացի մենակ կանգնած, միտք եմ անում դառնացած,

Ի՞նչ կորցրի իմ թուլությամբ, մի վաղանցուկ համբուլրով:

Առաջ եմ գնում.

Կախարդական տեսարաններ նորանոր,

Մեկը մյուսից սքանչելի, մեկ մյուսից փառավոր:

Բայց ոչ մի տեղ չեմ հանդիպում էլ նրանցից ոչ մեկին,

Անհուն ցավով ու կարոտով տառապում է իմ հոգին:

Հանկարծ եթերային, երկնանման ապարանք:

Գուցե այստեղ, ասում եմ ես, կհանդիպեն ինձ նրանք:

Սիրտ եմ անում, ներս եմ մտնում, ոչ ոք էլ չկա:

Զայն եմ տալիս— թնդում է դատարկ ապարանքը ահավոր:

Հանկարծ մի ձայն թունդ հորդում է՝ քյավթառ, արի սրան տար:

Ու մթնեցին իմ աչքերը, կորավ շուրջս ինչ որ կար:

Սրտակոտոր, գլխաքարշ ետ դարձա եկած ճամփովս և չեմ հիշում՝ ինչպես դուրս եկա այգուց, ինչպես կրկին ընկա այստեղ, միայն գիտեմ այնտեղ թողի ուշքս, միտքս ու հոգիս: Մեկ էլ տեսա կրկին կանգնած եմ մի նարեի գլխին, կրկին այս կեղտոտ քաղաքում, շուրջս ամբոխն այս տգեղ, այս կոպիտ: Այն օրվանից ուրախ-ուրախ ես դիմում եմ մի նարեն, հուսով լիքը բարձրանում, երգում եմ, միշտ ավելի ու ավելի



ոգևորված, վառված նրանց կարոտով, ավելի ու ավելի սրտայի  
ու հրապուրիչ, և իմ ձայնի ելևէջները նվիրում եմ նրանց...

էլ երկնքից ցած են իջնում երգից թովված հավքերը,  
Բայց, ա՛խ, չըկա, էլ չի գալիս այս թռչունը իմ ծանոթ,  
Որ ինձ կրկին առնի տանի այն դրախտը, նրանց մոտ:

Եվ իջնում եմ ես հուսահատ ու խելագար վշտից, կարո-  
տից: Այդպես լալիս եմ, կուրծքս կոծում:

— Դե, դու ասա, այսպիսի կորուստի ինչպես դիմանա մի  
երիտասարդ սիրտ, և միտքը մնա իր բնական դրուժյան մեջ:

— Ծանր է, ավա՛ղ,— հառաչեց Շնորհքը:— Տեսել եմ շատ  
հարուստ մարդիկ, որ հարստություն են կորցրել, տեսել եմ  
թագավորներ, որ զրկվել են իրանց թագավորությունից, շատ  
ցավեր եմ տեսել աշխարհքում, բայց քո կորուստը ու վիշտը  
մեծ է բոլորից:

— Ահա քեզ պատմեցի իմ ցավը, դու, մի հողեղեն մարդ,  
չես կարող ինձ տալ այն, ինչից որ անմահներն են զրկել:  
Իսկ այս գաղտնիքը չի կարելի դուրս տանել, որ ավելի մեծ  
հանցանքով չզրկվեմ երբեք նրանց կրկին արժանանալու հույ-  
սից և անմահների համբույրները չդարձնեմ մարդկային բամ-  
բասանքի առարկա... և վերջապես, ի՞նչ կասի աշխարհքը,  
երբ որ իմանա, որ ես իր աստծուն և իր համար չեմ ազոթում:  
Դե՛, պատրաստվիր, իմ անբախտ հյուր, թեև ծանր է պայ-  
մանը, բայց չեմ կարող չկատարել:

— Ես պատրաստ եմ,— ասաց Շնորհքը,— կատարիր պայ-  
մանը, բայց խնդրում եմ, առաջ մի կաթիլ ջուր տուր սիրտս  
հովանա, որովհետև վառեցիր քո պատմությունով:

Երգիչը վեր կացավ, գնաց ջուր բերելու: Շնորհքը դուռը  
բաց արավ, դուրս եկավ և կորավ գիշերային մթության մեջ:  
Եկավ Սինամ թագավորի մոտ:

— Բարով, բարեկամ,— ասաց Սինամ թագավորը,— խո-  
սի՛ր, տեսնեմ ինչ իմացար:

Շնորհքը պատմեց յուր ճանապարհորդությունը և Ցնորք  
մինարեի երգչի ցավը:

— Իմ սրտի համար մխիթարական է քո բերած գաղտնի-

քը,— ասաց Սինամ թագավորը:— Հիմա իմանում եմ, որ  
մենակ ես չեմ վշտի տեր, ինձ նման ուրիշն էլ կա: Եվ ով  
գիտի, գուցե նրա վիշտը մեծ է իմից: Ես քեզ խոստացա, որ  
նրա գաղտնիքը իմանալուց հետո իմն էլ պատմեմ, բայց այժմ  
ներողություն պետք է խնդրեմ, որ չեմ կարող: Ես թեև խոս-  
տացա, միայն նրա համար, որ հույս չունեի, թե կարողանա-  
լիր երգչի գաղտնիքն իմանալ, ուզեցի այդ ձևով մերժել: Այժմ  
արի գոհ եղիր քո իմացածով, քո ճանապարհը գնա:

— Տեր,— ասաց Շնորհքը,— ես քո գաղտնիքն իմանալու  
այնքան բուռն ցանկություն ունեմ, որ այս ահագին ճանա-  
պարհորդության դժվարությունները ես ոչինչ եմ համարում:  
Ուխտ ունեմ, մի ճար գտնելու ձեր վշտին:

— Դու քաջ ու բարեսիրտ մարդ ես, ո՛վ պանդուխտ,—  
ասաց Սինամը,— և շատ հաճելի ես իմ սրտին, դրա համար  
էլ չեմ ուզում քեզ իմ գաղտնիքը պատմել: Ով որ իմ գաղտնի-  
քը իմանա, պետք է կամ մի ճար անի իմ ցավին, կամ գլուխը  
պետք է տա, որ իմ գաղտնիքը չտարածվի: Ասաց ու տարավ  
պալատի լուսամուտից ցույց տվեց մի բուրգ.—\* Ահա այն  
բուրգը ամբողջ կազմված է այն խիզախների գանգերից, որոնք  
իմ գաղտնիքն իմացան և չկարողացան մի ճար անել: Եկ դու  
մեղք արի մեզ, ինձ մի ձգիր նոր արյունի տակ, քո կարմիր  
արևն էլ սևացնի: Զահել արևդ, դու էլ խեղճ...

— Ո՛չ, տեր արքա, ես հաստատ եմ իմ պայմանին և աղա-  
չում եմ, որ ձեր գաղտնիքը պատմեք: Եթե կարողացա ճար  
անել ձեր ցավին, բախտավոր կլինեմ, ինչո՞ւ պետք է ապրի  
անշահ ու անհանճար գլուխը, որ չի կարող օգնել մարդկանց  
վշտին: Իմ գլուխը քեզ է պատկանում, թող քո գաղտնիքը  
դուրս չգա քո շեմից:

— Այդ պայմանով կարելի է,— ասաց Սինամ թագավորը,  
հրամայեց, որ դահիճը տապարը սրի, և մեկ էլ դիմեց Շնորհ-  
քին:

— Մեկ էլ եմ քեզ զգուշացնում, որ ետ կենաս քո համառ  
ցանկությունից: Հիշի՛ր, գուցե սրտակից մեկն ունես, քեզնից  
հեռու կարոտ ծնողներ ունես աշքները քո ճամփին, հայրենիք  
ունես կամ մի թանկագին նպատակ: Հիշի՛ր, որ այդ բուրգը

կկորցնես քո անհամբերութիւնից և հետաքրքրութիւնից, ինչպես երգիչը զրկվեց դրախտից:

— Դատարկ հետաքրքրութիւնը ինձ չի այստեղ բերել, մեծ թագավոր, և իմ բոլոր կարոտներն ու նպատակները այն է, որ քո գաղտնիքն իմանամ, իսկ նրանից հետո...

— Դե, ես անպարտ եմ, գոչեց արքան,— ահա պատմեմ գաղտնիքը իմ կյանքի, լավ ականջ դիր, որ էլ չես լսելու, պրծա թե չէ... դահիճ, սրիր քո տապարը, է՛յ, ծառաներ...

Վեր բերին մի ոսկե վանդակ մեջը մի սև ագռավ: Յուրջ տվեց Շնորհքին ու հարցրեց.

— Տեսնո՞ւմ ես այս ագռավը:

— Տեսնում եմ:

— Սա իմ կիներն է,— ասաց թագավորն ու ագռավին հարցրեց.— ճի՞շտ է, Ալվարդ:

— Ղա՛,— կռավեց ագռավը:

— Ես գեղեցի՞կ եմ, թե չէ,— կրկին հարցրեց թագավորը թե.

— Քեզ նման գեղեցիկ տղամարդ տեսած չեմ իմ կյանքում:

— Իսկ սրանից 40 տարի առաջ ի՞նչ կլինեի:

— Իհարկե, ավելի գեղեցիկ ու հրապուրիչ:

Կրկին թագավորը հրամայեց: Մտռաները բերին մի այլանդակ արաբի գլուխ:

— Այս էլ իմ կնկա սիրեկանի գլուխն է,— ասաց թագավորը և դարձավ ագռավին.— ճի՞շտ է, Ալվարդ:

— Ղա՛,— կռավեց ագռավը:

— Դե, այժմ լսիր,— ասաց թագավորը ու այսպես սկսեց իր պատմութիւնը:

— Բախտը ծառայում էր ինձ և երջանկութիւնը սեղանակից էր ինձ հետ: Իմ իմաստութեան համբավը անց էր կացել ծովերից դեմը: Բայց բոլոր փառքերից ու մեծութիւններից թանկագինը իմ սերն էր: Նա իմ թագուհին, իմ սիրտը նրա գահն էր, իմ իշխանը նրա գեղեցկութեան հրապուրանքն էր, իմ կամքը նրա հաճույքներն էին, իմ ուրախութիւնը նրա ժպիտն էր և իմ հոգու պայծառ խաղաղութիւնը՝ նրա անձնվեր հավատարմութիւնը: Բայց գուցե դու զղջացե՞լ ես, ես կթողնեմ իմ պատմութիւնը:

— Ո՛չ, տեր արքա, ես լսում եմ:

— Մի գիշեր, գիշերվա մի ժամին տեսա, իր մարմինը շատ սառն էր: Ոչ մի կասկած չտարա, ծածկեցի վերմակով: Մի ուրիշ գիշեր զարթնեցի, տեսա դարձյալ սառն էր: Այս ինչիցն է, սկսեցի մտածել, ինչու է նրա մարմինը սառը արտաբնականում: Այդ հարցը իմ քունը կտրեց, սկսեցի մտատանջվել: Մի գիշեր էլ, գիշերվա մի պահին ննջարանի լուսթյան մեջ մի զգուշ շրջուկ լսեցի: Վերմակի տակից նայեցի, տեսա թագուհին հագնվում էր: Կասկածը սիրտս մտավ: Մի՞թե կարող է պատահել, որ իմ կինը մի վատ ընթացքի մեջ լինի ծածուկ... մի՞թե սուտ է եղել իմ երջանկութիւնը... մի՞թե հիմա պետք է ամեն բան վերջանա ինձ համար... մտածում էի ու նայում:

Նա հագնվեց, պճեղների ծայրին ման գալով մոտեցավ իմ մահճին և կամաց կորանալով ականջ դրեց իմ շնչառութեանը: Ես ինձ քնած ձևացրի, սկսեցի թեթև խոնկացնել (նա կրծքի մի հուլունք դրեց, զգացի, որ մրափն ինձ կոխում է, վերցրի ձեռքումս պահեցի):— Քնա՛ծ է,— շշնջաց նա և դուրս եկավ: Ես գաղտնի հետևեցի: Նա դուրս եկավ դուռը, ձիապան կանչեց: Զիապանը առաջ եկավ, թե՛ պատրաստ է ամեն բան:

Առ քո վարձը, տվեց ձիապանին մի համբույր,

նստեց ձիուն ու շքացավ գիշերվա մեջ սևաթույր:

Պալատն հանկարծ դժոխք դարձավ, ասես ինձ կուլ էր տալիս:

Եվ սոսկացի նրա դատարկ անկողինին նայելիս:

— Ո՛վ, հրեշ կին, մի՞թե ես խաբված եմ եղել միշտ, մի՞թե դու վաղուց մեռած ես եղել, իմ աննման թագուհի, իմ անուշ Ալվարդ, մի՞թե ես երջանիկ չեմ եղել երբեք...

Էլ ո՞ւմ աչքին քուն կգար, մերթ պալատում թափառելով, մերթ անկողնում զալարվելով ու հառաչելով սպասեցի, ամբողջ գիշերը սպասեցի: Լուսադեմին, նախասենյակներում լսեցի թեթև ոտնաձայնը: Սկսեցի հանգիստ խոնկացնել: Նա դուռը կամաց բաց արավ, զգուշ անցավ, շորերը հանեց, պառկեց անկողնում: Բայց ես նկատեցի, որ նրա մազերը

քանդած էին ու դեմքը կարմրատակած, այլայլված, սառն էր մարմինը:

Առավոտը, որ վեր կացանք, նա պճնված ու ժպտալով եկավ ինձ ջերմագին համբուրեց, քնքշալով ու փայփայելով հարցրեց.— Ինչպե՞ս անց կացրիր գիշերը, իմ աչքի լույս թագավոր, ինչո՞ւ ես գունատ, ինչո՞ւ եմ աչքերդ պղտոր:

— Ոչինչ, գլուխս միայն քիչ ցավում է:

Հետևյալ գիշերը թեև ես ամեն հնար գործ դրի, որ անփույթ երևամ և շուտով պառկեցի, բայց նա նկատեց իմ անհանգստությունը և երկար սպասեց: Գիշերվա մի ժամին վեր կացավ, կրկին հուլունքը դրեց կրծքիս ու նույն ձևով դուրս գնաց: Դուրս եկա ետևից, և հենց որ նա հեռացավ, ես երևացի: Ձիապանը՝ շփոթված իմ այդ անակնկալ երևալուց, դողդողալով առաջ եկավ:— Դուրս բեր,— ասացի,— իմ նժույզը: Նժույզս դուրս բերեց, հեծա, հողմի նման հետևեցի թագուհուն, որ հեռվում սեկն էր տալիս: Նա գնաց, ես հետևեցի: Երկար ճանապարհ կտրեցինք: Վերջապես հեռվից ես մի լույս նկատեցի: Նա կանգ առավ այդ լույսի առաջ: Իջավ, ներս մտավ: Ես էլ հեռու իջա և կամաց, մթնումը մոտեցա այդ բնակարանին: Տեսնեմ մի մեծ քարանձավ, յոթը այլանդակ ավազակներ մեծ խարույկի շուրջը բոլորած իրանց անհեթեթ ուրախությունն են անում ու հրճվում: Հանկարծ թագուհին, որ ներս մտավ, նրանցից մեկը վեր թռավ, մի ապտակ զարկեց ու վրեն գոռաց՝ անզգամ, ինչո՞ւ մեզ այսքան սպասել տվիր, գիշերն անցնում է, և մեր քեֆն առանց քեզ: Ներիր, իմ սիրելի,— ասաց թագուհին,— ամուսինս այս գիշեր ուշ քնեց, մինչև քնացրի, ես էլ ուշացա: Իմ հանցանքի համար ահա ձեզ իմ համբույրը, և շարունակեցեք ձեր քեֆը:

— Ճի՞շտ է, Ալվարդ:

— Ղա՛,— կռավեց ագռավը:

Ես մթնից տեսնում էի, թե անճոռնի հարամիները ինչպես էին ազահ համբուրում ու լափում թագուհու շրթունքներն ու այտերը: Երբ որ հագեցան, նստեցին նոր քեֆի:— Ե՛րգ, ե՛րգ,— գոռաց պետը,— երգեցեք մեր երգը: Եվ հարամիները երգեցին.

## Ավազակները երգում են

Անուշ քնած է Սինամ թագավոր,  
Երազ է տեսնում մարմար պալատում,  
Սակայն աշխարհքում նա է բախտավոր,  
Ով որ թագուհուն սեղմում է գրկում:

Նորա պալատին գիշերվա ժամին  
Անհամար քաջեր հսկում են անքուն,  
Բայց երգ է ասում կտրիճ հարամին  
Ու ջերմ համբուրում շքնաղ թագուհուն:

Համբուրում է նա, և ձայնը պաշին  
Սինամ արքայի պալատն է հասնում,  
Լսում է արքան իր քնի միջին  
Եվ սիրտը սաստիկ այրվում երազում:

Ա՛խ, Սինամ արքա, քաջ Սինամ արքա,  
Հաստատ լինես դու քո ոսկի գահին,  
Քեզ պես ողորմած թագավոր չկա,  
Որ չես խնայում և քո թագուհին:

Երգը վերջացավ < . . . >:

— Կեցցե՛ Սինամ թագավորը, Սինամ թագավորի կենացը.— գոչեց ավազակապետը և կուռը թագուհու վզով ձգելով համբուրեց: Նրա խումբը հռհռաց: Սինամ թագավորի սիրտը այրվեց:

— Այս համբույրը թանկ է Սինամի ամբողջ թագավորությունից,— ասաց թագուհին և թիկնեց ավազակապետի կրծքին:

Ապա նրան խայտաճամուկ շորեր հագցրին, կոներին փոքրիկ բոժոժներ կապեցին ու գցեցին իրանց շրջանը, սկսեցին ծափ տալ ու աղաղակել: Սա սկսեց պարել, պարեց, պարեց, նորից քեֆ արին, մինչև բոլորն էլ հարեցին, հզիփացան ու կշտացան: Կինս էլ դարձյալ ձի նստեց ու անհայտացավ դեկշտացան: Կինս էլ դարձյալ ձի նստեց ու անհայտացավ դեկշտացան: Ես թուրս հանեցի, ներս մտա, բոլորին կոտորեցի, պի տուն: Ես թուրս հանեցի, ներս մտա, բոլորին կոտորեցի,

ավագակապետի գլուխն էլ կտրնցի. խուրջինս գցեցի ու եկա մի կարճ ճանապարհով այնպես արագ, որ թագուհուց առաջ պալատը հասա: Եկա, կրկին պառկեցի: Մի քիչ ժամանակ անցավ, տեսնեմ թագուհին էլ եկավ, պճեղների ծայրին ներս մտավ, զգուշ շորերը հանեց ու մտավ անկողին:

Առավոտը վեր կացանք: Նա քնքշալով եկավ սկսեց ինձ փաղաքշել՝ ինչպե՞ս ես, հոգիս, ինչպե՞ս է առողջութունդ, ինչպե՞ս անցկացրի գիշերը, գլուխդ էլ ցավո՞ւմ է, թե չէ:

— Էլ չի ցավում, — պատասխանեցի ու հեռացա հեռու տեղերից ինձ տեսության եկած հյուրերին ընդունելու:

Գիշերվա սովորական ժամին դարձյալ նա գնաց: Մի քանի ժամանակից հետո տեսնեմ եկավ գունատ, այլալված: Մտավ անկողին, սկսեց թաքուն հեկեկալ: Իսկ ես սուտ խոմփացնում էի:

— Կսի՛ր, բարեկամ, որ այլևս չես լսելու:

Առավոտը վեր կացանք, նա տխուր-տրտում քաշվեց մի սենյակ ու փակված լաց էր լինում: Որ շատ լաց եղավ, ես ներս մտա:

— Սրա համա՞ր ես լաց լինում, իմ սիրելի թագուհի, — ասացի ու արաբի արյունոտ գլուխն առաջը ձգեցի:

— Դո՞ւ ես արել, անգութ հրեշ, — ճշաց, տեղից վեր թռավ կախարդական գավազանով ինձ զարկեց ու կանչեց:

Չարկում եմ քեզ, անգութ հրեշ,

Կերպից ընկնես, դառնաս դու էշ:

Եվ ես իսկույն դարձա մի էշ, բայց խելքով, մտքով: Մի աղքատ մարդ կանչեց, տվավ նրան, թե տար այս էշը բանացրու, ո՛չ գարի տուր, ո՛չ խոտ, ո՛չ ազատ թող, ո՛չ մեջքը վե՞տ առ, բարձիր, ծեծիր, գլխից մինչև ոտները պլոկիր:

— Այսպե՞ս է, Ալվարդ:

— Չա՛, — կռավեց ագռավը:

Այս անխիղճ աղքատն ինձ տարավ այնքան տանջեց, այնպես անհրավ բանացրեք, որ ոտներին ուժը հատավ, աչքերին լույսը թռավ, ամբողջ մեջքս վերքերով լցվեց: Ցավս զգու՞մ

եմ, զրու՞թյունս հասկանում եմ, միայն լեզու շունեմ, որ հայտնեմ, դանդաղ անեմ:

Հայտնվեց, թե թագավորն անհայտացել է: Իմ ժողովուրդը եկավ, հավաքվեց, թագուհուն մխիթարեց ու մի նոր թագավոր ընտրեց իրա համար: Այս նոր թագավորը մի բարեխիղճ ու արդարադատ մարդ էր: Պալատից մոտիկ մի գանգակ էր կախել տվել ու հրամայել, որ ինչ գանգատավորի իր մոտ շթողնեն, գնա գանգակը քաշի, որ թագավորն էմանա:

Մի օր մի կերպով փախա, գնացի գլուխս գցեցի գանգակի թոկին ու ժաժ տվի, գնզնզացրի: Պալատի պահապաններս եկան, փետը քաշեցին, շոշ հա, շոշ անելով ծեծեցին, քշեցին: Թագավորը գանգակի ձայնն իմանում է, հարցնում է, թե այդ ի՞նչ գանգատավոր է, որ ներս չեք թողնում: — Թագավորն ապրած կենա, — ասում են, — գանգատավոր չկա, մի ավանակ էր, գլուխը գցել էր գանգակի թոկի մեջը, գնզնզացնում էր: Թագավորը հրամայում է, թե՛ գնացեք ավանակ է, ինչ որ է, բերեք կապեցեք, մինչև նրա տերը կհայտնվի: Տարան ինձ պալատի դռանը կապեցին: Տերս տեսնում է, որ կորել եմ, ընկնում է փողոց-փողոց, ձայն տալով ման է գալիս: — Ա՛յ ավանակ տեսնող, ա՛յ ավանակ տեսնող: Ասում են՝ քո ավանակը թագավորի դռանը կապած է: Եկավ, թե ինձ տանի: Թագավորը դուրս եկավ, թե՛ ա՛յ մարդ, այս ավանակը քո՞նք է: Թե՛ իմն է, թագավորն ապրած կենա: Թե՛ հապա ինչո՞ւ է քեզանից գանգատավոր: Թե՛ դե ես ի՞նչ գիտեմ, անասուն է, ես էլ ինչպես անասունի կարգն է, բանացնում եմ, ընչի՞ պետք է գանգատվի: Ավանակ է, գլուխը գցել է թոկի մեջ գնզնզացրել, սա գանգատն ի՞նչ է հասկանում: Ես էլ կանգնած լսում եմ, միայն լեզու շունեմ, որ խոսեմ, հասկացնեմ: Թագավորի առաջին վեր ընկա, փալանս շուռ տվի, մեջքի վերքերը բացվեցին: Թագավորը, որ տեսավ, գոռաց, թե՛ ա՛յ վերքերը բացվեցին: Թագավորը, որ տեսավ, գոռաց, թե՛ ա՛յ անհրավ մարդ, դու ի՞նչ աստված ես պաշտում, այս ի՞նչ ես արել, որ այս խեղճ անասունը իր անլեզու տեղն եկել է գանգատվում է քո ձեռից: Այս բոպեհս կհրամայեմ, որ քո մեջքի՛ կաշին էլ այսպես կենդանի պոկեն քո մեջքից:

— Ես ի՞նչ անեմ, թագավորն ապրած կենա, — վայր ընկավ ու լաց լինելով կանչեց աղքատը: Այսպես- այսպես. մի կին

ինձ հանձնեց այդ ավանակն ու պատվիրեց, որ այսպես անեմ:

— Դե գնա, այն կնգանը այստեղ բեր,— հրամայեց թագավորը:

Աղքատի հետ եկավ իմ ծպտյալ կինը սևեր հագած:

— Դու ի՞նչ խղճմտանքի տեր ես, ա՛յ կնիկ, ինչո՞ւ ես քո անասունը սվել այս մարդին, որ այսպես շարշարի:

Կինս թե՛ թագավորն ապրած կենա, ես մի սիրուն, թագավորի վայել երեխա ունեի: Մի օր այս ավանակի վրա նստացրի, որ ուրախանա: Հակառակ անասունը փախավ, տրտինգ արավ, երեխիս քարերի վրա վայր ձգեց, երեխես մեռավ...— ասաց, սկսեց սուտ լաց լինել ու աչքերը սրբել:

— Հասկացա,— մրմնջաց զգացված թագավորը:

— Մենք էլ կսկծից ավինք այս մարդուն ու պատվիրեցինք, որ բարձի, բանեցնի, շարշարի... Հիմի սիրտներս վեր է նստել, ես էլ եմ գղջում, որ այդպես եմ վարվել: Խնդրում եմ. որ իմ անասունը ինձ հանձնես, էլ մեղքն իմն է, տանեմ վերքերը լավացնեմ:

Թագավորը թե՛ դե, տար լավացրու, մեղք է, անասուն է:

Ինձ քաշելով կրկին բերին: Բերին թե չէ, ասավ՝ ես հիմի այնպես անեմ, որ շեն էլ չմտնես, ոչ թե թագավորին գանգատ զնաս: Ասավ ու կախարդական գավազանով զարկեց, կանչեց.

Ա՛յ անրան էշ,

Սինամ հրեշ,

Որ իմ սերը սպանեցիր,

Առ, ստացիր,

Սև մտրակով զարկում եմ քեզ,

Կռունկ դառնաս, հանդերն ընկնես:

Իսկույն դարձա վայրի կռունկ, թռա դաշտերն ընկա, խառնըվեցի կռունկների երամին, սկսեցի նրանց նման ապրել, հանդերում քնել, օձի միս ուտել:

— Ճի՞շտ է, Ալվարդ:

— Ղա՛,— կռավեց ագռավը:

Կռունկները սովորութուն ունեն, որ ցերեկը հանգստանալիս կամ գիշերը քնելիս իրանցից մեկին պահապան են դնում

երամի վրա: Մի գիշեր էլ հերթը ինձ հասավ: Բերին մի ոտիս վրա կանգնացրին, բերանդամ քար դրին, որ քունս շտանի, արթուն կենամ, հսկեմ, ուրիշ գազան չգա մեջներն ընկնի: Արի տես, որ անսովոր ու թույլ, մտքիս ետնա ընկա, հոգեկցի. նղղեցի, քունս տարավ: Գիշերվա մի ժամին լսեցի, որ գազան է ընկել երամի մեջ, կռունկները կը՛ռո հա, կը՛ռո, կոնչալով իրար են խառնվել: Այն գիշեր որը շարքվեց, որը վիրավորվեց, որն էլ թռավ, երկնքի երեսն ելավ, ազատվեց: Առավոտը, որ լուսացավ, առողջ ու վիրավոր հավաքվեցին, ման եկան ինձ գտան, թե՛ դու ինչպե՞ս պահապան եղար մեզ համար, որ գազանն ընկավ մեր մեջը, մեզանից այսքան հոգի կոտորեց: Վրա թափեցին, կոտցներով ինձ քրքրեցին, փետրահան արին, մերկ ու տկլոր թողին մի դաշտի մեջ, իրանք թռան, գնացին: Մնացի անթև, անփետուր, մի անծանոթ դաշտում վեր ընկած. Ճարս կտրեց, վեր կացա, ոտով մի կերպ եկա հասա իմ պատուր, պատի տակին մի անկյունում կուչ եկա:

Զորանշա հանկարծ ինձ նկատեց, վազեց կնոջս հայտնեց՝ թե՛ կախարդական մտրակը բեր, որ այն գազանը կրկին ետ է եկել: Կինս էլ եկավ նայեց ու թե՛ այս մի խեղճ թռչուն է, գազանի ճանկից ընկել այստեղ, պատսպարվել: Նա շի, նա այստեղ շի գալ: Գնում են, սկսում են մայր ու աղջիկ գիշերք վիճել: Այս խոսակցութունը լսում է իմ հին աղախինը, որ ծառայում էր նրանց: Գիշերվա մի ժամին կախարդական մտրակը գողանում է, գալիս, որ եթե ես ճիշտ թագավորն եմ, զարկի, օգնի, թե չէ շուտով կրկին տանի տեղը դնի: Եկավ, զարկեց մտրակով ու կանչեց.

Ա՛յ դու թևավոր,

Սինամ թագավոր,

Ինչպես սիրալիր

Թագավոր էիր,

Փոխվիր նորից նոր

Զորավոր զարկով,

Թագավոր դարձիր,

Առաջվան փառքով:

Իսկույն դարձա առաջվա Սիւնամ թագավորը, իմ հին,  
հավատարիմ աղախնի վզովն ընկա, ասացի.— Այսուհետեւ  
իմ մայրն ես դու, դե այժմ ինձ տուր մտրակը: Կինս զարթնում  
է, տեսնում մտրակը չկա: Դես մտրակ, դեն մտրակ: Ման գա-  
լով դուրս եկավ, տեսավ, օհո՛, Սիւնամ թագավորը սե մտրակը  
ձեռքին, առաջը կանգնած:

— Վա՛յ, կանչեց այստեղ ոտներս ընկած,  
նեքեք դու օգնիր, վերևը՝ աստված,  
Մեղավոր եմ ես, պոռնիկ, սեւրես,  
Սխալ եմ արել, դու պետք է ներես:  
Քո Ալվարդն եմ ես, ընկել եմ գետնին,  
Բարձրացրու, փրկիր, մաքրիր վերստին:  
Ծնկներս գրկեց,  
Սաստիկ աղաչեց:  
Ձեռքս բարձրացավ,  
Մտրակը շաչեց.  
— Ո՛վ անզգամ,  
Ազո՞ւով դառնաս  
Ու հավիտյան  
Ազո՞ւով մնաս:

Եվ Ալվարդը ազո՞ւով դարձած առաջ թրպրտում էր— դեռ  
աղաչում էր, ուզում էր խոսել, խնդրել, բայց էլ լեզու չկար,  
միայն կռվում էր առանց բառերի: Ես նայում էի իմ ստեղ-  
ծածին, և վայրկենական սրտիս մեջ շարժվեց խղճահարու-  
թյունը, զարթնեց հին սերս. աչքիս առաջն եկավ կանգնեց նրա  
առաջվան շքնաղ կերպարանքը, մեր նախկին բախտավոր  
կյանքը այնպիսի թարմությամբ, կարծես մեջն էի: Գուցե  
անցողական մի մոլորություն էր այն, մի ժամանակավոր  
հանցանք, գուցե ճիշտ էին նրա աղաչանքները, զղջումն ու  
արտասուքը... Այս ի՞նչ արի ես... Ահա իմ միակ սերն ու թա-  
գուհին ազո՞ւով դարձած առաջս թրպրտում է— հավիտյան  
վերջացավ... Մի դառն ապաշավ եկավ ինձ վրա, ապա սաս-  
տիկ տենչ, որ նորից նրան փոխեմ, նորից կենդանացնեմ,

նորից վերանորոգեմ մեր սերը, մնացած կյանքը: Այս բուն  
տենչանքի ոգևորության մեջ կանչեցի.

Ջարկում եմ ահա,  
Թուշուն անասուն,  
Կրկին փոխվես  
Բանական—խոսուն  
Չքնաղ թագուհի  
Սիւնամ արքայի—

Բարձր կանչեցի, ձեռքս վրա բերի, բայց... ավա՛ղ, դա-  
տարկ էր ձեռքս— մտրակը ծովն էի ձգել: Հուսահատությունից  
խելքս ցնորվում էր, սկսեցի հեկեկալ.

Իմ սիրելի,  
Դարձիր էլի  
Նախկին կերպիդ,  
Ծավի աչերով, նոճի հասակով,  
Գանգուր մագերի շքեղ պսակով,  
Եղիր իմ կյանքի թագուհի ու զարդ,  
Իմ անուշ Ալվարդ, իմ անբախտ Ալվարդ...

Բայց, ա՛խ, իզուր...

— Տեսնո՞ւմ ես, Ալվարդն է այս սեւափետուր ազո՞ւով...  
ամեն վայրկյան աչքիս առաջ հիշեցնում է իմ արարքը, իմ  
կորցրած կյանքի երջանկությունը, փառքը, տանջվում եմ ան-  
զադար և այս ահագին վիշտս աշխատում եմ թաղել, խեղդել.  
մեղմացնել այս շտենված շռայլության ծովում... Եվ ինքդ  
ասա, օտարական, մի՞թե այս բոլորից հետո ես կարող եմ  
գանձ ու հարստություն պահելու մասին մտածել և ինչո՞ւ  
համար: Դե, ճար արա իմ վշտին, ծովի հատակից հանի կա-  
խարդական մտրակը, ինձ վերադարձնելու իմ առաջվան Ալ-  
վարդին...

— Ո՛հ մեծ վիշտ է,— հառաչեց Շնորհքը,— իսկ կախար-  
դական մտրակը, որ այդքան թշվառությունների պատճառ է  
եղել, ընդմիշտ կմնա ծովի հատակում:

— Դահի՛ճ,— գողից Սինամ արքան:

Բայց այդ ժամանակ հայտնվեց Քամի ձին: Շնորհքը թռավ, միայն նրա վերջին խոսքերը կարողացավ բռնել Սինամ թագավորը.— Ի՛նչ՝ դնա... մշտադալար այգին... այնտեղ կգտնես դու քո առաջվան Արվարդին...

Հետևյալ օրն իր տերութունը թողեց ու ճամփա ընկավ Սինամ թագավորը՝ աշխարհե-աշխարհք հարցնելով մշտադալար այգին:

### Մասն երկրորդ

#### 3. ՍԻՆԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Վեր կացավ թագավորի տղեն, դարձյալ գնաց Զմրուտ դուշի մոտ: Զմրուտ դուշը թե՛ ա՛յ տղա, ով գիտի եկավ, քեզ գտավ, տեղդ նեղեց: Թե՛ հա՛, եկավ գտավ ու տեղս շատ է նեղել:— Ի՞նչ է ասում, ի՞նչ է ուզում: Թե՛ ինձանից Սինամ թագավորի պատմությունն է ուզում:— Ա՛յ տղա, էդ շատ դժվար բան է, բայց քեզ համար դարձյալ պետք է աշխատեմ, արի թեև, ես քեզ այնքան կբարձրացնեմ, որ արևին հասնես, երբ որ կտեսնես արևն այրում է, այնքան ուժ ունենաս, որ ինձ խփես, այն ժամանակ ես քեզ վեր կբերեմ Սինամ թագավորի քաղաքը,— ասավ Զմրուտ դուշը, թեև առավ ու թռավ:

Գնա՛ց-գնա՛ց, գնաց Սինամ թագավորի քաղաքի մոտ վեո եկավ: Այստեղ թագավորի տղին խրատեց՝ կերթաս ասավ, Սինամ թագավորի մոտ ծառա կմտնես, մի քանի ժամանակ որ անց կենա, կասես՝ թագավորն ապրած կենա, իմացել եմ՝ քեզ պատմություն կա ու գիտեմ ոչ, լսել չեմ, խնդրում եմ, որ ինձ պատմես: Նա կասի, որ՝ ով որ իմ պատմությունը իմանա, պետք է գլուխը տա: Ասա՛ իմ արյունը քեզ հալալ, միայն թե քո պատմությունը իմանամ: Երբ որ պատմությունը կասի կպրծնի, ասա՛ մի քիչ ժամանակ տուր գլուխստանը ման գամ ու ետնա գլուխս տալ տուր: Հենց որ դուրս գաս այգին, այս փետուրը կրակ տուր, իսկույն դուրս կգամ քեզ մոտ ու կթոցնեմ, էլ ետ կբերեմ քո հոր քաղաքը: Այսպես խրատեց

Զմրուտ դուշը, յուր թևից էլ մի փետուր տվեց թագավորի տղին ու ինքը թռավ, ելավ երկնքի երեսը:

Թագավորի որդին այդտեղից գնաց Սինամ թագավորի պալատը: Ծառա մտավ ու կարճ միջոցում դարձավ թագավորի սիրելին: Մի քանի ժամանակից հետո, մի օր դիմեց թագավորին թե՛ թագավորն ապրած կենա, ես իմացել եմ, որ քեզ պատմություն կա ու չեմ լսել, խնդրում եմ, որ ինձ պատմես:

— Մեղք ես, ա՛յ որդի,— ասաց թագավորը,— իմ պատմությունը դու մի՛ հարցնիր: Իմ պատմությունը այնպիսի պատմություն է, որ ով որ իմացավ, իսկույն պետք է նրա գլուխը կտրել տամ, որ իմ անունն աշխարհ չընկնի: Եթե իմ անունն աշխարհ ընկնի, ես պետք է ինձ սպանեմ:

— Իմ արյունը քեզ հալալ, իմ գլուխը կտրել տուր, միայն թե քո պատմությունը պատմիր,— թախանձեց տղան:

— Դե որ այդպես է, քո մեղքը քո վիզը: Դե լավ, ականջ արա իմ պատմությանը, որ էլ չես լսելու, վերջացրի թե չէ, դահիճը կգա գլուխդ տալու:— Ասաց թագավորը, հրամայեց, որ դահիճը տապալր սրի, իսկ ինքն այսպես սկսեց յուր պատմությունը:

— Ես երջանիկ Սինամ թագավորն էի: Երկու նժույգ ձի ունեի, որ աչքիս լույսի նման էի սիրում: Այդ նժույգները օրեցօր նիհարում էին:

Մի օր պալատական արար եկավ, թե՛ թագավորն ապրած կենա, թող միառժամանակ էլ ես նայեմ քո նժույգներին, տեսնեմ այդ ընչի՞ցն է, որ դրանք չեն շաղանում: Ասեցի՛ լավ, հիմի էլ դու պահիր, տեսնեմ: Անց կացավ միառժամանակ, տեսնում եմ, որ նժույգներս դարձյալ նիհարում ու վատանում են օրեցօր:— Այս ինչպե՞ս բան է,— հարցնում եմ արարին,— ընչի՞ չեն իմ նժույգները գիրանում:— Թագավորն ապրած կենա, թե կամենում ես դրա պատճառն իմանալ, մի գիշեր էլ դու ձիապան դարձիր, էն ժամանակ սրա գաղտնիքը կիմանաս:— Լավ,— ասեցի,— էս գիշեր ես ձիապան կդառնամ, տեսնեմ էդ ինչ գաղտնիք է, որ մինչև էսօր ոչ ոք չիմացավ:

Տե՛ս, պատմությունս, ասում եմ, տղա՛,  
Հենց որ վերջացավ, գլուխդ կտամ,

Քանի դեռ վաղ է, դու լավ միտք արա,  
Հետո էլ փրկություն չկա:  
— Թագավորն ապրի, իմ գլուխը քեզ,  
Քո պատմությունն ասա, լսեմ,  
Գրանից հետո թող մեռնեմ:

— Դե, քո մեղքը քո վիզը— լսիր: Էն գիշերը հանեցի իմ  
թագավորական զգեստը, արաբի շորերը հագա, թուրը կապեցի,  
դառա ձիապան, գնացի ախոռում հսկելու: Կես գիշերին տես-  
նեմ ախոռի դուռը բացվեց, ներս մտավ իմ կինը՝ (Գյուլ)  
Վարդ թագուհին:— Ձիապան,— կանչեց,— թամբիր, պատ-  
րաստիր, դուրս բեր ձիանը— ես քեզ հետ պետք է ուրիշ տեղ  
գնամ:

Ձիանը թամբեցի, դուռը դուրս բերի: Մթնումը շճանաչեց,  
թե ես ով եմ: Մեկն ինքը հեծավ, մյուսը՝ ես: Նա առաջ քշեց,  
ես էլ հտակից, իբրև յուր ծառան: Քշեցինք կայծակի նման  
սարեր, ձորեր կտրեցինք, քշեցինք, վերջապես հասանք մի  
ձոր, մի քարանձավի դռան կանգնեցինք: Հստեղ թագուհին  
վեր եկավ ձիուց:— Արա՛ր,— ինձ ասավ,— դու ձին պահիր  
այստեղ, կաց մինչև ես կգամ— ու գնաց մտավ քարանձավը:  
Քրտնած ձիանը կապեցի ծառից ու ես էլ թաքուն հտակիցը  
գնացի: Գնացի, տեսա մի մեծ քարանձավ, քառասուն ավազակ  
նստած շուրջ բոլոր ու իրանց պետը գլխներին բազմած: Կինս  
որ մտավ, ավազակները ուրախացած սկսեցին ծափ տալ ու  
աղաղակել:

Տիկինն եկավ, կրկին եկավ,  
Հա՛յ ջան, հա՛յ ջան,  
Լիքը բոխեն գլխին եկավ,  
Հա՛յ ջան, հա՛յ ջան:  
Ինքը փեշքեշ մեր քաջ պետին.  
Հա՛յ ջան, հա՛յ ջան,  
Մենք կարոտ ենք բոխլի գաթին,  
Հա՛յ ջան, հա՛յ ջան...

Նրանց ուրախ աղաղակներից քարանձավը դմբդմբաց:  
Կինս էլ յուր բերած մի կապոց թխվածքը գլխին դրած, խնդա-

լով ու շորորալով, տարավ դրեց ավազակապետի առաջին:  
Ավազակապետը վեր թռավ, փաթաթվեց կնկանս, կողքին  
նստացրեց: Սուփրա բաց արին, հաց կերան, խոսացին ու  
խնդացին, հետո լույսերը հանգցրին, ամենքը պառկոտեցին  
քնելու, իմ կինն ու ավազակապետն էլ միասին: Հիմա հասկա-  
ցա, թե ինչու էին իմ նժույզները նիհարում, ուրեմն ամեն  
գիշեր էսքան ճանապարհ գնում են— գալիս, քրտնած կանգ-  
նում են, մրսում, փշանում: Բայց նժույզներիս վիշտը մոռա-  
ցա, երբ տեսա կինս է եղել անելիս:

Երբ որ բոլորը քնեցին, ու խոմփոցը լցվեց ներսը, թուրս  
հանեցի, մտա ներս: Ներքևից սկսեցի ու մեկ-մեկ մորթելով  
հասա վերև՝ ավազակապետին: Տեսնեմ՝ կինս ու նա, իրար  
փաթաթված, երես-երեսի դրած, խորը քնել են: Թուրս քա-  
շեցի, ավազակապետի գլուխն էլ տվի: Տաք արյունը ցայտեց  
կնոջս երեսին: Տեղից վեր թռավ, տեսավ բոլորը կոտորված,  
մենակ ինքն է կենդանի մնացել ու առաջն էլ ես եմ կանգնած՝  
Սինամ թագավորը:

Վա՛յ կանչեց գլխին, ոտներս ընկավ,  
Թե՛ իմը դու ես ու քոնք աստված,  
Ես անարժան եմ, պոռնիկ, սևերես,  
Ես սխալվել եմ, դու պետք է ներես:  
Ես նրան ոչինչ չասացի այստեղ,  
Վեր կացանք, եկանք մեր տունը կրկին...

Իմ պատմությունը լավ լսիր, ո՛վ քաջ,  
էլ քեզ փրկության մի դուռը չկա,  
Զե՞ որ ես քեզ ասել եմ առաջ,  
Վերջացրի թե չէ, դահիճը կրգա:

Ես մի զորավոր մտրակ ունեի, ում որ զարկեի ու ինչ  
ուզեի էն կշինեի: Էս դեպքից հետո, երբ որ տեսնում է գաղտ-  
նիքը բացվեց, կինս զոքանչիս հետ ծածուկ խոսքումին է  
անում, թե՛ արի դրա մտրակը գողանանք, զարկենք դրան,  
չինքնք կոտնկ, դաշտերը պղծենք, տունն էլ մնա մեզ, թագա-  
վորությունն էլ:



Մի օր էլ, երբ որ ես միամիտ զբոսնում էի իմ պալատում,  
ինձ զարկեցին կախարդական մտրակով ու կանչեցին.

էլ դու չլինես  
Սինամ թագավոր,  
Փոխվիր դու, դարձիր  
Կոունկ թեւավոր...

Իսկույն ես դարձա վայրենի կոունկ, թո՛ւ, դաշտերն ընկա,  
խառնվեցի կոունկների երամին, սկսեցի նրանց նման ապրել,  
հանդերում քնել, օձ ուտել:

Կոունկները սովորութիւն ունեն, որ ցերեկը հանգստանա-  
լիս կամ գիշերը քնելիս իրանցից մեկին պահապան կղնեն  
երամի վրա: Մի գիշեր հերթը հասավ ինձ: Բերին, մի ոտիս  
վրա կանգնացրին, քար դրին բերանս, որ քունս չտանի, ար-  
թուն կենամ, հսկեմ, որ ուրիշ գազան չգա մեջներն ընկնի:  
Արի տես, որ շղիմացա, քունս տարավ, քնեցի: Գիշերվա մի  
ժամանակը լսեցի, որ գազան է ընկել երամի մեջը, կոունկնե-  
րը կը՛ն հա կը՛ն խառնվել են իրար: Էն գիշեր, որը շարզվեց,  
որը վիրավորվեց, որն էլ առողջ ազատվեց, փախավ, ելավ  
երկնքի երեսը, ցրվեցին: Առավոտը հավաքվեցին, ման եկան  
ինձ գտան, թե՛ դու ինչպե՛ս պահապան եղար մեզ համար,  
որ գազան ընկավ մեր մեջը, մեզանից էսքան հոգի կոտորվեց:  
Վրա թափեցին, կտուցներով ինձ քրքրեցին, փետրահան արին,  
մերկ ու տկլոր թողին մի դաշտի մեջ, իրանք թռան, գնացին:  
Մնացի անթև, անփետուր, մի անծանոթ դաշտում վեր ընկա՛ն:  
Ճարս կտրվեց, վեր կացա, ոտով մի կերպ եկա հասա իմ  
տունը: Առավոտը կինս ու զոքանչս տեսան, որ եկել եմ, մի  
անկյունում կուշ եմ եկել: Մայր ու աղջիկ իրար ձայն տվին,  
թե արի հիմի էլ սրան ավանակ շինենք: Բերին, սև գավազա-  
նով զարկեցին, թե.

Ա՛յ դու թեւավոր,  
Սինամ թագավոր,  
Սև մտրակով  
Ու < . . . > զարկով

Զարկում եմ քեզ,  
Որ էլ կտրես:

էս անգամ էլ ինձ շինեցին ավանակ: Առավոտը մի աղքատ  
մարդ կանչեցին, ինձ տվին նրան, որ տանի բանեցնի: Պատ-  
վիրեցին, որ ո՛չ մեջքս վեր ունի, ո՛չ գարի տա, ո՛չ բաց թող-  
նի, բարձի, ծեծի, գլխիցս մինչև ոտներս պլոկի: Էս մարդն  
էլ ասաց լավ, շնորհակալութիւն արավ ու ինձ քշեց տարավ:  
Տարավ էս անխիղճ մարդը ինձ էնքան տանջեց, էնպես անի-  
րավ բանացրեց, որ ուժս հատավ, աչքերիս լուսը թռավ, ամ-  
բողջ մեջքս վերքերով լցվեց: Ցավս զգում եմ, դոութիւնս  
հասկանում եմ, բանականութիւն ունեմ, միայն լեզու չունեմ,  
որ գանգատ անեմ:

էդ քաղաքում ինձանից հետո մի ուրիշ թագավոր էին  
նստեցրել: Նա իր պալատից մոտիկ մի զանգակ էր կախել  
տվել ու հրամայել, որ ինչ գանգատավորի իրան մոտ չթող-  
նեն, գնա, զանգակը քաշի, թագավորին իմացնի:

էս աղքատը մի օր էլ ինձ բարձած տանում էր, ճանա-  
պարհին ինձ կանգնեցրեց, ինքը մտավ մի խանութ, որ բան  
առնի: Նա մտավ թե չէ, ես փախա: Փախա, գնացի, ուզեցի  
մտնեմ թագավորի մոտ, գանգատ անեմ, դոնապանները  
չթողեցին, մի-մի փայտ առան, սկսեցին ծեծել, չո՛չ հա չո՛չ,  
ետ տվին: Գնացի, գլուխս գցեցի զանգակի թուկը, ժած տվի,  
զնգզնգացրի:

էստեղ էլ պահապաններն եկան ծեծեցին, չո՛չ հա չո՛չ  
անելով քշեցին: Զանգակի ձայնը թագավորն իմանում է,  
հարցնում է, թե՛ էդ ի՞նչ գանգատավոր է, որ չեք թողնում ինձ  
մոտ մտնի: Ասում են, թագավորն ապրած կենա, գանգատա-  
վոր չկա, մի ավանակ էր, գլուխը գցել էր զանգակի թուկի մեջը,  
զնգզնգացնում էր: Թե՛ զնացեք, ավանակ է, ինչ որ է, բերեք,  
էստեղ կապեցեք, մինչև դրա տերը կհայտնվի, տես՛: Էնք էդ  
ինչ բան է: Տարան, ինձ թագավորի դռանը կապեցին:

Տերս խանութից դուրս է գալիս, տեսնում է չկամ, ընկնում  
է փողոցեփողոց, ձայն տալով ման է գալիս.— Ա՛յ ավանակ  
տեսնող, ա՛յ ավանակ տեսնող: Ասում են՝ քո ավանակը թա-  
գավորի դռանը կապած է: Եկավ թագավորի մոտ: Թագավորը

սրան հարցրեց, թե՛ ա՛յ մարդ, էս ավանակը քո՞նն է: Թե՛ իմն է, թագավորն ապրած կենա: Թե՛ ապա ինչո՞ւ է քո ավանակը քեզանից զանգատ անում: Թե՛ ես ի՞նչ գիտեմ, դե անասուն է, ես էլ ինչպես անասունի կարգն է էնպես բանացնում եմ, էլ ընչի՞ պետք է զանգատվի: Ծս էլ կանգնած լսում եմ, հասկանում եմ, ինչ որ խոսում են, միայն լեզու չունեմ, որ խոսեմ, հասկացնեմ: Թագավորի առաջին վեր ընկա, թավջի տվի, փալանս շուռ տվի, գցեցի փորիս տակը, մեջքիս վերքերը բացվեցին: Թագավորն էս որ տեսավ, իմ տիրոջ վրա զոռաց, թե՛ անիրավ մարդ, դու ի՞նչ աստված ես պաշտում, էս ինչպե՞ս ես բանացրել էս անասունին, որ մեջքին մի սաշ տեղ չկա: էս մարդը թագավորին թե.

— Ծս ի՞նչ անեմ, ես մեղավոր չեմ, էս ավանակն երկու կնիկն են ինձ տվել ու պատվիրել են, որ այսպես շարշարեմ:

— Դե որ էդպես է, գնա էն երկու կնկանը կանչիր, բեր էստեղ,— հրամայեց թագավորը:

Աղքատը գնաց, զոքանչիս ու կնկանս բերեց, թագավորի առաջին կանգնացրեց:

— Դուք ի՞նչ խղճմտանքի տեր եք,— հարցրեց թագավորը,— ինչո՞ւ եք ձեր անասունը տվել էս մարդին, որ այսպես անիրավ բանացնի ու շարշարի:

Չոքանչս ու կինս պատասխանեցին.

— Թագավորն ապրած կենա, մենք մի սիրուն, թագավորի վայել երեխա ունեինք: էս ավանակի վրա նստացրինք, որ ման ածենք, ուրախանա: Անպետք ավանակը հանկարծ փախավ, տրտինգ արավ, երեխին քարերի վրա վեր գցեց, երեխեն մեռավ: Մենք էլ կսկօից տվինք էդ մարդին ու պատվիրեցինք, որ տանի բարձի, բանացնի, շարշարի: Հիմի կսկիծներս մոռացել ենք, սիրտներս վեր է նստել, մենք էլ զղջացել ենք, որ էդպես ենք վարվել, խնդրում ենք, որ մեր անասունը կրկին մեզ հանձնես: էլ մեղքը մերն է, մենք կտանենք, վերքերը կառողջացնենք, կպահենք կպահպանենք:

Թագավորն էլ ինձ հանձնեց նրանց թե՛ դե տարե՛ք, էդ վերքերը լավացրեք ու այսուհետև էլ էդպիսի անխիղճ բան չանեք: Սրանք էլ թագավորին շնորհակալություն արին ու ինձ վեր կալան, քաշելով բերին տուն:

Տեսնում ես, թե ես ինչեր եմ տեսել: Իմ պատմությունը լավ լսիր, տղա՛, Արդեն զրույցիս վերջին եմ հասել, Ուր որ է հիմի դահիճը կըգա:

Սրանց մոտ մի մայր ու իր աղջիկը աղախնություն էին անում: Աղջիկը ամեն գիշեր զոքանչիս ու կնկանս շորեջը հանում, ոտները լվանում, քնացնում ու կրկին գալիս էր մոր մոտ: Մի անգամ լսում է կնոջս ու զոքանչիս թաքուն խոսակցությունը ու գալիս է մորը թե՛ մայրի՛կ, գիտես ի՞նչ կա: Թե.

— Ի՞նչ կա:

Թե.

— էս վերքոտ ավանակը որ կա, Սինամ թագավորն ինքն է: Կինն ու զոքանչը կախարդական մտրակով զարկել են, շինել են ավանակ:

Թե.

— Աղջի՛կ, դու ճշմարի՞տ գիտես, որ էդպես է:

Թե.

— Հաստատ գիտեմ:

— Դե որ էդպես է, դու շե՞ս կարող այդ մտրակը ինձ հասցնել,— հարցրեց մայրը:

— Ինչու շե՛մ կարող,— պատասխանեց աղջիկը,— միշտ բարձի տակն են դնում ու քնում: Երբ որ քնեն, բարձի տակիցը կհանեմ, կբերեմ:

Մայր ու աղջիկ էսպես խոսքումին արին: Մի գիշեր էլ կնկանս ու զոքանչիս քնացնելուց հետո էս աղջիկը կախարդական մտրակը նրանց գլխատակից հանեց, տարավ տվեց մորը:

— Աղջի՛կս,— ասաց մայրը,— եկ էս գիշեր ևեթ փորձենք, թե մի բան կդառնա, շատ լավ, իսկ թե չի դառնալ, կրկին տանենք տեղը դնենք, որ առավոտը տիրուհիները շիմանան, թե չէ մեզ կմահացնեն:

էսպես՝ էես գիշերին մայր ու աղջիկ եկան կախարդական մտրակով մի անգամ ինձ զարկեցին, թե.

Ա՛յ դու թեալոր,  
Մինամ թագավոր,  
Զարկում եմ ահա,  
էլ եղիր արքա,  
Առաջվան կարգով,  
Գահավ ու թագով:

Իսկույն դարձա առաջվան Մինամ թագավորը: Ընկա իմ հին աղախնի ոտները, թե՛ դու այսուհետև իմ մայրն ես: Մտրակը ձեռքիցն առա ու իրանց ճանապարհ դրի: էլ քունս շտարավ, մտրակը ձեռքիս այնքան ման եկա, այնքան պտրտվեցի, որ լուսացավ: Առավոտը կինս վեր կացավ, տեսավ կախարդական մտրակը շկա: Դես մտրակ, դեն մտրակ, շկա ու շկա: Ման գալով դուրս եկավ տեսավ, օհո՛, Մինամ թագավորը, կախարդական մտրակը ձեռքին, առաջին կանգնած...

Վա՛յ կանչեց այստեղ ոտներս ընկած,  
Թե ներքեր դու, վերևը՝ աստված,  
Ինքն աստվածն էլ է սխալական,  
Որ ստեղծել է ինձ նման կնկան,  
Ես մեղավոր եմ, պոռնիկ, սևերես,  
Ես սխալվել եմ, դու պետք է ներես:

— Ո՛չ, — ասացի, — ես մի անգամ քեզ ներեցի, երբ որ քարանձավում ավազակի հետ պառկած գտա: Նրանից հետո դու էս բաներն էլ, որ բերիր իմ գլխին, էլ այսուհետև քեզ թողութուն չկա: Կանչեցի զոքանչիս, կնկանս ու մի ծառայի\*, որ սրանց մասնակից էր:

Զոքանչիս մի անգամ զարկեցի ու ասեցի.

Ա՛յ անհոգի,  
Զարկում եմ քեզ,  
Պառավ ջադուկ,  
Դարձի՛ր քոթուկ:

\* Մառայի մասին խոսք չկա ուրիշ տեղ: (Մ. հ.)

Ու տեղն ու տեղը քոթուկ դարձավ:  
Մեկ էլ կնկանս զարկեցի ու ասեցի.

Նենգ խաբեբա,  
Անխիղճ, ժանտ իժ,  
Առ քեզ պատիժ:  
Զոր մտրակի  
Զարկ զորավոր,  
• Եղիր իսկույն  
Անեծքաշոր:

Դա էլ դարձավ քոթուկիցը կպած մի սև ազոռավ:

Մեկ էլ զարկեցի իմ ծառային:

էստեղ Մինամ թագավորը ետ դարձավ, հարցրեց.

— Զորանչ, էղպե՞ս է:

Քոթուկը ծխաց:

— Կին, ճշմարիտ եմ ասում:

Ազոռավը ղոռաց:

— Մառա, իրա՞վ են ասածներս:

Շունը կոնձկոնձաց:

Սրանց էսպես անելուց հետո կախարդական գավազանս գցեցի ծովը: Հիմի կարո՞ղ ես գտնել ցավիս դարման (որ դրանց ուրիշ բան անեմ):

Իմ պատմութունը աշխարհ ընկնելու բան չի, ով որ լսի, պետք է այստեղ... Ասավ Մինամ թագավորն ու կանչեց. — Դահի՛ճ: Կացինը ձեռքին դահիճը եկավ: էստեղ տղան աղաչեց, թե՛ թագավորն ապրած կենա, մի բան, որ արդեն էլ ինձ փրկութուն չկա, քո ձեռքին եմ, իմ արյունը քեզ հալալ եմ արել: Միայն մի խնդիր ունեմ, խնդրում եմ վերջին ցանկութունս կատարես: Ես էլ թագավորի որդի եմ, խնդրում եմ, որ վերջին անգամ թողնես, գնամ քո այգիներում ման գամ, ինչպես իմ հոր այգիներում, մի կարոտս առնեմ, նրանից հետո գամ, իմ արյունը քեզ հալալ:

Թագավորը իրավունք տվեց, հետը պահապաններ դրեց, ուղարկեց յուր այգին, որ ման գա ու մի ժամից հետո բերեն, գլուխը կտրեն:

Թագավորի տղեն մտավ այգին, Զմրուտ ղուշի փետուրը հանեց, կրակեց: Փետուրը կրակեց թե չէ, Զմրուտ ղուշի ֆշռոցը լսվեց երկնքում:

— Ա՛յ տղա, իմացա՞ր, — հարցրեց ղուշը:

— Իմացա՛, — ասաց տղեն:

— Դե արի թես, — ասավ ղուշն ու տղին թևն առավ, ելավ երկնքի երեսը, ագռավն էլ նրանց ետևից: Տղեն կամեցավ ագռավին ետ տա, ղուշը թե՛ ա՛յ տղա, թող դա գա, դրանից բան չունես...

Էսպես Սինամ թագավորի պալատի առաջից անց կենալիս վերևից տղեն ձայն տվեց.

— Սինամ թագավոր, քո աղուհացը ինձ հալալ արա:

Թագավորը մտիկ արավ, որ տղեն երկնքի երեսին գնում է:

— Ա՛յ տղա, — ասաց, — մի՞թե դու էդ տեսակ հավատարիմ ունեիր քեզ, որ իմ պատմությունը տարար: Դե որ իմ անունն ու պատմությունը աշխարհք ընկավ, այսուհետև իմ ապրելն էլ ավելորդ է, — ասաց Սինամ թագավորը, կախարդական մտրակը վերևից ձգեց գցեց ծովը, ինքն էլ ետևից ընկավ ծովը:

Զմրուտ ղուշը բերեց թագավորի տղին յուր հոր սահմանում վեր դրեց, ասավ.

— Դե գնա, ա՛յ տղա, ես էլ սրանից դենը չեմ կարող գալ:

Այստեղ Զմրուտ ղուշը ետ դարձավ, թագավորի տղեն եկավ հոր աշխարհքը: Ծկավ տեսավ Հազարան բիլբյուլի տերը դեռ քաղաքի շուրջը բանակ զարկած նստած է:

— Հը՛, ա՛յ տղա, ի՞նչ արիր, — հարցրեց աղջիկը, — Սինամ թագավորի պատմությունը բերի՞ր, թե չէ:

— Բերի՛, — ասավ թագավորի տղեն:

— Դե արի, պատմիր տեսնեմ:

Նստեց թագավորի տղեն ու ինչ որ տեսել էր, ինչ որ լսել էր, բոլորը պատմեց աղջկանը:

— Ահա էն ագռավն էլ հետս եկել է, հենց էստեղ դռանն է հիմի էլ, թե չես հավատում, բերեմ, տես:

— Դե բեր էստեղ, — խնդրեց Հազարան բիլբյուլի տերը:

Ագռավը ներս բերին: Ագռավին կանգնեցրեց էս աղջիկն ու ինքն սկսեց թլիսմ գիր անել: Քանի գրիչը շարժեց, ագռավն

ուռավ, քանի գրիչը շարժեց, ագռավը տողեց, մեկ էլ հանկարծ տրաքեց, մեջիցը դուրս եկավ մի գեղեցկուհի, մի հրաշալի աղջիկ, որ Հազարան բյուլբյուլի տիրոջից էլ ավելի սիրուն: Էս երկու աղջիկները փաթաթվեցին իրար ու կարոտներն առնելուց հետո դարձան զարմացած թագավորի տղին թե՛ ա՛յ տղա—մենք հարազատ բույրեր ենք, փառք աստծու, որ այսօր իրար տեսություն արժանացանք քո քաջության շնորհիվ: Ինչ որ անց է կացել, անց, այսուհետև Հազարան բյուլբյուլն էլ քեզ, քո մեղքին էլ թողություն: Այսուհետև մենք քո իրավունքն ատկն ենք, մեկանից որին կուզես քեղ կին առ, էստեղ միասին ապրենք:

— Ո՛չ, — պատասխանեց թագավորի տղեն, — իմ աչքովը ես որ տեսա.

Գյուլը Սինամին ինչ արավ,

Սինամը Գյուլին ինչ արավ,

ես ձեր ցեղիցը կին չեմ ուզիլ: Ես Սինամ թագավորից քաջ տղամարդ չեմ: Վախենում եմ: Տերը ձեզ հետ, գնացեք, ուր ո՞ր ձեր սիրտը կուզի: Դուք էլ ազատ եղեք, ես էլ:

#### 4. ՀԱԶԱՐԱՆ ԲՅՈՒԼԲՅՈՒԼ\*

Մի ժամանակ մի թագավոր էր ապրում: Նա մի այգի էր շինել, դրախտից էլ ծառ էր բերել՝ մեջը տնկել, աշխարհքի ամեն բարիքներով լցրել էր ու այգեպանին պատվիրել, որ դուռը միշտ բաց պահի, ով ուզի մտնի, ուտի, տանի, գնացող-եկողին չէ շինի:

Այդ թագավորի մայրաքաղաքում կենում էր մի աղքատ պառավ: Մի օր սրա մինուճար որդին հիվանդացավ ու մորը խնդրեց, թե՛ նանի, սիրտս խաղող է ուզում, ինչ կլինի գնա՛ մի ճիթ խաղող բերես...

Պառավը գնաց, թագավորի այգու դռանը կանգնեց, այգեպանին ձայն տվեց, խնդրեց, որ մի երկու ճիթ խաղող տ ս դեղապետ: Այգեպանը թե՛ այգին ջրում եմ, ժամանակ չունեմ,

\* Հազարաձայն սոխակ, ալլաբանություն է՝ բանաստեղծություն:

առ այս մի ճիթը, գնա: Ասավ ու մի ճիթ խաղող պոկեց, շը-  
պրրտեց դեպի պառավը: Այն էլ ընկավ ցանկապատի մեջ,  
բոլոր պտուղները թափեցին դես-դեն, ցրվեցին, կորան: Պա-  
ռավը հազիվ մի քանի պտուղ հավաքեց, բերեց տվեց հիվան-  
դին: Հիվանդը կերավ ու թե՛ նանի, այս մի քանի պտուղով  
սիրտս շնովացավ, գնա մի ճիթ էլ բեր: Պառավը դարձյալ  
վեր կացավ, գնաց: Այս անգամ այնտեղ հասավ, որ այգե-  
պանը այգուց դուրս էր գալիս: Ինչքան խնդրեց, աղաչեց,  
պաղատեց, քարասիրտ այգեպանը չլսեց, դուռը փակեց, գնաց:  
Պառավը դառն ու դատարկ եկավ տուն, տեսավ որդին աչքը  
դռանը գցած, խաղող կանչելով մորն է սպասում: Տեսավ  
մայրը նկավ դատարկ, սրտի ուզելիքը չի բերել, ավելի վա-  
տացավ ու խաղող կանչելով էլ այն գիշեր ավանդեց հոգին:  
Առավոտը բարիլուսին, աստծու գահի դռների դռները բացված  
ժամանակ, սգավոր մայրը ձեռները դեպի երկինք տարածեց  
ու կանչեց.

< i >

Անսահման գթած  
Արարիչ աստված,  
Որ շափ շես դրել արևի լուսին,  
Ոչ փակ երկնքի պայծառ երեսին,  
Որ աշխարհքն անծայր, ծովերը անհուն,  
Այսքան < . . . > այսքան բարություն  
Ածել ես, լցրել, փռել անխնա,  
Որ ամեն մի շունչ ուտի, լիանա...  
Դատիր քո մարդկանց— լիքն այգու միջին  
Մի ողկույզ խաղող մերժում են խեղճին:  
Այս լիքն աշխարհքից իմ որդին գնաց  
Շրթունքը ցամաք, լեզուն չորացած...  
Լսի՛ր, տեր աստված, խեղճ մոր անեծքին,  
Թող տատասկ կտրի արքայի այգին,  
Մառը՝ թող մացառ, վարդը փուշ դառնա,  
Տերը «վա՛յ դրախտ» կանչելով մընա:

Քեզ եմ բողոքում՝ որդիս առաջիս,  
Մի ճիթ դեղապետ շտվին խեղճիս:  
Այս լիքն աշխարհքից նա մեռավ, գնաց.  
Աչքը դեպի դուրս, լեզուն ցամաքած...  
Մ՛վ խեղճի աստված, իմ ցավին նայիր,  
Դու էլ քո բարին նրանց խնայիր,  
Թող կարոտ մնան սրտի ուզածին,  
Ինչպես իմ որդուն կարոտ թողեցին:

Պառավն անեծքը վերջացրեց թե չէ, թագավորի դրախ-  
տանման այգին փոխվեց դարձավ մի վայրենի մացառուտ,  
աղնիվ-աղնիվ տեսակի պտղի ծառերը ցուր ու փուշ կտրեցին,  
խաղողի սրթերը բաղեղի նման խճճվեցին, այդեպաններն էլ  
արջեր դարձան, ընկան մեջը:

Սարսափած թագավորը տեսավ, որ յուր տերության դառ-  
դը չորացավ, վշտից հիվանդացավ: Հավաքեց իր երկրի բո-  
լոր իմաստուններին, որ բացատրեն, թե այս ինչ տեսիլք էր,  
որ աստված ցույց էր տալիս: Իմաստունները գիր բաց արին  
ու պատմեցին, թե՛ Բագավորն ապրած կենա, քո այգին մր  
աղքատ պառավի անեծքից է փուշ կտրել և նորից կկանաչի, էլ  
այն այգին ու այն պտուղը կդառնա միայն այն ժամանակ,  
երբոր նրա մեջ կանչի Հագարաձայն սոխակը (Հագարան  
բյուլբյուլը), որ երգում է հագար տեսակ ձայներով ու եղա-  
նակներով և երգելիս բերանից վարդեր է թափում:

Հիվանդ թագավորը յուր երեք որդուն կանչեց.

— Որդի՛ք,— ասաց,— իմ միակ փառքն ու պարծանքը  
փուշ դարձավ, իմ թագավորության ամենաթանկ զարդը  
փշացել է: Ես արդեն ծեր եմ, հազիվ էի ոտքիս վրա կանգնում,  
հեմա վշտից ծունկս էլ է կտրել, ես որտեղի՞ց բերեմ Հագա-  
րան բյուլբյուլը (Հագարաձայն սոխակը): Երիտասարդ մար-  
դիկ եք: Նստեցեք ձեր նժույզները, գնացեք, բերեք, որ էլ ետ  
կենդանացնենք ու նորոգենք մեր փուշ դառած դրախտը: Իսկ  
դու տանը մնա,— ասաց փոքրին, որի անունը Շնորհք էր,  
բայց ոչ մի շնորհք չէր ցույց տալիս, ոչ կարողանում էր...

— Զէ՛,— ասաց Շնորհքն ու փախալ եղբայրների հետ:—  
Հաղարան բյուրյուլը սիրտս քաշում է դեպի այս ճամփեն:  
Փոքրին.

— Ինչո՞ւ ես գալիս, ի՞նչ պետք է անես... Եվ այլն:—  
Մեղք ես. ք. բանը չէ:

Վեր կացան թագավորի որդիքը, ճանապարհ ընկան: Գնացին, գնացին, հասան մի տեղ, որ ճանապարհը երեքի է բաժանվում, ու ճամփաբաժանում մի սիպտակամիրուք ծերունի նստած՝ ձեռքին մի կծիկ:

— Բարի օր,— ասում են,— պապի՛, այդ ի՞նչ ես անում:  
Բե՛:

— Գիշեր-ցերեկ եմ կծկում աստծու հրամանով, որդի՛ք, գիշերը կծկում եմ, ցերեկը պարզում:

— Հապա այս ի՞նչ ճանապարհներ են, դու կգիտենաս,—  
հարցրին տղերքը:

— Գիտեմ,— պատասխանեց ծերունին,— այս աչ կողմի լայն ու հարթ ճանապարհով գնացողին ոչ մի նեղություն չի պատահիլ: Միջին ճանապարհով գնացողն էլ կարող է կամ ետ գալ կամ չէ: Իսկ ձախ կողմի նեղ ու քարքարոտ ճանապարհը շատ վտանգավոր ճանապարհ է, լիքը փորձանքներով ու դժվարություններով, այս ճամփից մինչև օրս ետ եկող շեմ տեսել:

— Դե եկեք երեքս էլ այս լայն ճանապարհով գնանք,—  
ասացին մեծ ու միջնակ եղբայրները:

— Զէ՛,— հակառակեց փոքր եղբայրը, որի անունը Շնորհք էր:— Ամեն մեկս մի ճանապարհով կգնանք: Ահա ես բռնում եմ այս նեղ ու վտանգավոր ճանապարհը,— ասավ Շնորհքն ու ճանապարհ ընկավ:

Սերը Շնորհքի անձնվիրությունն ու համարձակությունը հավանելով օրհնում է նրան (օրհնանք ոտանավոր).

Ո՛վ սիրուն պատանի,

Դու, որ ընտրեցիր այդ դժվար ճամփեն,

Որ չի կոխել դեռ ոտքը մահկանցվի,

Որի ճամփին հրեղներ կան, սող ու անդունդներ,

Գնա՛, քեզ գորավիզ օրհնանքը ծերիս:

Ճանապարհին հաղար ու մի փորձանքներ հանդիպեցին Շնորհքին, յոթը գլխանի վիշապներ ու... դևեր կտրեցին առաջը, բայց նա բոլորին էլ հաղթեց, անցավ կարմիր աշխարհքը, ուր երկինքն էլ էր կարմիր, հողն էլ, ջուրն էլ, բույսն էլ: Անցավ սև աշխարհքը, ուր երկինքն էլ էր սև, հողն էլ, ջուրն էլ, բույսն էլ: Անցավ սպիտակ աշխարհքը, ուր ամեն բան սպիտակ էր: Վերջացան առաջն եկավ մի հսկայական ծառ: Մյուստեղ նա մի նոր տեսիլք տեսավ: Մի ահագին վիշապ փաթաթվել էր ծառի բնին, ուզում էր բարձրանալ վերև, իսկ վե՛րը անմեղ, անփետուր թռչունի ձագերը դարձուրած ճվճվում էին: Շնորհքի աչիվ սրտը կսկիծով ու զայրույթով լցվեց. թեև սարսափելի է այս վիշապը, բայց մի՞թե կարելի է թողնել, որ նա ուտի այն անմեղ, անօգնական, անփետուր ձագերին, մտածեց երիտասարդը և սուրը հանեց, հարձակվեց: Կտոր-կտոր արավ դաժան վիշապին, կուտեց ծառի տակ ու ինքը հողնած պառկեց, ու մի քիչ քնի: Հանկարծ ֆշշոցն աշխարհք բռնեց, անդունդները որոտացին, սաստիկ հողմ վեր կացավ. այդ Զմրուտ դուշն էր գալիս ձագերի մոտ: Նա ամեն տարի ձագ էր հանում այն բարձր ծառի վրա, բայց վիշապը գալիս էր, ուտում նրա ձագերը, և նա կարոտ էր մեռնում, որ մի անգամ հասցնի ու թրոցնի կամ գոնե աչքով տեսնի իր թշնամուն: Այս անգամ հեռվից նկատեց, որ մի սև բան մեկնված է ծառի տակին: Մվաց ու վրա տվեց, որ ծվիկ-ծվիկ անի քնած Շնորհքին: Ծուտերը բնից ծվծվոցն ընկան—թե՛ դրան վնաս չտաս, այ՛ն մե՛: դա մեր փրկիչն է, նայիր այն կողմը, այն վիշապն ուղում էր մեզ ուտել, դա սպանեց ու այնտեղ թափեց: Զմրուտ դուշի թևերի ֆշշոցից ու ծղրտոցից վեր թռավ Շնորհքը: Վեր նայեց. տեսավ Զմրուտ դուշի կապույտ թևերը յուր գլխի վերևը փոված, տարածված երկնքի երեսովը մին, ու սարսափեց.

— Մի՛ վախենար, քաջ տղա,— ձայն տվեց Զմրուտ դուշը,— դու իմ անմեր-անօղնական ճուտերին ազատել ես այս գարշելի վիշապից, այսուհետև էլ իմ ճուտերին վտանդ չկա: Ես քո այսքան լավությունն ինձ վրա շեմ թողնիլ: Ասա տեսնեմ, ի՞նչ կուղես ինձանից, որ քեզ տամ:

Շնորհքը թե՛ ես ինքս թագավորի տղա եմ, ոչ մի բանի կարոտություն չունեմ, միայն այսպես մի այդի շինեցինք, ու

աշխատանքներս փուշ դարձավ: Հիմի Հազարաձայն սոխակին եմ ման գալիս, տանեմ մացառուտի մեջ բարիլուտին երգի, որ նորից ծաղկի, կանաչի ու դառնա էլ այն դրախտը:

— Դժվար բան է խնդրածդ,— պատասխանեց Զմրուտ զուշը,— մեայն քո արած լավությունը շատ է, ու ես էլ անկարելի է, որ ինձ հասած լավությունը ետ չվճարեմ, արի թեա:

Ասավ Զմրուտ զուշն ու Շնորհքին թեև առավ, ծվաց, թռավ, ելավ երկնքի երեսը: Գնաց, գնաց, վայր իջավ սև ծովի ափին ու ձայն տվեց.— Ձուկն ախպեր: Զրերն այնկոծվեցին, ու ծովը ձոթոելով Ձուկն եկավ, թե՛ այդ ի՞նչ է, Զմրուտ քույրիկ, հարշտակե՞մ...

— Ձէ՛, սրա լավությունը հասել է ինձ,— պատասխանեց Զմրուտ զուշը,— սրան պետք է տանես, հանձնես Աժդըհան ու ասես, որ սա Հազարաձայն սոխակին է ման գալիս, Զմրուտ քույրիկն ուղարկել է, որ նրա տեղն ու պատմությունը սրան հայտնես:

Ձուկը բերանն առավ Շնորհքին, տարավ, հասցրեց ծովի մյուս կողմը, որտեղ նստած էր մռայլ ու խոժոռ Աժդըհան: Աժդըհան Շնորհքին տեսավ թե չէ, աղաղակեց.— Հը՛, Ձուկն ախպեր, այդ ի՞նչ է, հափշտակե՞մ...

— Ձէ՛,— պատասխանեց Ձուկը,— Զմրուտ քույրիկն է ուղարկել, սրա լավությունը նրան է հասել: Սրան պետք է տանես քո սահմանն անց կացնես, Հազարաձայն սոխակի տեղն ու պատմությունն անես, որ գնա, գտնի:

Աժդըհան ուսն առավ Շնորհքին, տարավ ապահով անց կացրեց յուր տերության սահմանը, մի տեղ վայր բերեց ու այսպես արավ Հազարաձայն սոխակի տեղն ու պատմությունը:

— Այսուհետև Հազարաձայն սոխակի տիրոջ տերությունը սահմանն է սկսվում: Կգնաս, առաջդ մի գետ կգա: Հազարաձայն սոխակի տերը նրա ջուրը դարձրել է աղի-լեղի, բայց դու որ խմես, պետք է բացականչես՝ ա՛խ, ինչ անմահական ջուր է: Գետը որ անցնես, կբացվի մի դաշտ: Հազարան բյուլբյուլի տերը նրան լցրել է փուշով ու տատակով: Դու պետք է փուշը պոկես, հոտ քաշես ու ասես՝ ա՛խ, ինչ անուշ հոտ է, դրախտի ծաղիկն է իսկը: Այդ էլ որ անցար, աչքիդ կերես Հազարաձայն սոխակի տիրոջ ապարանքը: Այն ժամանակ

առաջդ խեղկատակներ դուրս կգան: Այն ծաղրածությունները, այն խաղերը կանեն, որ հարյուր տարվան մեռելն էլ կծիծաղի, բայց դու չպետք է ծիծաղես, եթե ծիծաղեցիր, իմանաս, որ քեզ կհաղթեն ու կոչնչացնեն: Կհասնես ապարանքի առաջը: Այս ու այն կողմը կտեսնես կապած խոյն ու առյուծը: Առյուծի առջևը խոտ է ածած, ոչխարի առջևը միս է դրած: Միտը կվերցնես առյուծի առաջը կզնես, խոտը ոչխարի, ու կանցնես: Կմտտենաս դռներին, կտեսնես դռան մի փեղկը փակ է, մյուսը՝ բաց: Բաց դուռը կփակես, փակը կբանաս ու կանցնես: Վերև ապարանքում, ոսկի վանդակի մեջ երգում է Հազարաձայն սոխակը: Նրա երգի հետ մշտադալար վարդի փունջեր է թափում բերանից և վարդերի անուշ բուրմունքից ու երգով արբեցած յուր լուսեղեն անկողնում քնած է նրա հրաշագեղ տիրուհին: Սոխակը կվերցնես ու դուրս կգաս, միայն լավ իմացիր ու միշտ միտքդ պահիր, հիշիր, որ աղջկան ձեռք չտաս, թե չէ կորած ես: Դուրս գաս թե չէ, ծառ, բար, հող-ջուր ետև վիցդ ձայն կտան՝ տարավ, տարավ, հողածիրը տարավ: Դու ետ չպետք է նայես, թե չէ դարձյալ քո մասն է:

Շնորհքը Քամի ձիու խրատով առաջ գնաց: Անցավ լեզի գետը, անցավ տատասկի անտառը, անցավ խեղկատակների միջից, առյուծի ու ոչխարի ուտելիքները տվեց իրանց, փակ դռները բաց արավ, լուսեղեն ապարանքը մտավ: Ոսկեղեն վանդակում գեղգեղում էր Հազարաձայն սոխակը հազար խաղով ու կլկոցով, բերանից վարդ էր թափում, և նրա դալ-լայլիկներով ու վարդի բուրմունքով իր անկողնում քնած էր տերը՝ մի հրաշագեղ, աննման աղջիկ: Երջանկության բուրմունքով լցրել էին ապարանքը: Հազարաձայն սոխակի թովչական ձայնից ու աղջկա երկնային գեղեցկության հրապուրանքից Շնորհքը ինքն իրան մոռացավ: Մոտեցավ աղջկանը: Տեսավ վերմակը ետ է ձգել կրծքից, դուրս է հանել մերկ հոլանի բազուկները, կուսական մարմինը շնչում է գերբնական գեղեցկությամբ ու թարմությամբ: Միտը ճմլվեց, շղիմացավ, գլուխը խոնարհեց և համբուրեց, և համբուրի հետքը դրոշմված մնաց քնքուշ թշի վրա:

Հանկարծ միտն ընկավ Աժդըհի խրատը, թե ձեռք չտաս այն աղջկանը, թե չէ կհաղթվես ու կկորչես: Վեր առավ Հա-

զարածայն սոխակը, դուրս եկավ ապարանքից: Առաջն եկան խեղկատակները, հող-ջուր սկսեցին աղաղակել՝ տարա՛վ, տարա՛վ, հողածինը տարա՛վ... Ենորճքը ետ շնայեց, սիրտը սկացրեց, անցավ այդ փորձանքների միջից:

Քամի ձին հայտնվեց: Առավ, թոցրեց Ենորճքին: Մեկ էլ աչքը բաց արավ, տեսավ իր հոր թագավորության սահմանում: Այստեղ Ենորճքը կանգնեց, միտք արավ, թե՛ հիմի եթե ես մենակ գնամ, կասեն Հազարան բյուրջուլը գտել է, գոռոզացել, եղբայրներին թողել է օտար երկրներում մած գալով, ինքը վեր կացել, մենակ եկել: Գնաց եղբայրներին որոնելու: Ման եկավ ման, մեկին մի քաղաքում գտավ խորտկարարի խառնովում ծառայելիս, մյուսին մի ուրիշ քաղաքում մրգավաճառի մոտ: Պատմեց իր պիտի անցքն, ցույց տվեց Հազարան բյուրջուլը, ու երեքը մեծասին ճանապարհ ընկան: Ծանապարճին Ենորճքը ասաց, որ դեռ հաց չի կերել, մոռացել է, այժմ սաստիկ քաղց է զգում և խնդրեց եղբայրներին, որ հաց տան իրան:

— Դե Հազարան բյուրջուլը մեզ տուր, հաց տանք, — առաջարկեցին եղբայրները:

— Ահա ձեզ Հազարան բյուրջուլը, — ասաց Ենորճքը, — մի՞թե մեկ չի, թե դուք տարած, թե ես: — Եղբայրները Հազարան բյուրջուլը առան ու մի աղի հաց տվին Ենորճքին: Հացն ուտելուց հետո նա սկսեց ծարավից պապակել:

— Ահա այստեղ ճանապարհին ջրհոր կա, եկ գնանք այնտեղից ջուր հանենք, խմիր, — ասացին եղբայրներն ու Ենորճքին տարան մի խոր ջրհորի մոտ:

— Այժմ ո՞վ պետք է իջնի, — տարակուսելով ասաց մեծ եղբայրը: — Ես ոչ ծարավ եմ, ոչ կիջնեմ:

— Ես էլ չեմ կարող, — ասաց մյուսը:

— Ես կերթամ, — ասաց Ենորճքը, — ջուր կհանեմ ինձ համար էլ, ձեզ համար էլ: Միայն դուք թոկի ծայրը բռնեցեք:

— Լա՛վ, մենք թոկի ծայրը կպահենք, — ասացին եղբայրներն ու Ենորճքին կախ արին ջրհորը: Հենց իջավ թե չէ, թոկը կտրեցին: Հազարան բյուրջուլը առան, ճանապարհ ընկան: Ենորճքին թողին ջրհորի մեջ, թե թող չպա պարծենա, որ ինքն

է գտել Հազարան բյուրջուլը, իսկ մենք խորտկարար ու մրգավաճառ էինք:

Լուր տվին թագավորին, թե որդիքը Հազարան բյուրջուլը բերում են: Թագավորը մեծ հանդեսով եկավ որդոց առաջը, շատ ուրախացավ Հազարան բյուրջուլի համար, բայց փոքր որդու կորուստը երբ իմացավ, սաստիկ տխրեց: Ծշմարիտ է, որդիների մեջ ամենից անշնորհքն էր համարված նա, բայց ազնիվ սիրտ ունեւոր ու բնավորություն, վերջապես ծնողական սիրտը խտրություն չի դնում սիրո ու վշտի ժամանակ: Եղբայրները ասացին, որ իրանց տերության սահմանից դուրս գնալու օրից նրանից լուր չունեն:

Բերին մեծ հանդեսով ու ծեսով Հազարան բյուրջուլը ոսկի վանդակով կախ արին շորացած այգում, բայց ոչ թռչունը երգեց, ոչ այգին կանաչեց: Եկան, հավաքվեցին երկրի իմաստունները, ոչինչ չհասկացան: Այն ժամանակ կրկին երևույթը եղավ անծանոթ ծերունին, ասաց. — Այս թռչունին տեր էլ կա, մինչև տերն էլ չբերեք, սա չի երգիլ, — ասաց ու դարձյալ աներևույթացավ:

Որտեղ կլինի սրա տերը, որտեղ չի լինիլ: Իհարկե, ով ոչ թռչունը բերել է, տիրոջ տեղն էլ նա կիմանա: Հարցրին թագավորի որդիներին: Նրանք թե՛ մի անտառում ոսկի վանդակով կախ արած էր, վեր կալանք բերինք:

Ձարթնեց Հազարան բյուրջուլի տերը, տեսավ վերմակը ետ քաշած, նայեց հայելուն, տեսավ թշին համբույրի հետքը, նայեց վանդակին, տեսավ Հազարան բյուրջուլը չկա:

— Դունե՛ր, — ծղրտաց, — Հազարան բյուրջուլը տարան, ինչո՞ւ չբռնեցիք:

Դուները թե՛ աստված նրա հետ, այսքան տարի փակ էինք, բաց արավ, բաց էինք, փակեց, ինչո՞ւ բռնեցինք:

— Առյ՛ւծ, — ասաց, — Հազարան բյուրջուլը տարան, ինչո՞ւ ճամփա տվիր:

Առյուծը թե՛ օրհնվի նրա ճամփեն, այսքան տարի առաջս դու խոտ էիր ածել, միան աչքիս առաջին դրել: Նա միան ինձ տվեց, խոտը վեր կալավ, ինչպե՞ս չի ճամփա տալի:

— Դո՛ւ, — ասաց, — Հազարան բյուրջուլը տարան, ինչո՞ւ թողիր:



Թե՛ ես միս ուտող էի, որ դու այսքան տարի առաջս միս էիր դրել: Նա հազիվ միսն առաջիցս վեր կալավ, խոտ տվեց, ինչպե՞ս շթողնեի:

— Ա՛յ խեղկատակներ, — ասաց, — ձեզ պահապան եմ դրել, որ Հազարան բյուրբյուրը հողածինները չհափշտակեն, ինչպե՞ս տարան ձեր միջից:

Թե՛ մենք ի՞նչ անենք, մեր վրա մինչև անգամ չնայեց:

Վերագարձավ աղջիկը տխուր-տրտում, նստեց յուր ան-ձեռակերտ: ապարանքում, զրկված սոխակից, երգից, բուր-մուսքից:

Այսպես՝ աղջիկը տխուր, սոխակը լուռ, այգին փուշ կըտ-րած, մարդիկ արջ դառած, թագավորը հիվանդ, Շնորհքն էլ հորում: Բայց ի՞նչ եղավ Շնորհքը հորում: Հորն ընկավ, տե-սավ ի՞նչ հոր, մի ահադին խավարչտեմ անդունդ: Մոլորված առաջ էր գնում, հանկարծ երկու աղջիկ եկան: Մեկը հրաշալի գեղեցիկ, մյուսը մի սև, ատելի արաբ: Եկան թե չէ, ասացին. — Վա՛յ, խեղճ տղա, որտեղի՞ց ընկար դու այստեղ: Այստեղ իջնող շատ ենք տեսել, դնացող չէ: Հիմի որտեղ որ է, դե՛ւ կգա, քեզ կուտի:

Հենց այս խոսքում Ֆրշացնելով գեմ երևաց: Հեռվից տղին տեսավ թե չէ, ձայն տվեց. — Հա՛, հա՛, հա՛, հա՛, այսօրվան կերակուրս էլ եկավ: Բայց հենց որ մոտեցավ, Շնորհքի շենք ու շնորհքին մտիկ արավ, ասավ. — Ա՛յ տղա, դու մինչև այսօրվա իմ տեսածներից չես երևում, քեզ մի հարցնեմ, թե գտար, ազատ ես, թե չգտար, պետք է ուտեմ: Թե՛ հարցրու:

— Սրանցից ո՞րն է գեղեցիկ, — հարցրեց դե՛ր՝ ցույց տա-լով գեղեցիկ ու սգեղ աղջիկների վրա:

— Որին սիրտը սիրի, նա, — պատասխանեց Շնորհքը:

— Ապրե՛ս, գտար, — ասաց դե՛ր և Շնորհքին ուսն առավ, դուրս հանեց խավար վիրապից:

Շնորհքը լույս աշխարհ դուրս եկավ, ճամփա ընկավ դեպի հոր թագավորութունը: Եկավ, այնտեղ հասավ, որ Հազարան բյուրբյուր լուռ կախած է շոր պարտեզում, հայրը հիվանդ, աշխարհքը հավաքված եղբայրների գլխին, իսկ ելբայրները պատմում են, թե ինչպես մի անտառում գտան Հազարան բյուրբյուրը: Հայրը, երբ փոքր տղին տեսավ, վրան բարկա-

ցավ, թե քեզ այսքան տասցինք քո բանը չի, դու մի գնալ, վեր կայար գնացիր, որտե՞ղ էիր մինչև հիմա: Շնորհքը պատմեց գլխի եկածը, բոլորը զարմացան:

— Ո՛չ, անկարելի է, որ քեզ նման մի անշնորհք տղա, որ մինչև անգամ < . . . > բաներ չես կարողանում անել, Հազարան բյուրբյուրը բերեր: Եթե այդպես է, գնա սրա տիրոջն էլ բեր, այն ժամանակ կտեսնենք, որ դու ճշմարիտ ես եղել:

Շնորհքը դե՛ս՝ ճամփի փողին վրիցը թափ չտված, դարձյալ մնաս բարով ասաց յուր հայրենիքին ու ճանապարհ ընկավ: Քամի ձիու սանձը ջրում թողեց, իսկույն Քամի ձին հայտնվեց: Ձիու ճակատը համբուրեց, ական թոթափել հեծավ ու թու՛ւլ դեպի Հազարան բյուրբյուրի տիրոջ սահմանները:

Գնաց, տեսավ Հազարան բյուրբյուրի տիրուհին տխուր-տրտում նստած յուր ապարանքում:

— Դո՛ւ տարար Հազարան բյուրբյուրը, հողածի՛ն, — հարց արավ աղջիկը:

— Այո՛, սիրուն աղջիկ, ես տարա, — պատասխանեց Շնորհքը:

— Մինչև այսօր դեռ ոչ մի հողեղեն չի կարողացել իմ տե-րության սահմանը հասնել, — ասաց աղջիկը, — դե՛ր կան ճանապարհին, անտակ անդունդներ կան մինչև այստեղ, երկ-նահաս լեռներ կան ճանապարհը կտրած, փշալի անապատ, աղի-լեղի գետ է կտրում, աժդահաներ են հսկում իմ դըռ-ներին, խեղկատակներ են կանգնած իմ ապարանքի մուտքին, հող ու ջուր, քար ու բույս պահապան էին դրված Հազարան բյուրբյուրին, դու ինչպե՞ս եկար, մտար այստեղ ու Հազարան բյուրբյուրը հափշտակեցիր, պատմիր տեսնեմ:

Շնորհքը պատմեց, թե՛ ես ճամփին պատահեցի սև դեմն, հաղթեցի ու ազատեցի ծովերի թագավորի աղջկանը: Քամի ձիու վրա անցա անդունդներն ու սարերը, անցա ապարանքի դռանը կանգնած ահավոր պահապանների միջից, դևի ուժին հաղթեցի:

Անդունդներն ու երկնահաս լեռները զվարճությամբ անցա, փշալի անապատը եղեմական պարտեզ թվաց ինձ, լեղի գետի դառնութունը չզգացի, խեղկատակների ծաղրին, աժդահա-ների ահին, առյուծի սարսափին, բոլորին դիմացա, բոլորին

հաղթեցի, միայն քո դիրքնական գեղեցկության հրապուրանքին շղիմացա, միայն քեզանից հաղթվեցի: Սրան թող ապացույց լինի այն համբույրի հետքը, որ դեռ մնում է քնքոշ երեսիդ: Այժմ էլ ահա քեզ մոտ եմ եկել կրկին, առանց քեզ չի խոսում Հագարան բյուբյուրը, տատասկ է մնում այգին, միջի մարդիկը՝ արջեր:

— Լսի՛ր, աննման տղա,— ասաց աղջիկը,— որքան ինձ դուր է գալիս քո ազնիվ շնորհքը, տապել ես իմ սիրտը գրավեց քո պատմությունը: Դու, որ անցար այս բոլոր անհաղթելի դժվարությունների միջից, դու, որ կարողացար այդ բոլոր արգելքների միջով ներս թափանցել կախարդական աշխարհքը, դու կարող ես մարդու սրտի գաղտնարանն էլ ներս թափանցել, դու կարող ես այս էլ անել: Պետք է դնաս ինձ համար բերես Սինամ թագավորի գաղտնիքը: Գնա՛, այս էլ բեր, այնուհետև ես քոնն եմ, արի, տար:

Վեր կացավ Շնորհքը, ճանաչարճ ընկավ դեպի Սինամ թագավորի տերությունը, նրա գաղտնիքը բերելու:

\*\*\*

Ո՛չ, ես չեմ եկել թևով թռչունի,  
Ոչ մարդու ոտով, ոչ օձի պորտով,  
Նրանցից ոչ միսն այս ուժը չունի,  
Թուել-եկել եմ ես քո կարոտով:

Ես ծովեր անցա,— ալիքն ու փրփուր  
Լվանում էին երեսն երկրների,  
Անդունդներ թռա, <երոնց> խորքերից  
Վեր էին հառնում ձայներ դժոխքի:

Անցա փշալի անկոխ անապատ  
Ու վարդի բուրմունք առա տատասկից:  
Այն լեղի գետից անցա անվհատ:  
Խմեցի լեղին— դառնություն շղգացի:

Հաղթեցի դեին, աժդահաներին,  
[ <3 անընթ. > ] խեղկատակների,  
Բոլորը անցա, հաջող դիմացա:  
Բայց չկարացի հաղթել քո սերին:

Եվ ահա կրկին անցել եմ համայն  
Ոչ հավքի թևով, ոչ մարդու ոտով,  
Եկել եմ թռած քո սիրով միայն,  
Քո սիրով, քո մեծ <ու> սուրբ կարոտով:

\*\*\*

Աղջիկը ամենաթովիչ ժպտալով կանչեց.

— Ահա՛, ես քոնն եմ,— ասաց աղջիկը,— ե՛կ գրկիր: Շնորհքը գրկաբաց վրա թռավ... գրկեց... բայց գիրկը դատարկ էր— աղջիկը ուրիշ տեղ էր կանգնած, զարմացած Շնորհքի վրա խնդում էր, կրկնում:

Կրկին վրա վազեց Շնորհքը, ուզեց բռնել, կրկին անհաջող:

— Բռնիր, եթե կարող ես, ես քոնն եմ,— կանչում էր կախարդական աշխարհքի շնաշխարհիկ թագուհին և խուսափում, ինչպես երազ-պատրանք:

Դարձյալ հարձակվեց բորբոքված Շնորհքը, դարձյալ անհաջող: Աղջիկը մյուս կողմից խնդում էր ու հեգնում.

— Ա՛յ դու անշնորհք Շնորհք, չես կարողանում ինձ բռնել: Գերբնական գեղեցկուհին այսպես երկար տանջելուց հետո ասաց.

— Դե Լսի՛ր, սիրելիս, դու այժմ չես կարող ինձ տիրել:

— Հապա, ե՞րբ կտիրեմ,— կանչեց հուսահատ տղան:

— Լսի՛ր ինձ, Լսի՛ր: Դու որ կարողացար այս բոլոր արգելքների միջով ներս թափանցել հողեղենին անմատչելի կախարդական աշխարհքը, մի գերմարդ ես դու երկնից իջած, դու կարող ես մարդու սրտի գաղտնարանն էլ ներս թափանցել:

Եվ գրկում էր թշվառ տղան նրա սիրով բորբոքված,

Կրկին գրկում, ամուր բռնում... դարձյալ իզուր և

խաբված:

Խուսափում էր այնպես երկար շքնաղ ոգին ու կանչում,

Կանչում կրկին, գիրկը նետվում, չքվում գրկից ու

տանջում...

Նոր-Բայազետ

Գրիգոր Հարությունյան, 40 տարեկան, լսել է Ավետիս հորեղբորից:

Վերջում Շնորհքը ամենքի ցավին ճար է անում: Հազարան բյուլբյուլի երգով Սինամ թագավորի կնոջը, որ ազուավ էր, կրկին կին է դարձնում, ինչպես արջ-այգեպաններին մարդ շինեց, երգչին էլ դարձյալ ձգում է այն դրախտը, նա քանի երգում է, նա վերանում է, (գալիս է այն թռչունը, որ տարավ) կորչում, անհետանում այս աշխարհքից...

Թե արջ մարդիկը, թե ազուավ կինը— կրկին փոխվելով, կարծես նոր են ծնվում, մաքուր, անմեղ, անարատ:

Խոր գիշեր էր, երբ Շնորհքը հասավ հոր աշխարհքը: Լուսադեմին Հազարան բյուլբյուլը կանչեց: Մարդիկ գարթնեցին: Թագավորը զարթնեց, տեսավ արշալույսը բացվել է և էլ առաջվան դրախտը ավելի գեղեցիկ է, արջերը՝ մարդիկ, ավելի մաքուր ու անարատ:

Շնորհքը Սինամին ասում է, որ գա իր հոր տերութունը, այնտեղ էլ Շնորհքը: Ազուավին էլ արջերի նման մարդ է շինում Հազարան բյուլբյուլը— նորոզված, մաքրված— Սինամն էլ ջահելացավ, երգին էլ դրախտն ընկավ, աղավնիները <1 անընթ. >, իսկ Շնորհքը միացավ, սմուսնացավ Հազարան բյուլբյուլի տիրուհու հետ, և ապրում են անխառն ու սուրբ, ինչպես ձայների ներդաշնակություն, ինչպես երգն ու իր ձայնը, ինչպես երգի բառերն ու եղանակը:

Ամեն մի ցավատիրոջ ասում է,— Գնա այսինչ այգին, արքայի տերութունը, Շնորհքի մոտ, նա է քո ճարը:

Ինքը եկավ, նրանք էլ հավաքվեցին:

Եկավ Սինամը, տեսավ իր Ալվարդին ավելի գեղեցկացած, նորոզված, մաքուր, ինչպես մանուկ, և ինքն էլ երիտասարդացավ: Եկավ թամբ շինողը, մոռացավ, ուշքը վերացավ, եկավ Ցնորք մինարեի երգիչը, տխուր, կարոտից մաշված, խորտակված: Նրան էլ տարին մշտադալար այգին. ներս մրտավ թե չէ, աղաղակեց՝ ահա, այս էի որոնում... գտա՛:

Ժամանակով մի աղքատ կնիկ ունենում է երկու որդի: Սրան մի եղբայր ուներ, որի աղջիկն այնքան սիրուն էր, որ արևին ասում էջ դուրս մի գալ, ես լույս կտամ: Սա շատ հարուստ մարդ էր: Մի օր այս աղքատ կինը եղբորը խնդրում է— թե այսօր դու այդ կարողության տերն ես, իսկ ես այսքան նեղության մեջ, մի գործի դիր իմ որդիներին: Եղբայրը թե՛ գնա որդիքդ ուղարկիր, թող գան, մի գործի դնեմ: Գալիս են: Քեռին թե՛ որդիք, տեսնո՞ւմ եք այս իմ աղջիկը: Ահա ամենքիդ մի հարյուր թուման փող, գնացեք դարիբություն, աշխատանք արեք, ով որ շատ աշխատանք բերի նրան կտամ: Այսպես, վեր կացան գնացին: Գնացին, շատ լիե քիչ, ձամփին տեսան երեք մարդ կոխվ են տալիս: Սրանք միջամտում են, որ խաղաղացնեն: Սրանք՝ մեր դարդից հեռու կացեք, մեր հայրական երեք բան է մնացել՝ խալիչան է, փայտը, զլխարկը: Երկուսն էլ նստեցին խալիչին, զարկեցին փայտով, թռան:

Երկու եղբայր գնացին, տեսան մի սարի գլխի մի ապարանք: Գնացին այնտեղ հանգստանալու: Ներս մտան, տեսան երկու հրեղեն աղջիկներ քնած: Թագավորի աղջիկներ: Մեկը խանչալը մեկի գլխավերևը տնկեց, մյուսը մի խնձոր դրեց: Երկուսն էլ համբուրեցին ու գնացին: Ամենքը մի տեղ մի ծառ: Այս պատմեցին թագավորին: Թագավորը ամբողջ իր տերության մեջ հայտարարեց, թե՛ ով որ այս խանչալը հանի, իմ աղջիկը կտամ նրան: Իրան հողի մեջ ինչքան ուժով մարդիկ կային, եկան, փորձեցին, չկարողացան խանչալը հանել: Նազիրին թագավորն ասում է, թե՛ էլ մարդիկ կա՞ն: Թե՛ թագավորն ապրած կենա, միայն երկու օտարական մշակ են մնացել: Թե՛ նրանց էլ բերեք: Սրանց էլ բերին: Թագավորը թե՛ տղե՛րք, կարո՞ղ եք այս խանչալը հանել: Թե՛ թագավորն ապրած կենա, ես ինքս եմ զարկել, ինքս էլ կհանեմ: Թե՛ լավ, թե հանեցիր, իմ աղջիկը քեզ կտամ, թե չէ՛ գլուխդ կտամ: Գնաց ձեռքը գցեց, խանչալը հանեց, դրեց պատյանի մեջ: Թագավորը, թե՛ ո՞չ աղջիկը կտամ քեզ: Տվեց փոքրը սրան,

մեծն էլ՝ մեծ եղբորը: Առժամանակ մնացին, հետո սրանք թե՛  
թագավորն ապրած կենա, մենք էլ օջախի տեր ենք, խնդրում  
ենք թույլ տաս մեր օղուշաղը վերցնենք, գնանք մեր հողը:  
Թե՛ գնացեք: Շատ եկան թե քիչ, մի սարի գլխի վրան զար-  
կեցին, նստեցին: Լույսը որ բացվեց, տեսնեն մի վիշապ  
իրանց շուրջն այնպես է փաթաթվել, որ դուրս գալու ճար չկա:  
Վիշապը լեզու եղավ, թե՛ ես ձեզ ճամփա չեմ տալ, մինչև իմ  
խնդիրքը չկատարեք:— Ի՞նչ է քո խնդիրքը: Թե՛ իմ խնդիրքն  
այն է, որ գնաս Սինամ թագավորի խոսքը բերես ինձ ասես:  
Թե՛ շատ բարի, ճամփա տուր, գնամ բերեմ: Թե՛ քեզ ճամփա  
կտամ, միայն քո եղբորն ու ձեր կանանց տուտաղ կբռնեմ,  
մինչև գաս: Թե՛ չէ, գուցե ես գնամ, շատ ուշանամ, թող եղ-  
բայրս իր կնոջ հետ գնա, ինձ հետ ուրիշ պայման կապիր: Թե՛  
դե լավ, եկ հացն ու գինին— տեր կենդանին ասա, երգվիր,  
թողնեմ: Թե՛ թող այդ մեր երդումը լինի: Նրանք ազատվեցին,  
ինքն էլ գնաց:

Շատ գնացին, քիչ, եկան մի ճամփում հանգստանալու: Մի  
ջրհոր կուր: Մեծը թե՛ եկեք ինձ քաշ արեք շուր հանեմ: Փոքրը  
թե՛ չէ, ես կերթամ: Սրա կինը թե՛ ա՛յ մարդ, որ դու իջնես,  
քո եղբայրդ քեզ չի հանիլ: Թե՛ չէ:

Քաշ է անում, գցում հորի մեջ ու ինքը գնում: Գնաց փոքրը  
գետնի տակը՝ անդունդ: Գնաց այս կողմ, այն կողմ մութ աշ-  
խարհք է, տեսավ մի պառավ կին: Թե՛ ա՛յ հողածին, մենք  
ընկանք, դուք էլ ընկա՞ք: Թե՛ ի՞նչ պետք է լինի իմ ճարը, թե՛  
քո ճարն այն է, որ ղոչեր կան, որ սեին ընկնես, նա էլ գցի  
կարմրին, հետո սիպտակին, կրնկնես լուս աշխարհ: Երեք  
ղոչ են... և այլն: Խառնվեց, ընկավ սիպտակի վրա և այլն,  
ընկավ ավելի մութ աշխարհ:

## 6. ՍԻՆԱՄ ԹԱԳԱՎՈՐ

Ն. Էքսի Ուոռմբեկով, Քիֆլիզեցի (լսել է վանեցի բիճա Սարգսից, որ ալժմ  
էշմիածին այգեպան է):

Մի թագավոր 40 տղա է ունենում: Թե՛ որդիք, քանի ես ու  
մերդ կենդանի ենք, ամուսնացեք, մենք էլ ուրախանանք:

— Եթե 40 քույր պատահեն, կամուսնանանք:

Վճիռը հայտնում են թագավորին: Թագավորը ղրկեց մար-  
դիկ այս ու այն կողմ, չկարողացան:

Ինքը՝ թագավորը գնաց: Յոթ տարի ժամանակ նշանակեց,  
թե՛ եթե եկա, եկա, թե չէ՝ սպանված եմ:

Տեսավ մի դաշտում մի աղբյուր պատահեց: Հենց ուղեց  
սուրճ խմել, տեսավ էլեք մարդ: Կանչեցին.

— Ի՞նչ եղ ի՞նչք մենք:

— Արեւելքի թագավորն եմ ես: Ես 40 աղջիկ ունեմ: Ես  
առաջարկեցի, նրանք թե՛ ինչուեւ մենք 40 քույր ենք, պետք է  
40 եղբայր գտնես, որ ամուսնանանք: Այստեղ ուրախացան  
< . . . >

40-ից փոքրը Միրզա Մահմադ՝ տղեղ, քաշալ: Դրան չեն  
ուզում տանել և չեն տանում: 39-ը գնում են:

Փոքրը խնդրում է հոր ձին, ձիապանն էլ չի տալիս: Գնում  
է զոռով ձին թամբում, նստում, գնում, հրում է— հրում քա-  
ղաքի գոռերը, կողպել են, քացի է տալիս, դուռը փշրում:  
Հասնում է.

— Բարև, եղբայրներ:

— Ինչո՞ւ եկար, տո, գետինը մտած:

Մյուսները թե՛ թող գա, մեզ կծառայի:

Հասնում են:

— Եկել ենք մեր հարսնացուները տանելու:

Աղջկերքը թե՛ թող գան տեսնենք:

Մեծ աղջիկը երեք պայման է առաջարկում, թե՛ ա. պետք  
է ինձ հետ նարդ խաղաք, բ. բուրթի, մենք կգցենք, թե մեզ  
տանեք... գ. Սինամը Գյուլին ի՞նչ արավ, Գյուլը Սինամին ի՞նչ  
արավ:

Միրզա Մահմադին չեն տանում նարդ խաղալու: Պահա-  
պանին կանչում է, թե՛ գնա տես եղբայրքս ինչ բանի են:  
Գնում է գալիս, թե՛ երկու անգամ տարել են աղջկերքը,  
կրրորդն էլ հիմա կտանեն:

Ներս է մտնում, թե՛ թողեք ես տանեմ:

Խաղաց, տարավ:

Բուրթի խաղացին մյուս օրը, էլի շտարան Միրզա Մահ-  
մադին— նույն կերպ:

Գ. Թե՛ Մինամբ Գյուլին ի՞նչ արավ:

Հարց ու փորձ արին, թե որ կողմն է, որ կողմը չէ: Հարցնում են աղջկանք: Նա թե՛ ես ոչինչ չգիտեմ, այդ դուք պետք է գտնեք:

Ո՞վ կերթաւ, ով չէ:

Միրզա Մահմադը թե՛ ես:

Պատրաստվում է, մնաս բարով ասում, դնում: Ամեն բան՝ շոր, ձի և այլն ծախում է, մնում է վերջը մի հատ կոպեկանոց, մի ոսկի:

Մի քաղաք:

Մի օր ման գալիս տեսնում է փողոցում մի անկյունում մի աղքատ աղիողորմ ձայնով ողորմություն է ուզում: Ձեռքը գրպանն է տանում, փող հանում տալիս: Քաղցում է: Գնում է մի տեղ հաց ուտում, ձեռքը գրպանն է տանում, որ փողը տա, տեսնում է ոսկին տվել է, կոպեկն է մնացել: Ներողություն է խնդրում խանտերից, գնում աղքատին թե՛ եղբայր, ես քեզ մի ոսկի եմ տվել, նրանից մի բան տուր ինձ, որ կարողանամ վճարել: Աղքատն սկսում է գոռոզու, թե ինձ կողոպտում է: Մտքումը գնում է աղքատին մի բան անել: Հետևում է: Աղքատը դուրս է գալիս քաղաքից, մտնում մի հեռու քարանձավ: Նա էլ անտես մտավ: Նստեց, մոմերը վառեց, ամեն բան ոսկի՝ սեղան, բան, ամեն բան ոսկի: Նստեց հաց է ուտում: Հաց կերավ պրծավ: Ներս մտավ մի լալ դուրս բերեց, մի հավի ձվի շափ, և խաղացնում է, ծուլ է անում ու բռնում:— Գնա լալս, արի լալս:— Մի անգամ էլ գցելիս Մահմադը բռնում է օդի մեջ: Կույրը կանչում է:— Արի լալս, արի լալս: Լալն էլ չկա: Թե՛ խոռվեցիր, կորչում ես կորի, մյուսը կբերեմ: Մտնում է դուրս բերում ավելի մեծը, ավելի լավ: Նույն ձևով:— Լալս արի, լալս արի: Երրորդն է բերում: Նույն ձևով: Թե՛ անպայման այստեղ մարդ կա: Դուռը փակում է, շունչն իրան քաշում: Տեսնում է մարդու շունչ է: Ձայն է տալիս: Այնքան այս ու այն կողմ է ընկնում, որ բռնում է ամուր, թե՛ ճիշտն ասա, դու խո Միրզա Մահմադը չե՞ս: Թե՛ հա: Աղքատը շորում է, ոտները համբուրում, թե՛ դու որտեղի՞ց գիտես ինձ:— Ի՞նչ մի քաջ գիտեմ <1 անընթ. >:— Որտեղի՞ց: Թե՛ հետեի՞ս ինձ: Տանում է ներս, ցույց է տալիս հարստություն, որ լեզ-

վով չի պատմվիլ:— Տեսա՞ր այս հարստությունը: Թե՛ տեսա:— Ես մի տեղ մի խորտկարար տեսա, օրը 40 պղինձ, ամեն մեկում 2 գոմեշ կեփվի, 40 էլ փլավ է եփում ու ոչ ոքի չի թողնում, որ ուտի: 40 էլ ծովն է ածում: Ես այսքան կարողություն ունեմ, չեմ կարող այնպես անել: Նրա դարդն է ինձ կուրացրել: Եթե կերթաս աշխ Ահմադի պատմությունը կբերես, իմ աչքերը կբացվեն, այս կարողությունն էլ քեզ, ես էլ քեզ ծառա:

Մյուս օրը նրան բավականին փող է տալիս, ճամփու դնում:

Գնում է, վերջը գտնում աշխ Ահմադին, տեսնում է ժողովուրդը խառնված: Խնդրում է մի քիչ փլավ, չեն տալիս: Որքան փող է առաջարկում, չեն տալիս: Ա՛յ, ասում են, գնա նրա տունը (աշխ Ահմադի), որքան ուզես կա, կեր, ամանն էլ ոսկի— քեզ է պատկանում:

Գնում է պալատը, հյուր են ընդունում, հացն էլ չի ուտում, թե՛ ուզում եմ ես ձեր պատմությունը տանել: Թե՛ թող գա:

Գնում է աշխ Ահմադի մոտ: Հացի է հրավիրում, չի ուտում: Թե՛ ինչո՞ւ, թե՛ մինչև չպատմես քո 40 պղինձ փլավի գաղտնիքը և ամանները ոսկի, որ տալիս ես, օրն էլ մի ոսկի, ալդ ի՞նչ բան է, ուզում եմ իմանալ:

— Շատ բարի, կպատմեմ: Միայն ես էլ մի ցավ ունեմ: Մեր մոտիկ քաղաքում մի թագավորի տղա կա, տարեկան մի թամբ է շինում, տարվա գլխին մի մինարա ունեն, դուրս է գալիս նրա գլուխը այնպես երգում, որ բոլոր մարդիկ ուշաթափվում են, հետո սկսում է լաց լինել, նրանից հետո դես ու դեն է որոնում, նայում, սկսում ծիծաղել, ծիծաղել ու թամբը զարկում է բարձրից ներքև, կտոր-կտոր անում: Նորից շինում է և դարձյալ նույնը— եթե նրա գաղտնիքը բերես, ես էլ իմը կասեմ:

Գնում է շահզադի մոտ, մի պառավի տուն հյուր ընկնում: Թե՛ ձեր թագավորի տղայի երգելու օրից ի՞նչ է մնում:— Երկու ամիս:

Մնում է: Այն օրը գնում, տեսնում դուրս եկավ, երգեց, այնպես երգում է, որ Միրզա Մահմադն էլ է ուշաթափվում: Մեկ էլ սթափվում է, տեսնում ոչ ոք չկա, բոլորն էլ ցրված են:

Գլխին ոտքին վայ տալով գնում է: Դարձյալ ամբողջ մի տարի սպասում, նորից գալիս է այն օրը, ականջները փակում է ամուր: Երգում է և այլն: Թամբը որ կտորում է, գլուխն ալմաստ է լինում, ընկնում է, Միրզա Մահմադը վերցնում է, գնում գրպանը: Ուրախանում է ու գնում տուն: Թե՛ լավ էր, սրանով կծանոթանամ: Մյուս օրը մունետիկն ընկնում է քաղաքը, ին՝ թագաժառանգն ալմաստը որոնում է, ով բերի, հոր թագավորության կեսը կտա: Թե՛ ինձ մոտ է, ես ուզում եմ անձամբ տեսնել: Գնում է, տեսնում մի գետնափորում, խոնավ տեղ, մի շորի վրա նստած շինում է թամբը, կտորները միացնում: Թե՛ բարև:— Բարև: Թե՛ դու ե՞ս գտել ալմաստը, թե՛ հա: Թե՛ ի՞նչ կուզես, որ տամ: Թե՛ ինչո՞ւ ես այս խոնավ տեղը նստած աչքիդ լույսը փշացնում ու երգում, ծիծաղում, լալիս ու թամբը փշացնում:

— Շատ լավ, միայն ես էլ մի բան կառաջարկեմ, եթե այն բերես... Թե ի՞նչ արավ Սինամը Գյուլին... և այլն, ես էլ իմը կպատմեմ:

Այստեղ Միրզան իրան հայրենիքն ու եղբայրներին հիշեց, որ դրա համար էր եկել:— Գնամ, միայն ո՞ր կողմն է: Թե՛ ահա այս ծովի մյուս կողմը նրա տերութունն է:

Գնաց, ծովին մոտեցավ, նավ չկա, բան չկա: Տեսավ ափին մի ծերունի նստած: Բարևեց ծերին ու հարցրեց, թե՛ ո՞վ այս ծովը անց կկացնի:— Այս ծովից քեզ ոչ ոք չի անցկացնի, ոչ նավ կա, ոչ բան, միայն կմտնես այս ծովակը, այնտեղ մի ահագին թռչուն կա ոտն ուռած: Կգնաս մի ղամիշ բարակ կթրաշես, ոտքը կմտցնես: Այնպես մոտեցիր, որ շտեսնի, թե չէ քեզ կտոր-կտոր կանի: Երբ վահրը գնա, հանգստանա, կասե՛ ո՞վ էր ինձ լավություն անողը: Նրան հայտնվիր, խնդրիր, նա քեզ անց կկացնի: Այդպես արա:

Բայց եթե գնում ես նրա պատմությունը իմանալու, նա քեզ կելատմի, միայն հետո կսպանի, որովհետև նրա գաղտնիքը ոչ ոք չպետք է իմանա:— Ինչ էլ որ անի, ես պետք է գնամ:— Այդ որ այդպես է, լսիր, կերթաս շատ կթախանձես, երբ ոտ պատմի պրծնի, խնդրիր, թե՛ կես ժամ աղոթեմ: Ես վերև կլինեմ, քեզ կթռցնեմ:

Անց է կացնում: Ահա քաղաքն ու պալատը: Հարցնում է,

գնում խնդրում, որ ներկայանա: Ներկայանում է, տեսնում է ծերացած, ճերմակած, բայց զարմանալի գեղեցիկ:

— Նստի՛ր, որդի:

Հաց են բերում: Թե՛ ո՞ւր ես եկել: Թե՛ եկել եմ պատմությունը լսեմ: Թե՛ ահիստ շե՞ս, որդի, որ իմ պատմությունն լսես: Այս է պայմանը, որ...— Թեկուզ մեռնեմ, միայն թե լսեմ:

Հրամայեց ծնոսաներին, վեր բերին մի ոսկի վանդակ՝ մեջը մի ագռավ նստած: Թե՛ տեսնո՞ւմ ես այս ագռավը: Թե՛ տեսնում եմ:— Սա իմ կինն է, թե՛ ճի՞շտ է, Վարդիկ: Թե՛ դա՛: Թե՛ ես գլուխե՞կ եմ, թե չէ: Թե՛ բեզ նման գեղեցիկ մարդ ես կյանքումս տեսած չեմ:— Իսկ սրանից 40 տարի առաջ ի՞նչ կլինեի: Թե՛ դեռն էլ խոսք չի լինիլ:

Հրամայեց ծնոսաներին, բերին մի սև արաբի գլուխ, թանկագին բարբրով զարդարված: Թե՛ տեսնո՞ւմ ես այս արաբին: Թե՛ տեսնում եմ: Թե՛ սա էլ իմ կնկա սիրեկանն է, ճի՞շտ է, Վարդիկ: Թե՛ դա՛: 40 տարի սրանից առաջ մի գիշեր կինս որ ծոցս մտավ, տեսա որ սաստիկ սառն էր ձեռն ու ոտը: Հարցրի, թե՛ ո՞րտեղից ես գալիս, թե՛ ոչինչ, դուրս գնացի ու ներս եկա: Մի՞թե սառեցի:— Դուրս գնալով ու տուն գալով այդքան կսառչե՞ն: Մեջս կասկած ընկավ: Մտքումս դրի, հետևեմ: Մյուս գիշեր սուտի քնած եմ, տեսնեմ դոշիս մի հուլունը դռնի: Միշտ այդ հուլունքով է ինձ քնացնելիս եղել: Որ դրեց, ես զգացի, որ մրափն ինձ կոխում է, ես վերցրի, ձեռքումս պահեցի: Նա դուրս եկավ, հետևեցի: Տեսա եկավ, ձի նստեց ու գնաց: Ես էլ ձի հեծա, հետևեցի: Գնաց-գնաց, մի բարանձավի դռան վեր եկավ, մտավ ներս: Ես էլ մտա: Տեսնեմ 4? մարդիկ՝ արաբներ, գլխավորն էլ այս արաբն էր, ճի՞շտ է, Վարդիկ:— Դա՛,— ագռավը կռավաց: Սա տեսավ թե չէ, կնոջս վրա բարկացավ, թե՛ անզգամ, ո՞ւր էիր մինչև հիմա: Թե՛ ինչ անեմ, իմ մեռած մարդուն հազիվ կարողացա քնացնել:— Ո՛չ, քեզ պետք է պատժեմ: Ու հրամայեց՝ խփեցե՛ղ դրան 1000 փայտ: Սրա ընկերները խնդրում են, թե՛ եթե այդքան փայտ խփենք, նա կմեռնի, թողե՛ր մի ավել վերցնենք, մի քանի անգամ խփենք, էլի քո խոսքն անց կացած կլինի: Այդպես էլ արին ու հաշտվեց: Կնոջս հագցրին մի տեսակ շոր,

ձեռքերին փոքրիկ բոժոժներ: Պարեց, հետո սկսեց գինի ածել՝  
ամեն մեկին մի բաժակ գինի է տալիս ու մի-մի համբուլլո:  
Այդ բոլորը տեսնելուց հետո ես կնոջս թողի, եկա տուն: Գի-  
շերվա մի ժամանակ անցնելուց հետո կինս եկավ: Ես հուլուն-  
քը կրծքիս ձեռքով բռնեցի, որ քունս շտանի: Տեսնեմ որտեղ է  
հուլունքը պահում: Տարավ իր գլխավերևը մի տեղ պահեց,  
էքսի իրիկուն կինս ինձանից շուտ քնեց: Հուլունքը վեր կալս  
դրի կնոջս կրծքին, քնացրի: Ես նրա շորերը հագա, թամբեցի  
ձին, մի տիկ գինու մեջ քնադեղ խառնեցի ու գնացի: Ներս  
մտա թե չէ, թե՛ հը՛, իրիկունը, որ 1000 փայտ չէիր կերել հիմն  
այդպես ժամանակին չէիր գալ: Նույն ձևով խրախճան: Վեր-  
ջում հայտնեցի, թե հայրս մի տեսակ երևելի գինի է ուղարկել,  
նրանից բերել եմ ձեզ համար: Ու աժեցի, մի-մի բաժակ խմա-  
ցրի: Բոլորն էլ քնեցին: Ես մերկացրի սուրս, բոլորին կոտո-  
րեցի, միայն մեկը փախավ և այն քեզ ուղարկողն է, ձեր  
հարսնացուների ամենամեծի սիրականն է, որ ուղարկել է քեզ  
այստեղ, որպեսզի քեզ սպանեմ ու աղջկերքն էլ ձեզ հարս  
չգան: Վերջացնելուց հետո եկա, հուլունքը իրան տեղը դրի,  
ձեռք ու ոտքս տաքացրի, որ կինս ոչինչ չիմանա: Ձեռքս  
հանկարծ դիպավ նրան: Նա զարթնեց ու իրան-իրան հանկարծ  
բացականչեց.— Վա՛յ, ուշացել եմ: Հուլունքը բերեց դրեց  
կրծքիս ու գնաց: Մի քանի ժամանակից հետո եկավ սաստիկ  
տխուր և սկսեց արտասովել: Էքսը տեսնեմ այս գլուխն առաջը  
դրած լաց է լինում ու սուգ անում տխուր ձայնով: Առաջ գնա-  
ցի, ասացի.— Ա՛յ կնիկ, այդ ինչ է, որ այդ սև արաբի գլխի  
համար այդքան լաց ես լինում: Այս որ ասացի, նա կատաղած  
հետ դարձավ, թե՛ տո իշի որդի էջ, դու ե՞ս արել այս բանը,  
հա՞: Ասաց ու ձեռքի նիպտը զարկեց, իսկույն դարձա էջ:

Տվեց մի մարդու, որ բանացնի: Մեջքս յարա դարձավ: Մի  
անգամ բակում արածում էի, դուրս եկավ կինս: Առաջ գնացի,  
վերքերս ցույց տվի, որ ինձ խղճա, ազատի: Բայց դրա փոխա-  
րեն նա ինձ տեսավ թե չէ ճշաց.— Ա՛յ դու անպիտան շուն,  
դարձյալ կենդանի՞ ես: Ասաց ու զարկեց: Գարձա մի շուն,  
ընկա մի դասաբի մոտ: Ղասաբը տեսավ, որ գեղեցիկ շուն եմ,  
որդուն ասաց՝ նայիր, լավ շուն է, հին միս կլինի, տուր իրան,  
մեր խանութին կհսկի: Այսպես մնացի: Միայն տեսնում եմ,

որ գիշերները, տղեն, հոր գնալուց հետո, փողը գողանում է,  
օճորքում մի դուժում պահում: Մի տարի անցավ: Հայրը, թե՛  
որդի՛, եկ հաշիվ տեսնեմ: Տեսան: Թե՛ 1000 թուման վնաս  
ունենք: Թե՛ ա՛յ որդի, ինչո՞ւ պետք է վնաս ունենանք, առաջ  
ավելի թանկ էինք ոչխարն առնում ու էժան ծախում, իսկ  
այժմ... և այլն: Չէ ախր, ես պարտք եմ արել, պարտքատերը  
կգա, ի՞նչ ասեմ: Մեղքս եկավ, սկսեցի ոտներն ընկնել, կոծ-  
կոնծալ ու օճորքին զնայել: Գլխի ընկավ, ներքև բերեց արկղը:—  
Փշանա քեզ նման որդին: Ու ինձ էլ, որ որդին չսպանի, տարավ  
տուն: Կինը տեսավ թե չէ, սկսեց իր գլխին տալ.— Ա՛յ մարդ,  
այդ ի՞նչ ես բերել: Թե՛ շուն: Թե՛ չէ՛ դա մեր թագավորն է, եր  
կինն է այդպես արել: Թե՛ հնար կա՞: Թե՛ ինչպես չէ, դրա  
կինը իմ աշակերտուհին է: Մի ճիպոտ բերեց, զարկեց, շինեց  
թագավոր: Ծիպոտը հանձնեց թագավորին: Թե՛ քո կինը այժմ  
գիշեր-ցերեկ այն արաբի գլխին կանգնած լաց է լինում, ուշքը  
վրան չի: Գնա, նրան կամաց-կամաց մոտեցիր, զգույշ, զառ-  
կիր ու ասա.— Քանի՞ կոսովես, ա՛յ ազոավի ձագ, ազոավ:  
Նա իսկույն կդառնա ազոավ: Գցիր ոսկի վանդակի մեջ: Միայն  
զգույշ կաց, քո պատմությունը ոչ ոք չիմանա, աշխարհ չըն-  
կընի: Եթե աշխարհքը իմացավ, թլիսմը կբանդվի, նա նորից  
կդառնա մարդ ու քեզ կփշաղնի: Այսպես էլ արի: Այժմ պահում  
եմ վանդակում.— Ճի՞շտ է, Վարդի՛կ: Թե՛ դա՛: Ահա իմ  
պատմությունը: Ասաց ու կանչեց դահլճներին: Թե՛ թող աղո-  
թեմ: Թողեց, որ աղոթի: Թաշունն եկավ նրան թոցրեց: Թոցրեց  
թե չէ, վանդակը պատռվեց, ու Վարդիկը դարձավ մարդ: Իսկ  
Միրզա Մահմադը եկավ շահզադի մոտ: Եկավ շահզադին  
պատմեց:

Շահզադեն սկսեց:

— Իմ ձայնը, խո լսեցիր, թե ինչ ձայն ունեմ: Թե՛ լսեցի:  
Թե՛ իսկ 15 տարի սրանից առաջ ինչ ձայն կունենայի: Թե՛  
դրան էլ խոսք չկա, ավելի լավ:— Մի առավոտ երգում էի,  
մեկ էլ տեսա մի բան ինձ վերցրեց օդի մեջ: Ոչինչ չիմացա,  
միայն մեկ էլ աչքս բաց արի, ինձ տեսա մի դրախտում: Այն-  
պես մի փափուկ տեղ եմ նստած, այնպես անուշ հոտեր են  
գալիս (այնպես ձայներ), որ լեզուն չի կարող պատմել: Մեկ  
էլ տեսնեմ, ինչպես արեգակը, մի գեղեցիկ աղջիկ է գալիս:

Նկավ, բարեկեց: Իմ լեզուն իսկույն կապվեց, շկարողացա պատասխանել: Թե՛ ա՛յ տղա, մինչև քո մահը ես քեզ պահեմ իբրև ամուսին, բայց պետք է մե՛նք սուրբ ու անխառն մնանք: Եթե՛ քո մի թերութունը այստեղ նկատեցի, քեզ կտոր-կտոր կտնեն: Հոժարեցի, մնացի դրա մոտ ամբողջ տասը տարի: Ոչ իմում էի, ոչ ուտում, միայն նրան նայելով ու նրա սիրով էի ապրում: Մեկ գիշեր էլ այդպես պառկած էի, հանկարծ ցանկութունը ինձ հաղթեց ու նրան ամուր կմշտեցի-ճմկտեցի: Աղջիկը ճշաց ու տեղից վեր թռավ: Այդ ճշոցի վրա այս ու այն կողմից թափվեցին հուրի-փերիները: Ինչ անեմ, ասաց, քեզ շեմ սպանում: Այնքան սիրում եմ: Ու ձայն տվեց.— Գալթառ, արի սրան տար, էլ այնտեղ վայր ձգիր, որտեղից բերել ես: Ես էլ ոչինչ չեմ իմացել, միայն այն դգացի, որ դարձյալ կանգնած եմ նույն մինարեի գլխին: Հիմի այն փառքն ու այն դրախտը կորցրի: Այժմ կսկիծից, իմ այս խոնավ ու մութ տեղում նստել ու ուրիշ պարապմունք չունեմ, արճեստի համար այս եմ շինում (?): Տարվա գլխին, նույն օրը, որ օրն ինձ տարել է, էլի գնում եմ երգում, տեսնում եմ էլ չկա, բարկութունս գալիս է, կոտորում եմ Թամբը:

Սրան լսելուց հետո շնորհակալութուն արավ, գնաց աշշի Ահմադի մոտ: Աշշի Ահմադին պատմեց: Աշշի Ահմադն էլ սկսեց իրանը պատմել այսպես.

— Ես աղքատ ծնողների որդի էի: Հայրս, երբ 10—12 տարեկան դարձա, ասաց.— Տեսնում ես, որ այնքան կարողութուն չունեմ, որ կնոջս էլ պահեմ, քեզ էլ: Գնա մի տեղ, մի գործ գտիր, քո գլուխը պահիր: Մի օր մի քանի հաց փեշումս դրի, եկա այս քաղաքը: Տեսնեմ քաղաքադռան մոտ մի հրեա: Թե՛ ի՞նչ ես ուզում, որդի: Թե՛ գործ: Թե՛ եկ ինձ մոտ, օրը մի ոսկի կտամ: Ամբողջ տարին կեր-խմիր, քեֆ արա: Միայն ամբողջ տարին մի օր պետք է ինձ համար գործ անես: Տարավ տուն, շորերս փոխեց: Երբ տարին թամամեց, ասաց.— Այսօր պետք է ինձ համար աշխատես: Մի ուղտ ու մի գոմեշ (ուղտի վրա երկու <1 անրնթ.>) տանում ենք, ծովափին պետք է մատաղ անենք: Տարանք: Մորթեցինք գոմեշը, քերթեցինք, կաշին սկսեց փռել, թե տեսնենք քանի ջուխտ տրեխ դուրս

կգա: Ինձ մեջը փաթաթեց ու ինքը հեռացավ: Հանկարծ տեսա, որ ես թռչուն էի, վերացա (իբրև թե): Շուրջս ծով, իսկ առաջս այն տեսակ անգին քարեր, որ աչքը շի դիմանում նայելիս: Տեսա մարդու կմախքներ ու գանգեր: Հրեան ներքևից ձայն տվեց, թե՛ վեր ածա այդ անգին քարերը: Ես վեր ածի ու կանչեցի, թե՛ իսկ ես ո՞րտեղից իջնեմ: Թե՛ գնա մի փոքր այն կողմը ճանապարհ կա, կիջնես: Գնացի այն կողմը, տեսա անդունդ ու տակը ծով: Մի քանի օր մնալուց հետո տեսա, որ այնտեղ սոված մնալով պետք է մեռնեմ, ու թռչունները ինձ ուտեն, ասացի գոնե ծովն ընկնեմ, դիակս մարդիկ կհանեն, կթաղեն: Ընկա: Երկու ձուկը կարծես սպասում էին ինձ: Ինձ դուրս հանեցին ափը: Որոշեցի գնալ մի տարի էլ ուրիշ տեղ ծառայել ու հետո այդ հրեայի գլխին խաղ խաղալ: Տարվա վերջը եկա, նույն աղքատ տարազով քաղաքադռան մոտ պատահեցի հրեային: Նույնը:

— Ես ինչպե՞ս պառկեմ, վախենում եմ:— Ընչի՞ ես վախենում:— Զգիտեմ: Դու պառկիր, տեսնեմ ինչպես:

Պառկեց: Ես իսկույն կապեցի: Թռչունները եկան տարա՛: Զայն տվի, թե՛ դե հիմի դու, լավերը կիմանաս: Վեր ածավ: Թե՛ բաս ես ո՞րտեղից իջնեմ: Թե՛ քո սովորացրած ճամփով: Իսկույն իմացավ, որ ես անցյալ տարվան մարդն եմ: Հրեային մնաց մի աղջիկ, ես կին առա: Այժմ զավակներ ունեմ, իսկ այս 40 պղինձ փլավն ածում եմ, որ ձկներն ուտեն, որ ինձ այնքան լավութուն արին:

Նկավ կույր աղքատի մոտ:

Երբ պատմութունը արավ, աչքերի փառք պատուվեց: Համբուրեց Միրզայի ոտքերը, թե՛ ես թեև թագավորի որդի եմ, բայց ընդմիջտ քո ծառան կմնամ, այս գանձերն էլ քեզ: Բայց Միրզա Մահմադը մերժեց, թե՛ այդ կարողութունն էլ քեզ, դու էլ գնա քո թագավորութունն արա: Ես գնամ իմ եղբայրներին որոնելու:

Գնաց գտավ, որ ամեն մեկը մի ստոր գործի են՝ նախըլի, խանութպան: Հավաքեց, գնացին աղջիկների մոտ, թե՛ Մինամ թագավորի գաղտնիքը բերել ենք:

Մեծ աղջիկը հարցնում է, թե՛ բերի՞ք: Սկսում է պատմել թե չէ՛ մեծը կարմրում է: Վերջում առաջարկում է թագավորի



մեծ աղջկա ննջարանի առաստաղը: Այնտեղից գտնում են նրա սիրեկան արաբին: Նրան սպանել են տալիս, իսկ աղջիկներին տանում են, միայն 39: Մեծին շեն տանում:

Ճանապարհին մի տեղ իջնում են: Տեսնում են լուսադեմիին մի աճազին վիշապ շրջապատել է: Մնացին զարհուրած: Ճամփա տվեց բոլորն անցան, մնաց Միլդա Մահմադը: Նրան առաջարկեց, թե՛ ինձ հետևիր: Տարավ մի այգի, մի սիրուն աղջիկ ցույց տվեց, թե՛ այս աղջիկն իմ քույրն է: Սրան քեզ կտամ ու քեզ էլ կազատեմ, եթե դնաս ամենագեղեցիկն ինձ համար (դունչս գոզալը) կրերես: Կգնաս, 4 եղբայր են՝ դեռու Կգնաս պատերազմ, նրանց կսպանեն, նրանց քրոջը կրերես ինձ համար: Ես մարդ կդառնամ, իսկ իմ քույրը քեզ կտամ: Բերում է թև չէ, տրաքում է՝ ու դուրս գալիս դառնում է մի զեղեցիկ մարդ, իսկ վիշապի քրոջն ինքր տանում է հոր քաղաքը, հետն ամուսնանում:

#### 7. «ՄԻ ԹԱԳԱՆՈՐ ԿԱՐ...»

Նոր-Բայազետի եջում Եղիկանց, 35 տարեկան, Նոր-Բայազետ է լսել (1894)

Մի թագավոր կար, երեք որդի ուներ: Մեռնելիս իր որդոցը կտակ է անում, թե՛ որ ես մեռնեմ, հերթով եկեք գիշերները գերեզմանիս վրա հսկեցեք: Թագավորը մեռնում է: Առաջին գիշերը մեծ որդին է գնում: Գիշերվա մի ժամանակին տեսնում է մի աճազին վիշապ եկավ: Վախենում է, փախչում: Գալիս է դուրսն այնքան մնում, որ լուսանում է: Լուսին գնում է տեսնում հոր գերեզմանը քանդած, մեռելը հանած: Նորից թաղում է, յուր վրանն էլ վերցնում, գալիս տուն: Եղբայրները հարցնում են, թե՛ ի՞նչ տեսար: Թե՛ ոչինչ: Միջնեկն էլ այսպես (միայն զարմացած, թե ինչպես սա իմ մեծ եղբորս չ՛ պատահել):

Հերթը հասնում է փոքրին: Գիշերվա մի ժամին տեսնում է վիշապը եկավ: Գուրզը զարկում է, տալի սպանում: Բայց վիշապն յուր սուտը ձգում է, ճրագը հանգցնում: Տղեն բարձրանում է յուր վրանի գլուխը, թե տեսնեմ, որտեղ է լուս երե-

վում: Տեսնում է հեռվում լույս է երևում: Գնում է դեպի այն կողմը: Ճանապարհին տեսնում է մի պառավ մարդ նստած, ձեռքին մի կծիկ: Թե՛ բարի օր, բիճա, էդ ի՞նչ ես անում: Թե՛ գիշեր-ցերեկ եմ կծկում աստծու հրամանով: Գիշերը կծկում եմ, ցերեկը պարզում: Թե՛ մինչև ես հասնեմ է՛ն կրակի մոտ, կլուսանա՞: Թե՛ կեսօր կդառնա: Թե՛ չի ըլի՞, որ կծիկը թողնես, մինչև ես գնամ ու դամ: Թե՛ չէ, աստծու հրամանն ա: Տղեն վրա է թռչում, զոռով բերանից հանում մաստակը (ծամոնը), ծերն իսկույն քնում է: Գնում է հասնում կրակի մոտ, որ յոթը վիշապ նստած, մի պղնձի մեջ սաղ-սաղ գոմեշներ են ածել ու շուրջը նստած եփում, ուտում են: Տղան մոտենում է, պղինձը մենակ կրակիցը վերցնում է, դնում մի կողմ, հետո կրակ վերցնում, որ գնա: Օխտն ախպեր վիշապներից մեկը նկատում է ու եղբայրներին ասում. թե՛ տեսեք, մի էսպես հողածին մեր պղինձը, որ օխտն ախպերով զոռով ենք վերցնում, մենակ վերցրեց, կրակ վեր առավ ու ուզում է գնա: Երեք սրան բռնենք: Վեր են կենում թև բռնեն, տղեն կանչում է, թե՛ մոտ մի՛ գաք, թե չէ օխտն եղբորդ էլ կփշացնեմ: Վիշապները թե՛ մենք չենք կովում: Արի դու մեզ մեծ եղբայր, մենք քեզ փոքր, էստեղ մի դուշման ունենք, արի նրան հաղթի, երեք աղջիկ ունի, դուրս բեր, մեկը քեզ, երկուսը մեզ:— Ո՞վ է ձեր դուշմանը: Թե՛ էս թագավորը: Թե՛ լավ... Գնում են: Վիշապներն սկսում են զուրգով զարկել, որ պալատը քանդեն, տղեն թե՛ այդպես չի կարելի: Գուք թագա մեխեր ունի՞ք: Թե՛ հա: Վերցնում է շարում պատն ու դուրս գնում: Վերև է կանչում վիշապներից մեկին, սպանում, գցում բակը, ականջները դրպանը դնում: Բոլորին էլ այս կարգով: Հետո իջնում է պալատը, թե՛ ախպեր, սրանք աղջիկն էին ասում, տեսնեմ էս ինչ են: Մտնում է ներս, տեսնում է երեք աղջիկ քնած: Մեկի ճակատը համբուրում է, թե սա իմ մեծ եղբորս կինը, մյուսի ճակատն էլ, թե սա էլ իմ միջնակ եղբորս, մյուսի էլ երեսն է համբուրում, թե սա էլ իմս: Ուզում է, որ դուրս գա, տեսնում է մի վիշապ եկավ, ուզում է թագավորին փշացնի: Տղան յուր սուրը զարկում է վիշապի գլխին, վիշապը սատկում է ու սուտը գցում թագավորի վրա: Տղան մնում է առանց սրի: Հանում է թագավորի սուրը, դնում յուր պատյանում, թագավորի փեշ-

կիրն էլ վերցնում ու գնում: Գնում է մաստակը գցում պառավի բերանը, պառավն իսկույն զարթնեց: Տղան հարցրեց, թե՛ մինչև լուս բացվի, կարո՞ղ եմ հասնել էն (յուր) վրանի մոտ: Թե՛ կարող ես: Գնաց, վրանը վերցրեց ու տուն գնաց: Եղբայրները թե՛ ի՞նչ տեսար: Թե՛ ոչինչ:

Գանք թագավորին: Առավուտը թագավորի աղջկերքը վեր կացան, տեսան իրանց երկսի ճակատին խալ կա, մյուսի՛ երեսին: Թագավորին իմացրին, թե՛ էս ի՞նչ բան ա: Թագավորը, թե՛ այ որդիք, ինձ հետ էլ այսպես-այսպես բան է պատահել: Թե՛ պետք է մեր դուշմանը գանձենք: Թե՛ սա դուշմանի բան չի: Վիշապն էլ սպանած ոտներին տակը գցած ա, բակումն էլ յոթը վիշապ կա կոտորած: Աղջկերքը թե՛ մենք պետք է մեր գողը գանձենք: Վեր կացան իրանց ձիանքը նստելին, եկան երեք ճամփաբաժանում վրաններ զարկեցին, նստեցին:

Մեռած թագավորի տղերքը վիճեցին թագավորության համար, թե որը լինի: Փոքրը թե՛ ասում են այսինչ տեղը մի թագավոր կա, գնանք ետև մոտ, նա որիս թագավոր նշանակի, մնացածներս հնազանդվենք նրան: Եկան, ճանապարհին աղջկաների վրաններին հասան: Երկու եղբայրները վախեցան, փաքըր թե՛ ինչ եք վախենում, երեք հոգի նրանք են, երեք մենք: Աղջկերքը նրանց բռնեցին, թե՛ մեր գողը դուք եք: Բերեցին թագավորի մոտ: Մեծը թե՛ թագավոր, ես ոչ տանից դուրս եմ եկել, ոչ գողություն եմ առել. միջնեկն էլ սրա պես: Եկավ փոքրը ու սկսեց պատմել, թե գնացել էի հորս գերեզմանը պահելու... և այլն: Թագավորը սրանց պսակում է, մեծին նշանակում թագավոր ու ճամփու դնում: Գալիս են մի տեղ վրանները զարկում, քնում: Առավուտը վեր են կենում, տեսնում, որ մի վիշապ իրանց շուրջը փաթաթված, նստած: Թուրը հանում է, թե սպանի: Վեշապը թե՛ ա՛յ տղա, զարկել մի՛, թե սպանել ուզենայի, ես վաղուց քեզ կփշացնեի: Թե՛ բաս ի՞նչ ես ուզում: Թե՛ պետք է գնաս Սինամ թագավորին հարցնես:

Սինամ Գյուլա նեյնասըն (դի),  
Գյուլ Սինամա նեյնադի:

Քեզ 40 օր ժամանակ կտամ, որ գնաս ու գաս: Եկար—եկար, թե չեկար, քո կնիկը կվերցնեմ, կտանեմ: Էս տղեն եղբայրներին ճանապարհ դրեց, ինքն էլ ձին նստեց, աստծու անունը տվեց ու գնաց: Գնաց, գնաց, հասավ մի ծառի Իսպի: (Այստեղ Հազարան բլբլուլի դեպքը, Զմբուտ դուշի, որ բարձիվ կամ թառլան դուշ էր ասում):

Թե՛ ի՞նչ ես ուզում, քո խնդիրքը կատարեմ: Թե՛ ուզում եմ, որ ինձ տանես Սինամ թագավորի մոտ: Թե՛ քո սովորցնողի վիզը կտորի, ափսոս քեզ նման քաջ, որ պետք է գնա Սինամ թագավորի մոտ: Միայն դու, որ իմ ձագերը վիշապից ազատեցիր, ես քո խնդիրը կկատարեմ: Թե՛ս կառնեմ, կթուչեմ, էնքան կբարձրացնեմ, որ արեգակը քեզ կայրի: Միայն դու էնքան ուժ ունենաս, որ էրվելիս վզիս խփես, ես քեզ իսկույն կիջեցնեմ Սինամ թագավորի քաղաքը:

## 8. ՀԱԶԱՐԱՆ ԲՅՈՒԲՅՈՒՆ

Նոր-Բայազետցի Սարբեկ Միրբեյանց, 35 տարեկան, Նոր-Բայազետի գեղերումը:

Ժամանակով մի թագավոր կար: Մի օր իր ձին հեծավ, գնաց սարերը սեյր անելու: Ղանապարհին պատահեց, լսեց երեք տավարած աղջկա զրույցը: Մի քույրն ասում է.— Եթե թագավորն ինձ ուզեր, ձվի կճեպի մեջ այնպես բան կեփեի, որ թագավորի զորքն ուտեր, կշտանար, դեռ մի բան էլ ավելանար: Մյուսը թե՛ ինձ առներ, էնպես խալի կգործեի, որ դոշունը վրեն նստեր, կեսն էլ ավելանար: Երրորդն թե՛ ինձ առներ, երկու ոսկեքաքուլ տղա կբերեի, մի ոսկեճկութ աղջիկ: Թագավորը սրան է հավանում: Թողեց, եկավ տուն: Մարդ զրկեց տավարածի մոտ: Թե՛ քո երեք աղջիկն էլ տուր ինձ: Երեքն էլ առավ եկավ:

Պառավը աղջկանն ասում է.— Աղջի, քո եղբայրներիդ զրկիր Հազարան բլբլուլը բերեն, համ քո մեծ ախարդ կնիկ կըլի, համ էլ թևերը ծափ զարնում, փեշերն են խաղում, փեշերը ծափ զարնում, թևերն են խաղում, նրա իմաստությունն էլ մի ջոխի է (փայտ, ճիպոտ), որ գետնին զարկի ու ինչ որ ուզի, ամեն բան պատրաստ է:

Իրիկունը տղերքը գալիս են, տեսնում իրանց քույրը լալիս է:— Ընչի՞ ես լալիս, քույրիկ: Թե՛ բա ի՞նչ անեմ, որ լլամ, ինձ թողի եք մենակ: Գնացեք, Հազարան բյուլբյուլը բերեք, համ բեզ կնիկ, համ... և այլն (կրկնութուն):

Առավոտը վեր կացան, ճամփա ընկան: Ճամփին մի սիպտակամիրուք ծերունի պատահեց: Նա հարցրեց, թե՛ որդիք, ո՞ւր եք գնում: Թե՛ գնում ենք Հազարան բյուլբյուլ բերելու: Թե՛ եկեք ես դարձեք, նրան ինչպե՞ս պետք է բերեք, ով որ գնում է, քար է դառնում:— Քար դառնա, շղառնա, մենք պետք է գնանք, մեր քրոջ խաթեր:

Գնացին, հասան դրա տեղը: Տեսան բոլոր եկողները քար կտրած: Երկուսն էլ մի տեղ կանգնեցին ու ձայն տվին.— Հազարան բյուլբյուլ: Այն կողմից կանչեց.— Զահրումար, էլ ձեռ դարձելի ձայնը լսեցի՞: Այս որ ասաց, տղերքը մինչև կեսը քար կտրեցին: Կրկին կանչեցին.— Հազարան բյուլբյուլ: Կրկին պատասխանեց.— Զահրումար, էլ ձեռ դարձելի ձեներն եկավ: Տղերքը մինչև կտրծը դարձան քար: Մին էլ կանչեցին նույն ձևով: Տղերքն ամբողջովին քար կտրեցին իրանց ձեռներով, միայն բաքուլները գլխներին մնաց նշան, որ քամին տանում էր, բերում:

Քույրը մնաց-մնաց, տեսավ ուշացան, չեկան, թե գնամ տեսնեմ եղբայրներս ինչ եղան: Գնաց էն պառավին հարցրեց, թե՛ ամի, էս ճամփով այսպես երկու տղա շանցա՞ն: Թե՛ որդի, մի գնա, գնացողը քար է դառնում: Թե՛ ես իմ եղբայրներից առավել չեմ, թե նրանք քար են դարձել, ես էլ կերթամ, քար կդառնամ:

Աղջիկը որ հասավ, տեսավ եղբայրները քար կտրած, էլ ձայն չկարողացավ հանել, ուշաթափվեց, վայր ընկավ: Հազարան բյուլբյուլը իր ծառաներից ուղարկեց, թե՛ գնացեք, տեսեք օրինավոր մա՞րդ է եկել ինձ համար, թեկուզ քարացած էլ լինի՞ կնկատվի: Մառան եկավ, տեսավ երկու ոսկեքաքուլ տղա քարացած, այդ ոսկեճկուժ աղջիկն էլ ուշաթափ ընկած նրանց մեջտեղը: Դարձավ, գնաց Հազարան բյուլբյուլին պատմեց, թե՛ այսպես երկու ոսկեքաքուլ տղերք... և այլն (կրկնութուն):

Հազարան բյուլբյուլը դրա վրա բարկացավ. մյուս ծառային ղրկեց թե՛ գնա տես, թե ձիշտ է, աղջկունը բեր այստեղ, ուշքի բերենք: Մառան գնաց, տեսավ ձիշտ է, բերեց աղջկանը Հազարան բյուլբյուլի մոտ: Հազարան բյուլբյուլը դեղ տվեց աղջկանը, սաղացրեց: Հետո թե՛ կերթաս քո երկու եղբայրներիդ մեջտեղը կանդնիր կանչիր.— Հազարան բյուլբյուլ: Ես ձայն կտամ: Ես, որ ձայն տամ, բոլորը կկենդանան ու կփախչեն: Բայց դու քո եղբայրներին չթողնես: Նրանց հետ բան ունեմ: Այդպես էլ արավ:

— Հազարան բյուլբյուլ,— թե՛ ջա՛ն, քո ձայնին մատաղ, եկե՛լ ես: Քարացածները մինչև կեսը կենդանացան:

Երեք անգամ կրկնեց, բոլորը կենդանացան ու փախան: Երկու եղբորը բունեց: Գնացին Հազարան բյուլբյուլի մոտ: Հազարան բյուլբյուլը թե՛ տղա, ես գիտեմ, որ դու ինձ համար ես եկել, որ եկել ես գնանք: Ինչ որ ունենք, վերցնենք գնանք: Վեր կացան, եկան: Եկան, տուն հասան: Հազարան բյուլբյուլը տղերանցը թե՛ երբ կգնաք սարը որս անելու, թագավորը ձեզ կառաջարկի, թե գնանք ինձ մոտ ճաշելու: Դուք ասեք.— Չէ՛. այսօր դու եկ մեզ մոտ ճաշելու քո գորքով, վաղն էլ մենք կգանք: Տղերքը գնում են նույն աղբրի վրա: Թագավորն եկավ դուրբին ղրեց աչքին, տեսավ տղերքն այստեղ նստած: Եկավ տղերանց մոտ: Թե՛ համեցեք, այսօր մեզ մոտ ճաշին... և այլն: Փոքր եղբայրը եկավ լուր բերեց: Մնացին քույր ու եղբայր մոլորած, թե՛ թագավորին իրան ղոշունով ինչպե՞ս ենք հարգելու, ոչ մի պատրաստութուն չունենք: Հազարան բյուլբյուլը թե՛ երբ որ կգան, կնստեն, հեշտ է, ամեն բան պատրաստ կլինի: Երբ նստեցին, երեք անգամ սուփրի վրա. ամենքի առաջ մի-մին աման դուրս եկավ, մեջը քիչ ոսկի (ամեն անգամ ճիպոտը գետնին զարկելով), թե՛ այս է մեռ կերակուրը: Ամենքդ ձերը վեր կալեք, տարեք: Թագավորը խնդրեց, թե՛ վաղն էլ ինձ մոտ եկեք:

Հազարան բյուլբյուլը թե՛ երբ որ վաղը կերթանք թագավորի սեղանի վրա, ինչ որ ես կուտեմ, այն կերեք, ինչ որ չեմ ուտիլ, նրանից չուտեք: Հետո անցնելիս, հրապարակում մի կին կա, թագավորը կառաջարկի, թե՛ նրա վրա թրեցեք, դուք

չթեք, այս վարդի փունջը դու քսիր երեսին, մյուս փունջն էլ փոքր եղբայրդ, այս վարդաջուրն էլ քույրդ, ու կանգնենք:

Այդպես էլ պատահեց:

Սեղանի վրա Հազարան բյուբյուլը մի փայտ է խնդրում: Բերում են: Թագավորը խնդրում է, թե՛ հաց կերեք: Հազարան բյուբյուլն էլ թե՛ փայտ, հաց կեր: Թագավորը թե՛ ախար փայտն ինչպե՞ս հաց կուտի: Երեք անգամ կրկնում է: Թագավորը թե՛ ինչպե՞ս ես ինձ ծաղրում: Թե՛ թագավոր, որ փայտը հաց չի ուտիլ, հապա դուք լսա՞ծ եք, որ մարդը շուն ծնի: Հաց չկերավ, նրանք էլ չկերան: Փոխեցին: Կրկին փայտին: Կրկին նույնը: Մյուսը՝ կրկին: Փայտն ուզում է գարձյալ (իրիկունը):— Զոխին հաց չի ուտի: Թե՛ որ ջոխին հաց չուտի, ինսանը կատվի ձագ կծնի: Հետո թե՛ թագավոր, այն կինը, որ դրել ես հրապարակում, հապա նա ինչպե՞ս շուն բերեց: Բեր նրան այստեղ: Տեսնենք այս տղերքն ու աղջիկը նա է՞ ծնել, թե չէ: Բերում են, ստուգում է: Մյուս երկու կանանց կատում են ձիու պոչից ու արձակում: Ինքը դառնում է մեծ տղի կնիկ... և այլն: Վերջանում է:

### Յ. «ՓՈՒՔՐԻ ԱՆՈՒՆԸ (ԱՎԻ) ՓԻՐ ԱՀՄԱՂ...»

(Իգդիրի) Հախվերիս գյուղացի աշուղ Ենոք Մկրտչյանց. 30 տարեկան, իրենց գյուղումն է լսել:

Փոքրի անունը (լավի) Փիր Ահմադ: Որս է գնում: Մի օր որսից դառնալիս տեսնում են մի պառավ կժող ջուր է տանում: Ասում են, ո՞վ նետով այնպես կտա պառավի կուժին, որ կանթը մնա թևին, ու կուժն այնպես ընկնի, որ պառավի վրա ոչ մի կաթիլ ջուր չթափի: Թագավորի տղեն ասում է՝ ես, ու գցում նետ ու աղեղը, տալիս կուժի կանթը պոկում: Պառավը անհոժում է, թե՛ դու թագավոր ես, քեզ անիծել չի կարելի, միայն քո բաղը շորանա, որ մինչև Հազարան բլբուլը չբերես, էլ կանաչի ոչ:

Հայրը որդոցը ճամփու է դնում Հազարան բլբուլը բերելու Գնում են:

Երեք ճամփաբաժանում նստած է մի սիպտակամիրուք ծերունի:

Ասում է.

— էս մի ճանապարհով գնացողը կարող է ետ գալ:

Երկրորդով գնացողը կարող է գալ, կարող է չգալ:

Մյուսով գնացողը իսկի ետ չի գալ:

Սիպտակ աշխարհք, սիպտակ աղջիկ, սիպտակ դև: Զյունանման աղջիկն ասում է.— Սիպտակ դևը քեզ կուտի: Թե՛ նա ո՞ր ճամփովն է գալիս: Թե՛ այս: Նա գնում է էլի դառնում, գալիս դևի ճանապարհը կտրում:

— Վաղուց է, ինսանի քաղցր միս չեմ կերել:

Կովում են: Դևի ալանջները կտրում, ցույց է տալիս աղջկանը.— Նշան են, իմ հույսովս մնա:

Ու ինքը գնում է, ընկնում կարմիր աշխարհքը: Կարմրաթուշ աղջիկ:— Օձն իր պորտովը, դուշն իր... Դու ինչպե՞ս եկար: Թե՛ քո սերն է բերել: Թե՛ սիրով կենաս, բայց ուր որ է, հիմա կարմիր դևը կզա որսից:

Դևը տեսնելուն պես ասում է.

— Հա՛, իմ ախպեր սիպտակ դևը քեզ չի կերել, ուղարկել է ինձ ընծա:

Նույն կարգով կովում են, նետով տալիս է, սպանում:

— Քեզ հետ սեր կանեմ, միայն քույր-եղբայրական սեր, որովհետև ես նպատակ ունեմ, պետք է իմ նպատակին հասնեմ: Թե՛ դե լավ, միայն սրանից դենը չգնաս, որովհետև թեև սիպտակ ու կարմիր դևերին հաղթեցիր, յոթ գլխանի սև դևից չես պրծնիլ:

Սև աշխարհք:

Զուրն էլ սև, խոտն էլ, գետինն էլ: Սև պալատ: Լուսամուտում նստած նույնպես մի սիրուն սևաչյա աղջիկ:

Նույն կարգով:

Դևը գալիս է: Ծնչից սար ու ձոր որոտում են: Տեսնում է թե չէ, ասում է.— Հա՛, շատ շնորհակալ եմ իմ եղբայրներից սիպտակ ու կարմիր դևերից, որ քեզ ինձ ընծա են ուղարկել:

Դևի երկու գլուխը մնում է:

Տղեն տեսնում է, որ կտրած գլուխները էլ դրեց, սաղացան, ասում է.

— Օ՛, սրան հնար չկա: Սրա հնարն էն աղջիկը կանի:  
Գալիս է, հարցնում է: Աղջիկն ասում է.

— 3 գլուխ մի կողմն է, 3-ը մյուս: Գետը է մեջտեղի գլու-  
խը կտրես, թե չէ, որը կտրես, զուր կանցնի, էլի կկենդանանա:  
Մյուս օրը տղեն նորից կովում է: Միջի գլուխը կտրում:

— Վա՛յ, քո սովորցնողի վիզը կտրի,— ասում է դեր:

Գլուխը մնում է կիսակտրել: Տղեն ուզում է կտրել, վիշա-  
պը խնդրում է, տղան չի լսում, թե՛ ինչ որ ուզես կտամ, թե՛  
ես Հազարան բյուբյուլ եմ ուզում: Թե՛ դե գլուխս մի կտրի,  
ես կբերեմ: Թե՛ մենք մի երգում ունենք՝ հաց ու գինի տեռ  
կենդանի: Այսպես էլ անում են: Գլուխը սաղանում է ու միա-  
սին գալիս են, ընկնում մի ուրիշ աշխարհ: Ասում է.

— Ա՛յ տղա, ես իրավունք չունեմ էս հողը մտնեմ: Կերթա՛,  
մի մարդ կա գլուխն երկինքն է հասնում, ոտները գետնին,  
ննջում է, զլուխը գետնին է հասնում ու բարձրանում:

Դրանից հետո՝ խոտը... Գառն ու ոշխար...

Օխտը դուռը բաց:

Մի աղջիկ կա վերև քարգահ է անում, Հազարան բյու-  
բյուլն առաջին է, վանդակով:

Կվերցնես:

Ձայն կտան... և այլն:

Եթե ետ նայես, քար կկտրես:

Աղջիկը ասում է.— Դռներ, բռնե՛ք: Դռները թե՛ չէ, մենք  
օխտը տարի բաց էինք, զոռով փակեցի:— Ղոչ, բռնի՛ր:— Չէ,  
աստված դրան բարի տա, ես դմակ ուտո՞ղ էի, որ դու առաջս  
էիր գրել:— Ասլան, բռնի՛ր:— Չէ... Եվ այլն:

Գալիս է դեի մոտ: Դեր ճանապարհ է դնում: Գալիս է  
կարմիր ու սիպտակ դեի աղջկերթը վերցնում, բերում:

Գալիս է տեսնում եղբայրները գեռ շեն եկել: Գնում է որո-  
նելու: Մեկը կերակուր եփող, մյուսը մրգածախ:

Ահա Հազարան բյուբյուլն էլ եմ բերել, ձեզ համար էլ մի-  
մի կին:

Գալիս են մի տեղ, որ ճամփորդը պետք է յոթն օրվա շուր  
վերցնի: Ո՞վ ջրհորը մտնի:

Մեծին քաշ են անում: Թե՛ էրվեցի:

Միջնակն էլ՝ նույնը:

Իջեցնում են փոքրին, թե՛ ինչ որ կասեմ, ինձ չլսեք, դուք  
իջեցրեք:

Ջուրը քաշելուց հետո իրան թողնում են հորի մեջ, թե նա  
չպարծենա, որ մենք խորտկարար ու մրգավաճառ էինք, ինքը  
Հազարան բյուբյուլն է բերել:

Հազարան բյուբյուլը բերում են, բայց այգին չի կանա-  
չում: Իմաստունները հավաքվում են, ասում են.

— Հազարան բյուբյուլին տեր էլ կա, մինչև տերը չգա,  
դա ձեն չի ածիլ:

Ասում են.

— Որտե՞ղ է սրա տերը:

Մեկն ասում է.

— Տեսա մի բաղում քարշ արած էր, բերի:

Մյուսն ասում է՝ մի անտառում էր:

\*\*\*

Վաճառականներ են գալիս ջրհորի մոտ, ձայն են լսու՞թ  
հորից: Հանում են: Նա գալիս է հոր քաղաքը: Թե՛ դու մինչև  
հիմա ո՞րտեղ էիր: Թե՛ այսպես, այսպես: Թե՛ դե որ այդպես  
է, գնա տերն էլ բեր, թող նա էլ բեզ կին լինի, թե չէ՛ դու  
սուտ ես ասում, ու այգին էլ շոր կմնա:

Սա նորից գնում է, հասնում սև դեի սահմանը: Սև դեր,  
որ տեսնում է եկավ, սարսափում է:

— Ո՞ւր եկար:

Թե՛ եկել եմ, պետք է գնանք էն աղջիկը բերենք: Թե՛ ես  
իրավունք չունեմ էն սահմանը մտնեմ: Թե՛ բաս ինչպես բե-  
րեմ: Թե՛ էս կողմով շես կարող բերել: Նա որ հրամայի բեզ  
կտոր-կտոր կանեն: Կերթաս, նույն բաները կտեսնես, կփո-  
խես: էն աղջիկն այժմ էլ քարգահ չի անում: Ձեռքերը ծոցին,  
տխուր նստած է: Գնա, բայց էնպես պետք է անես, որ աղ-  
ջիկը ջանլաթ չկանչի:

Գնում է, բարևում են, աղջիկն ասում է.

— Հողածին, դո՞ւ տարար Հազարան բյուբյուլը:

— Այո՛, սիրուն աղջիկ, ես տարա, կուզես ես կրկին բերեմ, առանց էն էլ ես իմ նպատակին չհասա: Թե՛ չէ, գնա, որ էդ պես եկար ինձ մոտ, ես քեզ շեմ սպանիլ: Գիտեմ դու ընչի ես եկել: առանց ինձ իմ բյուրջուլը չի խոսալ, դու եկել ես ինձ տանելու: Բայց դու նրանց հաղթել ես, ես քեզ կառնեմ: Նրանք ամբողջ աշխարհքը ապականել էին, միայն իմ կախարդանքի (սեհր) երկչուղից չէին այստեղ գալիս: Աղջիկն երկու մազ է կրակ տալիս, երկու հրեղեն ձի են հայտնվում, նստում են, գնում, սն դևի պալատի աղջիկն էլ վերցնում, գնում:

Հասնում են այնտեղին:

— Բարև, պապի:

— Աստծու բարին:

— Պապի, մեզ օրհնիր:

— Ա՛յ որդի, աստված օրհնի, ես ինչ օրհնեմ:

Գնում են, հասնում են հոր քաղաքը: Հենց որ Հազարան բյուրջուլի տիրոջ ոտը ընկնում է թագավորի սահմանը, Հազարան բյուրջուլը կարգում է, բազմ իսկույն կանաչում է, և իմանում են, որ տերը գալիս է: Գալիս է: Տեսնում են ի՛նչ սիրուն, ի՛նչ հրեղեն աղջիկ: Նորից բոլորին հարսանիք են անում յոթն օր, յոթ գիշեր:

## 10. ՀԱՋԱՐԱՆ ԲԸԼԲՈՒ

<18> 98 թվին

(Շուկավեր, Արշակ Զորանյան, լսել է Քիֆիզ)

Սերունուն ջիրիդով զարկում են: Անիծում է, թե երբ որ շինայեցիք ալիքներս... և այլն:

Այգին շորանում է:

Թագավորը դարդից հիվանդանում է, որ իմ միակ պարծանքը շորացավ, իմ թագավորության ամենաթանկ զարդը: Թամբ շինողի մոտ...

Խանութը փակելուց հետո առաջը կտրեց, թե՛ օտար եմ, ուստա, այս գիշեր տեղ տուր: Գնացին...

Սարքին ամեն բան սեղան, ճրագ, մեջը ոչ ոք:

— Խոսի՛ր:

— Ի՞նչ խոսեմ, ես թեև աշխարհի ամեն տուտն ու ծայրը տեսած մարդ եմ, բայց այսօրվա տեսածը ինձ դարձացրել է:

— Է՛, գերվիշ բաբա, դու քո ուրիշ տեսածներից խոսա՛, դա իմ գաղտնիքն է, որ ես ամբողջ տարին աշխատում եմ, հենց այն րոպեին, որ ծախելու եմ, մտածում եմ, թե եղած-չեղած ինչ է, ողջ մին է, վերցնում եմ, ջարդում:

— Ասա քո ցավը, գուցե ես մի ճար անեմ:

— Ո՛չ, մի գաճրթնեցնիլ հին հիշատակներս, որ ինձ ստիպում են այսպես անել, խոսիր քո տեսածներից, որ գուցե թե միառժամ մոռանամ:

— Վարպետ, դու ինձ ավելի ես հետաքրքրում: Ասա, թե հնար ունենամ, կօգնեմ, թե չէ ուզում ես, որ լսեմ ու թեկուզ մեռնեմ:

— Իմ գաղտնիքը իմ տնից չպետք է դուրս գա: Ես ուզում եմ երկար ապրել, որ երկար տանջվեմ, այդ է իմ մխիթարությունը, իսկ եթե գաղտնիքս ասեմ, դուք վերջ կգնեք իմ տանջանքին:

— Դու եթե ուզում ես գաղտնիքը քո տանը մնա — ես աշխարհ տեսած-կշտացած մարդ եմ — ինձ համար էլ կյանքն...

— Եթե ուզում եք ինձ լավություն անել, պատմեք ու թեկուզ գլուխս կտրեցեք, միայն թե իմանամ:

— Հա՛, միայն այդ պայմանով կասեմ:

Ես ունեի մի կին, 2 տղա, որոնց այնքան սիրում էի, որքան ոչ ոք երբեք չի սիրել: Կինս էլ նույնպես ինձ: Դու մի ասիլ կինս մի ուխտ է ունեցել: Մի օր թե՛ ա՛յ մարդ, այս գիշեր, որ պառկենք, աջ ծծիս ձեռք շտաս: Մարդս անհամբեղ է: Արի: Տեսնենք մյուս օրը մի որդիս չբացել է:

Երկրորդ գիշերը՝ ձախի մասին ասաց: Նույնը պատահեց: Քնեցի, էլ չգիտեմ ինչպես էր, հրապուրանքի թե արթուն երազների մեջ ինձ կորցրած, ձեռքս դիպել էր: Առավոտը...

Երրորդ անգամ թե՛ մարդ, ինձ խնայիր, շմոտենաս ինձ, թե չէ փորձանքի կգանք:

Ես չկարողացա խոստումս կատարել: Առավոտը վեր կացանք, տեսնեմ կինս չկա:

Նայիր, դերվիշ բարեկամ, տեսնո՞ւմ եք այն լուսնեկի լուսպարտեզը և այն ապարանքը: Պարտեզում մի մարմար ավա-

զան կա: Ամեն առավուտ վշտից ու խեղզուկ օդից դուրս եմ գալիս, տեսնում մարմար ավազանում իմ երեխաները լողանում են: Մոտենում եմ, ուզում եմ գրկեմ, աղավնի են դառնում, չքանում: Տեսար, որ տանս ամեն բան սարքած էր, այդ ամենը կիսն է անում: Ասա հիմի՝ այս վշտի տերը կարո՞ղ է աշխատանքի համար մտածել: Ամբողջ տարին աշխատում եմ այնպես, իբրև սովորություն, հենց ոսկին ստանալու բուսակին մտքումս հարցնում եմ, թե ո՞ւմ համար է, երբ որ նրանք չկան, և ահա այդ դառն բուսակին սրտիս հովությունը գտնում եմ ամբողջ տարվան աշխատանքը ոչնչացնելու մեջ:

— Ո՞հ, վարպետ, հիրավի մեծ է ձեր վիշտը, այնքան ազդեց իմ սրտին, որ սիրտս այրվում է: Մի բաժակ ջուր տուր իմեմ, սիրտս հովանա, հետո գլուխս տուր:

Նա գնում է, գալիս, տեսնում անհայտացած (լուսադեմ է լինում):

Գալիս է մինարեթի տղի մոտ:— Օ՛, դերվիշ բաբա, բարև, բերի՞ր թամբ շինողի գաղտնիքը: Պատմում է— Թե՛ ուրեմն պայմանը պայման է: Պատմում է, երբ որ պրծնում է, թե՛ դերվիշ բաբա, թեև խոստացել եմ, բայց նրա համար, որ հույս չունեի թե կբերես, ուզեցի քաղաքավարի մերժել: Բեր, դու մի հիշեցնի՛ր ինձ իմ անցյալն, եթե պատմեմ, ես կխեղազարվեմ, մեղք արի ինձ:

— Եթե գաղտնիքդ շեմքից դուրս չգա, կպատմե՞ս:

— Այո՛:

— Ես այնքան հետաքրքրվում եմ...— Եվ նույն պայմանը: Սա սկսում է պատմել:

Մեր մեծ բայրամի տոնն էր, մի գեղեցիկ, հրաշալի օր: Բոլորը գուգված, զարդարված, մեջիթի շորս կողմը ծփում են, աղջիկ տեսնելու կարոտ: Ես էլ այն մեջիթի հայտնի երգիչն էի: Ես, ոգևորված տոնի շքեղությունից և այն մտքով, որ ես հափշտակեմ բոլորին, այնպես եմ երգում, որ երկնքի թռչունքը գալիս են, գլխիս պտտվում: Ահա այդ թռչուններից մեծ մեծը երգելու ժամանակ իջավ, ինձ ճանկեց ու բարձրացրեց վերև: Իմ ոգեզմայություն, ինքնամոռացություն մեջ ինձ թվում է, թե հրեշտակներն ինձ տանում են դրախտը: Տարավ, ինձ մի անմահական բաղի մեջ վեր դրեց, ինքը անհայտացավ:

Նայում եմ շուրջս, շորս կողմս օրորվում, բուրում են աթառամ ծաղիկները, ու խնկենու թփերը, դրախտի թռչունները օրհնանքներ, երգեր են ծլվում ջինջ օդում մանուկների զվարթ, ծիծաղի նման:

Ես ապշած եմ մնացել, հիացած ու սարսափը...

Մի փոքր առաջ գնացի: Հանկարծ դիմացս դուրս է գալիս մի հուրի հրեղեն աղջիկ, մազերը թիկունքին զեփյուռի հետ ծփում են, թափանցիկ մարմինը սքողված է թեթև մշուշի մեջ, կուրծքը կիսաբաց, կոները հուրանի, աչքերը շանթում էին— որ նայեցի, չկարողացա դիմանալ, գլուխս պտտվեց, աչքերս ներքև գցեցի: Մոտեցավ ինձ, թե՛ է՛յ, հողեղեն, երկնքի թռչունները չեն անցնում այս կողմերով, դու ի՞նչ սրտով ես մտել այստեղ և շփոթում ես մեր անմեղ սրտերը: Նստիր գետնին, գլուխս պետք է դնեմ ծնկանդ ու քնեմ, բայց վա՛յ քեզ, եթե ինձ համբուրես: Ակամա ծնկներս ծալվեցին, և ես նստեցի, և այդ շքնաղ արարածը փափուկ խոտի վրա մեկնեց իր քնքուշ մարմինը ու քնեց: Մազերը փովեցան երեսին, և մազերի արանքից երևում էին այտերը: Դե քեզ եմ հարցնում, դարվիշ բաբա, ջահել սիրտ, հուրի՛ քնած ծնկներիս վրա, ի՞նչ կլինի: Նայեցի-նայեցի, էլ չկարողացա դիմանալ: Գլուխս իրան-իրան խոնարհվեց, և ես համբուրեցի: Իսկույն զարթնեց աղջիկը և ափսոսալով կանչեց.— է՛յ, հողեղեն, հողեղենին չի կարելի հավատալ, դու ինձանից գողացար մի համբույր, բայց շատ բան կորցրիր.— Ասաց և շքացավ:

Նա անհայտացավ, ես մնացի, բայց որքան ապշեցի, որքան փոշմանեցի: Մտքամուրր առաջ եմ գնում ու մտածում, թե ինչ եմ ես և ուր գնամ: Կրկին մի քանի քայլ, և ահա երևցավ մի ուրիշը, ավելի շքեղ, ավելի շքնաղ: Նա մոտեցավ, նայեց ինձ վրա: Ես աչքերս ներքև գցեցի: Ասաց.— Ո՞վ դու հողեղեն, դու ի՞նչ սիրտ ունես, որ այստեղ ես մտել: Եթե քեզ աստված է ուղարկել, նստիր, որ ննչեմ քո գոգում, բայց չհամբուրես, թե չէ կզրկվես շատ բանից: Իմ ծնկներս ծալվեցին... Նույն կերպ: Նստում եմ և նրա շնաշխարհիկ կուրծքը հանդարտ ելնում էր և իջնում, իսկ անթարթ աչքերի թերթերունքը կարծես բերփում է օդը: Ես ինձ մոռացա, ինձ թվաց, թե այն դեմքն էր մոտենում ինձ— և ես միայն համբույրն

զգացի: Զարթնեց և ասաց նույնը ու անհայտացավ: Սիրտս պայթում է սրտանեղութունից, ես՝ մոլորված-փոշման: Այն ժամանակ հանկարծ մի ձայն ինձ սթափեցրեց.— Ո՛վ դու հողեղեն, ինչ ունես այնտեղ, անմահների բնակավայրում: Ես հավաքելով բոլոր ուժս, լեզվիս կապանքը բացեցի և ասացի.— Ո՛վ գերբնական ոգի, ասա տեսնեմ, ո՛ւր եմ ես և ո՛վ եք դուք, որ տանջում եք ինձ:— Դու այնտեղ ես, որտեղ ոչ մի հողեղեն ոտք չի դիպել, բայց եթե մի պատահմունքով ընկել ես այստեղ, թող ծնկանդ ննջեմ: Միայն լսիր՝ հրապուրանքից չհաղթվես և չհամբուրես ինձ, թե չէ շատ բան կկորցնես, կզոչաս: Եվ այս երրորդն ավելի շքնաղ էր, քան նախորդները, որ երկու փորձից հետո դարձյալ ես ինձ մոռացա... նույնը կրկնվում է:

Նա էլ անհայտացավ, գնաց իմ աչքից, և ես մտածում եմ, թե մի համբույրով որքան բան կորցրի և ես մնացի ապուշ: Օրն արդեն տարածամ էր, թեև այդ ըրպենները երանություն էին ինձ համար, բայց մի գաղտնի երկյուղ ազդում էր ինձ վրա: Առաջ եմ գնում. շքեղ տեսարաններ, ջրվեժներ, ավազաններ, ծաղկեկուտներ և շափյուղայից շինած պալատներ: Սիրտ արի, ներս մտա, և ոչ ոք չկա: Կանչում եմ, պատասխան չկա: Փոշման-գլխակոր ետ դարձա եկած ճամփով և վախ շզգալով դուրս եկա այգուց, հեռացա այնտեղից—այնտեղ թողնելով ուշքս, միտքս և հոգիս: Թե ինչպես գտա ես իմ քաղաքը, այդ էլ չեմ հիշում: Այն օրից սկսած ես ուրախ-ուրախ մեջիթնեմ դիմում, բարձրանում-երգում ավելի ոգևորված, ավելի հափշտակված ու հրապուրիչ ձայնով և իմ ձայնիս ելևէջները նվիրում եմ նրանց, բայց, ավա՜ղ, էլ չի գալիս այն թռչունը, որ ինձ կրկին տաներ անմահական այգին, այն հուրինեոթ մոտ, և ես իջնում եմ հուսահատ ու խելագարված: Գե՛, ասա խնդրեմ, դերվիշ բաբա, մի երիտասարդ սիրտ այդպիսի հանդիպումներից և կորցնելուց հետո, մի՞թե կմնա յուր բնական դրուժյան մեջ: Եվ այսուհետև ինձ ոչ մի աշխատանք, ոչ մի գործ չի գրավում, միայն երգել և երգել, որ գուցե մի օր իմ ձայնս հասնի առ աստված և կրկին ուղարկի ինձ այն թռչունը, որ կրկին ինձ տանի նրանց մոտ:

— Ո՛հ, այդ հասակում այդ վշտի տակ ծանր է հիբավի:

— Թեև ծանր է ինձ, ո՛վ դերվիշ, բայց պետք է պայմանը կատարեմ, որովհետև գաղտնիքս հայտնվելով չեմ կարող հուսալ իմ սպասածին\*:

Ուզում է գլուխը կտրի, թե՛ մի կաթիլ ջուր տուր, որ սիրտս հովանա, որովհետև վառեցիր քո կորուստով: Նա գնաց ջրի, դերվիշը կորավ:

Գնաց Սանամ թագավորի մոտ:

Սանամ թագավորն ուրախացավ և առաջարկեց.

— Խոսի՛ր, դերվիշ բաբա:

Սա պատմեց տղայի գաղտնիքը: Բացի դրանից և թամբ շինողինը: Այս երկու վշտերը վայրկենական հովուժյուն բերին Սանամի սրտին, որ միայն ինքը չի վշտի տեր, իր նման ուրիշներն էլ կան:

— Մխիթարական են քո բերած գաղտնիքները, դերվիշ բաբա, հիմի իմանում եմ, որ ես վշտակիցներ ունեմ, բայց իմ գաղտնիքը իմ պալատից դուրս չպետք է գա, որով նա ոչ միայն ինձ, այլև ամբողջ տերութունը կտար: Իմ գաղտնիքից հետո ես էլ չեմ կարող թագավոր լինել:

— Տե՛ր, ես քո գաղտնիքն իմանալու այնքան բուռն ցանկություն ունեմ, որ այս ասազին ճանապարհորդությունը և դժվարությունները ես ոչինչ եմ համարում, միայն եթե հարկավոր է գաղտնիքն այդ, ավելի լավ է մի մարդ փշանա, քան մի թագավոր ու տերությունը— գլուխս կտրի:

— Ես Սինամ մեծ թագավորն եմ, անհուն գանձերի, մեծ կարողության տեր: Ոչ մի բան պակաս չէր աստծու բարիքներից: Բախտի գազաթին էի: Ես ունեի մի կին՝ թագուհին, գեղեցիկ... և այլն, որին սրտիս և հոգուս բոլոր վորությունք նվիրված էի: Նրա ամենաշնչին հաճույքին պատրաստ անձս զոհեի: Եվ ես բախտավոր էի: Մի գիշեր զարթնեցա, տեսնեմ կնոջս մարմինը սառն էր: Առաջին անգամից ոչ մի կասկած չտարա և ծածկեցի վերմակով: Մի ուրիշ գիշեր զարթնեցի, շոշափեցի և տեսա դարձյալ սառն էր: Հարց ծագեց իմ մեջ՝ պալատը ցուրտ չի, մարմնի խոնավ սառնությունը ո՞րտեղից պետք է լինի: Եվ այդ հարցը իմ քունը կտրեց: Գիշերվա մի

\* Վերջին հուրին դրախտում պատվիրում է, որ ավելի մեծ փորձանքից ազատ մնալու համար զոհե գաղտնիք պահիր այս տեսակցությունը:



Ժամանակին ննջարանիս մեջ մի շփոթուն լսեցի: Աշքերս վեր-  
մակի տակից նայեցի, տեսա թագուհին հագնվում էր: Այստեղ  
կասկածս գորացավ, և ես դարան: Մտա: Հագնվեցավ, վերց-  
րեց իմ սուրը (?): Սուրը մերկացրեց (?), մոտեցավ մահճիս  
և կորանալով ականջ դրեց շնչառությանս:— Քնած է,— շըն-  
ջաց և դուրս եկավ:

Եվ թագուհին այդպես ամեն գիշեր դուրս էր գնում: Ձայն  
էր տալիս ձիապանին, որին միայն հայտնի էր այդ գաղտնի-  
քը, և յուրաքանչյուր գիշեր ձիու քրեհ ստանում էր թագուհուց  
մի համբույր: Ձի նստեց, գնաց: Մի գիշեր դրա ետևից ես  
հագնվեցի, ցած իջա, ձիապանի լույսը դեռ վառ էր, ձայն տվի  
ձիապանին, նա դողդողալով առաջ եկավ: Ես ասացի.— Շուտ  
մի ձի բեր և եթե ուզում ես բարձր պատվով ապրել, տեսածդ  
գաղտնիք պահիր մինչև առավոտ: Ես ձին քշեցի, հետևեցի թա-  
գուհու սովերին: Հենց որ մոտեցավ անտառաբերնին, ձիուց  
իջավ, ես էլ հասվեհաս իջա քիչ հեռու: Գետնի երեսից մի  
դուռը բացվեց, և սա ներս մտավ: Ես մթնում կանգնած նա-  
յում եմ ներսը, որ լուսավորված էր, և ինչ եմ տեսնում՝ յոթն  
այլանդակ հարամիներ նստած ուրախություն են անում և  
խմում մի տակառից, որ դրած էր դռան մոտ: Հանկարծ այս  
հարամիներից մեկը վեր կացավ տեղից և մի ապտակ զարկե-  
լով թագուհուն ասաց.— Անզգամ, ինչո՞ւ մեզ այսքան սպա-  
սել տվիր, գիշերն անցնում է, և մեր քեֆն առանց քեզ է լինում:  
Թագուհին պատասխանեց.— Միրելի՛ք, ներեցեք, թագավորն  
այս գիշեր ուշ քնեց, և ես շուտ չկարացի գալ: Իմ հանցանքի  
համար ահա ձեզ իմ համբույրը և շարունակեցեք խրախճանր:  
Վայրենի հարամիները և համբուրում էին և լափում, ապա  
նստեցին նորից քեֆի, իսկ նրանց տաք ժամանակ, ես մտա  
և տակառի ետև թաք կացա և հետս վերցրած թուլնը թափեցի  
տակառի մեջ: Խմեցին դեղած գինին, և նրանց անճոռնի մար-  
մինները այս ու այն կողմ թափվեցին գետնին: Թագուհին  
դրանց այդ դրությունը տեսնելով, դուրս եկավ, հեռացավ, իսկ  
ես շտապով նրանց քիթ ու պոունգները կտրելով դուրս եկա,  
ձի նստեցի և թագուհուց առաջ պալատը հասա: Հասա պալա-  
տը: Լուսանում էր: Թագուհին եկավ դողդողալով ու գունատ,  
վերև բարձրացավ:— Բա՛ց, թագավոր, դուռը,— ձայն տվեց

նա: Իսկ ես ասացի.— Լռի՛ր, անզգամ, դու այդտեղ կանգնիր  
մինչև լուս, որ առավոտը ժողովուրդը տեսնի իրանց թագու-  
հուն: Թագուհին սկսեց խնդրել.— Ներիր... Եվ այլն: Ե. նրան  
ներս թողի, հիշելով նախկին սերը:— Թագուհի,— ասացի,—  
ես որ բոլոր հողեղեններից ավելի քեզ եմ սիրել, և դու իմ  
սերը, քո թագավորիդ մեծությունը մոռացած սրա՞նց ես սի-  
րում,— ասացի և ականջները թափեցի առաջը: Թագուհին, որ  
տեսավ իր սիրելիների պոռններն ու քիթը կտրած, գևի նման  
հարձակվեց կախարդական մտրակի վրա, ինձ դարկեց, թե՛  
էլ դարձիր: Դարձա էլ:

Իհարկե, այս բանը գաղտնիք էր ամենքին: Թագուհին առա-  
վոտը կանչեց պալատականներին և բարկացավ, թե՛ այս ինչ-  
պե՞ս եք հսկում, որ էլը պալատն է մտել: Տարեք, բանտի հա-  
մար քար կրեցեք... Եվ այլն: Տարան և տանջում էին ինձ:  
Բանթողի ժամանակ ես դիպող վայրկյան գտնելով փախս  
այդտեղից և մի ճամփա բռնած գնացի հասա մի գյուղի, մի  
տուն, ուր ապրում էր մի իմաստուն պառավ: Ես գնացի այդ  
տան դուռը թխկացրի, մի երեխա դուրս եկավ ու լուր տարավ.  
Թե՛ հայրիկ, մի էլ է դուռը թխկացնում գլխով: Հայրը եկավ,  
ինձ ներս քաշեց, իսկ պառավը իր իմաստուն աչքերով ինձ էր  
նայում: Ես հայացքներով ու զանազան շարժումներով ուզում  
էի նրան հասկացնեմ, որ ինձ օգնեն: Պառավը ինձ մոտենա-  
լով, ծնկանը զարկեց ու կանչեց.— Վա՛յ մեզ, որդի՛, սա մեր  
թագավորն է (սրանք ունենում են մի անմահական ջրի բաղ-  
նիք): Շուտ տարեք այնտեղ և ջուր սրսկեցեք: Տարան, ջուր  
սրսկեցին: Ես մարդ դառա, փշերտտիկ բերին պառավի մոտ:  
Պառավն ասաց.— Ո՞վ մեր և մեր աշխարհի տեր, դեռ քո կնոջ  
ձեռքից շատ փորձանքի կգաս: Աշխատիր հասնել պալատը և  
մի կերպ ներս մտնել: Ձեռքդ առ մահվան դամշին և առանց  
խնայելու խփիր ու ասա.

Ով անհավատարիմ  
Դու ջրի դառնաս,  
Եվ այդ կերպի մեջ  
Հավիտյան մնաս:  
Եվ այդ օրվանից  
Մահվան մտրակի  
Ուժը կկորչի:

Վերագործած ծայտայլ շորերով և հաստ պալատը գիշերով  
ժամին: Հենց ուզում էի պատուհան բանալ, ներս մտնել,  
անհրաժեշտ կինս զարթնեց, մտրակով զարկեց, թե՛ շուն կտրես:  
Ես շուն դարձա կրկին: Կանչեց պալատականներին թե՛ ան-  
պիտաններ, ինչպե՞ս եք հսկում, որ շունը ներս է մտել պա-  
լատ:

Եվ վրա հասան, որը քարով, որը փայտով ծեծելով դուրս  
արին պալատից: Եվ ես կրկին բռնեցի իմաստուն պառավի  
մոտ տանող ճամփան\*:

Կրկին վերափոխում է պառավը և կրկին խիստ պատվերով  
ես զրկում, թե՛ լսի՛ր, ես ճանաչում եմ, որ քո սիրտը բարի ու  
թույլ է, չի՛նի թե նրա հայացքից ու աղաչանքից խղճաւ, այն  
ժամանակ քեզ ավելի մեծ փորձանք է սպասում:

Այս անգամ ես ներս մտա: Եվ հենց ձեռքս առա մտրակը,  
թագուհին զարթնեց, բայց արդեն ուշ էր: Խփեցի մտրակով ու  
ասացի.

Ով անզգամ,

Ջորի դառնաս

Եվ հավիտյան

Ջորի մնաս:

Եվ ահա թագուհին անլեզու ջորի է: Մի ամբողջ ժամի շփ  
ես ապուշ կտրած նայում էի իմ ստեղծածին և իմ սրտի մեջ  
վայրկենական կերպով բռնկեց հին սերը, խղճացի, մտածեցի՝  
զուցե նա միշտ էր ասում, զղջաղել է: Իմ աչքի առջև եկավ,  
- 584 ա Փոխում է պարտեզ, վարդին հարևան:  
բ Տանում է պարտեզ, վարդին հարևան:
- 613 Իրեն [շրպարտում], թռչում սրբնթաց,
- 680 Տկարությանը վաստակած մարմնիս...
- 692—693 «Մնաս բարյավ, ձեռքդ տուր ինձ.  
[Տեսնո՞ւմ ես] իմն ոնց է այրվում...
- 696—698 Բայց էլ արդեն սնունդ չըկա,  
Իր բանտը ողջ լափել է նա.  
Նորա մոտ է դառնում կըրկին,
- 699 ա Այսպես կարգով, որ ամենքին  
բ Այսպես հերթով, որ ամենքին
- 701 Բայց ի՞նչ [եմ անում], թեկուզ դրախտում,
- 702 ա [Ամպերից] դեն այն աշխարքում  
բ Այն աշխարհում, ամպերից վեր
- 703 Հոգին իրան հանդիստ գտնեի
- 721 Գուցե թե <և> զով զեփյուռների հետ
- 732 էլ շեմ գանգատվիլ իմ բախտի ընդդեմ...»:

**ԲԹ բնագրային տարբերությունները**

- 33 Եվ գեթ մանկական իրեն շրթունքից
- 38 Հիվանդին խնամեց, տվավ ապաստան.
- 63 Թռչնում էր, ընկնում օր օրի վըրա:
- 70 Շընորհակալ եմ, հայրի՛կ, որ եկար
- 73 Ես թեթևացնեի խոսքով մեկի մոտ:
- 82 Կս միայն մի մըտքի ուժ եմ իմացել.

**91—95 տողեր կրճատված են:**

- 215 Եվ կյանքըս առանց այն լավ օրերի
- 267 Եվ ահա վերև—աղջամուղջ օդում
- 279 Բայց շարը միայն իջավ նրանով
- 281 Կորավ ստորին այն մութ վըհի մեջ:
- 290 Լիքը ողկույզները, և մերթ նրանց մոտ
- 308 Ճախրը սուր աչքը բռնել կարող էր.
- 396 Կարծես թե իրեն որսը լինեի այն:
- 397 Լուռ էր ու խա՛վ՛որ աշխարքը համայն.
- 401 Հեղեղատը խուլ ճըղփում ափերում:
- 435 Եվ եթե հանկարծ կարճատև մի ճիգ
- 510 Կանգնած հանդիպեց նա իր օրհասին,
- 552 Ե՛ք, ճանաչեցի իսկույն ես նրան.
- 584 Փոխում է պարտեզ, վարդին հարևան:
- 586 Կյանքի քաղցրություն շնչում է այնտեղ...

ԲԹ-ի ստորև բերվող տողերը (ըստ վերջնական բնագրի համարակալման) համընկնում են 1896 թ. առանձին հրատարակության հետ. 42, 48, 62, 66, 72, 101, 106, 109, 123, 153, 179, 258, 264, 274, 278, 292—293, 322, 356, 385, 391, 402, 465, 508—509, 551, 565, 632, 634, 647, 675, 677, 693, 702, 705, 710, 713, 717, 725—726:

Այս հրատարակության և շաղկապների մի մասը նույնպես վերջնական բնագրի մեջ փոխարինվել է ու-ով:



<1>

Մի քանի տարի սրանից առաջ  
 Այնտեղ, ուր աղմուկ, շառաչ հանելով—  
 Քուռն ու Արագվան գալիս միանում,  
 Գրբկվում են երկու քույրերի նրման,  
 5 Կար մի մենաստան: Այժմ էլ տակավին  
 Երևում են դեռ սարի ուսերից  
 Ժամի կամարը ու բուրգերը հին:  
 Բայց չի վերանում էլ այնտեղ հիմի  
 Բուրվառի խրնկի ծուխն անուշահոտ,  
 10 Ոչ աղոթարար արեղանների  
 Երգերն են լրսվում ուշ երեկոյին:  
 Այժմ միայնակ զառամ ծերունին,  
 Կիսամեռ պահնորդ ավերակ [վանքի],  
 Մարդկանց ու մահի մըտիցը ընկած,  
 15 Սրբբում է փոշին հին շիրիմների,  
 Որոնց գրբերը պատմում են անխոս  
 Անցած փառքերից և կամ նրանից,  
 Թե ինչպես ճընշված իր թագի տակին,  
 Այսինչ թագավորն այս ժամանակին  
 20 Իր ժողովուրդը հանձնեց բռուսին:

2

Մի ռուս գեներալ Կովկաս [ի] լեռներից  
 Մի անգամ դեպի Թիֆլիզ էր իջնում:  
 Իր հետ բերում էր մի գերի մահուկ:

2 Այնտեղ, ուր շառ<աչ>, աղմուկով  
 6 Երևում են դեռ սարերի ուսից  
 13 ա Կիսամեռ պահնորդ ավերակ [վայրի],  
 բ Կիսամեռ պահնորդ [ավերակների],  
 17—18 Անցած դարերից, անցած փառքերից,  
 Կամ ինչպես ճընշված իր թագի տակին,  
 23 Իր հետ մի գերի մահուկ էր բերում:

Սու տկարացավ, շրկարաց տանի  
 25 [Նեղութունները] հեռավոր ճամփի:

Դուրս կանչեց իրեն հզոր հայրերի  
 Աննրկուն հոգին: Անձայն, անտրտունը  
 Տառապում էր նա: Նույնիսկ մի թառանը  
 Զէր հանում իրեն գունատ շրթունքից:

27 Աննրկուն հոգին: Անձայն, անտրտունը  
 28 ա Տառապում էր նա: Եվ ոչ մի մտունը  
 բ Տառապում էր նա: Եվ ոչ մի տրտունը  
 29 ա Զէր հանում իրեն գալուկ շրթունքից:  
 բ Զէր հանում գունատ շրթունքներից:

Թարգմանության սևագիր հատվածներ

Մի քանի տարի սրանից առաջ,  
 Այնտեղ, ուր գալի զվարթ աղմուկով  
 Քուռն ու Արագվան խառնրվում իրար,  
 Գրբկվում են երկու քույրերի նման,  
 5 Կար մի մենաստան:

Այնտեղ, ուր զվարթ աղմուկ հանելով,  
 Քուռն ու Արագվան գալիս միանում,

Այժմ էլ տակավին

Անցորդը սարի ուսից կըտեսնի

10 <1 անընթ.> դեռ սարերի ուսից  
 Հին դարպասների սյունները կանգուն  
 Քանդած դարպասի < . . . >  
 Վանքի կամարը ու բուրգերը հին.

2 ա Այնտեղ, ուր գալի շառաչ աղմուկով,  
 բ Այնտեղ, ուր անուշ աղմուկ հանելով,  
 3 Քուռն ու Արագվան գալիս միանում,  
 6 Այնտեղ, ուր անվերջ աղմուկ հանելով,  
 11 Հին կամարների սյունները կանգուն

ՀԱՅԱՎԱԹԻ ԵՐԳԸ

(էջ 155)

Բնագրային տարբերությունները

Արոր, ԲԲ

- 57 Ձմրան—սիպտակ ափերի մեջ:
- 58 Ու ապրում էր երգիչն այնտեղ,
- 61 Այնտեղ երգեց նա էս երգը,
- 148 Ապա սիպտակ ամպի նրման
- 187 Այնտեղ, դաշտում, նրանք կանգնած

Արոր

- 234 Եթե լսեք նրա ձայնին,
- 266 Իրենց զենքերն ուղմական:
- 270 Իր անօգնական զավակներին:
- 273 Ու հըղկեցին, ու շինեցին
- 281 Սուզվեց երկնի բաց դռներով,

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԻԼԻՆԱՆԵՐԻՑ

ՍՎՅԱՏԱԳՈՐԸ

(էջ 165)

Լ V, 1917

- 31 Առաջ է շարժվում ճամփորդ ատղահան
- 35 Ու գոռաց այսպես Սվյատագորը մեծ.

61 տողը չկա:

62 Դեմ տվավ ապա կուրծքը իր ճերմակ,

ՄՈՒՐՈՄՅԻ ԻԼԻԱՆ ԿՌՎՈՒՄ Է ՎԼԱԴԻՄԻՐ ԻԾՆԱՆԻ ՀԵՑ

(էջ 168)

ԳԳԺ, ԲԲ և ԳԳ բնագրային տարբերությունները

- 36 Սեղանի ծայրին, բազմոցի վերջին.
- 39— 40 Տարան Իլիային ծայրը ներքևի,  
նրստեցրին էնտեղ՝ ներքևի ծայրին:
- 66 Շպրտեցեք զո՛ւրս—սըրահից փողոց:
- 99 —Վա՛յ, կամա՛ց, տըղերք, ժած շրգաք տեղից,
- 108 Սըլացի՛, իմ նետ, տանիքը ոսկի,
- 153—154 Միտք արե՛ք, տըղերք, միտք արեք մի լավ,  
Միտք արե՛ք, տըղերք, խորը միտք արեք,

- 170—172 Երկիրը պագի, խոնարհ ողջունի,  
 Խոնարհի մինչև հատակն աղյուսի,  
 Խոնարհի մինչև էն գետինը ցած
- 178, 211 Նըստեցրել է ցած, ներքևի ծայրին:
- 275 —Ո՛վ դու ծերունի, Իլիա Մուրոմցի,  
 332 Որոտաց ուժգին իր հընչուն ձայնով.  
 352 էն լայն ու աղատ տարածության մեջ.

ՍԵՐԲԱԿԱՆ ՎԻՊԵՐԳ

ԹԵ ԻՆՁ ՈՒՂԱՐԿԵՑ ԹՈՒՐԿԻ ՍՈՒԼԹԱՆԸ ՄՈՍԿՈՎԻ  
 ՑԱՐԻ ԸՆԾԱՆԵՐԻ ՓՈՍԱՐԵՆ

(էջ 179)

Հր ուղղում

20 Հնկավ սուլթանը մտք<եր>ի ծով<ը>:

ՄԱՐԿՈՆ ՌԱՄԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ Է ԽՄՈՒՄ

(էջ 184)

Հր

- 60 Հագել ես վերևից կանաչ դուլամա,  
 84 Իմ գուրզն էնդուր եմ բերել ես ինձ հետ,  
 86 Քանզի վախում եմ կռիվ պատահի:  
 87 Ու՛ եթե կռիվ պատահի հանկարծ՝

88, 90 և 92 տողերում «Մարկոյին» հոլովածևի փոխարեն  
 Հր-ում եղել է «Մարկոյից»:

ՄԱՐԿՈՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՊՍԱԿԻ ՀԱՐԿԸ

(էջ 188)

Հր

- 45 Նոր պըսակված հարսին ու փեսին  
 149 Բայց, տե՛ս, դըռնիցը մտտիկ ման արի,

Ա ինֆնագրի ասրբերակները

- 5— 6 — Որդի ջան, ասավ, արի ինձ լըսիր  
էդ քո արյունոտ արկածներն եկ թող—
- 9 Արնոտ շապիկըդ շատ լըվանալուց:
- 15 Գութանը լըծեց, զընաց վար անի,
- 25 Հերսը որ ելավ երկար վիճելուց,
- 28 Երեք ձիաբեռ գանձերը առավ,

6 Արի, քո արնոտ < . . . >

Բ ինքնագիր

- [Իր պառավ մոր հետ միասին նըստած  
Գինի էր խըմում Մարկոն քաջազուն]:  
Երբոր բավական գինի խըմեցին,  
Մեծ մերն ըսկըսեց որդուն խըրատել:  
— [Այ] իմ [քաջ] որդի, քաջազուն Մարկո,  
Ձեռ քաշի արի կովից, արյունից,  
Չար բանից, որդի, բարի չի ծնիլ:  
Հոգնել եմ ես էլ պառավ տեղովըս  
Արնոտ շապիկըդ շատ լվանալուց:
- 10 Առ մեր գութանը, մեր եզները առ,  
Գրնա սար ու դաշտ վարի գութանով,

- 4 Մերը ըսկըսեց որդուն խըրատել:
- 6 ա [Արի քո արնոտ կոիվները թող]—  
բ Ձեռ քաշի արի էդ կոիվներից,  
գ Ձեռ քաշի արի սըրից, արյունից,
- 7— 8 Չար բանից, որդի, լավ բան չի ծնիլ:  
Ես էլ հոգնել եմ էս պառավ տեղով

- Ըսպիտակ ցորեն ցանի քեզ համար,  
Երկուսով ուտենք ու հանգիստ ապրենք:  
Ու լըսեց Մարկոն իր մորը պառավ.  
Գութանը լըծեց, զընաց վար անի—  
Բայց զընաց վարեց ոչ թե սար ու դաշտ,  
Վարեց մեծ ճամփեն թաղավորական:  
Երեք ձի բեռնած արծաթ ու ոսկի  
Յանիչարները էն ճամփով եկան,  
20 Եկան գոռացին Մարկոյի վրա.  
— էհե՛յ, ա՛յ Մարկո, ճամփեն մի՛ վարի,  
— էհե՛յ, ա՛յ թուրքեր, վարըս մի՛ ոտքեք,  
— էհե՛յ, ա՛յ Մարկո, մի՛ վարի ճամփեն,  
— էհե՛յ, ա՛յ թուրքեր, մի՛ ոտքեք վարըս:  
Հերսը որ եկավ երկար վիճելուց  
Գութան ու եզներ առավ միասին  
Չարկեց տեղն ու տեղ ջարդեց թուրքերին:  
Երեք բեռ ոսկի-արծաթը առավ  
Բերեց ու տըվեց իր մորը պառավ.  
30 — Մերիկ ջան, ասավ, ոնց որ դու ասիր.  
Վար արի էսօր, էսքան դատեցի:

- 12—14 Ըսպիտակ ցորեն ցանի ու հնձի,  
Ես ու դու ուտենք ու հանգիստ ապրենք:  
Ու լըսեց Մարկոն իր մորը [ծերունի].
- 17 Այլ էն մեծ ճամփեն թաղավորական:  
25 ա Չահլեն որ զընաց երկար վիճելուց,  
բ Ջիգրը որ եկավ երկար վիճելուց,
- 28—30 էն ոսկի-արծաթ բեռնած երեք ձին քըշեց,  
Քըշեց ու բերեց իր մորը պառավ:  
— նանի ջան, առավ, ոնց որ դու ասիր՝
- 31 ա — Վար արի էսքան, դատեցի էսօր:  
բ — Վար արի, նանի, էսքան դատեցի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Երկերի լիակատար ժողովածուի ներկա 4-րդ հատորով շարունակվում և ավարտվում է Հովհ. Թումանյանի պոեմների գիտական հրատարակությունը: Բացի ինքնուրույն շորս պոեմներից («Սասունցի Դավիթը», «Թլուկաբերդի առումը», «Հին կոիվը», «Հազարան բլլբուլ») հատորն ընդգրկում է նաև Թումանյանի թարգմանած պոեմներն ու վիպերգերը, որոնց շարքում կան այնպիսի դասական երկեր, ինչպես Բայրոնի «Շիրիոնի կալանավորը», Լերմոնտովի «Մծիրին», ռուսական և սերբական ժողովրդական վիպասքերը, պատմողական պոեղիայի մի շարք ուրիշ նմուշներ: Իբրև հավելված, հատորի վերջում զետեղված է Շոթա Ռուսթավելու «Ընծենավորից» մի հատված (որի հայերեն թարգմանությունը Թումանյանը Լենինգրդից դուրս մնացած երեք բանաստեղծություն):

Պոեմների հրատարակման բնագրագիտական սկզբունքներն ու ժամանակագրության հարցերը բացատրված են նախորդ՝ 3-րդ հատորի ներածական հեղվածում և ծանոթագրություններում: Այստեղ անհրաժեշտ է ավելացնել, որ, բացի ինքնուրույն և թարգմանական պոեմների բնագրային տարրերակներից, սույն հատորում, հատկապես «Սասունցի Դավիթը» և «Հազարան բլլբուլ» պոեմների կապակցությամբ, հրատարակվում են նաև բազմաթիվ նախաստորաստական և օժանդակ նյութեր, ստեղծագործական ծրագրեր և գրառումներ: Այդ պատճառով էլ համապատասխան բաժինը այս (ինչպես նաև հաջորդ՝ 5-րդ) հատորում վերնագրված է՝ «Տարբերակներ և նյութեր»:

Հատորի ծանոթագրություններում օգտագործվել են հետևյալ համառոտագրությունները.

ԲՄ I — Բանաստեղծություններ, հ. I, Մոսկվա, 1890

ԲՄ II — Բանաստեղծություններ, հ. II, Մոսկվա, 1892

ԲԹ — Բանաստեղծություններ, Քիֆլիս, 1903

ԲԲ — Բանաստեղծություններ, Բաքու, 1908

ԲՊ — Բանաստեղծություններ, Կ. Պոլիս, 1922

ՀՀ — Հայրենիքիս հետ, Քիֆլիս, 1916

ԳԵ — Գեղարվեստական երկեր, Երևան, 1934

ԵԺ I—VI — Երկերի ժողովածու վեց հատորով (գիտական հրատարակություն), Երևան, 1940—1959

ՈՒՆ 1—4— Քումանյան. Ուսումնասիրություններ և հրատարակումներ (լույս է տեսել շորս հատոր, հրատարակությունը շարունակվում է), Երևան, 1964—1985

ՔԺԷ— Քումանյանը ժամանակակիցների հուշերում. տեքստը պատասխան է ծանոթացրեց ի. Մ. Կարապետյան, Երևան, 1969

ԶԿ— Հայ գրողներ (քրեստոմատիա), Ա. Ռուսահայ գրողներ, կազմեցին Ղ. Աղայան, Ավ. Ահարոնյան, Հովհ. Քումանյան, Վրթ. Փափազյան, Թիֆլիս, 1909 (1-ին տպ.) 1914 (2-րդ տպ.)

ԳԳ— Սուրխաթյան, Գրական գոհարներ (քրեստոմատիա), Թիֆլիս, 1922

ԳԳԺ— Գրական-գիտական ժողովածու, խմբ. Ե. Քոփուլյան, Թիֆլիս, 1908

ԳԹ— Գրական թերթ

ԼՎ— Լուսաբեր (ղասագիրք), 5-րդ տարի, 3-րդ տպ., Թիֆլիս, 1917

Հսկ— Հասկեր, մանկական ամսագիր, Թիֆլիս

Հր— Հորիզոն, օրաթերթ, Թիֆլիս

ՄՃ— Մուրճ, ամսագիր, Թիֆլիս

ՆՂ— Նոր հոսանք. ամսագիր, Թիֆլիս

Վտ— Վտակ, օրաթերթ, Թիֆլիս

Տգ— Տարազ, շաբաթաթերթ, Թիֆլիս

ԳԱԹ— Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան

ԹՖ— Քումանյանի ֆոնդ ԳԱԹ-ում

ԹԹ— Քումանյանի թանգարան

Խմբ.— Խմբագրական կուլեգիա

Ն. Քումանյան— նվարդ Քումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969 (գրքի 2-րդ հրատարակությունը՝ Երևան, 1987)

Ա. Իճևիկյան— Արամ Ինճիկյան, Հովհաննես Քումանյան. Կյանքի և ստեղծագործության պատմությունը (1869—1899), Երևան, 1969

Քաղմանական պոեմների բնագրերի պատրաստմանը, նախնական փուլում, մասնակցել է Ս. Ա. Կոստանյանը:

## ՊՈՆՄՆԵՐ

### ՄԱՍՈՒՆՑԻ ՂԱՎԻԹԸ

(էջ 7, 223)

Առաջին անգամ՝ ՄՃ, 1903, № 2, էջ 118—124, № 3, էջ 92—103, № 4, էջ 123—131, № 5, էջ 5—13: Հրատարակման շորրորդ մասի սկզբում (ՄՃ, 1903, № 5, էջ 5) տրված է հետևյալ ծանոթագրությունը.

«Այս պոեմը կազմելիս օգտվել եմ հետևյալ վարիանտներից.

1. Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Սրվանձությանի. Կ. Պոլիս, 1874.

2. Դավիթ և Մհեր. Մ. Աբելյան. Շուշի, 1889.

3. Սասմա ծոբը. Գարեգին սարկավազ. Թիֆլիս, 1892.

4. Սասմա փահլաններ կամ Թլոր Դավիթ և Մհեր.

Բ. Խալաթյան, Վաղարշապատ, 1899: Ը. Թ. »:

Առաջին հրատարակումից հետո հեղինակի կենդանության ժամանակ պոեմն ունեցել է ևս յոթ տպագրություն՝ ենթարկվելով կառուցվածքային և ոճական որոշակի փոփոխությունների: Այդ հրատարակումներն են. ա) 1903 թ. ԲԹ, էջ 163—202, բ) 1904 թ. առանձին գրքուկով «Հայ բանաստեղծներ» մատենաշարով (հրատ. Ստ. Լիսիցյանի և բնկ.), 40 էջ, գ) 1908 թ. ԲԲ, էջ 161—196, դ) 1909 թ. ՀԳ քրեստոմատիայի առաջին հատոր, կազմեցին Ղ. Աղայան, Ավ. Ահարոնյան, Հովհ. Քումանյան, Վրթ. Փափազյան, էջ 95—109, ե) 1914 թ. նույն քրեստոմատիայի 2-րդ տպագրության մեջ, էջ 95—109, զ) 1922 թ. ԳԳ քրեստոմատիայում (Սուրխաթյանի), էջ 110—134, է) 1922 թ. ԲՊ, էջ 239—278: Պոեմը մտել է ԵԺ 11, էջ 103—135, ունեցել է բազմաթիվ ուրիշ հրատարակություններ (առանձին գրքերով և ժողովածուների մեջ):

Ներկա հրատարակության համար հիմք է ընդունվել պոեմի վերջին՝ ԲՊ տպագրությունը:

ԲՔ, ԲՊ, ինչպես նաև պոեմի 1904 թ. առանձին հրատարակության մեջ այն թվագրված է 1902: Իրոք, հիմնական ստեղծագործական աշխատանքն ընթացել է 1902 թվականին, թեև, անտարակույս, պոեմի մտահղացումը պետք է ծագած լինի ավելի վաղ: 1890-ական թթ.՝ ժողովրդական բանահյուսության նկատմամբ գնալով խորացող հետաքրքրության պայմաններում, Քումանյանը չէր կարող շանդրադանուլ հայ ժողովրդական վեպին, որը Գ. Սրվանձությանի և Մ. Աբեղյանի հայտնի հրատարակումներից հետո գտնվում էր հայ գրական հասարակության ուշադրության կենտրոնում: «Սասունցի Դավիթը» նախապատրաստված էր Քումանյանի անցած մեկուկես տասնամյակի գրական ճանապարհով, ժողովրդական բանահյուսության ստեղծագործական իմաստավորման նախընթաց փորձով:

Պահպանված փաստերի հիման վրա կարելի է ասել, որ Քումանյանի «Սասունցի Դավիթը», իր առաջին քիչ թեև շատ ամբողջական տարբերակով, գրված է եղել արդեն 1902 թ. առաջին կեսին: Այդ է վկայում Ավ. Իսահակյանի 1902 թ. հուլիսի 7-ի նամակը, ուր պոեմի ձևագրի ընթացման անմիջական տպավորության տակ նա գրում էր Քումանյանին. «Հրաշխի էր Սասունցի Դավիթը... Դավիթը լավ տիպ է, առողջ, թարմ, ժողովրդական, դրական,— արժե նրանով ոգևորվել» (ԳՔ, 1933, № 6): Երկու շաբաթ անց (1902 թ. հուլիսի 21-ին) Ավ. Իսահակյանը դարձյալ անդրադառնում է Քումանյանի պոեմին («Նորից կարդացի»,— գրում է նա, և այս խոսքերից կարելի է ննթագրել, որ Իսահակյանի մոտ եղել է պոեմի ինքնագրերից մեկը, որը մեզ չի հասել): Ու թեև Իսահակյանը գտնում է, որ պոեմը պետք էր գրել ոչ թե ամանուկների համար, այլ «ավելի լուրջ և ծանրախոհ», բայց միաժամանակ նշում է Քումանյանի երկի այնպիսի արժանիքներ, ինչպես «ժողովրդական ոճերն ու դարձվածքները», «էպիքական պատմելու ձևը— հանգիստ, վեհորեն հանգիստ, և հուժորը» (Ավ. Իսահակյան. Երկերի ժողովածու, հ. 6, 1979, էջ 40):

Աշխատանքը պոեմի վրա Քումանյանը շարունակել է 1902 թ. երկրորդ կեսին, մասնավոր Արասթումանում անցկացրած ամիսներին (սեպտեմբեր-դեկտեմբեր): Ընդհանրապես 11-ին բանաստեղծը Արիստակես Զարգարյանին գրում էր. «Սասունցի Դավիթը» անպատճառ հետո կրեմ: Բայց հիմա էլ սկսել եմ այդ շրջվածքները. իգուր տեղը սկզբից մտածեցի երեխաների ու ժողովրդի ընթացանությանը հարմարեցնել: Ձեռն էլ չի դուր գալիս. վերջն ուրիշ տեսակ եմ անում» (Եժ V, 227):

Անտարակույս, Արասթումանից իր հետ բերածը պոեմի այն տարբերակն էր, որը շուտով տպագրվեց ՄՃ 1903 թ. 2—5 համարներում: Սակայն սրանով պոեմի մշակման աշխատանքը չի ավարտվում, այն շարունակվում է (երբեմն մեծ ընդհատումներով) մինչև բանաստեղծի գրական ուղու վերջը: Կարելի է առանձնացնել այդ աշխատանքի մի քանի փուլ և համապատասխանաբար՝ պոեմի մի քանի տարբերակ: Ճիշտ է, «Սասունցի Դավիթը» պոեմի այդ խմբագրությունները այնպիսի արժատական տարբերություններ չունեն, ինչպիսիք տեսնում ենք «Անուշի», «Լոռեցի Սաբոյի» կամ

«Պեռնո ու Մուսայի» ստեղծագործական պատմության մեջ: Այս ղեկըրում Քումանյանը ոչ թե հիմնավորապես փոփոխել է նախկինում գրածը, այլ բավարարվել է որոշ հատվածներ կրճատելով կամ նորերը դրելով. ոճական և կառուցվածքային ուղղումներով, որոնք զգալի թիվ են կազմում: Պոեմի խմբագրությունների միջև չկան նաև ծավալային մեծ տարբերություններ. բոլոր փոփոխություններով հանդերձ, ստեղծագործության տարբերակներում տողերի թիվը տատանվում է 950—1000 սահմաններում: Սակայն պոեմի խմբագրությունների տարբերությունը, այնուամենայնիվ, որակական է, և դա պահանջում է ամենայն ուշադրությամբ գննել կատարված ստեղծագործական աշխատանքի ընթացքը:

«Սասունցի Դավիթի» առաջին տարբերակը 1903 թ. ՄՃ ամսագրի չորս համարներում հրատարակված խմբագրությունն է, որը կազմված է 22 գլխից և ունի 989 տող: Այս հրատարակման բոլոր մասերը (բացի առաջինից) ունեն «գյուցազնական վեպ» ենթավերնագրեր, որը հետագա բոլոր տպագրությունների մեջ բացակայում է: Ամսագրում պոեմն ավարտվում է «Վերջ Ա. մասի» նշումով. սա նշանակում է, որ այդ ժամանակ բանաստեղծը մտադիր էր շուտով ձեռնամուխ լինել պոեմի երկրորդ մասի ստեղծմանը:

Սակայն 1903 թ. մայիսին ավարտված ամսադրային հրատարակումից անմիջապես հետո պոեմի այդ առաջին խմբագրությունը բանաստեղծին չբավարարեց, և նա որոշեց նրան փոփոխություններ մտցնել նրա մեջ: Պահպանվել են ՄՃ 1903 թ. 2, 3 և 5 համարները (4-րդը բացակայում է), որոնց վրա բանաստեղծը բազմաթիվ ուղղումներ և կրճատումներ է մտցրել պոեմի մեջ (ԹՖ, № 1356):

ՄՃ բնագրի տարբերությունները վերջնական խմբագրությունից, ինչպես նաև հետագայում նրա մեջ մտցված կրճատումների պատկերը, ներկայացվում են տարբերակների բաժնում: Առանձին ցույց են տրվում նաև տարբեր տողերի մեջ կատարված ձեռագիր փոփոխություններ՝ համապատասխան իվահամարների տակ բերելով, նախ, տվյալ տողի կամ հատվածի նախնական ձևը (ըստ ՄՃ) և ապա, թեք գծից հետո, նրա նոր խմբագրությունը:

Պոեմի ամսագրային հրատարակման շրջանին է վերաբերում նաև նրա պահպանված միակ համեմատաբար ծավալուն ինքնագիրը՝ «Սասունցի Դավիթը, I», առանձին տիտղոսաթերթով (ԹՖ, № 8ա): Երբ 450 տող պարունակող այդ ինքնագիրը (համընկնում է պոեմի առաջին կեսին) կամ անմիջապես նախորդել է ՄՃ հրատարակմանը և կամ ուղղակի հաջորդել նրան, քանի որ նրա մեջ կան նաև այնպիսի փոփոխակներ, որոնք օգտագործվել են հետագա հրատարակությունների մեջ: Տարբերակների բաժնի վերջում տրվում է այդ ինքնագրի լրիվ նկարագրությունը՝ բոլոր սևագիր այլընթացումներով, շնչումներով և ուղղումներով:

1903 թ. տպագրված ԲՔ ժողովածուի մեջ (գրաքննչական թույլատվությունը՝ 1903 թ. հոկտեմբերի 15-ին) «Սասունցի Դավիթը» մտավ զգա-





անավարտ և անտիպ մնացած) ոչակ նու որ կարելի է համարել թուժանյանի «Սասունցի Դավիթ» շարժող տարբերակը: Խոսքը վերաբերում է 1904 թ. առանձին հրատարակության մի օրինակի վրա կատարված ուղղումներին և լրացումներին (ԹՖ, № 1358 տ), որոնց մի մասը հետագայում մտավ պոեմի վերջնական խմբագրության մեջ: Գրքի լուսանցքներում և առանձին թերթիկների վրա գրված այդ լրացումները, ամենայն հավանականությամբ, կատարվել են 1910-ական թթ. սկզբին, երբ թումանյանը էօրից ձեռնարկեց հայկական էպոսի ուսումնասիրության և գեղարվեստական մշակման գործին: Ժամանակը հաստատվում է նաև նրանով, որ լուսանցքներում երկու անգամ հիշատակվում է «Ջոշանց տուն կամ Սասնա ծոեր վեպի երեք փոփոխակ» գիրքը (Ստ. Կանայանի խմբագրությամբ), ուր լույս է տեսել 1910 թ.:

Հիմք ընդունելով 1904 թ. հրատարակությունը, թումանյանն այժմ ձդտել է մտցնել մի շարք ճշտումներ ու լրացումներ: Ընդամենն նա հենվում էր անցած մոտ ասու տարիների ընթացքում հրատարակված էպոսի նոր պատճենների և գիտական հետազոտությունների վրա: Գրքի լուսանցքներում մի քանի անգամ նշվում են նաև Մ. Աբեղյանի, Գ. Հովսեփյանի, Բ. Խալաթյանցի աշխատությունները:

Աշխատանքի այս փուլում թումանյանը մտադիր է եղել, նախ, վերականգնել Դավիթ հրածնտի երգը կոիվ մեկհեղուց առաջ: Սակայն եթե ՄՃ բնագրում այդ երգն ընդամենը 12 տող էր, այս ալյտեղ այն կրկնակի մեծացել է (24 տող): Թեև մնացել է ոչ լիովին մշակված ու հղկված վիճակում: Այդ հատվածը, ըստ թումանյանի նշումի, պետք է տեղադրվեր պոեմի XX գլխի սկզբում, իսկ Քեռի թորոսին վերաբերող երկու քառատողերը պետք է մտնեին վերջին՝ XXIV գլխի մեջ: Սակայն, ինչպես երևում է պոեմի ստեղծագործական պատմության հետագա ընթացքից, և՛ մեկ, և՛ մյուս հավելումներից բանաստեղծն է վերջո հրաժարվել է:

Բարեբախտաբար, թումանյանը հասցրեց միանդամայն որոշակիորեն արտահայտել իր վերջնական վճիռը «Սասունցի Դավիթ» բնագրի վերաբերյալ: Կյանքի վերջում ծրագրված բանաստեղծական նոր ժողովածուի համար նա նշումներ մտցրեց իր մի շարք երկերի մեջ: Երբ 1921 թ. վերջին թումանյանը գտնվում էր Կ. Պոլսում, իր պատրաստած ժողովածուն հանձնում է տեղի հրատարակիչ Քեչիշյան-որյուն: Վերջինս հատուկ ծանոթագրության մեջ նշում էր, որ նեղինակը որոշ երկերի վրա «կատարած է սրբաբախություններ, կրճատումներ և փոփոխություններ» (ԲՊ, էջ 346): Մասնավորապես «Սասունցի Դավիթը» պոեմի մեջ ուղղված են մի շարք տողեր, գրված են երկու նոր համանման հատվածներ (սույն հրատ. 587—594, 603—609 տողերը), նկատելիորեն փոփոխված են 841—844 տողերը և այլն: Սա արդեն պոեմի վերջին՝ հինգերորդ տարբերակն էր, որն իր կառուցվածքով հիմնականում համընկնում է 1904 թ. առանձին հրատարակության հետ, բայց ունի նաև նրանից շեղվող մի քանի տողեր ու հատվածներ: Պոեմի վերջնական տարբերակը ևս կազմված է 24 գլխից և ունի 934 տող:

Սակայն բանաստեղծի՝ շատ որոշակիորեն արտահայտված կամքն այս դեպքում երկար ժամանակ հաշվի չի առնվել, և պոեմը տպագրվել է ոչ ըստ այդ վերջնական խմբագրության: Պատճառն այն է, որ թումանյանագիտության մեջ տարածված է եղել կանխակալ-թերահամալտ վերաբերմունք դեպի բանաստեղծի կենդանության օրոք նրա երկերի վերջին հրատարակությունը՝ Կ. Պոլսի ժողովածուն, այն համարվել է ոչ արժանահավատ և ոչ վստահելի: Սակայն եթե այդ կարծիքն զգալի շափով իրավացի է ուղղադրության և կառուցվածքի հարցերում (քանի որ ժողովածուն տպագրվել է առանց հեղինակի անմիջական վերահսկողության), ապա ճիշտ չէր լինի այն տարածել երկերի բուն բնագրերի վրա, որոնք, ինչպես ասվեց, ընտրվել ու հշտվել են բանաստեղծի կողմից: Այդ սխալ մտայնության թելադրանքով, իբրև պոեմի հիմնական բնագիր, առաջ է քաշվել 1904 թ. առանձին հրատարակությունը՝ 10-ական թթ. կատարված ձեռագիր ուղղումներով և լրացումներով: Սկսած 1926 թ. թումանյանի երկերի ժողովածուի «ժողովրդական հրատարակությունից», այդ լրացումների մի մասը ներմուծվեց պոեմի մեջ, իսկ 1938 թվականից կանոնիկ բնագրում տեղ գտան շորժորդ պոեմի մեջ, իսկ 1938 թվականից հավելումները, որոնք երբեմն ակնհայտորեն տարբերակի բոլոր ձեռագիր հավելումները, որոնք երբեմն ակնհայտորեն անավարտ և անկատար բնույթ ունեն: Այդ տեսքով է տպագրվել պոեմը նաև թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության երկրորդ հատորում (1940) և հետագա շատ ուրիշ տպագրությունների մեջ:

Գիտականորեն շիմնավորված այդ մտեցումը հաղթահարվեց միայն 60-ական թթ. վերջին՝ թումանյանի երկերի քառահատոր ժողովածուի առաջին հատորում (1969), ուր իբրև պոեմի հիմնական բնագիր ընդունվեց ԲՊ խմբագրությունը: Ներկա հրատարակության մեջ ևս «Սասունցի Դավիթը» տպագրվում է ըստ այդ տարբերակի, որն, անշուշտ, ամենից կատարյալն է պոեմի բոլոր խմբագրությունների շարքում: Նախորդ հրատարակությունների, ինչպես նաև պահպանված ինքնագրերի կառուցվածքային և լեզվական փոփոխակներն ու այլընթացումները նկարագրվում են տարբերակների բաժնում՝ առանձին-առանձին կամ որոշ խմբավորումներով: Նույն բաժնում հրատարակվում են նաև պոեմի հետ կապված բոլոր հեղինակային գրառումները և ծրագրային նշումները:

Ով, այնուամենայնիվ, պետք է հիշել, որ նույնիսկ իր այս ամենակատարյալ տարբերակով պոեմը չէր բավարարում ժողովրդական վիպերգու-

1 «Սասունցի Դավիթը» պոեմի ստեղծագործական պատմության և բնագրի հարցերի ընդունությունը տե՛ս Աս. Ասատրյան, «Սասունցի Դավիթ» էպոսի մշակումները հայ գեղարվեստական գրականության մեջ («Սասունցի Դավիթ», հորեկյանական ժողովածու, Երևանի պետական համալսարանի հրատ., 1939, էջ 89—171), էղ. Զրբաշյան, թումանյանի պոեմները, 2-րդ վերամշ. հրատ., 1986, էջ 295—343, Նույնի՝ թումանյան. Ստեղծագործության պրոբլեմներ, 1988, էջ 495—500, Մ. Զանգալադյան, թումանյանը և ժողովրդական էպոսը, 1969, էջ 13—77:





զցին, ինչը սահման, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և զեզեցիկ գուրգա և ժողովրդականի համն ու հոսը շկորցնի» (ԾԺ IV, 96): Միանգամայն իրավացի էր Պ. Մակինցյանը, երբ նույն աշխատանքում Քումանյանի մասին գրում էր, թե «վարիանտները լուկ աղբյուր են հանդիսանում, որտեղից նա, ըստ իր հայեցողության, իր մտահղացումին համեմատ նյութ ու ներկ է քաղում» («Գարուն», էջ 291):

Նախ, Քումանյանը խիստ ընտրություն է կատարել օգտագործած պատմիչների բազմազան զրվագների մեջ: Ելնելով մանուկների համար համեմատաբար ոչ մեծ պոեմ զրելու ծրագրից, նա կրճատել կամ փոփոխել է էպոսի շատ սյուժետային օղակներ, որոնք չէին ներդրում մանկական ստեղծագործության ոգուն: Դրանցից են՝ Դավթի ծնվելու հանգամանքները, նրա և Մարա Մելիքի ազգակցական կապերի խճճված հանգույցը, Դավթի մանկական շարություններից մի քանիսը, Ձենով Օճանի կնոջ՝ Սառիայի գայթակղիչ փորձերը և այլն: Քումանյանը բաց է թողել կովի և աշխատանքի մի շարք զրվագներ, որոնց գեղարվեստական մշակումը կպահանջեր շատ ավելի մեծածավալ ստեղծագործություն:

Որոշ դեպքերում էլ, իր գաղափարական մտահղացման թելադրանքով, բանաստեղծը սրել ու զարգացրել է ժողովրդական պատմիչների մեջ միայն աղոտ կերպով ուրվագծված որոշ զրվագներ: Այստեղ առաջին հերթին պետք է հիշել Դավթի և ծերունի արաբ զինվորի խոսակցության տեսարանը և, մանավանդ, պարտված Մելիքի զորքի նկատմամբ Դավթի մարդասիրական վերաբերմունքի նկարագրությունը, զորքին ուղղված նրա զիմումը: Այս և ուրիշ դեպքերում, ամենևին չխաթարելով ժողովրդական ստեղծագործության ուրիշ, Քումանյանը միաժամանակ ընդգծում է նրա արգելական հնչողությունը, դյուցազնական պատումի սերտ կապը իր աշխարհայացքի և ստեղծագործության ընդհանուր համակարգի հետ:

Սակայն ընդամենն ոչ մի պատկեր կամ բառ նա չի օգտագործել՝ առանց հավելու ժողովրդական սկզբնաղբյուրների վրա: Դեռ պոեմի առաջին՝ ՄՃ տարբերակում Քումանյանը, բացի իր նշած շորս հիմնական պատումներից, որոշ շափով օգտվել է նաև Խ. Դադյանի «Սասունցի Դավիթ», Գ. Հովսեփյանի «Սասնա ծռեր» (Աբարանի բարբառով) և «Ռոստոմ Զալը, Մ.տ. Արևիկյանի «Քլվատ Դավիթ» վիպական տարբերակներից: Բանաստեղծը նկատի է ունեցել նաև Հ. Ճաղարբեգյանի արձակ վերապատումը («Սասունցի Դավիթ դյուցազն», Քիֆլիս, 1895), հատկապես պոեմի սկզբը՝ նամասում՝ հերոսի ծննդյան պատմությունը շարադրելիս:

Հայ ժողովրդական էպոսի գրական մշակման փորձերն սկսվում են դեռ Քումանյանի պոեմից առաջ, անցյալ դարի վերջում (Մ. Մանդինյանի, Լեոյի, Հ. Ճաղարբեգյանի արձակ վերապատումները, Գ. Բալասանյանի «դյուցազներգական-պատմական պոեմները» և այլն): Քումանյանի պոեմից անմիջապես հետո հրատարակվեց Լ. Մանվելյանի «Սասունցի Դավիթ և Մարա Մելիք» դրամատիկական պոեմը, ավելի ուշ՝ Ավ. Իսահակյանի, Ծ. Զալնցի հայտնի երկերը, հայ խորհրդային և սփյուռքի գրողների շափածո և արձակ բազմաթիվ մշակումներ: Այդ բոլոր գործերի շարքում Քումանյանի

պոեմը եզակի տեղ է զբաղում: Ինչքան էլ բանաստեղծը դժգոհ էր իր պոեմից և գիտակցում էր ազգային էպոսի ավելի կատարյալ և ամբողջական վերարտադրության անհրաժեշտությունը, նրա երկը մնում է հայ հերոսական վիպերգության լավագույն գեղարվեստական մշակումը, ամենից հարազատը, սիրվածն ու տարածվածը ժողովրդի մեջ:

## Պոեմի տեղանունների և որոշ բառերի բացատրություն

### 2 Փաստուն տուրի իշխում էր Սասուն.

Սասունը լեռնային գավառ է Արևմտյան Հայաստանում, Հայկական Տավրոս լեռնաշղթայի համակարգում, Վանա լճից արևմուտք: Այստեղ է ծագել հայ հերոսական էպոսն իր հիմնական գծերով՝ այնուհետև տարածվելով պատմական Հայաստանի շատ կողմերում: էպոսի դյուցազուները սասունցի են, կոչվել են Սասնա (կամ Սասմա) կտրիճներ, փահլաններ, իսկ վեպն ամբողջությամբ՝ «Սասնա ծռեր», «Սասնա տուն» և այլն: Քումանյանը մշակել է շորս ճյուղերից երրորդը, որը կենտրոնական տեղ է զբաղում էպոսի կառուցվածքի և գաղափարական բովանդակության մեջ:

### 47—48 էս դարում Մըսըր անհաղբ ու հրզոր Մըսրա Մելիքն էր ընտանած քազավոր:

Հայ ժողովրդական վեպում Մըսըր է կոչվում այն երկիրը, որտեղից թշնամական ուժերն անընդհատ հարձակվում են Սասունի վրա: Սասունցի հերոսները պաշտպանական կռիվներ են մղում այդ երկրից եկող զավթիչների դեմ: Վիպական պատմիչների մեջ Մըսըր երկիրը ներկայանում է մերթ իբրև Սասունին շատ մոտ, նրան ամեն կողմից շրջապատող տերություն, մերթ որպես հեռավոր մի աշխարհ: Այս անվան տակ արտացոլվել են ժողովրդի պատմական հիշողությունները միջնադարում Ծղկատափ (Մարա) էլյուբյան թագավորության և նրա հետ հայերի ռազմական ընդհանրումների մասին (XII—XIII դարեր):

### 106, 174 Եվալ Սասունի սարերն աներման.

Սասունի լեռնային զանգվածի մեջ մտնում են մի քանի բարձր սարեր (Անդուք, Մարութա լեռ, Սասունք, Խուլթ և այլն), որոնք միասին վերց-

րած կոչվել են նաև Սև սարը, Սիմ սարը, Տորոս, Մշո սար և այլն: Այդ սարերում է կենդանիների արածացնում Սասնա քաղքի գառնարած և ապա նախրապան մանուկ Դավիթը:

Սասունի նշանավոր լեռներից է Մովասարը, որը երկու անգամ հիշվում է Քումանյանի պոեմի շարքով տարբերակում, Դավթի հրավերի երգում («Մովասարի պաղ աղբյուրներ», «Մովասարի անուշ հովեր»): Լեռը Մովասար է կոչվել իր գագաթին ունեցած լճակի պատճառով, հարուստ է մարգագետիններով, անտառներով և աղբյուրներով: Որոշ պատումների մեջ հիշատակվում է իբրև հերոսների զբոսավայր («սեհր անևրո տեղ») կամ որսատեղի: Մովասարը պոեմի IX—X գլուխներում պատկերված որսասարն է:

### 238 Մրծմակա գրվից մինչև Սեղաճսար

Մրծմակա սարը գտնվում է Մուշ քաղաքից դեպի արևելք (երեք ժամ-վա հեռավորության վրա): Լեռվից իր տեսքով նմանեցվել է դեպի գաջ պարզված բազուկի, որի համար կոչվել է նաև Մրծմական քիթ: Իսկ Սեղաճսար լեռը Մշո դաշտի արևմտյան կողմում է, Արածանու աջ ափին: Ունի տափարակ, սեղանաձև գագաթ: Ըստ վեպի որոշ պատումների՝ այս սարի վրա է բանակ դնում Մարա Մելիքը՝ Սասունի վրա հարձակվելու համար: Սեղանասարից դեպի հյուսիս-արևելք գտնվում էր քրիստոնեական Հայաստանի հնագույն հուշարձաններից մեկը՝ Մշո Սուրբ Կարապետի վանքը:

### 303 Էն մեռ Մարուրա սարն է գորավոր:

Մարուրա սարը (կոչվել է նաև Մարաթուկ, Մարաթու լեռ) գտնվում է Սասունի Խարզանք գավառում: Սասունցիների ըմբռնումով՝ Մարաթուկը սուրբ լեռ է, որի անունով նրանք երդվել են, իսկ այնտեղ կառուցված «Մարուրա բանձր Աստվածածին» վանքում աղոթել և օգնություն են խնդրել փորձության պահերին, կովի զնալուց առաջ: Պայքարը հարստահարիչների դեմ Դավիթն սկսում է Մելիքի հրամանով ավերված Մարուրա վանքը վերաշինելուց: Վանքը կոչվել է նաև Չարխափան (այսինքն՝ շարը խափա-նոջ), որի մասին հիշատակվում է Քումանյանի պոեմի 305—306 տողերում. «Սասնա ապավեն, Սասնա պահապան Մեր սուրբ Տիրամոր վանքը Չարխափան»:

### 550 Եկավ Սասնա դաշտ, բանակը գառկեց

Սասունի գավառում, բարձր լեռների և կիրճերի արանքում, կան նաև ոչ մեծ դաշտավայրեր, որոնք էպոսի պատումներում կոչվում են տարածք կերպ՝ Լորա (նաև Լուրա, Ռոլա) կամ պարզապես Սասնա դաշտ: Ըստ էպոսի՝ այդ դաշտում են ծավալվում Դավթի կռիվները հարկահանների և ապա Մըսրա Մեղիքի հետ:

### 553 Բարմաճա ջրին եկավ ու շոֆեց,

Բարձմաճա գետը և նրա վրա կառուցված հուշակավոր կամուրջը (Փրե Բաթմաճ), ըստ ժողովրդական վեպի, եղել է Սասունի և Մըսրի սահմանը: Գետն անցնում է Սասունի հարավային կողմով և թափվում է Տիգրիսի մեջ: Բարձմաճա գետի և նրա կամրջի հետ կապվում են հնագույն ավանդու-թյուններ Գոռիգոր Լուսավորչի հրաշքների, կործանված հեթանոսական մեհյաններից հալածված դեերի մասին:

### 591, 607 Խաչ պատրաստին իր աչ բազկին,

Պոեմի առաջին հինգ տպագրությունների մեջ (1903—1909) օգտագործվում է միայն «խաչ պատրաստին» ձևը: Բայց 29 (1914) և հաջորդ երկու հրատարակություններում (ԳԳ, ԲՊ) Քումանյանը, հենվելով որոշակի գիտական տվյալների վրա, անցնում է «խաչ պատրաստին» բառաձևին: Այդ մասին նա գրել է «Երկու բառ հայոց էպոսից» (1916) հոդվածում. «Սարբեր պատումների հիման վրա, Քումանյանը գալիս է այն եզրա-ուր, տարբեր պատումների հիման վրա, Քումանյանը գալիս է այն եզրա-կացություն, «թե պատրաստի բառն է, որ ժամանակի հետ պատմողների բերանում դարձել է պատրաստի, և այժմ երկու ձևն էլ գործ են ածում»: Ժողովրդի սիրելի հերոսները, շարունակում է բանաստեղծը, հաճախ մար-մունի վրա կրում են իրենց զրուծյան և անմահության անբաժան ու մըշ-մառ պատրաստ շրջանաձև նշանը: «Էդ նշանն է, որ քրիստոնեության ապ-դեցություն տակ իրիսվել է խաչի և խաչ պատրաստին էլ խաչ պատրաստի, խաչ պատրաստի, խաչ պատրաստի...» (ԵՓ IV, 352): Ելնելով այդ ըմբռնումից, պոեմի վերջնական խմբագրության մեջ Քումանյանը մեկ անգամ օգտագործում է նաև խաչ պատրաստի ձևը՝ «Ո՛վ անմահ խաչ պատրաստի» (տող 850), թեև 29 (1914) և ԳԳ-ում այդ տողն ուներ այսպիսի տեսք. «Ո՛վ զորավոր խաչ պատրաստի»:

Պոեմի բոլոր հրատարակությունների մեջ (բացի ԲՊ) Թումանյանն օգտագործում է Թուր-Կայծակի (կամ Կայծակի Թուր) բառաձևը: Սակայն 1910-ական թթ., երբ Թումանյանն այն երկհնչյունը հաճախ փոխարինում էր է-ով, ծագում է նաև Թուր-Կայծակի փոխարեն Թուր-Կեծակի ձևին անցնելու խնդիրը: Պոեմի առանձին հրատարակության (1904) լուսանցքներում գրված նոր հատվածներում և մի երկու տեղ տպագիր տեքստում նա մտցրել է այդ ուղղումը (այ-է), բայց հետևողական չի եղել: ԲՊ-ի համար գրված երկու նոր հատվածներում, ինչպես նաև 619 տողում հանդես է գալիս Թուր-Կեծակին ձևը, բայց մնացած դեպքերում (ընդամենը ութ անգամ) մնացել է «կայծակ» բառաձևը: Անուշաղբույան արդյունք է սա, թե՛ Թումանյանը մինչև վերջ էլ տատանվել է ընտրության մեջ: Ավելի հավանական է թվում երկրորդը:

Պոեմի հետմահու գրեթե բոլոր հրատարակություններում բնագիր պատրաստողներն ամենուրեք այդ բառը դարձրել են «Թուր-Կեծակին», անկախ այն բանից, թե պոեմի որ տարբերակն է հիմք ընդունվել՝ ԲԹ, ԲՊ, թե՛ 1904 թ. գրքույկն՝ ուղղումներով:

Ներկա հրատարակության մեջ, նպատակ ունենալով ճշգրտորեն վերաբերել պոեմի ԲՊ բնադիրը, մենք պահպանել ենք նաև հերոսի զենքի այդ կրկնակի գրությունը: Ըստ այդմ՝ երեք անգամ տպագրվում է Թուր-Կեծակին և ութ անգամ՝ Թուր-Կայծակին: Պահպանվել են նաև «Սասուն» և «Սասուն» տարբեր գրելաձևերը:

871 Քըչեց, զընաց մինչ Դիարբեխ

Դիարբեխը (Ամիդ) Մեծ Հայքի հնագույն բերդաքաղաքներից է, Արևմտյան Տիգրիսի աջ ափին: Էպոսի մի քանի պատումներում այն հիշատակվում է իբրև Մըսրա թագավորության քաղաք: Մըսրա Մեխիքը Դիարբեխից է սկսում Դավթի դեմ իր առաջին հարվածի ձիարշավը:

889—890 Երկուդ աեգամ քըչեց Հալաթ  
Ու բաց բողեց ձին Հալաթից.

Հալաթը (Հալեպ) Մերձավոր արևելքի հնագույն քաղաքներից մեկն է (չտեսնվում է ժամանակակից Սիրիայում): Հայ ժողովրդական վեպի որոշ

պատումներում Հալաթը նույնպես հիշվում է իբրև Մըսրա (Եգիպտոսի) թագավորության մի մաս, որի կազմի մեջ այն իրոք ստեղծ է էյուբյան հարստության շրջանում: Դավթի դեմ իր երկրորդ հարվածի ձիարշավը Մեխիքն սկսում է Հալաթից:

916 Գրբգուտ սարը մեզ-մըշուշում:

Գրբգուտ սարը Հայկական Տավրոսի լեռներից մեկն է, գտնվում է վանա լճի հարավարևմտյան ափից ոչ հեռու և Սասունից դեպի արևելք: Պոեմի երկու տողերում ուղղվել են ակնհայտ վրիպակները:

809 Միճէն լու <ը> կրհասցընեմ,  
842 Հըչի՛ր և ոչը <ո> աչ թեխ,

ԱՍՏՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

Բ մասը

(էջ 41, 267)

Պոեմի այս մասը հեղինակի կենդանության ժամանակ չի տպագրվել և մնացել է անավարտ: 1—3 գլուխները (ընդամենը 28 տող) առաջին անգամ տպագրվել են «Նորք», 1925, № 5—6, էջ 95—96, խմբագրության հետևյալ ծանոթագրությամբ. «Հովհ. Թումանյանի համանուն պոեմի այս մասն անավարտ է և անտիպ: Այստեղ տպագրում ենք հեղինակի թղթերում պահված այդ մասի 1—3 գլուխները»:

Հետագայում՝ ԳԾ ժողովածուի մեջ (1934, էջ 122—124), պոեմի այս մասի հրատարակումը պահպանված ձևագրերի հիման վրա լրացվեց 4-րդ ավելի ընդարձակ զիտով, և տողերի ընդհանուր թիվը հասավ 80-ի: Այդ տարբերակը տեղ գտավ ԵԺ II (136—138), որի «կոմենտարներ և տեքստային տարբերություններ» բաժնում (407—410) տրվեց նաև տարբեր ինքնագրերից բաղկած տողային փոփոխակների զգալի մասը:

Ներկա հրատարակության համար հիմք են ծառայել պոեմի այս հատվածների ինքնագրերը, որոնք պահվում են ԳԱԹ-ում (ԹՖ, № 8բ): 1—3 գլուխներն ունեն միայն մեկ ինքնագիր, որի մեջ շնչումներն ու փոփոխակները բավական քիչ են: 4-րդ գլուխն ունի երեք ինքնագիր, որոնցից առաջինը՝ համեմատաբար մաքուրը, զրվել է սույն հրատարակության հիմքում, իսկ Բ և Գ ինքնագրերը (մեկը գրված ու թանաքով, իսկ մյուսը՝ մատիտագիր) լեցուն են բազմաթիվ շնչումներով, անավարտ տողերով ու փոփոխակներով: Այդ երկու ինքնագրերը հրատարակվում են տարբերակների բաժնում՝ ցույց տալով ձևագրի վրա հեղինակի կատարած աշխատանքն իր բոլոր մանրամասներով: Ի տարբերություն նախորդ ակադեմիական հրատարակության, ինքնագրերի պատկերը ներկայացվում է ոչ թե միախառնված, այլ առանձին-առանձին:

Պոեմի այս հատվածները, ամենայն հավանականությամբ, գրվել են

1904 թ.: Շուրջից 1904 թ. օգոստոսի 7-ին Փ. Վարդապետյանին գրած նամակում Թումանյանը հայտնում էր. «Դավիթ» շարունակությունն ուղում են (խոսքը վերաբերում է Բաբվի հայոց հրատարակչական ընկերությանը, որին Թումանյանը խոստացել էր հանձնել պոեմի երկրորդ մասը՝ տպագրելու համար— խմբ.): Պատրաստություն եմ տեսնում «Դավիթին» հարսալու անելու: Հարսանիքի ծախսը նրանցն է» (ԵԺ V, 275): Դարասկզբին գրված լինելու օգտին է խոսում նաև այն փաստը, որ այս հատվածների թղթի և ձեռագրային տվյալները հիմնական հատկանիշներով համընկնում են պոեմի առաջին մասի պահպանված ինքնագրերի տվյալներին:

Ինչպես երևում է Թումանյանի և Բաբվի հրատարակչական ընկերության ղեկավարների (Մ. Տևր-Անդրևսյան, Հ. Քաչազունի, Ե. Փաղիանոսյան) նամակագրությունից, «Սասունցի Դավիթ» երկրորդ մասի խընդիրը նորից սուր կերպով զրվել է 1907—1908 թթ.՝ բանաստեղծի շափածո երկերի նոր ժողովածուն (ԲԹ) կազմելու կապակցությամբ: Հրատարակչությունը շատ էին ուղում, որ այդ գրքում առաջին անգամ տպագրվեն նաև հայ ժողովրդական դուցազնավեպի մշակման շարունակությունը, որով զգալիորեն կմեծանային նաև հեղինակին վարձատրելու շափերը: Պոեմի երկրորդ մասը շուտափույթ ավարտելու խնդրանք-առաջարկներով նրանք բազմիցս դիմել են Թումանյանին (տե՛ս ԹՖ, № 1124—1126): ԲԹ ժողովածուի պատրաստման ընթացքում ծագել է նաև մի ուրիշ մտադրություն, որի մասին Հ. Քաչազունին բանաստեղծին գրել է. «Սասունցի Դավիթ» շարունակությունը կարող ես մի քիչ ուղացնել, որովհետև այդ պոեման մտադրություն ունենք դուրս հանել ժողովածուից և հրատարակել առանձին զբոսայգիով» (ԹՖ, № 1191, նամակն անվավեր է, բայց, անշուշտ, վերաբերում է 1907—1908 թվականներին):

Սակայն բոլոր հորդորներն ու խոստումները որևէ արդյունք չտվեցին, պոեմի երկրորդ մասի աշխատանքներն այս հատվածներից առաջ շանցան: Մինչև վերջ անփոփոխ մնաց այն վիճակը, որի մասին գրում էր Հ. Քաչազունին 1907 թ. օգոստոսի 1-ի նամակում՝ հիշելով բանաստեղծի հետ իր մի խոսակցությունը «Սասունցի Դավիթ» շարունակության մասին. «Բայց դու դա անիրագործելի գտար.— մի այնպիսի պատճառով, որի դեմ չի կարելի վիճաբանել. ասում ես, տրամադրություն չկա «Դավիթը» շարունակելու: Անձնապես ես շատ ափսոսում եմ, որ այդ այդպես է, բայց զոռով հո չի՞ կարելի բանաստեղծություն գրել» (ԹՖ, № 1189):

Եվ, այնուամենայնիվ, Թումանյանը մինչև վերջ էլ չհրաժարվեց հայկական էպոսի ամբողջական մշակման նվիրական գաղափարից: Ինչպես վկայում է բանաստեղծի դուստրը, 1920—1921 թթ. Թումանյանը հաճախ է անդրադարձել պոեմի շարունակությանը, ոգևորված հատվածներ է կարդանալիս գրած մասերից (տե՛ս Ն. Թումանյան, էջ 232, 249): Թե ինչպիսի մեծ պատասխանատվությամբ էր պատրաստվում Թումանյանը «Սասունցի Դավիթ» մասի ստեղծմանը, վկայում են նաև պահպանված բազմաթիվ ու բազմափայտի ծրագրային նշումները, քաղվածքները, էպոսի մի շարք զովագները



արձակ վերապատմաները: Հավանաբար, այդ նյութերը հավաքվել են ոչ միայն դարասկզբին, այլև 1910-ական թթ.՝ ամբողջ պոեմի սրմատական վերափոխման ծրագրի կապակցությամբ, և էյանքի վերջին տարիներին, երբ Քումանյանն աշխատում էր «Հայկական էպոսի բառարանից» գիտական ուսումնասիրության վրա: Այդ բոլոր նյութերը, որոնք պահվում են ԳԱՔ-ում (ՔՖ, V Ցք, գ), առաջին անգամ լրիվ ծավալով տպագրվում են այս հատորի «Տարբերակներ և նյութեր» բաժնում: Դրանք օգնում են ինչ-որ չափով պատկերացնելու այս շիրականացված մտադրացման բնույթն ու շրջանակները:

Հատուկ կարևորություն ունի պոեմի երկրորդ մասի սկզբնական զբր-վագների շարադրանքը: Այդ էջերն ստեղծվել են էպոսի մի քանի պատում-ների ուշադիր ուսումնասիրության և համադրման միջոցով: Այդ պատում-ներն են. Գ. Հովսեփյանի «Դավիթ և Մհեր», Ս. Կանայանի «Թլեղ Դավթի հեքիաթ», Արտ. Աբեղյանի «Թլվատ Դավիթ և Մհեր», Ս. Հայկունու «Ջոջանց տուն», Բ. Խալաթյանի «Սասմա փահեաններ կամ Թլրը Դավիթ և Մհեր»: Արձակ շարադրանքի մեջ մեծ տեղ է զբաղում Դավթի և աշուղների հանդիպման դրվագը, որը մեզ ծանոթ է նաև պոեմի չափածո հատված-ներին: Բայց վերապատմված են նաև Դավթի և 12 գուժանավորների հանդիպման, Խանդութ խաթունի տան պահապան Համգուրի դիմավորման զբր-վագները, որոնք, անշուշտ, պիտի օգտագործվեին պոեմի մեջ՝ բացահայտելով գլխավոր հերոսի էությունն աշխարհ կողմեր: Քումանյանի մյուս գրա-տումների մեջ տեղ են գտել նաև Դավթի և Չմշիկի Սուլթանի ճակատագրա-կան կոպը (չաղված է Գ. Հովսեփյանի «Սա-նու ծներ» պատմից), Դավթի և Խանդութի առաջին հանդիպումն ու ընդհարումը (ըստ Արտ. Աբեղ-յանի պատմի) և այլն: Այս և մի քանի ուրիշ նյութեր համախմբված են «Գրառումներ և բաղվածքներ» ընդհանուր վերնագրի տակ՝ խմբագրության կողմից համարակալված այն կարգով, ինչպես, դատելով առկա տվյալնե-րից, գրանք գրվել են (իհարկե, այդ գասավորությունը չի կարող ինչ-որ չափով մոտավոր ու պայմանական ըլինել): Այդ նյութերը վերաբերում են պոեմի ոչ միայն երկրորդ, այլև ավարտված առաջին մասին: Դրանց շար-քում առանձնանում է վերջին և ամենածավալուն գրառումը, որի մեջ Բա-դին, Կոբարդին, Սյուդին, Չարխաղին անձնանունների բացատրության կա-պակցությամբ երևում են Քումանյանի էպոսագիտական հետաքրքրություն-ների լայն շրջանակները (նշված նյութերի մասին տե՛ս նաև Մ. Զան-փուլադյան, Քումանյանը և ժողովրդական էպոսը, 1969, էջ 75—77):

«Սասունցի Դավթի» երկրորդ մասի պահպանված հատվածները և հա-րակից նյութերը ցույց են տալիս, թե ինչ ուղղությամբ էր ընթանալու պոեմի մշակման հետագա աշխատանքը: Ամեն ինչից երևում է, որ այստեղ Քումանյանը կարող կերպով հրաժարվում է «Երիտասարդի ու ժողովրդի ընթերցանության համար» գրելու սկզբունքից, որով նա ղեկավարվել էր պոեմի առաջին մասի վրա աշխատելիս: Երկրորդ մասում նա ցանկացել է էպոսը վերապատմել ավելի լայն ու հանգամանորեն, էպիկական և քնա-րական սկզբունքների ավելի ազատ զուգակցման եղանակով, ներառնելով

նաև կենցաղային մանրամասները: Այդ սկզբունքով ամբողջ երկրորդ մասը շարադրելու դեպքում այն, անշուշտ, կլիներ առաջինից զգալիորեն ավելի ծավալուն:

Շատ որոշակի է նաև տաղաչափական կառուցվածքի փոփոխությունը: Պոեմի առաջին մասում կիրառված 10 և 8-վանկանի տողաչափերի (եր-բան ներքին հանգով բաժանված 5 և 4-վանկանի կիսատողերի) փոփոխումն այժմ Քումանյանն ընտրում է ավելի մեծ չափեր: Մեզ հասած 80 տողերից 50-ը գրված են 15-վանկանի և 8-ը՝ 16-վանկանի չափերով (ներքին էրեք 50-ը գրված են 15-վանկանի և 8-ը՝ 16-վանկանի չափերով և լայն էպիկական հատածով), որոնք շատ հարմար ու տարրողունակ են լայն էպիկական բովանդակության համար: Մնացած՝ քնարական բնույթի տողերը գրված են 8 և 4-վանկանի չափերով:

Պոեմի այս մասում հանդիպում է երկու նոր աշխարհագրական անուն.

13 Խըլաթ քաղի բագավորի դաստոր խոսեց ճրան կին,

Խըլաթը բերդաքաղաք է վանա լճի հյուսիսարևմտյան ափին: Միջնա-դարում եղել է տեղական մանր թագավորությունների, այդ թվում և Շահ-ի-Արմենների իշխանության կենտրոնը: Ըստ հայ ժողովրդական վիպերգու-թյան առանձին պատումների, Խըլաթ քաղաքի իշխանի դուստրն է Խանդութ խաթունը, որը Դավթի կինն է դառնում: Իսկ պատումների մեծ մասի հա-մաձայն (որոնց և հետևել է Քումանյանը), Խըլաթի թագավորի դուստրը Չմշիկի Սուլթանն է, որը, չհասնելով Դավթի կինը դառնալու փափագին, զայթակղում է նրան և ի վերջո դառնում նրա մահվան պատճառը:

16 Արի՛, գրճաճ Կապուտ Բերդի բագավորի աղբյուկան

Կապուտ բերդը (կամ Կապուտա) բնակավայր է Կաղզվանի մոտ և, ըստ հայ ժողովրդական վեպի, եղել է Խանդութ խաթունի հոր թագավորու-թյունը: Այստեղ հին ժամանակներից եղել են Խանդութի բերդ և Խանդութի ձոր տեղանունները: Պատումների մեջ հիշատակվում է նաև Կապուտկող անունով մի ուրիշ թագավորություն, որը գտնվել է վանա լճի Տարավային ափին և, հավանաբար, Արծրույայց թագավորության հիշողությունն է: Կա-պուտա բերդն ու Կապուտկողը վեպի ասացողների կողմից հաճախ շփոթ-վել կամ նույնացվել են իրար հետ:

Թմկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի հայ իշխան: Պարսից բազավորն եկել, երկար պաշարել է այս բերդը, սակայն չի կարողացել առնել: Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրա և ծածուկ առել է նորահաս զանգեղ շահին: Եվ նանալու՝ եթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին: Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել է մատնիչ իշխանուհուն. «Ես եմ գեղեցիկ, թե ամուսինդ»: Եվ երբ սա պատասխանել է թե ամուսինս գեղեցիկ էր՝ շահը հրամայել է կապել սորան ձիու ագից և քաշ տալ մինչև մեռնելը, սակավ. «Եթե ամուսինդ շահից գեղեցիկ էր՝ ինչո՞ւ սպանեցիր»:

(«Ջավախքի բուրմունք», ժողովրդական նյութեր, գիրք Բ, հավաքեց Ե. Լալայան, Քիֆլիս, 1892, էջ 57):

Բացի այս հիմնական աղբյուրից, Թումանյանը հետաքրքրվել է նաև ուրիշ համանման զրույցներով՝ կապված կնոջ մատնությունը ամբողջ գրավելու մտախնայի հետ: Այսպես, գերմանացի աշխարհագրագետ Կարլ Ռիտտերի «Ներկարգիտության» ռուսերեն հրատարակության մեջ նրա ուշադրությունը գրավել է գրքի թարգմանիչ Վ. Գրիգորի լրացումներից մեկը, որը կապված է աֆղանական Գուլգուլե (Բամիյան) քաղաքի մոտ գտնվող Սեյդաբադի ամրոցին: Ահա այդ հատվածը. «Ավանդությունն այդ ամրոցը կոչում է Կալեի դուխտեր—«Աղջկաբերդ», այն պատճառով, որ այնտեղ իբր թե ապրել է թագավորի աղջիկը, որ սիրահարվել է Գուլգուլեում իր հոր պաշարած թշնամու առաջնորդին, հայտնել է նրան, թե տեղի կայազորն ինչպես է մատակարարվում ջրով, և այսպիսով պատճառ դարձել Գուլգուլեի անկման» (Землеведение К. Риттера. Кабулистан и Кафирнистан, СПб. 1867, с. 1000): Թումանյանի թղթերում պահպանվող մի գրառման մեջ (ԳԱԹ, ՔՖ, № 9) նա մի քանի բառով շարադրել է այս ավանդության բովանդակությունը և այն իրավացիորեն համարել «Թմկաբերդի առումի» սյուժետային կորիզի մի այլ «վարիանտը» (տե՛ս պոեմի տարբերակների և գրառումների բաժինը): Պոեմի յարտահայտչական թեմայի հետ առնչվում է նաև բանաստեղծի հետևյալ գրառումը. «Երբոր մարդը հաղթվել է— միշտ կինը խորհրդակից է եղել թշնամուն» (ՔՖ, նոր նյութեր, թղթապանակ № 23):

Առհասարակ պետք է նկատի ունենալ, որ թեև Թումանյանն աշխատել է պատմական կոնկրետություն մտցնել պոեմի նյութի մեջ՝ այն կապելով XVIII դարի առաջին կեսի պարսից բռնակալ թագավոր Նադիր շահի անվան հետ, սակայն նրա ընտրած ավանդությունը պատկանում է միջազգային բանահյուսության տարածված սյուժեների թվին: Հայտնի են, օրինակ, յին բանահյուսության տարածված սյուժեական և հարավսլավական տարբերակները՝ իրենց լուսնային մոտիվի վրացական և հարավսլավական տարբերակները՝ իրենց լուսնային ժամով բավական նման «Թմկաբերդի առումի» մեջ մշակված սյուժեին (տե՛ս էջ. Մ. Զբաղյան. Թումանյանի պոեմները, 2-րդ հրատ., 1986, 542):

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

(էջ 45, 292)

Առաջին անգամ՝ ՄՃ, 1905, № 1, էջ 5—10, № 2—3, էջ 34—40, «Աշուղի զրույցը» ենթավերնագրով: Ինքնագիրը չի պահպանվել:

Այնուհետև հեղինակի կենդանության ժամանակ պոեմը տպագրվել է ևս վեց անգամ. ա) ԲԲ, էջ 197—210, որոշ փոփոխություններով և նույն ենթավերնագրով, բ) նույն բնագիրը ոչ մեծ տարբերություններով մտել է 29 քրեստոմատիայի առաջին հատորի (1909, էջ 124—129) և գ) նույն քրեստոմատիայի 2-րդ տպագրության մեջ (1914, էջ 124—129), որ 1909 թ. Քիֆլիսում պոեմը լույս է տեսել առանձին գրքույկով (16 էջ), որոշ լրացումներով և խմբագրական ուղղումներով, առանց հիշյալ ենթավերնագրի (գրքույկի վրա հրատարակության տեղն ու թվականը նշված չեն), և) նույն տարբերակը, «Անուշ» պոեմի հետ միասին, մտել է 1921 թ. Կ. Պոլսում «Ժամանակակից» մատենաշարով (թիվ 36) հրատարակված գրքույկի մեջ (էջ 33—46, տպագրիչ-հրատարակիչ Վաղինակ Ս. Բյուրատ), գ) միևնույն տարբերակը՝ ԲՊ, էջ 279—293:

Հետագայում պոեմն ունեցել է բազմաթիվ այլ հրատարակություններ՝ առանձին գրքույկներով և ժողովածուների մեջ, այդ թվում՝ ԵԺ II, 141—150: Ներկա հրատարակության (ինչպես նաև հետմահու բոլոր հրատարակությունների) համար հիմք է ընդունվել 1909 թ. տպագրված գրքույկը:

«Թմկաբերդի առումը» մտահղացվել ու գրվել է մեր դարի առաջին տարիներին՝ Թումանյանի ստեղծագործական բուռն վերելքի շրջանում: Պոեմն այդ վերելքի լավագույն արտահայտություններից մեկը եղավ:

«Թմկաբերդի առումն» ունեցել է ինչպես գրական-բանահյուսական, այնպես էլ կենսական ազդակներ: Ե՛մ մի քանի զրվածքների բացատրությունը՝ գրառման մեջ Թումանյանը, իբրև պոեմի հիմնական գրական աղբյուր, նշել է հայտնի բանահավաք և ազգագրագետ Նրվանդ Լալայանի «Ջավախքի բուրմունք» ժողովածուն (ՈԻՀ—2, էջ 420): Խոսքը վերաբերում է բանահավաքի գրի առած հետևյալ ավանդությանը, որից բանաստեղծը քաղել է և՛ իր պոեմի սյուժետային կորիզը, և՛ վերնագիրը: Բնութամ ենք այդ գրառման լրիվ տեքստը.

էջ 371—372): Եւջն մտտիլի մի ուրիշ հնագոյն տարբերակ, ճիշտ է, այլ հանգուցաւորումով, հանդիպում է Յիրզուսու «Շահնամէի» մեջ (տե՛ս Բ. Զուլպասյան. Թումանյանը հելում է պարսկերեն, «Գարուն», 1970, № 10, էջ 62—63):

Պոեմը գրելուց առաջ Թումանյանը որոշել է անձամբ այցելել Թմկաբերդի ավերակները, ստանալ րացուցիչ կենսական տպավորութիւններ 1901 թ. հուլիսի 30-ին իշխանուհի Մարիամ Թումանյանին հասցեագրած նամակում բանաստեղծին այդ մասին հաղորդել է. «Երևի դուք իմացաք, որ ճանապարհորդում եմ լեզնդերի հովաթուրու և առհասարակ ծանոթանալու ժողովրդի հետ: Ուզում եմ Թմկաբերդը դնալ—Երևի իշում եք Թմկաբերդի լեզնդան—այն կիներ, որ ուղեց Շահի Թագուհին դառնալ և այլն: Գիտեք, բանաստեղծի համար տպավորութիւնները հարտութուն են—վա՛յ այն բանաստեղծին, որ աղբաւ է տպավորութիւններով» (ԵԺ V, 189—190): Իրոք, 1901 թ. օգոստոսին բանաստեղծին ուղեորվել է պատմական Զավաթքի շրջան՝ ցանկանալով, առաջին հերթին, անձամբ տեսնել իրեն այդ ժամանակ ոգևորած երկու ստեղծագործական «Մասնագումներ» («Թմկաբերդի առումը» և «Փարվանա») հետ կապված վայրերը՝ Թմուկ՝ բերդի ավերակներն ու Փարվանա (Թափարավան) լիճը: Այդ այցելութեան մասին իրենց հուշերում մանրամասնորեն պատմել են Զալալ Տեր-Գրիգորյանը (Սալլլումյան), վարդան Շահպարտյանը, Զավաթեցին և ուրիշներ (տե՛ս ԹԺՁ, էջ 402—404, 417—421, 428—434): Մասնավորապես՝ Զ. Տեր-Գրիգորյանը վկայում է, որ Թումանյանը բուն պահանջ է դրացել իր գրելիք երկու գործերի՝ «Սեղաւորութեան» ու «Միջավայրի» հետ ծանոթանալու» և կատակով ասել է. «Զէ՛ որ ես զորքերի ու ճակատամարտի մասին եմ գրում, պիտի անձամբ տեսնեմ՝ բերդի մոտ հարմարութուն կա՞ զորք շարժելու...»: Թմկաբերդի ավերակները տեսնելու համար Ախալքալաք ժամանելու հաջորդ օրը Թումանյանը տեղացիների հետ միասին ուղեորվում է Գյումուրդա գյուղը. «Կառքը կանգ առավ Գյումուրդայի քարափին: Կառքով իջնել կիրճը ու ավելի մոտենալ Թմկաբերդին շէր կարելի, ճանապարհ չկար. ուստի մեր բանաստեղծը, որպէս իսկական զորահրամանատար, դիմեց հեռադիտակի օգնութեան. նա հեռադիտակը հարմարեցրեց ու, խողովակի ծայրը դնելով աչքին, սկսեց երկար նայել, հետախուզել պատմական Թմկաբերդի շրջակայքը: Ես էլ օգտվելով հանգամանքից լուսանկարեցի հեռադիտակով դիտող մեր բանաստեղծին» (ն. տ., էջ 402—403): Հիատակովող լուսանկարը պահվում է Թումանյանի թանգարանի նյութերում): Իսկ Վ. Շահպարտյանը, նկարագրելով նույն այցելութիւնը, ավելացնում է. «Երկար դիտեցինք իր վայրենի գեղեցկութեամբ: Հմայող այս տեսարանը: Թումանյանը ծոցատեսրում մի քանի նշումներ արեց, հետո խոտերի մեջ պոսկեց, ժպտաց ու ասաց. «Ա՛խ, թե՛ն, թե՛ն... Այստեղից ուղղակի կՅուշեմք Թմկաբերդը» (ն. տ., էջ 417):

Թե՛ն Զ. Տեր-Գրիգորյանը գրում է, թե 1901 թ. այդ ուղեորութեան ժամանակ Թումանյանը ռոգնորված արտասանում էր երկար հատվածներ»

«Թմկաբերդի առումից» (ն. տ., էջ 403), սակայն դա, հավանաբար, շփոթութեան արդուք է: Այդ ժամանակ Թումանյանը կարող էր խոսել իր ապագա պոեմի նյութի և մտահղացման մասին, իսկ երկը դեռ գրված չէր «Թմկաբերդի առումը» գրվեց հաջորդ տարի՝ 1902 թ. նշանավոր «Աբաս-Թումանի աշնանը», երբ Թումանյանը հնարավորութիւն ունեցավ մի քանի ամիս հանգստանալու, բուժվելու և զբաղվելու ստեղծագործական աշխատանքով: Վերամշակված կամ նոր գրված շատ այլ երկերի հետ միասին նա այդ ամիսներին գրեց նաև նախորդ տարվա ջավախքայն ուղեորութեան հետ կապված իր երկու նշանավոր գործերը՝ «Թմկաբերդի առումը» ու «Փարվանան»: Տարիներ անց (1909 թ. հուլիսի 18-ի նամակում) նա այդ մասին գրել է. «Մերքէ՛ն հիշողութիւններ ու անմտանալի վայրկյաններ են կապված Աբաս-Թումանի այս կամ այն փոքրիկ, խաղաղ, չբնաղ անկյունում: Այդտեղ ես շատ եմ երազել ու գրել եմ իմ մի քանի լավ բաները: Այդտեղ եմ մշակել «Սեղաւոր», այդտեղ եմ գրել «Փարվանան» և այլ բաներ—հա՛, «Թմկաբերդի առումը» (ԵԺ V, 320):

Պոեմի ստեղծման բուն ընթացքի մասին մեզ քիչ բան է հայտնի՝ ձեռագիր նյութերի բացակայութեան պատճառով: Պատկանկամ որոշ սեպարատիստներից (տե՛ս «Տարբերակներ և նյութեր» բաժնիք) երևում է, որ սկզբնապես Թումանյանը մտադիր է եղել շատ ավելի մանրամասնորեն վերակայանել բերդի գրավան պատմութիւնը, նույնիսկ այն հունգարացիները, որոնց մեջ «Բախապահան աշուղը» վարում է իր որույցն ունկնդիրների հետ: Այդ հատվածներում հիշատակվում են նաև աշուղի անունը (Մալուլ), ունկնդիրների հետ նրա հանդիպման վայրը (Աճառա լեռներ, Մալուլ), ունկնդիրների հետ նրա հանդիպման վայրը (Աճառա լեռներ, Խուլո՞՞ բնակավայր) և ուրիշ մանրամասներ: Սակայն պոեմի վերջնական տեքստի մեջ պատմութիւնը կոնկրետացնող նման տվյալները բացակայում են, շարադրանքն ստացել է ավելի ընդհանրացված նկարագիր՝ միաժամանակ և՛ էպիկական, և՛ փիլիսոփայական:

Աբաս-Թումանից Թումանյանը վերադարձավ այն ժամանակ, երբ Մարիամ Թումանյանը, Փ. Վաղագորյանը, Շանթը և բանաստեղծի ուրիշ բարեկամներ եռանդով աշխատում էին նրա նոր ժողովածուն (ԲԹ) հրատարակելու ուղղութեամբ: 1903 թ. տպագրված «Բանաստեղծութիւններ» գիրքը նշանավորեց նոր աստիճան նրա ստեղծագործական զարգացման մեջ, նախ և առաջ շնորհիվ այն երկերի, որոնք գրվել կամ արմատապես վերամշակվել էին Աբաս-Թումանում: Սակայն այդ ժողովածուի մեջ «Թմկաբերդի առումը» չմտավ: Մարիամ Թումանյանն այդ մասին իր հուշերում գրել է. «Թմկաբերդի առումը» ես շատ սիրեցի և ուզում էի անպատճառ մտցնել ժողովածուի մեջ, բայց հեղինակը կտրուկ կերպով մերժեց՝ առանց որևէ բացատրութեան» (ԳԱԹ, Մարիամ Թումանյանի ֆոնդ, № 7, էջ 33—34): Պատճառն, իհարկեմ, այն էր, որ իր նոր պոեմը Թումանյանը դեռ պատրաստ չէր համարում տպագրութեան համար և, ամենայն հավանականու-

\* Ներկայումս՝ Աջարական ԻնՍՏ շրջանային կենտրոն:



ներով: Սակայն Քումանյանն ի վիճակի չեղավ ոչ ամբողջական լիբրետո  
տողծելու, ոչ էլ նույնիսկ գրելու հերոսների լրացուցիչ դերերգեր: Հետա-  
դայում՝ 1918 թ. «Ալմաստ» օպերայի լիբրետոն հանձնարարվեց ուսու բա-  
նաստեղծուհի Սոֆիա Պարնոկին (1885—1933): Ավելի ուշ այն խմբագրել  
և հայերեն է թարգմանել Տիգրան Հախումյանը: Ենթադրվում է, որ Ս.  
Պարնոկն օգտվել է Քումանյանի և Սպենդիարյանի համատեղ ջանքերով  
ստեղծված օպերայի ընդհանուր պլանից (ավելի մանրամասն տե՛ս Լ. Տեր-  
Մինասյանի «Պոնտից մինչև օպերա» հոդվածում, «Սովետական արվեստ»  
1969, № 4, էջ 14—19):

## Պատմական և աշխարհագրական անունների բացատրություն

29 Նադիր Շահը զորք հավաքեց,

Նադիր Շահը եղել է Իրանի հզոր տիրակալներից մեկը, թագավորել է  
1736—1747 թթ.: Բազմաթիվ արշավանքներ է կատարել դեպի հարևան  
երկրները (այդ թվում՝ նաև դեպի Անդրկովկաս), հռչակվել է իր դաժա-  
նությամբ ու նեկոտիթյամբ: Այդ հանգամանքն էլ հիմք է տվել Քուման-  
յանին՝ ժողովրդական լեգենդում հիշատակվող անանուն «պարսից թագա-  
վոր»՝ փոխարեն հանդես բերել իրական պատմական անձնավորության՝  
Նադիր Շահին և այդպիսով բանահյուսական պատումի անորոշ ժամանակը  
կապել XVIII դարի հետ: Սակայն, դրանով հանդերձ, Քումանյանի պոեմից  
չի կարելի դիտել իրրև պատմական իրադարձության արտացոլում: Նադիր  
Շահը այստեղ ոչ թև իրական անհատի, այլ արևելյան բռնակալի հավա-  
քական կերպար է:

31 Եկավ Քրմկա բերդը պատեց,

Քրմուկ բերդը (Քրմուկի) պատմական Զավախքի միջնադարյան ամ-  
րոցներից է, Քուս գետի ձախ ափին: XII—XIII դարերում եղել է Զա-  
վախքի Զաքարյանների նստավայրը: Բերդի ավերակները պահպանվել են  
մինչև մեր օրերը և լավ երևում են գետի հակառակ ափին գտնվող բարձ-  
րադիր Գյումուրդա գյուղից (այստեղից էլ բերդը դիտել է Քումանյանը  
1901 թ. այցելության ժամանակ):

548

83 — Հե՛յ, քաջ Քարույ, կանչեց Շահը,

Պոնտի հերոսը՝ Քրմուկ բերդի իշխան Քաթուլը, պատմական-իրական  
անձնավորություն չէ (որն է գրավոր կամ բանահյուսական աղբյուրի մեջ  
նա չի հիշատակվում), այն բանաստեղծի գեղարվեստական երևակայու-  
թյան կերտվածքն է:

49 Իրան, Քուրան ողջ եկել են,

Նադիր Շահի թագավորության՝ Իրանի հետ միասին հիշատակելով  
նաև միջինասիական Քուրան երկրամասը՝ Քումանյանը ցանկացել է ստեղ-  
ծել պատկերվող արշավանքի և նահատամարտի վիպական հիպերբոլիկ  
պատկերացում:

79 Մով են աչխեր Զավախքի դրսեր,

Զավախքը հետո եղել է Մեծ Հայքի հյուսիսային գավառներից մեկը,  
իսկ ներկայումս ընդգրկում է Վրացական ԽՍՀ Ախալցխայի, Ախալքալաքի,  
Ասպինձախի և Բողղանովկայի շրջանները: Զավախքում են ծավալվում  
«Թմկաբերդի առումը» պոեմի դեպքերը:

82 Որ բարձր Աբուլի գագարն է ծածկում:

Նկատի ունի Մեծ Աբուլը, որը Զավախքի ամենաբարձր լեռնագագաթ-  
ներից է: «Փարվանա» բալլադում այդ լեռն ստացել է «Բարձրագահ Աբուլ»  
մականրը:

91—92 Խալես է ասել ճրճուց էլ մասին  
Ֆարսի բյուլբյուլը, անմահ Ֆիրդուսին.

Ֆիրդուսին X—XI դարերի պարսիկ մեծ բանաստեղծն է, «Շահնամ»  
էպիկական վիթխարի ստեղծագործության հեղինակը: Ֆարսը Հարավային  
Իրանի նահանգներից է, միջնադարյան իրանական պետության կենտրոններից  
մեկը, Գլխավոր քաղաքը Շիրազն է, որը հռչակված է եղել իր պարտեզնե-  
մեկը:

549

րով, վարդերով ու ստիակներով: Տարս (Պարս, Պարսկաստան) է կոչվել նաև իրանական պետությունն ամբողջությամբ վերցրած: Այդ հիման վրա էլ Քումանյանի պոեմում «Քախական աշուղը» Ֆիրդուսուն «Տարսի բյուրջով» է անվանում:

Պոեմի IV գլուխն ամբողջությամբ (91—110 տողեր) զբված է իբրև պարսիկ մեծ վիպերգակի մտքերի ու պատկերների վերապատում: Սակայն պետք է ենթադրել, որ զա բանաստեղծական հնարանք է ստեղծված «Քմկաբերդի առումի» պարսիկ թարգմանիչներ Սայեն ու Նադերփուրը վկայել են, «որ այս տողերի պարսկական բնագիրը գտնելու իրենց և մի քանի շահնամեղանների ջանքերը ապարդյուն են անցել» (տե՛ս «Գարուն», 1970, № 10, էջ 62): Պետք է կարծել, որ Քումանյանը ոչ թե վկայակոչում է Ֆիրդուսու պոեմի որևէ կոնկրետ հատված, այլ նրա անունը հիշատակում է՝ աշուղի խոսքին արևելյան ոգի և գունավորում տալու համար:

108 Ռուստեմ Զայն էլ չի հաղթիլ նրան,

Ռուստեմ (կամ Ռուստոմ) Զալը Ֆիրդուսու «Շահնամեի» գլխավոր դրուական հերոսն է:

126 Արյունը հոսում էն Քրդի նրման:

Քուռ գետը, սկիզբ առնելով պատմական Հայաստանի լեռներից, անցնում է նաև Զավախքի տարածքով:

182 Կախեթի գինին խելագար հասել:

Արևելյան Վրաստանի Կախեթի շրջանը հնուց ի վեր հռչակված է եղել իր գինիներով:

Հին կոնիւլ  
(էջ 59, 301)

Պոեմի պահպանված մասերն առաջին անգամ տպագրվել են. ա) Առաջին երգը («Տանը») իր նախերգանքով՝ Հր, 1915, 29 հոկտեմբերի, № 243, էջ 2—3, «Անտիպ պոեմից» նշումով և ապա՝ «Առաջին երգը. Տանը» վերնագրով:

բ) Երրորդ երգը («Երկրում») տպագրվել է ավելի վաղ՝ «Ժամանակ» թերթում, 1907, 1 հունվարի, № 1, էջ 2, «Լեոնի կոնիլը (մի հատված պոեմից)» վերնագրով, առանց նախերգանքի: Հաջորդ տարի՝ 1908 թ. պոեմի այդ մասը մտել է ԲՔ ժողովածուի մեջ (էջ 211—218), «Երկրում» վերնագրով և «Հատված» նշումով, դարձյալ առանց նախերգանքի: Նույն տեքստը կրճատումներով (ընդամենը 114 տող) տպագրվել է նաև «Հայ բանաստեղծներ» գրքում (կազմեց Հ. Քաչազնունի, Բաթու, 1908, էջ 104—109):

գ) Պոեմի կորած երկրորդ երգի («Ճամփին») նախերգանքը «Հայոց լեռներում» վերնագրով՝ «Երկիր» թերթում, 1906, 24 դեկտեմբերի, № 70, էջ 2: Այնուհետև, իբրև ինքնուրույն բանաստեղծություն, գետնադրվել է ԲՔ, ՀՀ և ԲՊ ժողովածուների մեջ (տե՛ս սույն հրատարակության 1-ին հատ., էջ 206—207 և ծանոթագրությունը՝ էջ 608):

Պոեմի հիշյալ երկու մասերն իրենց նախերգանքներով Քումանյանի կենդանության ժամանակ տպագրվել են ՀՀ (էջ 8—32) և ԲՊ (էջ 215—237) ժողովածուներում: Այնուհետև, մոտ 40-ամյա ընդմիջումից հետո՝ ԾԺ VI, էջ 36—50:

Ներկա հրատարակության համար հիմք է ընդունվել ԲՊ բնագիրը, որը չի տարբերվում ՀՀ-ից (բացառությամբ մեկ՝ առաջին երգի 304 տողի): Ի տարբերություն նախորդ հրատարակությունների՝ առաջին («Տանը») և երրորդ («Երկրում») երգերի միջև զետեղվում է կորած երկրորդ մասի («Ճամփին») նախերգանքը՝ «Հայոց լեռներում», թեև այն իբրև առանձին բանաստեղծություն տեղադրվել է նաև սույն հրատարակության 1-ին հատորում: Այս հարցում խմբագրությունը հետևել է նույն այն սկզբունքին, սորում: Այս հարցում խմբագրությունը հետևել է նույն այն սկզբունքին, որով «Նախերգանք (Լեոնի, ներշնչված դարձյալ ձևզանով...)» բանաստեղծությունը



քով — հղիցի լո՛ւս...» (Ծժ V, 202): «Ազգային մեծ պոեման», անտարա-  
կաս, «Հին կոիվն» էր, որը պետք է ամփոփեր հարազատ ժողովրդի պատ-  
մաւթյան, ներկայի և ապագայի մասին բանաստեղծի պատկերացումները,  
ազգային գոյութեան թումանյանական փիլիսոփայութիւնը: Հիշյալ նամա-  
կից մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 6-ին, բանաստեղծը նույն հասցեատիրոջը  
գրում էր. «Ասում ես մի տխրիլ, որ դավաճանում ես քեզ իբրև ազգային  
բանաստեղծի: Ես չեմ տխրում, որովհետև խոր ու լայն զգում եմ, որ վշտոտ  
ազգը, տառապած ազգը շարժվում է իմ մեջ, ուզում է խոսել: Հենց այս էր,  
որ ասում էի մի ազգային, մեծ պոեմա եմ ձեռք, բայց ծալում հետաձգում  
եմ» (Ծժ V, 205):

Բանաստեղծի այս խոսքերը հիմք են տալիս ասելու, որ ո՛չ այդ ժա-  
մանակ, ո՛չ էլ 1902 թ. «Աբասթումանի աշնանը» այս պոեմը լիովին չի  
ավարտվել (այդ պատճառով էլ չի մտել ԲԹ ժողովածուի մեջ): Պետք է  
ենթադրել նաև, որ աշխատանքը պոեմի վրա շարունակվել է հաջորդ մի  
քանի տարիներին, հավանաբար՝ մինչև 1906 թ.: Այդ թվականի վերջին  
Թումանյանը տպագրութեան է հանձնում երկու հատված պոեմից («Հայոց  
լեռներում», «Երկրում»): Պոեմը, որն այժմ բաղկացած էր հինգ մասից,  
էպոս նոր տեսք ստացավ (անշուշտ այդ են ակնարկում բանաստեղծի՝  
մեզ արդեն ծանոթ խոսքերը. «Պոեմը թեև գրելիս բոլորովին փոխվեց և  
արդէ բան դուրս եկավ...»): Գլխավոր հերոսի անունը լեռնի փոխարեն  
գործավձ Վահան: Ասվածի հիման վրա «Հին կոիվը» պոեմի այս երկրորդ  
տարբերակը հիմնականում պետք է համարել 1902—1906 թվականների  
ստեղծագործութուն (տե՛ս այդ թվագրութեան հիմնավորումը նաև սույն  
հրատարակութեան 3-րդ հատորի ներածական հոդվածում, էջ 486): Բա-  
ցառված չէ, սակայն, որ այդ խմբագրութունն էլ բանաստեղծին չի բա-  
վարարել, և նա հաջորդ տարիներին (1907—1910) ինչ-որ շափով շարու-  
նակել է աշխատել այդ երկի վրա:

Բայց իր հինգ մասերով հիմնականում ավարտված և, դատելով պահ-  
պանված հատվածներից, Թումանյանի էպիկական տաղանդի ամենախոշոր  
ու կատարյալ կերտվածքներից մեկը շատ դժբախտ ճակատագիր ունեցավ:  
Բանաստեղծի տանը կատարված մի խուզարկութեան ժամանակ բռնա-  
գրավված ուրիշ թղթերի հետ ժանդարմական վարչութունը տարավ նաև  
«Հին կոիվ» ձեռագրերը, որոնցից այդ ժամանակ միայն մեկ գլուխ՝ երրորդ  
մասն էր տպագրվել («Երկրում»): Պոեմի ինքնագրերը պարունակող հինգ  
տետրերը անհետ կորան և այլևս բանաստեղծին չվերագործվեցին: Թղթերի  
բռնագրավումը տեղի է ունեցել 1911 թ. հունվարի 19-ին, երբ բոսիականու-  
թյան գործակալները հանկարծակի ներխուժում են «Հորիզոն» թերթի խմբ-  
բագրութուն, ապա խուզարկութուն են կատարում նաև Թումանյանի բնա-  
կարանում՝ վերջի պահեստ և դաշնակցական կուսակցութեան գաղտնի փա-  
տաթղթեր հայտնաբերելու նպատակով: Թումանյանը և «Հորիզոնի» խմբա-  
գրութունում գտնվող մի շարք անձինք (Ա. Շիրվանզադե, Ե. Լալայան, Մ.  
Ավետիսյան և ուրիշներ) ձերբակալվում և տարվում են Թաղային ոստիկա-

նատուն: Այդ մասին հի.ատակութուններ կան Ստ. Ախիջյանին 1911 թ.  
ապրիլին Թումանյանի գրած մի նամակում «ՌԻԷ—1, 380—381»), Մարգար  
Ավետիսյանի հուշերում (ԹժԷ, 189) և այլուր: Զերբակալութեան հանգս-  
մանքների քննութիւնը տե՛ս Լ. Կարապետյան, Թումանյանի հասարակական  
գործունեութիւնը և Քիֆլիսի պահանջական բաժինը, ՌԻԷ—3, էջ 100—122:

Թումանյանի այս բանտարկութունը թեև տևեց ընդամենը մեկ օր,  
բայց պատճառ դարձավ նրա ստեղծագործութեան շատ էջերի անդարձ  
կորստյան: Այդ մասին բանաստեղծը գրել է մի քանի անգամ: Առաջինը  
այն դիմումն է, որ նա հղել է Քիֆլիսի նահանգական ժանդարմական վար-  
չութեանը, բանտարկութունից մի քանի օր հետո՝ 1911 թ. հունվարի 28-ին:  
Ստորև բերվում է այդ դիմումի լրիվ տեքստը հայերեն հարգմանութեամբ  
(ռուսերեն բնագիրը տպագրվել է ՌԻԷ—3, էջ 350):

«Քիֆլիսի նահանգական ժանդարմական վարչութեանը՝  
Հովհաննես Տեր-Թադևոսի Թումանյանից

Գ ի մ ու մ

Իմ բնակարանում այս հունվարի 19-ին ժանդարմական վարչութեան  
հրամանով կատարված խուզարկութեան ժամանակ վերցրել են իմ ձեռագրե-  
րը: Այս ամսի 27-ին ես ետ ստացա ձեռագրերի պարկը, որոնց մեջ երկու  
կապոց իմը չէին, այլ Կոլմանովայինը, իսկ իմ ձեռագրերից պակասում  
են մի քանի անավարտ և անտիպ պոեմ, հեքիաթ և մեկ դրամա, որոնք  
շատ թանկ են ինձ համար: Ոչ մի բուպե չեմ կասկածում, որ ժանդարմա-  
կան վարչութունը դրանք պահած լինի նրանց անլեզալ բնութի պատճա-  
ռով: Ուստի Կոլմանովային վերագործնելով այն կապոցները, որոնք մտցվել  
են իմ կապոցների թվի մեջ, խոնարհաբար խնդրում եմ գանել և վերա-  
դարձնել ինձ իմ ձեռագրերը, իսկ եթե դրանք ինչ-որ պատճառով պահվել  
են, ապա խնդրում եմ բարի լինել հաղորդել ինձ:

Հովհ. Թումանյան

28 հունվարի 1911 թ.

ք. Քիֆլիս  
Վոզնեսենկայա փող. № 18ա:

Այս դիմումը որևէ արդյունք չտվեց: 1911 թ. հոկտեմբերի 31-ին հա-  
ջորդեց Թումանյանի նոր ձերբակալութունը, իսկ մյուս տարվա սկզբին՝  
դատավարութունը Պետերբուրգում: Միայն մի քանի տարի անց բանաս-  
տեղծն առիթ ունեցավ նորից հիշեցնելու իր կորցրած ձեռագրերի մասին,  
այս անգամ՝ հայկական մամուլի էջերում: 1915 թ. աշնանը, հրապարա-  
կելով «Հին կոիվը» պոեմի առաջին մասը («Տանք»), նա անհրաժեշտ հա-  
մարեց հասարակութեանը ներկայացնել այդ երկի կորստյան պատմութունը:





Այս պոեմի սյուժեն սովորական է այն երկերի համար, որոնց մեջ երգվել է այդ «հին կոիվը»:

Երիտասարդ հեղափոխականների մի խումբ, պոեմի հերոսի գլխավորությամբ, մեկնում է «այնտեղ»՝ դեպի հայրենիք (Տաճկահայաստան), օգնելու թուրքական բռնության տակ տառապող հարազատ ժողովրդին: Երիտասարդների առաջին մարտը տեղի է ունենում մի հայկական գյուղում, ուր քուրդ բեկը գյուղական քահանայից պահանջում է նրա գեղեցկուհի աղջկան:

Երիտասարդները պաշտպան են կանգնում գեղեցիկ Շողիկին: Քուրդ բեկը ընկնում է՝ գնդակից խոցված, գյուղում ահազանգ են խփում, գյուղացիները ոտքի են կանգնում՝ որը գնեքով, որը բահով ու եղանով, և վեճում են բռնադատչներին: Սակայն պայքարը խիստ անհավասար էր, և թշնամու նոր հորդանների ճնշման տակ ապետամբ գյուղացիները հեռափոխականների հետ ստիպված են լինում թողնել իրենց հարազատ օջախները և նահանջել դեպի Սասուն՝ դեպի այն լեռնային անտիկ շրջանը, որը վերջին երեսուն տարիների ընթացքում դարձել էր հայության ապստամբումների և ազատագրական պայքարի հենքը:

Հայ գրականության մեջ քիչ են այն երկերը, որոնց մեջ այնպիսի դարմանալի էպիկական պարզությամբ ու խորությամբ տրված լինելին կեղծված հայ գյուղի ամբողջ դառը վիճակը և անհնազանդ, մշտապես գեղեցիկին ձգտող հայ ժողովրդի սգու պայքարի ողջ վեճակությունը, ինչպես «Հին կոիվը» պոեմում:

Սակայն այստեղ մենք ուզում ենք նշել մի բան: Պոեմի վերջին, նույնպես կորած գլխում, որը վերնագրված է «Ժողովրդի մեջ», պոեմի հերոսն անհաջող ապստամբությունից հետո կրկին լեռներից իջնում է հովիտները, որպեսզի ժողովրդին նորից պայքարի կոչի: Եվ շրջելով հայկական, քրդական ու թուրքական գյուղերը, նա, ի զարմանա իրեն, համոզվում է, որ ժողովուրդը դժբախտ է ոչ միայն ճնշված հայերի, այլև ճնշող քրդերի ու թուրքերի գյուղերում:

Եվ հերոսի հոգում կատարվում է այն հեղաշրջումը, որ խորտակում է «Երբայցուցու հելինացուց»՝ հային քուրդից բաժանող բոլոր արհեստական միջնորմները: Նրա առջև կանգնում է տառապալո մարդը, որին և կոչում է պայքարի՝ հանուն բոլոր մարդկանց ազատագրման ու երջանկության:

Այսպիսով, բանաստեղծը աղագային ցավի ու տառապանքի բուռն ունցնում է դեպի համամարդկային վիշտը:

Արևելյան բունապետությունները մի անգամ չէ, որ ձգտելով խելոյել հայ ժողովրդի ազատասիրական մղումները, նրա դեմ են հանել հարևան, նրա հետ կողք կողքի ապրող ժողովուրդների մոթ, անգիտակից զանգվածներին: Եվ պետք էր շատ պայծառ գիտակցություն և մարդկային մեծ սիրտ ունենալ, որպեսզի ընթացվել բանաստեղծի հայացքը, և նա ճնշողների մեջ տեսներ նույնպիսի դժբախտ մարդկանց, ինչպիսին որ ճնշվածներն են» (Вардгес Агаронян, Национальная скорбь в поэзии

Ов. Туманяна, «Орион», Литературно-политический ежемесечник, Тифлис, 1919, № 1, с. 72—73).

Պետք է ավելացնել, որ մինչև վերջ էլ Թումանյանը չի հրատարակել այս պոեմին վերադառնալու և ամբողջապես ընկրակված մտքից: 1923 թ. հունվարին մահամեժք բանաստեղծն ասել է. «Ինչ 90-ական թվականներին գրում էի «Հին կոիվը», մենք կիսատ, անմշակ, դեռ կգրեմ, կմշակեմ: Էնթան արագ եմ անցել, ու նույնիսկ վրա չեմ հասցրել գրել, վերջացնել...» (Ն. Թումանյան, \* էջ 304):

Հատուկ քննություն է պահանջում պոեմի կենսական աղբյուրների ոչ նախատիպերի խնդիրը: Թեև 1919 թ. նշված հոդվածում Թումանյանը հիշատակել է միայն Ստ. Զորյանի (Ռոստոմի) պատմածը «մի տերտերի ու իր աղջկա» մասին, բայց պոեմի գրության աղբյուրները շատ ավելի լայն են եղել: Ստեղծագործության կենսական հիմքը, լայն առումով, հայ ազգային-ազատագրական շարժման այն նոր փուլն էր, որ սկսվել էր ազգային-ազատագրական շարժման այն նոր փուլն էր, որ սկսվել էր գարավերջին, ժողովրդի ողբերգական կորուստների և հերոսական դիմադրության փաստերի ծնած հոգեբանական կորուստների միջնորդությամբ: Ինչ վերաբերում է երրորդ գլխի մեջ պատմված դեպքին (գյուղական քահանայի աղջկա բռնի ամուսնության դրվագը), որը կենտրոնական տեղ է գրավել պոեմի սյուժետային ողջ կառուցվածքի մեջ, ապա այն իրական-պատմական հիմք ունի և ժամանակին լայն արձագանք է գտել հայ և օտարերկրյա մամուլում:

1889—1890 թթ. հայ հասարակությանը մեծ հուզում պատճառեցին Մշո զավառի խարս գյուղում կատարված դրամատիկ իրադարձությունը և նրան հաջորդած դեպքերը: Քուրդ ցեղապետ Մուսաբեկը 1889 թ. մարտի 23-ին առևանգում է գեռատի հայուհի Գյուլիզարին՝ ցանկանալով բռնի կնություն վերցնել նրան: Այդ դեպքի շուրջ մեծ ալմուս է բարձրանում, գյուղացիների բողոքները Պուսի հայ պատրիարքարանի միջոցով հասցվում են կառավարությանը և օտարերկրյա դեսպանություններին: Այդ գործում են կառավարությանը և օտարերկրյա պապահ հայտնի գյուղագիր Գևղամ Տեր-կարապետյանը (Մշո Գեղամ), որը հետագայում դարձավ քուրդ ցեղապետի ձեռքից ազատված Գյուլիզարի ամուսինը:

Միազգային հասարակական կարծիքի առջև արդարանալու և օրինականության պատրանք ստեղծելու համար թուրքական կառավարությունը համաձայնեց Պուսում կազմակերպել Մուսաբեկի բաց դատավարությունը: Սակայն սկզբից եեթ պարզ էր, որ դա թատերական ֆարս է լինելու և թեև ճարպիկ ավագակապետը գործին կարողանա այն ընթացք տալ, որ վաղը լսենք, թե Մուսաբեկը «արդարության» ատյանից դուրս է եկել իբրև մի անմեղ զրպարտված» («Արձագանք», 1889, 13 օգոստոսի, Մ 31, «Տաճկահայաստանի դեպքերի մասին» առաջնորդող, ստորագրություն՝ Ե., էջ 463): Իրոք, երկու ամիս անց նույն թերթը հաղորդեց, որ «Մուսաբեկին բուրդովին ներումն է շնորհված, շնայելով, որ նրա հանցավոր լինելը լիոբություն էր» («Արձագանք», 1889, 22 հոկտեմբերի, Մ 40, էջ 585): վին ապացուցված է» («Արձագանք», 1889, 22 հոկտեմբերի, Մ 40, էջ 585):

Գյուլիզարի առևանգման և Մուսաբեկի դատավարության մասին հայկական մամուլում բազմաթիվ նյութեր են հրատարակվել: Միայն «Արձագանք» շաբաթաթերթը, օրինակ, մեկ տարվա՝ 1889 թ. ընթացքում, այդ հարցերին անդրադարձել է մոտ քսան անգամ: «Արաքս» հանդեսը «Արձագանք» մը Մշո աշխարհէն» վերտառությամբ տպագրեց Գյուլիզարի պատմածը իր գլխով անցածի մասին: Դատարանում նա հպարտությամբ ասել է. «...Ոս հայ եմ, մայրն կը մեռնեմ... Ձիս քերթեք, սպանեք, ես հայ եմ, իմ կրոնքն չիմ դառնա» («Արաքս», 1890, Ա գիրք, 2-րդ մաս, էջ 14): Հետաքրքիր է, որ նույն դեպքերի թարմ տպավորության տակ պե՛տք գրելու փորձ է արել Գրիգոր Արժրունին, թեև նա ինչ-ինչ նկատառումներով գործողությունը տեղափոխել է մեկ առանձնակ հետ՝ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանը: Այդ պիեսը («Գյուլիզար»), որից միայն 1-ին գործողությունն է գրվել, մնացել է «Մշակի» արխիվում և տպագրվել է շատ տարիներ անց (Տղ, 1912, № 5, էջ 86—90), խմբագրության ծանոթագրությամբ, որի համաձայն դեպքը վերաբերում է «հայտնի ավազակ Մուսաբեկի վայրագությունների օրերին»:

Այսպիսով, պոեմի սյուժետային առաջը ճենվում է իրական կենսական փաստի վրա, որի մասին թուփայնված իմացել է, անշուշտ, ոչ միայն Բոստոնի պատմածից, այլև հայ մամուլի լայն արձագանքներից: Սակայն բանաստեղծն իր առջև նպատակ չի դրել տառացի ճշտությամբ վերարտադրել եղևությունը՝ նա փոխել է ոչ միայն հերոսուհու անունը (Գյուլիզար—Շողիկ), այլև նրա կենսագրության և ճակատագրի հետ կապված շատ հանգամանքներ (պոեմի հերոսուհին, ի տարբերություն իրական նախատիպի, չի առևանգվում և չի անցնում տանջանքի ու դատավարության միջով,— նա ըստ սյուժեի պետք է փրկվի ղեկավար երիտասարդների շնորհիվ): Շատ տարբերություններ կան նաև իրական Մուսաբեկի և պոեմի մեջ պատկերվածի միջև: Թումանյանի համար կարևորը եղել են ոչ թե դեպքերի կենսական հավաստիությունը կամ կենցաղային մանրամասնները, այլ նրանց պատմաքաղաքական և սիմվոլիկ-փիլիսոփայական նշանակության բացահայտումը:

Կենսական մյուս իրողությունը, որն արտահայտվել է պոեմի մեջ, տառապող արևմտահայությանը օգնելու համար Կովկասից Տաճկաստան գնացող անձնագոհ երիտասարդների պատկերումն է: Այդ գիծը, դատելով պահպանված մասերից և կոնսպեկտային գրառումներից, անցել է ամբողջ պոեմի միջով: Դա է, որ հիմք է տվել պոեմն անվանելու «Հին կոիվը»,

1 Գյուլիզարի պատմության և նրա արձագանքների մասին տե՛ս նաև՝ Թեղիկ, Ամենուն տարեցույցը, Ժ—ԺԴ տարի, 1916—1920, էջ 151—152 («Մուսա բեկ և Կյուլիզար»): Արմենուհի Տեր-Վարապետյան (Գևորգյան), Գյուլիզար, Նշխարներ Մշո Գեղամեն, Փարիզ, 1946: Սարգիս և Միսակ Բղեյաններ, Հարադատ պատմություն Տարնո, Գահիրե, 1962, էջ 42—45: Հ. Բ. Պետրասյան, Գեղամ Տեր-Վարապետյան (Մշո Գեղամ), Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1983, էջ 25—30:

բայինքն՝ դարերի խորքից եկող և անվերջ հարատևող պայքար ազգային-ազատագրության և մարդկային իրավունքների համար: Այդ գծի հիմնական կրողը պոեմի գլխավոր հերոս Վահանն է (նախապես՝ Առն), որը հանդես է գալիս իբրև անձնագոհ, գործնական հայրենասիրության կենդանի մարմնացում: Վահանը, անշուշտ, հավաքական կերպար է, բայց նրա գլխավոր նախատիպը Ալեքսանդր (հետագայում՝ Վարդան) Գուրջյանն է եղել՝ նոր շրջանի հայ ազատագրական շարժման առաջին հերոսներից ու նահատակներից մեկը:

Ալեքսանդր Գուրջյանը (1867—1889) իր կարճատև կյանքի վերջին հինգ-վեց տարիները նվիրաբերեց արևմտահայության ազատագրական պայքարին: Թողնելով Թիֆլիսում ապրող իր ընտանիքը, հայրենասեր պատանին նախ Կովկասից անցնում է Պարսկահայք, Սալմաստի շրջանի գյուղերը, իսկ այնտեղից, ասեք կրկնելով Բաթթու «Կայծեր» վեպի հերոսների ուլին, ստեղծափոխվում է Թուրքահայաստան, ուր զբաղվում է ազատագրական գաղափարների տարածմամբ, ժողովրդին ինքնագաղափարության պատրաստելով: Նրա հայրենանվեր աշխատանքի համարվելը շատով հասնում է Թիֆլիս, և պատանի Թումանյանը լավ գիտեր նրա մասին: Այդ է վկայում դեռ 1885 թ. նրա գրած բանաստեղծությունը՝ «Թող փչե քամին՝ երգի եղանակով», որը նվիրված է Եղեպի Հայաստան՝ մեկնող, հեղափոխության, ցավի կարեկից» լինելու համար իրեն նվիրաբերած պատանի Աղեքսանդր Գուրջյանին (տե՛ս սույն հրատ., հատ. 1, էջ 320—324):

1887 թ. հուլիսից մինչև 1888 թ. հուլիս, ուղիղ մեկ տարի, Գուրջյանը եղել է հայրենի Թիֆլիսում, ուր հանդիպումներ է ունեցել տեղի առաջավոր երիտասարդության հետ: Այդ ժամանակ էլ, պետք է ենթադրել, կայացել է Գուրջյանի և Թումանյանի անձնական ծանոթությունը: Ոգևորված Ալեքսանդրի գաղափարներով և գործերով, պատանի բանաստեղծը մի պահ նույնիսկ ցանկացել է հետևել նրան՝ անցնել Արևմտյան Հայաստան և նվիրվել ազգային-ազատագրական պայքարին: Դրան խանգարել է ծանր հիվանդությունը և ապա, թերևս, ամուսնությունը: Հետագայում կատարած գրառումների մեջ Թումանյանը նշել է. «1886—ուսումնարանից դուրս գալու հեղափոխականներ» — Գուրջյան — հիվանդություն, կոնսուստրիա, ամուսնություն» (ՈՒՇ—2, 418):

Բանաստեղծի այրին՝ Օլգա Թումանյանը, իր հուշերում վկայում է. «Մի օր էլ եկավ, թե՛ քեզ եմ պարտական, կյանքս ազատեցիր: Ասում եմ՝ ինչո՞վ, ի՞նչ է պատահել: Ասաց.

— Չե՞ս իմանում, Ալեքսանդր Գուրջյանի հետ որոշեցինք զնալ Տաճկահայաստան, հայրենիքն ազատելու, ես էլ իմ ամառվա վերաբոկոս ծախեցի, մի ատրճանակ առա, պետք է զնայի: Մեր նշանվելու պատճառով իմ գնալը հետաձգվեց, իսկ զնացողները սպանվել են ճանապարհին» (ԹժՁ, 329):

Վարդան Գուրջյանը և նրա ընկեր Շովհաննես Ազրիպայանը զոհվել են 1889 թ. մայիսի 17-ին, Վանից ոչ հեռու մի կիրճում, անհավասար մի կովի ժամանակ: Նրանք շտապում էին դեպի Մուշ՝ հենց Մուսաբեկի ավակովի ժամանակ: Նրանք շտապում էին դեպի Մուշ՝ հենց Մուսաբեկի ավակովի ժամանակ: Նրանք շտապում էին դեպի Մուշ՝ հենց Մուսաբեկի ավակովի ժամանակ:

զակախմբի զսերին օգնութեան հասնելու համար: Խիզախ պատանիների շարքերգական վախճանի մասին հրեցին հայկական շատ լրագրեր, այդ թվում նաև Թիֆլիսում լույս տեսնող Թերթլերը (տե՛ս, օրինակ, «Մշակ», 1889, № 70, «Նոր-դար», 1889, № 99), և Քումանյանը, ահշուշտ, լավ ծանոթ էր այդ նյութներին:

«Հին կովի» մեջ բնդհանուր գծերով արտացոլվել է Գոլոշյանի սիրալի կյանքի ուղին, նրան բնորոշ հայրենասիրական անձնագոհությունների և այլա-սիրության գաղափարները: Վարդան Գոլոշյանի նման՝ պոեմի հերոս Վա-հանն էլ հանդես է գալիս իբրև մի անձ, որը գիտակցաբար իր կյանքը նվիրաբերել է հայրենակիցների փրկության նպատակին: Դա լավ է երե-վում, հատկապես, Վահանի այն նամակից, որ նա ուղարկում է իր ծնող-ներին՝ տնից անհետանալուց հետո (Գոլոշյանի կենսագրությունից հայտնի է, որ նա ևս մի քանի անգամ հետացել է հայրենական անից՝ բռնելով աղատագրական պայթարի ուղին): Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ այս կերպարն ստեղծելիս Քումանյանը, բացի Գոլոշյանի սիրանքի մասին լսած ու կարդացած հայտնի տվյալներից, ներշնչանք է ստացել նաև այն նամակներից, որ թափառող հերոսը տարբեր վայրերից հղում էր հարա-զատներին: Նախ վերջինք Վահանի նամակի տողերը՝ պոեմի «Տանը» գլխի վերջում.

Ասում է՝ իզուր էլ մի՛ փնտրեք ինձ.  
էլ մի՛ փնտրեք ինձ ու մընաք բարով...  
— Գուր ինձ կյանք տվիք, դուք ինձ մեծացրեք,  
Բայց քանի այսքան ցավ կա աշխարհքում,  
Իմ կյանքն իմը չի, իմ սիրտն իմը չի,  
Չեմ կարող հանգիստ մընալ ձեր գրրկում:  
Ցավի աշխարհքում արնոտ ու ասեղ  
Ուրիշ նոր կյանք է բացվել ինձ համար.  
Ուրիշ հայրեր են մընում ինձ էնտեղ,  
Ուրիշ մայրեր են կանչում անդադար...  
Ներեցե՛ք, որ ձեզ թողնում եմ էդպես  
Անկար, անխնդում, ձերության օրով,  
Ներեցե՛ք ձեր խենթ, խելագար որդուն,  
Մոռացեք նըրան ու մընաք բարով...

1 Գոլոշյանի հեղափոխական գործունեության մասին հետազոտում բա-վական գրականություն է ստեղծվել: Տե՛ս, մասնավորապես. Առ, Հայ հերոսներ, Երևան, 1920, էջ 27—72, Գ. Անանուն, Վարդան Գոլոշյան և իր շրջանը, «Նորք», 1924, գիրք 4, էջ 328—361 (հոդվածի շարունակությունը չի տպագրվել), Հ. Մ. Պողոսյան, Ալեքսանդր Գոլոշյան, «Լրաբեր հասա-րակական գիտությունների», 1989, №5, էջ 48—55 և այլն: Քումանյանի և Գոլոշյանի կապերի մասին տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 142—144, 197—200:

Որոշակի բնդհանուրություններ կան այս տողերի և Ա. Գոլոշյանի նա-մակների միջև: Բերենք մի քանի օրվածք.

Գեռ 1883 թ. դեկտեմբերին, առաջին անգամ հայրենի տնից հեռանա-լիս, պատանի հերոսը իր ծնողներին գրում էր. «Այն ընկերությունը, որին նորվեցի հլու ծառու և ստրուկ լինել՝ հրամայում է ինձ գնալ Պոլիս: Ես հնազանդվում եմ, գնում եմ առանձին անցագրով և ծպտյալ: Ուրեմն իղուր չհետևեք: Մնաք բարով»:

1884 թ. Վանից գրած նամակից. «Ես մղվում էի մի անհաղթահարելի ուժով և չէի կարող այլապես վարվել»:

1888 թ. հուլիսի 21-ի նամակից. «Երկու զգացմունքի մեջ եմ եղել վերջին հինգ տարիներում. կամ ընտանիքը զոհել հայրենիքին և կամ հա-կառակն անել: Ընտանիքի և ապա շրջանի կրթությունը ինձ անել է տալիս առաջինը: Ես վճեցի զոհել ամեն ինչ մեր Հայրենիքի համար: Ես որոշեցի լինել ապերախտ որդի, տանջանք տվող զավակ: Հայի զավակի տխուր վիճակը սա է: Ես անկարող եմ գրում ինձ անտես անել հայրենիքի շահերը և զորություն էլ շունեմ ձեզ անբախտացնելու: Իսկ իմ հայրենիքի աղա-տության գործին անձնատուր լինելով ես ձեզ մեծ զորախուսություն եմ հասցնում: Եվ ես որոշեցի տալ ձեզ անբախտություն, որպեսզի շատ հայ ընտանիքների արտասուքը սրբել կարողանամ...»:

Նույն շրջանում գրած մի ուրիշ նամակից. «Կրկին համբուրում եմ ձեզ, համբուրում եմ ձեզ, և մնաք բարով... Ցտեսություն, իմ տուն հայրական, իմ ծնողներ և բարեկամներ»:

Ջոհված հերոսի գրականում գտնվել է նրա վերջին գրությունը, ուր նա իր զավանանքը ձեռնկերպի է այսպես. «Տասնեկնեերորդ դարում ապրող մարդու համար ազատությունից զատ ուրիշ միջոց չկա, որի մեջ կա-րելի լինի շնչել... Ուրախությամբ կերթում մենանելու, իսկ դու, քաղցր Հայ-րենիք, սրբի արցունքս և ինձ համար սուգ մի բուհիք» (Ա. Գոլոշյանի նամակների օրվածքները բերվում են հետևյալ գրքից. Առ, Հայ հերոս-ներ, էջ 45—46, 51, 59—61, 71, իսկ հերոսի վերջին գրության տողերը տպագրվել են նաև ժամանակի հայ մամուլում՝ տե՛ս, օրինակ, «Մշակ», 1889, № 70):

Գոլոշյանի նամակների և պոեմի հիշյալ տողերի բնդհանուր տրամա-դրության, նույնիսկ առանձին արտահայտությունների համընկնումները շատ որոշակի են և, պետք է կարծել, պատահական չեն: Քումանյանը, ամե-նայն հավանականությամբ, ծանոթ է եղել Ա. Գոլոշյանի նամակներին, որոնք նա կարող էր կարգալ զոհված հերոսի հարազատների մոտ: Հայտնի է, որ այդ ընտանիքի հետ սպագա բանաստեղծը կապեր է ունեցել դեռևս 1884 թվականից, երբ մի որոշ ժամանակ ներսիսյան դպրոցի սանը ապ-րում էր Գոլոշյանների հարևանությամբ: Իսկ 90-ական թթ. նա մտերմացել էր հերոսի կրտսեր կրորդ՝ Գարեգինի և քրոջ՝ Դարյայի հետ, որին նույ-նիսկ բանաստեղծություն է նվիրել (մանրամասները տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 144, 200—203):

Տառապող հայրենակիցներին օգնության գնացող Վահանի և Նրա ընկերների երգը իր ազատասիրական բուն ոգով («Ազատության ուղիքն ենք մենք՝ Քրոսած դեպի ապագան», «Հե՛լ, զալիս ենք, ո՛վ տանջվածներ, Գալիս ենք մենք դինավառ, ե՛վ ազատ օր, և՛ կյանք, և՛ սեր—Ողջ բերում ենք ձեզ համար») շփման որոշակի կետեր ունի Գյուղչյանից մեզ հասած մի ոտանավորի հետ, որը նույնպես պահվում էր նրա հարապատների մոտ.

Հեռու մուսլ օրեր, բուպեք  
Կակձալի իմ գրության,  
Ճանանչելի ժամեր, եկե՛ք,  
Ցնծալի, քաղցր ազատության:  
Կեցցե՛, կեցցե՛ ազատություն  
Յուր քաղցրալից ապագայով,  
Կորչի՛ հավետ շար գերություն  
Յուր ցավալի մեշումներով:

(«Նորք», 1924, № 4, էջ 347)

Պոեմի առաջին նախերգանքում արտահայտվել են հայկական հարցի շուրջ մեծ տերությունների դիվանագիտական խաղերի մի քանի կոնկրետ փաստեր: Այսպես, 3—4-րդ տողերը («Մենք ասում էինք՝ անթիվ նավերով Կրդան օգնության մեր ծանր օրին») և նրանց հաջորդող հուսահատական քայակը («Ավա՛ղ մեր պայծառ հույսերի համար...») յուրովի անդրադարձնում են անգլիական դիվանագիտության (վարչապետ՝ լորդ Սոլսբերի) պիղատույան հայտարարությունը. «Մեր նավերը չեն կարող լողալ հայոց լեռների գագաթներին»:

9—10 տողերը՝ «Նրկրի մեծերը շեն փոխում իրենց Մեռելի ոսկրին ողջ ազգը հայի», գրեթե բառացի կրկնում են գերմանական կանցլեր Քիսմարկի այն ցինիկ խոսքերը, թե հայերի էություններին մասին ետոբ ասվածները «չարժեն գերմանական մի գինվորի փտած ոսկորներին»:

11—12 տողերը՝ «Մեր տունն են ուղում, մեր տեղն են ուզում, Մեր բուն երկիրը՝ մեզնից ամալի...», ինչպես նաև հաջորդ քառատողը («Նա էլ որ աստժու անունով եկավ, Փրկիչական խաչով, խոսքով գրթության...») ակնարկում են ցարական քաղաքագետների (Լորանով-Ռոստովսկի և ուրիշներ) հռչակած «Հայաստանն առանց հայերի» տմարդի սկզբունքը:

Մեծ տերությունների այդ հակահայկական ելույթներին Քրոմանյանն անդրադարձել է նաև իր հրապարակախոսության մեջ (տե՛ս, օրինակ, ԵԺ IV, 233, 301 և այլն):

Պոեմի բուն սյուժետային մասերը («Նրկրում» գլուխը և հաջորդ երկու՝ այժմ կորած գլուխները) կապված են Էդել Արմատյան Հայաստանի աշխարհագրական միջավայրի և կոնկրետ տեղանունների հետ՝ Տարոն, Մուշ, Տալվորիկ և այլն: Ինչպես տեսանք, այդ վայրերում են կատարվել նաև այն իրական դեպքերը, որոնք եղել են պոեմն ստեղծելու անմիջական ազդակը: Բացի այդ, Տարոնը և Մուշը իրենց ծնած պատմական հիշողու-

թյուններով հատկապես մոտ էին Քրոմանյանի սրտին, աննշվում էին այն պատմական ավանդության հետ, ըստ որի բանաստեղծի նախնիները X—XI դարերում հենց այդ վայրերից են տեղափոխվել Լոռի, մասնավորապես Գսեղ գյուղը (մանրամասները՝ Քրոմանյանի առհմարանության մասին հասցեագրության փաստաթղթերով, տե՛ս Ա. Իննիկյան, 11 և հաջորդ էջերը):

Այսպիսով, դարավերջին Տարոնում և վասպուրականում կատարված դեպքերը բանաստեղծի գիտակցության մեջ կապվեցին ոչ միայն ամբողջ Հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի, այլև ինքնակենսագրական երանգներ ունեցող պատմական հիշողությունների հետ: Այդ ամենը, միասին վերցրած, մղեցին նրան գրելու իր ժողովրդի մեծ պոեման, որը նրա ամենանշանակալի ստեղծագործական մտահղացումներից է, և որի ավարտված տարբերակի կերտմանը ոչ միայն Քրոմանյանի, այլև ողջ Հայ դրականության տարիգրության ողբերգական զրվագներից մեկն է:

Այս պոետի մտահոգացումը թումանյանի ստեղծագործական ծրագրերում առկա է եղել շուրջ երեք տասնամյակ՝ 1890-ական թթ. սկզբից մինչև մահ։ Սակայն այդ մտահոգացման վրա առավել լարված աշխատանքի շրջաններն են եղել, նախ, 90-ական թվականների կրկրորդ կեսը և ապա՝ 10-ական թվականների առաջին կեսը, երբ թումանյանը հավաքում և ուսումնասիրում է Հեքիաթի մի քանի տասնյակ հավակական և միջազգային տարբերակներ, զգալի աշխատանք է կատարում բուն պոետը գրելու ուղղությամբ։

Թեև պատանի բանաստեղծը այս ժողովրդական հեքիաթը լսել է դեռ 80-ական թթ. վերջին, բայց նրա ստեղծագործական մշակման մղումը ծագել է այն բանից հետո, երբ 1894 թ. ամռանը Լոռու վարդաբույր գյուղում թումանյանը լսում և գրի է առնում հեքիաթի մի տարբերակ, որը նա մինչև վերջ էլ համարում էր «ամենահիմն ու ամենալավը»։ Այդ ժամանակ էլ նա, բացի մի քանի ուրիշ բանավոր պատումների գրառումից, խոշոր աշխատանք է կատարում հայկական հեքիաթի միջազգային զուգահեռները հավաքելու և ուսումնասիրելու, նրա իրական իմաստը բացատրելու համար։ Տասնամյակի վերջում Փ. վարդազարյանին ուղղած մի նամակում թումանյանն այդ մասին գրել է.

«Պու գիտես, որ ես մի (իսկապես երկու հեքիաթ միասրած) հեքիաթ՝ «Հազարան բյուրբյուր» և «Սինամ թագավորի գաղտնիքը»—նյութ առած ուզում եմ հորինել մի արևելյան պոեմա։ Դրանով հետաքրքրվելով գտա, որ շատ անգամ տպված է, բոլոր ազգերն ունեն, պատմված է հազար ու մի-ձևով, մինչև անգամ գիտնականները մեկնություն են տվել, թե զարնան գալն է հեքիաթի առարկան, բայց այդ բոլորից հետո ես ոչ միայն լքողի իմ հեքիաթը, այլ ավելի պինդ բունեցի, ավելի ոգևորվեցի այդ նյութով—ով ինչպես ուզում է գրած լինի, ես էլ ինչպես եմ ասելու, և մինչև անգամ հանդգնություն ունեցա գիտնականների հակառակ իմ ունեցած մեկնությունը, միտքը նկատել հեքիաթի մեջ և այն պարզացնել ու երգել, ինչպես

դու գիտես—իմ կարծիքով բանաստեղծության ու մուղիկայի ծնունդն է հեքիաթի առարկան» (Ծժ V, 158. այդ հատորում տվյալ նամակը համաբավում է 1899-ին գրված, բայց, ինչպես հետագայում պարզվել է, այն վերաբերում է 1900-ին,— տե՛ս Ա. Իճեկյան, էջ 491, 518)։

Սակայն հեքիաթի այս բմբռնումը, ըստ որի այն խորհրդանշում է գեղարվեստի ծագումը, հետագայում խորացավ ու լրացվեց նոր կողմերով։ Ի վերջո թումանյանը հանդեպ այն մտքին, որ ժողովրդական հեքիաթի նվիրական իմաստը արվեստի միջոցով մարդու վերածնունդն և կատարելագործման գաղափարն է, որը և նա պետք է գներ իր ապագա ստեղծագործության հիմքում։ 1904 թ. օգոստոսին նույն հասցեատեղիցը գրած նամակում, անդրադառնալով այն հարցին, թե ինքն ինչպես է հասկանում իր, իբրև արվեստագետի, կոչումը, թումանյանն ասում էր. «Այդ հարցի պատասխանն է լինելու շատ ընդարձակ շահով «Հազարան բյուրբյուր» (Ծժ V, 276)։ վերջապես, 1912 թ., ողջունելով Հայոց երաժշտական ընկերության բացումը, նա գրում էր.

«Պուք գիտեք, որ ես շատ եմ սիրում հին խոսքը։ Եվ ահա մի հին զրույց, որ սիրել եմ առանձնապես, էսպես է ասում։

Պատահեց, ասում է, որ մի ժամանակ գազան դարձավ քեզույ՜ջ ու բանական մարդը։ Ինչ արին-չարին՝ հնար չեղավ գազանը նորից մարդ դարձնելու։ Վերջը հայտնվեց, որ հնարը միայն երգը-երաժշտությունն է։ Այսպես, մի քանի խոսքով վերապատմելով «Հազարան բյուրբյուր» նվիրական իմաստը, թումանյանը հեքիաթից անցնում էր ժամանակակից աշխարհին և իր ողջունյի խոսքն ավարտում հետևյալ կոչով. «Թո՛ղ բացվի վարագույրը, թո՛ղ հնչի նրա աստվածային ձայնը, և գազանը մարդ դառնա» (Ծժ V, 332)։

Թումանյանի բացատրիկ նվիրվածությունը «Հազարան բյուրբյուր» ստեղծման նպատակին պայմանավորված էր նախ և առաջ ժողովրդական պատումների մեջ իր հայանայի բառ այդ առաջատար գաղափարն ըստ ամենայնի խորացնելու և տարածելու ցանկությունը։ Նա այդ գաղափարին հասարակական և գեղագիտական բացատրիկ նշանակություն էր տալիս մարդկության պատմական ճակատագրի մեջ։

Թումանյանի ներշնչմամբ՝ «Հազարան բյուրբյուր» մոտիվները զգալի տեղ են գրավել «Վերնատուն» գրական խմբակի զրույցների և նրա անդամների ստեղծագործական որոնումների մեջ։ Այդ մասին նա ասել է. «Մի ժամանակ մեր վերնատունը շատ էր զբաղվում «Հազարան բյուրբյուրով. մեծ տրամադրություն կար և մեծ ազդեցություն արավ վերնականների վրա։ Դրանիցիկ «Կյանքի տեսիլը», Շանթի «Հին աստվածները» ազդեցություններ են «Հազարան բյուրբյուրից» (Ն. Թումանյան, 213)։

Պոետի առաջին հաստիածը, որ թումանյանը գրել է 1898 թ., Շուլա-վերում, եղել է «Երգչի վիշտը» գլուխը (տե՛ս նույն տեղում), որին հետևել են ըստ սյուժետային ընթացքի նրան նախորդող և հաջորդող մի շարք ուրիշ հաստիածներ։ Դժբախտաբար, դրանք մեծ մասամբ մնացել են սեռագիր և անավարտ միճակում։ Միայն 1910-ական թթ., երբ բավական մեծ

ընդմիջումից հետո Քումանյանը նորից անդրադարձավ իր վաղեմի ծրագրին, նրան հաջողվեց մշակել ու տպագրության հանձնել պոեմի երկու գլուխ՝ նույն «Երգչի վիշտը» և «Արեգը սև աշխարհքում»։ Պոեմի մյուս մասերը, ինչպես նաև հերթաթը տրամակ և դրամատիկական ձևերով մշակելու փորձերը ֆրագմենտային բնույթ են կրում և գեղարվեստական ավարտուն տեսք չեն ստացել։

1914 թ. սկսված համաշխարհային պատերազմը և հետագա դեպքերը նորից խանդարեցրին պոեմի ամբողջացմանը, թեև այդ ժամանակ էլ բանաստեղծի միտքն այս կամ այն շափով դրադված էր իր ապագա մեծ երկի գաղափարով, որը, նրա խորին համոզմամբ, լինելու էր իր ստեղծագործության գլուխգործոցը։

«Հազարան բլրբուլի» ծրագիրն ու սահմանները աշխատանքի տարբեր փուլերում փոխվել են։ Մի ծրագրային գրառումից կրկնում է, որ որոշակի շրջանում բանաստեղծը ցանկացել է իր այս ստեղծագործությունն անվանել «Երգ. արևելյան վիպերգ», որի երեք մասերը կոչվելու էին. Ա. Հազարան բլուրբուլ, Բ. Մինամ թագավորի գաղտնիքը, Գ. Անթառամ այգի (ՈՒՇ—Ց, 288—289)։ Պոեմի հերոս Արեգի անձնուրաց ջանքերի և հազարան բլրբուլի երգի շնորհիվ վերածաղկած անթառամ այգին խորհրդանշելու էր բանաստեղծի բարձրագույն իդեալը՝ մարդկության ապագա վերածնությունը։ Հետաքրքիր է, որ առաջին համաշխարհային պատերազմի սկզբին իր հասարակական-քաղաքական երազանքը բանաստեղծն արտահայտել է նույն անթառամ այգու («Սաղկանոցի») այլարանությամբ, գրելով. «Նրանից հետո թերևս գան իսաղաղության օրեր ու իմ ծաղկանոցի ուտոպիան էլ իրականանա» (ԵԺ V, 400)։

Պահպանված հատվածներն ընդգրկում են բանաստեղծի ծրագրածի փոքր մասը միայն։ Դատելով Քումանյանի հավաքած և մասամբ գրական մշակման ենթարկված պատումներից, պոեմում, բացի բուն Հազարան բլրբուլի պատմությունից, պետք է նկարագրվեին նաև մի քանի ուրիշ զբրվագներ։ Հրեղեն թուղունի որոնման ճանապարհին պոեմի հերոսը պետք է հանդիպեր ու տեղյակ դառնար մի ամբողջ շարք մարդկային ծանր վշտերի նա պետք է իմանար Ցնորք միևարի երգչի անսփոփ վշտի պատճառը, լսեր իր կնոջ ու երեխաներին կորցրած թամբագործ վարպետի տխուր պատմությունը, վերջապես, նրա առջև պետք է բացվեր Մինամ թագավորի սարսափելի գաղտնիքը։ Եվ պոեմի հերոսը (որն սկզբում Շնորհք էր կոչվում, իսկ հետո ստացավ Արեգ անունը) «դառնում է սրտագետ», ինչպես ասել է Քումանյանը մի գրույցի ժամանակ։ Նա գիտակցում է, որ Հազարան բլրբուլն անհրաժեշտ է ոչ միայն իր հոր շորացած այգին ծաղկեցնելու և գուղան դարձած մարդկանց վերածնելու, այլև իր հանդիպած այդ անլուր վշտերն ամբողջում համար։ Դրանով զգալիորեն ընդլայնվում են ստեղծագործության հումանիստական գաղափար-նպատակի շրջանակները։

Կյանքի վերջին տարիներին, ողբերգորեն գիտակցելով իր ծրագրածն իրագործելու անհնարնությունը, Քումանյանն ավելի ու ավելի մեծ սիրով ու ավստանքով է խոսել «Հազարան բլրբուլի» մասին։ Դա հիմնական,

առավել հաճախ կրկնվող մոտիվներից մեկն է եղել բանաստեղծի գրույցներում։ Ստորև բերվում են նրա բնութագրումներից մի երկուսը, որոնք օգնում են ավելի լրիվ պատկերացնելու անավարտ ստեղծագործության իմաստն ու սահմանները։

1919 թ. փետրվարի 15-ին. «Ի՞նչ եմ գրել մինչև հիմա. մի բանի տող բան, էն էլ ձեռագ, ոտի վրա կամ հիվանդ ժամանակ... կացեք մի սարքվեմ, նստեմ պարագեմ, «Հազարան բլրբուլս» գրեմ, տեսեք թե ի՞նչ է լինելու... Ի՞՞՞՞՞ Աննուլ», ի՞նչ բան—էնպես մի բան եմ տալու, որ մեր նկարիչները, երամիշտները գնա՞ն ու գնա՞ն ինչքան նյութ ուղենան՝ թող առնեն...» (Ն. Քումանյան, 189—190)։

1919 թ. օգոստոսի 14-ին. «Բայց շա՛տ հոյակապ, շքեղ ու գեղեցիկ բան է մեր «Հազարան բլրբուլը»։ Եվ էթե մեր «Հազարան բլրբուլը» համեմատենք արևմտյան «Կապույտ թռչունի» հետ, հակայական տարբերություն կա։ Արևելյանը խոշոր առավելություն ունի՝ սանձարձակ ֆանտազիա՝ էկզոտիկ բնավորություն, խորություն, նրբություն. շատ քչերն ունեն էս տեսակ բան։ Կատարյալ հերթաթ է։ Միայն հունական միջոցադրանք թերևս ունի էս հարստությունը» (Ն. տ., 213)։

Իր ապագա մեծ ստեղծագործությունը համեմատելով «մի գեղեցիկ մեծ պալատի» հետ, որի համար ինքը տարիների համառ աշխատանքով հավաքել է «ամեն տեսակի ու գույնի անգին քարեր՝ գոհար, զմբուխ, լալ», Քումանյանը, բնականաբար, հատուկ ցավով էր խոսում նրա անավարտ մնալու մասին։ Ահա երկու արտահայտություն մահամերձ Քումանյանի խոսքերից.

1922 թ. նոյեմբերի 8-ին. «Ախրա՛ս իմ «Հազարան բլրբուլ»։ Ինձ շորս ամիս է հարկավոր, շո՛րս ամիս հանգիստ թողնեն, լիանգարեն, և իմ «Հազարան բլրբուլը» կգրեմ» (Ն. տ., 285)։

1923 թ. հունվարի 13-ին. «Ա՛խ, երանի «Հազարան բլրբուլս» գրած լինեի... Ի՞նչ լավ կլինեի...» (Ն. տ., 298)։

Պետք է ավելացնել, որ Քումանյանի «Հազարան բլրբուլի» ավարտման բացատրիկ կարևորությունը գիտակցել են նաև հայ գրականության ուրիշ խոշորագույն դեմքեր։ Դեռ 1902 թ. մի նամակում Ավ. Իսահակյանը կենդանուկ խորհուրդ էր տալիս ավագ ընկերոջը. «Վերջացրու «Հազարան բլրբուլը»,— ահա մեծ գործ. շո՛ւտ արա, թե չէ կմեռնես, կմեա, ախսո է» (ԳԹ, 1933, № 6)։ Իսկ մոտ կես դար անց նա իր հուշերում Քումանյանի մասին ասել է. «Ուղում էր գրել «Հազարան բլրբուլ», ուր պետք է գեղեր իր էությունը։ Արևելքի «Ճառատը» պետք է լիներ դա» (ԹԺՂ, 20)։ Ե. Չարենցը 1923 թ. հունվարի 1-ին հիվանդ բանաստեղծին հղած նամակում այսպիսի տողեր է գրել. «Միթեի Քումանյան, ես խորապես հավատում եմ, որ Դուք կառողջանաք, կկազդուրվեք և կվիրեք մեզ Ձեր «Հազարան բլրբուլը», որի մասին լսել եմ ես մանկությունից և սրտատրոփ սպասում եմ կատարմանը» (Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, 1967, էջ 397)։

Քումանյանի մահով այդ բոլոր հույսերն ի դիրն ելան, և «Հազարան բլրուլի» շիրագործված մտահոգացումը հայ գրականության ամենամեծ կուրսատներից մեկը դարձավ:

«Հազարան բլրուլի» պոեմի և նրա հետ կապված նյութերի հրատարակումը սույն հատորում կազմված է մի քանի մասերի:

Պոեմի հիմնական բնագիրը. Հատորի առաջին բաժնում տպագրվում են պոեմի՝ մեզ հասած ավարտուն ու սևագիր մասերը, որոնք միահյուսվել են իբրև մեկ ամբողջություն:

Քումանյանի կենդանության ժամանակ, ինչպես նշվեց, պոեմից հրատարակվել է միայն երկու գլուխ, որոնք հասցված են վերջնական մշակման աստիճանի. ա) «Երգչի վիշտը (հատված)», ՆՁ, 1914, № 4, էջ 551—554 (սույն հրատարակության 5-րդ գլուխը՝ առանց սկզբի քսան տողերի), հետևյալ խմբագրական ծանոթագրությամբ. «Տպում ենք մեր անվանի բանաստեղծ Հովհ. Քումանյանի այս փոքրիկ հատվածը, իր մի անավարտ պոեմից, որն ինքնին մի սիրուն ու ամբողջական գործ է»: բ) «Արեգը սև աշխարհքում («Հազարան բլուրուլի» հեքիաթից)», Հսկ, 1914, № 5, էջ 142—145 (սույն հրատարակության 7-րդ գլուխը): Մնացած հատվածները սևագիր են, վերջնական մշակման չեն ենթարկվել և բանաստեղծի կողմից չեն տպագրվել:

Բանաստեղծի մահից հետո պոեմի առանձին սևագիր հատվածներ տպագրվել են «Նոր ուղի» (1931, № 3) և «Վերելք» (1933, № 2) ամսագրերում, որոնց հաջորդեց ստեղծագործության առաջին համեմատաբար ամբողջական հրատարակումը ԳՍ ժողովածուի մեջ (խմբագրությամբ Եղիշե Զարենցի, տեքստի պատրաստումը՝ Նվարդ Քումանյանի): Այստեղ «Հազարան բլրուլի» տպագրությունը բաժանված է երկու մասի. «Պոեմներ» բաժնում տեղ են գտել հիշյալ երկու ավարտուն գլուխները (էջ 46—51), իսկ «Անտիպ բանաստեղծություններ» բաժնում՝ մի շարք սևագիր հատվածներ (էջ 132—140):

1938 թ. լույս տեսած «Երկեր. մի հատորյակ» գրքում (կազմեց Ն. Քումանյան) առաջին անգամ փորձ արվեց ի մի հավաքելու պոեմի գրեթե բոլոր պահպանված մասերը (էջ 382—402), բայց առանց սյուժետային ընթացքը խստորեն պահպանելու: Ղեկավարվելով ժամանակագրական սկզբունքով, կազմողը նախ տեղադրել է ավելի վաղ՝ երկու դարերի սահմանագիծին ստեղծված սևագիր հատվածները և ապա՝ 1914 թ. տպագրված երկու գլուխները («Արեգը սև աշխարհքում», «Երգչի վիշտը»):

Հաջորդ քայլը կատարվեց Քումանյանի երկերի գիտական հրատարակության 2-րդ հատորում (1940, տեքստը պատրաստեցին Նվարդ Քումանյան և Արամ Ինճիկյան): Պոեմի անավարտ և ավարտուն հատվածներն այստեղ միահյուսվեցին՝ ըստ սյուժեի մեջ նրանց գրաված դիրքի, և այդ ճանապարհով վերստեղծվեց Քումանյանի այս շիրակնացված մտահոգացման քիչ թե շատ ամբողջական պատկերը (էջ 153—172, տեքստային տար-

բերությունները՝ էջ 414—424): Բնագրի մեջ, ինքնագրերի հիման վրա, մտցվել են մի շարք ճշտումներ և լրացումներ, իսկ ամբողջ պոեմը կազմողների կողմից բաժանվել է 9 մասի, բնդ որում առաջին անգամ այստեղ հրատարակվեց 9-րդ գլուխը, որը նախկին հրատարակությունների մեջ բացակայում էր: Պոեմի ավարտուն մասերը՝ «Երգչի վիշտը», «Արեգը սև աշխարհքում», գրավեցին այս շարահյուսված բնագրի 5-րդ և 7-րդ գլուխները: Հետագայում պոեմի այդ «ճամահավար տեքստը» տպագրվել է միայն մեկ անգամ՝ Քումանյանի Երկերի քառահատոր հրատարակության մեջ (հ. 1, 1969, էջ 197—218):

Ներկա հրատարակության մեջ պահպանվել է պոեմի մասերի միահյուսման և մատուցման հիշյալ սկզբունքը, որն ավելի քան կենդարյա պատմություն ունի և ավանդույթի ուժ է ստացել: Սակայն տեքստը պատրաստելիս նորից մանրակրկիտ բնութայն են ենթարկվել պահպանված բոլոր ինքնագրերը, և նրանց հիման վրա մտցվել են բազմաթիվ ճշտումներ, իսկ տարբերակները ծավալը ավելի քան կրկնապատկվել է: Փոփոխություններից ամենից կարևորը հետևյալն է:

Քումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության կազմողները երբեմն զնացել են մոտամտման, այսինքն՝ տարբեր ինքնագրերից իբրև լավագույն դիտված հատվածը, տողը կամ բառն ընտրելու և միացնելու ճանապարհով: Այդպիսի մոտեցումը սուբյեկտիվ բնույթ ունի և բնագրագիտության ժամանակակից շափանիշների տեսանկյունից ընդունելի չէ: Ուստի ներկա հրատարակության բնագրի համար հիմք է ընդունվել միայն մեկ ինքնագիր, իսկ նրա մեջ եղած այլընթացումները, ինչպես նաև մյուս ինքնագրերի տվյալները բերվում են բնագրային տարբերությունների բաժնում: Այդ է պատճառը, որ նախորդ հրատարակության հիմնական բնագրի մեջ եղած որոշ տողեր և բառեր ընթերցողն այժմ կդասի տարբերակների բաժնում, և ընդհակառակը Այլ ինքնագրերից քաղված որոշ հատվածներ (հատկապես առաջին գլուխներում) հանվել են հիմնական բնագրից ու տեղադրվել տարբերակների մեջ: Այդ տեղափոխումների, ինչպես նաև բազմակետերով տողերի որոշ կրճատման պատճառով տողերի ընդհանուր քանակությունը պակասել է 27-ով (նախորդ հրատարակության 600-ի փոխարեն՝ 573):

Պոեմի նախորդ և ներկա հրատարակությունների տարբերության մյուս պատճառն այն է, որ այս հատորի կազմողները խստորեն պահպանել են հետևյալ սկզբունքը. եթե տվյալ տողի կամ բառի համար բանաստեղծը նշել է նոր տարբերակ, բայց նախորդը չի չնչել, հիմք է ընդունվում սկզբնական խմբագրությունը և ոչ թե նորը (ինչպես սովորաբար վարվել են նախորդ հրատարակության մեջ):

«Հազարան բլրուլի» սևագիր հատվածներին, ինչպես նաև «Երգչի վիշտը» գլխի նախնական տարբերակի ինքնագրերը պահվում են ԳԱԹ, ԹՖ, № 10ա, 10բ, որոնց հիման վրա կազմվել են պոեմի բնագիրն ու տեքստային տարբերությունները: Տպագրված գլուխների համար հիմք են ծառայել ՆՁ և Հսկ տեքստերը (բացառությամբ «Երգչի վիշտը» գլխի առաջին



հատվածի՝ 190—209 տողերի, որոնք չեն եղել ՆՆ-ում, այլ տպագրվել են պահպանված սեպերի հիման վրա):

Չափածո հատվածներ. Քումանյանի թղթերում, բացի «Հազարան բըլ-բուլի» հիմնական բնագրի մեջ լսելի մնացած գրություններից, պահպանվել են նաև մի շարք ուրիշ չափածո հատվածներ, որոնք վերաբերում են պոեմի տարբեր մասերին: Մի շարք հատվածներ (ընդամենը՝ 11) տպագրվել են ՌՆՃ—3, էջ 272—278: Գրանցից երկուսը («Անուշ քնած է Սինամ թագավոր...», «Ո՛հ, ևս չեմ եկել թեով թուղունի...») սույն հատորում մտցված են Տեքիաթի X 2 և X 4 պատումների մեջ, քանի որ այդ ոտանավորների ինքնագրերը տեղադրված են համապատասխան գրառումների (ԹՖ, 10գ և 10 ժդ) արանքում և բովանդակությամբ սերտորեն կապված են նրանց հետ: Մյուս հատվածները կամ շատ նախնական բնույթ ունեցող գրառումներ են («Ա՛յ դավաման...», «Հազարի թեով չեմ թուլ ևս...», «Տեսնում ես, թե ես ի՞նչ եմ քոչը...», «Լուս է առանց քեզ բյուրյուլը հազարան...») և կամ ուղղակի կապ չունեն այս պոեմի հետ, թեև գրի են առնված նրան վերաբերող թղթերի վրա («Շուշան էր բուսել բարձր սարերուն...», «Որ կողմն են գնացեր...», «Լուստ տուն...»):

Այստեղ հրատարակվում է ընդամենը չորս սեպերի հատված, որոնցից երկուսը տպագրվել են նաև ՌՆՃ-ում, Բնագրային տարբերությունները բերվում են ամեն մի հատվածից հետո:

1. «Նեաց առաջ, համփան կտեց, այսպես խոսեց...»:— Այս չափածո մեծ հատվածը պոեմի «Երգչի վիշտը» գլխի ամենանախնական սեպերի տարբերակն է, թեև առաջին (1—7) և վերջին (61—72) տողերը դուրս են գալիս այդ գլխի ավարտուն բնագրի սահմաններից: Ինքնագիրը (երեք մեծադիր էջի վրա՝ գրված մեծ մասամբ թանաքով և շատ մանր տառերով) պահվում է ԹՖ, X 10 ժէ թղթերի մեջ: Գրված է 1898 թ., Շուշավերում: Այս ինքնագրի տարբերությունները «Երգչի վիշտի» տպագրի տեքստից և այդ գլխի մյուս սեպերությունից (ԹՖ, 10 բ) այնքան մեծ են, որ նպատակահարմար է այն հրատարակել առանձին՝ ներկայացնելով ձեռագրի վրա կատարված աշխատանքի բոլոր մանրամասները:

Տպագրվում է առաջին անգամ՝ ինքնագրից:

2. «Նս ևնգ եմ հայտնում—այգին առաջիս...»:— Այս հատվածը, որը կապվում է պոեմի սկզբնական մասի հետ (պառավի անեծքը այգու շորանալուց առաջ), գրված է «Պաշտոնու տրտուները» երգիծական բանաստեղծության ինքնագրի (ԹՖ, X 40) 4-րդ էջի վրա: Քանի որ հիշյալ բանաստեղծությունը գրված է 1898 թ. օգոստոսին, Շուշավերում (տե՛ս Եժ V, 141—143), պետք է ենթադրել, որ նույն ժամանակին է վերաբերում նաև «Հազարան բըլբուլի» այս հատվածը: Հետեաբար, 1898 թ. Շուշավերում Քումանյանը գրել է ոչ միայն «Երգչի վիշտը» գլուխը, այլև փորձեր է արել նաև պոեմի սկզբնական մասերն ստեղծելու համար:

Այս հատվածի 1—5 տողերն առաջին անգամ հրատարակվել են Ա. Ինճիկյանի գրքում (էջ 517): Տպագրվում է ինքնագրից:

3. «Է՛լ եմ ասում, ա՛յ պատանի, ետ կաց սեճից քո համառ...»:— Պոեմի հերոս Արեգի և Սինամ թագավորի խոսակցության մի հատվածն է, որը գրեթե բառացի համընկնում է Քումանյանի գրի առած պատումներից երկրորդի համապատասխան տողերին: Սինամ թագավորի պատմությունը չափածո ձևով մշակելու միակ մեզ հասած հատվածն է:

Առաջին անգամ տպագրվել է ՌՆՃ—3, էջ 272, Քումանյանի արխիվի թղթերի մեջ պահվող ինքնագրի հիման վրա: Արտատպվում է ՌՆՃ-ից:

4. «Ամբողջ տառին տվնում, ջանում...»:— Թամբազործ վարպետի պատմությունը չափածո ձևով մշակելու միակ մեզ հասած հատվածն է: Առաջին անգամ տպագրվել է ՌՆՃ—3, էջ 274: Ինքնագիրը պահվում է ԹՖ, X 10 ժէ, որտեղից և արտատպվում է:

Նեխիաթի արձակ-երգախառն շարադրանք. «Տարբերակներ և նյութեր» բաժնում, պոեմի հիմնական բնագրի այլընթերցումներից հետո, դետեղված է Տեքիաթի արձակ վերապատմությունը՝ միահյուսված չափածո հատվածների հետ:

Նեքիաթի արձակ մշակման այս փորձը Քումանյանը կատարել է 1910-ական թթ. սկզբին: Բանաստեղծի դատեր վկայությունը՝ այդ գործի վրա նա աշխատել է 1914 թ. ամռանը Ցագվերում, բայց անավարտ է թողել սկսված համաշխարհային պատերազմի պատճառով (տե՛ս Ն. Քումանյան, էջ 118, 189): Սակայն տարիներ անց՝ 1922 թ. հուլիսին Պ. Մակինյանին հղած նամակում, Քումանյանը խոստանում էր հնարավորության դեպքում «Հազարան բըլբուլ» ավարտել «իբրև Տեքիաթ, երգախառն, որ թերևս ավելի պատանիների համար լինի» (Եժ V, 470): Իսկ մի քանի ամիս անց մահամերձ բանաստեղծը մի զրույցի ժամանակ ասել է (1923 թ. փետրվարի 6-ին) «Երանի թե «Հազարան բըլբուլ» գոնե որպես Տեքիաթ գրած լինեի, ի՞նչ լավ կլիներ» (Ն. Քումանյան, էջ 310):

Արձակ Տեքիաթի ձևին դիմելը չէր նշանակում, թե բանաստեղծը մեկընդմիջտ հրաժարվում էր իր նվիրական նպատակից՝ չափածո գրամատիկական պոեմ գրելու գաղափարից: Սակայն տարիների ընթացքում համոզվելով, որ ինքը հնարավորություն չի ունենալու շուտով իրագործելու այդ մտահղացումը, նա որոշեց գրել «Հազարան բըլբուլ» գեթ իբրև արձակ հեքիաթ՝ հասցեագրելով այն, առաջին հերթին, պատանի ընթերցողներին: Բանաստեղծի դուստրը այդ մասին հիշում է. «1914 թվի ամռանը Ցագ-Բանաստեղծը մտածում էր «Հազարան բըլբուլ» գրառվել, թեև թույլ էր ու հոգ-ված: Ձեի ընտրություն երկընտրանքի մեջ էր. «...էն, ինչ որ ուզում եմ գրել՝ որպես գրամատիկական պոեմ՝ ժամանակը չի. դրա համար ուրիշ օրեր են հարկավոր, ուրիշ տրամադրություն՝ հանգիստ կյանք ու հարմարություն, ուր ինձ լիանգարեն... էդ հիմա անհնար է»: Եվ որոշեց թողնել

առաջին ձևը՝ դրամատիկական պոեմը ու գրել արձակ երգախառն՝ պատա-  
նիների համար» (Ն. Քումանյան, էջ 189):

Այսպիսով, Քումանյանի պատկերացմամբ՝ հեքիաթի մշակման այս  
տարբերակը լինելու էր միջանկյալ մի օղակ պոեմի փոխադրական բարդ  
բովանդակության և համադրական պատկերների հասարակական ընկալման  
ճանապարհին:

«Հաղարան բըլբուլի» արձակ մշակման այս սևագիր և անավարտ տար-  
բերակն առաջին անգամ տպագրվել է Նժ 111, էջ 387—413, Ներկա հրա-  
տարակության համար ևս հիմք են ծառայել պահպանված երկու ինքնա-  
գրերը (ԳԱԹ, ՔՏ, № 10 գ), որոնք գրված են թանաքով, մեծադիր էջերի  
վրա: Առաջին ինքնագիրը (35 էջ) սևագիր է, ունի բազմաթիվ ուղղումներ,  
ընդուններ և հավելումներ, իսկ լուսանցքներում՝ մի շարք ծրագրային նշում-  
ներ: Երկրորդ ինքնագիրը (6 էջ) նույն շարագրանքի ավելի մշակված  
տարբերակն է, որն ընդգրկում է, սակայն, սյուժեի միայն առաջին մի  
քանի գրվածները: Ետագրանքի սկիզբը (մինչև «Տարակուսած միտք է  
անում» նախադասությունը) հրապարակվում է ըստ այդ երկրորդ ինքնա-  
գրի, իսկ շարունակությունը (սկսած «էս միտք անելու ժամանակ» բառե-  
րից) — ըստ առաջին ինքնագրի: Երկու բնագրերի բաժանման տեղը բնագ-  
րում ցույց է տրվում համապատասխան ծանոթարությամբ:

Հեքիաթի արձակ-երգախառն մշակման այս փորձը նույնպես անավարտ  
է մնացել, այն ընդհատվում է հրեղեն թուղունի որոնման կես ճանապարհին:  
Ինքնագրերի մեջ շեղված կամ փոփոխված բառերն ու արտահայտու-  
թյունները բերվում են սողառակին՝ լուրաքանչյուր էջի առանձին համա-  
րակալումով, իսկ ծրագրային նշումները՝ աստղանիշերով: Իսկ եթե շեղված  
բառերը ինչ-որ կողմով լրացնում են հիմնական շարադրանքը, դրանք մեջ  
են բերվում բուն բնագրի մեջ՝ քառակուսի փակագծերում: Բնագիրը շան-  
րաբեռնելու համար՝ մի շարք կրճատված բառերի, ինչպես թ. (Յազավոր),  
հ. բ. կամ Հազ. բլ. (Հազարան բըլբուլ), կախ. աշխ. (կախարդական աշ-  
խարհ) և այլն, լրիվ ձևերը ամենուրեք վերականգնվում են՝ առանց հոան-  
կյունի փակագծերի: Չեն բերվում նաև որոշ բայական բառերի նախնական  
ձևերը, ինչպես անցյալ ժամանակից ներկային կատարված անդումները  
(ունենր—ունենում է, կանչեց—կանչում է, ասավ—ասում է և այլն):

Հեքիաթի մշակման այս տարբերակը արձակ շարադրանքի մեջ ներառ-  
նում է մի շարք ոտանավոր հատվածներ, որոնք մեծ մասամբ ուղղակի  
թաղված են պոեմի գրված գլուխներից: Բացի տողերի բաժանված մասե-  
րից, մի քանի հատվածներ նույնպես փաստորեն ոտանավոր են, թեև ար-  
տաբանա արձակ շարադրանքի տեսք ունեն (օրինակ՝ «Յվ քանի որ ամեն  
մի բան...», «Ճամփեն մին է—ցավը հաղար...», «Ի՛նչ են դներ ու հրեշ-  
ներ...», «Ո՛վ հավիտյան անձնապատան...» բառերով սկսվող հատված-  
ները): Մենք ավելորդ համարեցինք այդ հատվածները բաժանել տողերի,  
քանի որ առանց դրա էլ ակնհայտ է այդ մասերի շափարհական բնույթը:  
Բացի այդ, ինչպես վկայում են մի քանի անգամ լուսանցքներում կատար-  
ված միևնույն նշումները (սարձակ) Քումանյանը ցանկացել է հետագա

մշակման բնթացքում որոշ ոտանավոր հատվածներ վերածել արձակ շա-  
րադրանքի:

Իր բնույթով հեքիաթի արձակ-երգախառն մշակմանը շատ մոտ է մի  
ուրիշ սևագիր շարադրանք, որն սկսվում է հիմնական բնագրից ծանոթ  
շափածո տողերով («Չբքնաղ անունով քո լույս աղբրկա...») և ապա անց-  
նում է արձակի՝ շարունակելով դեպքերի ընթացքը, մինչև Հաղարան բըլբու-  
լին Դևի թաղավորությունից փախցնելու: Այդ հատվածի ինքնագիրը (երեք  
մեծադիր էջի վրա) նախնական, անմշակ բնույթ ունի, պահվում է ԳԱԹ,  
ՔՏ, № 10 ա, պոեմի շափածո հատվածների շարքում: Տպագրվում է առա-  
ջին անգամ, ինքնագրից՝ բնագրի պատրաստման այն սկզբունքներով, որոնք  
կիրառվել են հեքիաթի արձակ-երգախառն տարբերակի պատրաստման ժա-  
մանակ:

Այս հատվածը գրվել է ավելի վաղ, հավանաբար՝ 1890-ական թթ.  
վերջին կամ դարասկզբին: Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ այս  
շարադրանքի մեջ գլխավոր հերոսի անունը ոչ թե Արեգ է, այլ Շնորհք,  
այնպես, ինչպես եղել է դարավերջին Քումանյանի գրի առած հեքիաթի  
մի քանի տարբերակների մեջ (տՆՆ ՈՒՀ—3, 150—184, 212—224 էջե-  
րում զետեղված պատումները, որոնք տպագրվում են նաև սույն հատորում,  
№ 1—4 պատումներ):

Դրամատիկական հատվածներ. Չգտելով գտնել հեքիաթի բովանդա-  
կության լայն տարածման բազմազան եղանակներ, Քումանյանը, բացի  
պոեմից և արձակ վերապատմությունից, փորձել է «Հաղարան բըլբուլի»  
նյութը մշակել նաև դրամատիկական ձևով: Սակայն, ինչպես դրամատուր-  
գիայի ասպարեզում բանաստեղծի մյուս ծրագրերը, այս մտահղացումը ես  
մնացել է անավարտ, մեզ հասել են միայն սևագիր մի քանի հատված-  
ներ (գրված թանաքով և մատիտով՝ ընդամենը 12 էջ. ԳԱԹ, ՔՏ, № 10 դ):  
Այդ հատվածներն առաջին անգամ տպագրվել են՝ Նժ 111, էջ 395—396,  
454—456: Ինչպես նշված է ծանոթագրության մեջ, «տեխնիկական պատ-  
ճառներով» դրանք տեղադրվել են հատորի տարբեր բաժիններում:

Սույն հատորում այդ էջերն ի մի են հավաքվել մեկ ընդհանուր՝ «Դրա-  
մատիկական հատվածներ» խմբագրական վերնագրի տակ (ձեռագրերը վեր-  
նագիր չունեն): Հրատարակումը կազմված է երկու մասից:

Առաջին մասը (ինքնագիրը ուժ էջի վրա) հեղինակի կողմից բաժան-  
ված է երեք տեսիլի և ընդգրկում է հեքիաթի սկզբնական գրվածքները՝  
ծարաված ճամփորդի անձնքով Անթառամ այգու շրանալու և մարդկանց  
զազան դառնալու պատմությունը: Երկրորդ մասը (ինքնագիրը չորս էջի  
վրա) ներկայացնում է սյուժեի զարգացման հետագա օղակներից մեկը, ուր  
Հաղարան բըլբուլը որոնելու ղուրս եկած Արեգը կունգնած է միայնակ,  
բնության խորհրդավոր ուժերին ղեմ հանդիման: Բացի Արեգի անվան հի-  
շատակությունից և երկու տողից («Ո՛վ, որ գալիս ես բազմած ամպերին,  
Ո՛վ, որ փայլում ես մաքրությամբ վերին»), որոնք կան նաև պոեմի 4-րդ

գլխում (186—187 տողեր), այս հատվածում ուրիշ ոչինչ չկա, որ ուղղակի հիշեցնի հեքիաթի թումանյանական մյուս մշակումները:

Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության ծանոթագրությունների մեջ այս հատվածներից առաջինի գրությունն ժամանակ համարվել է 1910-ական թվականները, իսկ երկրորդի մասին ստվում է «Գրելու տարեթիվն անհայտ է, հավանորեն գրել է 1910-ական թվականներին» (Եժ 111, 527, 531): Իրոք, առաջին հատվածի բովանդակությունն ու ինքնագրի ալիպաները ցույց են տալիս, որ այն գրված պետք է չինի 10-ական թթ. սկզբին, երբ որոշ ընդմիջումից հետո Թումանյանը նորից նվիրվեց «Հազարան բրբույց» ստեղծման գործին: Իսկ երկրորդ հատվածը, թեև այն սյուննաչափի բնթացքով հաջորդում է առաջինին, հավանաբար, ալիքի վաղ ծագում ունի: Այս ենթադրությունն օգտին է խառնում նաև այն, որ սրբագրի ընդամենը թվականներ կան այդ հատվածի ստեղծման համար: Փոստառային պատկերների և դեռ 1910-ական թթ. Բարսեղ Բենիքյանի շախմատի գրամատից Թումանյանի կատարած սեպագիր թարգմանություն միջև (տե՛ս այս հատորի սեպագիր Բարսեղյանությունների բաժինը):

Հեքիաթի ժողովրդական պատումների գաղափարներ. «Հազարան բրբույց» պոեմը գրելու համար բանաստեղծը քատրոգ դարի ընթացքում հավաքել է բազմաթիվ ու բազմազան նյութեր, և այդ իմաստով նրա հետ չի կարող համեմատվել Թումանյանի ոչ մի ուրիշ ստեղծագործություն: Հավաքված նյութերի թշուղի կան հեքիաթի հայկական և միջազգային տարբերակներ, գեղարվեստական մշակումներ, ստեղծագործության իմաստի գիտական մեկնաբանություններ: Մեծ թիվ են կազմում ժողովրդական հեքիաթի պատումների գրառումները՝ կատարված Թումանյանի և ուրիշ բանահավաքների ձեռքով կամ քաղված հայերեն և ռուսերեն բանահյուսական-ազգագրական ժողովածուներից: 1922 թ. հուլիսին Պ. Մակինցյանին ուղղած նամակում բանաստեղծը հայտնում էր. «Եվ այժմ եթե ասում եմ «Հազարան բրբույց» կտամ, որովհետև հավաքել եմ երկար տարիների ընթացքում նրա վաթսուներից ավելի վարիանտները» (Եժ V, 472): Պոեմի համար հավաքած նյութերի ցանկը, որ կազմել է Թումանյանը, պարունակում է հայերեն և ռուսերեն 53 անուն (տե՛ս ցուցակի հրապարակումը սույն հատորում), թեև լիովին չի սպառում բանաստեղծի տեսադաշտում եղած բոլոր տարբերակները:

Այս հեքիաթի պատումների գրառման մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել: Մի շարք դեպքերում բանաստեղծն ինքը նշել է, թե ումից և որտե՛ղ է գրի առել տվյալ տարբերակը: Ըստ Օլգա Թումանյանի հուշերի՝ երիտասարդ գրողն այդ հեքիաթով հետաքրքրվել ու գրառումներ է կատարել դեռ 80-ական թթ. վերջին (ԹժՂ, 333): Թումանյանի վրա հատկապես խոր տպավորություն է թողել Լոռու վարդաբլուր գյուղում 1894 թ. աճառը մի ծերունուց գրի առած տարբերակը (տե՛ս այդ մասին ԹժՂ, 337, Ն. Թումանյան, 186): Զրույցներում որոշ տվյալներ կան նաև հեքիա-

թի մյուս տարբերակների գրառման հանգամանքների մասին. 1) Լոռու Ս. Կրիգորի վանքի մոտերը, Զաղի ձորի գոմահանդում, մի պարսիկի պատմածից, 2) Գսեղի մոտակա Քարինջ գյուղի շրաղացպանից, 3) Թիֆլիսի բաշեխի քիսալինից, որոնք «հետաքրքիր, լուրահատուկ ձևով էին պատմում», և այլն (տե՛ս Ն. Թումանյան, 186): Թումանյանը միշտ ցավով է հիշել 1898 թ. Շուլավերցի Ղուշշունց վարդանի իմացած տարբերակը գրի առելու անհաջող փորձը (մինչև ինքը Երկար որոնումներից հետո վերջապես լսել է 90-ամյա հեքիաթախոսի ստույգ, պարզվել է, որ նա հենց նախորդ չրք վախճանվել է): Այդ մասին նա գրել է 1900 թ. նամակներից մեկում (Եժ V, 144): Վերհիշել է վերջին օրերի գրույցներում (Ն. Թումանյան, 308, այստեղ ասացողի անունը Չոբանանց վարդան է), մանրամասն պատմել է կարեն Միքայելյանի հետ ունեցած վերջին հանդիպման ժամանակ (ԹժՂ, 838—839): Շուլավերցի Չոբանանց վարդանի (կամ Ղուշշունց վարդանի) իմացածը գրի առնելու անհաջող փորձի մասին հիշատակություն կա նաև Թումանյանի կազմած մատենագիտական ցանկի վերջում, հատուկ ծանոթագրության մեջ:

Թումանյանի գրի առած ժողովրդական պատումներ, ինչպես նաև գրական աղբյուրներից քաղված ու նրա կողմից վերաշարադրված տարբերակների ընդհանուր թիվը հասնում է 40-ի (ԳԱԹ, ԹԾ-ում դրանք պահվում են Ք 10-ի տակ, որն իր հերթին ունի բազմաթիվ ենթաբաժիններ): Մի քանի հարյուր էջ կազմող այդ նյութերը գրեթե ամբողջությամբ տպագրվել են «Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» (ՈԻՂ) մատենաշարի 3-րդ հատորում (1983, էջ 139—318, ինքնագրերը հրատարակության են պատրաստել Զ. Ավետյանը և Մ. Մելիքյանը, աշխատանքի ղեկավար՝ Խ. Գյուլնազարյան):

Մեզ նյութերից սույն հատորում տպագրվում են միայն ժողովրդական հեքիաթի այն պատումները, որոնք անձամբ լսել ու գրի է առել Թումանյանը (ընդամենը՝ 12): Չեն արտատպվում գրավոր աղբյուրների վերաշարադրանքները, ինչպես նաև ծրագրային ու հարակից գրառումների մեծ մասը: Մասնագետ-հետազոտողը դրանք կարող է գտնել հիշյալ հրատարակության մեջ:

Հեքիաթի ժողովրդական պատումների շարադրանքի և բովանդակության ընկալումը դուրացնելու նյատիակով, սույն հրապարակման մեջ բաց են թողնված շեշտված և տարբերակային բառերն ու արտահայտությունները, ստորատակի հավելումներն ու ծանոթագրությունները: Դա արվել է՝ նկատի ունենալով, որ այդ պատումները Թումանյանի համար, վերջին հաշվով, օժանդակ նշանակություն են ունեցել և չեն կարող համարվել բուն իմաստով ստեղծագործություն: Բացի այդ, ՈԻՂ—3-ի հրապարակման մեջ բաց ամենայնից ցույց են տրված այդ գրառումների վրա Թումանյանի կատարած աշխատանքի բոլոր կողմերը, և անհրաժեշտություն չկա դրանք կրկնելու նաև այստեղ՝ մեծապես ծանրաբեռնելով բնագիրը:

Ստորև բերվում են Թումանյանի գրի առած 12 պատումների վեր-

նագրերը (փակագծերում՝ նաև առաջին բառերը), ցույց են տրվում նրանց բովանդակությունը և գրառման յուրահատկությունները:

1. Հազարան բյուրյուլ («Ժամանակով ապրում էր մի թալափոր, ուներ երեք որդի...») — Գրի է տուել լոռու վարդաբլուր գյուղում: Ասացողի անունն անհայտ է (բատ Երևույթին, Երիտասարդ բանաստեղծոր անփորձությունից չի նշել նրա անունը, իսկ հետո մոռացել է): Նմարդ Քումանյանի արձանագրած գրույցներում (էջ 186) գրառման ժամանակը համարվում է 1895 թ. գարունը՝ Ջալալօղլուց ֆուրգոնով Գանդ գնալու ճանապարհին: Բանաստեղծն այդ մասին պատմել է. «Նկանք հասանք վարդաբլուր, գիշերը մնացինք Լյոտեղ: Էդ իրիգու մի ծեր գյուղացի ներս եկավ մեզ մոտ, դրան հեքիաթներ պատմել տվի: Նրա սխառածներից ինձ ամենից շատ դուր եկավ «Հազարան բլուրը», որ ոգևորված և մեծ տրամադրությամբ էր գիշերը իսկույն գրեցի» (Ն. Քումանյան, 186): Վարդաբլուրում գրի առած պատումը Քումանյանի համարել է իր հավաքած տարբերակներից «ամենահինը և ամենավաղը»: Սակայն ժամանակի առումով ավելի հավաստի պետք է համարել Օլգա Քումանյանի վկայությունը, որն այդ դեպքը կապում է 1894 թ. ամռան հետ (ԹժՀ, 337):

Պետք է նկատի ունենալ, որ այս, ինչպես նաև հաջորդ երեք պատումները ոչ թե հեքիաթի նախնական գրառումներն են, այլ նրանց գգալիորեն բարեկամված տարբերակները, որոնք կրում են որոշակի գրական մշակման և անհատական ստեղծագործության կնիքը: Դա երևում է ոճից և տեքստի վրա կատարած մեծ աշխատանքից, ինչպես նաև շափածո հատվածների (թեև դեռ անմշակ) առկայությունից, որոնց մեջ երևան են գալիս ապագա պոեմի մի շարք տողեր՝ իրենց նախնական ձևով: Բացի այդ, այս և հաջորդ շարադրանքների մեջ փակագծերում մի քանի անգամ հղումներ կան համանուն հեքիաթի ռուսական տարբերակների և հայկական այլ պատումների մասին (տե՛ս նրանց հրատարակումները ՌԻՀ—3): Դա վկայում է, որ ձեռագրի վրա աշխատելիս Քումանյանը դուրս է եկել նախնական գրառման սահմաններից, օգտվել է նաև ուրիշ աղբյուրներից:

Հեքիաթի տվյալ շարադրանքը կատարվել է 1897 թ. (այդ է ցույց տալիս գրառման վերնագրի տակ եղած նշումը՝ «Իմ խոսքերով—97 թվին», որի տակ կարմիր մատիտով նշվում է նաև նախնական գրառման թվականը՝ <9>4):

Առաջին անգամ՝ ՌԻՀ—3, 142—150:

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԹՅ, № 10 Կ, որի հիման վրա հրատարակման մեջ մտցվել են որոշ լրացումներ և ճշտումներ:

Բոլոր հիմքերը կան ասելու, որ 1894 թ. վարդաբլուրում գրի առած և 1897-ին գրական որոշ մշակման ենթարկված տարբերակն ընդգրկում է ոչ միայն այս, այլև հաջորդ երեք պատումները, որոնք միասին պետք է կազմեն ապագա մեծ ստեղծագործության հիմքը: Դա երևում է այս պատումների թղթի, գրության, ինչպես նաև ոճի և շարադրանքի ընդհանուր բնույթից: Այդ ենթադրության օգտին է խոսում նաև այն փաստը, որ Քու-

մանյանի ձևերով կազմված մատենագիտական ցանկի մեջ այս շորս պատումներն առանձնացված չեն, այլ հիշատակվում են մեկ ընդհանուր համարի տակ (1. Հազարան բլուրով. Լոռի, վարդաբլուր, ձեռագիր), այն դեպքում, երբ իրենց բովանդակությամբ շատ ավելի քիչ արժեք ունեցող ձեռագիր և տպագիր ուրիշ տարբերակներ նշվում են առանձին-առանձին, առացողի անվան հիշատակումով:

2. Սինամ բագավորի գաղտնիքը («Վեր կացավ Շնորժը, գնաց Զմբուխտ դուռի մոտ...») — Հեքիաթի այս պատումը, որը ծավալով ամենից ընդարձակն է, իր բովանդակությամբ անմիջաբար շարունակում է նախորդին: Այն պատմում է Հազարան բլուրի որոնման ճանապարհին գլխավոր հերոս Շնորժի (Տեսագայում՝ Ա.Ե.Կ) նոր հանգիստումների, լսածի ու տեսածի, հատկապես Սինամ թագավորի խորհրդավոր դադոնի մասին: Այս բոլորը կազմելու էր ծրագրված մեծ ստեղծագործության երկրորդ զգալի շափով ինքնուրույն մասը («Իսկապես երկու հեքիաթ միացրած՝ «Հազարան բլուրը» և «Սինամ թագավորի գաղտնիքը», — ինչպես գիտենք, այս խոսքերով է Քումանյանը բնութագրել իր ապագա «արևելյան պոեման» 1900 թ. մի նամակում): Այս պատումը պոեմի այդ երկրորդ մասի նախնական, բայց արդեն որոշակի գրական մշակման ենթարկված շարադրանքն է՝ հիմնված այն գրառման վրա, որը կատարվել է վարդաբլուրի ծերունի բանասացի պատմածից:

Պատումի ինքնագրի (ԳԱԹ, ԹՅ, № 10 Կ) առաջին էջերից մեկում՝ «... Ես իմանամ ինչն է քեզ այդպես տանջում...» բառերից հետո, Քումանյանը լրացման հատուկ նշան է դրել և դա գրել է երեք էջի վրա՝ «Թամբ շինողի (թամբագործի) արարքը» ենթավերնագրով: Այդ պատմությունը մտնելու էր հեքիաթի ընդհանուր սյուժետային ընթացքի մեջ: ՌԻՀ—3-ում այդ էջերն առանձնացվել են և տպագրվել իբրև ինքնուրույն պատում (էջ 183—184): Սույն հատորում այդ հատվածը տեղադրվել է Քումանյանի նշած տեղում, հիշյալ ենթավերնագրով:

Պատումի մեջ եղած շափածո հատվածներից մեկը («Անուշ քնած է Սինամ թագավոր...») ունի նաև առանձին թերթերի վրա գրված ուրիշ տարբերակ, որը համեմատաբար ավելի մշակված է: Պատումի համապատասխան տեղում զետեղվում է երգի այդ տարբերակը (բնագրային տարբերությունները տե՛ս ՌԻՀ—3, 273—274):

Առաջին անգամ՝ ՌԻՀ—3, էջ 150—170, 183—184: Տպագրվում է ինքնագրից:

3. Սինամ բագավորի գաղտնիքը («Վեր կացավ թագավորի տղեն, դարձյալ գնաց Զմբուխտ դուռի մոտ...») — Ինքնագրում (ԳԱԹ, ԹՅ, № 10 Կ) վերնագիրը նախ եղել է «Սինամ թագավորի պատմությունը», որ հետո փոխել է և կոչել նախորդի նման՝ «Սինամ թագավորի գաղտնիքը»: Վերնագրի վերջ գրված է՝ «Մասն երկրորդ». դա վերաբերում է այն բանին, որ Սինամ թագավորի պատմությունը, ինչպես ասվեց, պետք է լինե՛ր Քումանյանի ծրագրած մեծ ստեղծագործության երկրորդ մասը: Այս պատումը նախորդի մի այլ տարբերակն է. դեպքերի ընթացքը հիմնական գծերով նույնն է, թեև

սյուսմատային օղակները, շարադրանքի մանրամասները մեջ կան նաև ոչ քիչ տարբերություններ: Ընդհանուր առմամբ՝ այս պատումն ավելի կառուցիկ և նպատակասլաց է, և կարելի է ենթադրել, որ այն եղել է հեքիաթի մշակման հաջորդ փուլը:

Սույն պատումի մեջ մտնող շափածո հատվածները (որոնք գրեթե բոլորովին շեն համընկնում նախորդ պատումի ոտանավորներին) ունեն երբեմն մի քանի սևագիր տարբերակներ: Բնագիրը պատրաստելիս առանձին դեպքերում ընտրվել և միացվել են տարբեր սևագրերի առավել մշակված տողերը:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 171—182: Տպագրվում է ինքնագրից: 4. Հազարան բյուրյոյ («Մի ժամանակ մի թագավոր էր ապրում...»):— Այս պատումի ինքնագիրը, ինչպես և նախորդ երեքը, գրված է մեծադիր թերթերի վրա, թանաքով: Վերաբերում է, ամենայն հավանականությամբ, 1890-ական թթ. վերջին: Ունի առանձին անվանաթերթ՝ «Հազարամայն սուխակ (Հազարան բյուրյոյ), հեքիաթ» վերտառովից: Եւ մի քանի այլ գրառումներով (որոնց թվում՝ հիշատակություններ Ղ. Աղաչյանի «Վիշապին հաղթողը» թարգմանական հեքիաթի հրեջ Օշափի, Գ. Սրվանձտյանի «Մանանա» ծողովածուի մասին):

Իր բնույթով այս տարբերակը ևս ոչ թե հեքիաթի բանավոր պատումի անմիջական գրառում է, այլ որոշակի գրական մշակման ենթարկված շարադրանք, որն ամենից ավելի մոտ է պոեմի պահպանված հատվածներին՝ և՛ սյուսմատային ընթացքով, և՛ գաղափարով:

Պատումի նախորդ հրատարակման մեջ (ՈՒՀ—3, 212—224), ելնելով ԳԱԹ-ում ինքնագրի տեղադրման կարգից (ԹՅ, № 10 ժդ), այն տպագրվել է իբրև 90-ական թթ. թումանյանի գրի առած տարբերակներից վերջինը (№ 11): Վերը շարադրված նկատառումներով, սույն հատորում այս պատումն առաջ է բերվում, դիտվելով իբրև վարդաբույրի տարբերակի գրական մշակման փորձերից մեկը:

Շարադրանքն ամբողջացնելու նպատակով մտցվել են նաև հետևյալ փոփոխությունները.

ա) Ինքնագրի արանքում մի քանի թերթերի վրա գրված շափածո և արձակ հատվածները նախորդ հրատարակման «Պատառիկներ» բաժնից հանվել ու միացվել են այս պատումին՝ առանձնացվելով աստղանիշերով: Բայց ձուլել գրանք որն շարադրանքին հնարավոր չէր, քանի որ շատ դժվար է որոշել նրանց ճշգրիտ տեղը (բացի այդ, դա կառաջացներ անխուսափելի կրկնություններ): Չափածո հատվածի («Ո՛ր, ևս չեմ եկել թեով թուշուն...») բնագրային տարբերությունները, ինչպես նաև նույն մոտիվներով գրված մյուս սևագիր ոտանավոր հատվածները բաց են թողնվում (տե՛ս ՈՒՀ—3, էջ 275—277):

բ) Ինքնագրի վերջին էջերում եղած գրառումները (սկսած «Վերջում Շնորհքը ամենքի ցավին ճար է անում» բառերից) նախորդ հրատարակման մեջ անջատվել են այս պատումից ու տեղադրվել «Պատառիկներ» բաժնում (ն. տ., էջ 280): Այստեղ գրանք միացվել են հիմնական շարադրանք-

քին, քանի որ կարևորագույն նշանակություն ունեն հեքիաթ-պոեմի սյուսմատային և գաղափարական ընդհանուր մտահղացումն ու ամբողջական ընթացքը հասկանալու համար:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 212—224:

Տպագրվում է ինքնագրից:

5. Սինամ քազավոր («Ժամանակով մի աղքատ կնիկ ունենում է երկու որդի...»):— Այս և հաջորդ յոթ պատումները, ի տարբերություն նախորդ չորսի, ժողովրդական հեքիաթի անմիջական գրառումներ են, որ թումանյանը լսել է տարբեր ասացողներից: Զգալի շափով երևում է ասացողների ոճը, ինչպես նաև տվյալ բարբառի յուրահատկությունը: Վերնագրերից առաջ թումանյանը սովորաբար նշել է ասացողի անունը, ապրած վայրն ու տարիքը (այդ տվյալները այս հրատարակման մեջ բերվում են նույնությամբ, սակայն շփոթությունից խուսափելու համար տեղադրվում են պատումի վերնագրից հետո): Արագ գրառման հանգամանքը արտահայտվել է այս պատումների շարադրանքի որոշ անավարտության, ոճական անհարթության և սխեմատիզմի մեջ:

№ 5—12 գրառումները կատարված են տարբեր տեսակի ու շափի թղթերի վրա, մեծ մասամբ մատիտով: Գրություն ժամանակն առանձին դեպքերում նշված է (№ 7—1894, № 10—1898, № 11—12—1914), իսկ մյուս դեպքերում՝ ոչ:

Այս պատումների մեջ, որոնք իրենց արժեքով, անշուշտ, շատ են զիջում նախորդ չորսին, կան վերջիններիս հետ բազմաթիվ ընդհանուր սյուսմատային օղակներ, ինչպես նաև զգալի տարբերություններ: Թեև այդ տարբերիչ գծեր ոչ որևէ արտահայտություն են գտել պոեմի պահպանված մասերում, ոչ էլ, հավանաբար, կոզտազործվել են ստեղծագործության ամբողջական տարբերակի մեջ, սակայն նրանք հետաքրքիր են՝ պատկերացնելու համար թումանյանի կատարած վիթխարի աշխատանքը և այն բազմազան աղբյուրները, որոնք եղել են նրա տրամադրության տակ:

Պատումի գրառումը պահվում է ԳԱԹ, ԹՅ, № 10 է:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 185—186: Տպագրվում է ինքնագրից:

6. Սինամ քազավոր («Մի թագավոր 40 տղա է ունենում...»):— Գրառումը պահվում է ԳԱԹ, ԹՅ, № 10 ր:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 186—194: Տպագրվում է ինքնագրից:

7. «Մի քազավոր կար, երեք որդի ուներ»:— Գրառումը պահվում է ԳԱԹ, ԹՅ, № 10 ր:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 194—196: Տպագրվում է ինքնագրից:

8. Հազարան բյուրյոյ («Ժամանակով մի թագավոր կար...»):— Գրառումը պահվում է ԳԱԹ, ԹՅ, № 10 ժ:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 197—199: Տպագրվում է ինքնագրից:

9. «Փոքրի անունը (լավի) Փիւ Ամաղ...»:— Գրառումը պահվում է ԳԱԹ, ԹՅ, № 10 ժա:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 199—203: Տպագրվում է ինքնագրից:

10. Հազարան բյուրյոյ («Սերունուն շիրիզով զարկում են...»):— Գրառումը

տումը պահվում է ԳԱՔ, ԹՅ, № 10 ժգ: Քումանյանն այս պատումը գրի է առել 1898 թ. և զգալի շահով նրա տպավորության տակ էլ նույն թվականին գրել է պոեմի «Նրգլի վիշտը» հատվածի առաջին տարբերակը (ԹՅ, № 10 ր, վերջնական խմբագրությունը և տպագրությունը՝ 1914 թ.): Ցնորք մինարեի կրգլի պատմությունը իր ղեկավարի ընթացքով և հուզական բովանդակությամբ ամենից ավելի համընկնում է այս և № 2 («Սինամ Թագավորի գաղտնիքը») պատմների համապատասխան մասերին:

Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, 203—212: Տպագրվում է ինքնագրից:

11. «Թագավոր իր խառ լալեն կաննի...»:— Այս և հաջորդ պատումը Քումանյանը գրի է առել 1914 թ. նոյեմբերի 30-ին, Արևմտյան Հայաստանի Զեյթան (Զեյթկան) գյուղում, առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատ այցելելու ժամանակ: Այդ ուղևորության մասնակից Ալ. Շիրվանզադեն իր «Պատերազմի վայրերում» ակնարկային նոթերի մեջ այսպես է նկարագրում գրառման հանգամանքները.

«Ճաշից հետո Հովհաննես Քումանյանն իր համար գրադմուք գտավ: Եանչել տվեց երկու հեթաթախոս գլուղացիների և պատվիրեց, որ սլառմեն «Հազարան բյուրյուլը»: Հիշեցի մանկությունս, պատավ տատիս և նիրսու եկավ: Երկար, երկար ժամանակ կիսաթուն և կիսաթուն լսում էի. «Անկն ևսո, էֆենդիմ, ելավ, գացավ» և այլն...» (Ալ. Շիրվանզադե, Երգերի ժողովածու, հ. 9, 1961, էջ 172):

Պատումը գրի է առնված Քումանյանի ծուլատետրում, 95—100 թերթերի վրա (ԳԱՔ, ԹՅ, № 258): Առաջին անգամ՝ ՈՒՀ—3, էջ 224—225: Տպագրվում է ինքնագրից: Քումանյանի կազմած ցուցակում այս պատումը հիշվում է «Հազարենի բյուրյուլ» վերնագրով (№ 55):

12. Սինամ բագավորի հեթաթախ («Մեր բագավորը <ուներ> երեք որդի»): Տե՛ս նախորդ պատմի ծանոթագրությունը: Այս տարբերակը գրի է առնված նույն ծոցատետրի 102—112 թերթերի վրա: Քումանյանի կազմած ցուցակում այս պատումը նույնպես հիշվում է «Հազարենի բյուրյուլ» վերնագրով (№ 54): Տպագրվում է առաջին անգամ, ինքնագրից:

Բացի այս 12 պատմներից, Քումանյանը նաև վերաշարագրել-կոնսպեկտավորել է իր ձեռքի տակ եղած տպագիր տարբերակներից շատերի բովանդակությունը: Այդ աշխատանքը կատարվել է 1910-ական թթ. սկզբին, երբ Քումանյանը պատրաստվում էր, վերջապես, ձեռնամուխ լինել պոեմի ստեղծման աշխատանքին: Մոտ 170 փոքրադիր էջ գրավող այդ նյութերը պահվում են ԳԱՔ, ԹՅ, № 10 ժե և լրիվ տպագրվել են ՈՒՀ—3, էջ 226—271: Ստորև բերվում է միայն այդ նյութերի ցանկը՝ այն հերթաշարությամբ, ինչպես որ դրանք դասավորվել են հեղինակի կողմից: Նյութի հերթական համարից հետո, փակագծերի մեջ, բերվում է նաև հեղինակային համարանիշը, որը ցույց է տալիս Քումանյանի կազմած մատնագիրական ցանկի մեջ տվյալ տարբերակի զբաղեցրած տեղը: Միասնությունը պահպանելու համար նախ բերվում է տարբերակի վերնագիրը, ապա՝ աղբյուրը (թեև ձեռագրերի մեջ երբեմն հակառակ կարգով է):

1 (№ 8). Բաղարանու բաղի հեթաթախ (Մեխակ, էջ 170):— Տարբերակը քաղված և վերաշարագրված է լանահավաք Միքայել (Մեխակ) Շահ-վերդյանի բանահյուսական ժողովածուից (1899), որը պահվում է ԳԱՔ, ԹՅ, № 1602:

2 (№ 9). «Ճամփան երեք ճյուղ—ձգնավոր...»:— Մուշ, Գ. Սրվանձըսյան, Մանանա, 1876, էջ 221—223:

3 (№ 10). Ավճի Շարուրի տղեն:— էմիլյան ազգագրական ժողովածու, I, Հայկունի՝ Շիրակ, 1901, էջ 50—68:

4 (№ 12). Սինամահավաք:— էմիլյան ազգագրական ժողովածու, IV, Հայկունի, 1902, էջ 132—151:

5 (№ 13). Բլբուլի կուշ:— Ե. Լալայան, Վասպուրական, 1912, էջ 203—222:

6 (№ 14). Царь и его трое сыновей. — Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ ՏՅ. մատ.), 33, III, с. 66—74.

7 (№ 15). О птице Мурги (Морг) Гюли Хандан (татарск.). — ՏՅ. մատ., 19, II, с. 242—261.

8 (№ 16). Царевич Пирам (айсорск.). — ՏՅ. մատ., 18, II, с. 72—82.

9 (№ 17). Слепой царь (мингр.). — ՏՅ. մատ., 18, III, с. 44—48.

10 (№ 18). Похождения царевича Георгия (грузинск.). — ՏՅ. մատ., 13, II, с. 57—70.

11 (№ 19). Отповское завешание (арм.). — ՏՅ. մատ., 13, II, с. 116—126.

12 (№ 20). Сказка об Иване-царевиче, жар птице и о сером волке. — Афанасьев, Русские народные сказки, I, № 102.

13 (№ 20). Жар птица и Василиса-царевна. — Афанасьев, Русские народные сказки, I, № 103.

14 (№ 21). Бичи (грузин.). — ՏՅ. մատ., 18, III, с. 402—409.

15 (№ 22). Морской конь (аварск.). — ՏՅ. մատ., 14, II, с. 94—102.

16 (№ 25). Три царевича. — Сборник сведений о кавказских горцах, 8, II, с. 21—24. Дополнение к статье «Две недели в Даргинском округе» (այսուհետև՝ ՏՅ. սвед.).

17 (№ 26). Царь-девица. — ՏՅ. սвед., 2, V, с. 67—71.

18 (№ 30). Золотая птица (немец.). — Сказки, собранные братьями Гримм, 1893, с. 174—179.

19 (№ 31). Հազարան բյուրյուլ. Հազար ու մի գիշերներից:— Изд. Мардруса, т. IV, 1903, с. 5—24, և Թարգմանություն Գ. Աղայանի, «Հասկեր», 1911, № 1—4.

20 (№ 32). Сказка о золотом перышке. — Итальянские сказки, пер. М. Андреевой, под ред. М. Горького, 1912, с. 23—24.

21 (№ 33): Հազարան բրտու կամ Ալա-Գինոյի հազըր— Ծ. լալալան, Մարգարիտներ հայ բանահյուսության, Ա, 1912, էջ 125—143:

22 (№ 34). Сказка о шахе Эминшахе и его трех сыновьях (татарск.). — Сб. мат., II, с. 64—101.

23 (№ 35). Сказка о шахе Казаншахе (о Казанском царе) и о славном царевиче Сулеймане (татарск.). — Сб. мат., 42, II, с. 135—146.

24 (№ 38). Царевич Хасан Паша, достаемый при помощи волка трех волшебных птиц, красавицу царевну и желтого коня. — Н. Остроумов, Сарты. Сартские народные сказки. II, 1892, с. 101—114.

Բացի այս 24 տարբերակների վերաշարադրանքից, Քումանյանի Քզ-Քերում պահպանվել են նաև հերիաթի մի քանի ուրիշ պատումների հետ կապված նյութեր: Դրանք են.

ա) Ավարական Морской конь հերիաթի մի այլ տարբերակի սեղմ վերապատմությունը՝ քաղված Сборник сведений о кавказских горцах հրատարակությունից (հ. 2, V, էջ 67—71): Ինքնագիրը պահվում է ՔՔ, 1008/8255: Համապատասխանում է Քումանյանի կազմած ցանկի № 22-ին: Տպագրվել է ՌԻՀ—3, էջ 247:

բ) Վրացական մի հերիաթի վերաշարադրանք և քաղվածքներ ըստ հետևյալ գրքի՝ А. Хаханов. Очерки по истории грузинской словесности (т. 1—2. 1895—189): Համապատասխանում է Քումանյանի կազմած ցանկի № 36 և № 37-ին: Ինքնագիրը՝ ՔՑ, № 10 ձև: Տպագրվել է ՌԻՀ—3, 266—267:

գ) Պարսկական ծագում ունեցող մի հերիաթի սեղմ շարադրանք՝ քաղված հետևյալ գրքից. А. фон-Гакстгаузен, Закавказский край, 1857. Ինքնագիրը՝ ՔՑ, № 10 ձև: Տպագրվել է ՌԻՀ—3, էջ 271:

Մրագրային նշումներ. «Հազարան բրտուի» հետ կապված թղթերում պահպանվել են բազմաթիվ ուրիշ նյութեր, որոնք, փոքր բացառությամբ, տպագրվել են ՌԻՀ—3, էջ 278—307: Այդ նյութերի շարքում, բացի սյու-ժետային հատվածներից, ասույթներից, ծրագրային նշումներից և գրառումներից, մեծ տեղ են զբաղում զանազան ուսերեն աղբյուրներ, ց թարգմանած կամ վերապատմած հատվածներ և մտքեր՝ կապված հունական և արևելյան դիցաբանության, ժողովրդական բանահյուսության և գրականության ամենատարբեր խնդիրների հետ: Աղբյուրների ցանկը արված է ՌԻՀ—3, էջ 318:

Այդ նյութերից սույն հատորում տպագրվում է միայն մի քանի փոքրիկ հատված, որոնք ոչ թե պատմողական, այլ սկզբունքային բնույթ ունեն, մասնանշում են ստեղծագործության փիլիսոփայական-գեղագիտական իմաստի հեղինակային ըմբռնման այլևայլ կողմեր:

Ինքնագիրը պահվում է ԳԱՔ, ՔՑ, № 10 ժէ:

Հազարան բրտույու <Ցանկ հավանած նյութերի>:—

Մատենագիտական այս ցանկը (գրված թանաքով, շոք մեծ թերթերի վրա) պահվում է ԳԱՔ, ՔՑ, № 10 ժռ: Արտատպվում է Ինքնագրից՝ բաց թողված որոշ տվյալների լրացումով և կրճատված բառերի վերականգնումով:

Ցանկը կազմվել է 1910-ական թթ., ավելի ճշգրիտ՝ 1914-ից հետո, քանի որ նրա մեջ տեղ են գտել նաև 1914 թ. վերջին Քումանյանի գրի առած երկու տարբերակները (№ 54 և № 55):

Ցանկի մեջ մտած 58 անվանումից ճիշտ կեսը հայերեն նյութեր են, մյուս կեսը՝ ռուսերեն: Ռուսերեն տարբերակները բոլորն էլ քաղված են տպագիր աղբյուրներից՝ բանահյուսական և ազգագրական հրատարակություններից: Իսկ հայերեն անվանումների մեջ գերակշռում են ձեռագիր նյութերը (19): Դրանց մի մասը իր՝ Քումանյանի ձեռքով գրի առնված տարբերակներն են (թեև նշված ոչ լրիվ. ցանկում, օրինակ, բացակայում են այս հատորում հրատարակվող բանավոր պատումներից № 5 և № 6-ը): Մյուս ձեռագիր նյութերը գրի են առնվել տարբեր բանահավաքների ձեռքով (Ծ. լալալան, Վրեն Տաշրացի և ուրիշ՝ քիչ հայտնի անուններ) և հանձնվել են Քումանյանին՝ օգտագործելու համար: Դրանց մի մասը պահպանվել է Քումանյանի արխիվում՝ տարբեր համարների տակ: Հայերեն տասը նյութ էլ Քումանյանն այս ցուցակի մեջ մտցրել է՝ քաղելով ազգագրական ժողովածուներից և «Հասկեր» մանկական ամսագրից:

Համադրելով այս ցուցակը բանաստեղծի տեսադաշտում եղած նյութերի հետ, կարելի է այն լրացնել մի քանի ուրիշ անուններով: Այնպես որ 1922 թ. հուլիսի 22-ի նամակում «Հազարան բրտուի» մասին Քումանյանի կատարած հայտարարությունը («հավաքել եմ երկար տարիների ընթացքում նրա վաքսունից ավելի վարիանտները») միանգամայն ճշգրիտ է ներկայացնում կատարված աշխատանքի շահերը:

ԱՔԻԼԵՍ

(էջ 109, 475)

Առաջին անգամ՝ ԲՄ II, էջ 119—129, վերնագրի տակ «Ժուկովսկուց» նշումով և տողատակի ծանոթագրություններով: Պետք է ենթադրել, որ Քարգամանությունը կատարվել է 1891 թ. և անմիջապես մտցվել Քումանյանի բանաստեղծությունների նոր հատորի մեջ (զբաղմանական արտոնությունը տրված է Ս. Պետերբուրգում, 1892 թ. մայիսի 7-ին): Քարգամանության այդ տարբերակի ինքնագիրը չի պահպանվել:

Տաս տարի անց Քարգամանությունը գեներալվել է ԲԹ ժողովածուի մեջ (էջ 248—254, առանց ժուկովսկու անվան հիշատակության), Այս հրատարակության համար Քումանյանը էական փոփոխություններ է մտցրել, որոնք ցույց են տրվում տարբերակների բաժնում: Բացի ոճական բազմաթիվ շտկումներից, նա զգալի շտկով կրճատել է ստեղծագործությունը՝ ժուկովսկու բալլադի, ինչպես նաև Քարգամանության առաջին տարբերակի 208 տողի փոխարեն թողնելով 160 տող (կրճատված են ԲՄ II տերթսի 19—26, 49—72, 121—136 տողերը):

Պահպանվել է Քարգամանության այս երկրորդ տարբերակի ինքնագիրը (ԳԱԹ ԲՖ, № 158): Դա, ամենայն հավանականությամբ, այն ձևագիրն է, որից կատարվել է ԲԹ ժողովածուի տպարանային շարվածքը: Ինքնագիրը վերնագրի տակ ունի «Ռուսերենից» նշումը և համարակալված է 210—216 (պետք է ենթադրել, որ ԲԹ ժողովածուի համարակալված էջերն են դրանք), բայց 214—215 էջերը չկան: Այսպիսով, մեզ հասել են բալլադի Քարգամանության վերամշակված տարբերակի 1—92, 141—160 տողերը որոնք, կետադրական և ոճական մի քանի ոչ մեծ շեղումներից բացի, լիովին համընկնում են ԲԹ բնագրին:

Մրրորդ և վերջին անգամ Քումանյանն այս Քարգամանությանը անդրադարձավ ԲԹ ժողովածուն կազմելիս՝ մտցնելով, ճիշտ է, համեմատաբար ոչ մեծ ուղղումներ: ԲԹ մեջ (էջ 236—241) Քարգամանության վերնագրի տակ, փակագծերում, կա դարձյալ «Ժուկովսկուց» նշումը: Քումանյանի կենդանության ժամանակ «Աքիլեսը» վերջին անգամ տպագրվել է 1922 թ. Սուրբաթայանի կազմած ԳԳ քրեստոմատիայում (էջ 167—169), որի համարը սակայն, հիմք է ծառայել ոչ թե վերջին՝ ԲԹ, այլ ԲԹ-ի խմբագրությունը՝ մի քանի փոքրիկ շեղումներով:

Քումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ (ԵԺ II, 175—179) «Աքիլեսը» մտել է ԲԹ տարբերակով: Ներկա հրատարակության

համար ևս հիմք է ընդունվել այդ խմբագրությունը, իբրև հեղինակի կողմից վերանայված վերջին տարբերակ: Մյուս հրատարակությունների բոլոր այլ-ընթերցումներն ու կրճատված տողերը բերվում են տարբերակների բաժնում:

«Աքիլես» բալլադի Քարգամանությունը դասական ումանտիկական պոեզիայի նկատմամբ բուռն հետաքրքրության արտահայտություններից է, որ 1890-ական թթ. որոշակիորեն նկատվում է Քումանյանի ստեղծագործական կենսագրության մեջ: Բայրոնի «Շիրլոնի կալանավորի» և Լեոնտոսովի «Մծիրիի» Քարգամանությունից առաջ նա դիմեց ռուսական ումանտիզմի առաջին խոշորագույն ներկայացուցչին՝ Վ. Ա. Ժուկովսկուն (1783—1852): Ի տարբերություն ժուկովսկու բալլադների մեծ մասի, որոնք արևմտամեծրոպական բանաստեղծներից կատարված ազատ կամ ճշգրիտ Քարգամանություններ են, «Աքիլեսը» նրա ինքնուրույն գործերից է, որի մեջ անտիկ գրականությունից քաղված հայտնի սյուժեն իմաստավորված է ումանտիկ-սենտիմենտալ դիրքերից: Բալլադը գրվել է 1812—1814 թթ. և առաջին անգամ տպագրվել 1815 թ. «Վեստնիկ Նվրոայի» ամսագրում: Դրանից մոտ երեք տասնամյակ անց, Պուշկինին նվիրված հոդվածաշարի 2-րդ մասում (1843), Վ. Գ. Բելինսկին տվեց «Աքիլեսի» սեղմ, բայց ամբողջական գնահատականը: Նշելով ժուկովսկու բալլադում ումանտիզմի ազդեցությունից եկող այնպիսի գծեր, ինչպես «Նուական հայեցողության մեջ մտցված» սուբյեկտիվ տարրերը, «ավելի ձգձգված, քան սեղմված» լինելը, քննադատը միաժամանակ ասում էր. «Նրա մեջ կան հիանալի տեղեր», «և ընդհանրապես ժուկովսկու «Աքիլեսը» նրա նշանավոր երկերից մեկն է» (Յ. Գ. Белинский, Полное собрание сочинений, т. VII, 1955, с. 206—207):

Երիտասարդ Քումանյանի գեղարվեստական որոնումների մեջ որոշակիորեն զգացվում է նաև անտիկ աշխարհի պատմությունն ու մշակույթը ճանաչելու ձգտումը, որի ցայտուն դրսևորումներից մեկն էլ եղավ ժուկովսկու բալլադի Քարգամանությունը: Նշենք, որ անտիկ դիցաբանության իմաստությունը երևում է նաև «Անուշի», «Պուտն ու Մուսայի» առաջին տարբերակներում, հետագա շրջանի որոշ հոդվածների, կախարդական հեքիաթների նախապատրաստական նյութերի մեջ:

Քումանյանը ձգտել է պահպանել բնագրի տաղաչափական կառուցվածքի հիմնական գծերը՝ ութտողանի տներ, բոլոր կենտ տողերը կազմված ութ, իսկ զույգ տողերը՝ յոթ վանկից: Սակայն կա մի սկզբունքային տարբերություն: Ժուկովսկու բալլադը գրված է կանոնավոր քորեյական տողերով, մեկընդմեջ իգական և արական հանգերի կայուն հաջորդականությամբ: Այնինչ Քումանյանը, ելնելով մեր ազգային լեզվի բնույթից, Քարգամանել է հայկական վանկային ոտանավորով՝ առողերի ներքում, 4-րդ վանկից հետո ամենուր դնելով հատած և առաջացնելով դադար: Իգական և բացարձակորեն գերակշռող արական հանգերի հաջորդափոխությունն էլ որևէ կայուն սկզբունքի չի ենթարկվում:

ԲՄ II-ում, ինչպես ասվեց, բալլադն ունի տողատակի մի քանի ծանո-



Քաղաքային, որոնք վերաբերում են դիցարանական անուններին: Այդ բացատրությունները, հատկապես համեմատաբար ծավալուն առաջինն ու երրորդը Քումանյանը թարգմանել է իր դիցարանական բալլադին ժողովրդական կցած ծանոթագրություններից (В. А. Жуковский, Сочинения, М., 1954, с. 542): Ստորև վերատպվում են այդ բոլոր ծանոթագրությունները՝ բերելով, նախ, թարգմանության համապատասխան տողերը, ապա նրանց բացատրությունը: Նույն սկզբունքով բերվում են նաև «Աքիլլեսի» դիցարանական անունների այն բացատրությունները, որ տվել է անտիկ գրականության խոր գիտակ Հ. Սուրխաթյանը իր «Գրական գոհարներ» դասագրքում: Ճիշտ է, Քումանյանի և Սուրխաթյանի ծանոթագրությունների մեջ կան որոշ համընկնող կետեր, բայց ընդհանուր առմամբ դրանք իրար լրացնում են և կօգնեն ընթերցողին ավելի լավ հասկանալու բալլադի պատմական փաստերն ու դիցարանական մթնոլորտը: Թարգմանության մեջ հիշատակվող մի քանի ուրիշ դիցարանական անուններ, որոնք հիշյալ երկու աղբյուրներում չկան, բացատրվում են լրացուցիչ ծանոթագրությունների մեջ:

## ԲՄ II-ի հեղինակային ծանոթագրություններ\*

Վերնագիր՝ «Աքիլլես»:

1 Հունաց դյուցազն Աքիլլեսի ընտրությանն առաջարկված էր յոթ օրհասի որոշումը—կամ երկար ապրել առանց փառքի կամ երիտասարդ հասակում մեռնել փառավոր մահով. նա վերջինն ընտրեց և, հայրենիքին հասած նախատիները լառնալու համար, հունաց քաջերի հետ հայտնվեցավ Տրոյիայի (Իլիոնի, Տրոյադայի) պարիսպների տակ: Նա գիտեր նաև, որ տրոյացիացի արքայորդի Հեկտորի մահից հետո ինքն ապրելու չէ այլևս, և սակայն սպանեց Հեկտորին՝ յուր ընկեր Պատրոկլեսի վրեժն առնելով: Այնուհետև նրան ամեն տեղ հետևում էր օրհասի մահազուշակ ձայնը:

4 Քնած բանակն Ատրիդյան:

Ատրիդեն—հայրանունն է հունաց բանակի ընդհանուր հրամանատար Ագամեմնոն թագավորի:

13—16 Դատարկ գաշտում երևում է Մենակ կառքը Պրիամի, Ու Հեկտորի դին տանում է Բանակիցը հույներին:

Սերունի Պրիամոս արքան, առաջնորդվելով Հերմես դիցունուց, գիշե-

\* Տողերի համարակալումն ըստ ԲՄ II-ի:

րով գնաց հունաց բանակը և ծնկաշոք խնդրեց Աքիլլեսից սպանված որդու դիակը, մեղմացնելով անողոր դյուցազնի սիրտը սրտաշարժ խոսքերով, և, ստանալով, գիշերով վերադարձավ Իլիոն:

51—52 Եվ պարկուհին ընդհատել է

Արդեն օրերն իմ կյանքի:

Պարկուհի—բաղդի աստվածուհին:

55—56 Վերջացած է, հանգավ շահը

Պելիդեսի օրերի:

Պելիդես—հայրանունն Աքիլլեսի:

73—74 Էլ մի՛ սպասիր, որ Մենեսոի,  
Ուղիղ չի գալ հորանց տուն...

Մենեսոի—Պատրոկլեսի հայրը:

139—140 Եվ եկվորին սպասում է  
Քարոնը սև Ստիֆսի մոտ:

Քարոն—Նավապետ ստորերկրյա դիցարանական Ստիքս (Աքերոն) գետի:

153—154 Սկյուրոսից դեպի հեռու  
Նեոպտոլեմ կրլողա.

Նեոպտոլեմ—Աքիլլեսի որդին, որ Սկյուրոս կղզումն էր:

## ԳԳ ծանոթագրությունները

1 Միգում կուրավ Իդա սարը,

Իդա սարը գտնվում է Տրոյայի մոտ:

4 Քնած բանակն Ատրիդյան:

Ատրիդ՝ Ատրեի որդի Ագամեմնոնը, հույն բանակի պետը:

43—44 Եվ պարկուհին ընդհատել է

Արդեն օրերն իմ կյանքի:

Պարկուհի՝ ճակատագրի դիցուհի: Պարկուհիների թիվը երեքն էր, որոնցից մեկը մահում էր մարդկային կյանքի թիվը, մյուսը՝ ձգում, երրորդը՝ կտրում:

48 Պելիդեսի օրերի...

Պելիդ կամ Պելիդես՝ Պելեյի որդի Աքիլլեսը:

83 Սպեբի ջրեր, բազուկըս ձեզ

Սպեբ՝ գետ Թեսալիայում:

Քարոն՝ առասպելական ծերունի, մեռնողների ստվերները Ստիֆս գետով ստորերկրյա տարտարոս փոխադրողը:

134 Խաղաղ Սիմույս ու Քսանտ,  
Քսանտ ու Սիմույս՝ գետեր Տրոյայի շրջանում:

### Իիցաբանական այլ անունների բացատրություն

21 Անդրոմաքե— «Իլիականում» Տրոյայի զլխավոր հերոսի՝ Հեկտորի կինը:

21 Հեկաբե— Հեկտորի մայրը, Տրոյայի արքա Պրիամոսի կինը:

40 Արամազդ— հին հայոց դիցաբանությունից վերցրած այս անունը Քումանյանն օգտագործել է բնագրի Ջեսի փոխարեն, որն անտիկ հույների գերազույն աստվածն էր:

81 Պատրակլես— «Իլիականի» նշանավոր հերոսներից մեկը, Աքիլլեսի մանենամտերիմ ընկերը, որը զոհվեց Հեկտորի ձեռքով:

90 Ապոլլոն— անտիկ դիցաբանության զլխավոր դեմքերից մեկը, լուսնի, պոեզիայի և երաժշտության, միամասնակ՝ ուղմի աստված, որն իր պաշարաատած նետերով տապալում էր իր համար անցանկալի հերոսներին: Տրոյական պատերազմի ժամանակ պաշտպանում էր տրոյացիներին (այդ պատճառով էլ Աքիլլեսն իր անխուսափելի մահը կապում է նրա հետ՝ «Պատրաստել է նետը արդեն Ապոլլոնը անողոր»):

ԱՄ 11 բնագրի 72 տողում հիշատակվող Տենարը («Դեպի Տենար ևս կերթամ») Հունաստանի հարավում՝ Պելոպոնեսի թերակղզում գտնվող բարայր էր, որն իր արձակած խեղդիչ գազերի պատճառով համարվել է զոսիթի նախազուտ:

### ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

(էջ 115, 479)

Առաջին անգամ տպագրվել է 1896 թ. առանձին գրքույկով (Քայրեն. Շիլիոնի կալանավորը, թարգմ. Հովհաննես Քումանյանց, հրատ. Փիլիպոս Վարդապրյանի, Քիֆլիզ, 1896, 23 էջ, գրաքննական թույլատվությունը՝ 1896 թ. մարտի 2-ին): Ինքնագիրը չի պահպանվել:

Քումանյանի կենդանության ժամանակ թարգմանությունը, խմբագրված և կրճատումներով, տպագրվել է ևս երկու անգամ՝ ԲՔ, էջ 257—269 և ԲԲ, էջ 253—264: Ձեռնգրվել է ԾԺ 11, 206—214:

Այսին հրատարակության մեջ սույն բովանդակում է ԲԲ տեքստը, որն ունի տողատակի նշում՝ «կրճատված թարգմանություն»:

Առաջին հիշատակությունը Բալթոնի պոեմի թարգմանության մասին հանդիպում ենք 1895 թ. մարտի 21-ին Ավ. Արասխանյանին գրած նամակում: Եարադրելով «Մուրնի» հետ իր գծովելու և հեռանալու պատմությունը, Քումանյանը հիշեցնում է նաև, ինչ ինչպես ամսագրի խմբագիրը, մերժելով «Քորչավում» աշխարհի տպագրությունը, իրեն ասել է. «Ինչ իբրև հողվածագիր հայտնի չեք, «Շիլիոնի կալանավորը» տվեք» (ԾԺ V, 101): Այդ վեճն ու գծությունը տեղի են ունեցել 1893 թ. հոկտեմբեր-նոյեմբերին: Հետևաբար, այդ ժամանակ ոչ միայն հայտնի էր, որ Քումանյանը թարգմանում է Բայրոնի նշանավոր պոեմը, այլև գուցե գործը հիմնականում ավարտված է եղել: Սակայն պետք է կարծել, որ թարգմանության վրա նա աշխատել է նաև հաջորդ տարիներին, մինչև որ Փ. Վարդապրյանի նյութական օժանդակությամբ հնարավոր եղավ այն տպագրել 1896 թ. սկզբին: Այսպիսով, «Շիլիոնի կալանավորի» թարգմանության ժամանակը պետք է համարել 1893—1895 թթ.:

90-ական թթ. սկզբին Քումանյանը ջանքեր է թափում անգլերենի տիրապետելու համար, որի նպատակը, առաջին հերթին, Բայրոնին և Շեքսպիրին բնագրով կարդալն էր: Հիշելով Քումանյանի հետ 1891 թ. ամռանից սկսված իր ծանոթության պատմությունը, Գևորգ Ասատուրը վկայում է. «Ի միջի այլոց, պետք է ասեմ, որ նա այդ ժամանակ անգլերենի դասեր էր վերցնում Քիֆլիսի սնգլիական փոխ-հյուպատոս Մուրտազից: Թե որքան առաջդիմեց նա այդ ասպարեզում—չգիտեմ, բայց գիտեմ, որ նա անգլերեն էր սովորում, որպեսզի կարողանա «Շիլիոնի կալանավորը» անմիջապես բնագրից թարգմանել: Այդ գործում նրան օգնում էր միստր Մուրտազը» (ԹԺԷ, 35):

«Շիլիոնի կալանավորի» թարգմանությունը կարևորագույն օղակն է այն բուտն հետաքրքրության, որ 90-ական թթ. հանդես է բերել Քումանյանը անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնի (1788—1824) ստեղծագործության նկատմամբ: Քումանյանագիտության մեջ այդ երևույթը երբեմն նույնիսկ կոչվել է «բայրոնիզմի շրջան», որը, սակայն, չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Քումանյանի ստեղծագործական զարգացումը այդ տարիներին թեև շատ կողմերով կապված էր դասական ուսմանտղմի, մանավանդ Բայրոնի և Լերմոնտովի ժառանգության հետ, բայց հիմնականում ընթանում էր ուսուցիտական մեթոդի սկզբունքների տիրապետման ուղղությամբ: Մահից երկու ամիս առաջ այդ մասին նա ասել է. «Ծիշտ է, իմ բանաստեղծությունների մեջ բայրոնական մի ամբողջ շարք կա, ինչպես և կշանքում» շրջան, բայց դա եղել է ИАНОСНІЙ, ոչ հարագատ, ինչպես, օրինակ՝ «Դու քո ճամբին գնա, քույրիկ» և այլն» (Ն. Քումանյան, էջ 306): Նոր դարի սկզբին հասնելով լիարյուն ուսուցիտական արվեստի բարձունքին, Քումանյանն իր ստեղծագործական նախասիրություններով կապվում է, առաջին հերթին, Շեքսպիրի և Պուշկինի հետ:

Այնուամենայնիվ, Բայրոնի ստեղծագործությամբ հրապարակվելը շատ

բան տվեց Լրիտասարդ Քումանյանին, մի որոշ շրջանում օգնեց նրան արտահայտելու իրականության նկատմամբ սուր քննադատական ոգին, անհատի և հասարակության ազատության նվիրական գաղափարները: Բայրոնի նկատմամբ այդ լայն հետաքրքրության արտահայտությունն էր նաև 90-ական թթ. «Չայլդ Հարոլդի» ու «Մանֆրեդի» հատվածների և, մասնավորապես, «Շիրիտնի կալանավորի» թարգմանության փաստը: Իր հոգեբանական բովանդակության մեջ խոսքն էր բայրոնի գծի շատ բնորոշ կողմեր, «Շիրիտնի կալանավորն» այդ շրջանում մի շարք գծերով համընկնում էր հայ բանաստեղծի հասարակական և անձնական արամադրություններին: Այդ ստեղծագործությանը Քումանյանն, անկասկած, նախապես ծանոթացել է Վ. Ա. Փոկոպկու ուսերեն հանրահայտ թարգմանության միջոցով, որի մասին Բելինսկին գրել է. «Այստեղ—տարօրինակ բան—մեղմ թախծի և վճատ տանջանքի մեր ողու երգիչը ամուր և հզոր խոսք է գտել իր հոգում՝ արտահայտելու համար հուսահատության սարսափելի, ստորկետնյա տանջանքները, որ գծագրել է Անգլիայի հսկա բանաստեղծի կայծակնային վրձիներ» (В. Г. Белинский, Полное собрание сочинений, т. VII, М., 1955, с. 209):

«Շիրիտնի կալանավորը» Բայրոնը գրել է 1816 թ. ժնկեր (Լեմանի) լճի ափին գտնվող Շիրիտնի բանտ-ամրոցն այցելելուց հետո: Այստեղ նա լսել է XVI դարի 30-ական թվականներին Սալոյայի դուքս Կարլ 3-րդի հրամանով այդ ամրոցը նետված Եվլյցարիայի անկախության մարտիկ և հանրապետական հերոս Յրանսուա Բոնիվարի կրած տանջանքների և Բեռնի ապստամբների կողմից ի վերջո ազատվելու պատմությունը: Սակայն պոեմում պատկերված է ոչ թե Բոնիվարի քաղաքական պայքարը, այլ նրա տառապալից «հոգու պատմությունը», որով և հերոսի կերպարը դառնում է ազատասիրության և հակաբռնապետական ոգու յուրօրինակ խորհրդանիշ: Երիտասարդ Քումանյանին պոեմը գրավել է հենց այդ հատկանիշներով: Եվ բնորոշ է, որ թարգմանության առանձին հրատարակության սկզբում նա զետեղել է անգլիացի մեծ բանաստեղծին նվիրված իր շափածո ձևը, ուր տրված է պոեմի ազատասիրական ոգու և նրա արդիական հնչողության վառ բնութագրերը.

**Բայրոնին**

Ի՞նչ մեծ հանճարով, ո՞վ հսկա պոետ,  
Ազատությունը կաշկանդող շղթան  
Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ  
Եվ քաղցրացրել ես վիշտը գերության:

Ի՞նչպես դարձրել ես բանտը հայրենիք  
Եվ ողջ աշխարհը լայնարձակ մի բանտ...

Ահա տանջանքի աշխարհում բռնիկ  
Մեծարում են քեզ որդիքը հիվանդ,

Եվ արտասվում են՝ քո անմահ հոգում,  
Ինչ ոնց է մարդու հոգին խորտակվում:

Հ. Ք.

Թարգմանության հաջորդ երկու հրատարակություններից (ԲԹ և ԲՐ) այս շափածո ձևը հանվել է (զետեղված է սույն հրատ. 1-ին հատորում, էջ 153):

«Շիրիտնի կալանավոր» հայերեն թարգմանությունը դրական գնահատականի արժանացավ Շիրվանդաղի գրախոսականում: Թեև վիճասանք խորհուրդ էր տալիս բանաստեղծին «երբեք հանձն չառնել թարգմանել այնպիսի երկեր, որոնց բնագրի լեզվին ծանոթ չէ», բայց և դրվատում էր նրա կատարած գործը, գրելով. «Քննհանրապես մերցրած, այդ թարգմանությունը մեզ շատ հաջող է թվում ոտանավորների սահունության և թեկնության կողմից: Եթե ուշադրություն չդարձնենք մի քանի մասնավոր թերությունների վրա» (Տգ, 1896, № 16, էջ 257):

Բայրոնի պոեմի թարգմանությանը Քումանյանը նորից անդրադարձել է 1903 թ.՝ իր նոր ժողովածուն (ԲԹ) կազմելու կապակցությամբ: Այդ նպատակով նա դիմել է Բարվում ապրող իր բարեկամ, ինժեներ-ֆիմիլիոս, անգլերենի լավ գիտակ Մխիթար Տեր-Անդրեասյանին՝ խնդրելով համեմատել իր թարգմանությունը անգլերեն բնագրի հետ և նրա բարելավման առաջարկներ անել (բանաստեղծի խնդրանքով ժամանակին նա ստուգել է նաև Քումանյանի դիտողությունները «Համլետի» հայերեն թարգմանություններին վերաբերյալ. — տե՛ս ԾԺ VI, 126): Պահպանվել է Մ. Տեր-Անդրեասյանի 1903 թ. մայիսի 9-ի ընդարձակ նամակը Քումանյանին, որի մեջ շատ բարձր գնահատական է տրվում նրա թարգմանությանը. «Շիրիտնի» համեմատեցի բնագրի հետ: Ուղղակի զարմանալի է, թե ի՞նչպես է հաջողվել քեզ անդրերեն չիմանալով, մի այդպիսի հույակապ թարգմանություն տալ մեզ... Համարյա բառացի... սակայն առանց խորթությունների. կանոնավոր հայերեն լեզվով: Այնքան տեղը բառացի, մոտիկ բնագրին, որ նույնիսկ տեղերի կարճ ու երկարությունը, նույնիսկ հանգերը շատ տեղ նույն բառերից են...» (ԲԹ, № 1693, էջ 1):

Թարգմանության և բնագրի համեմատության հիման վրա Մ. Տեր-Անդրեասյանն այնուհետև մի շարք կոնկրետ դիտողություններ և առաջարկներ է անում՝ տեղ գտած սխալներն ու անհարթությունները վերացնելու համար: Նամակի վերջում, ըստ երևութի՞ն պատասխանելով Քումանյանի կասկածներին՝ մտցնելով «Շիրիտնի կալանավորը» պատրաստվող ժողովածուի մեջ, թե՛ ոչ, նամակագիրն ասում էր. «... Դու իրավունք չունես զրկել հասարակությանը մի այդպիսի գլուխ-գործոցի չքնաղ թարգմանությունից... Գու ոչ մի իրավունք չունես զեն գցել և մեր աղքատիկ գրականությունը կողոպտել» (ն. տ., էջ 10):

\* Ձեռքով ուղղված՝ «գանգատվում են»:

Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, բարեկյանի դիտողությունները մեծ մասը թումանյանը հաշվի է առել և նրանց հիման վրա մտքերի է բաղմամբով ուղղումները: Բացի այդ, ԲՔ-ի համար պատրաստած նոր տարբերակում թումանյանը պոեմի տարբեր մասերից կրճատել է ուղիղ 100 տող՝ ծավալը հասցնելով 311 տողի: Ամենից մեծ կրճատումը կատարվել է պոեմի միջին մասերում՝ 95 տողից հետո, ուր անընդմեջ հանվել է 46 տող՝ 4 տող V գլխի վերջից, ամբողջ VI գլխից՝ 20 տող, և VII գլխի առաջին մասը՝ 22 տող (այս գլխի շարունակությունը միացվել է V գլխին): Բնագրի 14 գլխի փոխարին մնացել է 12 գլուխ: Այդ ուղղումներն ու կրճատումները նախապես կատարվել են պոեմի 1896 թ. հրատարակության մի օրինակի վրա, որը պահվում է ՔՑ, № 1352, նույն համարի տակ կա նաև գրքի մի այլ օրինակ, որի վրա Մ. Տեր-Անդրեասյանը հայերեն և անգլերեն լեզուներով բաղմամբով դիտողություններ է գրել, առաջաբկել է ճշտել մի շարք բառեր և արտահայտություններ:

Թարգմանության մեջ մտցված բոլոր ուղղումներն ու կրճատումները ցույց են տրվում տարբերակների բաժնում: Առանձին-առանձին տրվում են նաև գրքի հիշյալ օրինակի վրա կատարված այն ուղղումները, որոնք չեն մտել վերջնական խմբագրության մեջ, ինչպես նաև կրճատված տողերի մեջ մտցված փոփոխությունները (վերջին դեպքում՝ նախ բերելով ավելի տողի նախնական տարբերակը և ապա, շեղ գծից հետո, նրա փոփոխված ձևը):

Վերջին անգամ «Շիրիտնի կայանավորի» մեջ թումանյանը մի քանի փոփոխություն է մտցրել ԲՔ ժողովածուն կաղմելիս (համապատասխան տողերի նախորդ ձևը՝ բառ ԷՔ-ի, նկարագրվում է առանձին):

Թարգմանությունը կատարված է 10-վանկանի երկանդամ տողաչափով (բացառությամբ ութ 5-վանկանի կարճ տողերի):

## ՀԱՏՎԱԾՆԵՐ «ԶԱՅԼԴ ՀԱՐՈՒԴ» ՊՈՆՄԻՑ

Այս բնդհանուր վերնագրի տակ, որը տրվում է սույն հրատարակության խմբագրության կողմից, տպագրվում են թումանյանի թարգմանած երկու քնարական ստեղծագործություն, որոնք Ջ. Գ. Բայրոնի «Չայլդ Զարուդ» (լրիվ վերնագիրը՝ «Չայլդ Զարուդի ուխտագնացությունը», 1812—1818) պոեմի մասերն են: Երկուսն էլ մտնում են պոեմի առաջին գլխի մեջ. Չայլդ Զարուդի հրաժեշտի երգը 13-րդ տնից հետո, իսկ Ինեսին ձոնված երգը՝ 84-րդ տնից հետո: Պոեմում այդ երգերը որոշակիորեն առանձնանում են ինչպես ոճով, այնպես էլ տաղաչափական կառուցվածքով. ամբողջ պոեմին բնորոշ 9-տողանի և հանգավորման բարդ համակարգ ունեցող տներ (սպեյսներ-յան տուն) փոխարեն առաջին երգը գրված է 8-տողանի տներով, կարճ տողաչափով և խաչաձև հանգավորումով, իսկ երկրորդ երգը՝ դարձյալ խաչաձև հանգավորում ունեցող քառատող տներով: Այս քնարական հատվածների մեջ կենտրոնացված արտահայտություն են գտել բայրոնի վի բնորոշ

գծերը՝ ազատասիրության և անհատի հպարտ ինքնագիտակցության ոգին, համաշխարհային թախծի և հուսախաբության մոտիվները: Այդ տրամագրությունները, որոնք 1890-ական թվականներին հոգեհարազատ էին թումանյանին, մղեցին նրան թարգմանելու այս հատվածները:

## 1. ԶԱՅԼԴ ՀԱՐՈՒԴԻ ԵՐԳԸ

(էջ 126)

Առաջին անգամ՝ «Հորիզոն» գրականական հանդես, գիրք առաջին, Քիֆիսի, 1894, էջ 83—86 (գրաքննական թույլատվությունը՝ 1894 թ. նոյեմբերի 11-ին): Թումանյանի կենդանության ժամանակ այլևս չի տպագրվել, Ձեռեղվել է՝ ԵԺ 11, 201—203:

Թարգմանությունը, ինչպես նշվում է առաջին հրատարակման վերջում, կատարվել է 1893 թ.: Ինքնագիրը չի պահպանվել, Տպագրվում է «Հորիզոն» հանդեսից:

Բայրոնի պոեմի այս հատվածը, որը Բրիտանիայից հեռանալիս հերոսի հրաժեշտի խոսքն է, վերնագիրը չունի: Թումանյանը կոչել է «Չայլդ Զարուդի երգը»: Թարգմանելիս նա օգտվել է երգի տողացի թարգմանությունից, բայց նկատի է ունեցել նաև պոեմի ռուսերեն թարգմանությունները:

Հարուդի հրաժեշտի երգը բաղկացած է տասը 8-տողանի տներից: Թարգմանիչը պահպանել է այդ սկզբունքը, բայց տները կեսից տարածությունը բաժանվել են քառատողերի (թեև յուրաքանչյուր երկրորդ քառատողն սկսվում է սովորական և ոչ թե ներս տարված տողերով, իսկ գա նշանակում է, որ տների երկատումը կատարվել է, հավանաբար, տպագրության ժամանակ, զուտ տեխնիկական նկատառումներով): Հետագա հրատարակությունների մեջ կրկնվել է այդ ձևը: Մենք վերականգնել ենք տնելի 8-տողանի կառուցվածքը:

Թարգմանության առաջին հրատարակումն ունի հետևյալ երեք ծանոթագրությունները.

Չայլդ Զարուդի երգը—Բայրոնը 1809 թվին յուր հայրենիք Անգլիայից վշտացած հեռացավ դեպի Արևելք և այս ճանապարհորդության ժամանակ գրեց «Չայլդ Զարուդ» պոեման: Մեր թարգմանած հատվածը Չայլդ Զարուդի հրաժեշտի երգն է:

17 Մտտիկ աբի՝ մանկավիճու—«Այս երեխային (Ռոբերտ Ռեշտոն) ես վերցնում եմ ինձ հետ, գրում է բանաստեղծն յուր մորը. ես սիրում եմ արան, որովհետև, ինձ թվում է, թե սա էլ ինձ նման ձգված մի արարած է»:

41 Ն'կ, գրեակիրս հավատարիմ—Ուխտյա մ Յետչեր. Բայրոնի 20 տարեկան հավատարիմ ծառան, որն և ներկա էր յուր տիրոջ վերջին հառաչանքին Միսալունգում 1824 թ. ապրիլի 10-ին:

2. ԻՆՏԵՍԻՆ  
(էջ 129, 492)

Այս ընարական հատվածը, որը պոեմի հերոս Չալիզ Հարություն դիմումն է իր բարեկամուհուն, Քումանյանն առաջին անգամ թարգմանել է 1890-ականի կեսերին: Թարգմանության այդ առաջին տարբերակը գրի է առել Մարիամ Վարդապարտյանի ալբոմում (ԳԱԹ, ՔՖ, № 413): Վերջում նշված է գրառման թվականը՝ <18>96. II: Բանաստեղծությունը թարգմանելիս, բացի սողաչիից, Քումանյանը նկատի է ունեցել նաև Պ. Կոզլովի և Դ. Միխայլովսկու ոտաներին թարգմանությունները:

Ավելի քան տաս տարի անց՝ 1907 թ., Քումանյանը նորից է անդրադարձել իր այս թարգմանությանը՝ ստեղծելով բոլորովին նոր տարբերակ, որը տպագրվել է «Վտակ» թերթի 1908 թ. հունվարի 1-ի համարում (№ 1, էջ 2): Սակայն այս փոփոխակը նույնպես չի բավարարել Քումանյանին, և նա հաջորդ տարիներին այն բարելավելու նոր փորձեր է արել: Նախ, պահպանվել է «Վտակ» թերթի կտրոնը, որի վրա բանաստեղծը բազմաթիվ ուղղումներ է կատարել (ՔՖ, № 1404): Վերջում ձևագրով նշված է թարգմանության թվականը՝ 1907: Բացի այդ, մեզ հասել է նաև թարգմանության երկու ձևագիր, որոնք, հավանաբար, վերաբերում են 1910-ական թթ. սկզբին (ՔՖ, № 150, 150 ա): Մեկը գրված է Քումանյանի ձեռքով, մյուսը նրա դստեր՝ Անուշի ձեռագիրն է: Երկու ձևագրերի վրա էլ կան բանաստեղծի կատարած ուղղումներ և փոփոխություններ:

Քումանյանի կենդանության ժամանակ թարգմանությունն այլևս չի տպագրվել:

Այսպիսով, կարելի է առանձնացնել «Ինեսին» հատվածի թարգմանության հինգ տարբերակ. ա) Մարիամ Վարդապարտյանի ալբոմում գրի առածը, բ) «Վտակ» թերթում տպագրվածը, գ) թերթի կտրոնի վրա կատարած փոփոխություններից առաջացած տարբերակը, դ) Քումանյանի ինքնագիրը (Ա) և ե) Անուշի արտագրած տարբերակը (Բ): Ալբոմում գրի առնվածը, նկատի ունենալով նրա ոճական և կառուցվածքային էական շեղումները, սույն հրատարակության մեջ առաջին անգամ տպագրվում է լրիվ տեսքով, իբրև առանձին տարբերակ:

Թարգմանության հիմնական բնագրի ընտրությունը կապված է լուրջ դժվարության հետ, քանի որ հիշյալ հինգ տարբերակներից և ոչ մեկը չի բավարարել Քումանյանին ու վերջնական համարվել չի կարող, իսկ Գ. Գ. և տարբերակներում կան մի շարք անավարտ տողեր: Քումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ (ԾԺ II, 204—205) հիմք է բեղունվել տպագիր տեքստը՝ նրա վրա կատարված ձեռագիր ուղղումներով (գ խմբագրություն), ընդ որում առանձին դեպքերում բնագրի մեջ ներմուծվել են նաև մյուս տարբերակներից քաղված տողեր ու բառեր, որոնք կոմպոզիցիայի թվացել են նախընտրելի: Տեքստի պատրաստման այս սուբյեկտիվ եղանակը ընդունելի չէ:

Սույն հատորի հիմնական բաժնում արտատպվում է «Վտակում» հրատարակված խմբագրությունը, քանի որ այն առկա տարբերակներից միակն է, որը գեթ մի որոշ շրջանում բավարարել է թարգմանչին և ավարտուն տեսքով հանձնվել է տպագրության: Հաջորդ երեք տարբերակները (Գ, Գ, Ե) ակնհայտորեն անավարտ, սևագիր բնույթ ունեն: Նրանց տարբերությունները տպագիր տեքստից ներկայացվում են միասնաբար և բոտ առանձին տողերի, որով ավելի լավ է երևում փոփոխակների բազմազանությունը և թարգմանչի ստեղծագործական որոնումների պատկերը:

ՄՄԻՐԻ  
(էջ 131, 498)

Առաջին անգամ լույս է տեսել առանձին գրքով, 1896 թ. (Լեւոնտավ. Մժիրի, թարգմ. Հովհաննես Քումանյանց, հրատ. Փիլիպոս Վարդապարտյանի, Քիֆլիկ, 1896, 35 էջ, գրաքննական թույլատրությունը՝ 1896 թ. ապրիլի 10-ին): Թարգմանությունն ինքնագիրը չի պահպանվել:

Քումանյանի կենդանության ժամանակ, որոշ փոփոխություններով, թարգմանությունը երկրորդ և վերջին անգամ տպագրվել է՝ ԲԹ, էջ 273—302: Հետմահու բոլոր հրատարակությունների համար (այդ թվում նաև ԾԺ II, էջ 180—200) հիմք են ծառայել ԲԲ ժողովածուի շարվածքի համապատասխան էջերը (265—292) և նրանց վրա բանաստեղծի կատարած ձեռագիր ուղղումները, որոնք, սակայն, ժամանակին չեն հրապարակվել, քանի որ «Մժիրին» ի վերջո դուրս է մնացել այդ գրքից (մանրամասները տե՛ս ստորև):

Ներկա տպագրությունը ևս կատարվում է ԲԲ ժողովածուի շարվածքի հիշյալ առանձնատիպից, որը պահպանում է ԳԱԹ, ՔՖ, № 1351: Մյուս հրատարակությունների բնագրային տարբերությունները և թարգմանության հետ կապված բոլոր ձեռագիր նյութերը հավաքված են տարբերակների բաժնում:

Մ. Յու. Լեւոնտավի (1814—1841) նկատմամբ բուռն սերն ու հետաքրքրությունը Քումանյանի մեջ ծագել են վաղ պատանեկան տարիներից և հարատևել են մինչև վերջ: Այդ մասին նա վկայել է 1902 թ. Յու. Վեսնլովսկուն գրած հայտնի նամակում (ԾԺ V, 232—236), 1905 թ. «Ինքնակենսագրության» մեջ (տե՛ս «Լույս» օրացույց—հանդեսի հավելվածը, 1905), «Վովկասի մեծ որդեգիրը» հոդվածում (1914, ԾԺ IV, 302—304) և ուրիշ առիթներով: Բազմաթիվ վկայություններ կան նաև ժամանակակիցների հուշերում: 1890-ական թթ. հայ բանաստեղծը թարգմանել է Լեւոնտավի «Եղձ», «Սա չեմ ուզում մարդ իմանա...», «Հրեյտակ» բանաստեղծությունները, ավելի ուշ՝ Գյոթե-Լեւոնտավի «Լերանց շարքերը...»: Հայտնի է նաև, որ դարավերջին Քումանյանը մտադիր է եղել թարգմանել և առանձին գրքուկով տպագրել Վ. Գ. Բելինսկու «Լեւոնտավի բանաստեղծությունները» նշանավոր հոդվածը, բայց այդ ծրագիրը չի իրականացել՝ հրատարակվել է միայն Մ. Յու. Լեւոնտավի «Լեւոնտավի» գրքում:

բակչական ընկերության հետ ծագած տարաձայնությունների պատճառով (տե՛ս ՈՒԶ—2, 311—314):

Քումանյանին հատկապես հարազատ էր Լեւոնտովի ստեղծագործության կենտրոնական և բարձրագույն երևույթներից մեկը՝ «Մծիրի» պոեմը, իր ազատասիրական հղոր պաթոսով, կովկասյան բնության շքեղ պատկերներով: Դեռ 1890 թ. գրած և ԲՄ II ժողովածուի մեջ տեղադրված «Մերձած օրենք» պոեմն իր վրա կրում էր «Մծիրիի» անմիջական և շատ որոշակի ազդեցությունը՝ մի այլ տարբերակով կրկնելով անհատի աղատության և իրավունքների ոռոմանտիկական մոտիվները: Այդ մասին իտալիել է ժամանակի բնագրատության մեջ, խոստովանել է նաև ինքը՝ Քումանյանը («Մերձած օրենք» գրելիս ազդվել եմ Լեւոնտովից»,— 1919 թ. մի զրույցի ժամանակ ասել է նա.— Ն. Քումանյան, էջ 205): 1904 թ. գրած մի նամակում Քումանյանն ընդունում էր «բայրոնա-լեւոնտովյան» մոտիվների առկայությունը նաև ավելի ուշ՝ դարասկզբին գրած այնպիսի բանաստեղծություններում, ինչպես «Դու թո ճամբեն զբնա, քույրիկ...», «Պանդուխտ եմ, քույրիկ...» և այլն (ԵԺ V, 273—281):

«Մծիրիի» թարգմանությունը դարձավ Լեւոնտովի և ընդհանրապես դասական ոռոմանտիկական պոեզիայի հետ Քումանյանի հոգեհարազատության ամենավառ արտահայտություններից մեկը: Թարգմանությունն սկսել է, հավանաբար, 1895 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Դսեղուում (սեպտեմբերի 27-ին բանաստեղծը Փ. Վարդապարտյանին գրում էր, որ Դսեղում եղած ժամանակ ոչ մի ուրիշ բանով չի կարողանում զբաղվել. «Մծիրիի» շուրջն եմ բոլորել».— ԵԺ V, 109) և ավարտել է հաջորդ տարվա սկզբին: Ավ. Իսահայանը հիշում է, որ երբ 1896 թ. գարնանը ինքը և Դ. Դեմիրճյանը այցելում են ավագ ընկերոջը, «Սահանսը կարդաց «Մծիրիի» իր նոր կատարած թարգմանությունը, որ մենք հավանեցինք, մեկ-երկու նկատողություններ անելով» (ԹԺԶ, 9):

«Մծիրիի» թարգմանության առաջին հրատարակությունը անբարյացազամ վերաբերմունքի հանդիպեց «Մուրճ» ամսագրի էջերում: Գրքույզը դեռ հաղիվ էր լույս տեսել, երբ ամսագրի 1896 թ. մայիսյան համարում տպագրվեց Լարոթյուն Քումանյանի ծավալուն գրախոսությունը (էջ 642—652)՝ Լեւոնտովի պոեմի երկու հայերեն թարգմանությունների համամատական գնահատականով: Բանն այն է, որ դրանից ճիշտ մեկ տարի առաջ նույն ամսագրում (1895, № 5, 6) լույս էր տեսել «Մծիրի» պոեմի մի ուրիշ թարգմանություն, որ կատարել էր Հակոբ Տեր-Գևորգյանը: Համեմատության ընթացքում գրախոսը գրեթե բոլոր դեպքերում նախապատվությունը տալիս էր Հ. Տեր-Գևորգյանի թարգմանությանը և փորձում էր ամեն կերպ նահանջներ և Քումանյանի կատարած գործը: Թեև գրախոսն անում էր նաև հետապնդում. մի կողմից պաշտպանել ու զրվատել սեփական հրապարակույթը, որն իրականում թույլ և անարտահայտիչ, բանաստեղծական ներշնչանքից զուրկ թարգմանություն էր, իսկ մյուս կողմից՝ նոր հարված հասցնել Քումանյանին, որն արդեն մի քանի տարի գծովել ու խզել էր կապերը Ա.

Արասխանյանի ամսագրից: Իր բերած համեմատական օրինակները գրախոսն ավարտում էր այսպիսի՝ խիստ անարդարացի ընդհանրացմամբ. «Տեր-Գևորգյանի «Մցիրին» կարդացվում է մեծ այսորժանքով և կարելի է համարել հարազատ թարգմանություն թե մտքի և թե ոճի կողմից, և որ գլխավորն է՝ ղղում եք, որ Լեւոնտովին եք կարդում Դրա հակառակն է Քումանյանցի «Մծիրին», որը բացի շատ բազմաթիվ սխալներից, լուրի Լեւոնտովի գերադասեց պոեմայի ոգին, այնպես որ ոչ մի սրբագրությամբ չի կարելի ուղղել: Լով. Քումանյանցին ճանաչում էինք իբրև հեղինակ հաջողակ ինքնուրույն ոտանավորների՝ մանավանդ գյուղական կյանքից, բայց նա իր Մծիրի-ով ու Շիլիոնի կալանավոր-ով ապացույցներ է տալիս, որ Լեւոնտովինն ու Բայրոնները նրան մատչելի չեն» (ՄՃ, 1896, № 5, էջ 652):

Զխոսելով արդեն այն մասին, որ երկու թարգմանությունների հետագա ճակատագիրը ճիշտ հակառակն ապացույցեց (մեկը հիմնովին մոռացության մատնվեց, իսկ մյուսը լայն ժողովրդական ճանաչում գտավ), այս տողերում բոլորովին սխալ գնահատական է տրված Լեւոնտովի և Բայրոնի նկատմամբ Քումանյանի վերաբերմունքին, որոնց հետ նա սերտորեն առնչվում է հոգեկան և ստեղծագործական բազմապիսի կապերով:

Պետք է ասել, սակայն, որ «Մծիրիի» թարգմանությունը չի պատկանում բոլոր առումներով կատարելության հասցված և իրեն՝ Քումանյանին բավարարած երկերի թվին: Առանձին հրատարակությունից մի քանի տարի անց Քումանյանը իր թարգմանության մեջ մտքորոշ զգալի թվով փոփոխություններ և ճշտումներ: Սակայն այս երկրորդ՝ ԲԹ-ի տարբերակը նույնպես վերջնական բնույթ չտաացավ: Թարգմանության բարելավման խնդիրը նորից կանգնեց Քումանյանի առաջ 1907—08 թթ.: ԲԹ ժողովածուն կազմելու կապակցությամբ, մանավանդ որ Բաքվի հայոց հրատարակչական ընկերության ղեկավարները իրենց նամակներում բազմիցս խոսում էին այդ մասին: Մ. Տեր-Անդրեասյանը 1908 թ. մարտի 18-ի նամակում «Մծիրիի» թարգմանության մեջ բանաստեղծի մտքորոշ նոր բարեփոխումները համարում էր խիստ անբավարար: Նա գրում էր.

«Մծիրի»-ի մեջ մի երկու հեշտ ուղղելի բան չիսել ես. բայց այն բաները, որ մի քիչ ժամանակ և ուշադրություն են պահանջում—չնեղանա խիստ խոսքիս վրա—ծուլության ու անհոգության ես մատնել: Ես մեկ-մեկ չեմ կրկնի այստեղ նոյնմբերի 24-ին գրած ամանակիս նկատողությունները: Եթե նկատվա չես պատռել—մեկ էլ կարգա: Մանավանդ անընդունելի է XXVI գլուխը, որ ուղղակի սխալ է թարգմանված:

Նույս ունեմ, որ նամակ ստանալուն պես չես զննալ մի քանի ժամ եվիրել «Մծիրի»-ին և շուտով կուղարկես վերջնական խմբագրությանդ բովից անցած մի գործ» (ԲՅ, № 1127):

Հաշվի առնելով Մ. Տեր-Անդրեասյանի այս և 1907 թ. նոյեմբերի 24-ի նամակները (վերջինս մեզ չի հասել), Քումանյանը նորից վերամշակել է թարգմանությունը և ուղարկել Բաքու (Ն. Թադևոսյանը 1908 թ. ապրիլի 18-ի նամակում հայտնում էր. «Ուղղած «Մծիրին» ստացել եմ»,— ԲՅ,

№ 633): Մասնավորապես, ուղղվել են պոեմի վերջին գլխի մի քանի տող, որոնց մասին Մ. Տեր-Անդրեասյանը իրավացիորեն գրում է, թե «ուղղակի սխալ են թարգմանված» (խոսքը վերաբերում է հատկապես 710 և 712 տողերին, որոնց նախնական տարբերակները՝ «Դու հըրամայիր դիակ տանելու», «Դու հըրամայիր ինձ այնտեղ թաղեն» — համապատասխանաբար գարծել են՝ «Պատվեր տուր այնժամ դու ինձ տանելու», «Դու հըրամայիր ինձ այնտեղ տանեն»):

Սակայն այս փոփոխություններից հետո էլ թարգմանությունը, ըստ երեւոյթի, ինչ-ինչ կողմերով չի գոհացրել Հրատարակչական ընկերությանը, և նրա տպագրությունը մերժվել է: 1908 թ. օգոստոսի 1-ի նամակով Մ. Տեր-Անդրեասյանը հայտնում էր. «Այսօր իմացա, որ առանց ինձ վճիռ են կայացրել «Մծիրին» գուրս ԳԵԵԼ (ԲԲ ժողովածուից—յամբ)... «Մծիրին» գուրս ԳԵԵԼու մասին քեզ բացատրություն կարող է տալ Քաջազունին, որ ներկա է եղել այդ նիստին» (ԹՖ, № 1129):

Այսպիսով, «Մծիրին» շունի թարգմանչի կողմից վերջնականապես վերանայված ու ճշտված բնագիր: Ահա թե ինչու 1908-ից հետո էլ Քումանյանը մտադիր է եղել վերադառնալ այդ գործին: 1910-ական թթ. սկզբին նրա մեջ նորից ուժեղանում է հետաքրքրությունը կերմոնտովի նկատմամբ, որի արտաքին շարժառիթը մեծ բանաստեղծի ծննդյան մոտեցող 100-ամյակն էր: 1912 թ. նոյեմբերին Ալ. Մատուրյանին հասցեագրած նամակում Քումանյանը հայտնում էր, որ «Գարուն» ամսանախից պատվեր է ստացել կերմոնտովի «Կալաշնիկովի երգի» թարգմանելու համար: «Ճշմարիտ է, վաղուց եմ ուզել,— ասում է բանաստեղծը այդ գործի մասին,— բայց դեռ գուրս չի եկել» (ԾԺ VI, 428—429): Ինչ վերաբերում է «Մծիրին»-ին, ապա Քումանյանը, դատեր վկայությամբ, «1913 թվականին մտածում էր նորից թարգմանել, ինչպես ինքն էր ասում՝ «ալքի անցկացնել»: Արխիվում մնացել է նոր կատարած թարգմանության երեսուն տողը՝ սևագիր» (Ն. Քումանյան, էջ 107): Այդ հատվածից (տե՛ս տարբերակների բաժինը) երևում է, որ Քումանյանն այս շրջանում ցանկացել է կիրառել թարգմանական այլ սկզբունքներ, մասնավորապես՝ մեծ մասամբ հրամարվել պարտադիր հանգավորումից: Ըստ երևույթի, նա մտածել է հետևել իր թարգմանած ռուսական բիլինաների և կերմոնտովի «Կալաշնիկովի երգի» անհանգ ոտանավորին: Սակայն տարածել այդ սկզբունքը «Մծիրին» վրա հաղիվ թե ճիշտ կլինեն, և Քումանյանն իր այդ փորձը առաջ շտարավ:

Վերջին անգամ կերմոնտովի պոեմի թարգմանության մասին Քումանյանն արտահայտվել է 1920 թ., զարնանը, երբ պատրաստվում էր նրա վերջին լափածո ժողովածուն: Ինչպես հիշում է բանաստեղծի դուստրը, «Թարգմանություններից էլ մի քանիսը հանեց, «Մծիրին» դրեց մի կողմ, որ նորից մշակի նոր ձևով. «Սա դեռ մնա, մի ալքի պիտի անցկացնեմ» (Ն. տ., էջ 239): Այդ է պատճառը, որ ԲՊ-ում ևս «Մծիրին» տեղ չի գտել:

Չնայած թարգմանչի դժգոհությանը և գործը բարելավելու մտադրությանը, Քումանյանի «Մծիրին» կերմոնտովի և ընդհանրապես ռուսական պոեզիայի հայերեն լավագույն թարգմանությունների թվին է պատկա-

նում: Ահա թե ինչու՝ անցած մոտ հարյուր տարվա ընթացքում պոեմի վերադարձագրության թումանյանական սկզբունքները փաստորեն անխախտ են մնացել, և նրա հայերեն թարգմանության ոչ մի նոր փորձ չի արվել:

Պոեմի բնագրի 748 տողի փոխարեն Քումանյանի թարգմանության վերջնական խմբագրությունը 732 տող է, այսինքն՝ պակասել է 16 տողով: Քումանյանը հրամարվել է պոեմի առաջին գլխի վերջին հինգ տողերից՝ ռուսական հիմնու ներքո Վրաստանի բարգավաճման մասին (այդ տողերը կային թարգմանության 1896 թ. հրատարակության մեջ, բայց հանգիստին ԲԲ-ից՝ համարվելով, ըստ երևույթի, պոեմի գլխավոր առանցքից շեղվող հատված): Մնացած 11 տողերը պակասել են (4 տող 24-րդ գլխում և մեկական տող մի քանի այլ գլուխներում)՝ պարզապես խոսքը սեղմելու նախապարտով:

Թարգմանչի առջև դժվարին խնդիրներ է դնում կերմոնտովի պոեմի տաղաչափական կառուցվածքը, որի մասին Բելինսկին գրել է. «Այդ բառոտնյա յամբը՝ միայն արական վերջավորությամբ, ինչպես և «Շիլիոնի կալանավորի» մեջ, հնչում և հատվածաբար ընկնում է որպես իր զոհին շանթահարող թրի հարված: Նրա ձգվածությունը, էներգիան և հնչուն, միակերպ վայր ընկնելը զարմանալիորեն ներդաշնակում են պոեմի հերոսի հզոր բնավորության կենսորոնացած զգացմունքին, անխորտակ ուժին և ողբերգական վիճակին» (В. Г. Белинский, Полное собрание сочинений, т. IV. М., 1954, с. 543):

Թարգմանության տաղաչափական համարժեքն ընտրելիս Քումանյանը բնագրի 8-վանկանի յամբական տողի փոխարեն կիրառել է հալվական վանկաչին ոտանավորի 10-վանկանի չափը, բայց ոչ միշտ. առանձին հատվածներ՝ ընդամենը 104 տող, թարգմանված են 8-վանկանի չափով: Դրանք են՝ XIII և XXIV գլուխներն ամբողջությամբ (346—383 և 681—691 տողեր), ինչպես նաև 443—452, 475—493, 505—508, 573—574, 632—634, 657—673 տողերը: Թարգմանության մեջ պահպանված է բնագրի կից հանգավորման սկզբունքը:

Թարգմանության բոլոր հրատարակությունների մեջ (1896 թ. գրքույվը, ԲԲ և ԲԲ-ի առանձնատիպ) պոեմի վերնագիրն ունի հետևյալ ծանոթագրությունը. «Մծիրի վրացերեն նշանակում է նժդհ՝ եկվոր, անապատական»:

Պոեմի բնագրանը քաղված է Հին կտակարանի Առաջին թագավորաց գրքից, գլ. ԺԴ, 43:

ՀԱՅԱՎԱՌԻ ԵՐԳԸ  
(էջ 155, 510)

Առաջին անգամ՝ «Արոր», 1907, 19 սեպտեմբերի, № 13, էջ 2: Քումանյանի կենդանության ժամանակ տպագրվել է ևս երկու անգամ՝ ԲԲ, էջ 242—252, վերնագրի տակ, վրակագծի մեջ, «հատված» նշումով, և ապա՝

ԲՊ, էջ 335—345 (առանց հիշյալ նշումի): Տպագրվել է ԾԺ 11, 215—223, Հենրի Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը» պոեմի երկու գլուխների թարգմանությունը կատարվել է, հավանաբար, 1907 թ.: Թարգմանության ինքնագիրը չի պահպանվել:

Մամուլում տպագրվելուց հետո թարգմանությունը համեմատաբար քիչ փոփոխությունների է ենթարկվել: ԲՐ ժողովածուի մեջ այն մտավ մի քանի տողի ու մեծ շտկումներով և ակնհայտ վրիպակների վերացումով: Հետագայում, թարգմանությունը պատրաստելով ԲՊ համար, Թումանյանը փոփոխություններ է մտցրել ևս հինգ տողի մեջ (տե՛ս բնագրային տարբերությունները): Հետևաբար, հեղինակի «վերջին կամքի» արտահայտությունը տվյալ դեպքում ԲՊ բնագրին է: Սակայն վերջինս ունի կետադրական, ուղղագրական, ինչպես նաև բնագրային մի քանի ակնհայտ աղավաղումներ: Այսպես, 174—175 տողերը («Չոտկոսներն ու կամանչները, Շոշոներն ու սեփոտները») տպարանային սխալի պատճառով դարձել են մեկ տող («Չոտկոսներն ու սեփոտները»), իսկ 249—250 տողերը («Քաղաղության շիրուխները, Ու ապրեցք այսուհետև») առհասարակ դուրս են բնկել: Այդ սխալներն ուղղվել են ըստ ԲԲ բնագրի:

Թարգմանության առաջին հրատարակումն ունի հետևյալ ծանոթագրությունը, որը, անշուշտ, կազմել է Թումանյանը.

«Հ. Լոնգֆելլոն ամերիկյան նշանավոր բանաստեղծ էր: Վախճանվել է 1882 թվին:

Նա մի ճշմարիտ իդեալիստ էր, գեղեցիկին ու վեմեին նվիրված մի քնքույշ հոգի: Նշանավոր են նրա նեգրերի ազատության համար գրած երգերը: Բայց «Հայավաթի երգը» պոեմը, որից տալիս ենք երկու գլուխ, նրա գլուխգործոցն է համարվում:

Պոեմի նյութը վերցրած է Հյուսիսային Ամերիկայի հնդիկների մի ավաճառությունից: Այդ ավաճառությունն ասում է, թե՛ երկիրը հրաշալի ծագումով մի մարդ է զրկել նրանց, որ սովորեցրել է վայրենի ցեղերին երկրի մշակումը և խաղաղ արվեստները:

Նրա անունը եղել է Հայավաթա: Հայավաթա—կենդանակի մարգարե, ասուցիչ»:

Այս ծանոթագրության մեջ հիմնական բնութագրերը գրեթե բառացի ֆաղված են պոեմի հերոսի մասին Հ. Լոնգֆելլոյի խոսքերից, որոնց Թումանյանը կարող էր ծանոթանալ Ն. Վ. Գերբելի «Անգլիացի բանաստեղծները կենսագրականներով և նմուշներով» ռուսերեն հայտնի ժողովածուից (1875) կամ «Հայավաթի երգի» Ի. Ա. Բունինի թարգմանության առաջաբանից (երկու գրքերն էլ եղել են բանաստեղծի անձնական գրադարանում):

Թումանյանի հետաքրքրությունը ամերիկյան խոշորագույն բանաստեղծ Հենրի Լոնգֆելլոյի (1807—1882) ստեղծագործության նկատմամբ ծագել է 1890-ական թվականներին՝ այդ և ուրիշ հրատարակությունների տպավորության տակ: Հատկապես լայն արձագանք գտավ «Հայավաթի երգի» նոր և ըստ ամենայնի կատարյալ թարգմանությունը, որը պատկանում էր Ի. Ա. Բունինի գրչին (առաջին ամբողջական հրատարակությունը՝ 1898 թ.): ԲԲ

ժողովածուի թարգմանությունների բաժնում առաջին անգամ հրատարակվեց Լոնգֆելլոյի «Մանուկներին» բանաստեղծությունը, որին մի քանի տարի անց հետևեց պոեմի այս երկու գլուխների թարգմանությունը:

«Հայավաթի երգի» վրա աշխատելիս Թումանյանն իր ձեռքի տակ ունեցել է անգլերեն բնագրից կատարված տողացի թարգմանությունը: Նա օգտվել է նաև Ի. Ա. Բունինի թարգմանությունից, որն օգնեց ավելի լավ հասկանալու և վերարտադրելու պոեմի պատկերավորության, լեզվի և կառուցվածքի սկզբունքները: Այսպես, երբու շեպում էլ թարգմանության սողերը (ինչպիսի և անգլերեն բնագրում) անհանգ էն, 8-վանկանի, թեև Բունինի թարգմանության մեջ դա քառոտոնյա քորեյն է, իսկ Թումանյանի մոտ՝ հայտնական վանկային ոտանավորի 8-վանկանի շափը՝ տողակեսի կաշուն հատածով: Հայ բանաստեղծը ևս պահպանում է ամերիկյան հնդիկների բառապաշարի բավական հարուստ շերտը, առանց որի ազգային միջավայրի պատկերը կարող էր ներկայանալ թերի:

Թումանյանը թարգմանել է «Հայավաթի երգի» միայն նախերգանքը և 22 գլուխներից առաջինը՝ «Քաղաղության շիրուխը» (ընդամենը 284 տող): որոնք, սակայն, ելակետային նշանակություն ունեն ամբողջ ստեղծագործության պատկերային և գաղափարական բովանդակությունը ճիշտ հասկանալու համար: Լոնգֆելլոյի պոեմի թարգմանությունը տարբեր ժողովուրդների էությունների անհամապատասխանությունը և ստեղծագործաբար չուրացնելու ձգտման դրսևորումներից մեկն էր, ձգտում, որը տակավին 1890-ական թվականներից շատ բնորոշ էր Թումանյանին: Այդ ճանապարհին նա չէր կարող ուշադրություն չդարձնել ամերիկյան հնդիկների բանահյուսության, նրանց կյանքի ու կենցաղի յուրահատուկ գծերով առատորեն հագեցած մի այնպիսի ստեղծագործության վրա, որպիսին էր Լոնգֆելլոյի պոեմը:

Սակայն «Հայավաթի երգից» (և այն էլ հատկապես 1907 թվականին) երկու գլուխ թարգմանելու փաստը ունեն նաև կենսագրական ու գաղափարական ավելի կոնկրետ աղբյուրներ: Թարգմանության պահին (հավանաբար՝ 1907 թ. ամռանը) Թումանյանը նոր էր անցել Կովկասում ազգամիջյան կոիվների երկամյա արհավիրքների միջով, որոնց ընթացքում նա անփոփոխ հանդես էր եկել իբրև ազգերի միջև խաղաղության և համերաշխության հետևողական պաշտպան: «Հայավաթի երգի», մասնավոր թումանյանի թարգմանած առաջին զլխի («Քաղաղության շիրուխը») մեջ այնքան ցայտուն արտահայտված խոհերը բոլոր մարդկանց ու ցեղերի փոխըմբռնման և համագործակցության մասին շատ հարազատ էին հայ բանաստեղծի սրտին: Դա էր, առաջին հերթին, որ նրան մղեց թարգմանելու և հայ ընթերցողին հանձնելու ամերիկյան բանաստեղծի մարդասիրական ստեղծագործությունը:

«Հայավաթի երգի» հայերեն լրիվ թարգմանությունը բնագրից հետագայում իրագործել է Խաչիկ Դաշտենցը (առանձին գրքով լույս է տեսել 1943 և 1958 թթ.), որը լեզվական, տաղաչափական և պատկերային համակարգի շատ հարբերում հետևել է Թումանյանի թարգմանական սկզբունքներին:



Լոնգֆելդի պոեմի լեզուն հագեցած է ամերիկյան բնիկների բազմաթիվ բառերով, որոնցից Քոմանչյանն իր Քարգամնության առաջին հրատարակման մեջ բացատրել է միայն մեկը (վիզվամ): Ստորև տողերի հերթափոխության կարգով տրվում է պոեմի առաջին երկու գլուխներում հանդիպող սի քանի բառերի բացատրությունը՝ բառ Խ. Ա. Բունինի և Խ. Կաշտանցի Քարգամնությունների կցված բառարանների Ցանկի մեջ չեն մտել տեղանունները (Օշիրվա, Թավազենթ, Վաոմինգ, Տուսկալուգ, Պոկվանա), ինչպես նաև 173—178 տողերում հիշատակվող 12 ցեղերի անվանումները: Հնդկական անձնանունները պոեմում (Նավադա, Գիտոյի-Մանիտո, Հայավաթա և այլն) մեծ մասամբ որոշակի կոչման կամ մասնագիտության հունիչներ են: Մասնավորապես, պոեմի գլխավոր հերոսի անունը, ինչպես ասվեց, նշանակում է մարգարե, ուսուցիչ:

- 5 Վիզվամ—վրան
- 16 Շան-շան-գա—կապույտ ձկնկուլ, արագիլ
- 32 Մանգ—սուղարբոց, սուղահավ
- 32 Վավա—վայրի սագ
- 34 Էրիովելյկ—անձրևահավ
- 35 Մուշկոդապա—ցախաբլուր, լեռնային կաթավ
- 133 Իլկուդա— կրակ, գիսաստղ

ՌՈՒՄԱԿԱՆ ԲՈՒԽԱՆՆԵՐԻՑ

Իբրև Քարգամանի և քննադատ Քոմանչյանը մեծ հետաքրքրություն է գրեթե ամբողջ ժողովուրդների էպիկական ստեղծագործության նկատմամբ: Նա էլնում էր այն համոզմունքից, որ, ինչպես գրել է 1917 թվականին, «ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երեվում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ» (Եժ IV, 392): Դրանից մի քանի տարի առաջ մի այլ հոդվածում նա ասել է, թե «ամեն մի ազգի ուժն ու ոգին մարմնացած է իր ազգային էպոսի մեջ» (Եժ VI, 149): Այդ հետաքրքրության արդյունքը եղան ուսական բանահյուսության ամենախնթնափայլ ժանրերից մեկի՝ բիխնաների, սերբական հերոսական վիպերգերի, ինչպես նաև ամերիկյան բնիկների բանահյուսության հիման վրա Հենրի Լոնգֆելդի գրած «Հայավաթի երգը» պոեմի հատվածների Քարգամնությունները: Դրանք Քոմանչյանի Քարգամնական ժառանգության լավագույն էջերից են:

Ուս ժողովրդի շատ հարուստ բիխնային ստեղծագործությունից Քոմանչյանը Քարգամանի և տպագրել է ընդամենը երկու նմուշ՝ «Մուրոմցի Իլիան կոմում է Վլադիմիր Իլիանի հետ» (1908) և «Սվլատագորը» (1913), իսկ մի երրորդ Քարգամնություն («Մուրոմցի Իլիան և Կալին Քազավորը») թողել է անավարտ: Սակայն այդ մի քանի էջերը ուսական ազգային բնավորության և բանահյուսության խոր ըմբռնման ու վերամարմնավորման փայլ

ուն օրինակներ են: Վահան Տերյանը 1914 թ. «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ Քոմանչյանի մասին լիակատար իրավունքով ասում էր. «Եվ մեր օրերի մեծ պոետը չի՞ արդյոք, որ բերում է մեզ ուս հոգու ամենաբերողը աշխարհայտությունները—Պոշկինը և բիլինան, լերմոնտովը և ժողովրդական հեթաթիլը» (Վ. Տերյան, Երկերի ժողովածու շրթ հատորով, հ.3, 1975, էջ 90):

Բիլինային հերոսներից Քոմանչյանը հատկապես մեծ հետաքրքրություն է հանդես բերել դեպի Մուրոմցի Իլիան՝ գանելով, որ այդ կերպարն «ինքը ուս ժողովուրդն է» (Եժ IV, 392): Առաջին աշխարհամարտի սկզբին գրած «Ազգերի պատերազմն ու իրենց դուրսագույնները» հոդվածում վաղընչական ժամանակներից նա անցնում էր իր օրերին, ասելով. «Ահա վերջապես և ուսական վիթխարի զուլազցին, ծերուկ Իլիա Մուրոմցին, հայրենիքին սպառնացող վտանգի առջև Владимир Красно Солнышко -ից, իշխանավորից զուր տեղը իրեն հասած վերավորանքը մոռացության տալով՝ իր հսկայական գուրդն առած գնում է անմեղ ժողովուրդն ու երկիրն ազատելու վայրագ թշնամու արշավներից: Գնում է անհոգ, հանդարտ ու բարի, բայց հզոր ու հաստատուն: Գնում է իր «ախպերացուների» հետ» (Եժ VI, 150):

Իլիա Մուրոմցու կերպարին, իբրև ուսական ազգային ոգու բնորոշ արտահայտության, Քոմանչյանն անդրաշարժել է նաև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո գրած «Հսկայի ազատությունը» հոդվածում (Եժ IV, 392—394): Հոդվածն ամբողջությամբ Исцеление Ильи Муромца («Իլիա Մուրոմցու ապաքինումը») բիլինայի զեկուրվապական վերապատումն է, յուրօրինակ արձակ Քարգամնություն: Բիլինային հերոսի հրաշալի առողջացման պատմությունը («Ի՞նչ հոյակապ գեղեցկություն և ինչա՞ն հարազատ ու ճշմարիտ») բանաստեղծն ուղղակի կապում էր սկսված քաղաքական մեծ դեպքերի հետ և կոչ էր անում ամենքին՝ «ամուր բռնել, իր ուժերի ներածին շափ նեցուկ դառնալ ուսական նոր ոտի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի» (Եժ IV, 394):

Քոմանչյանի Քարգամանից բիլինաներից «Սվլատագորը» ներկայացնում է ուս ժողովրդի առասպելական պատկերացումները, նախապատմական շրջանի հերոսներից մեկին: Ըստ երևույթին, այդ պատճառով էլ իր վերջին ժողովածուի մեջ (ԲՊ) Քոմանչյանը նախ տեղադրել է կիսօղիցքարանական բնույթ ունեցող «Սվլատագորը» և հետո Քաթար-մոնղոլական լծի դեմ մղված պայքարի շրջանին վերաբերող «Իլիա Մուրոմցին կոմում է Վլադիմիր Իլիանի հետ» բիլինան, թեև վերջինս տպագրվել է առաջինից հինգ տարի վաղ: Բանաստեղծը դեկավարվել է բիլինաների բովանդակության պատմական հաջորդականությամբ: Դասավորության այդ սկզբունքն ընդունվել է նաև սույն հրատարակության մեջ:

«Մուրոմցի Իլիան և Կալին Քազավորը» բիլինայի հատվածը տեղադրվել է սեպտի Քարգամնությունների բաժնում:

Բոլոր երեք բիլինաների Քարգամնությունը Քոմանչյանը կատարել է հետևյալ գրքից. Книга были. Свод избранных образов русской

народной эпической поэзии. Составил В. П. Авенариус. Изд. 7-ое, М., 1907. Այդ ժողովածուն, որն սկսած 1876 թվականից բազմաթիվ հրատարակություններ է ունեցել, երկար ժամանակ ծառայել է իբրև ուսումնական ձեռնարկ, ընթերցող լայն շրջաններին ծանոթացրել է սուս ազգային վիպերգության լավագույն նմուշներին: Վ. Ալենարիուսը փաստորեն տվել է իր ընտրած բրիտանների համահավաք բնագիրը՝ տարբեր պատումներից ընտրելով առավել տպավորիչ դրվագներն ու սուղերը, շարադրանքը ենթարկելով որոշակի գրական մշակման: Այդ հանկամանքն է դրգել թումանյանին՝ իր թարգմանությունները կատարելու այդ աղբյուրից և ոչ թե ասացողների շուրթերից անմիջաբար գրի առնված պատմաներից: Թեև թումանյանը լավ ծանոթ էր այդ պատմաներին (ներառաբար նաև, բացի Ավենարիուսի գրքից, եղել են ուսական բրիտանների տասը տարբեր ժողովածուներ), բայց նա գերադասել է հայ ընթերցողին հանձնել գրական հզված բովով անցած բնագրեր, այլ ոչ թե բարբառային պատմաներ՝ նրանց հաճախ բնորոշ կառուցվածքային և լեզվական անխտափելի թերություններով: Թումանյան բրիտանների ինքնատիպ ստղաչափական կառուցվածքը պայմանավորված է ազգային լեզվի և կատարման յուրահատկությամբ: Այն գերազանցապես համաշխարհային բնույթ ունի՝ հիմնվում է սուղերի մեջ հավասար քանակի շեշտերի վրա, բայց երբեմն էլ գործում է եռավանկ կամ երկվանկ սաթերի կանոնավոր կրկնության սկզբունքը: Թումանյանը չի պահպանել բրիտանյան ոտանավորի կառուցվածքը, որ մեկ այլ լեզվով վերարտադրել գրեթե անհնար է: Թումանյան բրիտանների (ինչպես և սերբական վիպերգերի) թարգմանությունը նա կատարել է 10-վանկանի երկանդամ սուղաչափով, որը հայկական վանկային ոտանավորի ամենից տարածված շափն է:

Թումանյան և սերբական վիպերգերի թարգմանության հետ կապված հարցերի բնությունը տե՛ս հետևյալ գրքերում. Ն. Փավսեյան, Հովհաննես Թումանյանը և ուս գրականությունը, 1956, էջ 93—103, Մ. Զանգուլայան, Թումանյանը և ժողովրդական էպոսը, 1969, էջ 78—120, И. Сафразбекия, Ованес Туманян и мировая литература, 1976, с. 126—148.

ՍՎՅԱՍԱԳՈՐԸ  
(էջ 165, 511)

Առաջին անգամ՝ ՆՃ, 1913, № 2, էջ 265—267, «ուսաց ԵԼԼԻՆԱ-ներից» ենթավերնագրով, այնուհետև՝ Վ, 3-րդ տպ., Թիֆլիս, 1917, էջ 165—167, ԲՊ, էջ 313—316, Եժ II, էջ 237—239: Տպագրվում է ԲՊ-ից: Ինքնագիրը չի պահպանվել:

ՆՃ և ԲՊ տպագրությունները բացարձակորեն նույնական են, բացի ենթավերնագրից (որը ԲՊ-ում դարձել է «ուսական առասպել») և սողառակի

ծանոթագրության մեջ մտցված շարահյուսական ոչ մեծ փոփոխություններից: Այդ ծանոթագրության մեջ Թումանյանը գրել է (բերվում է ԲՊ-ի խմբագրությամբ).

«Սվյատագորը ուսաց ԵԼԼԻՆԱ-ներում ավագ հսկաններից մինն է: Էն կոպիտ ուն է, որ թափառական շրջանն է ներկայացնում: Իսկ Միկուլա Սելյանինովիչը (շինական) էն հսկա երկրագործն է, որ համարվում է նրատակյաց, գեղջուկ աշխարհի նախահայրը: Սրա երևալով Սվյատագորը տեղի է տալիս ու մեռնում» (ԲՊ, 313):

Վ-ում Թումանյանը, որը Ստ. Լիսիցյանի և Լ. Շանթի հետ միասին այդ դասագրքի կազմողներից մեկն էր, մի քանի ոչ մեծ փոփոխություն է մտցրել (տե՛ս տարբերակների բաժինը): Բացի այդ, դասագրքում թարգմանությունը բաժանված է երեք մասի՝ ա (1—24 սուղեր), բ (25—56 սուղեր), գ (57—79 սուղեր): Նյութը գետնոված է «Մայր հողի ուժը» ընդհանուր վերնագրի տակ և ունի փոքրիկ նախաբան, որն անշուշտ պատկանում է Թումանյանի գրչին և դարգացնում է ՆՃ և ԲՊ ծանոթագրության մտքերը՝ բրիտանյան պատմական բովանդակության ու գաղափարի մասին: Բերում ենք այդ նախաբանն ամբողջությամբ.

«Սվյատագորը ուսաց ավագ հսկաններից մինն էր, որոնք վայրենի և թափառաշրջիկ կյանք էին վարում: Բոլոր ավագ հսկանների մահից հետո նա դեռ ապրում էր բաշված իր Սուրբ սուղերը և երբեք ներքև չէր գալիս. գետինը չէր կարողանում նրան տանի և ներքևը արգեն փոխված էր աշխարհը, արդեն մարդիկ դարձել էին նստակյաց և վար ու ցանք էին անում: Էնտեղ երևացել էին նստակյաց կյանքի սովոր նոր, կրտսեր հսկաներ, որոնցից մեկն էր Միկուլա կամ Նիկուլա Սելյանինովիչը, այսինքն՝ Շինականը» (Վ, 164):

Թարգմանության վերջում, դասագրքի մեջ ընդունված սկզբունքի համաձայն, բացատրվում են մի շարք բառեր և սրվում են լեզվական առաջադրանքները: Աշակերտներին ներկայաչելող հարցերը նույնպես պատկերացում են տալիս, թե Թումանյանն իր թարգմանության մեջ ի՞նչն էր համարում գլխավորը. «1. Ինչո՞ւ է հողը կոչվում «մայր հող»: 2. Էդ ի՞նչ «հողի ուժ» է խորհրդի մեջ, որ կրում է Շինականը իր ոսին: 3. Սվյատագոր հսկան ինչո՞ւ չի կարողանում բարձրացնել այդ խորհրդը» (Ն. տ., 167):

Թումանյանի մտքերը այս բրիտանյան մասին միանգամայն ճիշտ են արտահայտում նրա պատմադեղաբանական բովանդակության հիմնական գծերը: Բավական է վկայալուել ուսական բանահյուսության նշանավոր հետազոտողի կարծիքն այդ մասին. «Շերտանների փոխարինումն արտահայտում է երկու պատմական դարաշրջանների փոխարինումը, — այս է բրիտանյանի հիմնական, ամենախոր իմաստը» (В. Я. Пропи, Русский героический эпос, изд. 2-ое, М., 1958, с. 86): Բրիտանյան պատմաառասպելական լայն բովանդակությունը և հողի ամենազոր ուժի գաղափարը, որը շատ համահնչուն էր Թումանյանի դեմոկրատական աշխարհայացքին, դերդեցին նրան թարգմանելու այս երկը:

Թարգմանությունը կատարվել է Վ. Ավենարիուսի հիշյալ գրքից, որ «Ավյատագորը» վետիզված է Կիևյան բիբլիանների շարքում (էջ 126—129), Բայց Քումանյանը Թարգմանն է այդ բնագրի միայն առաջին մասը, որն ինքնին զեղարվեստական ավարտուն միավոր է, և բաց է թողել շարունակությունը (60 տող), քանի որ այն ուղղակի չի անելում ստեղծագործության հիմնական գաղափարին: Քումանյանը ծանոթ է Լոզել Ավյատագորի առասպելների նաև այլ պատումների, մասնավորապես «Былины. Старинки богатырские», тексты избрал Е. А. Ляцкий (СПб, 1911) գրքում զետեղված տարբերակին (այդ գրքից են քաղված Թարգմանության 69—71 տողերը):

Վ. Մ-ում տրվում է «Ավյատագորի» Թարգմանության մեջ հանդիպող մի քանի բառերի բացատրությունը, որոնց թվում՝ ժուռ գալ (պտտել, ման գալ), նխալ (ուրախությունից ցնծալ, հրճվել), մկունդ (զուրգ), դուրան (հարթ), նետի, նետակ (ոտով զննող) և այլն:

### ՄՈՒՐՈՄՅԻ ԻԼԻԱՆ ԿՌՎՈՒՄ Է ՎԼԱԳԻՄԻՐ ԻՇՈՒԱՆԻ ՀԵՏ

(էջ 168, 511)

Առաջին անգամ՝ «Գրական-գիտական ժողովածու» (ԳԳԺ), խմբագրից Ծ. Քոխյան, Քիֆիս, 1908, էջ 15—24, վերնագրի տակ՝ «(Ռուսաց БЫЛИНА-ՆԵՐԻՅ), բառ Ավենարիուսի» նշումով: Այդ տեքստը առանց որևէ փոփոխության մտել է նաև նույն 1908 թ. հրատարակված ԲԲ ժողովածուի մեջ (էջ 265—276) և ապա 1922 թ. Հ. Մուրխաթյանի կազմած ԳԳ քրեստոմասիայում (էջ 135—142): Քումանյանի կենդանության ժամանակ վերջին անգամ տպագրվել է ԲՊ ժողովածուի մեջ (էջ 317—329), մի քանի տողի ոչ մեծ փոփոխություններով: Տեղ է գտել ՆԺ II, 227—236:

Տպագրվում է ԲՊ-ից: Տարբերակների բաժնում տրվում են ԳԳԺ, ԲԲ և ԳԳ փոփոխակները:

Թարգմանությունը կատարվել է 1907—1908 թթ.: Ինքնագիրը չի պահպանվել:

Բոլոր հրատարակություններն ունեն Թարգմանի Տետևյալ երկու ծանոթագրությունները:

Վերնագրից հետո. «Մուրոմցի Իլիան—Ռուսական առասպելներում ժողովրդական ուժի գաղափարն է: Թարգմանության մեջ մի քանի ռուսական բառեր—կաբակ, փնչ, բուեր—պահել են անփոփոխ:

148 Այլ իմ խաչախաբերն—Իլիան Մուրոմից:

«Հնում սովորություն կար—խաչերը փոխում էին իրար հետ ու դառնում խաչախաբեր»:

Թարգմանության ռուսերեն բնագիրը գտնվում է Վ. Ավենարիուսի ներված գրքի 151—160 էջերում՝ «Илья Муромец в споре с князем Влади- 608

МИРОМ» վերնագրով: Այդ ժողովածուի մեջ Մուրոմցի Իլիային վերաբերող ութ բիբլիաններից Քումանյանի ուշադրությունն առաջին հերթին գրավել է այս պատումը: Պատճառն այն էր, որ այդ բիբլիայում վառ արտահայտություն են գտել ժողովրդի մարդու վիթխարի ուժի և տարերային սցեյալական ընդվզման մոտիվները: «Կարգի մերկ ու սկզբներին» իր շուրջը հավաքող հերոսի բուռն և հանդուգն արարքների, նրա նկատմամբ Վլադիմիր իշխանի՝ անարգար վերաբերմունքի մեջ Քումանյանն իրավացիորեն տեսել է Կիևյան Ռուսիայի սցեյալական սուր հակասությունների արձագանքը և ձգտել է հասցնել այդ բոլորը հայ բնթերցողին: Այս դեպքում ևս Քումանյան Թարգմանին ընտրել է իր ստեղծագործական աշխարհին շատ հարազատ մի երկ:

### ՍԵՐԲԱՎԱՆ ՎԻՊԵՐԳ

Սերբական ազգային հերոսական էպոսի շորս երգերի Թարգմանությունը Քումանյանը կատարել է 1915—1916 թթ.: Այդ Թարգմանությունները կազմված էին ժամանակի բազմաթիվ իրադրության հետ: Սերբիան, որի շուրջ ծագած բազմաթիվ կոնֆլիկտը սկզբը գրեց առաջին համաշխարհային պատերազմին, իր ճակատագրով, պատմությամբ և մշակույթով այդ շրջանում համընդհանուր ուշադրություն գրավեց: Քումանյանն իր Թարգմանություններով պատասխանում էր այդ պահանջներին: 1915 թ. սկզբին տպագրվեց նրա առաջին Թարգմանությունը սերբական վիպերգից («Քն ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն»), իսկ 1916 թ. ամռանը՝ ևս երկուսը («Մարկոն ռամազանին զինի է խմուճ», «Մարկոն վերացնում է պսակի հարկը»): Չորրորդ Թարգմանությունը («Մարկոն վար է անում») տպագրվել է հետմահու:

Սերբական վիպերգերի Թարգմանությունը պայմանավորված էր նաև նրանց պատմական բովանդակությամբ, որը հիմնականում կապված է թուրքական ռևանպիտության դեմ հարավային սլավոնների մղած զարավոր պայքարի հետ, Քումանյանի Թարգմանած բոլոր շորս հատվածներն էլ այդ պայքարի գեղարվեստական արտացոլումն են, իսկ հայ բանաստեղծի իրավացիորեն շատ ընդհանրություններ էր տեսնում Սերբիայի և Հայաստանի ճակատագրի միջև: Սերբական էպոսի գլխավոր հերոս Մարկոյի մասին Քումանյանը գրել է, որ նա «հանդիսանում է սերբ ժողովրդի ազգային նվիրական զգացմունքների ու առաքինությունների մարմնացումը, նրանց Մասունցի Դավիթը» (ԵԺ IV, 365):

Այս տողերն առնված են սերբական ազգային վիպերգությանը նվիրված հոդվածից («Մի երկու խոսք սերբ ժողովրդական էպոսի մասին»,

1916), որ Քումանյանը գրել է իբրև իր թարգմանությունների յուրօրինակ նախաբան: Տերատերի և գիտական ազդյունների ուսումնասիրության հիման վրա Քումանյանը մատնանշում է սերբական էպոսի պատմական հիմքերը, նրա հերոսների ծագումն ու սերունդները: Նա առանձնացնում է սերբական վիպական բունհյուստության շուրջ շրջան. 1) Հնագույն կամ դիցաբանական երգերը, 2) Կասովյան դաշտի երգերը, 3) Արքայազուն Մարկոյի երգերը և 4) Նոր ժամանակի երգերը: Քումանյանն ընդգծում է սերբական էպոսի հակաթուրքական, հակաբոսնապետական ոգին, որը համամարդկային արժեք է սալիս նրան:

Քումանյանն իր այս թարգմանությունները կատարել է ռուսերենից: Կրկնակի թարգմանությունն, իհարկե, լրացուցիչ մեծ դժվարություններ է հարուցում: Ինչպես ցույց է տալիս բնությունը, Քումանյանը հաջողությամբ հաղթահարել է այդ դժվարությունները՝ հայ բնթերցողին հանձնելով սերբական էպոսի ազգային ոգին և գունավորումը հարազատորեն արտահայտող թարգմանություններ: Նրա ձեռքի տակ եղել են հետևյալ ռուսերեն հրատարակությունները.

1) Пoesия славян. Сборник лучших поэтических произведений славянских народов в переводах русских писателей, изданный под редакцией Н. В. Гербеля. СПб. 1871, 2) Сербский народный эпос. Вступительная статья и перевод Н. М. Гальковского. Сумы, 1897. 3) Сербский эпос. Перевод Н. М. Гальковского. М., 1916.

### ԹԵ ԻՆՉ ՈՒՂԱՐԿԵՅ ԹՈՒՐՔԻ ՍՈՒԼՔԱՆԸ ՄՈՍԿՈՎԻ ՑԱՐԻ ԸՆԾԱՆՆԵՐԻ ՓՈՒՍԱՐԵՆ

(էջ 179, 513)

Առաջին անգամ՝ Հր. 1915, հունվարի 25, № 19, էջ 2, «Սերբական ժողովրդական վիպերգ (ռուսերենից)» նշումով: Քումանյանի կենդանության ժամանակ ուրիշ հրատարակություն չի ունեցել: Զեանդվել է Եժ II, 243—247: Ինքնադիրը չի պահպանվել:

Տպագրվում է Հր-ից:

Թարգմանությունը կատարվել է 1914 թ. վերջին—1915 թ. հունվարին, ռուս հայտնի բանաստեղծ Ա. Ն. Մայկովի թարգմանությունից (դետեղված է Ն. Վ. Գերլիկի կազմած «Поэзия славян» ժողովածուի մեջ, 1871, էջ 84—85, «Как отдалил турецкий султан московского царя» վերնագրով): Թարգմանության 65 և 66 տողերում հանդիպող հատուկ անունների վերաբերյալ Քումանյանը տվել է հետևյալ ծանոթագրությունները.

Նեմանիչ Սավվա— Սերբիայի առաջին եպիսկոպոսապետն է ու կազմակերպողը:

Կոնստանդին— Բյուզանդիայի վերջին կայսրը:

610

Այս վիպերգի սեղ Քումանյանը տեսել է իուրբական բնագիտության լծից քրիստոնեյա ազդերին ազատագրելու գործում Ռուսաստանի պատմական դերի հաստատումը, մի զաղափար, որը լազմիցս արծարծվել է նրա հրատարակատնական հոդվածներում: Սերբական էպոսին նվիրված հոդվածում նա այդ մասին գրել է. «Ե՛վ որովհետև միանգամ ընդմիջող թուրք դեմ վեր էր կացել և Ռուսաստանը ու ծանր հարվածներ էր տալիս թշնամուն, որա համար Ռուսաստանն էլ է մտել սերբական ազգային էպոսի մեջ» (Եժ IV, 365—366): Այս խոսքերից անմիջապես հետո, սողատակի ծանոթագրության մեջ նա վկայակոչում է իր նախորդ թարգմանությունը՝ մի փոքր մոխելով նրա վերնագիրը, որն, ի ղեկ, ավելի լավ է համապատասխանում բնագրի և Ն. Գալկովի ուսուրեն թարգմանության վերնագրին (Московски дарови и турско уздарје, Московские подарки и турские отдарки). «Անցյալ տարի էջ երգի թարգմանությունը տվինք՝ «Մոսկովի» ղեկ նժաններն ու սուլթանի փոխընձաները»:

Այս վիպերգի մեջ արտացոլվել են XVI և հետագա դարերում մոսկովյան թագավորների և թուրք սուլթանների հարաբերությունները՝ կապված քրիստոնեական սրբազան մատուցների փրկության հետ (տե՛ս Эпос сербского народа. Издание подготовил И. Н. Голенищев-Кутузов, М., 1963, с. 340—341): Այս երկի գրավյությունը Քումանյանի համար, անշուշտ, մեծանում էր նաև նրանով, որ նրա մեջ հանդես եկող քրիստոնյա պատրիարքի՝ այդ «արդար ծերունու» կերպարը իր մարգարեություններ և անձնագոհությամբ շատ էր հիշեցնում «Աղավնու վանքի» ծերակ հայր Օհանին:

### ՄԱՐԿՈՆ ՌԱՍԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ Է ԽՄՈՒՄ

(էջ 184, 513)

Առաջին անգամ՝ Հր. 1916, 10 հուլիսի, № 152, էջ 2, «Սերբական ազգային ժողովրդական էպոսից» նշումով, այնուհետև՝ ԲԳ, էջ 331—334: Զեանդվել է Եժ II, 248—250: Ինքնագիրը չի պահպանվել:

Հր և ԲԳ հրատարակումների վերջում նշվում է թարգմանության վայրը՝ Բորժոմ, որ 1916թ. առաջին հանգստացել է Քումանյանը և այնտեղ էլ թարգմտել այս և հաջորդ երկու վիպերգերը:

Այս վիպերգի թարգմանության հետ միասին օրաթերթի նույն-համաբում, իբրև նախաբան, տպագրվել է ՂԾԻ երկու խոսք սերբ ժողովրդական էպոսի մասին՝ հոդվածը, որի վերջում նշվում է. «Ներքե տալիս ենք Մարկոնի երգերից միսը, որ թարգմանել ենք ռուսերեն վերջին հրատարակությունից» (Հր. 1916, № 152): Եվ նրան հրատարակությունն առելով Քումանյանը նկատի ունի արդեն հիշատակված գիրքը (Сербские эпосы, М., 1916), որտեղից թարգմանվել են Մարկոյի վերաբերող երեք վիպերգերը:

611

Հը-ում Քումանյանը տվել է երկու բառի բացատրություն հետևյալ տողերում.

4 դրամա—վերարկու.

35 օխա—չափ է.

Քարգամանչի վերջին կամքի արտահայտությունը պետք է համարել Ք անբար, որի մեջ նա մտցրել է մի քանի ուղղում (տե՛ս տարբերակների բաժինը): Սակայն այդ հրատարակության մեջ սպորդել են որոշ անհայտ ապագրական սխալներ (74 տողում «հագնվում»-ի փոխարեն տպվել է «հագնելում», 88 տողը դարձել է «վա՛յ, ով մոտիկ կըլնի Մարկոյի», որ խախտում է ուրիշը, իսկ 85 տողն առհասարակ դուրս է ընկել, և այլն): Այդ սխալներն ուղղվել են ըստ Հը-ի տեքստի: Այսպիսով, Քարգամանչի մասին հատուրում տպագրվում է Ք-ից՝ նշված ուղղումներով:

ՄԱՐԿՈՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՊՍԱԿԻ ՀԱՐԿԸ  
(էջ 188, 513)

Առաջին անգամ՝ Հը, 1916, 24 հուլիսի, № 163, էջ 3, «Սերբական ազգային էպոսից» նշումով: Քումանյանի կենդանության ժամանակ այլևս չի տպագրվել: Տեղ է գտել եժ 11, 251—256, ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է Հը-ից՝ հաշվի առնելով թերթի կտրոնի վրա (պահվում է Ք-ում) մատիտով կատարված հեղինակային ուղղումները (տե՛ս տարբերակների բաժնում):

Քարգամանչի վերջին կատարվել է 1916 թ. ամռանը, Сербский эпос (1916) գրքից: Քարգամանչը երկու ծանոթագրություն է տվել.

- 1. էս երգի մեջ սերբական էպոսը թուրքին արար է անվանում:
- 2. Կոսովի դաշտը սերբական Ավարայրն է:

Արքայազուն Մարկոյի և Սասունցի Դավթի նմանությունը, որ նշել է Քումանյանը իր հոդվածում, ամենից ցայտուն երևում է այս վիպերգում՝ հարստահարված մարդկանց իրավունքների անձնուրոշ պաշտպանության մեջ: Դա էլ մղել է Քումանյանին Քարգամանչու այս վիպերգը:

ՄԱՐԿՈՆ ՎԱՐ Է ԱՆՈՒՄ  
(էջ 193, 514)

Քարգամանչի վերջին կատարվել է, հավանաբար, 1916 թ. ամռանը, նախորդ երկու վիպերգերի հետ միաժամանակ, միևնույն ուսանող ժողովուրդից: Սակայն Քարգամանչի վերջնական հղկման չի հասցվել և մնացել է անտիպ: Առաջին անգամ, ինքնագրի հիման վրա, տպագրվել է եժ 11, 257:

Մեզ հասել է Քարգամանչի երկու ինքնագիր (ԳԱՔ, ՔՅ, Մ 170): Ներկա հրատարակության համար հիմք է ընդունվել Ա ինքնագիրը, որն ավելի մշակված է: Այն գրված է թանաքով, բայց մի քանի տողերի միջև կան նաև մատիտով գրվածներ: Սակայն, քանի որ թանաքով գրված տողերը չնշված չեն, հիմնական բնագրի համար վերցվել են դրանք, իսկ մատիտագիր տողերը բերվում են տարբերակների բաժնում: Նույն բաժնում տրվում է նաև Բ ինքնագրի (մատիտագիր) ամբողջական պատկերը՝ նրա վրա կատարված բոլոր ուղղումներով ու փոփոխություններով:

Ս Ե Վ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՄԱՆՅՈՒՆ  
(էջ 197)

Բայրոնի «Մանֆրեդ» սիմվոլիկ-փիլիսոփայական դրամայի (1816—1817) Քարգամանչի փորձը Քումանյանը կատարել է 1890-ական թթ. կեսերին: «Շիլիոնի կալանավորը» պեմի, «Չայլը Հարուդի» հատվածների Քարգամանչի զուգընթաց (կամ նրանից անմիջապես հետո) հայ բանաստեղծը հետաքրքրվել է նաև Բայրոնի այս դրամայով, որը նրա անհատապաշտության, ամբողջ երկրային և տիեզերական կարգի դեմ միայնակ ապստամբական ոգու բարձրագույն արտահայտությունն է: Սակայն պետք է ենթադրել, որ հենց դրամայի այդ ժայռահեղ ոռոմանտիկական բնույթն էլ է վերջը հետ է պահել Քումանյանին ոչ միայն շարունակությունը Քարգամանչու, այլև այս հատվածը մշակելու և տպագրելու գաղափարից:

Քարգամանչի ընդգրկում է միայն ստեղծագործության սկիզբը (ընդամենը 120 տող), գրված է վեց էջի վրա թանաքով, ունի մեծ մասամբ մատիտով կատարված բազմաթիվ ուղղումներ (տե՛ս ԳԱՔ, ՔՅ, № 152): Դատելով ինքնագրից, նրա մեջ մի քանի ուսանող բառերի առկայությունից, Քումանյանը, բացի տողացից, հետևել է նաև դրամայի ուսանող Քարգամանչի:

«Մանֆրեդ» հատվածի Քարգամանչի անաչին անգամ տպագրվել է Քումանյանի երկերի առաջին զիտական հրատարակության մեջ՝ 1940 թ. (եժ 11, 276—281):

Ներկա տպագրությունը կատարվում է ինքնագրից, որի հիման վրա մտցվել են մի շարք ուղղումներ: Նկատի ունենալով Քարգամանչի սևագիրը և անկատար բնույթը, տողերի փոփոխակները տրվում են ոչ թե առանձին, տարբերակների բաժնում, այլ հիմնական բնագրի հետ միասին՝ տողատակին: Դրանով ի մի հավաքված երևում է Քարգամանչի մյուս կատարված աշխատանքի պատկերը, որը, սակայն, իր ավարտին չի հասնում:

<ՄՈՒՐՈՄԵՐ ԻԼԻԱՆ ԵՎ ԿԱԼԻՆ ԹԱԳԱՎՈՐՆ>

(հատված)

(էջ 204)

Անգիր թարգմանություն է, Քումանյանի կենդանության ժամանակ չի տպագրվել: Առաջին անգամ՝ ճԺ VI, 76—79: Հրատարակվում է ինքնազրից (ԹԹ, № 941): Տողերի փոփոխակները տրվում են Տիմեական տերատի հետ՝ սողատակին:

Վ. Ավենարիուսի գրքում այս բիլինան տեղադրված է Քումանյանի թարգմանած «Մուրոմցի Իլիան կովում է Վլադիմիր իշխանի հետ» բիլինայից անմիջապես հետո (էջ 161—181) և նրա բովանդակության ուղղակի շարունակությունն է: Այստեղ պատմվում է բանտարկվելուց հետո Մուրոմցի Իլիայի նոր արկածների, թաթար Կալին թագավորի արշավների ժամանակ հայրենիքի փրկության համար նրա կատարած սիրահրեների մասին: Այս գործի թարգմանությունը Քումանյանը ձեռնարկել է 1910-ական թթ., հավանաբար, համաշխարհային պատերազմի շրջանում՝ թաթար-մոնղոլական լծի դեմ Ռուսիայի մղած դարավոր պայքարի մեջ տեսնելով զուգահեռներ հայ ժողովրդի ազգային-ազատագրական մարտումների հետ:

Սակայն Քումանյանի այս թարգմանությունը մնացել է նախնական փուլում. 750 տող ունեցող բիլինայից նա թարգմանել է միայն սկիզբը՝ ընդամենը 90 տող, այն էլ թողնելով անմշակ և անկատար:

<ԱՍՔ ԻԳՈՒՒ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ>

(հատված)

(էջ 208)

Քումանյանը սխալ է հետաքրքրվել է ռուս միջնադարյան գրականության փոքրագույն հուշարձանով՝ «Ասք Իգորի արշավների մասին» հերոսական պոեմով (XII դար): Նրա անձնական գրադարանում կան պոեմի մի շարք հրատարակություններ, աչգ ստեղծագործության մասին գիտական հրատարակությունների ժողովածուներ (ցանկը տե՛ս Ն. Քումանյան, Հովհաննես Քումանյանը և ռուս գրականությունը, 1956, էջ 39): Այդ գրքերից մեկն է՝ Слово о полку Игореве. Новейшая, буквальная перевод стихах Н. Алябова, М., 1873: Այդ գրքի 32-րդ էջից էլ թարգմանել է Քումանյանն այս բառատուրք, որն է առանձին թերթիկի վրա և որն գրքի մեջ: Թարգմանված հատվածը պոեմի ամենաքեղանկարական մասերից է՝ քաղված Ճարտավանայի ողբից: Քումանյանի համար հիմք են ծառայել Ն. Ալյաբովի գրքի հետևյալ տողերը.

Полечу ли по Дунаю кукушкою  
Омчу-ль рукав бобровый в Каяле реке,  
Утру князю его раны я кровавые  
На его ли теле мужественном.

Առաջին անգամ տպագրվել է ԳՔ, 11 ապրիլի 1953 թ., № 15, «Քումանյանը «Ասքի» թարգմանիչ»: Տպագրման մեջ, ապա Ն. Քումանյանի հիշյալ գրքում (էջ 100) և ճԺ VI, 79:

Տպագրվում է ինքնազրից (ԹԹ, № 943):

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

ՌՈՍՏԵՎԱՆԻ ԵՎ ԱՎԹԱՆԴԻԼԻ ՄՐՃՈՒԹՅՈՒՆՆԸ

(էջ 209)

Շոթա Ռուսթավելու «Բնձնավոր» պոեմի այս հատվածը առաջին անգամ տպագրվել է՝ Վ, 3-րդ տպ., Թիֆլիս, 1917, էջ 169—176, «Քարգմ. Սարգիս» նշումով: Դրանից հետո տպագրվել է միայն մեկ անգամ (ճԺ II, 282—287): Ինքնազրից չի պահպանվել:

Տպագրվում է Վ-ից:

Թեև Վ-ում որևէ նշում չկա այս գործի մեջ Քումանյանի ուղղակի մասնակցության մասին, բայց մի շարք կենսագրական և ստեղծագործական տվյալներ հավաստում են դա: Դասագրքի երեք հեղինակներից (Ստ. Կիսիլյան, Հովհ. Քումանյան, Լ. Շանթ) Քումանյանն էր, անշուշտ, որ ամենից ակտիվ պիտի ձյուրեր հայ աշակերտներին ծանոթացնել վրաց մեծ բանաստեղծի նշանավոր երկին:

Հայտնի է, որ երկար ժամանակ Քումանյանը ցանկացել է լրիվ կամ գեթ հատվածաբար թարգմանել Շոթա Ռուսթավելուն, որի մեջ նա տեսնում էր «իր ամբողջ էությունը վրացի բանաստեղծի» (ճԺ IV, 424): Թարգմանության շուրջ նա բանակցություններ է վարել Կովկասի Հայոց հրատարակական ընկերության հետ: Ինչպես երևում է 1910 թ. հոկտեմբերի 25-ի գրությունից, բանաստեղծը խոստանում էր այդ «հաշակավոր վիպերգությունը» թարգմանել հինգ տարվա ընթացքում, ամեն տողի համար մեկ ոտքի վարձով (տե՛ս ճԺ V, 336): Թարգմանչի և ընկերության միջև համաձայնություն չի կայացել, և թարգմանությունը չի սկսվել: Սակայն Ռուսթավելու պոեմի թարգմանության գաղափարից Քումանյանը հետագայում էլ չի հրաժարվել: «Մուրում» կա, — ասել է նա 1919 թ., — եթե ոչ բոլորը, գոնե մի քանի հատված թարգմանելու Շոթա Ռուսթավելուց և Ֆիրդուսու «Ռուստամ ու Զոհրաբից» (Ն. Քումանյան, էջ 208): Բանաստեղծի

այդ մտադրության մասին վկայում են նաև ժամանակակիցները (տե՛ս, օրինակ, Հ. Սուրխաթյանի հուշերը՝ ԹԺՀ, 712):

Ահա իր այդ վաղեմի մտադրությունը գեթ մասամբ իրականացնելու և հայ երեխաներին «հնձնավորի» մասին որոշ պատկերացում տալու համար Քումանյանն իր մասնակցությունը կազմված դասադրքի մեջ մտցրեց այս նյութը: Սա սովորական իմաստով թարգմանություն չէ, այլ մի օրինի կատարած թարգմանության փոխադրություն բարբառից գրական լեզվի, մասամբ էլ արձակ վերադատմություն: Փոխադրության հիմքը եղել է Ռուսթավելու պոեմի առաջին հայերեն թարգմանությունը (հատվածաբար), որ կատարվել էր զրանից ավելի բան կես դար տուաջ: Այդ թարգմանությունը, որը կրում է «հնձո մորթի հատած մարդ» վերնագիրը և ընդգրկում է պոեմի առաջին մի բանի զրույնները, տպագրվել է «Կուռնկի Հայոց աշխարհին» ամսագրի մի բանի համարներում (1860, № 6, 8, 9, 1861, № 10, 1862, № 2, 7, 11): Թարգմանության նախարանը և բոլոր հատվածները ստորագրված են «Սարգիս», «Երանյան», ինչպես վաղուց պարզված է, թարգմանիչը Քլեյնհայնի լեզվի և գրական-հասարակական գործիչ Ստեփան Բաստամյանն է (1815—1872): Քառորդ դար անց այդ թարգմանությունը վերահրատարակվել է հետևյալ բազմալեզու ժողովածուի մեջ. Е. С. Сталинский, Б. росова кожа — грузинская поэма Шота Руставели на русском, французском, немецком, грузинском и армянском языках, выпуск второй, Тифлис, 1888 Ավելի ուշ թարգմանության մեծ մասն արտատպվել է «Պրոլետար» թերթում (1937, № 285):

Ստ. Բաստամյանի թարգմանությունը կատարված է թիֆլիսահայ բարբառով՝ խառնված ձևավորվող աշխարհաբարի որոշ տարրերի հետ: Բնականաբար, այդ ձևով այն չէր կարելի ներկայացնել զարասկպի հայ աշակերտությանը: Թումանյանը թարգմանության լեզուն զգալի շահով գրականացրել է, հարմարեցրել դպրոցական ուսուցման խնդիրներին: Փոխադրությունը, որին տրվել է նոր վերնագիր՝ «Ռոստեվանի և Ավթանդիլի մրցությունը», իր բովանդակությամբ ընդգրկում է Ռուսթավելու պոեմի առաջին երկու զրույնները («Արախների թագավոր Ռոստեվանի պատմությունը», «Ռոստեվան թագավորի և Ավթանդիլի որսորդությունը») և դասագրքում բաժանված է երեք մասի (Ա, Բ, Գ): Այն համընկնում է «Կուռնկի» հրատարակման նշված ամսագրային յոթ համարներից առաջին հինգի հետ՝ բաց թողնելով վերջին երկուսի նյութը: Պատմության մի մասը ներկայացված է արձակ վերաշարադրանքով (որի մեջ, ի դեպ, առավել ցայտունությամբ են երևում Թումանյանի պատմողական ոճի հատկանիշները): Չափափո մասերում էլ շատ տողեր կրճատված են:

Բաստամյանի թարգմանության երկու հատված (1860, № 6 և 1861, № 10) տպագրվել է 16-վանկանի տողերով և կից հանգավորումով, իսկ մյուսները բաժանված են 8-վանկանի տողերի, որոնցից հանգավորված են միայն զույգ տողերը: Թումանյանը շահածո բոլոր մասերը վերածել է 8-վանկանի տողերի: Ինչ վերաբերում է բուն տեքստի մեջ մտցված փոփոխություններին, ապա դրանք բավական տարբեր են: Կան հատվածներ,

որոնք միայն գրականացվել են՝ ազատվելով բարբառային անհասկանալի տարրերից: Ուրիշ դ՛պքերում խմբագրական ախտանքն ավելի արմատական բնույթ է կրել: Օրինակի համար ստորև բերվում է երկու քառատող՝ Ստ. Բաստամյանի թարգմանությամբ և ապա Հ. Թումանյանի խմբագրությամբ.

#### Ստ. Բաստամյան

Ինչ ոտ կուտաս, լսե՛ր դու ինձ,  
էն ջիրումըս, ասա՛, ունիմ,  
Ինչ որ չիս տա, էն է կորած,  
Որքան գուղիս պահես դաշիմ:

#### Հ. Թումանյան

Լա՛վ իմացիր, ինչ որ կրտաս՝  
էն է մենակ, որ դու ունես.  
Ինչ որ չես տալ՝ էն է կորած,  
Ինչքան էլ որ պինդ պահպանես:

#### Ստ. Բաստամյան

Նրկուսնելեթ հով ծծելու  
Մատի տակը թռան դեվեր.  
էստի, էնդի զինվորները  
Յցուովցան լինչպես դեվեր:

#### Հ. Թումանյան

էսպես նրանք խոսում էին  
էն հովասուն ծառերի տակ,  
Նրանց շուրջը խուրձ-խուրձ կանգնած  
Զինվորները հաղթահասակ:

Այսպիսով, Թումանյանը որոշակի ստեղծագործական աշխատանք է կատարել բնագրի վրա, որը և հիմք է տալիս սույն երկը մտցնելու նրա թարգմանությունների շարքը, իբրև հավելածու: Այս թարգմանությունը բանաստեղծի երկերի նախորդ զիտական հրատարակության մեջ զետեղելու հիմքը եղել է նվազը Թումանյանի հավաստի վկայությունը, որն այդ մասին գրել է «ՇՈՒՆ». Թումանյանը Շոթա Ռուսթավելու մասին՝ հողվածում (ԳԹ, 1937, 30 զեկտեմբերի, № 42):

IV-ում այս թարգմանությունից հետո տրվում են նրան վերաբերող հարցեր և լեզվական առաջադրանքներ, ինչպես նաև Շոթա Ռուսթավելու համառոտ բնութագրը, որը, ամենայն հավանականությամբ, նույնպես պատկանում է Թումանյանի գրչին: Ահա այդ բնութագրին ամբողջությամբ.

«Ինստիտուտի և Ավրանդիի մեջուրյունը մի հատված է Շոթա Ռուս-  
Քաղաքի Ընծենաձոր հուշակալոր վիպասանությունից, որ վրացոց գրական-  
ությունն ամենամեծ ստեղծարարությունն է: Շոթա Ռուսթավելին ապրում  
էր վրաստանի Քամար թագուհու օրով (տասներկուերորդ դարի վերջը և  
տասներեքերորդի սկիզբը) և նրա պալատական բանաստեղծն էր: Վիպա-  
սանության մեջ նկարագրված են ինքը թագուհին (իրեն Քինաթինա), նրա  
ժամանակակա նշանավոր մարդիկ իրենց պալատական և իշխանական նիստ  
ու կացրով» (LV, 176):

Քումանյանը տվել է նաև մի շարք բաների բացատրությունը (ստորև  
բերվում են միայն այն բաները, որոնց իմաստը կապվում է պոեմի պատ-  
մական բովանդակության հետ):

Ավան-շավան—պալատի ծիսակատարությունների, հանդեսների և ճաշ-  
կերույթների կարգադրիչ:

Ճիւրանի— պայծառ կարմիր գույնի կտոր, որից պատրաստում են թա-  
ղավորի վերնոցը:

արմաղան—գեղեցիկ, շատ շքեղ, սքանչելի:  
ծնծղա—երկու պղնձե փսեկներից կազմած գործիք, որ իրար գարնելով  
հնչեցնում են:

ճաղարփեշա— գինու կոթավոր մեծ թաս:  
բազմական—սեղանին բաղմած մարդը կամ հասարակությունը:  
շալմա—(արար.)—արարական գլխի փաթթոց:  
սպարապետ—ձիավոր զորքի ընդհանուր հրամանատար:

### ԼՈՒՌԻ ՉՈՐՈՒՄ

(էջ 216)

Այս անավարտ բանաստեղծության ինքնագիրը պահվում է ԳԱԹ ԹՅ,  
լրացուցիչ ցուցակ № 9: Առաջին քառատողը ջնջված է շեղ գծով: Գրված է  
նույն թերթի վրա, ուր ավարտվում է «Հաշտություն» բանաստեղծության  
ինքնագիրը (տե՛ս սույն հրատ. 1-ին հատոր, էջ 132, 451, 580): Ըստ  
երևույթին՝ Քումանյանը մտադիր է եղել այդ բանաստեղծությունները մտցնել  
մի շարքի մեջ. այդ է վկայում այն փաստը, որ «Հաշտություն» բանաստեղ-  
ծությունը համարակալված է 7, իսկ «Լուռու ձորում»՝ 8 թվերով: Փն որոնք  
էին լինելու շարքի առաջին վեց բանաստեղծությունները՝ հայտնի չէ: Քանի  
որ «Հաշտությունը» գրված է 1892—1893 թթ., կարելի է ենթադրել, որ  
նույն տարիներին է վերաբերում նաև այս գործը:

Պետք է կարծել, որ այս երկու քառատողերը սկիզբն են մի ավելի ծա-  
վալուն բնապատկեր-բանաստեղծության, որը մեզ չի հասել կամ առհասա-  
րակ չի գրվել: Քերականաբան պատճառով դուրս է մնացել սույն հրատա-  
րակության առաջին հատորից:

Տպագրվում է առաջին անգամ:

### ԿԱՂՆԻ

(էջ 217)

Տպագրվում է բառ ինքնագրի (ԳԱԹ ԹՅ, № 37), որի տակ նշված է  
գրույթյան թվականը՝ 18 սեպտեմբերի 1896 թ.: Կաղնու այլաբանական պատ-  
կերով Քումանյանն իր գրվատական վերաբերմունքն է արտահայտել ամե-  
նայն հայոց կամ: Ղկիոս Մկրտիչ Խրիմյանի (Հայրիկի) նկատմամբ: Ուս-  
նավորը նվիրված է բանաստեղծի մտերիմ բարեկամ իշխանուհի Մարիամ  
Քումանյանին:

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ—1, էջ 305, առանց բնագրային տար-  
բերությունների և մի քանի անճշտություններով, որոնք ուղղվում են ըստ  
ինքնագրի: Բանաստեղծությունը թյուրիմացությամբ դուրս է մնացել սույն  
հրատարակության 1-ին հատորից:

Քումանյանի վերաբերմունքը Մ. Խրիմյանի նկատմամբ արտահայտ-  
վել է նաև «Հայ ուխտավորին» բանաստեղծության մեջ (1893), նրա մահ-  
վան աթիվ գրված «Երկու հայր», «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» աթ-  
ձակ էջերում (1907): Կարճատև հիասթափությունից հետո, որը կապված էր  
Գ. Աղայանի և Ա. Ղլտմյանի հանդեպ կաթողիկոսի անարդար վերաբեր-  
մունքի հետ (տե՛ս Եժ V, 86), Քումանյանը 1895 թ. նույններին Մ. Խրիմ-  
յանին անձամբ հանգիստից հետո (Եժ V, 113) նորից շատ բարձր է  
զնահատում նրա ազգային-հասարակական գործունեությունը և մարդկային  
նկարագիրը: Դրա վկայություններից մեկը եղավ այս բանաստեղծությունը:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

(էջ 219)

Տպագրվում է ըստ ինքնագրի, որը տասնամյակներ շարունակ Քուման-  
յանի ընտանիքի արխիվում մնալուց հետո այժմ հանձնվել է և պահվում է  
բանաստեղծի թանգարանում (տե՛ս ԹԹ, նոր նյութեր, թղթապանակ № 36):  
Բանաստեղծությունը, ըստ ինքնագրի տակ կատարված նշումի, գրված է  
1920 թ. փետրվարի 19-ին. Քիչվառում: Ըստ չափադրված տվյալների՝  
նույն ժամանակ էլ տպագրվել է «Բանակի օր» մեկօրյա թերթում (Թերթը  
մեզ չի հասել):

Սույն հրատարակության առաջին հատորից բանաստեղծությանը դուրս  
է մնացել իմ բազմությունից անկախ պատճառներով: Երա՛սը նյութերի  
հետ միասին: Ինքնագրերը թանգարանին հանձնելուց հետո: Քումանյանի  
դուստր Քամարի առաջարկով բանաստեղծությունը հրատարակել է Խ. Գյուլ-  
նազարյանը (տե՛ս «Հայրենիք» ձայն», 1989: 1. Կարմիրքի, № 44):

Քումանյանի Սրկերի լիակատար ժողովածուից դուրս լինող երկու  
տակով «Հայկական բանակը» բանաստեղծությունը ստեղծագրված է սույն  
հատորի «Հավելված» բաժնում:



ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

< Ասր Իգորի արշավանքի մասին >	208
Արիլես	109
Քե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն	179
Քմկաբերդի առումը	45
Ինեսին	129
Լոռու ձորում	216
Կազնի	217
Հազարան Բըլբուլ	81
Հայավաթի երգը	155
Հայկական բանակը	219
Հին կոբվը	59
Մանֆրեդ	197
Մարկոն ուսմազանին գինի է խմում	184
Մարկոն վար է անում	195
Մարկոն վերացնում է պսակի հարկը	188
Մծիրի	131
Մուրոմցի Իլիան կոպում է Վլադիմիր իշխանի հետ	168
< Մուրոմցի Իլիան և Կալին թագավորը >	204
Շիրիոնի կալանավորը	115
Չալլո Հարուդի երգը	126
Ռոստևանի և Ավթանդիլի մրցությունը	209
Սասունցի Դավիթը	7
Սասունցի Դավիթը, Բ. մասը	41
Սվյատագորը	165

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊՈՆՄՆԵՐ

	թիվը	տարածակ	ծանրություն
Սասունցի Դավիթը	7	223	521
Սասունցի Դավիթը, Բ. մասը	41	267	538
Քմկաբերդի առումը	45	292	542
Հին կոբվը	59	301	551
Հազարան Բըլբուլ	81	308	566

ՔԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՊՈՆՄՆԵՐ ԵՎ ՎԻՊԵՐԳԵՐ

Արիլես	109	475	586
Շիրիոնի կալանավորը	115	479	590
Հատվածներ «Չալլո Հարուդ» պոեմից	126		594
1. Չալլո Հարուդի երգը	126		595
2. Ինեսին	129	492	596
Մծիրի	131	498	597
Հայավաթի երգը	155	510	601
Ռոստևան բիթնաճեթից	165		604
Սվյատագորը	165	511	606
Մուրոմցի Իլիան կոպում է Վլադիմիր իշխանի հետ	168	511	608
Սերբական վիպերգ	179		609
Քե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն	179	513	610
Մարկոն ուսմազանին գինի է խմում	184	513	611
Մարկոն վերացնում է պսակի հարկը	188	513	612
Մարկոն վար է անում	195	514	612
Սևագրություններ	197		613

Մանֆրեդ	197
<Մուրմցի Իլիան և Կալին թագավորը>	204
<Ասք Իգորի արշավանքի մասին>	208
Հավելված	209
Ռոստովանի և Ավթանդիլի մրցութունը	209
Հոռու ձորում	216
Կաղնի	217
Հայկական բանակը	219
<b>ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ</b>	221
<b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	517
<b>Այբբենական ցանկ</b>	620

613  
614  
614  
615  
615  
618  
619  
619

**Թումանյան Հ.**

Ք 950, Երկերի լիակատար ժողովածու: Տաս հատորով լեզվահաննես Թումանյան; [խմբ. կոլեգիա՝ էդ. Մ. Զրբաշյան (գլխ. խմբ.) և ուրիշ.։ 2ԳԱ Մ. Արեղյանի անվ. գրակ. ին-տ.— Հ. 4.— Եր.։ 2ԳԱ հրատ. 1991— Հ. 4: Պոեմներ/ [բնագրերը պատրաստեցին Ց. Ս. Հակոբյանը և Լ. Ա. Թերլեմեզյանը: Ծանոթագր. էդ. Մ. Զրբաշյանը: Հատորի խմբ.՝ Հր. Կ. Հովհաննիսյան]— 1991.— 622 էջ, 9 թ. նկ.

Երկերի լիակատար ժողովածուի 4-րդ հատորը կազմված է երկու հիմնական մասից. ա) ինքնուրույն պոեմներ («Սասունցի Դավիթը», «Թմկաբերդի առումը», անավարտ «Հին կոնվեր», «Հազարան բլբուլը»), բ) թարգմանական պոեմներ և վիպերգեր: Առանձին բաժնում, տպագիր և ձեռագիր աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա, տրվում են ինքնուրույն և թարգմանական երկերի բոլոր տարբերակները, ինչպես նաև նրանց («Հազարան բլբուլի») համար կատարված նախապատրաստական աշխատանքի բազմազան նյութերը: Ծանոթագրությունների մեջ ներկայացվում են երկերի ստեղծման ու հրատարակման փուլերը, ժամանակի քննադատության գնահատականները:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 81 Հ 1

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ  
ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
ՏԱՍ ՀԱՏՈՐՈՎ  
ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԳ  
ՊՈԵՄՆԵՐ

Հրատ. խմբագիր Ա. Լ. Սահակյան  
Ներքին: Հ. Ն. Գործակալյան  
Տեխ. խմբագիր Չ. Հ. Սարգսյան  
Սրբագրիչ Գ. Է. Դերձակյան

ИБ—1717

Հանձնված է շարվածքի 11. 07. 1990 թ.: Ստորագրված է տպագրության  
23. 01. 1991 թ.: Չափը 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ № 2: Տառատեսակ «Գրքի տ-  
վորական»: Բարձր տպագրություն: Պայմ. 33.5 տպագր. 39 մամուլ+9  
թերթ ներդիր, հրատ. հաշվ. 29,2 մամուլ: Տպարանակ 70.000: (1 թողար-  
կում 1—40000): Պատվեր 1194, Գինը Չ. 30 կոպ.:  
ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի № 1 տպարան,  
Երևան—10, Ալավերդյան 65:

Типография № 1 Комитета по печати при Совете Министров  
Республики Армения. Ереван-10, ул. Алавердяна, 65.